



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ

**ԿՐՈՆԱՓՈԽ ՀԱՄՇԵՆԱՀԱՅԵՐԻ
ԲԱՐԲԱՌԸ, ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ԵՐԳԱՐՎԵՍՏԸ
(նյութեր և ուսումնասիրություններ)**

**ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ - 2009**

ՀՏԴ 941(479.25):809.198.1:398=919.81
ՊՄԴ 63.3(2Հ)+81.2Հ+82.3Հ
Վ 301

**Գրքի հրատարակությանն աջակցելու համար հեղինակը
խորհին շնորհակալություն է հայտնում Երևանի պետական
համալսարանի ղեկավարությանը և «Թուֆենկյան»
բարեգործական հիմնադրամին:**

Վարդանյան Ս. Գ.

Վ 301 Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսու-
թյունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություն-
ներ).- Եր.: ԵՊՀ հրատ., 2009թ.: 428 էջ:

*Հեղինակն անդրադառնում է համշենահայության, մասնավորա-
պես, նրա բռնի մահմեդականացված հարվածի պատմությանը:
Գրքում ընդգրկված են Աջարիայից 1944թ. Ղազախստան և
Հրդզավան արտրված, ինչպես նաև Թուրքիայի Արդվինի նահանգի
Խոփայի և Բորչկայի գավառների կրոնափոխ համշենահայերի բար-
բառի, բանահյուսության, երգարվեստի նմուշներ և Խոփայի խոսված-
քի բառարան:*

*Գիրքը նախատեսված է բարբառագետների, բանագետների,
երաժշտագետների, թուրքագետների, պատմաբանների, ազգագրա-
գետների և ուսանողների համար:*

ՊՄԴ 63.3(2Հ)+81.2Հ+82 3Հ

ISBN 978-5-8084-1081-7

© Ս.Գ. Վարդանյան, 2009թ.

© ԵՊՀ հրատարակչություն, 2009թ.

ՀԱՄՇԵՆՑԻՆԵՐԸ՝ ԾԱՆՈԹ ԵՎ ԱՆԾԱՆՈԹ

Առաջին անգամ համշենահայերի հետ ծանոթացա 1969 թ.:
Դպրոցը նոր էի ավարտել և տասնյակ հազարավոր հայաս-
տանցիների նման Երևանից մեկնեցի ծովափ՝ Ադլեր, հանգս-
տանալու, և անակնկալ բախվեցի արևակող լողափի հարևա-
նությամբ գտնվող Մուղովկա գյուղի համշենահայերին ալեկո-
ծող խնդիրների հետ: Գյուղի 2086 հայերին (ջնիկցիներ, օր-
դուեցիներ, տրապիզոնցիներ և այլն) փոթորկել էին հայկա-
կան դպրոց բացել-չբացելու վեճերը, տեղական իշխանու-
թյունների հետ տարաձայնությունները¹: Հետագայում, տարբեր
գրքերում փնտրում էի համշենահայության մասին տեղեկու-
թյուններ. ովքե՞ր էին, ինչպե՞ս էին հայտնվել Սև ծովի հյուսիսա-
յին ափերին, ինչո՞ւ էին գյուղեր հիմնել կովկասյան լեռների
անտառախիտ լանջերին, ի՞նչ բարբառով էին խոսում և ի՞նչ էր
սպասվում նրանց այդ օտար երկնքի տակ: Այս հարցերի մի
մասի պատասխանը գտա, շատ հարցականներ էլ անպատաս-
խան մնացին: 1981թ. շրջագայելով Աբխազիայի և Ռուսաս-
տանի Կրասնոդարի երկրամասի հայաբնակ գյուղերում, գրե-
ցի շուրջ 150 էջանոց ուղեգրություն, որը ցայսօր անտիպ է,
միայն երկու հատված, մեկը՝ «Համշենցիները՝ ծանոթ և ան-

¹ Մուղովկա գյուղում հայկական դպրոց թույլատրվեց բացել 1970թ. հունվ-
արի 20-ին, իսկ 1974թ.՝ նոր ուսումնական տարվա նախօրեին, տեղական
իշխանությունների հրահանգով այն տրակտորով քանդվեց և այրվեցին
Հայաստանից ուղարկված գրքերը. այդ մասին անդրադարձել եմ հետևյալ
հոդվածներում՝ Մենք պարտավոր ենք, «Սովետական Հայաստան», 1989,
փետրվարի 9: Նույնը, «Հորիզոն» թերթ, Մոսկեալ, 1989, մարտի 6: Նույնը,
Кто, если не мы?, «Комсомолец», 1989, 12 сентября: Հյուսիսի հոդվերը
և հայ գաղութի դիմադրական ճիգերը, «Մաշտոց» թերթ, Երևան, 1991,
հուլիսի 6 (N4), Մուղովկայի թռչնոց բույնը, «Լույս Համշենի» թերթ, Սոչի,
1991, 31 հունվարի (N2), Մուղովկայի «Թռչնոց բույնը», Չայն համշենական,
ժողովածու, գիրք 4-րդ, Երևան, 1999, էջ 30-34, Մուղովկայի «Թռչնոց
բույնը», «Չայն համշենական» ամսաթերթ, 2007, N5-6: Մուղովկայի
«Թռչնոց բույնը», «Նոյյան տապան» շաբաթաթերթ, 2007, սեպտեմբերի 10:

Ցավոք, 2008թ., կրկին նոր ուսումնական տարվա նախօրեին՝ օգոստոսի
29-ին, Մուղովկայի դպրոցի հայկական բաժնի ուսուցիչները, աշակերտ-
ներն ու ծնողները տեղեկացան, որ բաժինը փակվել է և բոլոր առար-
կաները պետք է անցնեն ռուսերեն, տե՛ս Надежда на Медведева, "Голос
Армении", 2008, 4 октября, N 105.

ծանոթ» վերնագրով 1982-ին հրատարակվեց «Գարուն» ամսագրում², և մյուսը՝ «Մայկոպյան խճանկար» վերնագրով 1983-ին տպագրվեց «Սովետական գրականություն» ամսագրում³: Դրանք Հայաստանի ուշադրությունն էին հրավիրում Աբխազիայի և Կրասնոդարի երկրամասի հայության ազգապահպանության հարցերին, շեշտում, որ 1951-ին Կրասնոդարի երկրամասում գործած 140 հայկական դպրոցներից 1981-ին ուսուցիչների պակասի և այլ պատճառներով գոյատևում էին ընդամենը 4-ը: «Գարունի» հոդվածն արտատպեցին սփյուռքի մի շարք թերթեր, և «ներքին սփյուռք» եզրույթը մամուլում շրջանառվեց հենց այդ ժամանակ⁴: Խմբագրությունը ողորդեցին տարբեր հանրապետություններից հայերի գրած մամակները, որոնց մի մասը տպագրվեց «Գարունում»⁵, բայց ամենաուրախալին ՀԽՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարար Լ. Ղարիբջանյանի պաշտոնական գրությունն էր, որում, մասնավորապես, ասվում էր. «...Հայտնում ենք, որ «Գարունի» ահազանգից հետո մեր մինիստրությունը ՌՍՖՍՀ լուսավորության, Վրացական ՍՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստրություններին համապատասխան նամակներով հայտնել է նման կադրերի պատրաստման անհրաժեշտության և

կոոպերացման կարգով նրանց պատրաստման հարցում իր համաձայնության մասին»⁶: Շուտով որոշվեց, որ 1983-84 թթ. ուստարվանից սկսած Երևանի և Աբովյանի անվ. հայկական և Վ. Բրյուսովի անվ. ռուսաց և օտար լեզուների ինստիտուտներում 13 առարկայի գծով 30 արտամրցութային տեղ է հատկացվելու Աբխազիայի հայկական դպրոցների շրջանավարտներին, իսկ հաջորդ տարվանից համապատասխան տեղեր են նախատեսվելու նաև Ռոստովի մարզի և Կրասնոդարի երկրամասի հայկական դպրոցների շրջանավարտների համար⁷: Եվ իրոք, 1984-1985 ուստարվանից Ռոստովի մարզին հատկացվեց տարեկան 2-ական տեղ (հայոց լեզու և գրականություն), Կրասնոդարի երկրամասին՝ 5-6, իսկ Աբխազիայի շրջանավարտներին՝ 32 տեղ⁸: Առաջին հաջողությունը շատ ոգևորիչ էր, ուրեմն կարելի էր իրավիճակը փոխել: Հետագայում, անշուշտ, այլ հոդվածներ ևս եղան⁹, և մարդիկ սկսեցին ինձ դիմել ներքին սփյուռքի և, մասնավորապես, համշենահայության հարցերով, իսկ հիմնադրման օրվանից 1992-ից, նաև որպես

² Վարդանյան Ս., Համշենցիները՝ ծանոթ և անծանոթ, «Գարուն», 1982, N 11, էջ 60-73:

³ Լույնի, Մայկոպյան խճանկար, «Սովետական գրականություն», 1983, N 5, էջ 88-95:

⁴ Լույնի, Համշենցիները՝ ծանոթ և անծանոթ, ուղեգրական նոթեր, «Յառաջ» օրաթերթ, Փարիզ, 1983, փետրվարի 12-13, 15, 16: Լույնի, Համշենցիները՝ ծանոթ և անծանոթ, ուղեգրական նոթեր՝ «ներքին» սփյուռքին, «Չարթոնք» օրաթերթ, Բեյրութ, 1983, մարտի 1, 2, 3, 4, 5, 6, 8, 9, 10, 11: Տես նաև Գալայժեան Ա., Հայաստանը և մենք, «Պայքար» շաբաթաթերթ, Բոստոն, 1984, նոյեմբերի 17: Իմ հոդվածի արտատպությունը Փարիզի «Յառաջ» թերթում կարդալով, այն համշենահայությանը նվիրված իր ուսումնասիրության մեջ քանիցս հղում է գերմանացի գիտնական Ռ. Բեննինգհաուսը, տես Benninghaus R., Zur Herkunft und Identität der Hemşinli, Ethnic Groups in the Republic of Turkey, compiled and edited by Peter Alford Andrews with the assistance of Rüdiger Benninghaus, Wiesbaden, 1989, pp. 477, 482, 485, 492, 493, 497.

⁵ Արծազանքում են «Համշենցիները՝ ծանոթ և անծանոթ» հոդվածին, «Գարուն», 1983, N 9, էջ 24-25, 1984, N 6, էջ 42-43:

⁶ Ղարիբջանյան Լ., Պաշտոնական պատասխան, «Գարուն», 1983, N 9, էջ 25:

⁷ Լույն տեղում:

⁸ Արծազանքում են տպագրածին..., «Գարուն», 1984, N 6, էջ 42:

⁹ Ներքին սփյուռքի, այդ թվում՝ Կրասնոդարի երկրամասի և Աբխազիայի հայության մասին տես Վարդանյան Ս., Մենք պարտավոր ենք, «Սովետական Հայաստան», 1989, փետրվարի 9: Լույնը, «Հորիզոն» թերթ, Մոնրեալ, 1989, մարտի 6: Լույնը, Кто, если не мы?, «Комсомолец», 1989, 12 сентября: Տես նաև «Մենք պարտավոր ենք» հոդվածի արծազանքները, որոնք նույնպես վերաբերում են ներքին սփյուռքի խնդիրներին, «Սովետական Հայաստան», 1989, օգոստոսի 25, «Комсомолец», 1989, 19 октября.

Վարդանյան Ս., Ներքին սփյուռք. մշակույթ և ազգապահպանում, «Մշակույթ» ամսագիր, 1990, N 1, էջ 15-19, N 2-3, էջ 66-73: Լույնի, Ներքին սփյուռք. խոհեր և առաջարկություններ, «Հայ աշխարհ» պարբերաթերթ, 1990, հոկտեմբերի 10: Լույնը, «Ասպարեզ», Գլենդեյլ, 1991, յունուարի 23: Լույնի, Վերհուշ... ներկայի մասին, «Գարուն», 1991, N 3, էջ 32-38: Լույնի, Աբխազահայ փախստականներ Հայաստանում, ինչպե՞ս են ապրում, ո՞վ է հոգում նրանց մասին, «Ազգ», 1992, նոյեմբերի 10: Լույնի, Աբխազահայեր. մոռացյալ բեկորներ, «Ազգ», 1993, մարտի 24: Լույնի, Դպրոցի ճամփան, «Եկոնոմիկա» ամսագիր, 2006, N 2, էջ 49-53: Տես նաև նույն թեմայով իմ հարցազրույցները Համշենահայերը միավորվում են, զրուցեց Ս. Միսակյանը, «Երկիր», 2004, մայիսի 14-20, Լույնը, «Ասպարեզ», Գլենդեյլ, 2004, օգոստոսի 4: Adnan Genç. Hemşinlilerin Sesi Gazetesi Yayımcısı Vartanyan: Hemşin kültürü için gazete yapıyorum, «Bir Gün», İstanbul, 24 Ağustos, 2008.

Հայաստանի «Համշեն» հայրենակցական-բարեգործական հ/կ փոխնախագահ:

Գիտեի, որ համշենահայության մի հատվածը 18-րդ դարում բռնի կրոնափոխվել է, որ 1944-ին Աջարիայից մահմեդական համշենահայերին աքսորել են Ղազախստան և Ղրղզստան, բայց որտե՞ղ: Քանիցս լսել էի, որ մեկ-երկու տասնյակ ընտանիքներ են այնտեղից տեղափոխվել Կրասնոդարի երկրամասի Բելոռեչենսկի և Ապշերոնսկի շրջաններ, բայց ո՞ր գյուղերը, Միջին Ասիայի ո՞ր վայրերից են եկել: Ոչ ոք լուր չուներ: Համշենցի ծանոթներիս խնդրել էի, որ իմանալու դեպքում ինձ հայտնեն: Եվ ահա, 1984-ին տեղեկացա, որ մի մասը եկել է Ղրղզստանի Օշի մարզի Կըզըլ-Կիյա քաղաքից, ուր կան աքսորված համշենցիներ: Թեև չունեի ոչ մի հասցե, իսկույն մեկնեցի, գտա նրանց: Նրանք սփռված էին ոչ միայն Ղրղզստանի Օշի մարզում, այլև Ղազախստանում և Ուզբեկստանում: Լինելով նաև այդ հանրապետություններում և գրառելով բարբառագիտական և բանահյուսական նյութեր՝ վերադարձա երևան, իսկ 1987-ին կրկին մեկնեցի: Հավաքված բանահյուսության մի մասը հրատարակվեց 1989-ին իմ կազմած «Ձայն համշենական» ժողովածուի 3-րդ հատորում:

Այդ տարիներին կրոնափոխ համշենցիների խնդրանքով փորձ արեցինք նրանց և Աբխազիայից Հայաստանում բնակություն հաստատել ցանկացող քրիստոնյա համշենահայերի շուրջ 100-150 ընտանիքներ համատեղ բնակեցնել Հայաստանում՝ համշենահայերի հարազատ եզերքներին նմանվող ներկայիս Լոռու մարզի ռուսական գյուղերում¹⁰: Պետական

¹⁰ Վարդանյան Ս., Աբխազահայեր. մոռացյալ բեկորներ, «Ազգ», 1993, մարտի 24: Տես նաև իմ հետևյալ հարցազրույցները՝ Մահմեդական հայեր. թավշյա կրոնափոխության ներկայի սովորները ... զրուցեց Կ. Դանիելյանը, «Ժամանակ» թերթ, 1999, ապրիլի 16: Амшенские армяне – знакомые и незнакомые, беседовала Р. Егизарян, “Новое время”, 2006, 7 октября. Амшенцы на дорогах мира, беседовала М. Затикян, “Голос Армении”, 2006, 11 ноября, արտատպությունը՝ «Ձայն համշենական», 2006, N 11-12: «Մեզ թավայի ծուզ իք» («Մեկ թավայի ծուկ ենք»), զրուցեց Անի Ղարաբաղյանը, «Մենք մեր մասին» ամսագիր, 2007, N2, էջ 20-23: Յակոբեան ճուլիա, Համշենահայեր. պայքար յանուն ինքնութեան եւ ճանաչման, «Ազդակ», Բեյրութ, 2007, մարտի 16:

աջակցություն էր պետք: Չստացանք¹¹: Բայց ծրագիրը չիրականացվեց ոչ միայն կուսակցական և պետական բարձրագույն իշխանությունների, այլև, ցավոք, որոշ ոչ պաշտոնյա անհատների պատճառով: Այդ մասին ես առաջիկայում կանդորադառնամ իմ ճամփորդական նոթերի մեջ, միայն ասեմ, որ այդ մարդկանց գործունեությունը խափանեց սկսված նախաձեռնությունը, կորսվեց հարմար պահը, իսկ մի քանի տարի անց 1988-ի արցախյան շարժման, հարյուր հազարավոր բռնագաղթածների, ավերիչ երկրաշարժից հետո հարյուր հազարավոր տնանկների առկայության, ինչպես նաև էներգետիկ ճգնաժամի պայմաններում արդեն անհնար էր համշենցիներին Հայաստան տեղափոխելը:

Այդպես անցան տարիներ, և իմ հավաքած բարբառագիտական նյութերը մնացին անտիպ, քանզի լրացման կարիք ունեին, իսկ կրկին Միջին Ասիա մեկնելու հնարավորություններ այդպես էլ չունեցա:

Վերջես երևանի պետհամալսարանի Օսմանագիտական կենտրոնի ղեկավար, բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ Լուսինե Սահակյանը դրանք գրքով շուտափույթ տպագրելու առաջարկ արեց և համոզեց, որ գոնե եղածը հրատարակեմ, քանզի այն մեծապես կօգնի հետագա ուսումնասիրողներին, մանավանդ որ Հայաստանում այդ խոսվածքի կրողներ չկան և իմ հավաքած նյութերից օգտվելով, գիտնականները կարող են ուսումնասիրել կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը, հայերեն-թուրքերեն լեզվական առնչությունները և այլն: Ուստի շտապ կարգի բերեցի իմ գրառումները և պատրաստեցի հրատարակության:

Գիրքը սկսվում է «Պատմական համառոտ ակնարկով», որով փորձել են հնարավորինս սեղմ ներկայացնել համշենահայության պատմությունը, հաջորդը՝ «Կրոնափոխ համշենահայերի ուսումնասիրման պատմությունից» հոդվածն է: Ինչպես վերնագիրն է հուշում, այն հակիրճ ներկայացնում է, թե կրոնափոխ համշենցիների մասին ինչ ուսումնասիրություններ կան: Այն մատենագիտություն չէ, ուստի նրանում չեն կարող

¹¹ Տես Խանգաղյան Ս., Փակ դռների առաջ, «Հայրենիքի ծայն», 1989, մայիսի 10: Նույնի, Նողկալի մերժում, «Գարուն», 1993, N 8, էջ 12-15:

անուն առ անուն, հողված առ հողված նշված լինել այդ թեմայով գրած բոլոր հեղինակների բոլոր հողվածները: Եվ, եթե ժամանակի սղության պատճառով մի շարք հեղինակներ չեն հիշտակվում, թող ներող լինեն, հուսով եմ, որ սա իմ վերջին գիրքը չէ. ես նախատեսում եմ մոտ ապագայում համշենահայության մասին հրատարակել ծավալուն ուսումնասիրություն:

Այնուհետև ներկայացնում եմ Ղրղզստանում, Ուզբեկստանում և Ղազախստանում իմ գրառած բարբառագիտական նյութերն ըստ «Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրի», որը 1977–ին հրատարակել է ՀԽՍՀ ՊԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը, որը նպատակադրվել էր քարտեզագրել հայերենի բարբառները, ինչն ունի ոչ միայն լեզվաբանական, այլև պատմամշակութային նշանակություն: Ցավոք, Միջին Ասիայում կատարած շատ դժվարին և կարճատև ճանապարհորդությունների ընթացքում ինձ չհաջողվեց ամբողջությամբ լրացնել «Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրի» բոլոր հարցերի պատասխանները: Այնուհետև ներկայացված են 1984 և 1987 թթ. իմ գրառած հեքիաթները, խաղիկները և երգերը, որոնց հաջորդում են Թուրքիայի Արդվինի նահանգի Խոփայի և Բորչկայի գավառների մահմեդական համշենցիների խոսվածքով երգերը:

Գրքում զետեղված են նաև Համշենի բարբառի Խոփայի խոսվածքի՝ արդըլեցիների և թուրցևանցիների ճյուղերի (տարբերակների) իմ կազմած բառարանները - գրական հայերեն, և հակառակը, յուրաքանչյուրը՝ շուրջ 2000-ական բառ:

Գրքի վերջում, որպես կրոնափոխ համշենահայերի պատմության ուսումնասիրման համար խիստ արժեքավոր վավերագիր, ներկայացնում եմ նաև Վենետիկի Մխիթարյան միաբան Հ. Պողոս վրդ. Մեհերյանի ինքնակենսագրությունից 1776թ. վերաբերող մի հատված:

Եվ այսպես, գիրքն ընթերցողի սեղանին է. արդեն 2009 թվականն է, իմ «Համշենցիները՝ ծանոթ և անծանոթ» հողվածի տպագրությունից անցել է 27 տարի, բայց, ցավոք, այսօր էլ կարելի է նույն վերնագրով հողված գրել, որովհետև համշենցիներն այսօր էլ շարունակում են մնալ նույնքան ծանոթ և նույնքան էլ՝ անծանոթ:

Աբխազիայում և Կրասնոդարի երկրամասում հաճախ եմ մեր հայրենակիցներից լսել նույն հարցը, արդյո՞ք Սև ծովի հարավային և հարավ–արևելյան ափերից գաղթած նրանց նախնիների հայրենիքը երբևէ հայկական թագավորության կազմում չի եղել, կամ ինչու՞ ծովեզերքի հնաբնակների շարքում հիշելով տարբեր ազգերի, հաճախ մոռացության են տալիս հայերին:

Նրանց հուզող հարցերի պատասխանները սփռված էին մի շարք հայ և օտար պատմիչների երկերում, ուսումնասիրողների գրքերում ու հողվածներում, իսկ տարբեր տարիքի ու կրթության, զանազան մասնագիտությունների տեր մարդկանց խորհուրդ տալ ինքնուրույն հետազոտություններ կատարել, կարդալ մի հսկա ցուցակ աշխատություններ, անիմաստ էր, որովհետև այդ նյութերը պարզապես չկային նրանց գյուղերի ու քաղաքների գրադարաններում¹:

Հարցն, իսկապես, չափազանց ընդգրկուն է, և ես հույս ունեմ, որ ապագայում հնարավորություն կունենամ առավել հանգամանալից անդրադառնալ դրան, իսկ առայժմ ներկայացնում եմ խիստ համառոտ մի ակնարկ՝ հուսալով, որ այն որոշ չափով կբավարարի մեր հայրենակիցների հարցասիրությունը, նաև կպատասխանի շատ հայաստանցիների հետաքրքրող այն հարցերին, թե ե՞րբ և որտեղի՞ց են գաղթել Աբխազիայի և Կրասնոդարի երկրամասի համշենահայերը:

Հայոց թագավորները, լինելով լեռներով պարփակված երկրի տիրակալներ, բնականաբար, ձգտել են իրենց տերության սահմանները հասցնել Սև և Կասպից ծովերը, հնարավորություն ունենալ օգտվելու միջազգային առևտրի՝ այստեղով անցնող ծովային ուղիներից: Դեռևս Վանի թագավո-

¹ Սև ծովի առափնյակի և Հայաստանի ու հայության վաղնջական առնչությունների մասին տես Վարդանյան Ս., Պատմական ակնարկ, Չայն համշենական, ժողովածու, գիրք 4–րդ, Երևան, 1999, էջ 7–15: Варданян С., Страницы истории, «Չայն համշենական» ամսաթերթ, 2004, N4-5: Նույնի, «Ծովն է ինձ միշտ օրոր ասել...», «Բնօրրան», հանդես, Երևան, 1999, N1-2, էջ 29-31:

րության արքաները, ընդարձակելով երկիրը, հյուսիս-արևմուտքում փորձել են դուրս գալ Սև ծովի ափամերձ շրջանները: Դրա համար պետք էր սկզբում նվաճել Դայանի (Դիաու/ե/խի, Տաոխ, Տայք)² երկիրը: Կարինի ժայռափոր արձանագրությունը³ վկայում է, որ արդեն Մենուա (մ.թ.ա. 810–786թթ.) թագավորն է գրավել և հարկատու դարձրել Տայքը: Նրա հաջորդը՝ Արգիշտի Առաջինն (մ.թ.ա. 786–764թթ.) իր Խոռխոռյան արձանագրությունում⁴ հայտնում է, որ երեք անգամ արշավել է Տայք և հպատակեցրել այդ անհնազանդ երկիրը⁵:

Առաջին քայլն արված էր: Եվ ահա, Արգիշտիի որդի Սարդուր Երկրորդը (մ.թ.ա. 764–735թթ.) շարունակելով իր նախորդներին՝ ճանապարհ է հարթում դեպի Սև ծովի առափնյակը: Վանի ժայռի Գանձադառնը թողած տարեգրության մեջ նա երկու անգամ⁶ խոսում է Կուլխա կամ Կուլխա (Կուլխիդա, Կողքիս)⁷ կատարած արշավանքի մասին. «... արշավեցի Կուլխա (երկրի) վրա»⁸: Այն, որ Սարդուրը չի նշում, թե ինչ քաղաքների է տիրացել, ենթադրել է տալիս, որ առաջին արշավանքն անհաջող է անցել: Այս է պատճառը, որ նա մեկ տարի անց կրկին իր զենքն ուղղում է Կուլխայի վրա և այս անգամ արդեն հաջողության հասնում. «Արշավեցի Կուլխա (երկրի) վրա: Երկիրը գրավեցի, Իլդամուշա քաղաքն արքայական Միշա արքայի՝ Կուլխախայան (երկրի), (որ) ամրացված էր, կռվում գրավեցի: Մարդկանց այրեցի: Բերդակալ ոմն⁹ (Կուլխա (երկրի)), (որ) այնտեղ էր, սպանեցի: Կնիք երկաթյա սարքեցի, արձանագրություն Իլդամուշա (քաղաքում) դրեցի, ամրոցները, քաղաքները այրեցի, ավերեցի, երկիրը կերա

(յուրացրի), մարդ, կին քշեցի»⁹: Ենթադրվում է, որ արձանագրության մեջ հիշատակված Իլդամուշա քաղաքը Կղարջքի Արտանուջ (այժմ՝ Աղակալե) քաղաքն է¹⁰:

Կուլխայի նվաճումն, ըստ երևույթին, տեղի է ունեցել մ.թ.ա. 750–748թթ.¹¹: Այսպիսով, Սարդուր Երկրորդին հաջողվում է Կուլխան՝ Կողքիս–Կուլխիդան նվաճելով երկրի սահմանները հասցնել Սև ծովի ափերը¹²: Կուլխա–Կողքիսը դառնում է Վանի թագավորության անասնապահական առավել զարգացած կենտրոններից մեկը¹³:

Վանի թագավորությունը, ըստ ընդունված տեսակետի, ընկավ Մարաստանի և Լիդիայի միջև մղված պատերազմի տարիներին՝ մ.թ.ա. 590–585թթ.: Բայց հենց այդ և հաջորդ տարիներին, ըստ Քսենոփոնի «Կյուրոպեդիայի»¹⁴, Յայաստանն ուներ իր թագավորները, որոնք պատերազմելով Մարաստանի դեմ, երբեմն անկախ, երբեմն էլ կախյալ էին նրա Կիաքսար և Աստիագեն (Աժդահակ) թագավորներից: «Կյուրոպեդիայի» անանուն մնացած հայոց թագավորն, ըստ Մարաց թագավորության ժամանակաշրջանի հայ իշխողների Խորենացու ցուցակի, հավանաբար երվանդն է¹⁵: Այս երվանդին նախորդել է հայրը, իսկ ինքն էլ ուներ երկու որդի՝ Տիգրան և Սաբարիս: Տիգրանը Կյուրոսի ընկերն էր, իսկ Սաբարիսի անունը Մանանդյանն ընթերցում է Շավարշ¹⁶:

Եվ այսպես, մ.թ.ա. 585թ. Մարաստանի և Լիդիայի միջև ճակատամարտն արևի խավարման պատճառով ընդհատվեց, և երկու երկրները հաշտություն կնքեցին, ըստ որի, նրանց տարանջատող սահմանը դարձավ Յալիս գետը: Մարական թագավորությունը կազմված էր նրան հպատակություն հայտնած կամ նրանից կախման մեջ գտնվող ցեղերից ու երկրներից, որոնք պահպանում էին իրենց կրոնը, լեզուն,

² Пиотровский Б., Ванское царство (Урарту), М., 1959, Арутюнян Н., Топономика Урарту, Ереван, 1985, с. 71., Աղոնց Ն., Յայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 205:

³ Յայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, Երևան, 1981, էջ 48:

⁴ Նույն տեղում, էջ 58:

⁵ Пиотровский Б., նշվ. աշխ., էջ 68:

⁶ Յայ ժողովրդի պատմ. քրեստոմատիա, էջ 73–81:

⁷ Пиотровский Б., նշվ. աշխ., էջ 118:

⁸ Յայ ժողովրդի պատմ. քրեստոմատիա, էջ 75:

⁹ Նույն տեղում, էջ 77:

¹⁰ Арутюнян Н., նշվ. աշխ., էջ 87, 118:

¹¹ Յայ ժողովրդի պատմություն, հ. 1–ին, Երևան, 1971, էջ 314:

¹² Աղոնց Ն., նշվ. աշխ., էջ 205:

¹³ Յայ ժողովրդի պատմություն, հ. 1, էջ 372:

¹⁴ Մանանդյան Յ., Երկեր, հ. Ա, Երևան, 1977, էջ 384–400:

¹⁵ Խորենացի, Պատմություն հայոց, Երևան, 1968, էջ 108–109:

¹⁶ Մանանդյան Յ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 50:

օրենքներն ու ներքին ինքնուրույնությունը¹⁷: Մարաստան փոքրասիական տիրույթը, Ի.Դյակոնովի ենթադրությամբ, միացվեց Հայաստանին¹⁸: Այսպիսով, Հայաստանի սահմանը հասնում էր Սև ծովի ափը, քանի որ մարական այդ տիրույթը ներառում էր Հալիսի գետաբերանից դեպի արևելք ընկած տարածքները, հավանաբար՝ մինչև Գայլ գետի ստորին հոսանքը, գուցե՝ մինչև ապագա Փառնակիա՝ ծովային խալիբների երկիրը: Ինչպես գրում է Գ. Տիրացյանը. «...նման վիճակը բացատրվում է Հայաստանի էթնոքաղաքական տարածմամբ դեպի արևմուտք ու հյուսիսարևմուտք, որով արդեն ի սկզբանե ապագա Փոքր Հայքի տարածքն ամբողջությամբ, Կապադովկիայի ու Պոնտոսի որոշ մասեր մտնում էին նրա կազմի մեջ: Այդ պատճառով էլ Հալիսից արևելք գտնվող նվաճված տարածքը՝ ծովափը ներառյալ, պետք է նույնպիսի ճակատագիր ունենար և ենթարկվեր Հայաստանին»¹⁹: Այս սահմանն անձեռնմխելի է մնում շուրջ չորս տասնամյակ, որից հետո կրում է մասնակի փոփոխություն:

Մարական թագավորության անկումից հետո, Քսենոփոնի «Կյուրոպեդիայից» դատելով, Հայաստանը ձեռք է բերել լիակատար անկախություն: Հավանաբար մ.թ.ա. 546-ին, լիդիական արշավանքի մախօրեին, Աքեմենյան Իրանի հիմնադիր Կյուրոսը մտել է Հայաստան, որպեսզի ապահովի իր թիկունքը: Լիդիան նվաճելով՝ Կյուրոսը ստեղծում է Կապադովկյան սատրապությունը, որին են հանձնվում Հալիս գետից արևելք ընկած հայկական տիրույթները, ինչի հետևանքով Հայաստանի մերձսևծովյան սահմանները որոշ փոփոխություն են կրում՝ Հալիսից տեղափոխվելով Գայլ գետ և ընդգրկելով նաև ծովային ափամերձ շրջանները²⁰:

Ըստ Հերոդոտոսի, Աքեմենյան Իրանի նշանավոր տիրակալ Դարեհը (մ.թ.ա. 522-486թթ.) իր կայսրությունը բաժանեց քսան նահանգների: Հայաստանից կազմվեց երկու նահանգ՝

¹⁷ Նույն տեղում, էջ 42-43:

¹⁸ Дьяконов И., История Мидии, М.-Л., 1956, տես մարական տերության քարտեզը, էջ 337:

¹⁹ Տիրացյան Գ., Երվանդյան Հայաստանի տարածքը (մ.թ.ա. 6-րդ դ. վերջ, մ.թ.ա. 3-րդ դ. վերջ), ՊԲՀ, 1981, N 2, էջ 69:

²⁰ Նույնը:

13-րդը և 18-րդը: Ինչպես գրում է պատմահայրը. «Պակտյուրիկեից, արմեններից և հարևաններից մինչև Եվքսինյան (Սև ծով-Ս.Վ.) ստացվում էր չորս հարյուր տաղանդ, սա տասներեքերորդ նահանգն էր»²¹: Այս տեղեկությամբ Հերոդոտոսն ուղղակի վկայում է, որ Հայաստանի մաս կազմող 13-րդ նահանգի սահմանները հասնում էին Սև ծով: Մինչ այս բաժանումը հայերը հինգ անգամ ապստամբել էին Դարեհի դեմ, և բնական է, որ նա չցանկանալով ուժեղացնել հայերին՝ նոր երկրամասեր չէր տա: Այս փաստը կրկին ապացուցում է, որ սևծովյան տիրույթները նույնիսկ օտար տիրակալների կողմից դիտվում էին որպես Հայաստանի անքակտելի մաս: Արդ, որո՞նք էին Հայաստանի՝ նույնն է թե նրա մաս կազմող 13-րդ նահանգի սևծովյան սահմանները: Այս հարցը մանրամասն քննել է Գ. Տիրացյանը: Ըստ նրա. «...13-րդ սատրապությունը ձգվում էր Կոտիորայից (հետագայում՝ Օրդու-Ս.Վ.), որտեղ նա սահմանակից էր 19-րդ սատրապությանը, դեպի արևմուտք:...Ամենայն հավանականությամբ, հենց Թերմոդոնտի գետաբերանում ավարտվում էր 3-րդ սատրապությունը և սկսվում էր 13-րդը...»²²: Հավանաբար, այս ժամանակներին է վերաբերում Մետրոդորոս Սկեպսիացու այն վկայությունը, թե Թերմոդոնտ գետը հնում կոչվել է Արաքս²³: Ըստ երևույթին, մ.թ.ա. 7-6-րդ դարերից է գալիս Սինոպի ծովածոցի Արմենե անվանումը²⁴:

Ինչ վերաբերում է Հայաստանի մյուս մասը կազմող 18-րդ նահանգին, ապա այդ մասին Հերոդոտոսն ասում է. «Մատինների, սասպեյրների և ալարոդների վրա սահմանված էր երկու հարյուր տաղանդ, սա տասներեքերորդ նահանգն էր»²⁵: Այն, որ հիշյալ հատվածի «ալարոդները» պետք է կարդալ «արմեններ», համոզիչ փաստարկներով ապացուցել է ակադեմիկոս Գ.Սարգսյանը²⁶: Այս ուղղումը խիստ կարևոր է հա-

²¹ Հերոդոտոս, Պատմություն ինը գրքերից, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1986, Գ-93, էջ 197:

²² Տիրացյան Գ., նշվ. աշխ., էջ 70:

²³ Ադոնց Ե., նշվ. աշխ., էջ 319:

²⁴ Նշվ. աշխ., էջ 321:

²⁵ Հերոդոտոս, Գ-94:

²⁶ Տես Հերոդոտոսի թարգմանության «Պատմահայր Հերոդոտոսը» վերջաբանը, հեղինակ՝ Գ. Սարգսյան, էջ 573-577:

յագիտության համար, այն նաև օգնում է պատկերացնելու ոչ միայն 18-րդ նահանգի ազգային կազմը, այլև Հերոդոտոսի մեկ այլ վկայության օգնությամբ հնարավորություն է տալիս պարզել հայերի և ծովափնյա կոլխերի միջև եղած կապերը: Դարեհի արշավանքների մասին խոսելիս, Հերոդոտոսը, թվարկելով տարբեր ազգերի զորքերը, նշում է նաև նրանց հանդերձանքը. «Կոլխերն իրենց գլխին կրում էին փայտե սաղավարտներ, անմշակ կաշուց պատրաստած փոքր վահաններ, կարճ տեգեր, ինչպես նաև դաշույններ:

...Ալարոդները (իմա՝ արմենները—Ս.Վ.) և սասպերները արշավում էին կոլխերի նման զինված»²⁷: Իհարկե, դեռ հարց է, թե ով էր ում նման զինված, արմենները՝ կոլխերի, թե՞ կոլխերը՝ արմենների, եթե հիշենք, որ դեռևս Սարդուր Երկրորդն էր մ.թ.ա. 8-րդ դարում նվաճել կոլխերին: Եթե այստեղ ներկայացնենք նաև, թե ինչպես էին զինված Սև ծովի ափամերձ շրջանների ցեղերը՝ մոսքերը, տիբարենները, մակրոններն ու մոսսինոյկները, ապա դժվար չէ նկատել այն ընդհանրությունները, որ կան նրանց և Հայաստանի՝ 13-րդ և 18-րդ նահանգների բնակիչների ռազմական հանդերձանքի միջև. «Մոսքերն իրենց գլխին ունեին փայտե սաղավարտներ, նրանք կրում էին վահաններ և երկար ծայրերով փոքր նիզակներ: Տիբարենները և մակրոնները, և մոսսինոյկները արշավում էին զինված մոսքերի նման»²⁸:

Համադրելով վերոշարադրյալ բոլոր պատմական վկայություններն ու փաստերը, կարծում ենք, որ համոզիչ է նշանավոր հայագետ Հակոբոս Տաշյանի այն եզրակացությունը, որ «Հայ ցեղն հնուց իսկ անհրաժեշտաբար աղերս ունենալու էր Հայաստանի սահմաններեն քիչ մը հեռու Սև ծովու ափանց հետ: Արդ ճշդիւ այն ծովափը, ուր կը գտնուի հայ Համշեն, կը վերաբերեր Հայաստանի նոյն իսկ երբ ասի պատմութեան մեջ կ'երեւայ առաջին անգամ Armenia ձեւով»²⁹:

Առայժմ նյութերի խիստ սակավության պատճառով դժվար է որոշել հետագա հարյուրամյակներում Հայաստանի

և Սև ծովի ափամերձ երկրամասերի առնչությունները: Մ.թ.ա. 400թ. հունական զորքի նահանջի մասին Քսենոփոնի նկարագրությունը ևս այդ հարցին պատասխանելու քիչ հնարավորություններ է ընձեռում: Այն ինչ—որ չափով պատկերացում է տալիս մինչև Տրապիզոն ընկած հատվածի մասին:

Ըստ հույն աշխարհագրագետ և պատմագիր Ստրաբոնի (մ.թ.ա. 64/63—մ.թ.22/24), որը ծնվել է Ամասիա քաղաքում և քաջածանոթ էր Հայաստանին, Սև ծովի ափամերձ մի զգալի հատվածը մտնում էր Փոքր Հայքի թագավորության մեջ. «Փառնակիայի (Կիրասոն - Ս.Վ.) ու Տրապիզոնի գավառներից վերև մինչև Փոքր Հայք գտնվում էին Տիբարենացիք և Խաղտիք: Փոքր Հայքը բավական բերրի երկիր է: Ծովաց նման սա էլ ունեցել է միշտ իր բնիկ իշխանները, որոնք մերթ Մեծ Հայոց բարեկամներն էին և մերթ ինքնագլուխ: Իրենց հնազանդ էին Խաղտիք և Տիբարենները, այնպես որ իրենց իշխանությունը տարածվում էր մինչև Տրապիզոն և Փառնակիա»³⁰:

Այն, որ նույնիսկ օտար նվաճողներն են Սև ծովի առափնյակն ընկալել որպես Հայաստանի մաս, ապացուցում են ոչ միայն Դարեհի կատարած վարչական բաժանումները, այլև հետագա դարերում եղած սահմանափոխությունները: Այսպես, Բյուզանդիայի կայսր Կոստանդին Մեծը (306—337թթ.) իր կայսրությունը բաժանեց տարբեր դիոցեզների և նահանգների: Ըստ այդմ, կայսրության կազմում գտնվող Առաջին և Երկրորդ Հայքերը, նաև Պողեմոնյան Պոնտոսը միավորված էին Հայաստանի դուքս (dux Armeniae) կոչվող պաշտոնյայի իշխանության ներքո³¹: Այսպիսով, 4-րդ դարի սկզբներին Սև ծովի ափամերձ շրջանները, մինչև Լազիկա, ենթարկվում էին Հայաստանի դուքսին:

Բյուզանդական մեկ ուրիշ նշանավոր կայսր՝ Հուստինիանոսը, իր թագադրման հենց սկզբում ձեռնարկեց կայսրության վարչական և ռազմական վերափոխումներ: 528թ. նա կազմավորեց ռազմական մի նոր նահանգ, որի մեջ մտան Պողեմոնյան Պոնտոսը, Առաջին և Երկրորդ Հայքերը, ինչպես

²⁷ Հերոդոտոս, (7-79), էջ 410-411:

²⁸ Նույն տեղում:

²⁹ Գ. Հակոբոս Կ. Տաշյան, Հայ բնակչությունը Սև ծովեն մինչև Կարին, պատմական-ազգագրական հարեւանցի ակնարկ մը, Վիեննա, 1921, էջ 9:

³⁰ Ստրաբոն, քաղեց և քարզմանեց Հ. Աճառյան, Երևան, 1940, էջ 75:

³¹ Աղոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1987, էջ 112:

նաև Հարավային Հայաստանի աստրապոլոյունները: Այն ենթարկվում էր հայազգի զորավար Սիտտասին: Ինչպես տեսնում ենք, Հայաստանը մինչև Սև ծովի ափերը նույնիսկ Հուստինիանոսի կողմից դիտվում էր մեկ ամբողջություն:

Մի քանի տարի անց՝ 536թ., Հուստինիանոսը հրատարակում է իր 31-րդ նովելլան, որով Բյուզանդական Հայաստանը ենթարկվում է նոր բաժանման.«...մենք որոշեցինք կազմել չորս Հայք. Ներքին, որի մայրաքաղաքն իր գեղեցկությամբ փայլում է արդեն մեր բարեպաշտ անունով, իսկ առաջ կոչվում էր Վազան կամ Լեոնտուպոլիս: Մենք շնորհեցինք նրան պրոկոնսուլություն եւ կառավարիչ նշանակեցինք Ակակիոս սքանչելուն: ... Մենք հատկացնում ենք նրան հետևյալ քաղաքները՝ Թեոդոսուպոլիսը, որ առաջ էլ նրան էր պատկանում, Սատաղը, Նիկոպոլիսը, Կողոմիան՝ վերցնելով դրանք այսպես կոչված Առաջին Հայքից, ինչպես նաև Տրապիզոնը և Կերասունը, որ մտնում էին նախկին Պողեմոնյան Պոնտոսի մեջ»³²: Հուստինիանոսի հիշատակած Ակակիոսը հայ էր, և նրան էր հանձնվում Առաջին կամ Ներքին Հայք կոչվող երկրամասը, որի կազմում էին, ինչպես տեսնում ենք, նաև Տրապիզոնը և Կերասունը:

Թեմայի ընդարձակության պատճառով մենք ներկայացրեցինք ընդամենը մի քանի դրվագ, որոնք վկայում են, որ Սև ծովի հարավային և հարավ-արևելյան ափերը դեռ հնում, տարբեր դարերում եղել են հայկական պետության կամ հայկական վարչական միավորների կազմում:

Խնդրի վերաբերյալ հետաքրքրական վերլուծությունների առիթներ են տալիս նաև հայ պատմիչների երկերը, նաև հնագույն առասպելները: Մովսես Խորենացին թվարկելով իր պատմության աղբյուրները գրում է, որ օգտվել է Ափրիկանոսի հինգերորդ գրքից, «որին վկայում են Հովսեպոսը և Հյուպոդիտան հույներից և ուրիշ շատերը: Որովհետև նա ամբողջապես փոխադրեց ինչ-որ Եդեսիայի, այսինքն՝ Ուռհայի դիվանում գրվածքներ կային մեր թագավորների մասին: Այս մատյաններն այնտեղ փոխադրված էին Մծբինից և Պոնտոսի Սինոպից՝ մեհենական պատմություններից»³³: Ուրեմն, Սինո-

պի մեհյաններում կային մատյաններ, որոնցում «գրվածքներ կային» Հայոց թագավորների մասին: Եթե հիշենք, որ Սինոպի ծովածոցն արդեն մեր թվարկությունից առաջ կոչվում էր Արմենե, ապա սինոպյան մեհենական մատյանների փաստը մեծ կարևորություն է ստանում:

Սև ծովի ափերին հայերի մղած մարտերի մի հեռավոր արձագանքը կարելի է գտնել Տորք Անգեղի մասին առասպելում: Ըստ Խորենացու, աժդահա Տորքը «Պոնտոս ծովի ափին պատահել է թշնամիների նավերի և վրա է հարձակվել, նրանք հեռացել են խոր ծովը մոտ ութ ասպարեգ: Չկարողանալով նրանց հասնել, ասում են, վերցնում է բլրածև ժայռեր և շարտում է նրանց հետևից: Ջրերի ալեկոծվելուց ոչ սակավ նավեր ընկղմվում են, և ջրերի պատառումից առաջացած ալիքները մնացած նավերը շատ մղոններ հեռու են քշում»³⁴: Խորենացու պատմության մեջ հիշվող Հայոց Վաղարշակ թագավորի պոնտական արշավանքները, պոնտացիների և եգեթրացիների, այսինքն՝ աջարների երկրները կարգավորելը³⁵, նրա որդի Արշակի՝ Սև ծովի ափին կուռք թողնելու և պոնտացիների կողմից այն որպես աստվածների գործ պաշտվելու³⁶, Վաղարշակի կամ նրա որդու ժամանակ Սև ծովից հարձակվող թշնամիների նավերը խորտակելու մասին Տորք Անգեղի առասպելը և պատմահոր՝ Սև ծովին առնչվող մի շարք այլ հիշատակումներն, անշուշտ, պատմական իրադարձությունների երբեմն խունացած, երբեմն էլ զուևագարդված արձագանքներ են:

Սև ծովի հարավարևելյան և հյուսիսային ափերի հետ հայերի հարաբերություններն ավելի են սերտանում Տիգրան Մեծի և Պոնտոսի թագավոր Միհրդատ Եվպատորի ժամանակներում՝ մ.թ.ա. I դարում:

Պարխարյան լեռնալանջերի հայաբնակ լինելն էր պատճառը, որ հնուց անտի հաճախ վտանգի դեպքում այնտեղ էին պատսպարում հայ իշխաններն ու շինականները: Ավարայրի ճակատամարտից հետո բազմաթիվ զորավարներ ու

³² Աղոնց Ս., *Նշվ. աշխ.*, էջ 190:

³³ Խորենացի, *Պատմություն Հայոց, Երևան, 1968*, էջ 142:

³⁴ Նույն տեղում, էջ 138-139:

³⁵ Նույն տեղում, էջ 133:

³⁶ Նույն տեղում, էջ 141:

մարտիկներ ապաստանեցին այս հայաշխարհի լեռներում և շարունակեցին պարսիկների դեմ պայքարը: Այն, որ հայոց հին օրացույցի ամսօրերից մեկը՝ 13-րդը, կոչվում էր Պարխար, վկայում է, որ այս լեռնաշղթան հայոց հնագույն ավանդույթով Մասիսի ու Արագածի հետ սրբացվել է³⁷: Այդ մասին տեղեկանում ենք Անանիա Շիրակացուց, որն, ի դեպ, 8 տարի՝ մինչև 661թ. ապրել և կրթություն է ստացել Տրապիզոնում³⁸: Այդ շրջանում էր՝ 654-ին, որ Հայոց իշխան Թեոդորոս Ռշտունին գրավեց Տրապիզոնը:

Ավելի ուշ այս բնաշխարհիկ վայրերում հայերի նորանոր, ստվար խմբեր հաստատվեցին: Ականատես պատմիչ Ղևոնդի վկայությամբ, արաբների տիրապետության շրջանում՝ «Ուլբեդլայի գալու մյուս տարում նույն ծանր դժբախտությունները առավել ևս շատացան, քանզի դրանից հետո ոչ ոք իր ինչքի տերը չէր, այլ ամեն ինչ ավարի էին տանում: Շատերն ինքնակամ թողնում էին հոտերն ու նախիրները և փախստական էին դառնում, չկարողանալով աղետների ծանրությանը դիմանալ, իսկ թշնամիները քշում էին անասուններն ու ավարի տալիս ունեցվածքը:

Ապա, երբ այսպես ունեցվածքից զուրկ մնացին, մերկ, բոբիկ ու սովամահ, և իրենց ապրուստի միջոց չգտնելով, քաշվեցին փախստական գնացին Հունաց աշխարհը: Նրանց թիվը ասվում է, թե 12 հազարից ավելի էր, կանանցով ու մանուկներով հանդերձ, և նրանց առաջնորդներն էին Ամատունյաց տոհմից Շապուհը, նրա որդի Համամը և ուրիշներ Հայաստանի նախարարներից ու նրանց հեծյալներից: Անօրեն չարաշուք թշնամին փախստականների ետևից իր զորքով հետամուտ լինելով՝ հասավ Վրաց սահմանը՝ Կող գավառը: Ընդ որում մարտի մեջ մտնելով, փախուստի մատնվեց, և ոմանք սատակեցին, իսկ իրենք (փախստականները) անցան Ակամսիս (Ճորոխ-Ս.Վ.) գետը, որը, Տայքի կողմերից բխելով, գնում է հյուսիս արևմուտք, անցնելով Եգերաց երկիրը՝ մտնում է Պոնտոս:

³⁷ Անանիա Շիրակացի, Սատենագրություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Գ. Աբրահամյանի և Գ. Բ. Պետրոսյանի, Երևան, 1979, էջ 257:

³⁸ Նույն տեղում, էջ 11, 26-27:

Երբ գետն անցան, շուտափույթ իմաց տվեցին Հունաց Կոստանդին արքային: Սա իր մոտ կանչելով նրանց նախարարներին ու հեծյալներին՝ պատիվներ շնորհեց և մնացեալ խառնիճաղանջ ժողովրդին բնակեցրեց բարվոք ու արգավանդ երկրում: Սակայն ժողովրդի կեսը, որ մնաց (հայրենիքում), սաստիկ կարոտության պատճառով ստրկական ծառայության անձնատուր եղավ, փայտահատ ու ջրաբեր դարձավ...»³⁹: Ըստ ակադեմիկոս Լ.Խաչիկյանի, Ամատունիների այս մարդաշատ գաղթը տեղի է ունեցել 789-790թթ.: Այրարատյան նահանգի Արագածոտն և Կոտայք գավառներից⁴⁰:

Ղևոնդին լրացնում է Հովհան Մամիկոնյանը. Համամ Ամատունին հաստատվում է Տամբուր քաղաքում, բայց վրաց Վաշդեն իշխանը, օգնական զորք ստանալով՝ դավաճանաբար հարձակվում և ավերում է Տամբուրը. «Համամը, սակայն, հետո վերաշինեց քաղաքը և իր անունով կոչեց Համամաշեն»⁴¹, որը հետագայում կրճատ արտասանվում է Համշեն, բայց սկզբնական անվանումը կիրառվել է երկար դարեր: 1506թ. ընդօրինակված շարակնոցի հիշատակարանի հեղինակ Հայրապետը գավառն անվանում է Համամաշեն⁴², նույնիսկ 18-րդ դարում, Վենետիկի Մխիթարյան միաբաններից Հ.Պողոս վրդ. Մեհերյանը զուգահեռաբար օգտագործում է Համամաշեն և Համշեն ձևերը⁴³:

Երկրի դժվարանց, մառախլապատ ու անշավիղ լինելը մեծապես նպաստեց, որ Ամատունիների իշխանությունը Հա-

³⁹ Ղևոնդ, Պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները՝ Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1982, էջ 132-133:

⁴⁰ Խաչիկյան Լ., Էջեր համաշինահայ պատմությունից, «Քաներ երևանի համալսարանի», 1969, N2, էջ 118-120:

⁴¹ Հովհան Մամիկոնյան, Տարոնի պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները՝ Վարդան Վարդանյանի, Երևան, 1989, էջ 113: Տես նաև Եղիազարյան Ա., Համամաշեն-Համշենի հիմնադրման ժամանակի մասին, «Չայն համշենական», 2007, N1-2: Նույնի, Տամբուր - Համամաշեն-Համշենի, համանուն իշխանության, Արտաշենի և Համշենի այլ բնակավայրերի տեղադրության մասին, «Չայն համշենական», 2007, N7-8:

⁴² Տես Երևանի Սատենադարանի թիվ 7056 ձեռագրի հիշատակարանը:

⁴³ Վարդանյան Ս., Կարևոր սկզբնաղբյուր մահմեդականացված հայերի մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 2004, N3, էջ 167-168:

մամաշեն–Յամշենում պահպանվի շուրջ 7 դար: Ցավոք, այս իշխանության պատմությունը ևս մշուշապատ է: Լ.Խաչիկյանը պատմական սակավաթիվ տվյալների հիման վրա պարզել է XV դարի մի քանի իշխանաց իշխանների անուններ՝ Առաքել, Դավիթ Ա, Վարդ, Վեքե, Դավիթ Բ⁴⁴: Յամշենի իշխանությանը վերջ տրվեց 1489թ. թուրքերի կողմից Կոստանդնուպոլսի գրավումից երեք տասնամյակ անց:

Հայտնի են նաև համշենցի մի շարք նշանավոր մտածողների ու գրիչների անուններ՝ XV դարի ականավոր գիտնական և մանկավարժ Հովհաննես Բարունապետ (Հովհաննես եպիսկոպոս Յամշենցի), XV–XVI դարերի գրիչներ՝ Աստվածատուր, Կարապետ, Հովհաննես, Խաչատուր, Հակոբ, Սովսես և ուրիշներ, որոնք տքնում էին Յամշենի՝ Քոշտենց, Խուժկա, Խաչեքարի և այլ վայրերի վանքերում⁴⁵:

Ըստ թուրք աղբյուրագետ Թայիբ Գյոքբիլգինի հրապարակած վավերագրերի, 16–րդ դարում Յամշենը (Հեմշինը) որպես կազա (զավառ) մտնում էր Տրապիզոնի լիվայի մեջ, բաժանված էր 3 նահիյեների (զավառակների, գյուղախմբերի)՝ Հեմշին, Քարա–Հեմշին և էքսանոս, ուներ 34 գյուղ՝ 671 տուն, որից 214–ը՝ մահմեդական և 457–ը՝ քրիստոնյա: Գավառում կար 2 բերդ⁴⁶: Ինչպես տեսնում ենք, 16–րդ դարում, Յամշենի գավառում քրիստոնյաները որպես մահմեդական գրանցված բնակիչներից կրկնակի ավելի էին: Թե իրականում ովքեր էին այդ մահմեդականները, այժմ դժվար է ասել, բայց անկասկած է, որ նրանց մի մասը բռնի կրոնափոխված քրիստոնյաներ էին: Այդ է ապացուցում Օսմանյան կայսրությունում դարեր շարունակ վարված ծուլողական քաղաքականությունը:

⁴⁴ Խաչիկյան Լ., նշվ. աշխ., էջ 130:

⁴⁵ Նույն տեղում, էջ 131–134:

⁴⁶ Tayyib Gökbilgin, XVI. Yüzyıl Başlarında Trabzon Livası ve Doğu Karadeniz Bölgesi. "Belleiten", Ankara, Cilt:XXVI, Sayı: 102, 1962, Nisan, s.322–323. Ավելի մանրամասն տես Սահակյան Լուսինե, Օսմանյան կայսրությունում համշենահայերի բռնի մահմեդականացման քաղաքականության հետևանքները, 77 ՊԱՄ Արևելագիտության ինստիտուտ, Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, հ. 4, Երևան, 2006, էջ 207–228: Տես նաև Dr. M. Hanefi Bostan, XV–XVI. Asırlarda Trabzon Sancağında Sosyal ve İktisadi Hayat. Ankara, 2002.

Հայաշատ էր ոչ միայն Յամշենը, այլև Սև ծովի ողջ հարավային առափնյակն, այնքան, որ նույնիսկ XVII դարի թուրք պատմիչ Մյունեջջիմ Բաշին գրում է. «Արմենիայի սևծովյան նավահանգիստը Տրապիզոնն է»⁴⁷:

XVIII դարի սկզբներին սկսվում է Յամշենի և հարևան Սև գետ գավառի հայերի ողիսականը: Թուրքերի բազմահազարանոց ամբոխը մահ տարածելով՝ փորձում է կրոնափոխել նրանց: Հավատի համար պայքարը շատ զոհեր է խլում, և հայերի արնաքան բեկորները սփռվում են Բաթումից մինչև Տրապիզոն, այնտեղից էլ մինչև Օրդու, Ունիե, Սամսոն ու Սինոպ, այնուհետև հասնում Նիկոմեդիա, հարյուրավոր կիլոմետրերով հեռանալով հայրենի տնից, ժապավենում Սև ծովի հարավային ափերը: Նրանք ոչ միայն որպես սրբության սրբոց պահպանեցին իրենց բարբառը, այլև դժվարանց ծորերում ու անտառախիտ լեռներում՝ անկախությունը:

Բնիկ տրապիզոնցի, Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Հ. Մինաս վարդապետ Բժշկյանը, որը 1815–19թթ. ճանապարհորդել է Սև ծովի ափերով, Չարշանպայից ոչ հեռու գտնվող Խուռշունլի ավանի մասին գրում է, որ «Բնակիչներն են հայ Յամշենու եկած. և ամենքը զինուոր գրված են որդւոց որդի, և ունին զօրապետ հայ իշխան, որ զիրենք կը կառավարէ, մարդէ ահ չունին. միայն Տերէպէկիին հետ պատերազմ կերթան. և զօրաւոր մարդիկ են»⁴⁸: Ըստ երևույթին, այսպիսի անկախ կամ կիսանկախ ծորապետություններ և իշխանություններ համշենահայությունը ստեղծել է Տրապիզոնի նահանգի տարբեր վայրերում, բայց, ցավոք, դրանց հերոսական պատմությունը ժամանակին չի գրառվել, իսկ եղած պատմական նյութն էլ ջարդ ու կռվի տարիներին ոչնչացել է: Չեն ուսումնասիրված նաև այդ հայաշխարհի լեռնային, անմատչելի վայրերում գտնվող հուշարձաններն ու արձանագրությունները: Իրենք՝ այդ անկախ ծորապետությունների ու գյուղախմբերի բնակիչները ևս վարում էին

⁴⁷ Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ.Բ, Երևան, 1964, էջ 199–200:

⁴⁸ Հ. Մինաս վրդ. Բժշկեան, Պատմութիւն Պոնտոսի որ է Սեւա ծով, Վենետիկ, 1819, էջ 49:

ներամփոփ կյանք և զգուշանալով խուսափում դրսի աշխարհի հետ շփումներից:

Օսմանյան կայսրությունն, անկասկած, չէր կարող հանդուրժել համշենցի հայերի տարբեր հատվածների անկախ կամ կիսանկախ գոյությունը և տարեցտարի ուժեղացնում էր հալածանքները:

Եվ ահա, 1849–ին հայերի մի խումբ, փոքր առազաստանավերով, հանգրվանեց Սև ծովի հյուսիսային ափերում: Իրադրությունը չափազանց լարված էր: Ռուս-թուրքական պատերազմի նախօրեին վտանգավոր էր ոչ միայն ծովում, այլև մերձակա լեռներում: Արդեն որերորդ տարին Շամիլի գլխավորած չերքեզական ցեղերը կենաց ու մահու կռիվ էին մղում ռուսական կանոնավոր զորքերի դեմ: Ահա այդպիսի փոթորկահույզ ժամանակներում էր, որ համշենցի հայերի փոքր խմբերը ափ իջան Նովոռոսիյսկում: Առանց լուրջ պատճառի, բնական է, ոչ ոք նման նավարկություն չէր ձեռնարկի: Հայազգի նշանավոր ռազմածովային գործիչ, փոխծովակալ (1854-ից՝ ծովակալ) Լազր Սերեբրյակովը 1849թ. Ներսես Աշտարակեցուն գրում է. «Իմ կողմից Նովոռոսիյսկ քաղաքը հիմնադրելուց հետո թուրքահպատակ լուսավորչական հայեր Տրապիզոնից, Սինոպից և սահմանամերձ այլ վայրերից բնակության են եկել այնտեղ: Նրանում, լեռներից դուրս գալուց հետո սկսել են բնակություն հաստատել նաև անդրկուբանյան հայերը»⁴⁹: Նովոռոսիյսկում հաստատվում են 14 հայ լուսավորչական ընտանիք և 25 ամուրի: Մեկ տարի անց Նովոռոսիյսկում ապրում էին 113 (75 տղամարդ և 38 կին), Անապայում՝ 44, Ֆանագորիայում՝ 178 հայեր⁵⁰:

Ինչպես նամակն է տեղեկացնում, նորաբնակներից բոլորը չէ, որ համշենահայեր էին. նրանց մեջ քիչ չէին նաև չերքեզահայերը, որոնք այդ լեռնաշխարհում և Կուբանի բարեբեր ափերին բնակություն էին հաստատել դեռևս XV–XVI դարերում, մեծագույն հարգանք էին վայելում տեղական ժողովրդի ու ավագանու մոտ և, թեև դանդաղորեն, մոռանում էին մայ-

⁴⁹ Խույն տեղում, էջ 266:

⁵⁰ Միքայելյան Վ., Ծովակալ Լ. Ս. Սերեբրյակով (Ղազար Մարկոսի Արծաթագործյան), Երևան, 1979թ., էջ 265–266:

րենին, բայց պահպանում էին քրիստոնեական հավատը, և նույնիսկ ուժ գտան 1839–ին հիմնելու Հայկական աուլը, որը շուտով ի հիշատակ նախնյաց փառավոր մայրաքաղաքի կոչեցին Արմավիր:

Սերեբրյակովի նամակը միակ փաստաթուղթը չէ, որ վկայում է, որ ներկայիս նշանավոր առողջավայր Անապայի հնագույն բնակիչների մեջ կային նաև հայեր: Թուրք պատմիչ Ահմեդ–Ջևդեթ փաշան խոսելով 1784թ. Անապայի բերդի վերաշինման մասին, ասում է, որ այդ ժամանակ Անապայում հայերը բավական մեծ թիվ էին կազմում, ունեին դերձակների, մուշտակագործների, սարաֆների (դրամափոխների - Ս.Վ.) արհեստակցական ընկերությունները, բերդից դուրս կար հայկական թաղամաս և եկեղեցի⁵¹:

Մինաս վրդ. Բժշկյանը պատմում է, որ Գելենջիկի մոտակայքում կար երկու գյուղ՝ Աթուխա և Պզատուխ, «ուր բոլորը հայ են, և ունին ժամ և քահանայ, որ Քիրման բերդին բնակիչներն են Աճեմիստանեն եկած ժամանակով, յետոյ հոս են փախել. որոնք ապագայի վարք ունին. հոգուհաց ընելու աւելի ջերմեռանդ են. ուրիշ բանի շատ չեն նայիր. նաև քահանան կը պատուեն, ինչպէս որ պետք է, թպէտ տգիտութեամբ լեցված են. առուտուրի, որսորդութեան քաջ են, ուրիշ բան չիտեն. հասարակ լեզունին ապագայի է, գիտեն հայերէն. ունին ժամ, ուր առաջ վարդապետ կար. որ գիրենք կը հոգար, յետոյ վախճանեցաւ, ինչպէս տեսան(ք) գերեզմանը. իրենց աղջիկներն ալ ապագայի նման են հագուստով և ամեն վարքով. գլուխնին կլոր խալբախ կը դնեն, որ իրենք կը շինեն»⁵²:

Համշենահայերի առաջին խոշոր բնակավայրերից մեկը՝ Տենգիմկան (Շափսուղ) է, ուր նրանք հաստատվեցին Ղրիմի պատերազմից (1853–1856թթ.) անմիջապես հետո⁵³: Այնուհետև կառուցվում են համշենահայերի նոր գյուղեր ու ե-

⁵¹ Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ.Ա, Երևան, 1961, էջ 275, 319:

⁵² Գ. Մինաս վրդ. Բժշկեան, նշվ. աշխ., էջ 116:

⁵³ Անտոնյան Ա., Համշենահայության պատմությունից, ԲՀԱ, Երևան, 1979, N 3, էջ 116–118: Минасян М., Армяне Причерноморья, Ереван, 1990, с. 87, Кузуб М., Расселение армян в Джубзгском округе, «Չայն համշենական» ամսաթերթ, 2006, N 9–10:

կեղեցիներ: Նրանց առազաստանավերը խարխս են գցում ոչ միայն ներկայիս Կրասնոդարի երկրամասի, այլև Աբխազիայի ավերին, ուր 1870-ական թթ. սկսած հիմնում են գյուղեր կամ բնակվում թուրքիա հեռացած արխագների լքված բնակավայրերում⁵⁴: Աբխազիա գաղթին նպաստում է նաև այն հանգամանքը, որ արխագները, որոնք դավանում էին քրիստոնեություն և մահմեդականություն, կրոնական հարցերում շատ հանդուրժող էին, ինչպես 1852թ. է հայազգի փոխծովակալ և Սուխումի մաքսատնային օկրուգի կառավարիչ Լ. Սերեբրյակովը գրել. «Մի շարք գերդաստաններում երեխաների մի մասը հետևում է քրիստոնեական, իսկ մյուսը՝ մահմեդական ուսմունքին՝ առանց որևէ ընտանեկան երկպառակության, և դա հատկապես այն ընտանիքներում, որոնցում մարդ ու կին տարբեր հավատի են»⁵⁵:

Իսկ Եկատերինոդար (Կրասնոդար) քաղաքում հայերը հիշատակվում են նրա հիմնադրումից արդեն 3-4 տարի անց 1797-ին, ևս 5 տարի հետո 1802-ին նրանք ունեին իրենց աղոթատեղին մատուռը: 1863-ին հիմնվում է Մետրոպոլիտանը, 1870-ին բացվում է նաև օրհորդաց ուսումնարան⁵⁶:

Հայերի հոսքը դեպի Սև ծովի հյուսիսային ավեր ու Աբխազիա մեծ չափերի է հասնում 1894-95թթ. ջարդերի և Մեծ եղեռնի տարիներին: Իր հայրենի հողում, իր տանը արյան մեջ խեղդվում է Տրապիզոնի նահանգի հայությունը, ընդհատվում ազգային զարթոնքը, որն ունեցավ բազում փայլատակումներ: Մեծ եղեռնից առաջ՝ 1909-1913 թթ. Տրապիզոն քաղաքում լույս են տեսել մի քանի պարբերականներ՝ 1909-ին՝ «Խարխսխ» գրական, հասարակական, ժողովրդական կիսաշաբաթաթերթը, 1909-1910 թթ.՝ «Գեղջուկ» թերթը, 1910-ին՝ «Մոծակ» երգիծական շաբաթաթերթը, «Շարժում» շաբաթօրյա թերթը, 1910-13-ին՝ «Պոնտոս» գրական, հասարակական և ազգային շաբաթաթերթը (սկզբում՝ կիսամսյա

հանդես), 1911-ին՝ «Բժիշկ» բժշկական, առողջապահական ամսաթերթը, «Շամանդաղ» հանդեսը, 1911-12-ին՝ «Պիծակ» երգիծական շաբաթաթերթը, Կիրասնում՝ 1909-ին «Կայծ» շաբաթաթերթը, 1909-11 թթ.՝ «Փեթակ» գրական, հասարակական կիսամսյա հանդեսը, 1913-ին՝ հայերեն-հունարեն-ֆրանսերեն-թուրքերեն «Ռեքլամ» եռօրյա թերթը, իսկ Սամսոնում՝ 1914-ին՝ «Դպրոց» գրական-գիտական ամսաթերթը⁵⁷: Ողջ նահանգում, ամենահամեստ հաշվումներով կար առնվազն 155 դպրոց, 145 վանք ու եկեղեցի⁵⁸:

Չնայած կոտորածներին ու գաղթին, հայրենիքում՝ Տրապիզոնի կուսակալությունում մնացել էին բավական շատ հայեր, որոնք մարտնչելով անտառախիտ լեռներում և անանցանելի ձորերում, մեծ կորուստներ էին պատճառում թուրքական զորքերին ու ոստիկանությանը: Ժողովրդական վրիժառուների խմբերը գեներ ձեռքներին պաշտպանում էին իրենց հայրենիքը, թուրքերից ազատում շատ կանանց ու երեխաների, և միայն 1923թ., իննամյա դյուցազնամարտից հետո նրանց վերջին նավերը հեռացան հայրենի ավերից:

Նոր բնակավայրերում համշենցի հայերը այլ տեղերից գաղթած ազգակիցների հետ փորձում են բուժել վերքերը, հայ ժողովրդի վերածննդի գաղափարին հավատարիմ՝ հարյուրավոր դպրոցներ կառուցում, զարկ տալիս մշակույթին՝ դարավոր փորձով համոզված, որ հայոց հարատևությունը գենքի ու գրչի դաշինքի մեջ է⁵⁹:

⁵⁷ Տես Հայ պարբերական մամուլը, մատենագիտական համահավաք ցուցակ 1794-1980, կազմեց՝ Մ.Ա. Բաբլոյան, ՀՍՄՀ ԳԱ հրատ., Երևան, 1986, էջ 70, 77, 80, 84, 85, 87, 90, 99, 100:

⁵⁸ Թողաքյան Բ., Տրապիզոնի նահանգի հայկական կրթական և կրոնական հաստատությունները Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1977, N3, էջ 73-87: Տես նաև Սաֆրաստյան Ա., Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքարանի կողմից Թուրքիայի Արդարադատության և դավանանքների մինիստրություն ներկայացված հայկական եկեղեցիների և վանքերի ցուցակներն ու թաքրիրները, «Էջմիածին», 1966, N6, էջ 41-45:

⁵⁹ Վարդանյան Ա., «Չայն համշենական», «Գարուն», 1980, N 6, էջ 93-94: Նույնի, ավանդույթի հեղինակը ուսանողներն են, «Հայաստանի աշխատավորուհի», 1984, N 7, էջ 31-32:

⁵⁴ Минасян М., նշվ. աշխ., էջ 87-88:

⁵⁵ Միքայելյան Վ., նշվ. աշխ. էջ 293:

⁵⁶ Тер-Саркисяни Алла, Армяне, история и этнокультурные традиции, Москва, 1998, с. 291, Էփրիկեան Ա., Պատկերազարդ բնաշխարհիկ բարարան, Կ. Ա. Վենետիկ, 1903-1905 թթ., էջ 668-670, նույնը՝ «Չայն համշենական», 2004, N 4-5:

20-րդ դարի առաջին տասնամյակներում Արխագիայում՝ Սուխումում հրատարակվում են «Լույս» (1912-13 թթ.) գրական, ժողովրդական շաբաթաթերթը, «Նոր կյանք» (1918) քաղաքական-հասարակական լրագիրը, «Փարոս» (1919) քաղաքական, հասարակական լրագիրը, «Կարմիր աստղ» (1920-23 թթ.) թերթը⁶⁰: Հետագայում հայերեն նյութեր է տպագրում «Սովետսկի պիսատել Արխագիի» (1932–35թթ.) թերթը: Սուխումում լույս են տեսնում սակավաթիվ հայերեն գրքեր: Թեև այսօր էլ Արխագիայի մայրաքաղաքում երբեմն հայերեն գրքեր են տպագրվում և հրատարակվում է հայերեն-ռուսերեն «Համշեն – Амшен» պարբերաթերթը, բայց վրաց-արխագական հակամարտության հետևանքով ծագած արտագաղթի պատճառով 1989թ. երկրում բնակվող 76541 հայերի զգալի մասը ստիպված հեռացավ և 2003թ. մարդահամարի տվյալներով Արխագիայում կար ընդամենը 44869 հայ⁶¹, ուստի շատ ծանրացավ հայկական կրթօջախների վիճակը, 1941թ. գործած 128 հայկական դպրոցների (12040 աշակերտ)⁶² փոխարեն 2004-ին մնացել էին ընդամենը 35 դպրոցներ, որոնք բոլորն իրար հետ ունեին 2828 աշակերտ⁶³: Իսկ 2008-2009 ուստարում նրանց թիվն ավելի է նվազել, 32 հայկական դպրոցներում (26 միջնակարգ և 6 թերի միջնակարգ) ուսանում է ընդամենը 1916 աշակերտ:

Վիճակը վատ է նաև ՌԴ Կրասնոդարի երկրամասում: Եթե դեռևս 1904-ին Անապայում հրատարակվում էին «Օրգան», իսկ 1905-ին՝ «Ի գեն» թերթերը, այնուհետև, Արմավիրում՝ 1917-18-ին՝ հասարակական, քաղաքական, գրական «Կարիք» օրաթերթը, 1919-20-ին՝ «Նոր ուղի» եռօրյա թերթը, իսկ

1920-ին՝ «Բանվորի կարիք» և «Բանվորի ծայն» շաբաթաթերթերը, Կրասնոդարում (Եկատերինոդար) 1918-19 թթ. «Արծազանք» գրական, հասարակական եռօրյա թերթը, 1920-21-ին՝ «Կարմիր աստղ» եռօրյա (երկօրյա) թերթը, 1932-ին՝ Տուափսեում «Գրոհ» եռօրյա թերթը⁶⁴, ապա 2002թ. մարդահամարի տվյալներով երկրամասի 274.501 (ըստ ոչ պաշտոնական տվյալների՝ շուրջ 500.000) հայերը⁶⁵ գրկված են մայրենի լեզվով մամուլից:

Քչերին է հայտնի, որ 1925–26թթ. Կրասնոդարի երկրամասի Սայկոպի և Կուբանի օկրուգների հայկական 70 բնակավայրերից կազմվեց ազգային վարչական մեկ միավոր՝ Հայկական ազգային շրջան (տարածքը՝ 1286քառ. կմ), Շահումյան (նախկին՝ գ. Ելիզավետպոլսկոյե) կենտրոնով⁶⁶: Ըստ 1926թ. համամիութենական մարդահամարի տվյալների շրջանն ուներ 8148 բնակիչ: Հայկական շրջանին տրվեց ազգային և տեղական հարցերն ու պահանջմունքներն ինքնուրույն լուծելու զգալի ինքնավարություն, հրատարակվում էին հայերեն «Երիտասարդ բոլշևիկ» (1932-35 թթ.), «Բերքի համար» (1933-40 թթ.), «Կոմունար» (1940-42 թթ., 1944-53 թթ.) թերթերը⁶⁷, կային հայկական դպրոցներ, ակումբներ ու գրադարաններ: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին շրջանը քանիցս ձեռքից ձեռք անցավ, ավերվեց, կրեց ծանր կորուստներ: Նրա տարածքում գործում էր տեղի բնակիչներից կազմված Ստեփան Շահումյանի անվան պարտի-

⁶⁰ Հայ պարբերական մամուլը, մատենագիտական համահավաք ցուցակ 1794-1980, կազմեց՝ Մ.Ա. Բարլոյան, ՀՍՄԴ ԳԱ հրատ., Երևան, 1986, էջ 92, 117, 129, 133:

⁶¹ Скаков А., Абхазские армяне в прошлом и настоящем, «Հայն համշենական», 2006, N 5-6: Ավրոյան Հ., Արխագիայի հայկական համայնքը, Հայրենի Ջավախք, ժողովածու, Պեյրուք, 2002, էջ 384-385:

⁶² Минасян М., Армяне Причерноморья, Ереван, 1990, с.152.

⁶³ Ավրոյան Հ., Արխագիայի հայկական դպրոցների նահանջը, «Հայն համշենական» ամսաթերթ, 2004, N1: Հայկական դպրոցների աշակերտների թիվը նվազում է, հարցազրույց Արխագիայի կրթության նախ. հայկ. դպրոցների տեսուչ Ա. Սարեցյանի հետ, «Հայն համշենական», 2004, N2:

⁶⁴ Հայ պարբերական մամուլը, էջ 59, 60, 110, 113, 127, 131, 133, 195:

⁶⁵ Савва М., Армяне Краснодарского края в контексте современной миграционной ситуации, «Հայն համշենական», 2007, N 5-6, N7-8: Тер-Саркисянц Алла, Армяне, история и этнокультурные традиции, с. 291-310.

⁶⁶ Бондаренко Ф., Экономический очерк Армянского национального района Майкопского округа Северо-Кавказского края (в границах 1928 г.), Составлена по обследованию района в 1928г. с.1, 20. Շահումյան գյուղի ժողովրդական բանգարան, գույրահամար 12 (մեքենագիր): Адобашьян В., Образование в составе Краснодарского края Армянского района, «Բանբեր Հայաստանի արխագիների», 1970, N3, էջ 167–174: Акоюн В., Национальные районы и их официальный язык (Армянские районы Северного Кавказа в 20-е г.), Армяне Северного Кавказа, выпуск 2–й, Краснодар, 1995, с. 147–150.

⁶⁷ Հայ պարբերական մամուլը, էջ 195, 201, 229:

զանական ջոկատը: Հայկական շրջանը, որպես առանձին ազգային վարչական միավոր, լուծարվեց ՌԽՖՍՀ Գերագույն խորհրդի նախագահության 1953թ. օգոստոսի 22-ի հրամանագրով: Ինչպես գրում է Ի. Տվերիտինովը. «Երկրի վերջին ազգային շրջաններից մեկի լուծարումը, ըստ երևույթին, ուներ քաղաքական աստառ: Ուղղակի և անուղղակի տվյալներն ասում են այն մասին, որ եթե չլիներ Ստալինի մահը, ապա Սև ծովի և Կուբանի հայերին կարող էր բաժին ընկնել արտրված ժողովուրդների ճակատագիրը»⁶⁸:

Մեծ Հայրենականի տարիներին երկրամասի զգալի մասը զավթեցին գերմանացիները: Բռնկված պարտիզանական շարժմանը մասնակցում էին նաև տեղի հայկական գյուղերի բնակիչները, որոնք ստեղծեցին մի շարք ջոկատներ: Գերմանացիները ուժեղ դիմադրության հանդիպեցին հատկապես Հայկական ազգային շրջանում, որի անանցանելի կիրճերում ու անտառներում մարտնչում էին հարյուրավոր հայեր⁶⁹: 1943թ. մարտին 409-րդ Հայկական հրաձգային դիվիզիայի ռազմիկները Հյուսիսային Կովկասից ուղարկված «Հայ մարտիկների պատասխանը հայ ժողովրդին» նամակում գրում են. «Մենք տեսանք հայերի նկատմամբ գերմանական զավթիչների բարբարոս վերաբերմունքի անհամար նոր փաստեր: Մենք տեսանք գերմանացիների կողմից հրկիզված հայկական Շահունյան գյուղի ավերակները: Ոչ մի տուն ճիվաղները չէին թողել անվնաս: Բոլոր շենքերը հրի էին մատնված...»⁷⁰:

Մեծ Հայրենականի տարիներին Կրասնոդարի երկրամասի հայերից ինը, իսկ Աբխազիայից՝ չորսը արժանացան Խորհրդային Միության հերոսի կոչման⁷¹:

⁶⁸ Твeритинов И., Национально — территориальное строительство в Северо-Восточной Причерноморье и на Кубани, "Этнографическое обозрение", Москва, 1992, N1, с. 24.

⁶⁹ Խալեյան Ե., Դրիմի և Հյուսիսային Կովկասի պարտիզանական շարժման պատմությունից (1941-1944թթ.), Երևան, 1981, էջ 124-159:

⁷⁰ Հայ մարտիկների պատասխանը հայ ժողովրդին, Երևան 1944:

⁷¹ Վարդանյան Ս., Դյուցազնապատումի մի ճյուղը, «Հայաստանի աշխատավորուհի», 1985, N5, էջ 38-39, N7, էջ 22-24: Նույնի, Կապույտ բազեն «Գարուն», 1986, N5, էջ 16-19: Նույնի, Անհատի ճակատագիրը ժողովրդի

Պատերազմն անդառնալի կորուստներ հասցրեց Կրասնոդարի երկրամասի հայությանը, զոհվեցին բազմաթիվ մտավորականներ, ավերվեցին տասնյակ հայկական գյուղեր, եկեղեցիներ ու դպրոցներ:

Պատերազմից հետո երկրամասի հայերը վերականգնեցին ավերված գյուղերը, բայց այդպես էլ չկարողացան վերաբացել դպրոցներից շատերը, իսկ եղածների մեծ մասն էլ փակվեց բրեժնևյան ճահճացման տարիներին⁷², և, այսօր, 1951թ. գործած 140 հայկական դպրոցների⁷³ փոխարեն շուրջ 10 դպրոցում ռուսերեն առարկաների կողքին ռուսացանվում է նաև հայոց լեզու և գրականություն⁷⁴: Փակվել են նաև նախկինում Կրասնոդար քաղաքում գործած հայկական թատրոնը, տպարանը, ժողովրդական համալսարանը, վաղուց լռել են երկրամասի տարբեր քաղաքների հայկական ռադիոհաղորդումները: Թեև երկրամասում կան մի շարք հայկական համայնքային կազմակերպություններ⁷⁵, բայց հասարակական-քաղաքական, մշակութային կյանքը թմբիկի մեջ է: Այլևս չկան նախկին տասնյակ համույթներն ու թատերախմբերը, երգչախմբերը, և միայն Սոչիի Լազարևսկի շրջանի մի քանի պարախմբերն են, որ դժվարին պայքարով դեռևս պահպանում են համշենցի հայերի հարուստ մշակույթը վերջնական ուժացումից:

ճակատագիրն է, «Ձայն համշենական», 2005, N5-6: Варданян С., Судьба одного человека есть судьба народа. «Ձայն համշենական», 2008, N 4-6:

⁷² Վարդանյան Ս., Լոյսը հեռու լեռներում, «Դպրություն», 1990, 27 ապրիլի:

⁷³ Минасян М., նշվ. աշխ., էջ 154:

⁷⁴ Մեծ Սոչիի հայկական դպրոցները, հարցազրույց Սերգեյ — Պոլե գյուղի N85 դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Ռ. Սունգուրտյանի հետ, գրուցեց Ս. Վարդանյանը, «Ձայն համշենական», 2004, N2: Երեխաները բանախոսություն են հավաքում, հարցազրույց Լազարևսկի շրջանի Լոռ գյուղի N 87 դպրոցի ուսմասվար Վ. Բերուջյանի հետ, գրուցեց Ս. Վարդանյանը, «Ձայն համշենական» ամսաթերթ, 2007, N 1-2: Վարդանյան Ս., Սոլդովկայի «Թռչնոց բույնը», «Ձայն համշենական», 2007, N5-6: Լևոնյան Ս., «Մեղա՛, մեղա Արարատին», «Ձայն համշենական», 2004, N2:

⁷⁵ Ալվրոյան Հ., Տեղեկագիր Համշենի և համշենահայության մասին, «Ձայն համշենական», 2004, N2, Тавадьян Т., Армянские национальные "очаги" в Краснодарском крае, степень организованности и перспективы, "Бюллетень" научно-образовательного фонда "Нораванк", Ереван, 2007, N20, с. 45-52. Տես նույնը, «Ձայն համշենական», 2007, N11-12:

ԿՐՈՆԱՓՈԽ ՀԱՄՇԵՆԱՀԱՅԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ¹

Տարբեր դարերում մահմեդականացված հայերի մասին շատ քիչ է գրվել: Գիտնականները հաճախ շրջանցել են այդ թեման կամ էլ բավարարվել են միայն կրոնափոխության որոշ փաստեր արձանագրելով: Անշուշտ, այստեղ մեծ էր Թուրքիայի իշխանությունների դերը, որոնց հաճո չէր իրենց հպատակների բռնի մահմեդականացման մասին նյութերի հրապարակումը: Կարևոր հանգամանք էր նաև հայ իրականության մեջ տիրող այն մտայնությունը, թե կրոնափոխներն այլևս հայ չեն: Նույնիսկ «Սեդու Չայաստանի» (Թիֆլիս) թերթում քննարկվում էր այն հարցը, թե կաթոլիկ և բողոքական հայերին կարելի՞ է հայ համարել: Ի պատասխան, հայ մեծամուն գրող Րաֆֆին 1880թ. «Մշակում» գրում է. «Երկրագնդի վրա թե՛ քաղաքակիրթ և թե՛ վայրենի ազգերի մեջ չկա և չի եղել մի ազգություն, որ մեկ եկեղեցու պատկաներ: ... «Մշակի» մեջ կարող են գրել որպես լուսավորչական, այնպես էլ կաթոլիկ, բողոքական, մահմեդական և հունադավան հայերը, նա ազգային օրգան է և ոչ՝ եկեղեցական: ... Մենք մեկ ազգի որդիներ ենք, մենք միևնույն ընտանիքի զավակներն ենք: ... Կաթոլիկությունը, բողոքականությունը և մինչև անգամ մահմեդականությունը չեն զրկում հային հայ լինելուց...»²:

Մեծ եղեռնի տարիներին Թուրքիայում բազմապատկվեց բռնի կրոնափոխված հայերի թիվը: Նրանց մեջ էր նաև արևմտահայ նշանավոր գրող Երվանդ Օտյանը, որը տարագրվելով, Հալեպից Դամասկոս կեսճանապարհին գտնվող Համա քաղաքում, Տեր-Ջորի սարսափելի ջարդերի օրերին առերես

¹ Վարդանյան Ա., Համշենցի մուսուլման հայերի ուսումնասիրության պատմությունից, «Իրան-Նամե», 1998, N1-2-3, էջ 2-11: Նույնի, կրոնափոխ համշենահայերի ուսումնասիրման պատմությունից, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի «Տեղեկագիր», 2008, N22, էջ 20-44: Նույնի, Բռնի կրոնափոխված համշենահայերի ուսումնասիրման պատմությունից, «Չայն համշենական», 2008, N9-10, N11-12:

² Մելիքզադե, Մինչև երբ, «Մշակ», Թիֆլիս, 1880, N121, տես Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 11, Երևան, 1991, էջ 327, 329, 332:

իսլամություն է ընդունել: Նա իր «Անիծեալ տարիներ» խիստ արժեքավոր հուշագրության մեջ գրում է, որ Համա հասած գաղթականների բեկորների մեջ կային վեց քահանաներ և երկու ավետարանական պատվելիներ, որոնց ձերբակալելով և արքորելով, թուրքերը արաբական անապատներ քշելու սպառնալիքով ձեռնամուխ են լինում հայերի կրոնափոխությանը և 5.000 հոգի առերես կրոնափոխվում է: Սև ծովի ափից՝ Տրապիզոնի վիլայեթից, Համա էին հասել, ինչպես գրում է Ե. Օտյանը «30-ի չափ սամսոնցի տարագիր կիներ, որոնք հազար ու մեկ չարչարանքներ էտքը եկած ինկած էին հոն: ...Այդ խեղճ կիներուն պատմութիւնը սրտաճմլիկ էր: Հազիւ թէ Սամսոնէն մեկնած զիրենք բաժնած էին իրենց ամուսիններէն, եղբայրներէն ու զաւակներէն: Ճամբան թուրքերն ու քիւրտերը առեւանգած էին իրենց մանկամարդ ու գեղանի հարսներն ու աղջիկները: Յետոյ մէկ քանի անգամներ կողոպտուած էին: ...Այդ խեղճ կիները այսպէս քանի մը ամիս լեռնէ լեռ տարուելով՝ բերուած էին Հալեպ ու անկէ ալ Համա: Իրենցմէ շատերը յոգնութենէ, տառապանքէ, անօթութենէ ու հիւանդութենէ մեռած էին ճամբան: ...Սամսոնցի կիները մուրացկանի կերպարանքով հասած էին Համա: Գալով սամսոնցի էրիկմարդերուն, եւ ոչ մէկէն կարելի եղած էր լուր առնել: Հաւանօրէն ամենքն ալ ջարդուած էին իրենց կիներէն բաժնելէ ետքը: ...Իթքիատի կողմէ պատրաստուած էին հազարաւոր խնդրագիրներ, որոնց վրայ պէտք էր միայն անլեցնել հին ու նոր անունները եւ ստորագրել, որուն փոխարէն իրենց կը տրուէր թուրքի կտոր մը որուն վրայ իսլամական անունը եւ թիւ մը կար: ...Ամենէն դժուարը եղաւ սամսոնցի կիներուն իսլամացումը: Ասոնք մինչեւ վերջին վայրկեանը մերժեցին հաւատափոխ ըլլալ եւ պատրաստակամութիւն յայտնեցին անապատը տարագրուելու: ...Վերջապէս, մեծ դժուարութեամբ կրցանք զիրենք համոզել: ...Եւ օրերով իրենց լաց ու կոծը չդադրեցաւ: ...Իթքիատի այս արարքը շատ զայրացուց տեղացի արաբները, որոնք կ'ըսէին թէ այս ձեւով իսլամացումը հակառակ էր մարգարէին պատուիրաններուն: ...Վերջապէս ոչ ոք մեզ լրջօրէն իսլամ կը նկատէր»³:

³ Երուանդ Օտեան, Անիծեալ տարիներ, 1914-1919 (անձնական յիշատակներ), աշխատասիրութեամբ Գրիգոր Յակոբեանի, Երեւան, 2004, էջ 220-221, 233-234:

Մեծ եղեռնի և նրա հետևանքներից մեկի՝ բռնի կրոնափոխված հայերի մասին հրապարակավ խոսելու արգելանքի պատճառով տասնամյակներ շարունակ Թուրքիայի հայ հոգևորականները, մտավորականներն ու գիտնականները չէին կարողանում արտահայտվել, և արժանահիշատակ է այն, որ Կ. Պոլսի Հայոց պատրիարք, ամենապատիվ Ս. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանը ԱՄՆ-ի կոնգրեսական պատվիրակության հետ 2007թ. մայիսի 30-ին պատրիարքարանում հանդիպման ժամանակ, հիշեցնելով, որ Մեծ եղեռնի տարիներին մեկ ու կես միլիոն «հայ բնակիչներ բնաջնջուցան», նշեց, որ «Պետք չէ մոռնալ նաեւ, որ տեղահանութեան ընթացքին, տեղահան ըլլալէ փրկուելու համար, մեծ թիւով հայեր մահմետականութիւնը ընդունեցին: Մենք զանոնք եւս մեզմէ կը նկատենք, քանի որ, նոյնիսկ եթէ տարբեր կրօնի մը անցած են, հայերէն կը խօսին եւ հայ մշակոյթը կ'ապրին»⁴: Կարծում ենք, որ պատրիարքի ասածը կարող է տարածվել նաև 18-րդ դարում բռնի կրոնափոխված համաձայնահայերի այն հատվածի վրա, որը պահպանել է հայերենը:

Խորհրդային Միությունում բնակվող մահմեդական հայերի մասին ևս երկար տարիներ լռություն էր պահպանվում: Ինչո՞ւ էին նրանք խոսում Համաձայնի բարբառով, ինչպե՞ս էին հայտնվել Ղազախստանի տափաստանային և Ղրղզստանի լեռնային գյուղերում, ե՞րբ էին գատվել իրենց եղբայրներից քրիստոնյա համաձայնահայերից, որոնց 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբներին ճակատագիրը նետել էր Սև ծովի հյուսիսային ափերը, որի հետևանքով Մեծ եղեռնից հետո Աբխազիայում և Սոչիի օկրուգում բնակվում էին հիմնականում Տրապիզոնի վիլայեթից գաղթած 43 հազար հայեր⁵:

Պատմական համառոտ ակնարկով փորձենք պատասխանել այս հարցերին:

⁴ Սասունեան Յ., Ի՞նչն է Մեսրոպ պատրիարքին քաղաքական յայտարարութեանց դրդապատճառը, «Ազդակ», Բեյրութ, 2007, 8 յունիսի:

Պատրիարքի յայտարարությունը թուրքերեն և անգլերեն գետեղվել է նաև պատրիարքարանի պաշտոնական կայքէջում:

⁵ Всесоюзная перепись населения 1926 года. Том XIV. Закавказская Социалистическая Федеративная Советская Республика, (смотри отде.1 Гruzии). Москва, 1929, с. 22, том V, Москва, 1928, с. 259:

Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Հայր Պողոս վրդ. Մեհերյանը, 1776թ. սեպտեմբերին լինելով Տրապիզոնի նահանգի Համաձայն գավառի (այժմ Թուրքիայի Ռիզեի նահանգի կազմում) Խևակ գյուղում, իր հուշագրության մեջ նշում է, որ Խևակում ապրում էին 200 տուն մահմեդական և 5–6 տուն քրիստոնյա հայեր⁶: Նա տեղացիների օգնությամբ կարգի է բերում Խևակի եկեղեցին և պատարագ մատուցում, որին մասնակցում են նաև կրոնափոխ հայերը⁷: Ճորոխ գետի ափով Արդվին գնալիս Հ. Պողոս վրդ. Մեհերյանին հանդիպած գյուղերի բնակիչները նույնպես կրոնափոխ հայեր էին, որոնք նրան տուն են հրավիրում իրենց հիվանդների վրա Ավետարան կարդալու⁸:

Հ.Պ. Մեհերյանից տեղեկանում ենք նաև, որ 9–10-րդ դարերով թվագրվող հայերեն ամենահին Մաշտոցը ևս ձեռք է բերվել 1775-ին՝ Համաձայնում, 60 տարի առաջ կրոնափոխված մի ընտանիքից, որը յուրաքանչյուր շաբաթ երեկոյան կանթեղ էր վառում Մաշտոցի մոտ⁹:

Այն, որ չնայած անլուր հալածանքներին, դեռ երկար տասնամյակներ համաձայնիները, թեկուզև գաղտնաբար, փորձում էին պահպանել իրենց հավատքը, վկայում են նաև հետագայի ուսումնասիրողներն ու ճանապարհորդները:

Մխիթարյան միաբան Հայր Ղուկաս վրդ. Ինժիճյանը 1806-ին գրում է. «Բնակիչք երկրին յառաջագոյն հայ էին, այլ 'ի յելս ժէ դարուն և 'ի սկիզբն ժԸ–երրորդին՝ առհասարակ հանդերձ ամբողջ շրջակայ գիւղօրէիք դարձան 'ի տաճկու-

⁶ Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարան, թիվ 560, «Պատմութիւն վարուց Տեառն Հ. Պողոս վարդապետի Մեհերեան, շարագրեալ յիւրմէ 1811 Վենետիկ, ի վանս սրբոյն Ղազարու», էջ 161: Հ. Պողոս վրդ. Մեհերյանի հուշագրության մասին ավելի մանրամասն տես «Պատմաբանասիրական հանդեսի» 2004թ. N3-ում տպագրված իմ «Կարևոր սկզբնաղբյուր մահմեդականացված հայերի մասին» հոդվածում, որն արտատպված է այս գրքում:

⁷ Նույն տեղում, էջ 168–169:

⁸ Նույն տեղում, էջ 170:

⁹ Հ.Բ. Սարգիսեան, Հ. Գ. Սարգսեան, Սայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Գ, Վենետիկ, 1966, էջ 4–5, Հ. Սահակ վրդ. ճեմճեմեան, Սայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Գ, Վենետիկ, 1993, էջ ժԹ:

թին սակս բռնութեան հարկապանջութեան, բայց գտանին տակաւին 'ի նոսա և քրիստոնեայք, յորոց զհիւրօրէս կանգուն կան տակաւին եկեղեցի իւրեանց 'ի վաղուց մնացեալ, այլ չունին երեց 'ի հովուել, միայն քանի մի անգամ յամին գայ առ նոսա երեց Յեվդղիւտ գեղջէ: Իսկ տաճիկք խօսին մինչեւ ցայժմ հայերէն, 'ի գործ ածեն 'ի զհիւրօրէս ինչ անուանս Կնքահայր եւ Կնքամայր, պահեն պահս, և գայլ ծեսս և օրէնս քրիստոնէական հաւատոց. յաճախեն յեկեղեցիս և այլն. ոմանք կտակէս են հաւատովք, արտաքուստ միայն ցուցանելով գտաճկութիւն»¹⁰:

Հետաքրքրական է, որ Հ. Ղուկաս վրդ. Ինճիճյանից ավելի քան մեկ դար անց ռուս ականավոր թուրքագետ Վ. Գորդլևսկին ևս հիշատակում է քրիստոնէությունը գաղտնաբար պահած այդ հայերին: 1913թ. լինելով Տրապիզոն քաղաքում՝ նա նյութեր է հավաքել հույն գաղտնի քրիստոնյաների մասին և իր հոդվածում ծանոթագրում է. «Ասում են, որ Ռիզէի սանջակում գաղտնի քրիստոնյաներ կան նաև հայերի մեջ»¹¹:

1815–19թթ. Սև ծովի առափնյակով ճանապարհորդելիս մեկ ուրիշ Մխիթարյան միաբան Հ. Մինաս վրդ. Բժշկյանը ևս հանդիպել է կրոնափոխ համաձայնող հայերի. «Համաձայնիք կէսկէս են. շատը դարձած են, բայց քրիստոնէութեան սովորութիւնը կը պահեն ժամոց և ողորմութիւնը պակաս չեն ըներ. գրեթէ ամենքը վարդավառին և վերափոխման կերթան եկեղեցին մոմ կը վառեն և մատաղ կընեն իրենց պապերուն հոգուն համար. բոլորը հայերէն կը խօսին: Ասոնց մէկ մասը Խուռշունլի և Սիւրմէնէ գնացին. Խուռշունլի գնացողները քրիստոնեայ մնացին»¹²: Իսկ Սյուրմէնէի (Սև գետ, Կարա դերե) մասին նա գրում է. «Սիւրմէնէի բնակիչներն են աւագակաբարոյ, ամենքը հայէ և հոռմէ դարձած են, հայերը Համաձնու եկած են, մինչև հիմա հայերէն է իրենց մականունը և լեզուն, կան ծերեր, որ

գիտեն քրիստոնէութիւն, կը պատուեն խաչը, և ծածուկ ողորմութիւն կուտան ժամերուն: Վերը քանի մի տուն քրիստոնեայ կայ: Հասարակօրէն վաթսունվեց գեղ կայ կըսեն հոս»¹³:

Մ.Բժշկյանը նշում է, որ Ռիզէ նավահանգստային քաղաքում ևս քրիստոնյա հայեր էին ապրում. «Առաջ աճէմ հայեր շատ կային, որ Րոշի թաղը կը նստէին. ունէին փառաւոր եկեղեցի, ուր ճաշոց մի գրեր են, որ մայրաքաղաք կանուանէ այս քաղաքը»¹⁴: Նա եղել է նաև Խոփայում, Մաքրիյալում, որն անվանում է Մաքրագալա (այժմ՝ Քեմալփաշա), նաև Աջարիայի նշանավոր բերդավան Գոնիոյում (Կէօնէէ)¹⁵, բայց այդ բնակավայրերում համաձայնիցներ չի հիշատակում, ըստ երևույթին, այդ վայրերում կրոնափոխ համաձայնիցներն ավելի ուշ են բնակություն հաստատել:

Այնուհետև այս կողմերն են այցելել ամերիկացի բողոքական միսիոներներ Սմիթն ու Ղուայթը, որոնք 1831 թ. Լոնդոնում և 1833 թ. Բոստոնում հրատարակած ճանփորդական նոթերում գրել են. «Հայերի մեջ նույնպէս... մի զգալի մասը դավանում է մահմեդականություն: Շրջանը, որտեղ նրանք բնակվում էին... կոչվում է Համաձն: Մեր զրուցակիցը՝ տրապիզոնցի մի կաթողիկէ հայ, ասաց, որ բնակչությունը մոտ 3-4 հազար հայ ընտանիք է, որոնք բնակվում են 70 կամ 80 գյուղերում: Մեծամասնությունը մահմեդականություն է ընդունել մոտ 200 տարի առաջ, բայց նրանք առ այսօր խոսում են հայերէն և շատերի կանայք ուրիշ լեզու չգիտեն»¹⁶:

1843–1844 թթ. Տրապիզոնի նահանգի Սև գետ (Կարա դերե կամ Սյուրմէնէ) և Համաձն գավառների աշխարհագրությանն ու բնակչությանն ուսումնասիրող և ծանոթացել Եմայի և Բեռլինի համալսարանների պրոֆեսոր Կարլ Կոխը և այդ մասին պատմել 1846թ. Վայմարում հրատարակած իր «Շրջազայություններ Արևելքում...» գրքում¹⁷:

¹⁰ Հայր Ղուկաս վրդ. Ինճիճեան. Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մասն առաջին, հատոր Ա, Վենետիկ, 1806, էջ 396:

¹¹ Академик В. А. Гордлевский, Избранные сочинения, История и культура, т. 3, Москва, 1962, с. 329.

¹² Մինաս Վարդապետ Բժշկեան, Պատմութիւն Պոնտոսի, որ է Սեւա ծով, Վենետիկ, 1819, էջ 97:

¹³ Նույն տեղում, էջ 92–93:

¹⁴ Նույն տեղում, էջ 94:

¹⁵ Նույն տեղում, էջ 98:

¹⁶ Eli Smith and H. G. O. Dwight, Missionary Researches in Armenia, Boston, 1833, p. 325:

¹⁷ Dr. Karl Koch, Wanderungen im Oriente, II, Reise im Pontischen Gebirge und Türkischen Armenien, Weimar, 1846, p. 1-40:

Ան գետի կրոնափոխության մասին արժեքավոր տեղեկություններ է պարունակում նաև Տեր Պողոս քին. Թումանյանցի «Պոնտոսի հայերը» ուսումնասիրությունը, որը թեև գրվել է 1870-ին, բայց հրատարակվել է բավական ուշ՝ 1899-ին¹⁸:

Ան գետի և Համշենի հայերի բռնի մահմեդականացման սահմուկեցուցիչ դրվագներն է 1878թ. գրառել համշենահայ նշանավոր ազգագրագետ և բանահավաք Սարգիս Հայկունին, որը 1895թ. հրապարակվել է «Արարատ» ամսագրում¹⁹: Ըստ նրա, 1700-ական թվականներին Համշենում կար 8-10 հազար, իսկ Ան գետում 5-6 հազար տուն հայություն, որոնք ընդամենը 4-5 քահանա ունեին²⁰: Հայերը Տեր Կարապետի գլխավորությամբ հերոսաբար դիմադրում են նրանց բռնի կրոնափոխելու եկած թուրք ենիչերիներին, մուլլաներին ու խաժամուժին, բայց Տրապիզոնի վալիից օժանդակ զորք ստանալով՝ թուրքերն, ի վերջո, կոտորում են մեծաթիվ հայերի և ներխուժելով Թորոսոց գյուղի եկեղեցին սպանում Տեր Կարապետին: Ժողովրդի մի մասը փախչում է, մյուսները նահատակվում են, իսկ մնացյալները ստիպված են լինում առերես կրոնափոխվել, որպեսզի զոնե երեխաների կյանքը փրկեն: Այսպես հրով ու սրով կրոնափոխվում են Ան գետի և Համշենի բազմաթիվ գյուղեր²¹: Տեր Կարապետի ընտանիքից

¹⁸ Թումանյանց Պ., Պոնտոսի հայերը. աշխարհագրական եւ քաղաքական վիճակ Տրապիզոնի, «Լուսնայ», Տփլիսի, 1899, յուլիս, էջ 174-177:

¹⁹ Հայկունի Սարգիս, Նշխարներ. կորած ու մոռացուած հայեր. (Տրապիզոնի հայ-մահմեդական գիւղերն ու նրանց աւանդութիւնները), «Արարատ», Վաղարշապատ, 1895թ., N7, էջ 239-243, N8, էջ 293-297: Այնուհետև «Տեր Կարապետ քահանա Թորոսլեցի» վերնագրով տպագրվել է «Հայոց նոր վկաներ» ժողովածուի մեջ (Վաղարշապատ, 1903թ., էջ 702-709): Հայկունուց օգտվելով Հ. Աճառյանը վերապատմել է իր «Քննություն Համշենի բարբարոսի» գրքում, Երևան, 1947, էջ 5-8: Саргис Айкуні, мученичество священника Владыки Карапетя Торослиецы +1780, Новые армянские мученики (1155-1843), Ереван, 1998, с. 222-227. Տես նաև Саргис Айкуні, Потерянные и забытые армяне (Армянские мусульманские села Трапезунда и их обычаи), «Ձայն համշենական», ամսաթերթ, 2005, N7-8:

²⁰ Հայկունի Սարգիս, Նշխարներ. կորած ու մոռացուած հայեր. (Տրապիզոնի հայ-մահմեդական գիւղերն ու նրանց աւանդութիւնները), «Արարատ», Վաղարշապատ, 1895թ., N 7, էջ 239-240:

²¹ Նույն տեղում, էջ 240-242:

փրկվածները բնակություն են հաստատում Տրապիզոնի գավառի Կալաֆկա գյուղում, ուր նրա որդին քահանա ձեռնադրվելով ուխտ է անում, որ իր սերունդը որդվոց-որդի նույն Տեր Կարապետ անունով քահանայություն անի և տարին մեկ անգամ ծայտյալ այցելի Ան գետում մնացած հայրենակիցներին²²: 1984թ. ՌԽՖՍՀ (այժմ՝ Ռուսաստանի Դաշնության) Կրասնոդարի երկրամասի Մայկոպ քաղաքի մոտակա հայաբնակ Պրոլետարսկի գյուղում հանդիպեցի Տրապիզոնի Կալաֆկա գյուղացի 84-ամյա Սարգար Ղուկասյանին, որի տան պատին փակցված էր 1906թ. իր պապի գործած մի կարպետը, որի վրա հյուսված էր. «Տեր Խորեն քահանա Տեր Կարապետի, ծնվ. 1831թ.»։ Տեր Խորենը զոհվել էր գաղթի ճամփաներին 1915թ.: Նրա թոռը Սարգար Ղուկասյանը, պատմեց Տեր Կարապետի և նրա հաջորդների մասին իր իմացած մի քանի պատմությունները, որոնք վկայում էին, թե հայրենասեր քահանաների հիշատակը պահպանվել է նույնիսկ այսքան տարի անց²³:

1840-ական թվականներին մի այլ ընտանիքից (Տավաշյան) մեկը, Տեր Կարապետ անունով քահանա ձեռնադրվելով, շարունակում է մեծ նախորդների գործը: Նա ևս կյանքը վտանգելով, այցելում է կրոնափոխների գյուղերը, ուր նրան էին սպասում հազարավոր հայեր, որոնց մի մասը, չնայած մահապատժի վտանգին, ցանկանում էր վերադառնալ նախնյաց հավատքին: Նա փորձում է այդ գյուղերում հայկական դպրոցներ բանալ և այդ նպատակով քանիցս դիմում է Պոլսի հայ մեծահարուստներին²⁴: Տեր Կարապետ Տավաշյանի գործունեության, ինչպես նաև Ան գետի կրոնափոխ համշենահայերի մասին խիստ հետաքրքրական նյութեր կան Տրապիզոնի առաջնորդական փոխանորդ Տեր Վահան ավ. քին.

²² Նույն տեղում, էջ 242: Հայկունի Ա., Յուսեփի ազգատոհմ եւ տարօրինակ աւագակ Աբրիեսոս Տրապիզոնի հայ գիւղերու մէջ, 1795-1840, Վաղարշապատ, 1905, էջ 44-59:

²³ Վարդանյան Ա., Հոգու հիշողություն, Ան գետ, «Համշեն» պարբերաթերթ, Սուխում, 1991, N2: Варданян С., Из истории исламизации амшенских армян, «Ձայն համշենական», 2005, N7-8: Նույնը, «Հիւսիսափայլ» թերթ, Երևան, 2005, N2:

²⁴ Հայկունի Սարգիս, Նշխարներ. կորած ու մոռացուած հայեր, էջ 242: Լազիստանի հայեր, «Սանկավարժանոց», Պետերբուրգ, 1887, N1, էջ 13-15:

Խոյյանի անտիպ հուշագրությունում, որը երկար տարիների փնտրտուքից հետո 1995-ին հայտնաբերեցի Վաշինգտոնում՝ նրա որդու ընտանիքում, և պատրաստել եմ հրատարակության²⁵:

Բայց մի՞թե իրենց կրոնափոխ եղբայրներին դարձի բերելու այլ փորձեր չեն եղել և միայն Տեր Կարապետի սերունդներն ու Տավլաշյանն են իրական քայլերի դիմել: 1832թ. «Тифлиссские ведомости»²⁶ –ում տպագրվել է Ախալցխայի փաշայությունում, Փոցխով գետի աջ ափին գտնվող հայկական Աբ. Մոզնեսի (Св. Могнеси) եկեղեցու մասին մի ավանդություն, ըստ որի Մոզնեսին 300 տարի առաջ Պարսկաստանից հալածվելով բնակություն է հաստատել Տրապիզոնում, որտեղ որոշ մահմեդականների հավատափոխ է արել: Մահմեդականին քրիստոնյա դարձնելը, կամ ինչպես բնագրում է գրված. «за обращение некоторых Мусульман в Армянскую веру», մահապատժի արժանի հանցանք էր համարվում: Եվ միայն Տրապիզոնի հարուստ հայերի փաշային տված հսկայական գումարների շնորհիվ է Մոզնեսին փրկվում ստույգ մահից: Հավանաբար Մոզնեսին ոչ թե թուրքերի է քարոզել, ինչն անհամեմատ դժվար և վտանգավոր էր, այլ բռնի կրոնափոխված և, դեռևս, քրիստոնեությունից շատ չհեռացած հայերի է օգնել դարձի գալու: Միայն դրանով կարելի է

բացատրել մեծահարուստ հայերի միջամտությունն ու հովանավորությունը, այլապես թուրքերի կրոնափոխողին օժանդակելը նրանց իսկ համար կարող էր շատ վատ վախճան ունենալ:

Տրապիզոնից հեռանալով՝ Մոզնեսին ապաստանում է Ախալցխայի մոտ, ուր տեղի հայերը նրա համար մի փոքրիկ եկեղեցի են կառուցում, որը և օտար ասպատակիչներից պաշտպանելիս զոհվում է: Տեղացիների համար նրա նահատակության վայրը դառնում է ուխտատեղի:

Այժմ դժվար է ասել, թե իրականում այս դեպքերը երբ են եղել. հիշատակվող 300 տարին, անշուշտ, դեպքերի հնությունը ուռճացնելու արդյունք է, ինչը հատուկ է ավանդություններին: Այն հրատարակվել է ռուսերեն, և պետք է ենթադրել, որ Մոզնեսի (Могнеси) անունը երուսաղեմ ուխտ գնացած քրիստոնյա՝ մահտեսի անվան ռուսերեն աղավաղված ձևն է²⁷:

Ըստ Մինաս Գասապյանի, 19-րդ դարի 70-ական թվականներից Օրդուի շրջանից քրիստոնյա համշենահայերի մի մասը գաղթում է Նիկոմեդիայի (Իզմիթ) վիլայեթ և հիմնում 9 գյուղ²⁸: Նույն տարիներին Խոփայի շրջանից մահմեդական համշենահայեր ևս գաղթում են և Նիկոմեդիայի Ատա-Պազար կազայում, Գարասու նահիյեում, իրենց եղբայրակիցների հարևանությամբ հիմնում են Աջմա-պաշը գյուղը (42 տուն), որի բնակիչների մասին նա 1913թ. գրում է. «Այրերը կը խօսին հայերեն, իսկ մահմեդական հայ կիները մանալանդ, բոլորովին կ'անգիտանան ուրիշ լեզուներ: ... Ինձ կը հաւաստեն թե դեռ կը գտնուին իրենց քով ձեռագիր աւետարաններ և եկեղեցական զգեստներ զորս ջերմեռանդօրէն եւ աւանդաբար կը պահպանեն»: Ըստ Ս. Գասապյանի նրանք երկու գյուղ էլ հիմնում են Գասթենունի վիլայեթի Տիւզճէի կազայի Ազլէ-Շէիր նահիյեում Գարա-Թավուտ (25 տուն) և

²⁵ *Հուշագրությունից որոշ հատվածներ է տպագրել Յովակիմ Յովակիմեանը (Արշակունի) իր «Պատմութիւն հայկական Պոնտոսի» (Բեյրութ, 1967, էջ 64–68) գրքում, բայց, ցավոք, չի ծանոթագրել, թե որտեղ է գտնվում բնագիրը: Հայաստանի և սփյուռքի տարբեր արխիվներում տարիների որոնումներից հետո, վերջապես, 1995-ին այն հայտնաբերեցի՝ Վաշինգտոնում՝ Տեր Կահան ավագ քհն. Խոյյանի որդու՝ Տեր Տիգրան ավ. քհն. Խոյյանի այրու՝ տիկին Սիրարփի Խոյյանի մոտ, որի թույլտվությամբ էլ բնագիրը պատճենահանվեց: Օգտվելով առիթից ցանկանում եմ ցուցաբերած աջակցության համար իմ խորին երախտագիտությունը հայտնել Հայաստանյայց Առաքելական եկեղեցու Հյուսիսային Ամերիկայի Արևելյան թեմի առաջնորդ, բարձրաշնորհ Տեր Խաժակ արքեպիսկ. Պարսամյանին և Վաշինգտոնի հայոց հոգևոր հովիվ Տեր Վրթանես ավ. քհն. Գալաթյանին: 2000թ., երբ Վաշինգտոնում այցելեցի տիկին Սիրարփիին, արդեն հուշագրության բնագիրը չկար, ասաց, որ Ֆրանսիայում ապրող իրենց ազգականներից մեկն է տարել:*

²⁶ *Флауге. Статистическое описание Ахалцихского пашалыка, "Тифлиссские ведомости", Тифлис, 1832, N5–6, с.112–138:*

²⁷ *Հայերենում երուսաղեմ ուխտ գնացած քրիստոնյա՝ մահտեսի նշանակությամբ օգտագործվում են նաև մահդասի, մուղդասի, մուղդեսի, մոզդասի ձևերը: Բառը ծագել է արաբերեն mugdesi բառից, տես Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Սիջին հայերենի բառարան, Կ. Բ. Երևան, 1992, էջ 100, 149, 160:*

²⁸ *Մինաս Գ. Գասապեան (Ֆարիատ), Հայերը Նիկոմիդիոյ գաւառին մէջ, Պարտիզակ, 1913, էջ 81–100: Տես նաև Թողաքյան Բ., Համշենահայերի ազգագրությունը, էջ 103–106:*

Ենհիճէ (40 տուն): Այս վերջին գյուղից մեկ ժամ հեռավորության վրա 35 տնով իրենց առանձին թաղն են հիմնում նաև բաշ-համշենցի կրոնափոխ թրքախոս հայերը, որոնց ծերերը տակավին հայերեն էին խոսում²⁹:

Իմ ունեցած տեղեկություններով Մինաս Գասապյանից մոտ 100 տարի անց էլ Սաքարյա նահանգի Աչմաբաշը գյուղում խոսում են հայերեն Խոփայի խոսվածքով: Այսօր այդ նահանգի Քարասուև և Քոջաալի, ինչպես նաև հարևան Դյուզ-ջե նահանգի Աքչաքոջա գավառներում կան մահմեդական համշենցիների մի շարք գյուղեր՝ Փարալը (հիմնականում բաշ-համշենցիներ, նաև խոփացի համշենցիներ: Բնակիչները եկել են 1930-ական թթ., նախկին հունական գյուղ է, կա հունական եկեղեցի), Քեսթանեփընարը, Աքթաշ, Քարափելիթ, Ենիդաղ (այժմ՝ Օրթաքյոյ), Լահանա, Քարաթավուք, Ենիջե, Յենշին (այժմ Արմուքլու) և Գեղամ (այժմ՝ Քովուքփելիթ), որը նախկինում քրիստոնյա համշենցիներով էր բնակեցված³⁰: Ըստ վկայությունների, շրջական գյուղերի այլազգի բնակիչները վերոհիշյալ գյուղերի համշենցիներին էրմենի են ասում:

Քանի որ Տրապիզոնի նահանգի նավահանգիստները և հարակից տարածքները գտնվում էին Ռուսական կայսրության ռազմական հետաքրքրությունների շրջանակում, ապա ռուսական զինվորականները և զիտնականները մանրամասն ուսումնասիրում են Լազիստանի սանջակի աշխարհագրությունը անդրադառնալով նաև երկրամասի բնակչության ծագումնաբանությանը: Ռուս-թուրքական պատերազմի նախօրեին՝ 1876թ. Թիֆլիսում լույս տեսան Ռուսաստանի Գլխավոր շտաբի փոխգնդապետ Կազբեկի ուսումնասիրությունները՝ նվիրված Լազիստանի սանջակին և հարակից տարածքներին³¹:

²⁹ Մինաս Գ. Գասապեան (Ֆարիստ), էջ 144–145:

³⁰ Տե՛ս նաև Hachikian Hagop, Notes on the historical geography and present territorial distribution of the Hemshinli, The Hemshin. History, society and identity in the Highlands of Northeast Turkey, Edited by Hovann H. Simonian, New York, 2007, pp. 175-176.

³¹ Военно-статистический и стратегический очерки Лазистанского санджака, составленные Генерального Штаба подполковником Казбеком. Тифлис, 1876, с. 27–28, Три месяца в Турецкой Грузии, Записки

1877–78թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո կրոնափոխ համշենցիների բնակավայրերի մի մասն անցավ ռուսաց տիրապետության տակ: Տարածաշրջանին քաջածանոթ, ծնունդով շավշեթցի, ուսուցիչ Ղարություն Գաթենյանը մահմեդական համշենահայերի մասին 1883թ. «Մշակում» գրում է, որ նրանք «առհասարակ շատ տաքարին մարդիկ են. նրանց կանայքը չափազանց գործունեալ և տնտես են. ընտանեկան խօսակցութիւնները բոլորովին հայերէն լեզուով են կատարում. տաճկերէնը խօսում են ըստ հարկին: Նրանց խօսակցութիւնները մի որ և է հայ հեշտ չէ կարող հասկանալ, նրա համար որ սաստիկ շուտ ու կոկորդաձայն են խօսում: Նրանց ոճը թեև խտտորջրի հայերի ոճին մի քիչ համաձայն է, սակայն խառն է շատ գրաբառ ու խորթ և գաւառական բառերով»³²:

1887թ. «Մշակի» խմբագիր Գրիգոր Արծրունին ընթերցողներին հիշեցնում է, որ երբ «շատ տարի սրանից առաջ մենք այն միտքը յայտնեցինք, թէ Ռուսաստանից նուաճված Կարսի և մասամբ Բաթումի նահանգում բազմաթիւ են հայ-մահմեդականներ, որոնք բռնի կերպով ընդունեցին իսլամը թուրքաց տիրապետութեան տակ³³, – մեզ ոչ ոք չէր ուզում հավատալ»³⁴: Նա հայ հոգևորականներին կոչ է անում օգնել իրենց տարաբախտ հայրենակիցներին նախնայաց կրոնին վերադառնալու, մանավանդ որ նրանք արդեն քրիստոնյա պետության կազմում են³⁵: Թերթը հետագայում էլ է անդրադառնում մահմեդական հայերին³⁶, բայց անարդյունք:

Кавказского отдела Императорского русского географического общества, кн. 10, вып. 1, Тифлис, 1876, с. 1–140:

³² Գաթենեան Յ., Նամակ Արդահանից, «Մշակ», Թիֆլիս, 1883, 5 նոյեմբերի, N 168:

³³ Արծրունին, հավանաբար, նկատի ունի Թուրքիայի հայերի տնտեսական վիճակի մասին 1879թ. Թիֆլիսում կարդացած իր զեկուցումը, որում նա մի փոքր անդրադարձել է նաև կրոնափոխ հայերին: Չեկուցումը ռուսերեն թարգմանությամբ հրատարակվել է Սոսկվայում՝ “Экономическое положение Турецких армян”, Москва, 1880, с. 27:

³⁴ Գ. Ա., Մահմեդական հայեր, «Մշակ», Թիֆլիս, 1887, 5 փետրվարի, N13:

³⁵ Տողատակում ցանկանում են մի փոքր քաղվածք բերել «Սովետական Կրաստան» թերթի 1989 թ. հուլիսի 13-ի համարում տպագրված «Մեր սրբազան պարտքը» հոդվածից, որը փաստում է մահմեդական վրացիների՝ աջարների, մեր օրերում դարձի մասին. «Յենց վերջերս վրաց ուղղափառ եկե-»

Կրոնափոխ համշենահայությունը ավելի բազմակողմանիորեն է ներկայացված «Նոր-դար» (Թիֆլիս) թերթում 1893թ. տպագրված «Տաճկացած հայեր» հոդվածում³⁷: Պիրո ծածկանունով հանդես եկած երիտասարդ լրագրող Արշակ Եղիզարյանը³⁸ Նովոչերկասկից ուղարկած իր հոդվածում գրում է, որ Նովոչերկասկում, Ռոստովում, Խարկովում, Օդեսայում, Վոլգայի ափամերձ քաղաքներում կան Ռիզեի «Յեմ-շին գաւառամասից» իսլամ ընդունած հայեր, «որոնք հաց են թխում, կերակուր եփում, և հիւրանոցներ ունին»³⁹: Հողվածագիրը նշում է, որ «Տաճկացած հայերի ազգանունները նոյնպէս ցոյց են տալիս նրանց հայկական ծագումը, որպէս Կոստան օղլի, Յակոբ օղլի, Սուղդուսի օղլի, Ստեփան օղլի»⁴⁰: Ա. Եղիզարյանն անդրադառնում է նաև համշենցիների Վարդավառը տոնելուն. նա գրում է. «Վարդավառին նրանք մատաղ են անում, գնում են ուխտ իրենց աւերակ վանքերը և եկեղեցիները: Ելիս-ուլ իսլամը հրամայել էր, որ նրանք՝ Յեմ-շինի բնակիչները՝ Վարդավառը չտօնեն, բայց նրանք ասել են, որ, եթէ նրանց թնդանօթի բերանն անգամ կապելու լինեն, նրանք պէտք է տօնեն»⁴¹: Ա. Եղիզարյանը նույնպէս վկայում է, որ 19-րդ դարի վերջին Համշենի գավառի բնակիչները շարունակում էին խոսել հայերեն. «Մայրենի լեզուն էլ նրանք տակաւին չեն մոռացել, և եթէ յաճախ խօսում են թիւրքերէն, այն էլ կառավարութեան երկիրդից, բայց, այնուամենայնիւ, շատերը և՛ գիտեն, և՛ խօսում են հայերէն»⁴²:

Ղեցին համալրվեց ևս մի տաճարով՝ Բաթումի Աստվածածնի տաճարով: Տաճարն օժեց համայն Կրաստանի կաթողիկոս-պատրիարք Իլիա Երկրորդը: Այդ օրերին 5 հազարից ավելի աքարացիներ նորից մկրտվեցին»: Տես նաև նույն թերթի օգոստոսի 22-ի համարում տպագրված, պատմական գիտ. դոկտոր Բ. Չխատարաիշվիլու «Աջարիա» հոդվածը:

³⁶ Ա., Նամակ Թիւրքիայից, «Մշակ», Թիֆլիս, 1890, 7 յուլիսի, N76:

³⁷ Պիրո, Տաճկացած հայեր, «Նոր-դար» թերթ, Թիֆլիս, 1893, դեկտեմբերի 21 (N227):

³⁸ Հովակիմյան Բ., Հայոց ծածկանունների բառարան, Երևան, 2005, էջ 360, 598:

³⁹ Պիրո, նշված հոդվածը:

⁴⁰ Նույն տեղում:

⁴¹ Նույն տեղում:

⁴² Նույն տեղում:

1895թ. «Սուրճ» ամսագրում տպագրած իր «Տաճկա-Հայաստանի ազգաբնակութիւնները» հոդվածում ազգագրագետ Սեյլանը, վիճարկելով Հայաստանի ազգաբնակչության թվաքանակի մասին Օսմանյան կառավարության շինծու տեղեկագրերը, Արևմտյան Հայաստանում իր շրջագայությունների և ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա եզրակացնում է, որ եթէ կայսրությունը բարենորոգվի, ապա ահռելի քանակությամբ բռնի կրոնափոխվածներ կվերադառնան հայության գիրկը. «նոքա, որոց հայրերն ուրացած են Լալէների բռնութեամբ, նոքա՝ որ արտաքուստ թուրք, ներքուստ հայ, գլուխը ճերմակ, սիրտը վրիժառու, դրսից թուրք իմամ, ներսից քահանայ... անդիմակ պիտի դիմեն մօր գիրկը ու բերկրանքով տօնեն սրբազան առաւօտեան ցանկալի արևածագը»⁴³: Նա բերում է նաև կրոնափոխության մի շարք օրինակներ, այդ թվում՝ Տրապիզոնի վիլայեթին վերաբերող. «Ա. Կարնոյ վիլայեթ, Համշենի – Նարմանի իշխան, մի ոմն Քեչիշեանց, 17-երորդ դարի վերջերին, 8–10000 մարդով, ...Տրապիզոնի կուսակալ արինաճարաւ Լալէ – փաշային ուրանում է:

Բ. Տրապիզոնի մասնում, Սիւրմէն և Օֆ գաւառակներում 38 կամ 40 մեծ ու փոքր գիւղեր, առաջնորդութեամբ իշխան Ալթունի, նոյն փաշայի ձեռօք ուրանում են:

Գ. Բիզէ քաղաքն ու գիւղերը, առաջնորդութեամբ Կարապետ ամիրայի, որի ցեղը մինչև այսօր Կարապետ օղլու անունն է կրում, Լալէի գազանութիւններից զարհուրած՝ ուրանում է:

...Արդ՝ այս անուններն, իբրև ֆակտ դնելով, շեշտում ենք, որ թուրք ազգի կէսն հայ է եղել անցեալում, իսկ ցանկագրւածներ և մոռացւածներ, ինձ անծանօթներ, որոց մասին հեռւից են լսած՝ ուրանալով հանդերձ չեն մոռացած իրենց նւիրական սուրբերին, հայերին, չեն խլած հայերէնի բեկորները, մանաւանդ Բիզէ, Օֆ, Սիւրմէն, ...Համշէն մինչև այսօր խօսում են հայերէն կամ կիսովին խառն...»⁴⁴: Սեյլանը համշենցի կրոնափոխ հայերի մասին գրում է. «Այս թրքացած հայերի հետ տեսնելով գտած են բոլորովին մեզ հետ կապւած, ար-

⁴³ Սեյլան, Տաճկա-Հայաստանի ազգաբնակութիւնները, «Սուրճ», Թիֆլիս, 1895, N 7, էջ 961:

⁴⁴ Նույն տեղում, էջ 952–953:

տաքին մահմետականությունը սպանած չէ ներքին հային, նոքա հայ են՝ անուան բուն նշանակութեամբ, մեզ չափ մտածում են ազգի ապագայի մասին, մեզ չափ ցաւում, մեզ չափ հաւածում են ֆանատիկոս թիրքից»⁴⁵:

Հետաքրքրական է, որ Սեյլանը նույնիսկ «Լալէ» անունով վեպ է գրել, «որի մէջ հանդէս կը գան ոչ միայն ածառացի, շաւշէթցի, այլ և մեր համշէնցիները, որ մինչ այսօր խօսում են մայրենի լեզուով»⁴⁶: Տավոք, այս վեպի հետագա ճակատագիրն անհայտ է:

Որ կրոնափոխ համշէնցիները 20-րդ դարի սկզբին էլ պահպանել էին ազգային ինքնության հիշողությունը, «Բագմավեպ» անսագրում 1919թ. տպագրած իր «Վիճակագրական նոր տեսութիւն մը ի նպաստ անկախ Հայաստանի»⁴⁷ հոդվածում վկայում է Բ. Սարգիսյանը: Նա որպէս «խօսուն օրինակ», վերապատմում է Առաջին համաշխարհային պատերազմից առաջ Տրապիզոնում եղած իրենց միջնադարյաններից մեկի հաղորդածը. «Մեր միաբան Հայրերէն մին... բարեկամանալով Համշէնցի ծեր իմամի մը հետ, օր մը, կ'ըսէ նա, երբ հայերէն և թրքերէն ինչ ինչ բառերու ծագման մասին կը խօսէինք, Հայերը տաճիկներէն առած ըլլալու են, նա, այսինքն թրքացած իմամն, իսկոյն վրայ բերաւ. Ո՛չ Փափագ էՖէնտի, տաճիկները մեզմէ առած են: Եւ այս ըսելով՝ կ'աւելցնէր սա, թէ իր պապերը հայ էին ազգաւ»⁴⁸:

Վերոնշյալ հոդվածում Բ. Սարգիսյանն առաջարկում է, որ Թուրքիայի հայերի թվաքանակը որոշելիս տարբեր դարերում այլևայլ պատճառներով մահմեդականություն ընդունած հայերին ևս հաշվառեն, քանզի այդ կրոնափոխ հայությունը «ի վաղ ժամանակաց հետէ մինչև այսօր ծածկուած կը մնայ Թիւրքին, Քուրդին և Լազին մէջ, մահմետականութեան կեղծ դիմակի ներքեւ: ... Սակայն օտարացած Հայն՝ ... ոչ միայն ունի

⁴⁵ Նույն տեղում, էջ 957:

⁴⁶ Սեյլան, Շաւշէթ- Իմերիսու, «Տարագ», Թիֆլիս, 1889, N32, էջ 752, տես՝ Սեյլան, Նշմարներ, Երևան, 1999, էջ 28:

⁴⁷ Սարգիսեան Բ., Վիճակագրական նոր տեսութիւն մը ի նպաստ անկախ Հայաստանի, «Բագմավեպ», 1919, N9, էջ 281-285, N10, էջ 293-299, N11, էջ 325-331:

⁴⁸ Նույն տեղում, N11, էջ 329:

իր հայ ծագումի գիտակցութիւնը, այլ և պապենական աւանդութիւնները կպահէ տակաւին...»⁴⁹:

20-րդ դարի սկզբին ռուսական գիտական մանուլում ևս հոդվածներ են տպագրվում, որոնցում հիշատակվում են նաև Խոփայի շրջանի կամ Բաթումի մոտակա գյուղերի կրոնափոխ համշէնահայերը: 1904թ. Հակոբ Մեղավորյանը «Ճորոխի ավազանի ազգությունների զարգացման ազգագրական պայմանների հարցի մասին» փոքրածավալ հոդվածում լազերի, աջարների և ճորոխի ավազանի մյուս բնակիչների շարքում որոշ դիտարկումներ է անում նաև կրոնափոխ համշէնահայերին մասին⁵⁰: Առավել ընդարձակ տեղեկություններ կան է. Լիոզենի «Ռուսական Լազիստանի ավիլը» պատմա-ուղեգրական ակնարկում⁵¹: Լազիստանի մասին 1910թ. ուղեգրություն է գրում Ն. Մառը, որում այլևայլ առիթներով հիշում է նաև կրոնափոխ համշէնցիներին⁵²:

Զթվարկելով 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին կրոնափոխ համշէնցիներին նվիրված բոլոր հիշատակումները, առանձնացնենք 1917-1918թթ. Հ. Հակոբոս Տաշյանի գրած «Տայք, դրացիք եւ Խոտորջուր» անավարտ աշխատությունը⁵³, որը երկար տարիներ անտիպ էր և նրա «Հայ բնակչութիւնը Սեւ ծովէն մինչեւ Կարին»⁵⁴ պատմա-ազգագրական ակնարկը, առանց որոնց անդրադառնալու դժվար է պատկերացնել կրոնափոխ համշէնահայերին նվիրված որևէ լուրջ ուսումնասիրություն:

⁴⁹ Նույն տեղում, N9, էջ 283-284:

⁵⁰ Мегавориан А. П. К вопросу об этнографических условиях развития народностей Чорохского бассейна, Известия Кавказского отдела императорского Русского географического общества, т. 17, Тифлис, 1904, с. 366.

⁵¹ Лиозен Э., Берег Русского Лазистана, Известия Кавказского отдела императорского Русского географического общества, т. 18, 1905-1906, Тифлис, 1906, с. 141-171.

⁵² Марр Н. Я., Из поездки в Турецкий Лазистан (впечатления и наблюдения), Известия Императорской Академии Наук, С. Петербург, 1910, с. 608.

⁵³ Հ. Հակոբոս վ. Տաշեան, Տայք, դրացիք եւ Խոտորջուր, պատմա-տեղագրական ուսումնասիրութիւն, Վիեննա, Կ. Ա., 1973, Կ. Բ., 1980, Կ. Գ., 1981:

⁵⁴ Հ. Հակոբոս վ. Տաշեան, Հայ բնակչութիւնը Սեւ ծովէն մինչեւ Կարին, պատմա-ազգագրական ակնարկ մը, Վիեննա, 1921:

Գուցե ժամանակին՝ հատկապես Մեծ եղեռնին նախորդած տարիներին, որոշ հայ մտավորականներ նույնպես ուսումնասիրել են կրոնափոխ համշենահայերին, բայց այդ նյութերը կամ ոչնչացվել են կամ էլ ննջում են ինչ–որ դիվաններում: Ցավոք, Մեծ եղեռնի ողբերգությունն ապրած, այնուհետև խորհրդային կարգերի հալածանքներին ենթակա հայ գիտնականները ևս քիչ են անդրադարձել խորհրդային Միությունում բնակվող կրոնափոխ համշենահայերի խնդրին⁵⁵: Դժբախտաբար, թուրքական իշխանությունների հսկող աչքի ու արգելքների հետևանքով սփյուռքահայ գիտնականները ևս չկարողացան այցելել և ուսումնասիրել Սև ծովի հարավ–արևելյան առափնյակի կրոնափոխ ազգակից-

⁵⁵ *խորհրդային Միությունում բնակվող կրոնափոխ համշենահայությունը հպանցիկ հիշվում է Լ. Նաչիկյանի «Էջեր համշենահայ պատմությունից» («Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 1969, N2, էջ140) հոդվածում: Ազգագրական արժեքավոր նյութերի հիման վրա է իր կրոնափոխ հայրենակիցներին ներկայացրել համշենցի բանահավաք և ազգագրագետ Բ. Թողաքյանը, տես «Համշենահայերի ազգագրությունը» («Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշար, հ. 13, Երևան, 1981, էջ 29–35): Տես նաև՝ Թողաքյան Բ., *Խոփացի համշենահայերը*, «Սովետական Հայաստան» ամսագիր, 1984, N 8, էջ 28–29: Ե. Դ. Թորլաքյան, *Этнография амшенских армян, сборник статей и материалов, Краснодар, 2002, с 36–37: Վարդանյան Ս., Համշենահայ փայտաշեն կառույցը (Հայկական ժողովրդական ճարտարապետության ևս մեկ տարբերակ)*, «Կուլտուր–լուսավորական աշխատանք», Երևան, 1985, N3, էջ 6–11: Նշխարներ Համշենի և Տրապիզոնի բանահյուսության, ժողովեց, կազմեց և ծանոթագրեց Բ. Թողաքյանը, Երևան, 1986, էջ 90–92: Վարդանյան Ս., *Կրոնափոխ համշենահայերին պատմա–ազգագրորեն ներկայացնելու փորձ*, Հանրապետական գիտական նստաշրջան՝ նվիրված 1984–1985թթ. ազգագրական և բանագիտական դաշտային հետազոտությունների հանրագումարին, Երևան, 1987, էջ 95–97: Նույնի, *Համշենցի հայերի լարային նվագարանները, Հայ ժողովրդի մշակույթի հետազոտման հարցեր*, ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, 1988, էջ 86–87: «Ձայն համշենական», ժողովածու, գիրք 3–րդ, կազմեց, խմբագրեց, առաջաբանը գրեց և ծանոթագրեց Սերգեյ Վարդանյանը, Երևան, 1989, էջ 208–246: Նույնի, *Համշենահայերի բնակարանային համալիրը և կրած փոփոխությունները*, Հանրապետական գիտական նստաշրջան, 1986–1988թթ. ազգաբանական և բանագիտական դաշտային հետազոտությունների հիմնական արդյունքները, Երևան, 1990, էջ 64–67:*

ներին⁵⁶: Դրանից չզլացան օգտվել որոշ օտար գիտնականներ. այսպես, թուրք պատմաբան Ս. Ռեզան այնքան է առաջանցում, որ Ռիզեի, Փազարի և Խոփայի շրջանների կրոնափոխ հայերի մասին գրում է, թե նրանք ծագում են խեթական թուրքերից, որ նրանք նախաիսլամական շրջանում թուրքերի կողմից ընդունված կրոնի պատճառով մի որոշ ժամանակ հայերեն են խոսել, սակայն, այնուհետև ընդունելով մահմեդականություն՝ վերադարձել են թրքության գիրկը, ստացել են իրենց բուն ազգային դեմքը, թե իբր այդ ժողովուրդը թրքախոս է, թուրքերենից բացի այլ լեզու չգիտի⁵⁷: «խեթական թուրքեր» արտահայտությունը համարելով ոչ գիտական՝ ասենք, որ Ռեզայի այն պնդումը, թե կրոնափոխ համշենահայությունը «թուրքերենից բացի այլ լեզու չգիտի», լիովին հերքում են նրանց հետ հանդիպած անծինք, ինչպես նաև հայ և օտար բանահավաքների գրառած հայերեն բանահյուսական նյութերը⁵⁸, վերջին տարիներս Թուրքիայում Օզջան Ալփերի նկարահանած «Սօմի» («Մեծ մայր») և «Աշուն» ֆիլմերը և կրոնափոխ համշենահայերի թողարկած խտասկավառակները, որոնցում կան նաև նրանց բարբառով խաղիկներ և երգեր⁵⁹:

⁵⁶ Պոնտոսի հայությանը նվիրված Յովակիմ Յովակիմեանի (Արշակունի) «Պատմութիւն հայկական Պոնտոսի» (Բեյրութ, 1967) գրքում գրավոր աղբյուրների հիման վրա հեղինակը անդրադարձել է նաև կրոնափոխ համշենցիներին (էջ 56–71):

⁵⁷ M. Rıza, Benlik ve Dilbirliğimiz, Ankara, 1982, s. 35–36.

⁵⁸ «Մայրիկ, մենք հա՛յ ենք», հարցազրույց Ստամբուլի Կետիկ-փաշա թաղամասի Հայ Ավետարանական եկեղեցու իովիվ, վեր. Գ. Աղաբալազյուրի հետ, գրուցեց Ս. Վարդանյանը, «Ձայն համշենական», 2007, N 5-6, նույնը՝ «Հանրապետական» ամսագիր, 2007, N 9, էջ 11-14, նույնը՝ Այլախոս և այլաղավան հայեր, Երևան, 2008, էջ 48-51: Տես նաև 110–118-րդ ծանոթագրությունները:

⁵⁹ Քազանցը Ս., *Համշենյան զեփյուռ*, «Ալյուս», Ստամբուլ, 2005, N 497: Տ. Լոքմազյոզյանի թարգմանությամբ տես «Ձայն համշենական» ամսաթերթ, 2006, N3–4: Նաչիկյան Հ., *Եվս մի հրաշալի ծայնասկավառակ՝ «Վօսս»*, այսինքն՝ «Ո՛վ է», «Ձայն համշենական» ամսաթերթ, 2006, N5–6: Սահակյան Լ., Օսմանյան կայսրությունում համշենահայերի նկատմամբ վարած բռնի մահմեդականացման բողոքականության հետևանքները և ներկա իրավիճակները, «Երկիր» շաբաթաթերթ, 2006, սեպտեմբերի 8: Նույնի, Օսմանյան կայսրությունում համշենահայերի բռնի մահմեդականացման

Իսկ բաշ–համշենցիների լեզվում պահպանված մեծաթիվ հայերեն բառերի մասին են վկայում հուլանդացի գիտնական Ուլֆե Բլասինգի հրապարակած երկու մեծաթիվ ուսումնասիրությունները⁶⁰:

Թեև թուրք գիտնականները դեռևս չեն կարողանում ձեռքագատվել պատմագիտությունը քաղաքական նկատառումներին զոհելու իրենց սովորույթից, բայց ուրախալի է, որ երբեմն գրքեր ու հոդվածներ են տպագրվում, որոնցում հիշատակվում են նաև Համշենի մասին պատմող հայկական աղբյուրները⁶¹: Ցավոք, դրանք ներկայացվում են որոշ խեղաթյուրումներով և միմիայն հերքելու միտումով, բայց ընթերցողները, թեկուզև այս ձևով, ծանոթանում են հայկական աղբյուրներին և տեղեկանում դրանց գոյության մասին: Ի վերջո, առանց հայկական նյութերի, Համշենի համակողմանի պատմությունը գրելու ցանկացած փորձ նախօրոք դատապարտված է:

Եվ միանգամայն անսպասելի էր, որ 1996թ. Ստամբուլում թուրքերեն թարգմանությամբ, առանձին գրքուկով լույս տեսավ համշենահայերի մասին ակադեմիկոս Լևոն Խաչիկյանի 1969թ. հրապարակած հոդվածը⁶²:

հետևանքները, «Չայն համշենական», 2006, N9–10: Նույնի, Հայկական երգերը բռնի կրոնափոխված համշենցիների ինքնության հիշողություն և դրսևորում, «Չայն համշենական», 2007, N7–8, N9–10: Sahakyan L., The Armenian Language as a Remembrance and Manifestation of the Islamized Hamshenians Ethnic Identity: "Armenian Folia Anglistika. International Journal of English Studies", 2007, N2, p. 162–173. Նույնի, Հայկական երգերը բռնի կրոնափոխված համշենցիների ինքնության հիշողություն և դրսևորում, Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, հ. V, Երևան, 2008, էջ 243–260: Վարդանյան Ս., Սահմեդական համշենցիների բարբառով նոր երգ, «Չայն համշենական», 2007, N9–10: Նույնի, Սեկ երգի հինգ տարբերակ, «Չայն համշենական», 2008, N7–8:

⁶⁰ Uwe Bläsing, *Armenisches Lehngut im Türkei-türkischen am Beispiel von Hemşin*, Amsterdam, 1992.

Uwe Bläsing, *Armenisch Türkisch, Etymologische Betrachtungen ausgehend von Materialien aus dem Hemşingebiet*, Amsterdam, 1995.

⁶¹ Sakaoglu M. Ali, *Dünden Bugüne Hemşin, Karadeniz'den Bir Tarih*, Ankara, 1990. *Hâle Soysü. Kavimler Kapısı–1*, İstanbul, 1992.

⁶² Levon Haçikyan, *Hemşin Gizemi, Hamşen Ermenileri Tarihinden Sayfalar*, İstanbul, 1996. *վերահրատարակությունը*: 1997.

Ողջունելի է, որ վերջին տարիներս կրոնափոխ համշենցիներին նվիրված մի քանի գրքեր են թուրքիայում հրատարակել հենց իրենք՝ Ռիզեի և Արդվինի նահանգներում ծնված համշենցի հեղինակները՝ Ադնան Գենչը⁶³, Ալիյե Ալթը⁶⁴, Իբրահիմ Բարաջան⁶⁵, Ուղուր Բիրյոլը⁶⁶, Ալի Գյունդյուզը⁶⁷ և Ուրիշները⁶⁸:

1985թ. վրացի գիտնական Ծաթե Բածաշին, իր «Հյուսիսարևելյան Անատոլիայում բնակվող հեմշինները»⁶⁹ հոդվածում քննադատելով թուրք հեղինակներին, որոնք «գիտակցաբար միակողմանի և կողմնակալությամբ են լուսաբանում ոչ թուրքական էթնիկական խմբերի հետ կապված հիմնահարցերը»⁷⁰, ինքն է ընկնում մի այլ ծայրահեղության մեջ: Նա մերժում է նաև հայերեն սկզբնաղբյուրներն ու հայ գիտնականներին՝ հայտարարելով, որ «հայերեն լեզվով գոյություն ունեցող գրականությունը գիտականորեն հավաստի չենք համարում»⁷¹: Ծ. Բածաշին իր ծանոթագրություններում հիշելով «շատ հայ հեղինակների» վկայությունների հիման վրա գրված Բ. Թոռլաբյանի երեք հոդվածները, դրանք մերկապարանոց հայտարարում է «կողմնակալ»: Վրացի գիտնականին պետք է տեղեկացնենք, որ Բարունակ Թոռլաբյանը ծնունդով համշենահայ է, մի քանի տարի թուրք ջարդարարների դեմ կռվելուց հետո է ստիպված եղել լքել հայրենիքը և նրա հոդվածները ոչ միայն պրպտող գիտ-

⁶³ Adnan Genç, *Çalışkan Kadınlar Ülkesi, Hemşin, İstanbul*, 2005.

⁶⁴ Aliye Alt, *Tarihin ve Bugünün Aynasında Hemşin - Ermenileri, İstanbul*, 2006. *Տես նաև Алие Алт (Алиса Костяная), Амшенские армяне (Точка зрения одной армянки)*, «Չայն համշենական», 2007, N1-3:

⁶⁵ İbrahim Karaca, *Hemşin, Tarih, Dil, Gelenek ve Görenekler, İstanbul*, 2006.

⁶⁶ Uğur Biryol, *Gurbet Pastası, Hemşinliler, Göç ve Pastacılık, İstanbul*, 2007. *Տես նաև Վարդանյան Ս., Թուրքերեն հոդված մահմեդական համշենցիների մասին, Ջան Ուղուր Բիրյոլ, Հեմշինցիների մասին..., թուրքերենից թարգմանեց Լ. Սահակյանը, «Չայն համշենական», 2006, N 11-12: Նույնը, «Ազգ», 2007, փետրվարի 17: Նույնը, «Նոյյան տապան», 2007, օգոստոսի 3:*

⁶⁷ Ali Gündüz, *Hemşinliler, Dil -Tarih - Kültür, Ankara*, 2002.

⁶⁸ Fadime Kimdir, *Editörler Leyla Çelik – Ayşenur Kolivar, İstanbul*, 2007.

⁶⁹ Բածաշի Ծաթե, *Հյուսիսարևելյան Անատոլիայում բնակվող հեմշինները, «Մնաթրի», Թբիլիսի, 1985, N12, էջ 159 (վրացերեն):*

⁷⁰ Նույն տեղում, էջ 159:

⁷¹ Նույն տեղում, էջ 162:

նականի որոնումների, այլև, մեծավ մասամբ, անձնական փորձի, տեսածի ու լսածի արդյունք են, ինչով և խիստ արժեքավորվում են հատկապես նրա ազգագրական և բանահյուսական ուսումնասիրությունները:

Ծաթե Բածաշին, որպես զեղծարարության վառ օրինակ, բերում է Հայկական սովետական հանրագիտարանի 6-րդ հատորում տպագրված Լևոն Պետրոսյանի «Համշենցիներ» հոդվածը, քանի որ նրա գրականության ցանկի միակ հղումը՝ «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսում (1969, N2) տպագրված Լևոն Խաչիկյանի «Էջեր համշինահայ պատմությունից» հոդվածը, ըստ Բածաշիի, իրականում գոյություն չունի⁷²: Իր այս գյուտը նա արել է թերթելով... «Պատմա-բանասիրական հանդեսը» և ինքն իր համար բացահայտել, որ «ոչ միայն այս, այլև այս հանդեսի որևէ այլ համարում այս հոդվածը գոյություն չունի»: Մնում է ցանկալ, որ հարգարժան հեղինակը «Բանբեր Երևանի համալսարանին» այսուհետև չհփոթի «Պատմա-բանասիրական հանդեսի» հետ դրանով անհարմար կացության մեջ չզցի և իրեն, և՛ «Մնաթոբի» ամսագրի ընթերցողներին: Ի դեպ, հենց այդ, ըստ Բածաշիի, գոյություն չունեցող հոդվածն է որպես առաջաբան որոշ կրճատումներով վերահրատարակվել Բ. Թողլաքյանի «Համշենահայերի ազգագրությունը» (Երևան, 1981) գրքում, նաև, ինչպես նշեցինք, 1997-ին թարգմանաբար հրատարակվել թուրքերեն⁷³, իսկ 2002-ին՝ նաև ռուսերեն⁷⁴:

Հետաքրքիր է նաև այն, որ Ծաթե Բածաշին կրոնափոխ համշենահայերի հայկական ծագումը հաստատող վրացի և այլազգի հետազոտողներին քաղվածաբար ներկայացնելուց հետո անսպասելիորեն եզրակացնում է, թե «Հեմշինում բնակչության կեսից ավելին լազերից է բաղկացած, իսկ մնացած մասն իրենից ներկայացնում է խառնուրդ ռասա: Նրանց էթնոգենեզում գլխավոր դեր է խաղացել հայ-գրիգորյան եկե-

ղեցին, որին, ինչպես երևում է, միացել է լազերի որոշակի մասը»⁷⁵: Նա իր վարկածի հիմնական կռվաններն է համարում Աբխազիայի քրիստոնյա համշենահայերի բարբառի մասին վրացի հայագետ Իվանե Շիլակաձեի երկու հոդվածները⁷⁶, որոնց հղելով, Բածաշին հայտարարում է, թե համշենցիների լեզուն լի է լազերենից փոխառյալ քերականական և բառային ձևերով: Իրականում, Շիլակաձեն ընդամենը ենթադրում է, թե Համշենի բարբառի 5 բառ լազերենից է փոխառյալ և եզրակացնում, որ դա հարևանությամբ ապրող երկու ժողովուրդների համար բնական երևույթ է:

Բածաշին իր միտքը կրկնում է նաև իր թեկնածուական ատենախոսության մեջ, որի երրորդ գլուխը վերնագրված է «Хемшины»⁷⁷ և նվիրված է կրոնափոխ համշենահայերին լազական ծագում վերագրելուն: Հեղինակը դիմելով բացահայտ կեղծիքների, առանց որևէ փաստական հիմնավորման գրում է, թե «...Գիտնականների մեծ մասը հակված է համշենցիների մեջ տեսնել երկրամասի մի ժամանակ Հայ եկեղեցու գիրկն անցած (բնագրում՝ григорианизированных – Ս.Վ.) բնիկներին՝ ճաներին»⁷⁸: Ատենախոսության եզրակացությունների բաժնում նա, անցնելով գիտական պարկեշտության բոլոր սահմանները, գրում է. «Համշենցիները (բնագրում՝ хемшины – Ս.Վ.) իրենցից ներկայացնում են Լազիստանի որոշ ներքին շրջաններում առանձին կղզյակներով ապրող լազա-գրիգորյան ծագումով էթնոկրոնական փոքր համայնք: Էթնիկական առումով նրանք իրենցից ներկայացնում են լազա-հայկական խառնուրդ: Համշենցիների մի մասը մինչև այժմ պահպանել է հայերեն լեզուն՝ առատ հնամյա ձևերով և

⁷⁵ Նույն տեղում, էջ 160:

⁷⁶ Շիլակաձե Ի., *Նա մասնիկը ճաներենում և նա մասնիկը Համշենի բարբառում, Թբիլիսիի համալսարանի աշխատություններ, հ. 43, Թբիլիսի, 1951 (վրացերեն): Շիլակաձե Ի., Հայ-վրացական լեզվական հանդիպումներ (լազերենի և Համշենի բարբառի առնչությունները), Արևելյան բանասիրություն, Թբիլիսի, 1983, N5, էջ 32-39 (վրացերեն):*

⁷⁷ Бацаши Цатэ Назимович. Этнорелигиозный состав населения Северо-Восточной Анатолии в XIX-начале XX веков, Автореферат диссертации на соискание ученой степени кандидата исторических наук, Тбилисский гос. университет, Тбилиси, 1988, с. 19-20.

⁷⁸ Նույն տեղում, էջ 20:

⁷² Նույն տեղում, էջ 162:

⁷³ Levon Haçikyan, *Hemşin Gizemi, Hamşen Ermenileri Tarihinden Sayfalar*. İstanbul. 1996. *Վերահրատարակությունը՝ 1997.*

⁷⁴ Хачикян Л., *Страницы истории Амишенских армян, Б. Г. Торлакян, Этнография амишенских армян, сборник статей и материалов, Краснодар, 2002, с. 18-30.*

քարթվելական լեզվական շերտերով: Նշված խմբի էթնիկական գիտակցությունը, հիմնականում, որոշվում է բնակության երկրով, այսինքն՝ նրանք իրենց համարում են լազեր, թեև ավելի քան վերջինները ենթակա են թյուրքացման: Եվ կենցաղում նրանք լազերից ոչնչով չեն տարբերվում»⁷⁹:

Տասը տարի անց՝ 1998 թ., Ստամբուլում հրատարակվեց ութ վրացի հեղինակների (այդ թվում՝ Ծ. Բածաշիի) հողվածների թուրքերեն թարգմանություններից կազմված «Տրապիզոնից Աբխազիա արևելասևծովյան ժողովուրդների պատմությունները և մշակույթները»⁸⁰ ժողովածուն, որը նվիրված է լազերին, համշենցիներին, չեփնիներին, մեգրելներին, սվաններին, օսերին և աբխազներին: Գրքի առաջաբանը գրել է Ծ. Բածաշին, բայց արդեն որպես Տրապիզոնում վրաստանի գլխավոր հյուպատոսության գլխավոր քարտուղար: Հողվածների հեղինակներն առանձին-առանձին չեն նշված, ուստի հայտնի չէ, թե ով է գրել համշենցիների մասին պատմող յոթ էջանոց նյութը, որում ընդունվում է համշենցիների հայկական ծագման փաստը⁸¹: Եթե Ծ. Բածաշին է, ապա պետք է կարծել, որ նա իր նոր պաշտոնում հնարավորություն ունենալով տեղում շփվել համշենցիների հետ, փոխել է իր հնարածին վարկածը, ինչը միայն կարելի է ողջունել:

Ինչպես նշեցինք, մեծ էր կրոնափոխ, բայց հայախոս համշենցիների թիվը նաև Համշենին հարակից Խոփայի գավառում: 1878թ. Սան Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերով Ռուսաստանին անցավ Խոփայից հյուսիս ընկած հատվածը, որում կային համշենցիներով բնակեցված գյուղեր: Այդ տարածքները մտան Բաթումի օկրուգի մեջ: Համշենցիների գյուղերն իրարից սահմանազատվեցին 1921թ. մարտի 16-ին ՌԽՖՍՀ-ի և Թուրքիայի միջև կնքված պայմանագրով, ըստ որի սահմանից այս կողմ մնացին Գրզըլ-Թոփրակը, ճառնալը, Գոնիոն, Կորիաթը, Ավքան (Ավգյան) և Սարփը, որոնցում բնակվում էին նաև կրոնափոխ համշենցիներ: Այդ բնակավայրերը նույն թվականին մտան վերոհիշյալ պայմանագրով

ստեղծված Աջարիստանի (Աջարիայի) Ինքնավար Հանրապետության կազմի մեջ:

Ըստ 1926թ. դեկտեմբերի 17-ի համամիութենական մարդահամարի Աջարիայում բնակվող 10476 հայերից⁸² բացի գյուղական վայրերում ապրում էր 625 (329 արական և 296 իգական) հայախոս կրոնափոխ համշենցի հայ хемшин (Khemchines)⁸³ և 19 (12 արական և 7 իգական) օտարախառակ хемшин⁸⁴, իսկ Հայաստանում հաշվառվել է 2 արական (хемшин) (համշենցի)⁸⁵: Ազգությունների լեզուներին նվիրված հարցմանն ի պատասխան նրանք իրենց մայրենի լեզուն համարել են հայերենը⁸⁶:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին 1944 թվականին, երբ բազմաթիվ կրոնափոխ համշենահայեր ռազմաճակատում էին, ԽՍՀՄ Պաշտպանության կոմիտեի նախագահ Ստալինի հուլիսի 31-ին ստորագրած թիվ 6279 «խիստ զաղտնի» որոշմամբ Աջարիայի 1385 "хемшин"-ները, այնտեղ բնակվող թուրքերի և քրդերի հետ արքորվում են Ղրղզստան և Ղազախստան⁸⁷: Ապրանքատար զնացքներով 17 օր տևած «ճանապարհորդության» ընթացքում նրանք շատ զոհեր են տալիս: Չեն արքորվում միայն մի քանի ընտանիքներ: Այսպես, իրարից հարյուրավոր կիլոմետրեր հեռու սփռված այս տարաբախտ հայերը զրկվում են բոլոր իրավունքներից: Առանց զինվորական պարետի թույլտվության գյուղերից դուրս գալը համարվում էր հանցագործություն, ամուսնություններն իսկ կատարվում էին պարետի թույլտվությամբ: Ըստ Վ. Չենսկովի, 1953թ. հունվարի 1-ի

⁷⁹ *Նույն տեղում, էջ 23:*

⁸⁰ *Trabzon'dan Abhazya'ya Doğu Karadeniz Halkları Tarih ve Kültürleri, İstanbul, 1998.*

⁸¹ *Նույն տեղում, էջ 70-76:*

⁸² *Всесоюзная перепись населения 1926 года, Том XIV, ЗСФСР, (см. Отдел ССР Грузия), Москва, 1929, с.26:*

⁸³ *Նույն տեղում, էջ 16, 21, 26, 28:*

⁸⁴ *Նույն տեղում, էջ 39:*

⁸⁵ *Նույն տեղում, см. Отдел ССР Армения, с.7, 9. տես նաև «1926թ. Համամիութենական մարդահամար, Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն, բաժին 1», Թիֆլիս, 1929, էջ 7, 9:*

⁸⁶ "Всесоюзная перепись...", см. Отдел "Пояснительные замечания к XIV тому" с. V, տես նաև «Համամիութենական մարդահամար...», էջ 52:

⁸⁷ *Бугай Н. Ф., Гонов А. М., Кавказ: Народы в эшелонах (20-60-е годы), Москва, 1998, с.213-214.*

դրությամբ հատուկ բնակավայրերում կար 1.397 "спеппоселенец" խենշիլ՝ այդ թվում՝ Ղրղզստանում՝ 973, Ղազախստանում՝ 422 և Ուզբեկստանում՝ 2 խենշիլ «хемшил»⁸⁸։ Միայն Ստալինի մահից հետո են նրանք իրավունք ստանում անձնագիր ունենալ, բայց ազգությունը նշող կետում հայի փոխարեն գրվում է «խենշիլ», երբեմն էլ «թուրք», այն պատճառաբանությամբ, որ հայերը քրիստոնյա են, իսկ նրանք մահմեդական։

Ղրղզստանի Օշի եւ Ղազախստանի Ջամբուլի մարզերում կան նաև բազմաթիվ աքսորյալ քրդեր, որոնց մի մասը մյուսներից տարբերվելու համար իրեն կոչում է «համշենցի քուրդ»։ Նրանք թրքախոս են և, ինչպես իրենք ու կրոնափոխ համշենահայերն են վկայում, դեռևս մի քանի տասնամյակ առաջ այդ «համշենցի քրդերի» մեծահասակները խոսում էին հայերեն և ասում էին, որ ծագումով համշենցի հայ են։ Նրանք ևս 1944–ին են աքսորվել Աջարիայից, որտեղ 1926թ. մարդահամարի տվյալներով ապրում էր 3295 քուրդ⁸⁹։ Ցավոք, ըստ հարցման աղյուսակի հնարավորությունների, հարցվողի պատասխանի տարբերակները խիստ սահմանափակ էին։ Նրանք կարող էին նշել կամ էթնիկ անվանման լեզուն, կամ վրացերենը, կամ ռուսերենը, կամ այլ լեզու առանց անվան նշումի։ Քուրդ համարվող այս 3295 անձանցից՝ 273 արական և 249 իգական սեռի հարցվողները քրդերենը (նաև վրացերենն ու ռուսերենը) իրենց մայրենի լեզու չեն համարել։ Թե ո՞րն է նրանց մայրենի լեզուն աղյուսակում չի նշվում։ Այս քուրդ համարվող, բայց քրդերեն չիմացող և այն որպես օտար լեզու ընկալող տղամարդկանց (273) և կանանց (249) թվի համամասնությունը թույլ է տալիս եզրակացնել, որ տվյալ պարագայում գործ ունենք մի ամբողջական համայնքի հետ։ Կարծում ենք, որ այս թվերը վերաբերում են հենց «համշենցի քուրդ» կոչվող, նախկինում հայախոս, այժմ թուրքախոս դարձածներին։

Այն, որ համշենցի կրոնափոխ հայերի մի հատվածին երբեմն շփոթել են քրդերի հետ, վաղուց է հայտնի։ Պատճառը, երևի, համշենահայերի մի մասի հիմնականում խաշնարածությամբ զբաղվելն է եղել, բայց, հավանաբար, կային նաև այլ պատճառներ, որոնք, ցավոք, չեն ուսումնասիրվել։ Է. Լիոզենը շրջագայելով Բաթումի նահանգում, 1905թ. գրում է, որ ամբողջ Արդվինի շրջանում համշենցի կրոնափոխ հայերին քրդերի տեղ են դնում և զարմանում են, որ նրանք խոսում են հայերեն. «Իսկապես, հակառակ բաշ–համշենցիների, նրանք պահպանել են իրենց նախնյաց լեզուն, ինչից չեն հրաժարվում։ Նրանք ինձ պատմում էին, որ ինչ–որ ժամանակ եղել են քրիստոնյաներ...»⁹⁰։

Չթվարկելով կրոնափոխ համշենահայերին այս կամ այն կերպ անդրադարձած բոլոր հեղինակներին, նշենք, որ նրանց մասին հիշատակումներ կան նաև գիտական տեղեկատու հրատարակություններում. այսպես, Խորհրդային մեծ հանրագիտարանի 1957թ. տպագրված 46–րդ հատորում "Хемшины" հոդվածում նրանք դիտվում են 18–րդ դարի սկզբին մահմեդականություն ընդունած հայեր⁹¹, Գ. Շպաժնիկովի 1976թ. լույս տեսած «Արևմտյան Ասիայի երկրների կրոնը» գրքում հայերին նվիրված մասում առանձնացվում են «խենշիլները», որպես «հայերի հետաքրքրական կրոնական համայնք»⁹², իսկ Ս. Բրուկը 1986թ. հրատարակած իր «Աշխարհի բնակչությունը» գրքում նրանց անվանում է «յուրահատուկ հայկական ազգագրական խումբ»⁹³։

Չետաքրքիր է, որ Թուրքիայի Կայսերի (Կեսարիա), Մալաթիա և Էլազըզ (Խարբերդ) քաղաքների համալսարանների գիտնականները ևս, Ազգային անվտանգության խորհրդի հանձնարարությամբ, ուսումնասիրելով Թուրքիայի ազգային փոքրամասնություններին, 2000թ. իրենց կազմած զեկուցագրում, մյուս ազգային փոքրամասնությունների՝ հայերի, քրդե-

⁹⁰ Лиозен Э., *Узл. шзл.*, էջ 169:

⁹¹ Большая Советская энциклопедия, т. 46, Москва, 1957, с. 118.

⁹² Шпажников Г. А., *Религия стран западной Азии. (Справочник)*, Москва, 1976, с. 266.

⁹³ Брук С. И., *Население мира. Этнографический справочник*, Москва, 1986, с. 434.

⁸⁸ "Аргументы и факты", 1989, N 39 (30.09–6.10): Земсков В. Н., *Спецпоселенцы в СССР, 1930–1960*, Москва, 2005, с. 213–215.

⁸⁹ "Всесоюзная перепись ...", *отдел Грузия*, с. 26:

րի, արաբների, լազերի կողքին նշում են Ռիզեի և Արդվինի նահանգների 13 հազար համշենցիներին⁹⁴։ Սրանով, փաստորեն, թուրքերը հենց իրենք են հերքում համշենցիների թուրքական ծագման ստահող վարկածը և, ըստ վիճակագրական տվյալների հրապարկման թուրքական ավանդույթների, որպես ազգային փոքրամասնություն, նվազեցնում նրանց թիվը։ Այնինչ, իմ մոտավոր հաշվումներով, միայն Արդվինի նահանգի խոփայի գավառի 32.209 (2007թ.) բնակիչներից շուրջ 20.000-ը համշենցի է։ Նրանք բնակվում են խոփա քաղաքում (բնակչությունը՝ 17.400 մարդ), ինչպես նաև մի շարք գյուղերում։ Քանի որ թուրքիայում բնակավայրերի անվանափոխությունը դարձել է պետական քաղաքականության բաղադրիչ, ուստի ստիպված են փակագծերում նշել նաև գյուղերի նախկին անունները՝ Քոյունջուլար (Չալունա, Չալունա), Բաշորա (Խիզի, Խիզօբա), Չավուշլու, Յուղերե (Չուրփիջի, Չյուրբուջի), Գյունեշլի (Չաղրինա, Չարգինա), Բալըբլը (Չենդիդ), Յենդեք (Գարջի), Էշմեքայա (Արդալա), Չիմենլի, Փընարլը (Անչիօղ, Անչօրօխ), Քեմալփաշա (Մաքրիյալ) և համանուն գյուղախումբ՝ Շանա, Չաքմաղին, Փափաթ, Յալբաշը, Չամուռլու (Չանչախանա, Չանչաղօն), Ուչքարդեշ, Քազիմիյե (Վեյի Սարփ), Օսմանիյե, Քարասոմանիյե (Խեծէլօն), Քյոփրուջու Դերեիչի (գյուղախումբը 2000թ. ուներ 4.129 բնակիչ, իսկ 2007-ին՝ 4.597)։ Համարյա 2.000 կրոնափոխ, բայց հայախոս համշենցիներ են բնակվում նաև հարևան Բորչկայի գավառի (բնակչությունը 2007թ.՝ 24.133) Բորչկա ավանում և Չիֆթեփընար (Չխալա), Գյուրեշեն (Բեյլիվան, Բեղլեվան, Բաղլիվան), Յեշիլքոյ (Գենչլե, Մանասթըր) գյուղերում։ Եթե Ռիզեի նահանգի համշենցիներին էլ գումարենք, ապա ընդհանուր թիվը 13.000-ը շատ կգերազանցի։

Կրոնափոխ համշենահայերի պատմությունը, բարբառը, ազգագրությունն ու բանահյուսությունը ուսումնասիրելու նպատակով 1984 և 1987թթ. եղել են Ղրղզստանում, Ղազախստանում, Ուզբեկստանում և Ռուսաստանի Կրասնոդար-

րի երկրամասում⁹⁵։ Նրանց որոշ պատվիրակներ էլ Հայաստանում բնակություն հաստատելու հնարավորություններին ծանոթանալու համար 1984-ին և 1988-ին հյուրընկալվել են Երևանում։

Կրոնափոխ համշենահայերն ապրում են փոքր խմբերով, տեղացիների հետ խառը տարաբնակմամբ։ Անկախ գյուղերի հեռավորությունից համախմբված են. թե՛ ուրախության, թե՛ տխրության պահերին միասին են։ Հիմնականում զբաղվում են երկրագործությամբ և անասնապահությամբ, մասնավորապես խաշնարածությամբ։

Աքսորից հետո զգալի փոփոխություններ է կրել համշենահայերի տնաշինությունը⁹⁶։ Ղազախստանում տափաստա-

⁹⁵ Վարդանյան Ս., Համշենահայ փայտաշեն կառույցը (Հայկական ժողովրդական ճարտարապետության ևս մեկ տարբերակ), «Կուլտուր-լուսավորական աշխատանք», Երևան, 1985, N3, էջ 6-11: Նույնի, Կրոնափոխ համշենահայերին պատմա-ազգագրորեն ներկայացնելու փորձ. Հանրապետական գիտական նստաշրջան՝ նվիրված 1984-1985թթ. ազգագրական և բանագիտական դաշտային հետազոտությունների հանրագումարին, Երևան, 1987, էջ 95-97: Նույնի, Համշենցի հայերի լարային նվագարանները, Հայ ժողովրդի մշակույթի հետազոտման հարցեր, ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, 1988, էջ 86-87: «Չայն համշենական», ժողովածու, գիրք 3-րդ, կազմեց, խմբագրեց, առաջաբանը գրեց և ծանոթագրեց Սերգեյ Վարդանյանը, Երևան, 1989, էջ 208-246: Նույնի, Համշենահայերի բնակարանային համալիրը և կրած փոփոխությունները, Հանրապետական գիտական նստաշրջան, 1986-1988թթ. ազգաբանական և բանագիտական դաշտային հետազոտությունների հիմնական արդյունքները, Երևան, 1990, էջ 64-67: Նույնի, Համշենի մուսուլման հայերը, «Փյունիկ» պարբերաթերթ, Երևան, 1991, N1, էջ 3-4: Նույնի, Համշենի մուսուլման հայերը, «Իրան-Նամէ», 1993, N4, էջ 12-13: Նույնի, Նախկին խորհրդային Միությունում բնակվող մահմեդական հայերը, «Բազմալեզ», Վենետիկ, 1996, թիվ 1-4, էջ 189-200: Նույնի, Համշենցի մուսուլման հայերի ուսումնասիրության պատմությունից, «Իրան-Նամէ», 1998, N1-3, էջ 2-11: Вартамян С., Армяне-мусульмане, Россия-Армения-Иран: диалог цивилизации, Кавказский центр иранистики, доклады и тезисы докладов международной конференции, Ереван, 1999, с. 29-30. Վարդանյան Ս., Մահմեդական համշենահայերը՝ Մեծ եղեռնի վկաներ, «Չայն համշենական», 2006, N 3-4: Նույնի, Մահմեդական համշենահայերը՝ Մեծ եղեռնի վկաներ, «Եզերք» ամսագիր, 2007, N 2, էջ 40-43:

⁹⁶ Վարդանյան Ս., Համշենահայ փայտաշեն կառույցը (Հայկական ժողովրդական ճարտարապետության ևս մեկ տարբերակ), «Կուլտուր-լուսավորական աշխատանք», Երևան, 1985, N3, էջ 6-11: Նույնի, Համշենահայերի

⁹⁴ *Etnik rapor Malutya dosyasından çıktı, "Agos", İstanbul, 2008, Haziran 13 (N 637):*

նային տեղանքի, չոր կլիմայի և անտառների բացակայության պատճառով տները կառուցվում են աղյուսից, մեկ հարկանի: Հույն աղյուսով են կառուցվում գոմը, ամառային խոհանոցը, ամբարը, բաղնիքը և այլն: Բակում պատվավոր տեղ ունեն սավթին⁹⁷ և փուռը, հազվադեպ՝ երկանիվ շարժական փուռը:

Ի տարբերություն Ղազախստանի, Ղրղզստանը լեռնային և համեմատաբար անտառներով հարուստ հանրապետություն է: Այդ գործոնը որոշ դրոշմ է դրել կրոնափոխ համշենահայերի տների վրա, որոնք թեև հիմնականում կառուցվում են հույն աղյուսից և սպիտակեցվում, բայց բոլոր օժանդակ շինությունները փայտից են: Այստեղ էլ տները մեկ հարկանի են, գոմերից առանձին: Ինչպես Ղազախստանում, այստեղ էլ եգիպտացորեն քիչ մշակելու հետևանքով անհետացել է համշենցիների ավանդական կորոբը⁹⁸:

Այստեղ էլ սավթին և փուռը, ինչպես Ղազախստանում, հար ու նման են տեղացիների պատրաստածին:

Ուզբեկստանի, Ղազախստանի, Ղրղզստանի, ՌԴ Կրասնոդարի երկրամասի, Ռոստովի և Վորոնեժի մարզերի կրոնափոխ համշենահայերը բաժանված են մի քանի տասնյակ ազգակցական խմբերի: Ամենամեծը Կարաիբրահիմովների (Կարաիբրահիմով) ազգատոհմն է (շուրջ 400–500 հոգի), որի մեծ մասը համախմբվել էր Ղազախստանի Չիմբենդի մարզի Սայրամի շրջանի Չիրկինո գյուղում: Ազգատոհմի անվանադիրը Իբրահիմն է: Ըստ 1987թվականին իմ կազմած տոհմա-

բնակարանային համալիրը և կրած փոփոխությունները, տես Հանրապետական գիտական նստաշրջան 1986–1988թթ. ազգաբանական և բանագիտական դաշտային հետազոտությունների հիմնական արդյունքները, Երևան, 1990, էջ 64–67:

⁹⁷ *Սավթին 4–6 քմ ուղղանկյուն կամ քառանկյուն, ճաղաշար եզրերով փայտե կամ երկաթե բարձր թախտ է:*

⁹⁸ *Կորոբը համշենահայերի ավանդական մթերանոցն է, որը կառուցվում է բակում, սյուների կամ ցցերի վրա, որպեսզի կենդանիներին հասու չլինի: Պատերը հյուսվում են ճյուղերից կամ բարակ ծառաբներից, երբեմն էլ լինում են տախտակածածկ, այնպես որ օդ խաղա և կորոբում պահվող եգիպտացորենը չփչանա: Ելումուտի համար օգտագործում են շարժական սանդուղք:*

ծառի հետևում էր յոթ սերունդ: Նրանք հիշում են, որ իրենց նախկին ազգանունը Ջերմըզցի (այսինքն՝ ճերմակյան) է եղել: Եթե մյուս ազգատոհմերում գերակշռում են թխահերները, ապա Կարաիբրահիմովները (Կարաիբրահիմովիները) հիմնականում խարտյաշ են և կապուտաչյա, և դրանով էլ բացատրում են իրենց Ջերմըզցի կոչվելը: Հետաքրքրական է, որ Տրապիզոնից արևելք, Սև գետի հարևանությամբ, Յոնուրայի վիճակում գտնվող նշանավոր Կալաֆկա գյուղում, ուր Տեր Կարապետի ընտանիքի հետ ապաստանել էին Սև գետի կրոնափոխության արյունոտ սպանդից այլ փրկվածներ ևս, 20–րդ դարասկզբին 11 տուն ճերմըզցի (ճերմակյան) կար⁹⁹: Հավանաբար, նրանք և Կարաիբրահիմովները (Կարաիբրահիմովիները) նույն ազգատոհմի քրիստոնյա և մահմեդական ծյուղերն են:

Կրոնափոխ համշենցիները սովորաբար խուսափում են խառնամուսնություններից, բայց վերջին տասնամյակներում այլազգիների հետ ամուսնությունների զգալի աճ է նկատվում: Ընտանիքները բազմանդամ են, հաճախ ունենում են 5–7, երբեմն՝ 10 երեխա: Ղրղզստանում նրանք հաճախում են ղրղզական, իսկ Ղազախստանում, Ուզբեկստանում, Ռուսաստանի Կրասնոդարի երկրամասում, Ռոստովի ու Վորոնեժի մարզերում՝ ռուսական դպրոցներ: Չնայած ուսումնատենչությանն ու արտակարգ ընդունակություններին, ծնողները զգուշանում են զավակներին օտար վայրեր ուղարկել՝ բարձրագույն կրթության: Սակայն 1970–80–ական թվականներից սկսած այդ արգելքը հաղթահարելով՝ բարձրագույն կրթություն են ստացել բազմաթիվ երիտասարդներ:

Կրոնափոխ համշենահայերը շատ մեծ նշանակություն են տալիս ավագության կարգին՝ բոլոր հարցերը լուծում են ընտանիքների գլխավորները կամ ավագները: Նույնիսկ սովորական խոսքուզրույցի ժամանակ ավագների ներկայությամբ հաճախ կրտսերները չեն խոսում:

⁹⁹ *Թողաքյան Բ., Համշենահայերի ազգագրությունը, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 13, Երևան, 1981, էջ 41: Տես նաև Պատմություն հայկական Պոնտոսի, պատմագրեց Յովակիմ Յովակիմեան (Արշակունի), Պէյրուք, 1967, էջ 390:*

Թեև օտարներից խուսափում են, բայց հյուրասեր են, օգտագործում են ավանդական ճաշատեսակներ: Արդուզարդով ձգտում են չտարբերվել հարևան ժողովուրդներից, բայց դրա հետ մեկտեղ որոշ չափով պահպանել են իրենց տարագի տարրերը: Ուրախությամբ պետք է նշեն, որ 1995թ. Մոսկվայում լույս տեսավ Իգոր Կուզնեցովի՝ Պոնտոսի հայերի հագուստին նվիրված արժեքավոր աշխատությունը, որում նա քանիցս անդրադառնում է նաև կրոնափոխ համշենցիների հազուկապին¹⁰⁰:

Կրոնափոխ համշենահայերը բնութագրվում են իբրև քաջ, աշխատասեր, սակավապետ, լրջախոհ, զգուշավոր, ինքնամփոփ և բարոյական խիստ չափանիշներով առաջնորդվող: Ընդհանուր առմամբ կրոնամուլ չեն, եթե նույնիսկ մզկիթ կա, ապա այցելում են բացառապես 50–60–ից բարձր տարիքի տղամարդիկ¹⁰¹: Նրանք գիտեն, որ իրենց նախնիները մահմեդականություն են ընդունել արյունոտ սպանդի հետևանքով: 1987թ. Ղրղզստանում մոլլա Յեմդի Ակբույուկօղլին¹⁰² (ծնվ.՝ 1904թ., Գոնիոյում), այդ հաստատելով բերեց մի արաբատառ ձեռագիր մատյան: Նրա ասելով, զրքում կրոնական նյութերի, զանազան բուժամիջոցների և այլնի հետ, հիշատակումներ կային նաև համշենահայերի բռնի կրոնափոխության մասին: Գրառումը կատարվել էր հնում հեղինակը խոջա Ակբույուկօղլի Ալի էֆենդին էր: Ըստ այդմ, կրոնափոխությունը տեղի է ունեցել 1780–ա-

¹⁰⁰ Кузнецов И. В., *Одежда армян Понта. Семиотика материальной культуры*, Москва, 1995. *Տես նաև նրա մյուս հոդվածները՝ «Заклинания от засухи амшенских армян», «Советская этнография», Москва, 1991, N 1, с. 86-90. Турки-хемшилы или исламизированные армяне? (случай «неясной» этнической идентичности), «Диаспоры», Москва, 2000, N1-2, с. 226-258. Его же, Хемшилы – не турки, а исламизированные армяне, «Новое время», 2001, 28 апреля: Նույնը, Хемшилы – тоже армяне, «Голос Армении», 2001, 3 мая.*

¹⁰¹ *Կրիստոֆորի երկրամասում բնակություն հաստատած կրոնափոխ համշենահայերի ազգագրության մասին տեսու* Григорьян К. Э., *Грани идентичности, социокультурное пограничье как фактор формирования этнического самосознания (на примере субэтнических групп армян)*, Москва, 2006, с. 32-42.

¹⁰² *Գրառումը կատարել են 1987թ. Ղրղզստանի Օշի մարզի Սուզակի շրջանի Բեգարաղ (Աբաբեկով) գյուղում:*

կան թվականներին: Ձեռագրի այդ հատվածն, իրենց վկայությամբ, մի քանի տարի առաջ կարդացել են նաև մոլլա Յեմդիի ազգականներից ոմանք, բայց ինչպես նա էր հավաստիացնում, այնուհետև, թրջվելու հետևանքով այն ջնջվել է:

Ամենամեծ տոհմի՝ Կարաիբրահիմօղլիների ավագը՝ Իսխակ Կարաիբրահիմօղլը¹⁰³ (ծնվ.՝ 1888թ. Գոնիոյում) 1984թ. վկայեց, որ իր մեծերից լսել է, թե իրենք կրոնափոխվել են ջարդի հետևանքով և որ իրենց նախնիները Յամշեն են գաղթել Վանից: Ինքը Իսխակը, որը մեծահարուստ ու ճանաչված ընտանիքի զավակ է եղել, Մեծ եղեռնի տարիներին իրենց գյուղում թաքցրել է Արդվինի և այլ վայրերի 18 հայերի, որոնց այնուհետև անտառներով անցկացրել է ապահով վայրեր: Նման ձեռնարկումները կարող էին ծանր հետևանք ունենալ, որովհետև թուրքերը սպառնում էին, թե քրիստոնյա հայերին կտտորելուց հետո կրոնափոխների հերթն է գալու, որովհետև նրանք, միևնույն է, հայ են: Այդ է հաստատում նաև Դուրսուն Կարաբաջակօղլին (ծնվ. 1905թ. Գոնիոյում): (Նա 1968թ., որպես Միջին Ասիայի համշենցիների պատվիրակ այցելել է Յայաստան, փորձել պետական ատյաններում լուծել իր հայրենակիցներին Յայաստանում վերաբնակեցնելու հարցը, բայց այլևայլ պատճառներով ծրագիրը չի իրագործվել): 1984թ. Կրզըլ–Կիյա քաղաքում նա ինձ պատմեց, որ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին իրենց ընտանիքը տեղափոխվել է Խոփայի մոտակա Չանչախանա (այժմ՝ Չանուռլու) գյուղ՝ քեռիների մոտ: 1915թ. իրենց ազգականներից Օսման Մուսլօղլին, ցանկանալով հեռու մնալ պատերազմի թատերաբեմից, որոշում է ընտանիքով Չանչախատերազմի թատերաբեմից, որոշում է ընտանիքով Չանչախանայից մեկնել Կոստանդնուպոլիս, բայց նավի վրա հայերեն խոսելու պատճառով թուրքերը նրա ողջ ընտանիքը մորթում են և նետում ծովը: Դուրսուն Կարաբաջակօղլին ասաց, որ թեև այն ժամանակ ինքը փոքր էր, բայց ինքն ու գյուղի բոլոր երեխաները գիտեին, որ հայերեն խոսելը մահացու վտանգ է, բայց հայերենից բացի այլ լեզու չգիտեին:

¹⁰³ *Գրառումը կատարել են 1984թ. Ղազախստանի Չինբենդի մարզի Սայրամի շրջանի Չիրկինո գյուղում, ուր, իմ հաշվարկով, այդ թվականին բնակվում էին 48 տուն 286 կրոնափոխ համշենահայեր: 40 տուն կրոնափոխ համշենցիներ էին ապրում նաև Ջամբուլի մարզի Ավերդլուկի շրջանի Ռովնոյե գյուղում:*

Այնուհետև Կարաբաջակազախների ընտանիքը տեղափոխվում է Ջալունա (այժմ՝ Խոփայի գավառի Քոյունջուլար գյուղը), իսկ հետո հասնում Թերմեի Կոճամանբաշի հայկական գյուղ, որի բնակիչներին աքսորել էին և կոտորել: Մի գիշեր նրանց տուն են գալիս չորս հայեր և ասում, որ լեռներում կան փրկված հայեր և գյուղ են իջել նրանց համար ուտելիք տանելու: Հայրը՝ Աբդուլան, նրանց պատմությունները լսելով արտասվում է և նրանց է տալիս մի կով, առատ ուտելիք, անհրաժեշտ այլ պարագաներ: Հաջորդ օրը այդ մարդիկ վերադառնում են, բերում են կովի կաշին, նաև իրենց հետո՝ երկու երեխաներով մի կին, խնդրում, որ մնան այդ տանը, իսկ իրենք կրկին բարձրանում են լեռները: Որոշ ժամանակ միասին ապրելուց հետո Կարաբաջակազախները վերադառնում են Գոմիո, իսկ հետագայում իմանում, որ գյուղում մնացած այդ կնոջն ու երեխաներին թուրքերը մորթել են:

Ի դեպ, Դուրսում Կարաբաջակազախն ասաց, որ ինքը լավ է հիշում, որ մինչև Միջին Ասիա աքսորվելը իրենք հաց թխելիս խմորի գնդերի վրա օդում խաչ էին անում, միայն մեկի վրա խաչ չէին անում, որովհետև դա կենդանիների բաժինն էր: Իսկ Չիրկինոյի (Ղազախստան) ռուսական դպրոցի տնօրեն Ջելալ Կարաիբրահիմովը (ծնվ. 1955թ.) 1984թ. վկայեց, որ իր մանկության տարիներին ոչ միայն խմորի գնդերի վրա էին օդում խաչ անում, այլև գնդերը բացելուց (գրտնակելուց) հետո ափեզրով խաչ էին դաջում:

Մեկ ուրիշը՝ մոլլա Հաքի Քոչանիծեն¹⁰⁴ (ծնվ. 1900թ.), որին խոստացել էին իր Քոչանեղօղլի ազգանունը վրացականացնելու դեպքում չաքսորել, բայց դրժել էին խոստումը, պատմում էր, որ մեծերից լսել է, թե իրենք անեցիներ են, որ 680 տարի առաջ Անի քաղաքում, ուր 8 հազար ընտանիք էր ապրում, երկրաշարժ է եղել, և շատերն են զոհվել, իսկ որբերը սփռվել են տարբեր վայրերում: Նրանք, ովքեր ընկել են թուրքերի ձեռքը՝ կրոնափոխվել են և լեզուն մոռացել, իսկ իրենց նախնիները, քանի որ խմբով են եղել, թեև կրոնափոխ-

¹⁰⁴ *Գրառումը կատարել են 1984թ. Ղրղաստանի Օշի մարզի Ֆրունզեի շրջանի Ուչ-Կորգան գյուղում, ուր, իմ հաշվարկով, այդ թվականին բնակվում էին նաև 29 տուն 226 կրոնափոխ համշենահայեր:*

վել են, բայց լեզուն չեն մոռացել: Ըստ նրա, համշենցիներն այս անեցիների հետնորդներն են:

Այս պատմությունը մեկ անգամ ևս հաստատում է, թե որքան ուժեղ է նշանավոր Անի քաղաքի մասին ժողովրդի հիշողությունը, որ այսքան դարեր անց, նույնիսկ օտար հավատով, արաբներն գրել-կարդալ իմանալու շնորհիվ շրջակա ղրղզական գյուղերում ու մոտակա Կրզըլ-Կիյա քաղաքում մեծագույն հարգանք վայելող և մոլլա Հաքի անվանվող այս մարդը Պամիրի ստորոտում, Ղրղաստանի հեռավոր գյուղերից մեկում նստած հպարտանում է իր անեցի ծագմամբ: Հետաքրքրական է, որ 1893-ին Նովոչերկասկում, «Նոր-դար» թերթի թղթակցին ևս կրոնափոխ համշենցիները պատմել են իրենց անհական ծագման վարկածը, ըստ որի «Հենշինի նախկին հայերը (այժմեան տաճիկներ) Անի քաղաքի գաղթականներից են: Դրանք ի սկզբանե 7 տուն գաղթել են Անիից, ապա երկար տարիների ընթացքում բազմանալով կազմել են 54 գիւղ, իւրաքանչիւր գիւղը 200, 100, 60, վերջապէս, աւել կամ պակաս տուն բնակիչներով»¹⁰⁵:

Մեր գրույցի ընթացքում Հաքի Քոչանիծեի թոռը՝ Հաքիբ Քոչանիծեն (ծնվ. 1953թ.), որը ևս հպարտանում էր իրենց անեցի ծագմամբ, հուզմունքով ասաց. «Ազգությամբ ու արյունով հայ են, բայց մահմեդական են, լեզուս հայերեն է՝ Համշենի բարբառը, թեև դպրոցում իմ պահանջով մատյանում ազգությունս նշում էին հայ, բայց անձնագրում գրվեց խեմշիլ, անունս արաբական է, ազգանունս՝ վրացական (մերոնց խաբել են թե ազգանունը փոխեք, չենք աքսորի), ծնվել են Կիրգիզիայում, սովորել ռուսական դպրոցում, ազատ խոսում են ղազախերեն, ուզբեկերեն և կիզիզերեն, բայց գրական հայերեն չգիտեն: Այս ի՞նչ աշխարհ է, ի՞նչ ազգ ենք, ի՞նչ ճակատագիր է»:

Հաքիբ Քոչանիծեի տիկինը՝ Կրզըլ-Կիյայի ռուսական դպրոցի ուսուցչուհի Թամարա Քոչանիծեն (օրիորդական ազգանունը՝ Փոցքորօղլի, Փոցքարովա, ծնվ. 1956թ.) պատմեց, որ 1973թ. Ֆրունզեի (Բիշքեկ) տարբեր բուհերում սովորող 18

¹⁰⁵ *Պիրո, Տաճկացած հայեր, «Նոր-դար» թերթ, Թիֆլիս, 1893, դեկտեմբերի 21 (N227):*

համշենցի ուսանողներով հավաքվել են և քննարկել, թե ինչ անեն, որ պահպանեն իրենց ժողովրդական երգերը, պարերը, երաժշտությունն ու բանահյուսությունը, և Ֆրունզեում սովորող տարբեր ազգերի ուսանողների նման իրենք էլ ստեղծեն իրենց երգի-պարի համույթը: Որոշում են, որ յուրաքանչյուրը գրի առնի իր լսած ժողովրդական երգերը, բայց հայկական տառերը չգիտեին, իսկ ռուսականները չէին բավականացնում: Փորձում են նոր այբուբեն հորինել, բայց անհաջողության են մատնվում: Նրանք որտեղի՞ց իմանային, որ կրոնափոխ համշենցիների բանահյուսության նմուշներ են գրառվել իրենցից դեռևս 100 տարի առաջ: Համշենցի նշանավոր ազգագրագետ Սարգիս Հայկունին 1895-ին «Արարատ» ամսագրում հրատարակել է 1870-ական թվականներին Սև զետում իր լսած պարերգերը (58 տող)¹⁰⁶: Ի դեպ, Հայկունու հրատարակած երգերից մեկի տարբերակը, քրիստոնյա բաշ-համշենցիներից Հակոբ Մեղավորյանի գրառմամբ տպագրել է Է.Լիզենը¹⁰⁷: Ս. Հայկունու աշակերտներից Վահան Խոյյանը (հետագայում՝ քահանա), հինգ տարի ուսուցիչ է եղել Սյուրմենեում (գ. Փերվանե) և այդ ընթացքում գրառել է ոչ միայն հայոց կրոնափոխության բավական մանրամասն պատմությունը, այլև նրանց բանահյուսության հարուստ հավաքածու է կազմել: Շուրջ 350 մեծադիր էջից բաղկացած այդ ժողովածուն նա տպագրության նպատակով 1883թ. ուղարկել է Թիֆլիս և հետքերը կորցրել: Տասնամյակներ անց նա փորձել է համշենահայերի կրոնափոխության պատմության որոշ դրվագներ վերականգնել իր հուշագրությունում, բայց շատ բան անդառնալի մոռացված էր¹⁰⁸: Ցավոք, Թիֆլիսում կորել են նաև արևելահայ նշանավոր երգահան և խմբավար Գրիգոր Սյունու՝ համշենահայերից գրառած երգերի տետրերը: Երրորդ դեմքով գրված նրա ինքնակենսագրականից տեղեկանում ենք, որ 1908թ. Բաթումից անցնելով թուրքական ափ, ոչ միայն Տրապիզոնում, Սամսոնում և Կիրասոնում կազմակերպում է նվագախմբեր ու երգչախմբեր, այլև «Տրապիզոնը կենտրոնավայր ընդունելով՝ նա

հնարաւորութիւն է ունենում ուսումնասիրել Սիւրմէնէի, Կարատըրէ և Եամբուլի գետերու հովիտների Հայնակների (հայ մահմեդականների) կեանքն ու կենդանի մնացած կէս հայկական, կէս թրքական խօսքերով ժողովրդական երգերի բեկորները: 1910-ին անցնելով Երզրում, նա այնտեղից շարունակում է այդ գործը աւելի լայն մասշտաբով, տարածելով իւր գործունէութիւնը ամբողջ Համշէնի, Ճերմէլի տէրէսիի, Թորթոմի և շրջակայքի մէջ: Այդ ուսումնասիրութիւնների արդիւնքները 2 մեծ տետրակների մէջ պարփակւած նա ներկայացրել էր Թիֆլիզում Մայիլեան էքսպեդիցիայի (բանաստեղծ Յովի. Յովհաննիսյանին). չհասկացւեց, թէ ինչ բախտի արժանացաւ»¹⁰⁹: 1918-ին կրոնափոխ համշենահայերից 115 բառ է վրացատառ գրառել Ի. Կիպչիձեն, ինչի հիման վրա Ն. Մառը 1925-ին տպագրել է «Նյութեր Համշենի բարբառի մասին» հոդվածը¹¹⁰: Շուրջ չորս տասնամյակ լռությունից հետո նշանավոր արևելագետ Ժորժ Դյումէզիլը 1962թ. Ստամբուլում մի մահմեդական համշենահայ ուսանողից լատինական տառադարձությամբ գրառել է որոշ բանահյուսական նյութեր¹¹¹, այնուհետև մի քանի տարի ամռանը հանդիպելով նրան, նոր նմուշներ է գրառել և ֆրանսերեն թարգմանությանը զուգահեռ երեք գրույց հրատարակել¹¹²: Ստամբուլում նա նյութեր է ժողովել նաև մի տասնութամյա մահմեդական համշենահայից, որոնք (երեք գրույց և ինը խաղիկ) հրատարակել է համապատասխան գիտական մեկնաբանություններով և զուգահեռ ֆրանսերեն թարգմանությամբ¹¹³: Իսկ 1967թ. Բաթումում մահմեդա-

¹⁰⁶ Հայկունի Ս., *Նշվ. հոդվածը*, էջ 293-294: Տես նաև «Չայն համշենական», 2008, N1-3:

¹⁰⁷ Луозен Э., *Նշվ. աշխ.*, էջ 170-171:

¹⁰⁸ Տես Խոյյանի *հուշագրությունը*, էջ 18:

¹⁰⁹ Միւնի Գրիգոր, *Հայ երաժշտութիւն, Երեւան, 2005*, էջ 115-116:

¹¹⁰ Март Н., *Материалы по хемшинскому наречию армянского языка (по записи И.А. Кипшидзе), Записки коллегии востоковедов при Азиатском музее Российской Академии наук, т. 1, Ленинград, 1925, с. 75-80.*

¹¹¹ Dumézil Georges, *Notes sur le parler d'un Arménien musulman de Hemşin, Mémoires de L' Académie Royale de Belgique, Classe des Lettres et des Sciences Morales et Politiques, coll. in 8^o, tome LVII, fasc. 4, 1964.*

¹¹² Dumézil Georges, *Trois recites dans le parler des Arméniens musulmans de Hemşin, Revue des études Arméniennes, tome 4, Paris, 1967, p. 19-35.*

¹¹³ Dumézil Georges, *Notes sur le parler d'un Arménien musulman d'Ardala (Vilâyet de Rize), Revue des études Arméniennes, tome 2, Paris, 1965, p. 136-142: Dumézil Georges, Un Roman Policier en Arménien d' Ardala, Revue des études Arméniennes, tome XX, Paris, 1986-1987, p. 7-27:*

կան համշենահայերի հանդիպելով, տասնմեկ խաղիկ (մանի) է գրառել Բարունակ Թողլաքյանը¹¹⁴: Իմ գրառած նյութերի մի մասը (ինը հեքիաթ և իրենց նոտագրությամբ մեկ երգ ու քսանութ խաղիկ՝ կից բառարանով) 1989թ. հրատարակվել է «Չայն համշենական» ժողովածուի 3-րդ հատորում, ինչպես նաև թերթերում և ամսագրերում¹¹⁵: Կրոնափոխ համշենահայերի բարբառին նվիրված իրենց լեզվաբանական ուսումնասիրությունը և Արդվինի նահանգից սերված, իր անձը բացահայտել չցանկացած մի 25-ամյա համշենցուց գրառված 4 զրույցը, մի քանի հանելուկները, ասացվածքները և երգերը 1996-ին հրատարակեցին Հարվարդի համալսարանի գիտնականներ Բ. Վոքսը, Ս. Լա Փորտան և Է. Թաքերը¹¹⁶:

Այդ հրապարակման մեջ Արդվինի նահանգի (այսինքն՝ Խոփայի և Բորչկայի գավառների) կրոնափոխ համշենցիների լեզուն անվանվում է «հոմշեցմա» (homshetsma)¹¹⁷: Հետագայում Վոքսը Ռիզեի նահանգի մահմեդական և թուրքախոս համշենցիների լեզվում պահպանված հայերեն բառերն ու տեղանուններն էլ է կոչում «հոմշեցմա»: Նա նույնիսկ Սամսոնի, Օրդուի, Կիրասոնի, Տրապիզոնի, ինչպես նաև Կրաստանի (երևի նկատի ունի Աբխազիան) և Ռուսաստանի քրիստոնյա համշենահայերի բարբառն է անվանում «հոմշեցմա»¹¹⁸:

¹¹⁴ Թողլաքյան Բ., *Խոփացի համշենահայերը, «Սովետական Հայաստան» ամսագիր, 1984, N 8, էջ 28-29: Նշխարներ Համշենի և Տրապիզոնի բանասիրության, ժողովեց, կազմեց և ծանոթագրեց Բ. Թողլաքյանը, Երևան, 1986, էջ 90-92:*

¹¹⁵ *Չայն համշենական, ժողովածու, գիրք 3-րդ, կազմեց, խմբագրեց, առաջաբանը գրեց և ծանոթագրեց Սերգեյ Վարդանյանը, Երևան, 1989, էջ 208-246: Վարդանյան Ս., Համշենի մուսուլման հայերը, «Փյունիկ» պարբերաթերթ, Երևան, 1991, N1, էջ 3-4: Վարդանյան Ս., Համշենի մուսուլման հայերը, «Իրան-Նամե», 1993, N4, էջ 13: «Ժամանակ» թերթ, Երևան, 1999, (16 ապրիլի), N 45, «Չայն համշենական» ամսաթերթ, 2006, N1-2:*

¹¹⁶ B. Vaux, S. La Porta, E. Tucker. *Ethnographic Materials from the Muslim Hemshinli with Linguistic Notes. "Annual of Armenian Linguistics". Volume 17, Cleveland State University, 1996. pp. 25-45.*

¹¹⁷ *Նույն տեղում, էջ 26:*

¹¹⁸ Vaux B., *Homshetsma, The Language of the Armenians of Hamshen, The Hemshin, History, society and identity in the Highlands of Northeast Turkey, Edited by Hovann H. Simonian, New York, 2007. pp. 257-278:*

Պետք է նշենք, որ «մա» վերջավորությունը համընկնում է բացառական հոլովի վերջավորությանը:

Ցայսօր գրառված բանահյուսական նմուշներն իրենց զուգահեռներն ունեն թե՛ քրիստոնյա համշենահայերի, թե առհասարակ Հայաստանի արևելյան և արևմտյան հատվածներում հավաքված բանարվեստի ստեղծագործությունների հետ և առավել կամ նվազ ամբողջական տարբերակներ են: Հատկանշական է, որ մեր օրերում ևս կրոնափոխ համշենցիները այլևայլ առիթներով խաղիկներ են հորինում: Նրանք հիանալի գիտեն նաև նախնյաց պարերը, իսկ ավանդական նվագարաններից նախընտրում են քեմէչեն (քամաչա)¹¹⁹, գավալը (սրինգ), դիզը կամ թուլունը (տիկ, պարկապուկ) և ծիբուն (փոքր զուռնա):

Քրիստոնյա համշենահայերի բարբառի ուսումնասիրությունը սկսվել է դեռևս 19-րդ դարի վերջին. առաջին համակողմանի քննությունը կատարել է Բ. վրդ. Կյուլեսերյանը 1899թ.¹²⁰, այնուհետև Հ. Աճառյանն է 1911-ին անդրադարձել Համշենի բարբառին¹²¹, իսկ 1947-ին հրատարակել է «Քննություն Համշենի բարբառի»¹²² ուսումնասիրությունը, ըստ որի այն պատկանում է Կը ճյուղին:

Ըստ իս, կրոնափոխ համշենահայերը խոսում են Համշենի բարբառի առանձին խոսվածքով, որը կարելի է կոչել Խոփայի խոսվածք, կամ ինչպես իրենք են իրենց լեզուն անվանում՝ համշեցնակ (համշենակ), հոմշեցնակ (հոմշենակ): Պահպանելով հանդերձ գրաբարի բառային և քերականական բազմաթիվ

¹¹⁹ *Քեմէչեն (քեմէչեն) համշենահայերի շրջանում տարածված լարային-ադեղնային նվագարան է, որը նվագում են ծնկին հենած: Արտաքնապես շատ նման է քեմոնային (քամանի), բայց ի տարբերություն նրա ունի երեք լար: Վարդանյան Ս., Համշենի հայերի լարային նվագարանները, Հայ ժողովրդի մշակույթի հետազոտման հարցեր, ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, 1988, էջ 86-87:*

¹²⁰ Կիլեսերյան Բ., *Ծանկի վիճակին մեջ գտնուող Համշենցիներու գաւառաբարբառը, «Բիւրակն», Կ.Պոլիս, 1899, էջ 508-513, 558-560, 603-605, 654-656, 699-700, 752-754, 779-780, 1900, 14-16, 29-31, 42-43, 59-62, 82-84, 120-121:*

¹²¹ *Աճառյան Հ., Հայ բարբառագիտութիւն, Նոր-Նախիջևան, 1911, էջ 184-195:*

¹²² *Աճառյան Հ., Քննություն Համշենի բարբառի, Երևան, 1947:*

ծներ, Խոփայի խոսվածքը մի շարք դեպքերում կրել է զգալի փոփոխություններ: Այն ունի երկու ճյուղեր (տարբերակներ) արդըլեցիների և թուրքականցիների¹²³: Արդալա գյուղը գտնվում է Թուրքիայի Արդվիհի նահանգի Խոփայի գավառում (այժմ՝ էշմեքայա), իսկ թուրքականցիներ նշանակում է դրսեցիներ, այսինքն՝ այլ գյուղերի բնակիչներ: Ինչպես Ղազախստանում, Ուզբեկստանում, Ղրղզստանում, Ռուսաստանի Ղաշնությունում, այնպես էլ Թուրքիայում (Խոփայի և Բորչկայի գավառներում) գրառված բանահյուսությունը¹²⁴, ինչպես նաև մեր ուսումնասիրությունները վկայում են, որ այդ վայրերում բնակվող կրոնափոխ համընդհանրապես խոսում են Խոփայի խոսվածքի այս երկու ճյուղերով (տարբերակներով):

Ըստ 1987 թվականին իմ կատարած հաշվարկների Խորհրդային Միությունում սփռված էին 3 հազարից ավելի կրոնափոխ, բայց հայախոս համընդհանրապես¹²⁵: 1970-ական թվականներից սկսած նրանք Միջին Ասիայից արտագաղթում են Ռուսաստանի Կրասնոդարի երկրամասի Բելորեչենսկի¹²⁶ և Ապշերոնսկի¹²⁷ շրջաններ, ուր բնակվում են բազմաթիվ քրիստոնյա համընդհանրապես: Այս շրջաններն էին տեղափոխ-

վում նաև Աջարիայից 1944-ին Միջին Ասիա և Ղազախստան արտոլված բաշ-համընդհանրապես և քրդերը:

1989 թվականին Միջին Ասիայում ծայր առած ազգայնական շարժումների և ազգամիջյան բախումների հետևանքով ավելի մեծացավ մահմեդական համընդհանրապեսի արտագաղթը: Նրանք հիմնականում բնակություն հաստատեցին Կրասնոդարի երկրամասի Ապշերոնսկի և Բելորեչենսկի, ինչպես նաև Ռոստովի մարզի Կամենսկի և Վորոնեժի մարզի Գրիբանովսկի շրջաններում¹²⁸: Ըստ գիտնականների ուսումնասիրությունների Կրասնոդարի երկրամասի «խեմշիլները» բնակչության ամենափրավազուրկ խմբերից են¹²⁹:

Վերջին տասնամյակում խիստ մեծացել է հետաքրքրությունը Թուրքիայում բնակվող մահմեդական հայության¹³⁰,

¹²³ Չայն համընդհանրապես, ժողովածու, գիրք 3-րդ, կազմեց, խմբագրեց, առաջարկեց գրեց և ծանոթագրեց Սերգեյ Վարդանյանը, Երևան, 1989, էջ 207:

¹²⁴ Չայն համընդհանրապես, ժողովածու, գիրք 3-րդ, էջ 219-221, 239: Վարդանյան Ս., Համընդհանրապեսի մուսուլման հայերը, «Փյունիկ» պարբերաթերթ, Երևան, 1991, N1, էջ 3-4: Նույնը «Իրան-Նամե», Երևան, 1993, N 4, էջ 12-13: Տես նաև Կուլմուջյան Ա., Земля и корни, "Анива", журнал, Минск, 2005, N3, с.5-6. Կուլմուջյան Ա., Хона-хемшилы и баш-хемшилы: материалы экспедиции., «Չայն համընդհանրապես» ամսաթերթ, 2006, N1-2:

¹²⁵ Հիմնականում Ղրղզստանի Օշի մարզի Սուզակի, Լենինյան, Նաուկատի ու Ֆրունզեի շրջաններում (վերջին երկուսում բնակվում են նաև բաշ-համընդհանրապես), ինչպես նաև մարզի Օշ, Ջալալաբադ, Իսկի-Նաուկատ, Կրգըլ-Կիյա քաղաքներում, մայրաքաղաք Ֆրունզեում (Բիշքեկ), Ղազախստանի Չիմբենդի մարզի Սայրամի շրջանի Չիրկինո և Ջամբուլի մարզի Սվերդլովի շրջանի Ռովնոյե գյուղերում, Ուզբեկստանի Սովետաբադ քաղաքում, նաև Լենինգրադում (Ս. Պետերբուրգ), Բաքվում և Բաթումում: Այս թվի մեջ են մտնում նաև Կրասնոդարի երկրամաս տեղափոխվածները:

¹²⁶ գ. գ. Իվանովսկայա, Փշեխսկայա, Յուժնի սովխոզ և այլն:

¹²⁷ գ. գ. Երիկ, Կուբանսկայա, Կալինին, Կիմ, Վալերյոդ:

¹²⁸ Кузнецов И., Хемшилы Краснодарского края в 1980-1990-е гг., Старый свет: археология, история, этнография, сборник научных статей, Краснодар, 2000, с. 110-139.

¹²⁹ Кузнецов И., О том, как политики вмешиваются в " акт божественного творения": веселая история - машантакет-пеквот, печальная история-хемшилы, " Грани 2002" материалы II научной сессии ФИСМО (24-27 апреля 2001г.), Краснодар, 2002, с.44. Кузнецов И., Северо-Западный Кавказ (Краснодарский край): что происходит с этническими меньшинствами?. " Диаспоры", журнал, Москва, 2004, N4, с.77. Шахназарян Н., Дрейфующая идентичность: случай хемшилов (хемшинов), "Диаспоры", журнал, Москва, 2004, N4, с.96, տես նույնը՝ «Չայն համընդհանրապես», 2006, N11-12, 2007, N1-2: Ալիբեյյան Յ., Հեմշիլներ. ինքնություն որոնում, «Չայն համընդհանրապես», 2004, N4-5: Նույնի, Ինքնամանչան, կազմակերպման եւ ինքնահաստատման փորձեր եւ դրսեւորումներ՝ համընդհանրապեսի մաս, Հայ դատն այսօր, յօդվածների ժողովածու, Թեհրան, 2007, էջ 64:

¹³⁰ Խանլարի Կ., Հայ բնակչության եթնոկոմական վերակերպումները Թուրքիայի հանրապետությունում (1923-2005թթ.), Երևան, 2005: Խանլարի Կ., Այնտեղ դեռ ապրող հայեր կան..., «Չայն համընդհանրապես» ամսաթերթ, 2007, N3-4, N5-6: Խանլարի Կ., Թաքուն հայության տեսակն ու աշխարհագրական դիրքը, թաքուն հայության մշակութային եւ հոգեմտաւոր ներաշխարհն ու քաղաքական հակումները: Հայ դատն այսօր, յօդվածների ժողովածու, Թեհրան, 2007, էջ 44-55: Սելբոնյան Ռ., «Արևի աղոթքը» Թուրքիայի մուսուլման համընդհանրապեսի մեջ, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Հայ ազգաբանության և հնագիտության ինդիքներ, հ.3, Երևան, 2007, էջ 162-167: Նույնի, Թուրք պատմաբանը խլամանցված հայերի մասին, «Լրաբեր հասարակական գիտությունների»,

հատկապես կրոնափոխ համշենահայության հանդեպ: 2002թ. Կալիֆորնիայի համալսարանը Լոս-Անջելեսում անցկացրեց Սև ծովի տարածաշրջանի հայկական համայնքների անցյալին ու ներկային նվիրված միջազգային գիտաժողով, որում ընթերցված էլույթներից մի քանիսը համշենցիների մասին էին: Գիտաժողովի նյութերի ժողովածուն հրատարակվեց 2009-ի տարեսկզբին¹³¹: Իսկ 2005թ. Հայաստանի ԳԱԱ պատմության ինստիտուտը Սոչիում¹³², կազմակերպեց Համշենին և համշենահայությանը նվիրված միջազգային գիտաժողով, որում կարդացված զեկուցումները 2007-ին հայերեն¹³³ և թուրքերեն¹³⁴ տպագրվեցին առանձին գրքերով: Նույն թվականին ԱՄՆ-ում լույս տեսավ «Համշենցիներ. պատմությունը, հասարակությունը և ինքնությունը Թուրքիայի հյուսիսարևելյան լեռնաշխարհում» հոդվածների ժողովածուն¹³⁵, որն անգլերեն լինելու շնորհիվ մեծապես կնպաստի համշենագիտության տարածմանը:

Բնականաբար, թեման այսքանով չի սպառվում, և այսօր էլ տարբեր վայրերում սփռված կրոնափոխ համշենահայերը սպասում են իրենց բարբառը, բանահյուսությունը, ազգագրությունը և պատմությունը ուսումնասիրողներին:

ՀԱՄՇԵՆԻ ԲԱՐԲԱՌԻ ԽՈՓԱՅԻ ԽՈՍՎԱԾՔՆ ԸՍՏ «ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌԱԳԻՏԱԿԱՆ ԱՏԼԱՍԻ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՎԱՔՄԱՆ ԾՐԱԳՐԻ»

2007, N3, էջ 96–105: Նույնի, *Իսլամացված հայերի խնդիրը Թուրքիայում, «21-րդ դար», Երևան, 2008, N1, էջ 107–122:*

¹³¹ *Armenian Pontus, The Trebizond-Black Sea Communities, Edited by Richard G. Hovannisian, Costa Mesa, CA, 2009.*

¹³² Վարդանյան Ս., «Համշենը և համշենահայերը» թեմայով միջազգային գիտաժողով, «Չայն համշենական», 2005, N11–12:

¹³³ Համշեն եւ համշենահայութիւն (գիտաժողովի նիւթեր), Երեւան – Պէրուք, 2007:

¹³⁴ *Hemşin ve Hemşinli Ermeniler (konferans makaleleri), Yerevan, 2007. Տես Նշանակալից իրագործում, «Չայն համշենական», 2007, N4:*


¹³⁵ *The Hemshin. History. Society and Identity in the Highlands of Northeast Turkey, Edited by H. Simonian, New York, 2007. Տես Վարդանյան Ս., Համշենագիտական նոր հրատարակություն, «Չայն համշենական», 2007, N7–8, Յովսէփ Թորքաթ, «Դեմշին», «Չայն համշենական», 2007, N7–8:*

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ինչպես արդեն գրքի նախաբանում նշել են, կրոնափոխ համշենցիների բարբառին, բանահյուսությանն ու ազգագրությանը ծանոթանալու նպատակով 1984 և 1987թթ. ճանապարհորդել են Ղրղզստանում, Ղազախստանում, Ուզբեկստանում և Ռուսաստանի Կրասնոդարի երկրամասում: Կրոնափոխ համշենցիների սփռվածության պատճառով, ցավոք, ավելի շատ ժամանակ էի ծախսում հանրապետությունից հանրապետություն, մարզից մարզ, քաղաքից քաղաք, գյուղից գյուղ գնալու վրա, քան՝ բուն ուսումնասիրությունների: Շատ անգամ ստիպված էի գրառումներ կատարել ինքնաթիռներում, գնացքներում, ավտոբուսներում, բեռնատարներում, ճանապարհներին, փողոցներում, նաև՝ Պամիրի լեռներում: Հավաքված բանահյուսությունից 28 խաղիկ և մեկ երգ (իրենց նոտաներով) ու 9 հեքիաթ (կից բառարանով) տպագրեցի 1989 թ. իմ կազմած «Ձայն համշենական» ժողովածուի երրորդ հատորում: Իսկ ըստ ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հրատարակած «Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրի» (Երևան, 1977) գրանցված բարբառագիտական նյութն այդպես էլ անտիպ մնաց, քանզի ամբողջը լրացնել չհաջողվեց, որովհետև շտապում էի վերադառնալ Երևան՝ աշխատանքի, որը Համշենի և համշենահայության հետ ոչ մի առնչություն չուներ: Հետագայում, այլևս հնարավորություն չունեցա կրկին այցելելու այդ հանրապետությունները և ամբողջացնելու կիսատ քողածը:

Քանի որ բարբառագիտական ատլասի և բառարանի համար տեղեկություններ են քաղել ինձ հանդիպած գրեթե բոլոր կրոնափոխ համշենցիներից, ուստի բոլորին թվարկելն անհնար է, այստեղ միայն կնշեմ, թե հիմնականում ովքեր են աջակցել բարբառագիտական ատլասի նյութերի հավաքմանը.

Ջելալ Կարաիբրահիմովը (Ճերմակյան), ծնվել է 1955-ին Ղազախստանի Չիմբենդի մարզի Սայրամի շրջանի Չիրկին գյուղում, ավարտել է Ֆրունզեի (Բիշքեկ) պետհամալ-



Ս. Վարդանյանը Միջին Ասիա մեկնելու նախօրեին, 1987թ.




Ղազախստանի Չիքենի մարզի Սայրամի շրջանի Չիրկին գյուղի մի խումբ կրոնավորիս համընկնիներ, 1984թ.



Չիրկին գյուղի բնակիչները՝ երեխաների հետ, չափից՝ դպրոցի փնօրեն Ջելալ Կարափրոսիանովը, 1984թ.

Պատկեր Չիրկին գյուղից





Խատուլա Կարաիբրահիմովան (ծնվ. 1898թ.)՝ քոռների հետ, գ. Չիրկիհն, 1984թ.



Համչենցի կանայք, Ղրղզստան, ք. Կրգըլ-Կիյա, 1984թ.

Խատուլա Կարաիբրահիմովան որդու՝
Փաշայի հետ, գ. Չիրկիհն, 1984թ.

Իսիսակ Կարաիբրահիմովը (ծնվ. 1888թ.),
գ. Չիրկիհն, 1984թ.

Չիրկիհն գյուղի երեխաները, 1984թ.





Չիրկինո գյուղի աշխատատեր կանայք, 1984թ.
Համշենական ավանդական պար, գ. Չիրկինո, 1984թ.



Մի խումբ համշենցիներ, Ղրղզստան, ք. Կրգըլ-Կիյա, 1984թ.



Ջելալ Կարաիբրահիմովը՝ կնոջ
և երեխաների հետ, գ. Չիրկինո, 1984թ.



Համշենցի երեխաներ, Ղրղզստան,
Օշի մարզ, ք. Կրգըլ-Կիյա, 1984թ.





Չախից՝ Հարիր Քոչանիչեն, Ս. Վարդանյանը, Դուրսուն Կարաբազախոյլին, նրա կինը և դուստրը, ք. Կրզըլ-Կիյա, 1984թ.

Մի խումբ համչենցիներ, Ղրղզստան, ք. Կրզըլ-Կիյա, 1984թ.



Համչենցի երեխաներ, Ղրղզստան, Օշի մարզ, 1984թ.

Համչենցի երեխաներ, գ. Չիրկինո, 1987թ.





Հարսանիքին մասնակցելու նպատակով տարբեր վայրերից Օշի մարզի Սուգակի շրջանի Աբարեկով (Բեգարսո) գյուղում հավաքված համշենցիներ, 1987թ.

Աջից՝ Ս. Վարդանյանը հարսանիքի մասնակիցների հետ, 1987թ.



Միջին Ասիայի համշենցիների պարավիդուսկներ Ջելալ Կարաիբրահիմովի և Բյազիմ Կարաիբրահիմովի (կենտրոնում) հանդիպումը երևանաբնակ համշենասիայերի հետ, 1984թ., դեկտեմբեր


Թուրքիայի Արդվիհնի նահանգի Խոփայի գավառի Չավուշլու գյուղի դպրոցականները, 1970-ական թթ.





Ղրղզստանի մայրաքաղաք Ֆրունզեի (այժմ՝ Բիշքեկ) բուհերում սովորող մի խումբ համալսարանի ուսանողներ, 1978թ.

Համալսարանի աղջնակ, գ. Չիրկինո, 1987թ.



Մուհամեդ Կարաիբրահիմով, նախկին օդաչու, 1985թ.



սարանի մեխանաթ. ֆակուլտետը, աշխատում էր Չիրկինոյի ռուսական դպրոցի տնօրեն:

Քյազիմ Կարաիբրահիմովը (ճերմակյան), ծնվել է 1926 թ. Աղունօդ քեղ (Գոնլի դաա, Կանլի դարա) գյուղում, 1944–ին մյուսների հետ արքայազն էր Ղազախստան, աշխատում էր Չիրքենդի մարզի Սայրամի շրջանի Չիրկինո գյուղի կուլտն-տեսությունում:

Չիրկինոն բազմազգ գյուղ էր, այնտեղ բնակվում էին ղազախներ, ռուսներ, կրոնափոխ հույներ (իրիզելիներ) և, ըստ 1984թ. իմ հաշվումների՝ 48 տուն (286 հոգի) կրոնափոխ համալսարաններ, համարյա բոլորը Կարաիբրահիմովների գերդաստանից:

2008թ. մի քանի օրով երևանում էր Թուրքիայի Արդվինի նահանգի Խոփա (Յոփա) քաղաքից **Ասլան Ջանջըն**, որն ինձ օգնեց լրացնելու մի շարք բառհողվածներ: Ըստ նրա՝ իր նախնիները զբաղվել են մեղվաբուծությամբ, աստեղից էլ ծագել է նրանց ազգանունը՝ մեղրածանձ–ճանձ: **Ասլան Ջանջըն** ծնվել է 1964 թ. Խոփայի գավառի Չանչախանա (Չոնչախան, Չոնչաղոն, այժմ՝ Չանուռլու) գյուղում, 1988–ին ավարտել է Ստամբուլի համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի միջազգային հարաբերությունների բաժինը, 2005–ից Խոփայի քաղաքապետարանի հասարակայնության հետ կապերի բաժնի տնօրենն է:

Ուսումնասիրվող խոսվածքում առկա թուրքերեն բառերի իմաստները ճշտելուն օգնել է պոլսահայ, այժմ հայաստանաբնակ, թուրքագետ **Տիրան Լոքմազյոզյանը**, իսկ Չանչենի բարբառի մի շարք քերականական ձևեր և բառիմաստներ պարզելուն աջակցել է ծնունդով Աբխազիայի Ծեբելդա գյուղից, Երևանի N3–րդ միջնակարգ դպրոցի տնօրեն **Սահակ Լևոնյանը**:

Խորին շնորհակալություն եմ հայտնում բոլորին:

Ըստ իս, Թուրքիայի Արդվինի նահանգի Խոփայի և Բորչկայի գավառների, ինչպես նաև 1944թ. Աջարիայի սահմանակից գյուղերից Ղազախստան և Ղրղզստան արքայազն կրոնափոխ համալսարանները խոսում են Չանչենի բարբառի ուրույն խոսվածքով, որը կարելի է կոչել Խոփայի խոսվածք: Իրենք իրենց խոսվածքն անվանում են համալսարան (համալսանակ), հոմ-

շեցնակ (հոմշեսնակ): Այն ունի երկու ճյուղ (տարբերակ)՝ արդըլեցիների (ծագումով հոփայի գավառի Արդալա գյուղից, այժմ՝ Էշմեքայա) ու թուրքականցիների, այսինքն՝ դրսեցիների, այլ գյուղերի բնակիչների: Ես հոփայի խոսվածքի երկու ճյուղերի (տարբերակների) ներկայացուցիչների հետ էլ բազմիցս զրուցել եմ, բայց իմ հիմնական տեղեկատուները՝ **Ջելալ Կարաիբրահիմովը և Քյազիմ Կարաիբրահիմովը** (նաև **Ասլան Ջանջըն**) թուրքականցիներ էին, ուստի արդըլեցիների ճյուղը (տարբերակը) լրացրել եմ տարբեր գյուղերում հանդիպած արդըլեցիների միջոցով: Փակագծերի մեջ, **արդ.**՝ նշումով տալիս եմ, թե նույն բառն ինչպես են արտասանում արդըլեցիները, իսկ բառարանում **թուրք.**՝ նշումով հաճախ ներկայացրել եմ թե նույն բառն ինչպես են արտասանում թուրքականցիները:

Քանի որ Համշենի բարբառը պատկանում է **Կը** ճյուղին, ուստի, ինչպես բարբառի մյուս խոսվածքներում, այնպես էլ հոփայի խոսվածքում սահմանական եղանակի ներկա ժամանակը կազմվում է ձայնավորով սկսվող բայերի սկզբում **գ** մասնիկի ավելացումով:

Ես ուտում եմ – յես գուղիմ:

Բայց հանդիպում են դեպքեր, որ ոչ թե **գ** է ավելանում, այլ ձայնավորով սկսվող բայերն էլ բաղաձայնով սկսվողների նման հետադաս **գու (կու)** մասնիկն են ստանում:

Ես ապրում եմ – յես աքրի գում:

Ի տարբերություն մյուս խոսվածքների, հոփայի խոսվածքում սահմանական եղանակի ներկա ժամանակի **մ, ս, ք, ն** վերջավորություններն ավելանում են ոչ թե բաղաձայնով սկսվող բայահիմքերին, այլ՝ **գու (կու)** մասնիկին: Իսկ անցյալ անկատար ժամանակը կազմվում է **գու (կու)** մասնիկին **դի, ր, քի, նի** վերջավորությունների հավելումով: Ըստ իմ ունեցած տեղեկությունների, հոփայի գավառի Գարջի (այժմ՝ Հենդեք) գյուղում այս փոփոխությունները տեղի չեն ունեցել:

Անորոշ դերբայը կազմվում է բայահիմքերին **ուշ** վերջավորության ավելացումով: Հոգնակերտ կազմիչներն են՝ **նի, նիր, իր, էր, ներ, ք, դաք, օք, ուք, վի, վիք** մասնիկները:

Բայերի ժխտական ձևերը կազմվում են **չ** մասնիկով և հետադաս **օչ** մասնիկով, որը դրվում է խոնարհման ձևերից հե-

տո, ինչպես նաև **չի** մասնիկով, որն ավելանում է պիտի - **բի-դի** եղանակիչի սկզբում (**չիբիդի, չիվիդի, չվիդի**): Ունի արգելական **մի, միք** հետադաս մասնիկները: **Էլ, ալ** վերջավորություններով անորոշ դերբայների գործիական հոլովի (**ով** վերջավորությամբ) ժխտական իմաստն արտահայտվում է նույն դերբայի տրական հոլովով **ու** վերջավորությամբ, առանց որևէ կապի:

Յես ուղելով, ծիծաղելով, գոնչելով եգի:

(Ես ուտելով, ծիծաղելով, երգելով եկա):

Յես ուղելու, ծիծաղելու, գոնչելու եգի:

(Ես առանց ուտելու, ծիծաղելու, երգելու եկա):

Որ շաղկապը դառնում է **ու** (նաև հարադրությունների դեպքում՝ **ի**նչպես որ - **ինչքես ու**, **ինչ որ** - **ինչ ու**, երբ որ - **յեփ ու**, էլի որ - **ալի ու**):

հոփայի խոսվածքում խուլ բաղաձայնները վերածվում են ձայնեղների, իսկ ձայնեղները՝ խուլերի: Առկա է խուլ և շնչեղ խուլ բաղաձայնների զուգահեռ կիրառություն նույն դիրքում: Խոսվածքն ունի անորոշ՝ **մէ, մը** և դերանվանական հոդեր՝ **ս, դ, գ, է, ը, ն**, ինչպես նաև 6 ձայնավոր՝ **ա, է, ը, ի, ու, օ**: **Ը** ձայնավորը որոշ դիրքերում կարող է վերածվել **է-ի**, այս երկու ձայնավորների արտասանությունը հաճախ հստակ **չի** տարբերվում: **Ա** ձայնավորը որոշ դիրքերում, հատկապես ռնգային բաղաձայններից առաջ, կարող է վերածվել **օ-ի**: Թուրքականցիների մոտ երկու ձայնավորների միջև **ր-ն** հաճախ սղվում է, իսկ արդըլեցիների մոտ բոլոր դիրքերում վերածվում է **յ-ի**, կամ սղվում է: Թուրքականցիների և արդըլեցիների ճյուղերը (տարբերակները) ունեն նաև բառապաշարային որոշ տարբերություններ. օրինակ՝ արդըլեցիները քամիին **քոմի** են ասում, իսկ թուրքականցիները՝ **փուչ**:

Անշուշտ, սրանցով չեն սպառվում Համշենի բարբառի հոփայի խոսվածքի առանձնահատկությունները, ինչպես նաև արդըլեցիների և թուրքականցիների միջև տարբերությունները, որոնք սպասում են իրենց ուսումնասիրողներին: Ի դեպ, հոփայի խոսվածքի կրողները աչքի են ընկնում նաև արագախոսությամբ:

Ինչպես արդեն նշել եմ, հոփայի խոսվածքը գրանցել եմ ըստ «Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հա-

վաքման ծրագրի», որի «Բառային զուգաբանություններ» բաժնի 478 բառհոդվածներից լրացրել են 453 հատը, պակասող 25-ը (NN 66, 80, 83, 85, 94, 141, 191, 197, 218, 236, 251, 255, 257, 258, 260, 262, 295, 337, 346, 388, 391, 442, 445, 474, 475) և տպագրել են, որպեսզի ընթերցողներն իմանան, թե որ բառերը հնարավոր չի եղել ճշտել (օրինակ՝ դանդուռ, ծնեբեկ, սամիթ, թռչունների ստամոքս-պարկը, ուր հավաքվում է կերած կուտը և այլն): Իսկ երբ տվյալ հասկացության համար խոսվածքում համապատասխան բառ չի եղել, այդ դեպքում բառհոդվածի դիմաց, ինչպես և պահանջվում է, գրել են Չ («չկա»):

Ցավոք, այլևայլ պատճառներով կտրված լինելով իրենց քրիստոնյա և հայախոս հայրենակիցներից, հատկապես Մեծ եղեռնից և ԽՍՀՄ-թուրքական սահմանի փակումից հետո Խոփայի խոսվածքը ձեռք է բերել մեռնող լեզվի հատկանիշներ, քանզի գրավոր չկանոնակարգվելով և միայն բանավոր փոխանցվելով, կրոնափոխ համալսարանների բառապաշարից ջնջվել են բազմաթիվ իրերի և երևույթների հայերեն անունները, կամ դրանք հիշում են հատուկեմտ ծերեր: Սուռացվել են վայրի թռչուններից շատերի հայերեն անունները և համարյա բոլորին **ջինջուխ** (ճնճուկ)՝ թռչուն են ասում, նրանք չեն հիշում բազմաթիվ ծաղիկների անունները և համարյա բոլորին **ծաղիզ** են ասում: Այդ երևույթն ավելի ակնառու է հատկապես Միջին Ասիայի համալսարանների շրջանում, քանզի արդեն վեց տասնամյակից ավելի է, ինչ նրանք արմատախիլ են արվել իրենց հողից և աքսորվել այնպիսի վայրեր, որտեղ այդ թռչուններից շատերը չեն ճախրում, իսկ Սև ծովի առափնյակը զարդարող ծառերը, ծաղիկներն ու բույսերն էլ պարզապես չեն աճում:

Ես տարիներ առաջ փորձեցի Խոփայի խոսվածքի բառերը հատիկ-հատիկ հավաքելով շարել մի բառարանի մեջ, որում, ցավոք, փոխառյալները զգալի քանակ են կազմում: Այդ ավելի հրամայական է դարձնում խոսվածքի ուսումնասիրությունը, քանզի մեռնող ամեն մի ծերունու հետ մի վաղմջեցիկ հայերեն բառ է մեռնում:

Բառային զուգաբանություններ

Հասկացական – բառանմանողական զուգաբանություններ

1. Լեռ (ն) – լեր (արդ.՝ լէյ), լեռ:
Արարատ լեռ: Մասիս սար:
Արարատ լեռ: Մասիս սար:

Ըստ կրոնափոխ համալսարանների լեռը սարերի, ձորերի, բլուրների ընդհանուր համակարգն է: Լեռնաշխարհից առանձնացված և վեր խոյացած մասն անվանում են սար, ըստ այդմ՝ Արարատը սար է: Ինչպես իրենք են բնութագրում. «Սարը շաղ պարցն ա, լերին քելօխը սարն ա, վորդախցուն գօ: Լերին սար գօ, սարին լեր չգօ» (Սարը շատ բարձր է, լեռան գլուխը սարն է, որտեղ ծյուն կա: Լեռը սար ունի, սարը լեռ չունի): Նրանք ասում են՝ **լերին օղիլեն** – լեռան բլուրները, **լերին փօսը** – լեռան հարթավայրը: Յայլաները՝ ամառային արոտավայրերը, գտնվում են լեռներում:

2. Գագաթ – ծայ, թափա:
Բարձրացավ սարի գագաթը:
Էլավ սարին (լեռին, լերին, լինե, արդ.՝ լէյին)
ծայը (ծայնիվե) (թափան):

Գագաթ իմաստով օգտագործում են **ծայ** – ծայր, **թափա** – գագաթ, կատար բառերը:

3. Անտառ – ցախուղ:
Գնացին անտառ փայտ բերելու:
Ցախուղնիվե փաղ (փաթ) փեուշ (պեուշ) քենացին:

Կարող են ասել նաև **քենացին փաղա**, այսինքն՝ գնացին փայտի:

Անտառ բառը նրանց անծանոթ է:
Ցախուղնիվե – անտառն իվեր:

4. **Քամի – փուչ (արդ.՝ բոմի):**
Քամին բշեց տերևները:
Փուչը (արդ.՝ բոմին) դաավ դիյեբնիյէ:

Քէշեց – բշեց բայը կարող է օգտագործվել ոչխարների, մեքենաների դեպքում, իսկ տերևների դեպքում ասում են **դաավ** – տարավ:
Դիյեբնիյէ – տերևները:

5. **Ամպ – մերալ, բուլութ:**
Ամպերը գոռգոռում են:
Բուլութնիյէ (մերալնիյէ) գոդգոդա գուն:

Ըստ նրանց, քանի որ «**մերալը օրդա չա**», այսինքն՝ ամպերը չեն որոտում և գոռգոռում, ուստի այդպես չեն ասում:
Որոտում է, գոռգոռում է ամպրոպը, ըստ այդմ՝ ասում են՝
Օմբուօղը օրդա գու:
Ամպրոպը որոտում է:

Օմբուօղ – ամպրոպ:
Ամպ բառը նրանց անծանոթ է: Սև ամպին ասում են **թուխ մերալ**, սպիտակ ամպին՝ **ջերմագ մերալ**:

6. **Ծիածան – քուշնիկ, քիշնիկ, գուշնիկ:**
Ծիածանը երևաց:
Քուշնիկէ (քիշնիկէ, գուշնիկէ) էվազ:

Նրանք ճիշտ են համարում ասել՝ **քուշնիկէ էլավ**, այսինքն՝ ծիածանը դուրս եկավ:

7. **Ցող – շաղ:**
Խոտերի վրա ցող էր նստել:
Խօդօուն վաանիվա շաղ ինչած էր:
(Խոտերի վրա ցող էր իջել):
Խօդօուն վաան շաղ գար:
Խոտերի վրա շաղ կար:

Ըստ նրանց, քանի որ ցողը – **շաղը** չի կարող նստել, ուստի նստել բայը ցողի – **շաղի** դեպքում չեն օգտագործում, այլ՝ իջնել:

8. **Կաթիլ – գաթիկ, գաթիգ:**
Մի կաթիլ ջուր: Մի կաթիլ արյուն:
Մէգ գաթիգ մէ չուր (արդ.՝ չույ): Մէգ գաթիգ մէ աղուն:

Աղուն – արյուն:

9. **Անծրև – չախ, ճախ:**
Անծրևը դադարեց:
Չախտ (ճախտ) գունգնեցավ (գունգեցավ, գօնգեցավ):

Անծրև բառը նրանց անծանոթ է, ասում են **չախ, ճախ:** Դադարեց ձևը չեն օգտագործում, այլ՝ կանգ առավ – **գունգնեցավ**, նաև՝ **գունգեցավ, գօնգեցավ:** Ասում են նաև **թօմնեցավ**, այսինքն՝ ավարտվեց – **չախտ թօմնեցավ, չախտ գեդրեց** – անծրևը կտրվեց:

10. **Տեղատարափ անծրև – ֆուռթունա:**
Տեղատարափ անծրև եկավ:
Չօռ ֆուռթունա էյէվ:

Չօռ – ուժեղ:
Տեղատարափ անծրևին ասում են նաև **սէլ**, որ նշանակում է և՛ տեղատարափ անծրև, և՛ սելավ, հեղեղ:

11. **Կարկուտ – գարգուղ, գարկուղ (արդ.՝ գայգուղ):**
Կարկուտը փչացրեց արտերը:
Գարգուղը չարթեց արդիյէ:
(Արդ.՝ **գայգուղը չայթեց այդիյէ**):

Փչացնել բառը նման դեպքում չեն օգտագործում, այլ ջարդեց – **չարթեց (արդ.՝ չայթեց)**:

Արտ – **արդ** են ասում ոչ միայն հացաբույսերի արտին և բանջարանոցային մշակաբույսերի դաշտին, այլև բոլոր դաշտերին:
Դաշտ բառը նրանց անծանոթ է:

12. Արև եղանակին բարակ անձրև – **դյափօն հարսնիք** (արդ.՝ **հայսնիք**):

Ասում են նաև **մօլա չախ** – գոլ անձրև:

Ղյափ – շնագայլ, չախկալ:

Հարսնիք (արդ.՝ **հայսնիք**) – հարսանիք:

Մօլա – գոլ:

Չախ – անձրև:

13. Սառույց – **աղիմ**:

Սառույցը հալվեց: Սառույցի կտոր:

Աղիմը հալեցավ: Աղիմի չարթուն (արդ.՝ **չայթուն**):

Աղիմ նշանակում է նաև եղյամ:

Չարթուն (**չայթուն**) – ջարդոն:

Թեև սառույց բառը նրանց անծանոթ է, բայց ասում են «**սառած յաղ**», «**գաթը սառեցավ**»:

Երբ ջրի վրա բարակ սառույց է բռնում, ասում են «**սառած չուր** (արդ.՝ **չույ**)»:

14. Ստվեր – **չուք**:

Ծերունիները նստած էին պատի ստվերում: Ծառի ստվերը երկարեց:

Հալիվօրնիյէ նեստած էնի դուվային շուքին: Զառիմէ (արդ.՝ **ծայիմէ**) **չուքը երգնցավ**:

Մարդու ստվերը:

Մարթուն շուքէ:

Ծերունի բառը նրանց անծանոթ է, ասում են **հալիվօր** (արդ.՝ **հալիվօյ**):

15. Գետին – **հօղ, խօղ**:

Երեխան նստած էր գետնին:

Դաղան նեստած էր հօղին (խօղին) վաան:

Գետին բառը նրանց անծանոթ է, ասում են **հօղ (խօղ)**:

Երեխա բառը նրանց անծանոթ է, անկախ սեռից ասում են **դաղա**, հոգնակին՝ **դղաք**, շատ հազվադեպ հանդիպում է **դղաքեր** ձևը:

16. Ճանապարհ – **ջօմփա**:

Ճանապարհը անցնում էր անտառով:

Ջօմփան ցախուդին մէչնինէ գօսներ:

Ասում են նաև «**Ջօմփան ցախուդին մէչնինէ գերտար**»:

17. Կողմ – **սէմթ**

Ո՞ր կողմը գնաց: – Այն կողմը:

Ո՞ր (Ո՞) սէմթնիուս քէնաց: – **Ան (ինա) սէմթը**:

Չիմքենդի կողմը գնաց:

Չիմքէնթին սէմթնիուս քէնաց:

Չիմքենդ–քաղաք Ղազախստանում:

18. Գիծ – **խազ, չիզգի**:

Գետնին գիծ քաշեց:

Հօղին (խօղին) վաան խազ աավ (արդ.՝ **այավ**):

Գիծ բառը նրանց անծանոթ է, օգտագործում են **խազ** կամ **չիզգի** բառերը:

Աավ (արդ.՝ **այավ**) – արեց:

19. Ծայր – **ծայ, ջօթ**:

Պարանի ծայրը տուր ինձ:

Չվօնին ծայը (ջօթը) դու (արդ.՝ **դույ**) **ինձի**:

Պարանի ծայրը բռնիր:

Չվօնին ծայը (ջօթը) պէռնա:

Պարան բառը նրանց անծանոթ է, ասում են **չվօն**:

20. Շեն – շին:

Կանգնել էր դռան շենին:

Գունգած (գոնգած) էր թռռոնը շինին վաան:

Շին ասում են դռան տակի փայտին:

21. Պատ – դաուբա (արդ.՝ դուվայ):

Պատը փլվեց:

Դաուբան (արդ.՝ դուվայը) փլեցավ :

Երբ ասում են «**փելած ա**», նշանակում է մի մասն է փլվել, իսկ երբ ասում են «**դաուբան խեչած ա**», ուրեմն ողջ պատն է փլվել–ընկել: Իսկ երբ պատը ճաք է տալիս, ասում են «**դաուբան ջախկած ա**», այսինքն՝ պատը ճաքել է:

Պատ – բաղ բառը օգտագործում են միայն ցանկապատ իմաստով, անկախ կառուցման նյութից (քարից, փայտից, երկաթից և այլն):

22. Անկյուն – քոչա, բուջախ:

Ավելը դրված էր տան անկյունում:

Ավելը դօնէ բուջխին վար (արդ.՝ վայ) թըրված էր:

Ավելի ճիշտ են համարում ասել. «**Ավելը բուջխին գունգած ա**», այսինքն՝ ավելը անկյունում կանգնած է:

23. Սենյակում պատի մեջ թողած, երեսը բաց պահարան – բաաբ:

Թաաբ են ասում նաև դարակին:

24. Տանիք – ձածուգ, մակաս:

Տանիքի վրա ձյուն կա:

Ձածուգին վաան ցուն գօ:

25. Առաստաղ – թավան, թավօն, ցխեք:

Առաստաղից հող էր թափվում:

Թավանան (թավօնան) հող (խօղ) լէլէ գուր:

Տանիքի և առաստաղի միջնամասին՝ ձեղնահարկին, ասում են **ցխեք**:

26. Երդիկ – բաջա:

Ծուխ էր ելնում երդիկից:

Բաջացան մուխ կելլէր:

27. Գլանածն քար, որ գլորելով ամրացնում էին կտուրի հողը – 2.:

Սևծովյան տարածաշրջանի անձրևային կլիմայի պատճառով համշենցիների տները հողե տանիք չունեին:

28. Աղբ – զիբիլ, զիբիլուսբ (զիբիլուցբ), ավելուսբ

(ավելուցբ):

Տունը ավլեց, աղբը դուրս տարավ:

Դունը ավիլեց (ավլեց), զիբիլը (զիբիլուսբը, ավելուսբը) թուռը ցբեց:

(Տունը ավլեց, աղբը դուրս գցեց):

Տունը ավլեց, աղբը դռնից դուրս հանեց:

Դունը ավլեց, զիբիլը թուռնիուս հօնեց:

Ավելուսբ բառացի նշանակում է ավելցուկ, օգտագործվում է նաև աղբ իմաստով:

Աղփ – աղբ ասում են թրիքին, նաև աթարին, թեև երկու բառերն էլ ունեն:

Թուռ – դուռ:

29. Աղբանոց – աղփօնօց:

Հավերը քուջուջ են անում աղբանոցում:

Հավիյէ քուջուջ գընին (փօջխի գուն) աղփօնօցին:

Հավերը աղբը քուջուջեցին:

Հավիյէ աղբէ փօջխեցին:

Փօջխեցին նշանակում է փոցխեցին, այսինքն՝ փոցխի նման ուղբերով աղբը քուջուջ արին:

Քուջուջ բառն ունեն, բայց հազվադեպ են օգտագործում:

Աղփօնօց ասում են թրիքի հավաքման տեղին:

30. Չուգարան – **քենաֆ**:

31. Ջրհորդան – **սաչախին վաք**:

Ջրհորդանը շինում են փայտից կամ թիթեղից:
Սաչախին վաքը շինի գուն փաղան կամ սաջան:

Սաջ – թիթեղ:

32. Փայտյա այն հարմարանքը, որի միջով ջուրը սրընթաց վայր հոսելով պտտեցնում է ջրաղացի անիվը – **վաք**:

Ջրաղաց – **ճաղացք, չախացք**:

33. Թոնրի օղանցք – **եղեցու ձագ**:

Թոնրի օղանցքը բաց արեք՝ կրակը բորբոքվի:
Թօնդիրին (թօնդուրին) եղեցու ձագը պաց աեք՝ գիյազը սոյ մե այի:

Սոյ մե – մի լավ:

Այի – այրվի:

34. Ածուխ – **գօրձելի, քյօմուր**:

Ածուխ լցրու կրակի վրա:
Գօրձելին (քյօմուրը) լեցի գիյագին վաան:

35. Գերեզման – **մազալուխ, մազալօղ**:

Գերեզմանին կանաչ խոտ էր բուսել:
Մազալուխին վաան յեշիլ խօղ էլած էր:

Բուսել – բառը չունեն, ասում են **մեծընուշ**, իսկ բուսավ, աճեց՝ **մեծընցավ**:

36. Գերեզմանատուն – **մեզարիք, մազալուխնիյե (մազալօղնիյե)**:

Կանայք գնացին գերեզմանատուն:
Գեմդիքը քենացին մազալուխնիյե (մազալօղնիյե):

Մազալուխնիյե – գերեզման բառի հոգնակին է հողով՝ գերեզմանները, օգտագործվում է նաև գերեզմանոց իմաստով:

37. Եկեղեցի – **քիլիսե**:

Քահանան մտավ եկեղեցի:
Քեշիշը քիլիսե մեդավ:
(Քեշիշե քիլիսեհուս նե մեդավ):
(Քեշիշը քիլիսեի մեչնիուս նե մեդավ):
Քահանան դուրս եկավ եկեղեցուց:
Քեշիշե թուրս էլավ քիլիսեցան:

Նե մեդավ – ներս մտավ:

38. Գյուղ – **կյաղ**:

Ապրում է գյուղում:
Կյաղին գաբրի:

Ասում են նաև **աբրի գու**:

39. Առու – **արխ, հարք, հարգ, խարգ**:

Առուն ցամաքել էր:
Արխը (հարգը, հարքը, խարգը) ցօքմած էր:
Առվի ջուրը կապեցին արտերին:
Չարգին չուրը (չուրը) (արդ.՝ չույը) արդնիվա գաբեցին:

Այն առվին կամ ջրանցքին, որի ջուրը կանգնած է, չի հոսում, ասում են **խենդակ**, այսինքն՝ **խանդակ**:
Ջուրը բառը արտասանում են **և՛ չուրը, և՛ չուրը** ձևով (արդ.՝ **չույը**):
Չարք ասում են նաև մարգին:

40. Բահով կտրած բուսախառն հողի շերտ – **չիմ**:

Չիմով կտրեցին ջրի ճամփան:
Չիմօվը գեդրեցին չեին ջօմփան:

41. Ցեխ – **ջօր, ջօռ**:

Կոշիկը մնաց ցեխի մեջ:
Փօթինը մենաց ջօրին մեչը:

Փօթին – կոշիկ, ճտքավոր կոշիկ:

42. Աթար – աթար, աղփ:

Գյուղում առաջ աթար էին վառում:

Առաջ կյաղին աթար (աղփ) կօլէ գունի:

Աթար բառը գիտեն միայն տարեցները:

43. Կայծ – գած:

Կրակից կայծեր են թռչում:

Գիյազան գածիյէ թուս թռչի գուն:

Գածիյէ – կայծերը:

Ցատկելուն ասում են թուս թռուչ, առանձին չեն ասում:

Ես խանդակի վրայից թռա (ցատկեցի):

Յէս խենդակին վաանինէ թուս թռա:

Վազելուն ասում են թռչուչ:

Գած են ասում նաև կայծակին:

Կրակից թռչող մոխիրին ասում են մօծիր:

Այրվող, մլմլացող մոխիրին ասում են քյօզ:

44. Փայտ – փաղ:

Կրակի վրա փայտ ավելացրու:

Գիյազին վաան փաղ (փաթ) տի:

Ավելացրու չեն ասում, այլ տի– դիր:

45. Կրակ անելու կաչան – մարխ:

Մարխ – խեժոտ փայտիկ:

46. Ծուխ – մուխ:

Թաց փայտը որ վառես, շատ ծուխ կելնի:

Կէչ փաղը կօլէս անա, շաղ մուխ կէլլա:

Թեև թաց բառն ունեն, բայց փայտի դեպքում ասում են

կէչ փաղ – խոնավ փայտ:

47. Մոխիր – մօխիր, քյուլ:

Փայտը այրվեց, մոխիր դարձավ:

Փաղը աեցավ, մօխիր տարցավ (թառցավ):

48. Արմատ – քյօք, քօք, դօմար:

Ծառի արմատը խորն է գնացել:

Ձառին քյօքը խօը (խօյին) քնացած ա (քէնաած ա):

49. Տերև – դէյէ, դէբ, դիյէ, դէրէ:

Ծառի տերև, խաղողի տերև:

Ձառի դէյէ, խավօղի դէյէ:

50. Ծառերից թափված աշնան դեղին տերևները – չաչ, մօլ:

51. Հենակ, որ դրվում է պտուղներով ծանրաբեռնված ճյուղի տակ – դիյաղ:

Այն փայտը, որի վրա փաթաթվում է լոբին, կոչվում է խուչակ, խուչկա:

52. Խաղողի մատերից ետած ճյուղերը, որոնք օգտագործվում են որպես վառելիք – խավօղի մօլ:

53. Կեղև – գէդէ, գաբուղ:

Ծառի կեղև, կարտոֆիլի կեղև:

Ձառի գէդէ (գաբուղ), կարտօփիի (արդ. կայտօփիի) գէջէ:

Գէջէ – կճեպ:

54. Խեժ – ձառի գիվ:

Երեխան հավաքեց ձառի խեժը:

Դաղան քաշեց ձառինէ գիվը:

Հավաքել բառը նրանց անծանոթ է, ասում են ժողվուչ:

Տվյալ դեպքում ասում են քաշեց:

Գիվ են ասում նաև ծամոնին:

55. Ընկույզի, նշի, ծիրանի կորիզի պատյանները – **գեջեբ, գեղեփ, գաբուղ:**

Ընկույզի պատյան:

Գազալի (կակալի) գեջեբ (գաբուղ, գեղեփ):

56. Կորիզ – **ղօյիզ, ղօխ:**

Չմերուկի կորիզ, ծիրանի կորիզ, տանձի կորիզ:

Կարպուզի հունդ, քախի (աբրիգոսի) ղօյիզ, ղօնձի հունդ:

57. Սերմ – **սերմ, հունդ, հումդ:**

Սոխի սերմ, գինձի սերմ, ցորենի սերմ:

Սօխի հունդ, քինձի հունդ, ցօյինի հունդ:

Սերմացու ցորենին ասում են **ցօյինի սերմ**, նույնը և եգիպտացորենի դեպքում՝ **լազտի (լազուտի, լաուստի) սերմ:**

Հունդ և հումդ բառերը գործածում են առանց որևէ տարբերակման, ոմանք **հունդ** են ասում, ոմանք՝ **հումդ:**

58. Եգիպտացորեն – **լազուտ, լազտ, լաուստ:**

Եգիպտացորենի ալյուրից խաշիլ են պատրաստում:

Լազուտի (լազտի, լաուստի) ալյուրան քաշ (խաշիլ) գեփին:

Եգիպտացորենի ալյուրով հաց թխեցի:

Լազուտի (լազտի, լաուստի) ալյուովե հաց էփեցի:

Թխելուն էլ են ասում **էփուշ** – եփել, եփելուն էլ:

59. Լոբի – **լօբիյա, լօբիա:**

Կանաչ լոբին խաշում և տապակում են:

Յեշիլ լօբիյան (լօբիան) խաշի գուն ու դաբգի գուն:

Կանաչ լոբին համ խաշեցի, համ տապակեցի:

Յեշիլ լօբիյան (լօբիան) հեմ խաշեցի, հեմ դաբգեցի:

Հեմ – համ, և:

Յեշիլ – կանաչ:

60. Դեղձ – **տախց, շէֆթալի:**

Դեղձը համեղ միրգ է:

Տախցը օնուշ մեյվա ա:

Համեղ բառը նրանց անծանոթ է, ասում են **օնուշ:**

Մեյվա – միրգ:

61. Վայրի տանձ – **վայի դօնձ:**

Արջը վայրի տանձ էր ուտում:

Արչը վայի դօնձ գուղեր:

62. Կաղին – **գաղին:**

Կաղինը համեղ է չամիչով:

Գաղինը քիշմիշին (խավօղին չիին, ուզում քուրուսիին) հեղը օնուշ ա:

Չամիչին ասում են **քիշմիշ, խավօղի չի (խաղողի չիր), ուզում քուրուսի:**

63. Նուշ – **բաղամ, բաղեմ:**

Նուշը ծիրանի կորիզի նման է, բայց մի քիչ ավելի մեծ է:

Բաղամը (բաղեմը) քախսին (աբրիգոսին) ղօխսին լըմօնի գու, ամա քիչ մը մեծ ա:

Լըմօնի գու – նման է:

Ամա – բայց:

64. Ընկույզ – **գազալ, կակալ:**

Մի պարկ ընկույզ բերեց:

Մեգ թօրբա մե գազալ պեց (էփիր):

Թօրբա – պարկ, տոպրակ:

65. Ընկույզի միջուկ – **գագալի (կակալի) մաղիս, գագալի մէջ:**

Ընկույզի միջուկով ու մեղրով կոզինաղ են պատրաստում: (Չեն լրացրել):

Ընդհանրապես կորիզի միջուկին **մաղիս** են ասում:
Ընկույզի միջուկի քառորդ մասին ասում են **գագալի ծիվ:**

66. Սնծենու պտուղը.

Սնծենու պտուղը հասնում է աշնանը:

67. Ողկույզ – **ջութ:**

Մի ողկույզ խաղող տուր:
Ջութ մը խավօղ դու:

68. Խաղողի մի քանի հատիկներից բաղկացած ողկույզիկ – 2.:

69. Ցոգոլ – **ղաք քախի, ղաք արբիզօս:**

«Ցոգոլ» հատկապես ասում են ծիրանի պտղին, երբ այն դեռ կանաչ ու խակ է: (Չեն լրացրել):

Ղաք – խակ:

70. Չնծաղիկ – **ցունձաղիզ, ցունի ձաղիզ:**

Չնծաղիկը գարնան առաջին ձաղիկն է:
Ցունձաղիզը (ցունի ձաղիզը) քաունին (կաունին) առջի ձաղիզն ա:

71. Երեքնուկ – **ուչկուլախ:**

72. Բարդի – **կավախ, կավախի, կավակ:**

Բարդու ծառից գերան են պատրաստում:
Կավախին (կավակին) ձառան մարթախ (գերան) շինի գուն:

Գերան բառը գիտեն տարեցները, ավելի տարածված է **մարթախ** բառը:

73. Սածիլ – **սադիր:**

Սածիլները տնկում են գարնանը:
Սադիյէ քաունը (կաունը) դենգի գուն:

74. Ճակնդեղ – **պագունք:**

Կարմիր ճակնդեղը խաշում են, ուտում են:
Գարմի (գարմիր) պագունքը խաշին, գուդին:

75. Ճակնդեղի տերևներ – **պագունքի դէյէբներ:**

Ճակնդեղի տերևներից թթու են դնում:
Պագունքին դէյէբնիյան (դէյէբնիօվ) թուրչի թենի գուն:

76. Գագար – **հավուչ:**

Երեխան գագար էր ուտում:
Դաղան հավուչ գուդէր:

77. Տաքդեղ – **բիբեր:**

Կանաչ տաքդեղ գնեցի:
Յէշիլ բիբեր առի:

78. Դդում – **թենթում:**

Դդումի կորիզ, դդումի մուրաբա:
Թենթումի հունդ (հունդ), թենթումի օնուչ (մուրաբա):

79. Երկար կոթով, սնամեջ գլխով դդմի տեսակ, որ չորացնելուց հետո ծակում և օգտագործում են որպես աման – **գօշթ թենթում:**

Գօշթ – կոշտ:

80. Դանդուռ –

81. Եղինջ – **աղինջ:**

Եղինջը կծում, կծկծացնում է:
Աղինջը խածա գու, գրծրցնա գու:
Մենք եղինջով ճաշ ենք պատրաստում:
Մէք աղինջօվէ արուր գրնիք:

Գրծրցնա գու – կծկծացնում է:

82. Ուրց – գիյիգի (գէյիգի) խօղ:
 Ուրցը աճում է սարերում:
Գիյիգի (գէյիգի) խօղը լեռնուքը գըլլա:
- Գիյիգ, գէյիգ** – եղջերու:
Գիյիգի (գէյիգի) խօղ – եղջերուի խոտ, ուրց:
83. Ծնեբեկ –
84. Փիփերթ – թերթգիչ:
85. Սամիթ –
86. Հարդ – տարմօն:
 Կովի առջև մի քթոց հարդ լցրեց:
Գօվուն առչեվը գէմբիլ (գալաթ) մէ տարմօն էլից:
- Չէմբիլ** – զամբյուղ:
Գալաթ – կողով:
87. Ծղոտ – սօմօն:
 Ցորենի ծղոտին ասում են **սօմօն**, իսկ եգիպտացորենի ցողունին ասում են **լազտի գօթջաթ**:
88. Հասկ – ցօյինի կլօխ, քէլօխ:
 Ցորենի հասկերը թափվում են:
Ցօյինի կլօխնիյէ վաթի գուն:
89. Հնձեխս՝ մանգաղի և գերանդու բերանից ընկած խոտի, ցորենի յուրաքանչյուր շերտը – **մօնգաղին հեղը, քերէն-դին հեղը:**
- Մօնգաղ** – մանգաղ:
Քերէնդ – գերանդի:
Հեղ – հետք:

90. Ծնլած խաղողի մնացորդը, որից օղի են քաշում – Զ.:

Օղիին ասում են **րաքի, րաքը, վօդկա:**

91. Չամբյուղ – **գէմբիլ:**
 Չամբյուղում կար դեղծ, խաղող և թուզ:
Չէմբիլին մէչը տախց (չէֆթալի), խափօղ ու թուզ գար:
92. Կողով – **գալաթ:**
 Կողովները բարձեցին ձիուն:
Գալաթնիյէ պարցեցին (պարցուցին) ցիուն:
93. Փայտյա կեռ կամ ճանկ, որ կապում են թուփի ծայրին և նրանով ձգում թուփը՝ բեռ բարձեւիս – **գէնօջ:**
94. Փայտյա կոթավոր գործիք, որով կալսած կալը ժողովում են մի տեղ –
95. Արոր – **գօքար, չէֆթ, հօղեղգիչ, խօղեղգիչ:**
 Հնում հողը վարում էին փայտյա արորով:
Ավալը (առաչ) հօղը (խօղը) հերգէ գունի փաղա գօքարովը:
- Ավալը** – հնում:
Առաչ – առաջ, նախկինում, հնում:
Գօքար են ասում նաև խոփին:
96. Փոցխ – **փուցխիչ:**
 Ցրված խոտը հավաքեց փոցխով:
Վաթաց խօղը ժողվեց փուցխիչովը:
- Վաթաց** – թափված:
97. Եղան – **խօղժօղվիչ, խօղվերդեվիչ:**
 Եղանով խոտը բարձում են սայլին:
խօղվերդեվիչովը խօղը պարցնա (պարցնի) գուն արաբին:

Թեև սայլ – սէլ բառն ունեն, բայց կիրառում են **արաբա** բառը:

98. Բլունգ – **չափա**:

Հողը քլունգով են փորում:

Հողը (խողը) չափացովը փօա (փօի) գուն:

99. Շեղբ – **տենագի պիօն:**

Շեղբը անկոթ դանակի բերանն է: (Չեմ լրացրել):

100. Հեսան – **հէսան:**

Հեսանով դանակ էր սրում:

Հեսանովը տենագ սիյէ գուր:

Հեսան – սրոց, սրելու քար:

101. Մեխ – **մուխ, մախ:**

Մուրճով մեխը խփեց պատին:

Չագուչովը մուխը (մախը) դաուբանիուս (բադ-նիուս) չաքմիչ աավ:

Դաուբա – պատ:

Բադ – ցանկապատ:

102. Մեծ անցքերով մաղ, որ գործածվում է ցորենը, գարին ծղոտից անջատելու համար – **ցօյնի մաղ:**

103. Ակիչ – **խեմուրսեպիչ, ակիչ, ազիչ:**

Տաշտի խմորը քերում են ակիչով:

Դաշտին (կարսօնին) խեմուրը քերտ (քէտ, արդ.՝ քէյէ) գուն խեմուրսեպիչովը (ակիչովը):

Դաշտ, կարսօն – տաշտ:

Սեպուչ – սրբել:

Քերուչ, քեուչ (արդ.՝ **քէյուչ**) – քերել:

Քերձուչ – քերձել:

Ասում են նաև **քերձէ գուն** – քերձում են:

104. Մի ծայրը ճանկավոր, մյուսը թաթի ձևով երկար մետաղ-յա բարակ ձող, որով հաց են պոկում ու հանում թոնրից – **ակիչ, ազիչ:**

Ակիչ, ազիչ են ասում նաև կրակը խառնելու համար նախատեսված մետաղյա գործիքին:

105. Խորիզ – **միչուցք:**

Խորիզով գաթա: Խորիզ դիր խմորի մեջ:

Միչուցքով գաթա (քաթա): Միչուցքը թիր խեմուրի մէչ:

106. Թթխմոր – **թեթվենէլիք:**

Թթխմորով հունցած խմորից լավ հաց է ստացվում:

Թեթվենէլիքովը շօղվաց խեմօրան սօյ (լավ) հաց գելլի:

Շօղվուչ – հունցել:

Սօյ – լավ:

Լավ բառը գիտեն տարեցները:

107. Ջրաղացքարի չորս կողմը նստած ալյուրի փոշի – **ալուրան էլած թօզ:**

108. Խնոցի – **յաղուղ, յայուղ:**

Խնոցու կարագ:

Յաղուղան (յայուղան) էլած յաղ:

Կարագ բառը նրանց անծանոթ է, ասում են **յաղ:**

109. Փլավքամիչ – **սուզգի, ծար** (արդ.՝ **ծայ**), **ծայ:**

Բրինձը քամեց փլավքամիչով:

Պէյինձը քօմէց սուզգիօվէ (ծաօվէ):

Ծարը (արդ.՝ **ծայը**), **ծայը** պատրաստվում է կտորից, նաև գործվում է ձիու մազից:

110. Կարաս – **քուպ**:
Գինին պահում են կարասի մեջ:
Շարաբը քուպին մէջը բահի (բահա) գուն:
- Շարաբ, դինօ** – գինի:
111. Կճուճ – **չումլախ**:
Կճուճում պահում էր յուղ, պանիր:
Չումլախին մէջը յաղ, բօնիր բահի (բահա) գուր:
112. Ունկ (ամանների) – **բօչ**:
Կճուճի ունկը կոտրվեց:
Չումլախին բօչը գօղրեցավ:
113. Կովկիթ – **գօթ**:
Կովկիթն առավ, գնաց կովն ու ոչխարները կթելու:
Գօթը առավ, քէնաց գօվն ու օչխրնիյէ գթուշ:
- Գօթ** – փայտե մեծ, խորը տարա:
Գօթ են ասում նաև ցորեն չափելու փայտե ամանին՝ կոտին:
114. Հացահատիկ չափելու փայտե աման – **գօթ**:
Գօթ – կոտ:
115. Տիկ – **դիգ**:
Հնում տիկի մեջ պահում էին գինի, ձեթ, յուղ, պանիր:
Ավալը (առաչ) դէգին մէջը շարաբ, այչիչաղի յաղ, յաղ, բօնիր բահի (բահա) գունի:
- Ավալը** – հնում:
Առաչ – առաջ, նախկինում, հնում:
Այչիչաղի յաղ – արևածաղկի ձեթ:
Առանձին ձեթ բառը չունեն, արևածաղկի ձեթին ասում են **այչիչաղի յաղ**, իսկ ձիթապտղի ձեթին՝ **գէյթունի յաղ**:

116. Մածնի տոպրակ – **մածէքօմ**:
Մածնի տոպրակը կախել էր մէխից:
Մածէքօմը կախցքած ունէր մախսան (մուխսան):
117. Ջուր խմելու պղնձյա գավաթ – **թաս**:
Կավե թասին ասում են **խօղաթաս**:
118. Խցան – **գումփա**:
Խցանով փակեց շշի բերանը:
Չումփայօվը օմուրցուց շուշէին պիանը (պիօնը):
- Օմուրցուց** – անրացրեց, այստեղ օգտագործված է փակել իմաստով:
119. Չագար – **լէլիչ**:
Գինին ձագարով լցրեց շշի մեջ:
Շարաբը լէլիչօվէ էլից շուշէնիվա:
120. Ջրաղացի այն արկղը, որից ցորենը թափվում է աղորիքի մեջ – **օղուն**:
121. Ճախարակ – **փուրթմօնիչ**:
Ճախարակով թել են մանրում:
Փուրթմօնիչօվէ թեր մօնէ գունին:
- Թելին ասում են **թեր**, իսկ **թել** ասում են մետաղալարին:
122. Իլիկ – **իլիգ, իլիկ**:
Պառավը իլիկով թել էր մանում:
Բառավը իլիգօվը թեր մօնէ գուր:
123. Շյուղ – **ջաղ**:
Շյուղերով գուլպա էր գործում:
Ջաղօվէ կուռբա քօրծէ գուր:
- Տվյալ դեպքում չեն կիրառում շյուղ – **ջաղ** բառի հոգնակին:

124. Պարան – չվօն:

Պարանով կապեց ծիու բեռը: Լվացքի պարան:
Ցիու պեռը չվօնօվե գաբեց: Լեվացքի չվօն:

125. Կարպետ – չուլ, ջեջիմ:

Թախտը ծածկված է կարպետով:
Սավքին չուլօվը (ջեջիմօվը) ծածգված ա:

Թախտ բառը նրանց անծանոթ է, ասում են **սավքի**, որը 4–5քմ ուղղանկյուն կամ քառանկյուն, ճաղաշար եզրերով փայտե կամ երկաթե բարձր թախտ է:

126. Անկողին – բարգելդաղ:

Հոգնած էին, մտան անկողին և քնեցին:
Թաթրած էնի, մեղան բարգելդաղե ու քուն աղան:
– Հոգնած ես, անկողինդ բերեցի, գնա պառկիր:
– **Թաթրած ես, բարգելդաղդ փերեցի, քենա բարգա:**

127. Ակնոց – գյօզլուխ:

Կարդում էր ակնոցով:
Գյօզլուխօվե գարթա գուր:

128. Համրիչ – թասպախ:

Պապը գցում էր համրիչի հատիկները:
Բաբը թասպախ քաշե գուր:
(Պապը համրիչ (թգբեհ) էր քաշում):

Համրիչի հատիկներ գցել չեն ասում:

129. Վզից կախվող զարդարանք – հօմայիլ:

Եթե զարդարանքը հատիկավոր է, ուլունքի նման, ասում են՝ **հէլուն:**
Հօմայիլ է կոչվում նաև չար աչքի դեմ մոլլայի գրած չար-խափան թուղթը:

130. Չեռնոց – թեվհաքնիչ, թաթմօն:

Ցուրտ էր, հագավ ձեռնոցները:
Ցուրդ (արդ.՝ **ցուրդ**) էր, **թեվհաքնիչե (թաթմօնը)** հաքավ:

131. Գոտի – կօղի, գաբիչ, վարդիբգաբիչ, գայիչ, խուլաց կօղի:

Կաշվե գոտի – **գայիչ:**
Հյուսած գոտի – **խուլաց կօղի:**

խուլուչ – հյուսել:
խուլաց – հյուսած:

132. Օծիբ – գյօնգսազ:

Բռնեց օծիբից ու թափ տվեց:
Գյօնգսազան փեռնեց ու թափեց:

Ավելի ճիշտ են համարում ասել. «**Փեռնեց ջեղան ու թափեց**»:
ճիթ, ջիդ – վիզ:
Թափուչ – թափահարել:
Թափեց – թափահարեց:

133. Վարտիբ – վարդիբ:

134. Քղանցք – փեչ:

Քղանցքը քսվում էր գետնին:
Փեչը քեսվա գուր հօղին (խօղին):

Գետին բառը նրանց անծանոթ է, ասում են **հօղ (խօղ):**

135. Տրեխ – չաախ, չաօխ, չրախ:

Գյուղացին հագավ տրեխները:
Կյաղացին հաքավ չաախնիյե (չաօխնիյե, չրախնիյե):

136. Տրեխի քուղ – չաախի, չաօխի, չրախի չվօն:

Տրեխը հագավ, քուղը ձգեց ու կապեց ոտքին:
Չաախը (չաօխը, չրախը) հաքավ, չվօնե ցեթեց ու գաբեց օտրեցան:

137. Բարձրակրունկ, սրաքիթ կոշիկ – **գնօջ փօթին**:
138. Սյունից սյուն (ծառից ծառ և այլն) պարանով կապած օրորոց – **գախ Էնգած օօցք, ջիլիկա**:
139. Բարուր – **փալուլ**:
Երեխան բարուրը բացեց:
Դաղան փալուլը պաց աավ:
Բարուրը բացվեց:
Փալուլը պացվեցավ:
- Դաղա** – երեխա:
140. Տակաշոր – **թեմիշօր**:
Երեխայի տակաշորը փոխիր:
Դաղին թեմիշօրը (թեմիշօր) փօխա:
141. Օրորոցից մեզը դուրս բերող փայտե խողովակ –
142. Օժիտ – **ջեյիզ**:
Աղջկան ամուսնացրեց և մեծ օժիտ տվեց:
Ախչգօնէ գարթեց ու շաղ ջեյիզ դէվեց:
- Օժիտի դեպքում ասում են **շաղ** – շատ, և ոչ թե մեծ:
143. Խնամախոս – **էլչի**:
Խնամախոսները եկան աղջիկ ուզելու:
էլչիքը եգին ախչիզ ուզուչի:
144. Աչքալուսանք – **մուժղա**:
Աչքալուսանք ուզեց:
Մուժղա ուզեց:
145. Հարսամիքում փեսային շրջապատող ամուրի երիտասարդներ – **փեսայի Էնգերունք, Էնիշտի Էնգերունք**:
- Էնիշտա** – փեսա:

Էնգերունք – ընկերներ:

Փեսա բառը գիտեն տարեցները, բայց քիչ է օգտագործվում, հիմնականում ասում են **Էնիշտա**:

146. Կնքահայր – **վաֆթիզ դադ, քիրվէ**:
Քահանան երեխային հանձնեց կնքահորը:
Քէշիշէ դաղին քիրվէին դէվեց:
- Հանձնեց չեն ասում, այլ՝ տվեց – **դէվեց**:
147. Կնքամայր – **վաֆթիզ մար**:
Կնքամայրը հագցրեց կնքված երեխայի շորերը:
148. Ծաղկագարդի տոնը – 2.:
149. Նոր տարի – **նօր դարի, նօր դաի** (արդ.՝ **նօյ դայի**):
Նոր տարվա համար միս գնեցին:
Նօր դաուն հօմա միս առին:
150. Ծննդկան – **նօր դղացկօն**:
Ծննդկանին խավիծ տվին:
Նօր դղացկօնը խավիծ (խավինձ, խավինց) դէվին:
- Նրանք խավիծը (**խավիծ, խավինձ, խավինց**) պատրաստում են եգիպտացորենի ալյուրով և կաթի սերուցքով:
151. Մանկաբարձուհի – **թօռնօղ**:
Տատները մոտեցավ ծննդկանին:
Թօռնօղը մօդգինցավ դաղա ուննօղ գէնօշը:
152. Երեխա – **դաղա**:
Երեխան լաց էր լինում:
Դաղան կուլար:
- Դաղա** են ասում նաև տղային:
153. Տատ (իկ) – **մօմի, մէձ մօմ**:

Տատս՝ հորս մայրը, հարյուր տարեկան է: Տա՛տ, մի
հեքիաթ պատմիր:
Մօմիս՝ դադիս մաը, հաուր դաազան ա: Մօմի՛,
հեքիյա մէ ասա:

Դադ – հայր:

154. Սկետրայր – **գայնաթա բաբ, բաբի:**
Սկետրայրը շատ էր սիրում հարսին:
Գայնաթա բաբէ հարսինէ (արդ.՝ հայսինէ) շադ հազ
գէներ:
155. Տերտերկին – **քէշիշի գէնիգ:**
Տերտերկինը լվացք էր անում:
Քէշիշին գէնիգը լվացք (լըվացք) գէներ:
156. Քահանա – **քէշիշ:**
Քահանան օրհնեց սեղանը: (Չեմ լրացրել):
157. Աներորդի – **գայնի:**
Փեսան տուն կանչեց աներորդուն:
Էնիշտան գայնիին ցէն դէվէց (էյէթ) տուննիուս:
158. Ամուսին – **մարթ:**
Ամուսինը սպասում էր կնոջը:
Մարթը բէդ գըներ գէնօջը:
159. Մայր – **մար (արդ.՝ մայ):**
Մայրը կերակրում էր երեխային: Մայրի՛կ, ինձ մոտ
արի:
Մարը (մաը, արդ.՝ մայը) դադին գուրէցէներ: Յէ՛
մա, մօդէս այէ (այէ մօդցիուս):

Մօդցիուս – դեպի ինձ, իմ կողմ, ինձ մոտ:

160. Այրի – **հօփերվայի:**
Այրին դժվար էր պահում երեխաներին:
Հօփերվային տէժար բահի գուր (փութ գէներ)
դադաբը:

Հօփերվայի – որբևայրի:
Փութ ընուշ (փութ էնուշ) – նայել, այստեղ օգտագործ-
ված է պահել, խնամել իմաստով:

161. Տագերկին – **նէր, նիր:**
Տագերկնոջ ատամը ցավում էր:
Նէրին (նիրին) ագռան (առգան, արգան, արդ.՝ այ-
գան) ցավի գուր:

162. Հայր, հայրիկ – **դադ, դադիգ, բաբա:**
Հայրս ուրախ մարդ էր: Հայրի՛կ, դուռը բաց:
Իմ դադը շէն մարթ էր: Յէ՛ բաբա, թուռէ պա՛ց:

Շէն – ուրախ:

163. Մորեղբայր – **քերի:**
Մորեղբայրս ամուսնանում է:
Քերիս գարբվի գու:

164. Ծերունի – **հալիվօր (արդ.՝ հալիվօյ):**
Ծերունին կանչեց կնոջը:
Հալիվօրը (արդ.՝ հալիվօյը) գօրչեց գէնօջը:

165. Արու գավակ – **մօնչ, դադա:**
Ի՞նչ ունես, տղա՞, թե՞ աղջիկ:
Ի՞նչ ունիս, մօ՞նչ, թա՞ ախշիգ:

Դադա նշանակում է նաև երեխա:

166. Հարևան – **թերգից:**
Հարևանի հարսը սիրուն է:
Թերգիցին հարսը էրօնդ (երանդ) ա:

Դրկից – **թերգից:**

167. Մուրացկան – **ժողվիյա, ժողվիաջի, ուզօղ:**
Մուրացկանը նստած էր եկեղեցու պատի տակ:
**ժողվիյան (ժողվիաջին, ուզօղը) նստած էր քի-
լիսին դաուրային դագը:**

168. Ջրբաշխ – **միրաբ:**
Ջրբաշխը կարգավորեց ջրի բաշխումը: (Չեն լրացրել):

169. Որսորդ – **ավջի:**
Որսորդը նապաստակ սպանեց:
Ավջին դաուրազօն ցվօնեց:

Դաուրազօն – նապաստակ:
Ցվօնուլ – սպանել:

170. Հովիվ – **հօյիվ:**
Հովիվը ոչխարի հոտը տարավ սար: Հովիվը կովե-
րին տարավ ջրելու:
**Հօյիվը օչխընուն յաթաղը դաավ սարնիվե: Հօյի-
վը գօվիյը դաավ չեուլ:**

Ավելի հաճախ ասում են **լեռնիվե (լերնիվե)**, քանի որ սար
են ասում անտառապատ սարերին, իսկ **լեռ (լէր, արդ.՝
լէյ)** են ասում այն սարերին, որոնցում գտնվում են նրանց
ամառային արոտավայրերը՝ **յայլաները:**

171. Հոտ (ոչխարի) – **յաթաղ:**
Ոչխարի հոտը արածում է սարի լանջին:
**Օչխարին յաթաղը լեռինե (լերինե, արդ.՝ լէյինե)
բայիրին (բօյիրին) գարծի:**

Արծուլ – արածել:
Բայիր, բօյիր – սարալանջ, ոչ մեծ զառիթափ, թեք տե-
ղանք:

172. Անասուն – **հայվօն:**
Նա ուներ 20 գլուխ անասուն:
Ան ունիր սօն քէլօխ հայվօն:

173. Գոնշածագ – **ջօմիչի հօրթ:**
Գոնշածագը մտավ ջուրը:
Ջօմիչին հօրթը մեդավ չուը (արդ.՝ չույը):

174. Կրիա – **գափագլի կօրտ, գափագլի քօրդ:**
Երեխաները կրիա են բռնել:
Դաղաքը գափագլի կօրտ (քօրդ) փեռնած ունին:

Կօրտ, քօրդ – գորտ:

175. Չղջիկ – **մաշքեթափ:**
Չղջիկները թռչում են մթության մեջ:
Մաշքեթափնիյե մութի մէջ թեփթեփա գուն:

Թեփթեփա գուն – օդում թևերը թափահարելով թռչում են:

176. Սողես – **խլօզ (արդ.՝ խէլօրդ):**
Սողեսը տաքանում էր արևի տակ:
**խլօզը (արդ.՝ խէլօրդը) աաքագին դագը շօղնա
գուր:**

Շօղնուլ նշանակում է արևի շողերից տաքանալ, բայց ա-
սում են նաև վառարանի մոտ շատ տաքանալու, ընդ-
հանրապես, շատ տաքանալու դեպքում:

177. Կարիճ – **աքրեբ:**
Սև կարիճը խիստ թունավոր է:
Թուխ աքրեբը շադ աղուլի ա:

Աղուլի – թունավոր:

178. Սարդ – **սարթ:**
Սարդը ոստայն է հյուսում, ճանճեր որսում:
Սարթը սարթին պուն գէնա, ջօնջեր փըռնա գու:

179. Որդ(ն) – **բօբօլ:**
Խնձորենու տերևները որդերը կերել են:

խենծօրեցե ծառին (արդ.՝ **խենծօտցե ծայինէ**) (**խենծօրին ծառին**) դէյէբնիյէ բօբօլնիյէ գիյաձ ունին:

խենծօրեմուն ասուն են **խենծօրնի**, բայց գործածվում են նաև **խենծօրեցե ծառ** (արդ.՝ **խենծօտցե ծայ**), **խենծօրին ծառ** ձևերը:

180. Անծրևորդ – **ջիջու:**

Անծրևից հետո անծրևորդերը շատացան:
Չախան հեղև ջիջունիյէ շաղընցօն:

181. Ցեց – **ցեց:**

Փայտի ցեց, շորի ցեց:
Փաղի ցեց, շօրի (շօի, արդ.՝ շօյի) ցեց:

182. Մանր որդեր, որոնք լինում են մսի, լեշի վրա՝ ճանճերի նստելուց հետո – **ձեղուք:**

183. Սոխրագույն մեծ ճանճ, որ խայթում է անասուններին – **պօռ:**

Բոռ – **պօռ:**

184. Չատիկ – **գատկի բլօձ:**

Չատիկը կարմիր, պուտավոր միջատ է:
Չատկի բլօձէ գարմի (գարմիր), խատվօր մերչիմ ա:

185. Լուսատտիկ – **գածօռիգ, գածգիչ, գածուլիկ:**

Խավարում լուսատտիկները թռչող կայծերի են մնանվում:
Մութ դաղէ գածօռիգնիյէ (գածգիչնիյէ, գածուլիկնիյէ) թեռչօղ գածիի լըմօնի գուն:

186. Խխունջ – **խէխունց, լօրդի** (արդ.՝ **լօյդու**):

Խոնավ տեղերում խխունջ շատ է լինում:
Թաց դաղնուն խէխունց (լօրդի, արդ.՝ լօյդու) շաղ գէլի:

Խոնավ բառը նրանց անծանոթ է, ասում են **թաց կամ կէչ:**

187. Թռչուն – **ջինջուխ:**

Թռչունը ձու է դնում:
Ջինջուլխ հազվիթ (արդ.՝ հավգիթ) թեճա գու:

Ջինջուխ են ասում նաև ճնճղուկին:

188. Հնդկահավ – **դուլղուլհավ:**

Հնդկահավը ծանր – ծանր շրջում էր բակում:
Ղուլղուլհավը ձօնդր – ձօնդր դօնէ առչէթին բեղէղէ գուր:

Երբեմն հանդիպում է ծանր – **զօնդր** ձևը:

Բակ բառը նրանց անծանոթ է, ասում են **դօնէ առչէվ, դօնի փօս:**

Փօս – հարթ տարածք:

189. Փայտփորիկ – **փաղբօրի:**

Փայտփորիկը կտցահարում է ծառը:
Փաղբօրին ծառին գուտտա:

Գուտտա – հարվածում է:

190. Բու – **քօռջինջուխ, հօհօլ, հօղօլ:**

Բուն ցերեկը չի տեսնում:
Քօռջինջուխը (հօհօլը, հօղօլը) գօտ (արդ.՝ գօյէ) դէսնու չի:

Չօր (արդ.՝ **գօյ**) – ցերեկ:

Ցօուգ – ցերեկ՝ կեսօր իմաստով:

Ցօուգ աղավ – կեսօր դարձավ:

191. Կաչաղակ –

Կաչաղակի պոչը երկար է:

192. Հոպոպ – **փեռփէլա ջինջուխ:**

Հոպոպը գլխին սանր ունի:
Փեռփէլա ջինջուխը քէլխուն վաան սօնդր ունի:

193. Աքաղաղ – աքլար (արդ.՝ աքլայ):
Աքաղաղը կանչում է լուսաբացին:
Աքլարը (արդ.՝ աքլայը) գոնչա գու աքլօն:

Աքլօն – առավոտյան:
Լուսաբաց բառը նրանց անծանոթ է, ասում են լուսանա
հեղեվնա – լուսանալուց հետո, լուսանա նա – երբ լու-
սանա:

194. Վառեկ – վառեգ, աքլերջութ:
Վառեկը հավի մեկ տարեկան էգ ծագն է:
Վառեգը հավի մեգ դաազան էք ծաքն ա:

195. Թուխս – մօջա:
Թուխսը իր ճտերին հավաքեց թևերի տակ:
Մօջան ծաքիյէ կանադին դազէ ժողվեց
(առավ):

Ավելի ճիշտ են համարում ասել ոչ թե ժողվեց, այլ՝
առավ:

196. Փետուր – թերուր:
Ազոավի փետուրները սև են:
Քարդային թերուրնիյէ թուխ ին:

Քարդա – ազոավ:
Թուխ – սև:

197. Թռչունների ստամոքս – պարկը, ուր հավաքվում է կե-
րած կուտը –

198. Հավի կրծքի երկճղի ոսկրը – ադես, լադես:

199. Չու – հազվիթ (արդ.՝ հավգիթ):
Հավի ծու գնեց: Թռչունները ծու են ածում:

Հավի հազվիթ (արդ.՝ հավգիթ) առավ: Ջինջուխնի-
յէ հազվիթ (արդ.՝ հավգիթ) հաձի գուն (գաձին):

Հաձուշ, աձուշ – ածել:

200. Պոչ – բօջ:
Ձին պոչով քշում էր ճանճերին:
Ցին բօջօվը ջօնջիյէ թըոցէնէ գուր:

Տվյալ դեպքում քշել բառը չեն օգտագործում, այլ՝ թըո-
ցէնուշ – թոցնել:

201. Խայթոց մեղվի – գիջ:
Մեղուն խայթեց, խայթոցը մնաց մատիս մեջ:
Մաղուն խաձեց (գիջեց), գիջը մեճաց մադիս մեջը:

Գիջ – կիճ:
Կրետի, կարիճի խայթոցին ասում են աղուն:

202. Ատամ(ն) – ագռա, առգա, արգա (արդ.՝ այգա):
Նրա ատամը ցավում է:
Ինու ագռան ցավի գու:

203. Սեղանատամ – հացի արգա (արդ.՝ այգա), ագռա, առգա:
Սեղանատամներով ծամում են:
Հացին արգընիօվը (արդ.՝ այգընիօվը) ձօմի գուն:

204. Մատ – մադ:
Ձեռքի մատներ: Ոտքի մատներ:
Թեվի մադեր: Օտքի մադեր:

Ձեռք բառը նրանց անծանոթ է, ասում են թեվ, իսկ դաս-
տակին՝ թաթ, ձեռքի ներսի մասին՝ ափ:

205. Բուք մատ – փունթ մադ:
Բուք մատը դանակով կտրել էր:
Փունթ մաղը թեճագօզ գեդրած (գըդրած) էր:

206. Եկույթ – ջգուրթ:
Եկույթը արնոտել էր:
Ջգուրթը աղունած էր:
207. Բուռ – ջօնգ, պուռ:
Մի բուռ ջուր խմեց: Մի բուռ ցորեն վերցրեց:
Ջօնգ մը չուր (արդ.՝ չույ) խեմեց: Ջօնգ մը ցօյին առավ:
208. Բռունցք – յումրուխ:
Բռունցքով ուժեղ հարվածեց մեջքին:
Յումրուխօվ գօվաթլի շեփեցուց (դեվեց) լերթին:
- Հարվածելուն ասուն են նաև դեվուշ, հարվածեց – դեվեց:
Լերթ – մեջքն ամբողջությամբ:
Մեջք են ասուն միայն գոտկատեղին:
209. Ուտք – օտք:
Մարդու ոտք: Չիու ոտք: Հավի ոտք:
Մարթու օտք: Տիու օտք: Հավու օտք:
210. Ազդր – բաջաղ, բաջախա:
Մարդու ազդր: Կովի ազդր: Հավի ազդր:
Մարթու բաջաղ (բաջախա): Գօվու բաջաղ (բաջախա): Հավու բուղ:
211. Պարանոց – ճիթ, ջիղ:
Երեխայի վիզ: Հավի վիզ:
Դաղի ճիթ (ջիղ): Հավի ճիթ (ջիղ):
212. Կոկորդ – բօղագ:
Չկան փուշը մնաց կոկորդում:
Յուգին փուշե բօղագին մենաց:
- Կօկօրդ են ասուն կոկորդի խնձորակին:

213. Ծոճրակ – գօռգագ:
Ծոճրակը քորեց:
Ջօռգագե քիյեց:
214. Մեջք – լերթ:
Մեջքի վրա պառկած էր:
Լերթին վաան բարգած էր:
- Լերթ – մեջքն ամբողջությամբ:
Մեջք են ասուն միայն գոտկատեղին:
215. Կուրծք – ձիծ:
Կովի կուրծքը լիքն էր կաթով:
Գօվուն ձիծը գաթօվը լիքցած էր:
216. Եղջյուր – գօդօշ:
Կովի եղջյուրներից մեկը ընկել էր:
Գօվուն մեգ գօդօշը ենգած (գօդրած) էր:
- Եղջյուրի դեպքում չեն ասուն ընկել էր, այլ՝ կոտրված էր – գօդրած էր:
217. Ողնաշար – բօչքելօխ, լերթի մեչքեղաղի օսկօրներ:
Ողնաշարը կոտրվել է:
Բօչքելօխե չարթեված ա:
Լերթին մեչքեղաղին օսկօրնին (արդ.՝ օսկօյնին) չարթեված ին:
218. Կրճիկ –
Երեխան կրճիկ էր ուտում:
219. Թևատակ – գօլթուղ:
Գիրքը թևատակին գնաց դպրոց:
Քիթաբը գօլթուղին դագե արավ (աավ, արդ.՝ ա-յավ) քենաց շկօլա (մաթթաբ)*:
- * Մաթթաբ (մեթթեբ) են ասուն հոփայի գավառի կրոնափոխ հանշենցիները, իսկ շկօլա՝ նախկին ԽՍՀՄ հանրապետություններում բնակվողները:

220. Շուրթ, շրթունք – բերբուք, բերվուք:
Վերին շուրթը ուռած էր:
Վեթու բերբուքը (բերվուքը) ուռած էր:

221. Արտևանունք – թերթվուց:
Արտևանունքները թափվել էին:
Թերթվուցնիյէ վաթած էնի:

222. Լյարդ – թուխ ջիգար:
Հիվանդի լյարդը ուռել է: Տավարի լյարդը տապակե-
ցին:
Հիվանդին թուխ ջիգարը ուռած ա: Դավարին
(արդ. դավաշին) թուխ ջիգարը դարգեցին:

223. Միգապարկ – շերոմօն, շերոման:
Միգապարկում քար կա:
Շերոմօնին մէջը քար գօ:

224. Սեգ – շէռ, կօզ:
Մարդու մեգ: Տավարի մեգ: Շան մեգ:
Մարթու շէռ: Դավարի կօզ: Շան կօզ:

225. Խոշոր եղջերավորների (կով, գոմեշ) կղկղանք – աղփ:
Թրիք բառը քչերը գիտեն, օգտագործում են աղփ
բառը:

226. Ձիու, էշի, ջորու կղկղանք – աղփ:

227. Ոչխարի, այծի կղկղանք – գիգիդօր:

228. Պզուկ – շուդ:
Դեմքին պզուկներ կային:
Էեսին (արդ. էյեսին) շուդեր գային:

Շուդօդ – պզուկոտ:

229. Ուռուցք – ուռ, ուռուցք:
Ոտքի վրա մի մեծ ուռուցք կար:
Օտքին վաան մեգ մեծ ուռ (ուռուցք) մէ գար:

230. Վերք – խօց:
Վերքից թարախ է գալիս:
Խօցան թաախ կուքա:

231. Թարախ – թաախ:
Վերքի մեջ թարախ կա:
Խօցին մէջը (խօցի մէջ) թաախ գօ:

Խօցին մէջը – այս վերքի մեջ:

232. Լործ, լործունք – փերցուխ:
Ձիու բերանից լործ էր թափվում:
Ցիուն պէյնան (կափան) փերցուխ կուքար (կիշ-
ներ):

Տվյալ դեպքում ասում են ոչ թե թափվում էր, այլ՝ գալիս
էր – կուքար, իջնում էր – կիշներ:

233. Ընկերք – էշ:
Հորթը ծնվել էր, ընկերքը դեռ չէր ընկել:
Հօրթը ձենած էր, էշը թեռ ընգած չէր:

234. Գորտնուկ – քօրթնուք:
Մատների վրա գորտնուկներ կային:
Մադօուն վաան քօրթնուքներ գային:

235. Գարեկ – աչգերուկ:
Գարեկը լինում է աչքի վրա:
Աչգերուկը աչվիին վաան գելի:

236. Թարախոտ կոշտ վերք, որ գոյանում է կրունկի վրա –

237. Տենդ – ջենդ, ջերմ:

Երեխան տենդից դողացնում է:

Դադան ջենդեն թոխցնա գու:

Երեխային տենդը դողացնում է:

Դադին ջերմը թոխցընա գու:

238. Կարմրուկ – քուրթէ:

Կարմրուկը մանկական վարակիչ հիվանդություն է:

Քուրթէը դըղօցը նենսունուշի հիվօնդութին ա:

Քուրթէը սկարլատինա հիվանդությունն է, բայց կարմրուկին էլ երբեմն **քուրթէ** են ասում:

Մանկական բառը նրանց անծանոթ է, ասում են **դեղօցը, դըղօցը, դաղօցը**, այսինքն՝ երեխաների:

239. Հարբուխ – խարփուխ (արդ.՝ խայփուխ):

Հարբուխի ժամանակ փռշտում են:

խարփուխին օխթին փերենքտա (փեխենդա) գուն:

Փերենգտուշ, փեխենդուշ – փռշտալ:

Թօքուշ – հազալ:

240. Թույն – աղու, տախ, գէիր:

Թույն խմեց ու մեռավ:

Աղու (տախ, գէիր) խմեց ու մեռավ:

241. Հոգեհաց – Չ.:

Հոգեհաց տվեց ննջեցյալի պատվին:

242. Ընթրիք – իզվօնցու (իզվօնի) հաց:

Երեկոյան նստեցին ընթրիքի:

Իզվօնը իզվօնցու (իզվօնի) հացի նըստօն:

243. Թանապուր – թօնաբուր:

Թանապուրը պատրաստում են թանից կամ մածուցից՝ ծավարով կամ բրնձով:

Թօնաբուրէ գէփին թօնան գամ մածունան՝ գօր-գօթօվէ գամ պէինծօվը:

Ճաշ եփելու դեպքում պատրաստել չեն ասում, այլ՝ **էփուշ** – եփել, իսկ ծավարին ասում են **գօրգօթ**:

244. Խաշ – խաշ:

Տավարի տոտիկներից պատրաստված խաշ:

Դավարին դօդիգնօուն էփած խաշ:

Ճաշ եփելու դեպքում պատրաստել չեն ասում, այլ՝ **էփուշ** – եփել:

245. Կաթնապուր – գաթնօվ, գաթներած:

Հիվանդին կաթնապուր տուր:

Հիվօնդին գաթնօվ (գաթներած) դու:

246. Հում կաթի սեր – սիր (արդ.՝ սիր):

Կաթի սերը քաշել են:

Գաթին սիրը (արդ.՝ սիրը) քաշած ունին:

247. Դալ – թալ, թալան գաթ:

Նոր ծնած անասունի կաթը եփելով ստանում են դալ:

Նօր ձենած հայվօնին գաթէ էփէլօվէ թալ գէնին:

Այս դեպքում «ստանում են» չեն ասում:

248. Մածուն – մածուն:

Հարսը մի աման մածուն մերեց:

Հարսը օմօն մէ մածուն մերցեց (մարցեց):

Մարցու – մածունի մերան, մակարդ:

Մարցնուշ – մերել:

Մածուն մերելուն ասում են նաև **մածուն փեռնուշ:**

Պանրի մակարդին ասում են **խախած:**

249. Չվածեղ – **հալած հագվիթ** (արդ.՝ **հավգիթ**):
Չոքանչը փեսայի համար ձվածեղ պատրաստեց:
Փայնանան էնիշտային համա հագվիթ (արդ.՝
հավգիթ) **հալեց**:

Փեսա բառը գիտեն միայն տարեցները:
Չվածեղ բառը նրանց անծանոթ է, ասում են **հագվիթ**
(արդ.՝ **հավգիթ**) **հալուշ**, այսինքն՝ ձվածեղ անել, պատ-
րաստել: Կիրառական է նաև՝ **յաղի մէջ հագվիթ** (արդ.՝
հավգիթ) **էփեց** (**հալեց**):

250. Իր հյուրի և յուրի մեջ տապակած միս, որ կծուճների մեջ
պահոււմ են որպէս ծնռան պաշար – **գաոււմա, գաուրմա**:

251. Հալած դմակից մնացած կտորներ –

252. Ճարպ – **յաղ**:
Այծի ճարպով տրորում են մրսածի մեջքը:
Ածուն յաղօվէ գաջերին մէսածին լէրթ:

253. Դոշաբ – **բաքմազ**:
Դոշաբը պատրաստում են թփի, խաղողի քաղցուից:
Բաքմազը թութան ու խավօղան գէնին:

խաղողի քաղցու բառը ինձ չհաջողվեց ճշտել:

254. Գաթա – **քաթա**:
Գաթայի խորիզը քիչ էր:
Քաթային միչուցքէ քիչ էր:

255. Բաղարջ –
Բաղարջը թխում են առանց խորիզի:

256. Չավար – **գորգօթ**:
Չավարը պատրաստում են ցորենից:
Գորգօթը ցօյինան գէնին:

257. Աղանձ –
Մայրը երեխային աղանձ տվեց:

258. Խաշած ցորեն, կանեփ և այլ ընդդեղեններ, որ լցնում են
կաթնատամ հանած երեխայի գլխին՝ մյուս ատամների
հանելը արագացնելու համար –

259. Կաթսայի մեջ մնացած կերակրի տականք – **դագիչք**:

260. Հալած յուրի տականք –

261. Ծամոն – **գիվ**:
Հարսը ծամոն էր ծամում:
Հարսը գիվ ձօմէ գուր:

262. Հոլ –
Հոլը պտտվում էր նույն տեղում:

263. Ճոճանակ – **սալինջաղ, ջիլիկա**:
Երեխան ճոճանակ էր նստել:
Դաղան սալինջաղի (ջիլիկայի) մէջը նէստած էր:

264. Տիկնիկ – **կուկիկ**:
Աղջիկը խաղում էր տիկնիկով:
Ախշիզը կուկիկօվը խաղա գուր:

Ծիսական տիկնիկին ասում են **բուրրիկ** – պուպրիկ:

265. Քարկտիկ – **հինգ քար**:
Քարկտիկը խաղում են հինգ մանր կլոր քարերով:
**Հինգ քարը (քարը) (արդ.՝ քայը) հինգ հաղիգ բի-
ծիգ գունդուլիգ քաօվէ խաղա գուն**:

Գունդուլիգ – գնդիկ, կլոր:

266. Ճան – **աշուղ**:
Երեխաները ճան են խաղում:
Դղաքը աշուղօվը խաղա գուն:

267. Սրինգ – գավալ:

Հովիվը սրինգ էր նվագում:

Հօյիվը գավալ փըչէ (փըչա) գուր:

Փըչա գուր բառացի նշանակում է փչում էր. այստեղ օգտագործված է «նվագում էր» իմաստով:

268. Ունպ – գում, գուլ:

Մի ունպ ջուր խմեց:

Գում (գուլ) մէ չուր (արդ.՝ չույ) խեմեց:

269. Համբույր – բաչ:

Մի համբույր տուր:

Բաչ մը դուր:

Ինձ համբուրիր:

Ինձի բաչ աա:

270. Ապտակ – գածգուն:

Մի ապտակ հասցրեց նրան:

Մեզ գածգուն մէ շէփեցուց անու:

Նա ապտակեց:

Ան գածգեցուց:

Շէփեցուց – հարվածեց, շրմփոցով հարվածեց:

271. Բուք մատի և ցուցամատի միջև եղած բացվածքը – **թիզ:**

272. Հայիոյանք – **քէֆուր, սօգ:**

273. Երկյուղ – վախ:

Միրոս վախ ընկավ:

Միրոսիվա (արդ.՝ սիյոսիվա) վախ մէ նէ մեղավ:

Նէ մեղավ – ներս մտավ: Ընկավ չեն ասում:

274. Ոխ – սիրդ:

Ոխ ուներ նրա դեմ:

Ան սիրդ (արդ.՝ սիյդ) ուներ անու վաա:

Սիրդ (արդ.՝ սիյդ) նշանակում է նաև զայրույթ, զայրացած մարդուն ասում են **սիրդօդ (արդ.՝ սիյդօդ) մարթ:**

275. Ժամանակ – **օխք, վաքիտ, գաման, չախ:**

Ճիշտ ժամանակին տեղ հասանք:

Շիդագ օխքին պօքեցաք:

276. Առավոտ – **աքվա:**

Հիվանդը չքնեց մինչև առավոտ:

Հիվօնդը ինչակ լուսը քուն աղավ օչ:

Հիվանդը մինչև առավոտ քնել չկարողացավ:

Հիվօնդը ինչակ աքվօն քուն էլլի չըկաաց:

277. Կեսօր – **ցուլօ:**

Աշխատեցին մինչև կեսօր:

Տադեցօն ինչակ ցուլօ:

278. Իրիկնապահ – **իզուն:**

Գյուղացիները տուն վերադարձան մինչև իրիկնապահ:

Կյաղացիք ինչակ իզուն դուն էգին:

Իզուն – երեկո:

Իզվօն – երեկոյան:

Իզվօնցնիմէ – երեկոյան կողմ:

279. Գեղեցիկ – **էրօնդ, էրանդ:**

Նա գեղեցիկ աղջիկ է:

Ան (ինա) էրօնդ ախչիգ ա:

280. Լավ – **լավ, սօյ, բեդք:**

Լավ մարդ, լավ գինի, լավ ապրուստ:

Սօյ մարթ, սօյ շարաք (դինօ), սօյ աքրուստ:

Լավ բառը հազվադեպ օգտագործում են տարեցները:

Բեդք – լավ բառը սովորաբար ասում են «ինչպե՞ս ես» հարցին ի պատասխան:

281. Մեծ – մեծ:
Ճամփին ընկած էր մի մեծ քար:
Ջօմփուն (ջօմփուն վաան) մեծ քար մէ էնգած էր:

282. Գեր – կիր:
Գեր ոչխար: Գեր մարդ:
Կիր օչխար: Կիր մարթ:

Գեր մարդուն ասում են նաև **հաստ, հաստուլիգ մարթ**,
իսկ գեր երեխային ասում են **խուստուլիգ դաղա:**

283. Ագահ – աչվին քախցած:
Ագահ մարդ է:
Աչվին քախցած մարթ ա:

Աչվին քախցած – աչքածակ, անկուշտ, ագահ:

284. Խենթ – շաշ, խեվ, խելառ:
Այս մարդը խենթ է:
Աս (խա) մարթս շաշ ա:

285. Նվազ – ջիղօզ, ջիլօզ:
Երեխան լավ չի ուտում, դրա համար էլ շատ է նվազ:
Դադան շադ ուղէ չի, անու հօմա շադ ջիղօզ (ջիլօզ) ա:
Նվազ ծառ: Նվազ սածիլ:
Ջիղօզ ծառ: Ջիղօզ սաղիր:

286. Նիհար – զաիվ:
Նիհար կով: Նիհար մարդ:
Չաիվ գօվ: Չաիվ մարթ:

287. Վատ – չօքուտ, չօքուդ:
Վատ մարդ: Վատ գինի:
Չօքուտ մարթ: Չօքուտ շարաբ (դինօ):

Վատ մարդուն ընդունված է ասել նաև **ավեր մարթ:**

288. Դառն – լաղի:
Կորիզը դառն է:
Դօյիզը (դօիսը) լաղի ա:

289. Կծու – վառէցուք, վառեսնուք:
Տաքեղը շատ կծու է:
Բիբարը շադ վառէցուք (վառեսնուք) ա:

Կծու – **գեծու** ասում են կծված իմաստով՝ **գեծու յաղ** –
կծված յուղ:

290. Դժվար ջարդվող (ընկույզ, կաղին և այլն) – օմուր:

291. Ամուր – օմուր:
Ամուր գետին: Ամուր պարան:
Օմուր հօղ (խօղ): Օմուր չվօն:

292. Բուք (ոչ սուր) – քյունթ, գունթադ:
Բուք դանակ:
Քյունթ (գունթադ) թենագ:

Բուք – անհասկացող իմաստով ասում են՝ **փուդ, փունթ:**

293. Կապույտ – մավի:
Կապույտ երկինք: Կապույտ ծաղիկ:
Մավի հավա: Մավի ծաղիգ:

294. Սպիտակ – ջերմագ:
Սպիտակ ծաղիկ, սպիտակ թուղթ:
Ջերմագ ծաղիգ, ջերմագ թուխթ:

295. Շեկ –
Մազերը շեկ են:

296. Փոքր (իկ) – բիծիգ:
Փոքր քար: Թագավորի փոքր տղան:
Բիծիգ քար: Փաղիշահին բիծիգ մօնչը:

Թագավոր բառը նրանց անձանոթ է, ասում են **սուլթան, փադիշահ, քըռալ:**

297. Քիչ – քիչ:

Քիչ մնաց հասնենք:

Քիչ մենաց (մընաց) պօբուշի:

Պօբուշ – հասնել:

Պօբուշի – հասնելու:

298. Մի քիչ – քիչ մը:

Մի քիչ հաց տուր:

Քիչ մը հաց դու:

299. Թանկ – բաալի:

Ցորենը թանկ է:

Ցօյինը բաալի ա:

300. Կաղ – թօփալ, չօլախ:

Կաղ ձի, կաղ մարդ:

Թօփալ ցի, չօլախ մարթ:

301. Կորամեջք – գօմբուրցած, գօմբուր:

Կորամեջք պառավ:

Գօմբուրցած (գօմբուր) բառավ:

Գօմբուր նշանակում է կուզ, **գօմբուրցած** – կուզիկացած, նրանք ավելի ճիշտ են համարում ասել **գեզված բառավ**, այսինքն՝ կռացած պառավ:

302. Համր – լալ:

Համր տղա:

Լալ մօնչ:

303. Խուլ – խուլ:

Խուլ ծերունի:

Խուլ հալիվօր (արդ.՝ **հալիվօյ**):

304. Թլվատ – փալթախ:

Լեզվից թլվատ էր:

Լիզուն փալթախ էր:

305. Կճատ քիթ – գարջ քիթ (քինթ):

Թոռնիկը կճատ քիթ ուներ:

Թօռէ գարջ քիթ (քինթ) ունիր:

Թոռնիկ չեն ասում, այլ՝ **թօռ:**

306. Շիլ – գեզ:

Աչքը շիլ էր:

Աչվին գեզն էր:

Ձարմանքից աչքերը չեւելու դեպքում ասում են **աչվեցի-յեն շիլեց:**

307. Պեպենոտ – բուղբուղիգ:

Դենքը պեպենոտ էր:

Էէսը (արդ.՝ **էյէսը**) **բուղբուղիգ էր:**

308. Ծաղկատար – չէչօտ:

Դենքը ծաղկատար էր:

Էէսը (արդ.՝ **էյէսը**) **չէչօտ էր:**

309. Գանգուր – գիվիրջօղ, գիվերժուղ:

Մազերը գանգուր են:

Մազիրը (մազիր, արդ.՝ մազիրը) **գիվիրջօղ (գիվեր-ժուղ) ին:**

310. Թեթևուլիկ – թեթվ:

Թեթևուլիկ մարդ:

Թեթվ մարթ:

311. Վախկոտ – վախկօղ, վախկօն:

Նազարը վախկոտ էր:

Նազարը (Նազարը) **վախկօղ (վախկօն) էր:**

312. Ծույլ – **թեմբալ**:

Ծույլ մարդ էր:

Թեմբալ մարթ էր:

313. Քաղցած – **քախցած**:

Խիստ քաղցած են:

Շաղ քախցած իմ:

Խիստ բառը չունեն, ասում են **չաղ** – շատ:

314. Հարբած – **սարխօշ, խեմած**:

Նա հարբած էր տուն գալիս:

Ան սարխօշ կուգար դուննիվա:

Խեմած ասում են քիչ խմած մարդուն, իսկ հարբածին ասում են **սարխօշ**:

315. Լիքը – **լիքը**:

Ջրով լիքը աման:

Չուօվէ լիքը օմօն:

Ցորենով լիքը պարկ:

Ցօյինօվէ լիքը թորբա:

Ամանը ջրով լիքն է:

Օմօնը չուօվէ լիքն ա:

316. Հաստափոր – **հաստփօր** (արդ.՝ **հաստփօյ**):

Հաստափոր մսագործ:

Հաստփօր (արդ.՝ **հաստփօյ**) **կասաբ**:

317. Թմբլիկ – **փուփլիգ**:

Թմբլիկ երեխա:

Փուփլիգ դաղա:

318. Փափուկ – **փափուլիգ, թենթսուց**:

Փափուկ միս, փափուկ հաց, փափուկ բարձ:

Թենթսուց միս, փափուլիգ հաց, փափուլիգ փարց (յաստուղ):

319. Կլոր – **լիլիկ, լիլիգ**:

Ձմերուկը կլոր է:

Կարպուզը գունդուլիգ ա:

Գունդուլիգ նշանակում է գնդիկ, ձմերուկի դեպքում ասում են ոչ թե կլոր, այլ՝ **գունդուլիգ**:

320. Մաքուր – **թեմիգ, իստաք**:

Մաքուր շապիկ, մաքուր անկողին:

Թեմիգ (իստաք) շաբիգ, թեմիգ (իստաք) բառգէղաղ:

Որոշ դեպքերում չեն ասում **թեմիգ**, այլ՝ **իստաք**, օրինակ՝ **իստաք ախաօր** (արդ.՝ **ախաօյ**) – մաքուր աղբյուր, **իստաք չուր** (արդ.՝ **չույ**) – մաքուր ջուր, ջուրը մաքրվեց – **չուր** (արդ.՝ **չույր**) **իստաքվեցավ**:

321. Անպոչ (հավ) – **բօչաղ, գունթաղ բօչ**:

Անպոչ հավը մոխիրը քուջուջում էր:

Գունթաղ բօչ (բօչաղ) **հավը մօխիյը փօչխա գուր:**

Գունթաղ բօչ – կտրած պոչ:

322. Ժլատ – **թելէ օմուր**:

Ժլատ տանտիկին:

Թելէ օմուր դօնգէնիգ:

Թել – ձեռք:

Օմուր – ամուր:

Դօնգէնիգ – տանտիկին:

323. Մերկ – **դեգլեգ**:

Մերկ երեխա:

Դեգլեգ դաղա:

324. Հղի – **ձօնդր, զօնդր, էրգուդագ**:

Հղի կին: Հղի անասուն:

Ձօնդր (զօնդր, էրգուդագ) **գէնիգ: Ձօնդր** (զօնդր) **հայվօն:**

325. Գոլ – մօլա:
Գոլ ջուր:
Մօլա չուր (արդ.՝ չույ):
326. Սառ(ն) – բաղ:
Սառը ջուր, սառը ծմերուկ:
Բաղ չուր (արդ.՝ չույ), բաղ կարպուզ:
327. Չոր – չօր (արդ.՝ չօյ):
Չոր փայտ դիր կրակին:
Չօր (արդ.՝ չօյ) փաղը գիազը տի (արդ.՝ գիյազը տիյ):
328. Թեժ – զօռ:
Թեժ կրակ:
**Ջօռ գիյազ:
Գուրզուռ աօղ գիազ (արդ.՝ այօղ գիյազ):**
- Ջօռ նշանակում է ուժեղ, դժվարին. այստեղ օգտագործված է ուժեղ՝ թեժ կրակ իմաստով: **Գուրզուռ այօղ (աօղ)** նշանակում է աղմուկով այրվող:
329. Խոնավ – կէչ:
Խոնավ գետին, խոնավ շոր, խոնավ՝ թաց փայտ:
Կէչ հօղ (խօղ), կէչ շօր (արդ.՝ շօյ), կէչ փաղ:
- Խոնավ իմաստով հաճախ օգտագործում են նաև **թաց բառը:**
330. Մարմանդ – սարբաստ:
Մարմանդ կրակ:
Սարբաստ գիազ (արդ.՝ գիյազ):
331. Թերխաշ – հում էփած:
Թերխաշ ծու:
Հում էփած հազվիթ (արդ.՝ հավգիթ):

332. Կիսրար – օրթախ:
Կիսրար աշխատում էին, հետո հավասար կիսում:
Օրթախ տաղէ գունի, հեղէվ հավասար գես գէնէնի:
333. Ծնողների միակ զավակը – մեգհադիգ:
334. Բովել – խարգուշ:
Տասս ցորեն բովեց:
Մօմըս ցօյին խարգեց:
335. Թխել – էփուշ:
Տատը հաց թխեց:
Մօմէ հաց էփեց:
- էփուշ** նշանակում է և՛ եփել, և՛ թխել:
336. Աշխատել – տադուշ:
Օրական աշխատում էր հինգ ժամ:
Օը (արդ.՝ օյը) հինգ սահաթ տադի գուր:
- Օը (արդ.՝ օյը) – օրը:**
337. Ջրաղացաքարը ատամնավորել –
338. Քանդել – խէչուշ, ավիուշ, քագուշ:
Պատը քանդեց: Թելի կապը քանդեց:
Դաուբան (դուարե) (արդ.՝ դուվայե) խէչեցուց (ավիեց): Չվօնին գաբը քագեց:
339. Կոտրել – գօդրուշ:
Ամանը գցեց ու կոտրեց:
Օմօնը վար ցբեց ու գօդրեց:
340. Սորթել – մօրթուշ:
Հավը մորթեց:
Հավէ մօրթեց:

341. Մտցնել – մեթցնուլ, խօթուլ, նեթիուլ:
 Ձեռքը մտցրեց ջրի մեջ:
Թելը խօթեց (նեթեց) չուրնիվա (արդ.՝ չույնիվա):
 Ձեռքս գրպանս մտցրեցի:
Թելես չեփսիվա նեթի:
- Նեթիեց** – ներս մտցրեց:
Չեփ – գրպան:
342. Պլոկել – լաղջուլ:
 Ծառի կեղևը պլոկեց:
Ձառին գեջէբը (գաբուղը) լաղջեց:
- Լաղջուլ** նշանակում է նաև լղճել:
343. Կեղևել – գեջվուլ:
 Նրանք կարտոֆիլ են կեղևում:
Աներ (իներ) կարտոփի (արդ.՝ կայտփի) գեջվի գուն:
344. Արմատակալել – բօք (բյօք) դեվուլ:
 Խաղողը արմատակալել է:
Խավօղը բօք (բյօք) դեված ունի:
345. Թառամել – թօմէլուլ:
 Ծաղիկները թառամում են:
Ձաղիգնիյէ թօմէլի գուն:
 Ծաղիկը թառամեց:
Ձաղիգէ թօմէլեցավ:
346. Կծղել –
 Հունձը ուշացրել ենք, արտերը արդեն կծղել են:
347. Ճգմել – աջերուլ, չախլուլ:
 Խաղողը ճգնում են: Ափի մեջ պոմիդորը ճգմեց:
Խավօղը գաջերին: Թելին (ափին) մէջը պօմիդօրը (լիլիգը) չախլեց:
- Չախլուլ** – ճխել, ճգմել:
 Խոփայի գավառում պոմիդորին ասում են **թօմաթես:**

348. Խուտուտ տալ – խաղվեղուլ:
 Նա թևերի տակ խուտուտ տվեց և ծիծաղեցրեց:
Ան գօլղուղին դագէ խաղվեղեցուց հեմ ձիծաղեցուց:
 Նա ինձ խուտուտ է տալիս:
Ան ինձի խաղվեղեցնա գու:
349. Կճմթել – ձիբլուլ:
 Թևն այնպես կճմթեց, որ տեղը կապտեց:
Թելէ օլյա ձիբլեց ու, դաղը սեվցավ:
- Սեվնուլ** – կապտել:
 Սևին ասում են **թուխ**, սևանալ – **թուխնուլ:**
350. Ցամաքել – ցօքմուլ:
 Առվի ջուրը ցամաքել է:
Հարքին (խարքին) չուր (արդ.՝ չույր) ցօքմած ա:
351. Դիպչել – թիբնուլ, քեսվուլ:
 Ոտքը դիպավ քարին:
Օտկը (օղքէ) քարին (արդ.՝ քային) թիբավ (քեսվեցավ):
352. Կպչել – նեգեբուլ:
 Փուշը կպավ շորին:
Փուշէ շօրին (շօին, արդ.՝ շօյին) նեգեբավ:
353. Մէխել – չաքմիչ էնուլ:
 Տախտակները մէխեց իրար:
Դախդագնին (դախդագնիյէ) յաար չաքմիչ աավ:
354. Ամանը գլխիվայր շրջել – օմօնէ թարս թէնուլ:
 355. Հավաքել – ժողվուլ:
 Կրակի համար փայտ հավաքեց:
Գիյագի հօմա փաղ ժողվեց:

356. Վերցնել – վեգալուշ:

Հրացանս վերցրի գնացի որսի:
Թեվօնըր առի (վեգալի) քենացի ավջիւուղա:

Վեգալուշն ունի նաև բարձրացնել իմաստը:
Առի – առա, վերցրեցի: Խանութից գնելու դեպքում ևս ասում են **առի** – առա:

357. Թողնել – օբօլ ընուշ:

Կնոջը, երեխաներին թողեց՝ գնաց քաղաք:
Գնօջը, դաղօցը օբօլ աավ, քենաց շահար:

Ասում են նաև **վա ցքեց** – վայր ձգեց, թողեց, բաժանվեց:

358. Շարժել – ժաժուշ:

Քարը տեղից շարժեցին: Քամին շարժեց տերևները:
Քաէ (քարը, արդ.՝ քայը) դաղնան ժաժեցին: Փուշը (արդ.՝ քօմին) դէերնիյէ ժաժեց:

359. Ընկնել – ընգուշ, էնգուշ:

Ծառից երկու խնձոր ընկավ:
Չառան էրգու խէնձօր էնգավ:

360. Գլորել – քիլուշ:

Քարը գլորեցին:
Քարը (քար, արդ.՝ քայը) քիլեցին:

361. Թելը հանգուցել – թերը գաբուշ:

Թելի ծայրը հանգուցիր:
Թերին ձայէ գաբեցեր:

Թելին ասում են **թեր**, իսկ **թէլ** ասում են մետաղալարին:

362. Հանգցնել – հօնցնուշ:

Շրագը հանգցրու: Կրակը հանգցրեց:
Լամբան հօնցու: Գիյազը հօնցուց:

363. Պարզաջրել – մայնուշ:

Լվացքը պարզաջրում է: Ամանները պարզաջրեց:
Լէվացքը մայնա գու: Օմօննին մայնեց:

Մայնուշ – մաքրաջրել, ողողել, պարզաջրել:

364. Ցույց տալ – ցուց էնուշ:

Ցույց տուր նրանց տունը:
Ինց դունէ ցուցու:

365. Հաշվել – հօմրուշ:

Փողը հաշվեց:
Փաան հօմրեց:

366. Փակել – խաչնուշ, խաշնուշ, դաշնուշ:

Պատուհանը և դուռը փակիր:
Փէնջարան ու թուռէ խաչնա (խաշնա, դաշնա):

խաշնուշ բառը հաճախ արտասանվում է **խաշնուշ (դաշնուշ)**, նշանակում է փակել կողպեքով կամ կեռիկով: Սեքենա նստելիս նույնպես ասում են **թուռէ խաչնա (խաշնա, դաշնա)** – դուռը փակիր: Երբ ասում են **վաա պէ** – վրա բեր, նշանակում է՝ առանց կողպեքի փակիր, պարզապես ծածկիր:

367. Ուղղել – շիղգուշ:

Գլխարկդ ծուռ է, ուղղիր:
Քուղղդ ծուռ (գեգն) ա, շիղգա՛:

Քուղ – գլխարկ:

368. Վռնդել – թերցէնուշ, թուռը ցբուշ:

Հարբածին վռնդեց տանից:
Սարխօշին դօնան թերցուց (թերուց):

Թուռը ցբուշ – դուրս գցել:

369. Թարթել – խփխփուշ:

Աչքը թարթում էր:

Աչվին խփխփեցնե գուր:

370. Անշնորհք կերպով քսել՝ կեղտոտել –

Երեխան մածոնով լղոզել էր երեսը:

Դադան էեսին (արդ.՝ էյեսին) մածուն քեսած ուներ:

Լղոզել բառը չունեն:

371. Փետրել – փեղուշ:

Կինը փետրեց հավը:

Գենիզը հավը փեղեց:

372. Երեսը կարմրել – էսը (արդ.՝ էյեսը) գարմրուշ, գարմուշ:

373. Ավարտվել – թոմնվուշ:

Գործը ավարտվեց:

Պոնը թոմնվեցավ:

374. Սառչել – սառչուշ, աղիմգեբուշ, աղիմգեդրուշ:

Այս գիշեր ջուրը սառել էր:

Աս քիշեր չուր (արդ.՝ չույր) սառած էր (աղիմգեբե-
ցած էր, աղիմգեդրած էր):

Աղիմգեբեցած էր – սառցակալել էր:

375. Մրսել – մեսուշ:

Ցուրտ է, մրսում եմ:

Ցուրդ (արդ.՝ ցույդ) ա, մեսի (մըսի) գում:

376. Ձեռքի կամ ոտքի մատները ցրտից ու մրսելուց կուչ գալ

– թերմուշ:

Թերմուշ նշանակում է նաև թմրել, թերմեցավ – թմրեց:

377. Փլվել – փելուշ:

Պատը փլվեց:

Դաուբան (արդ.՝ դուվայե) փելավ:

Բադ ասում են ցանկապատին, իսկ պատին ասում են դաուբա (արդ.՝ դուվայ):

Փլվել (փելուշ) են ասում, երբ պատի մի մասն է փլվել, իսկ երբ ամբողջ պատն է փլվել, ասում են դաուբան էնգավ – պատը ընկավ:

378. Սուլել – սելվելուշ:

Մի երգ էր սուլում: Նա սուլեց:

Գօնչուշ մե սելվելա գուր: Ան սելվելաց:

Գօնչուշ – երգ:

379. Հևալ – թաստուշ:

Շունը լեզուն հանած հևում էր:

Շունը լիզուն հոնած թաստե գուր:

380. Կակազել – լիզուն եղեվ ցբուշ, պալտաղուշ:

Վախից սկսեց կակազելով խոսել:

Վախուշան պալտաղ խաբրուշի գեբավ:

Վախուշան լիզուն եղեվ ցբելով խաբրուշի գեբավ:

Վախից կակազեց:

Վախուշան լիզուն եղեվ ցբեց:

Վախուշան պալտաղեցավ (պալտաղ էնգավ):

Պալտաղուշ նշանակում է թվատ խոսել, բայց, երբեմն, օգտագործվում է նաև կակազել իմաստով:

Խաբրուշ, խաբրուշ – խոսել:

381. Բզկտել – ցեվերդուշ (արդ.՝ ցեվերդուշ), ցիլաղուշ, ցեվցե-
վուշ:

Շները մորթե գլխարկը բզկտեցին:

Շնիլը փափախը ցեվերդեցին (արդ.՝ ցեվերդեցին)
(ցիլաղեցին, ցեվցեվեցին):

382. Քուջուջ անել – **քուջուջ ընուշ, փոջխօղուշ:**
Հավերը քուջուջ արեցին:
Հավիյը (հավիը) քուջուջ ային (աին) (փոջխօղեցին):

Քուջուջ բառը ունեն, բայց քիչ են օգտագործում:
Փօջխօղուշ նշանակում է նաև քչփորել, **փօջխօղեցին** – քչփորեցին:

383. Խճճվել – **չինխօլուշ:**
Կծիկի թելը խճճվեց:
Գէծիգին թերը չինչխօլեցավ:

Թել ասում են մետաղյա լարին, իսկ **թեր** ասում են թելին:
Օլէրվուշ (արդ.՝ **օլէյվուշ**) – ուլորվել, երբեմն օգտագործվում է նաև խճճվել իմաստով:

384. Սուր և հանկարծակի ցավ պատճառել – **ծագուշ:**

Չագուշ – ծակել:

385. Մրմռալ – **գէծուշ, վառուշ:**
Սոխից աչքերը մրմռում էին:
Սօխան աչվէնիյեն վառէ գունի:
Երեկ սոխը կտրատելիս աչքերս մրմռացրեց:
Էյէգ (էէգ) սօխը չարթէլէ աչվէնիյես վառէցուց:

386. Կտորատվել – **չարթվուշ:**
Մրսեցի, ամեն տեղս կտորատվում է:
Մէսէցա, էմնէն դաղս չարթվի գու:

Չարթվուշ – ջարդվել, կտորատվել: Թեև ունեն կտորել – **գօրրուշ** բառը, բայց այս դեպքում ասում են **չարթվուշ** – ջարդվել:

387. Շտապել – **խարաթ էնուշ:**
Շտապում էր տուն:
Սօնի – մօնի դուննիտուս գերթար:
Արագ–արագ դեպի տուն էր գնում:

Տվյալ դեպքում ասում են **մօնի–մօնի** – արագ–արագ:

388. Շփոթվել –
Ինձ տեսնելիս շփոթվում է:

389. Հանդիպել – **ռաստ էգուշ:**
Փողոցում հանդիպեց ընկերոջը:
Թէռանը ռաստ էյէվ (էէվ) էնգէջը (արդ.՝ **էնգիյօջը**):

Փողոց բառը այս դեպքում չեն օգտագործում, այլ ասում են **թէռանը**, այսինքն՝ դռանը, դրսում: **Փօղօց** ասում են կիրճի, խորը ձորի հատակով կամ բլուրների ստորոտների միջով անցնող ճանապարհին:

390. Հայտնել – **իմացնուշ, խաբար դէվուշ:**
Նրան հայտնեցին որդու գալը:
Անէր իմացուցին դարդին էգուշը:

391. Կոպտել –
Իզուր կոպտեցիր, նա լավ մարդ է:

392. Անջատել – **առէթմիշ էնուշ:**
Կռվողներին անջատեցին:
Գէվօղնօուն (գավգա էնօղնօուն, յաար դէվօղ – նօուն) առէթմիշ ային (աին):

Կռվելուն ասում են նաև **յաար դէվուշ** – իրար տալ:
Առէթմիշ ային – ունի նաև իրարից բաժանեցին իմաստը:

393. Քարկոծել – **քարցօղեցուշ** (արդ.՝ **քայցօղեցուշ**), **քարցքուշ:**
Քարկոծեցին շանը:
Քարցօղեցին (արդ.՝ **քայցօղեցին**) **շօնը:**
Շօնը քարբաս ային (աին):

394. Մեծանալ – մեծընուլ:
 Գյուղը մեծացել է: Երեխան մեծացավ:
 Կյաղը մեծընցած ա: Դաղան մեծընցավ:
395. Փափկել – փափուլիզնուլ:
 Հողը փափկել էր:
 Հօղը (խօղը) փափուլիզցած էր:
396. Սպիտակել – ջերմեգուլ:
 Մագերը սպիտակել էին:
 Մազիյէ ջերմեգցած էնի:
 Պապի մագերը ճերմակեցին:
 Բօբուն մազիրը (մազիյէ, մազիր) ջերմեգեցան
 (ջերմեգեցոն):
397. Փայլփլել – բեսպաղտուլ:
 Մատանին փայլփլում էր արևից:
 Մաղնին աաքագուցէ բեսպաղտէ գուր:
- Բեսպաղտուլ – պսաղալ:**
398. Գցել – ցքուլ:
 Քարը գցեց փոսի մեջ:
 Քաղ (քարը, արդ.՝ քայր) նեցքեց գույինիվա:
399. Սայթաքել – սաղվուլ, սահուլ:
 Ոտքը սայթաքեց ու վայր ընկավ:
 Օտքէ սաղվեցավ (սահեցավ) ու էնգավ (խեչեցավ):
- Սղալ, սայթաքել – սաղվուլ:
 Սահել – սահուլ:
400. Ցատկել – տուս թեռնուլ:
 Փոսի վրայով ցատկեց:
 Տուս թեռավ գույին վաանինէ:
 Ցատկեց առվի վրայից:
 Տուս թեռավ հարգին վաանինէ:
 Ցատկեց կամրջից:

Տուս թեռավ կարմունջան:
 Ցատկեց փոսի մեջ:
Տուս թեռավ գույինիվա:

Գուլ – փոս:

401. Գլուխկոնծի – կըլխու վաա տառնուլ, թալվելուլ:
 Երեխաները կանաչների վրա գլուխկոնծի են տալիս:
 Դաղաքը խօղօուն վաան կըլխեճօուն վաան
 տառնա գուն:
 Դաղաքը խօղօուն վաան թալվելի գուն:
- Թալվելուլ** թեև նշանակում է թավալվել, բայց օգտագործվում է նաև գլուխկոնծի տալ իմաստով:
 Խոտին կանաչ չեն ասում:
402. Կքել – գեռեջուլ, գըռօջուլ:
 Նա կքեց:
Ան գըռօջեցավ:
403. Պպգել – գեձգուլ:
 Պպգել էր կրակի մոտ:
Գեձգած էր գիյագին (գիագին) մօդէ:
- Գեձգուլ** նշանակում է նաև կծկվել:
404. Թիկնել – յան էգուլ:
 Թիկնել էր բարձին:
 Յան էգած էր փարցին (պարցին) (յաստուղին,
 յաստօղին):
 Փարցի (պարցի) (յաստուղի, յաստօղի) վաան
 յան էգած էր:
- Փարց, պարց, յաստուղ, յաստօղ – բարձ:**
405. Հագնել – հաքուլ, հաքուսվիուլ:
 Շորերը հագավ:
Շիյէ հաքավ (հաքուսվիեցավ):
- Հաքուսվիուլ – հագնվել:**

406. Չարդարել – դուզնուշ, սուսնուշ, էրօնդցնուշ:

Նորահարսին զարդարեցին:

Նօարսին դուզնեցին:

էրօնդցնուշ – ավելի շատ ունի գեղեցկացնել իմաստը:

407. Կոճկել – խաչնուշ, խաշնուշ (դաշնուշ):

Հագուստի կոճակները կոճկեց:

Շէին (շօրին, արդ.՝ շօյին) սաղաֆնիյէ խաչնեց (խաշնեց, դաշնեց):

Սաղաֆ – կոճակ:

Կոճակները արձակելուն ասում են սաղաֆնիյէ քագուշ:

408. Պառկել – բառգուշ:

Պառկեց քնելու:

Բառգեցավ քուն էլլուշի (քուն մեղնուշի) հոմա:

409. Առողջանալ – շիդգուշ:

Հիվանդը առողջացավ:

Հիվօնդէ շիդգեցավ:

Լավանալ բառը չեն օգտագործում, բայց, երբեմն, մեծահասակները ասում են հիվօնդը լավցավ – հիվանդը լավացավ: Կամ հարցնում են – խօցեդ լավցա՞վ թա – վերքդ լավացա՞վ:

Առողջանալուն ասում են նաև բեդքընուշ:

410. Գրկել – օնթուշ:

Մայրը գրկեց երեխային:

Մաը (մարը, արդ.՝ մայը) դաղին օնթեց:

Օնթեց նշանակում է գրկեց, գիրկն առավ և ավելի հարմար է բարուրի կամ փոքր երեխայի դեպքում:

411. Տրորել – աջերուշ:

Մեջքս տրորիր:

Լերթս աջերա:

Մեջքս քորի:

Լերթս քիյա:

Քորել – քիյուշ:

412. Համբուրել – բաչ էնուշ:

Մայրը համբուրեց տղային:

Մաը (մարը, արդ.՝ մայը) դաղին բաչ աավ:

413. Ամուսնանալ – գարքեվուշ, առնուշ:

Տղան ամուսնացել է:

Դաղան գարքեված ա:

414. Նվագել – չալուշ:

Նա քեմենչե նվագել չի կարող: Ձուռնա էր նվագում:
Ան քեմենչե չալուշ (դեվուշ) չի գաա: Ձիբու փեչա (փըչա) գուր:

Դեվուշ – տալ, հարվածել, այստեղ օգտագործված է նվագել իմաստով:

Ձիբու – փոքր զուռնա:

Փեչա (փըչա) գուր – փչում էր, նվագում էր:

415. Ջբոսնել – բեդեդուշ, մօն էգուշ:

Ջբոսնում էր դաշտում:

Արդին բեդեդ գուր:

Նա գնաց Ջբոսնելու:

Ան քենաց մօն էգուշ:

Արի Ջբոսնենք:

Հայդէ մօն էգուշ:

Մօն էգուշ նշանակում է նաև փնտրել:

Կրոնափոխ համշենցիներն ունեն հետևյալ ասացվածքը.

«Բեդեդօղ թիլքին բարգած թիլքիցան քյարլի ա»:

«Պատող (շրջող, զբոսնող) աղվեսը պառկած աղվեսից ավելի շահող է»:

416. Գնալ – երթուշ:

Գնում է հարսանիք:

Գերթա հարսնիք (արդ.՝ հայսնիք):

417. Հոգնել – թաթրուշ:

Շատ աշխատելուց հոգնեց:

Շաղ տադուշան թաթրեցավ:

418. Թաքնվել – բարվուշ:

Երեխան թաքնվել էր թախտի տակ:

Դաղան սավքիին դագե բարված էր:

Ես ոստիկաններից թաքնվեցի:

Յես բարվեցա (թաքա) մելիցիացան:

Թախտ բառը նրանց անծանոթ է, ասում են **սավքի**, որը 4–5րմ ուղղանկյուն կամ քառանկյուն, ճաղաշար եզրերով փայտե կամ մետաղե բարձր թախտ է - սաքու:

Միլիցիա բառը օգտագործում են նախկին ԽՍՀՄ հանրապետություններում բնակվող կրոնափոխ համաձայնիները:

419. Նայել – փութ էնուշ, սեր էնուշ:

Նայում էր շան ծագերին:

Փութ գեներ լագօտնօուն:

420. Որոնել – մօն էգուշ:

Շատ փնտրեց, բայց չգտավ:

Շաղ մօն էյել (էէվ), ամա քեղավ օչ:

Նա գնաց զբոսնելու:

Ան քենաց բեդեդուշ:

Բեդեդուշ – պտտվել, զբոսնել:

Սօն էգուշ նշանակում է նաև զբոսնել:

421. Գտնել – քեղնուշ:

Կովը կորել էր, գտան անտառում:

Գօվե գօրսըված էր (գայիբ աղած էր), ցախուդին քըդօն (կըդօն):

Գայիբ մարթ – կորած մարդ:

Գայիբ աղավ – կորավ:

422. Խաղը շահել – ախթուշ, խաղե առնուշ:

Նարդի խաղացից, ընկերս շահեց:

Թավլա խաղցաք, էնգերս ախթեց (խաղե առավ):

Ախթուշ – հաղթել:

Թավլա – նարդի:

423. Կառուցել – շինուշ:

Տուն է կառուցում:

Դուն շինա գու:

424. Փաթաթել – փաթթուշ:

Կանայք դուժա էին փաթաթում:

Գենդիգե սարմա փաթթե (փաթթի) գունի:

Նրանց դուժան պատրասվում է բանջարեղենը՝ պոմիդորը (լուլիկը), պղպեղը, բադրիջանը մսով լցոնելով, այդ իսկ պատճառով ասում են «**դօլման լեցվի գու**»: Իսկ խաղողի տերևով փաթաթված դուժային ասում են **սարմա**:

425. Ծեծել – ձեծուշ:

Հայրը ծեծեց երեխային:

Դաղե դաղին ձեծեց:

Դաղ – հայր:

426. Հարվածել – դեվուշ, շեփեցուշ:

Մուրճով հարվածեց քարին:

Չաքուջօվե քաին (արդ.՝ քային) դեվեց:

Դեվեց – տվեց, հարվածեց:

Շեփեցուշ – խփել, շրմփացնելով հարվածել:

427. Չաղկել – լեմուշ:

Վերմակի բուրդը ծաղկեց:

Յօդօնին փուրթե լեմեց:

Բուրդը ճիպոտով ձաղկելուն, ճիպոտելուն ասում են նաև **թախգուշ** – թխկացնել, **փուրթ քերքուշ** – բուրդը քրքրել:

428. Հրել – ուուս դելուշ:

Երեխային հրեց ու ցած գցեց:

Դադին ուուս դելեց ու վար ցքեց:

429. Պատռել – բադեռուշ, ցելուշ:

Թուղթը պատռեց:

Թուխթ բադեռեց (ցելեց):

Բադեռուշ – երբեմն օգտագործում են նաև պայթել իմաստով:

430. Խայթել – խածուշ:

Նրան օձը խայթեց: Մեղուն խայթեց: Շունը կծեց:

Անու օգե խածեց: Մաղուն խածեց (գիջեց): Շունը խածեց:

Գիջ – կիճ, մեղվի խայթոց:

Խայթոցով՝ կիճով (**գիջով**), խայթելու, խայթոցը մարմինը մտցնելու իմաստով ասում են **խօթուշ** – խոթել, **խօթեց** – խոթեց:

Խածուշ – խածել, կծել:

Գիջեց – կիճով խայթեց:

431. Ցրել – ցերքուշ, ցօնուշ:

Ավազը ցրեց բակում: Ավազը ցրեց գետնի վրա:

Ավազե (գումե) ցերքեց (ցօնեց, վաթեց) թեռնե (խօղի վաան):

Ավազե (գումե) ցերքեց (ցօնեց, փեռեց) հօղի (խօղի) վաան:

Ցերքուշ – ցրել, շաղ տալ:

Ցօնուշ – ցանել, սերմել, սփռել, ցողել:

Վաթուշ – թափել, **վաթեց** – թափեց, ավելի շատ օգտագործվում է հեղուկ թափելու դեպքում:

Փեռուշ – փռել, **փեռեց** – փռեց:

432. Բռնկվել – փեռնուշ, լուցուշ, քօլթվուշ:

Կրակը միանգամից բռնկվեց:

Գիյազե էմմեդինա փեռնեց:

Փեռնեց նշանակում է կրակը բռնեց, կպավ, բռնկվեց:

Լուցուշ ևս նշանակում է բռնկվել, միանգամից այրվել:

Քօլթվուշն ունի բոցավառել, կրակն ուժեղացնել իմաստը:

433. Բարկանալ – սերդեռուշ (արդ.՝ սեյդեռուշ):

Հորեղբայրս բարկացավ:

Հօպարես (արդ.՝ հօպայես) սերդեռեցավ (արդ.՝ սեյդեռեցավ):

Սերդեռելն (արդ.՝ սեյդեռել) ունի նաև նեղանալ, խռովել, նեղսրտել իմաստը:

434. Հայիոյել – քերֆուշ, սօգմիշ ընուշ:

Պապը հայիոյեց:

Բաթե քերֆեց (սօգմիշ աավ):

435. Բամբասել – մուզիթուն ընուշ:

Հարսը բամբասում էր:

Հարսը (արդ.՝ հայսը) մուզիթուն գեներ:

436. Ձեռ(ք) բաշել – վազ օնցուշ:

Այդ գործից ձեռ բաշիր:

Ադ (իդա) պօնան վազ օնցի:

437. Խոսել – խօսուշ, խաբրուշ, խարբուշ:

Ի՞նչ ես խոսում:

Ի՞նչ խօսե (խօսի, խաբրե, խարբե) գուս:

438. Ծիծաղել – ձիծաղուշ:

Մորաքույրս շատ էր ձիծաղում:

Մօրքուրս (արդ.՝ մօյքույս) շադ ձիծաղե գուր:

439. Ջգվել – սիրդե թառնուշ:

Տատս զգվում էր մկներից:

Մօմիս սիրդե (արդ.՝ սիյդը) մուգօուն թառնա գուր:

440. Խռովել – սերդեռուշ:
Ամեն դատարկ բանից խռովում է, հետս չի խոսում:
**Էմմեն բօշ պօնի հօմա ինձմա սերդեռի (արդ.՝ սեյ-
դեռի) գու, ինձի հեդ խօսի չի:**

Սերդեռուշ (արդ.՝ սեյդեռուշ) նշանակում է նաև գայրա-
նալ, նեղսրտել, նեղանալ:

441. Ուշաթափվել – օսմէթուդ էլլուշ:
Վախից ուշաթափվեց:
Վախան (վախեց) օսմէթուդ աղավ:

442. Հորինել –
Դու շատ ես սիրում հորինել:

443. Երես առնել – խաղացնուշ:
Երեխան շատ է երես առել:
Դաղան շաղ խաղած ա:

444. Խելագարվել – խելըռուշ:
Վշտից խելագարվեց:
Դարդան խելըռեցավ:

445. Թարախակալել –
Վերքը թարախակալել է:

446. Թունավորել – տաղուշ:
Կախարդը թունավորեց թագավորի աղջկան:
Չաղուն փաղիչահին ախչըկօնե տաղեց:

Տաղուշ – դեղել, այսինքն՝ թունավորել:

447. Փսխել – փեսխուշ:
Հարբած մարդը փսխեց:
Սարխօշ մարթե փեսխեց:

448. Սատկել – սադգուշ:
Սենյակում մուկ է սատկել:
Հօղային մուգ սադգած ա:

449. Միզել – շեռուշ:
Երեխան միզեց: Կովը միզեց: Շունը միզեց:
Դաղան շրոեց: Գօվը շրոեց: Շունը շրոեց:

450. Այժմ – հիմի:
Այժմ ու՞ր ես գնում:
**Հիմի նօ՞ր (նօ՞) (արդ.՝ նօ՞յ) գերթաս (արդ.՝ գեյ-
թաս):**

451. Վաղը – հեքուց:
Փեսան վաղը գալու է:
Էնիշտան հեքուց էգօղ ա:

Մեծահասակները գիտեն **փեսա** բառը, բայց հազվադեպ
են օգտագործում:

452. Վաղը չէ մյուս օրը – մեգալ օր (արդ.՝ օյ):

453. Եհշտ – շիղագ:
Որսորդը ճիշտ էր ասում:
Ավջին շիղագ գասեր:

454. Գաղտնի – քաղդուց, խալվութ, թաքչելօվ:
Գաղտնի հեռացավ տնից:
Քաղդուց (խալվութ, թաքչելօվ) դօնան քենաց:

Թաքչելօվ նշանակում է թաքնվելով, իսկ **խալվութ՝**
ծածուկ:

455. Դարծյալ – ալի:
Դարծյալ ձյուն եկավ:
Ալի ցուն էյեվ:

456. Չուր, իզուր – սուր տաղէ, սուդ դաղէ:
Չուր ես խոսում, նա քեզ չի լսում:
**Սուր տաղէ (սուդ դաղէ) խաբրե գուս, ան քեզի
օնգուչ թենէ չի:**

457. Կարծես – թաքիդիմ, թաքիդում, գիդես քի:
Կարծես մեկ հոգի է զալիս:
Թաքիդիմ (թաքիդում, գիդես քի) մեզ հոցի մե կուկա:

458. Ներքև – ներքվ (ներքեվ, արդ.՝ ներքեվ):
Տանիքից իջան ներքև:
Չաճուզան ներքվ (ներքեվ, արդ.՝ ներքեվ) ինչան:

Չաճուզ, մակաս – տանիք:
Ավելի հաճախ **ներքեվ ինչավի** փոխարեն ասում են **վար** (արդ.՝ վայ) ինչավ:

459. Ամեն, ամենքը – էմմեն, էմմենքը:
Ամեն մարդ, ամեն տեղ, ամեն գիշեր: Ամենքը եկան:
էմմեն մարթ, էմմեն դաղ, էմմեն քիշեր: էմմենքը է-գին:

460. Ո՞վ – վօ՞վ:
Ո՞վ ասաց:
Վօ՞վ ասաց:

461. Ինչպե՞ս – ինչքե՞ս:
Ինչպե՞ս ես: – Լավ եմ:
Ինչքե՞ս ես: – Բեդք իմ:

Բեդք իմ նշանակում է լավ եմ և մեծավ մասամբ օգտագործվում է «ինչպե՞ս ես» հարցին ի պատասխան, իսկ **սոյ** – լավ բառը կիրառվում է այլ դեպքերում:

462. Ինչու՞ – ինչի՞:
Ինչու՞ չես խոսում:
Ինչի՞ խօսի չես:

463. Ու՞ր – նօ՞, նօ՞ր (արդ.՝ նօ՞յ):
Ու՞ր ես գնում:
Նօ՞ (նօ՞ր) գերթաս (արդ.՝ նօ՞յ գեյթաս):

464. Այսպես – իսու բես:

Այդպես – իդու (ադու) բես:
Այնպես – ինու բես:

465. Այստեղ – հօզա:

Այդտեղ – հօդա:
Այնտեղ – հունա:

466. Անգամ – դօնում:

Մի անգամ աշնանը որսի գնացինք:
Մեզ դօնումե աշունե ավջիլուդա քենացար:

467. Այնուհետև – անդի հեդեվ:

Հանգստացան, այնուհետև ճաշեցին:
Թաթրիթուն (թաթրեթուն) առին, անդի հեդեվ ջաշ կիյան:

468. Առջև – առչեվ, առչեթ:

Դռան առջև նստել էր մի ծերունի:
Թեռօնե առչեվը մեզ հալիվօր (արդ.՝ հալիվօյ) մե նեստած էր:

469. Համար – ամա, հօմա:

Ինձ համար, քեզ համար, եղբոր համար:
Ինձի ամա (հօմա), քեզի ամա (հօմա), ախաօյ ամա (հօմա):

470. Միասին – հեդրա:

Միասին հունձ էին անում:
Հեդրա խօդ բիչմիշ գենենի:

471. Մինչև – ինչակ:

Գնացին մինչև անտառ:
Ինչակ ցախուդ քենացին:
Մինչև չասես՝ բաց չեմ թողնի:
Ինչակ ասես օջ՝ յետ թողջ չիմ:

472. Սոս – մօդ:

Կանգնած էր ծառի մոտ:

Գունգած (գօնգած) էր ծառի մօդ:

473. Փոխարեն – դադ:

Իմ փոխարեն դու գնա:

Իմ դադես թուն քննա:

474. Բացի –

Քեզնից բացի ոչ մեկը չունենմ:

475. Ափսոս –

Ափսոս, ծառը չորանում է:

476. Ահա – ահան, ըհըն:

Ահա եկավ:

Ահան (ըհըն) էյեվ:

477. Իբր թե – գիդես թա:

Շունչը պահում է, իբր թե մեռած է:

Շունչէ բահի (բահա) գու, գիդես թա մեռած ա:

478. Լինում է, չի լինում – գելլա – էլի չի:

ԲԱՌԻՄԱՍՏԱՅԻՆ ՉՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

Ադդ – 1. ադտ, կեդտ: 2. ցեխ:

Ադիմ – 1. եղամ: 2. սառույց:

Ադուն – 1. կարիճի խայթոց: 2. արյուն: 3. աղալու համար նախատեսված հացահատիկ՝ ադուն:

Ամնուշ, օմնուշ – 1. ծածկել: 2. վրան քաշել: 3. որևէ նյութով կամ լաթով պատել՝ լաքապատել:

Առուշ – 1. առնել: 2. վերցնել: 3. գնել: 4. ամուսնանալ:

Ավելի – 1. ավելի: 2. ավելորդ: 3. շատ: 4. մնացորդ: 5. անպետք:

Ավիրուշ, ավելուշ (արդ.՝ ավիյուշ, ավէյուշ) – 1. ավերել: 2. քանդել: 3. քնջել: 4. կործանել:

Ավելուսք – 1. ավելցուկ: 2. աղբ:

Արդ (արդ.՝ այդ) – 1. արտ: 2. դաշտ:

Բադեռուշ, պադեռուշ – 1. պատռել: 2. պայթել:

Բազար (արդ.՝ բազայ) – 1. շուկա: 2. կիրակի:

Բադինձ – 1. պղինձ: 2. պղնձն մեծ կաթսա:

Բէդ էնուշ – 1. սպասել: 2. մնալ: 3. հսկել: 4. հուսալ:

Բուդրուդիգ – 1. պուտպուտիկ, պտավոր: 2. պեպենոտ:

Բօբօլ – 1. որդ, ճիճու: 2. բլոճ, միջատ:

Գած – 1. կայծ: 2. կայծակ:

Գէփչուշ, գէրուշ – 1. կաշել: 2. մի գործի կաշել: 3. ձեռնարկել: 4. սկսել:

Գունչուլ – 1. դեզ: 2. կույտ:

Գօբիդ – 1. կոպիտ: 2. դիմացկուն: 3. ամուր:

Գօգուշ – 1. կոկել, կոկիկացնել: 2. կարգի բերել: 3. հավաքել:

Գօդրուշ – 1. կոտրել, ջարդել: 2. մանրել:

Գօթ – 1. կովկիթ: 2. հացահատիկ չափելու փայտե աման՝ կոտ:

Գօնգնուշ – 1. կանգնել: 2. դադարել:

* «Չայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրում» 479–559–րդ համարներում տրված են բառային զուգաբանությունների օրինակներ: Խոփայի խոսվածքում առկա բառիմաստային զուգաբանություններին ծանոթացնելու նպատակով ներկայացնում են ինձ հանդիպած բառային զուգաբանությունների մի մասը՝ 130 օրինակ:

Գօռչուշ – 1. գոռալ: 2. կանչել:
Դալ – 1. ճյուղ: 2. նոր սերունդ:
Դալիք – 1. տալիք, տալու գումար, պարտք: 2. գին, փոխարժեք:
Դաղա – 1. երեխա: 2. արու զավակ:
Դեվուշ – 1. տալ: 2. խփել: 3. հարվածել: 4. ծեծել: 5. ամուսնացնել:
Դիգ – 1. տիկ: 2. պարկապզուկ:
Ձենգզենգուշ – 1. զնգզնգացնել: 2. ատամներն իրար խփել:
Էգուշ – 1. գալ: 2. ժամանել: 2. տեղ հասնել:
Էղեվ էնգուշ – 1. հետևից ընկնել: 2. թշնամանալ:
Էնգուշ – 1. ընկնել: 2. կործանվել:
Էնջամ – 1. արդյունքում: 2. գործի ավարտին: 3. այնժամ:
Էրգեն – 1. բարձրահասակ: 2. երկար:
Էրգենուշ – 1. երկարել: 2. մեկնվել, շորերով պառկել:
Էփուշ – 1. եփել: 2. թխել:
Թաաք – 1. դարակ: 2. սենյակում, պատի մեջ թողած, առանց փեղկերի պահարան:
Թառնուշ – 1. դառնալ: 2. վերադառնալ: 3. շուռ գալ: 4. դավանափոխվել: 5. պտտվել:
Թացօն – 1. ջրալի կերակուր: 2. աղանդեր: 3. ուտելիքի վրա լցվող թանձրուկ: 4. կաթնամթերք:
Թեգ – 1. դեգ: 2. շուտ: 3. արագ: 4. շտապ:
Թեթեվ – 1. թեթև: 2. թեթևտոլիկ:
Թեթեվուշ – 1. թեթևանալ: 2. հանդարտվել: 3. անլրջանալ:
Թեռցենուշ – 1. թռցնել: 2. վռնդել, դուրս գցել: 3. խմբից հեռացնել: 4. վազեցնել:
Թիբնուշ – 1. դիպչել: 2. կռվել:
Թօթուղուշ – 1. նետել: 2. գցել:
Թօղուշ – 1. թողնել: 2. դողալ:
Թօնդիր, թունդիր – 1. թոնիր: 2. բակում պատրաստված աղյուսե վառարան:
Ժածգելուշ – 1. շարժվել: 2. մի բան անել: 3. մի գործով զբաղվել:
Իմանուշ – 1. լսել: 2. իմանալ:
Լաղջուշ – 1. լղճել: 2. պլոկել:
Լենուշ – 1. դաջել: 2. ձաղկել, ճիպոտահարել: 3. ծեծել:

Լեցվուշ – 1. լցվել: 2. կուտակվել: 3. ամբողջանալ:
Լիլիկ, լիլիգ – 1. լլիկ, պոմիդոր: 2. կլորիկ: 3. կլոր հատապտուղ:
Խաթ – 1. ծալ: 2. կնճիռ:
Խալէսուշ – 1. փրկվել, ազատվել: 2. վերջանալ:
Խախալ – 1. տխմար: 2. թույլ: 3. տագնապալից:
Խաղ – 1. խաղ: 2. քառատող երգ՝ խաղ: 3. պար:
Խաղուշ – 1. խաղալ: 2. պարել: 3. երգելով պարել:
Խաչնուշ, խաչնուշ, դաչնուշ – 1. փակել (դուռը, պատուհանը և այլն): 2. կոճկել:
Խառնուշ – 1. խառնել, խառնշտորել: 2. խառնվել: 3. շփոթել:
Խենդուշ – 1. խնդալ: 2. ուրախ ապրել:
Խեչուշ – 1. փլվել: 2. ընկնել:
Խմուշ – 1. խմել: 2. ծխել:
Խուլաք – 1. հյուսք: 2. հյուս: 3. հյուսվածք: 4. խուրձ:
Խուս – 1. ալյուրի և ջրի խառնուրդով պատրաստված զանգված՝ խյուս: 2. ուղեղ:
Խօզ – 1. խոզ: 2. վատ:
Խօխօլ – 1. մացառ: 2. խճճված մազեր:
Հարս (արդ.՝ **հայս**) – 1. հարս: 2. ազգականի կին: 3. կին: 4. տագերկին:
Հեղէնգուշ – 1. հետը ընկնել: 2. վիճել:
Հօմայիլ – 1. վզնոց, որը ոչ միայն զարդ է, այլև, ըստ հավատալիքների, ունի չարխափան ուժ, ազատում է չար աչքից, փորձանքից, հիվանդություններից: 2. մոլլայի գրած չարխափան գիր՝ հմայագիր – համայիլ, հմայիլ:
Ձիլ – 1. բույսի ծիլ: 2. հեղուկի բարակ շիթ:
Ձօնդր, զօնդր – 1. ծանր: 2. հղի:
Մագաամ, մագա – 1. ըստ երևույթին, զուցե: 2. մի՞թե: 3. բայց-կայնպես: 4. ուրեմն: 5. պարզվում է:
Մաղղաշ – 1. մատղաշ: 2. դեռատի: 3. նոր:
Մաղարա – 1. քարայր: 2. որջ:
Մարթ (արդ.՝ **մայթ**) – 1. մարդ: 2. ամուսին:
Մեգհաղիգ – 1. մեկ հատիկ: 2. միամորիկ, ծնողների միակ զավակը:
Մելմէլուշ – 1. թեթև ծուխ բարձրանալ: 2. հանդարտ գեփյուռ փչել: 3. առկայծել:

Միդք – 1. միտք: 2. հիշողություն:
Մտզփնուշ – 1. մտտեմալ: 2. մտերմանալ:
Մտիք – 1. մտտիկ: 2. մերձավոր:
Մօն էզուշ – 1. փնտրել, որոնել: 2. զբոսնել:
Մեքելչուշ – 1. կպչել: 2. կառչել: 3. անհանգստացնել:
Նեխքեվ, նեքեվ (արդ.՝ նեյքեվ) – 1. ներքև: 2. ցածր: 3. տակ:
 4. ցածրոգի:
Նիյելլուշ – 1. մխրճվել, խրվել: 2. սուզվել:
Նօ, նօր (արդ.՝ նօյ) – 1. նոր: 2. ուր:
Ներքուշ – 1. նորոգել: 2. կրկնել: 3. ասածը հիշեցնել:
Շերեմփա – 1. սնունդ և խմիչք պահելու պահարան: 2. մթերք
 պահելու սենյակ:
Շիդզուշ – 1. առողջանալ: 2. ուղղել:
Շինուշ – 1. շինել: 2. կառուցել: 3. պատրաստել:
Շունչ – 1. շունչ: 2. շնչավոր: 3. անձ:
Շօղվուշ – 1. խմոր հուսցել: 2. շաղախել:
Շօր (արդ.՝ շօյ) – 1. շոր: 2. գործվածքի կտոր:
Չարթեվուշ (արդ.՝ չայթեվուշ) – 1. ջարդվել, կտորվել: 2. հոգ-
 նել: 3. մարմնի մասերը ցավալ:
Ջիջու – 1. ճիճու: 2. անձրևորդ: 3. աղիք:
Սազ – 1. սազ (նվագարան): 2. ճահճամարգագետին:
Սաղօն – 1. խորը ափսե: 2. սրահ, սալոն:
Սայի – 1. հեղին: 2. գլխակապ:
Սել – 1. սայլ: 2. սելավ, հեղեղ: 3. ուժեղ անձրև:
Սեվնուշ – 1. սևանալ: 2. կապտել:
Սերդեուշ (արդ.՝ սեյդեուշ) – 1. գայրանալ: 2. վիրավորվել:
 3. խռովել:
Սիրդ (արդ.՝ սիյդ) – 1. սիրտ: 2. ռիս: 3. գայրույթ:
Սիրդե թառնուշ – 1. սիրտը հետ տալ, փսխել: 2. զզվել:
Վայի – 1. վայրի, 2. վրայի:
Վաիդիք – 1. վարտիք: 2. փոխան:
Վայր թեմուշ (արդ.՝ վայ թեմուշ) – 1. վայր դնել: 2. մի կողմ
 թողնել: 3. պահել:
Վեեվ – 1. վերև: 2. բարձր:
Վեր թեչուշ – 1. վեր թռչել: 2. ցատկել: 3. ուստնել:
Վիյանուշ – 1. վերհանել: 2. արթնացնել: 3. բարձրացնել:

Վիյելուշ – 1. վեր ելնել: 2. ոտքի ելնել: 3. վեր կենալ, արթնա-
 նալ:
Տաղ – 1. դեղ: 2. թույն:
Ցախ – 1. ցախ: 2. անգործածելի իրեր:
Ցեվուշ – 1. ձևել: 2. պատառոտել: 3. ճանկռել:
Ուուշուշ – 1. որոշել: 2. ընտրել: 3. ընդեղեն մաքրել:
Փաագնուշ – 1. բարակել: 2. նիհարել:
Փարց, պարց – 1. բարձ: 2. բարձր:
Փելուցք – 1. փլվածք: 2. խորխորատ:
Փելուշ – 1. փչել: 2. փողային նվագարան նվագել:
Փեռեվուշ – 1. բռնվել: 2. ձերբակալվել:
Փեռնուշ – 1. բռնել: 2. բռնկվել: 3. ձերբակալել: 4. որսալ:
Փօցխօլուշ – 1. փոցխել: 2. ճանկռել:
Քաշուշ – 1. քաշել: 2. ձգել: 3. դուրս բերել: 4. ներծծել: 5. տա-
 ռապել: 6. աղջիկ փախցնել:
Քել – 1. վատ: 2. հիվանդ:
Քելութին – 1. վատություն: 2. հիվանդություն:
Քիդանուշ – 1. գիտեմալ: 2. հասկանալ: 3. լսել: 4. տեղեկաց-
 վել:
Քօզնօց – 1. զոզնոց: 2. կիսաշրջագգեստ:
Քօլթեվուշ – 1. բոցավառել: 2. կրակը ուժեղացնել: 3. շիկաց-
 նել:
Քօվուշ – 1. գովել հանգուցյալին: 2. ողբալ: 3. մահախոսա-
 կան ասել: 4. բարձրածայն սգալ:
Օբօլ էնուշ – 1. թողնել: 2. դուրս գցել: 3. պահ տալ:
Օմնուշ, ամնուշ – 1. ծածկել: 2. վրան քաշել: 3. որևէ նյութով
 կամ լաքով պատել՝ լաքապատել:
Օմուր (արդ.՝ օմույ) – 1. ամուր: 2. ժլատ: 3. թունդ:
Օնգուշ դնուշ – 1. ականջ դնել: 2. լսել: 3. ընկալել:

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՉՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երբ խոփայի խոսվածքի կրողներին հարցնում ես որևէ բառի եզակին կամ հոգնակին, անպայման ասում են որոշիչ հոդով: Կարիք է լինում բացատրել, որ խոսքը հենց այս, ծանոթ առարկայի մասին չէ:

Հոգնակիի կազմությունը ևս կանոնակարգված չէ, հաճախ նույն բառը կարող է տարբեր հոգնակիներ ունենալ: Ներկայացնում են Միջին Ասիայի և խոփայի գավառի կրոնափոխ համշենցիներից գրառված մի շարք բառերի հոգնակիները, ինչպես նաև NN 560-568-ում ընդգրկված բառերը և նրանց հոգնակիները՝ որոշիչ հոդով:

560. Բազմավանկ բառերի հոգնակիի կազմությունը՝
աղբյուրներ – ախպորնիր, ախպօրեր:
աղիքներ – ջիջվենի, ջիջունիր, ջիջուներ:
ամաններ – օմնենի, օմաններ, օմօններ, օմմօննի,
օմենդաք:

անուններ – օնուննի, օնուններ:
արջառներ – աչեռնի, աչառնի, աչառներ:
բանջարներ – պօնջերնի, պօնջարեր:
բերաններ – պեյնենի, պիաննիր, պիյաններ:
գիշերներ – քիշերնի, քիշերնիր, քիշերներ:
գոմեշներ – ջոմիշնիր, ջոմիշներ:
դանակներ – թենգնենի, թենագնիր, թենագներ:
երեսներ – էեսնի, էեսնիր, էեսներ:
ընկերներ – էնգերնի, էնգերնիր, էնգերներ, էնգերդաք:
իլիկներ – իլիգնի, իլիգներ:
խնձորներ – խենձօրնի, խենձօրնիր, խենձօրներ:
ծաղիկներ – ձախգենի, ձաղիգներ:
կամուրջներ – գարմէչնի, գարմուչնիր, գարմուչներ:
կացիներ – գացիներ, գացնենի:
կորիզներ – դօյիզներ:
հավկիթներ – հավգիթնի, հավգիթներ:
ճնճղուկներ – ջինջուխնի, ջինջուխներ:
մոծակներ – մեջախնի, մեջախներ, մեջախնիր:
նապաստակներ – դաուշօններ:

շապիկներ – շաբգենի, շաբիգներ:
ոչխարներ – օչխարնի, օչխարներ, օչխարնիր:
ոսկորներ – օսկօրնի, օսկօրներ:
պառավներ – բառվենի, բառավներ:
ջրաղացներ – չախցքենի, չախացքներ, ձախացքնիր:
տախտակներ – դախդգենի, դախդգենի,
դախդագներ:

փետուրներ – թերուրնի, թերուրներ:
քաղաքներ – շահարնի, շահարեր:
տարիներ – դայիներ, դահնի:
փեսաներ – փեսաներ:
հայելիներ – այնենիներ, այնիներ:
կաշիներ – գաշինի, գաշիներ:
ածելիներ – ածելինի, ածելիներ:
բանալիներ – պօնլիքնի, պօլնիքնի, պօնլիքներ:
լեզուներ – լեզվենի, լիզուներ:
ածուներ – ածվենի, ածուքներ, ածուքնի:

561. Չայնավորով վերջացող բազմավանկ բառերի
հոգնակիի կազմությունը՝
եկեղեցիներ – քիլխտենի, քիլխտենիր, քիլխտեներ:
հոգիներ – հօքվենի, հօքիներ:
մատանիներ – մադնինի, մադնիներ:
որդիներ – օրթի դադաք:
քամիներ – քոմիներ:
քեռիներ – քերիդաք, քերինիր, քերիներ:
ակռաներ – ագրենի, ագռանիր, ագռաներ, ագռանիր:
գուլպաներ – կուրբենի, կուրբաներ, կուրբանի:
գաթաներ – քաթաներ:
ճամփաներ – ջոմփենի, ջոմփաներ:
կատուներ – գադվենի, գադուներ:
մեղուներ – մադվենի, մադուներ:

562. –վի –ով կամ նրանով բաղադրված հոգնակիի
առկայություն:
ականջներ – օնգուչնի, օնգուչնիր, օնգուչներ:
աչքեր – աչվենի, աչվիներ, աչվիներ:

արմունկներ – արմուզնի, արմուզնիր, արմուզներ:
 բերաններ – պէյնէնի, պիաննիր, պիյաններ:
 դռներ – թերվիք, թուռեր:
 եղունգներ – աղունքնի, աղունքեր:
 ծծեր – ձէձեր, ձիձեր:
 ծնկներ – ձէնգներ, ձէնգվէնի, ձունգեր:
 հոնքեր – էնքվէնի, էնքվիներ, էնքվինի:
 մատներ – մաղեր:
 շներ – շուներ, շըներ:
 շրթունքներ – բերթուքնի, բերթուքներ, բերվուքնի,
 բերվուքներ:
 ոտքեր – օտքեր:
 տերեր – դիրեր, դիրեր:
 տներ – դուներ, դէնիր, դէներ:

563. Միավանկ բառերի հոգնակի կազմությունը՝

ջրեր – չուրեր:
 տներ – դէներ, դուներ, դէնիր:
 փայտեր – փաղեր:
 խոտեր – խօղեր:
 գյուղեր – կյաղեր:
 քարեր – քարեր:
 ծառեր – ծառեր:
 փորեր – փօրներ, փօրեր:
 փոսեր – փօսեր:
 պատեր – բաղեր, բաղիր:
 գողեր – կօղեր:
 հավեր – հավեր:
 թելեր – թէլեր:
 թևեր – թէվեր:
 խաղեր – խաղեր:
 խոզեր – խօզեր:
 մազեր – մազեր:
 կովեր – գօվեր:

564. Միավանկ բառերի (հիմնականում կենդանիների անունների) հոգնակի կազմությունը՝

այծեր – ածեր:
 արջեր – արչեր:
 գայլեր – կյալեր:
 էշեր – էշշախնի, էշախներ, էշախեր:
 թիեր – թիեր:
 ձիեր – ցիեր:
 ուլեր – ուլներ, ուլեր:

565. Գրաբարյան բաղաձայն + ն վերջացող միավանկ բառերի հոգնակի կազմությունը՝
 բեռներ – փեռնի, փեռեր:
 գառներ – քարեր, քարներ:
 դռներ – թերվիք, թուռեր:
 թոռներ – թօռնիր, թօռեր:
 լեռներ – լէռեր, լէռուք, լէռնուք:
 ծնկներ – ձէնգներ, ձունկեր:
 հարսներ – հարսներ, հարսեր:
 մատներ – մաղեր:
 մկներ – մուգեր:
 նռներ – նուրեր:
 ոտներ – օտքեր:

566. Մեկուկես վանկանի բառերի հոգնակի կազմությունը՝
 աստղեր – աստախնի, աստախներ:
 ոսկրեր (ոսկորներ) – օսկօրնի, օսկօրներ:
 սանրեր – սօնդրեր:

567. Միավանկ վերջին բաղադրիչով բարդ բառերի հոգնակի կազմությունը՝
 հորաքույրներ – հօքերդաք, հօքիրնի, հօքուրներ:
 մորաքույրներ – մօքուրնի, մօքուրեր:
 քեռակիներ – քերեգիննի, քերեգիններ, քերեգիներ:

568. Հետևյալ բառերի հոգնակին՝
 ա. աղջիկ – ախչգէնի, ախչգէներ, ախչիգներ:
 բ. եղբայր – ախպերդաք, ախպարնի, ախպարեր,
 ախպարնիր:

գ. կին – գեղիքնի, գեհիգներ:
դ. մարդ – մարթիք, մարթեր:
ե. քույր – քույրեր, քույրերդաք, քուրեր:

**Քերականական զուգաբանություններ բաժնի
NN560–568–ու՛մ ընդգրկված բառերը և նրանց
հոգնակիները՝ հոդով**

Որոշիչ հոդով հոգնակիների դեպքում երկու
ծայնավորների միջև հնչող յ-ն (իյէ) կարող է սղվել (իէ):

աղբյուրները – ախպօրնիյէ (արդ.՝ ախպօյնիյէ):
աղիքները – ջիջունիյէ:
ամանները – օմօննիյէ, օմնէնիյէ, օմաննիյէ, օմէնդաքէ:
անունները – օնուննիյէ:
արջառները – աչառնիյէ (արդ.՝ աչայնիյէ):
բանջարները – պօնջարնիյէ (արդ.՝ պօնջայնիյէ),
պօնջարնիյէ:
բերանները – պիաննիյէ (արդ.՝ պիյաննիյէ):
գիշերները – քիշէրնիյէ (արդ.՝ քիշէյնիյէ):
գոմէշները – ջօմիշնիյէ:
դանակները – թէնագնիյէ:
երեսները – էեսնիյէ (արդ.՝ էյեսնիյէ):
ընկերները – էնգէրնիյէ (արդ.՝ էնգէյնիյէ), էնգէրդաքէ:
իլիկները – իլիգնիյէ:
խնձորները – խէնձօրնիյէ (արդ.՝ խէնձօյնիյէ):
ծաղիկները – ձաղիգնիյէ:
կամուրջները – գարմուչնիյէ (արդ.՝ գայմուչնիյէ):
կացիները – գացիննիյէ:
կորիզները – դօիզնիյէ, դօիսնիյէ:
հավկիթները – հազվիթնիյէ (արդ.՝ հավգիթնիյէ):
ճնճղուկները – ջիճջուխնիյէ:
մոծակները – մէջախնիյէ:
նապաստակները – դաուլօննիյէ:
շապիկները – շաբիքնիյէ, շաբգէնիյէ:
ոչխարները – օչխարնիյէ (արդ.՝ օչխայնիյէ):
ոսկորները – օսկօրնիյէ (արդ.՝ օսկօյնիյէ),
օսկօրվէնին:

պառավները – բառվէնիյէ (արդ.՝ բայվէնիյէ),
բառավնիյէ:

ջրաղացները – շախացքնիյէ, ճախացքնիյէ:
տախտակները – դախդագնիյէ, դախդգէնիյէ:
փետուրները – թէրուրնիյէ (արդ.՝ թէրույնիյէ):
քաղաքները – շահարնիյէ (արդ.՝ շհայնիյէ):
տարիները – դահնիյէ (արդ.՝ դայինիյէ):
փեսաները – փէսանիյէ:
հայելիները – այնէնիյէ:
կաշիները – գաշինիյէ:
ածելիները – աձէլինիյէ:
բանալիները – պօլնիքնիյէ, պօնլիքնիյէ:
լեզուները – լիզունիյէ:
ածուները – աձուքնիյէ:
եկեղեցիները – քիլիսէնիյէ:
հոգիները – հօքինիյէ, հօքվէնիյէ:
մատանիները – մաղնինիյէ:
որդիները – օրթի դաղաքէ:
քամիները – քօմինիյէ:
քեռիները – քէրինիյէ (արդ.՝ քէյինիյէ):
ակռաները – ագռանիյէ, արգանիյէ:
գուլպաները – կուռբանիյէ (արդ.՝ կույբէնիյէ):
գաթաները – քաթանիյէ:
ճամփաները – ջօմփանիյէ:
կատուները – գադունիյէ, գադվէնիյէ:
մեղուները – մաղունիյէ, մաղվէնիյէ:
ականջները – օնգուչնիյէ:
աչքերը – աչվէնիյէ, աչվինիյէ:
արմուկները – արմուզնիյէ:
դռները – թուռիյէ, թեռվիքը:
եղունգները – աղունքնիյէ:
ծծերը – ձիձիյէ:
ծնկները – ձունգիյէ:
հոնքերը – էնքվէնիյէ, էնքվինիյէ:
ծեռքերը – թէվիյէ:
մատները – մադիյէ:
շները – շնիյէ, շէնիյէ:

շրթունքները – բերբուքնիյ, բերվուքնիյ,
բերբուքվէնիյ:

ոտքերը – օտքիյ:

տերերը – դէյիյ, դիրիյ:

տները – դէնիյ, դունիյ:

ջրերը – չէիյ:

մսերը – միսիյ:

փայտերը – փաղիյ, փաղնիյ:

խոտերը – խօղիյ, խօղնիյ:

գյուղերը – կյաղիյ:

քարերը – քարիյ, քարնիյ:

ծառերը – ծառիյ, ծառնիյ:

փորերը – փօիյ, փօրնիյ:

փոսերը – փօսիյ:

պատեր – բաղիյ:

բահերը – թիիյ:

գողերը – կօղիյ:

հավերը – հավիյ:

թելերը – թէրիյ:

թևերը – թէվիյ:

խաղերը – խաղիյ:

խոզերը – խօզիյ:

մազերը – մազիյ:

կովերը – գօվիյ:

այծերը – ածիյ, ածնիյ:

արջերը – արչիյ, արչնիյ:

գայլերը – կյալիյ, կյալնիյ:

էշերը – էշախնիյ:

թիւերը – թիիյ:

ծիւերը – ցիիյ:

ուլերը – ուլիյ:

բեռները – պեռնիյ:

գառները – քարնիյ, կարնիյ:

թռուները – թռնիյ:

լեռները – լեռնիյ (արդ.՝ լէյիյ), լեռիյ, լեռնուք:

ծնկները – ծունգիյ, ծունքնիյ:

հարսները – հարսիյ (արդ.՝ հայսիյ), հարսնիյ:

մկները – մուգիյ:

նռները – նուռիյ:

աստղերը – աստախնիյ:

ոսկրերը (ոսկորները) – օսկօրնիյ:

սանրերը – սօնդրիյ, սօնդրնիյ:

հորաքույրները – հօքուրնիյ (արդ.՝ հօքույնիյ),
հօքէրդաք:

մորաքույրները – մօքուրնիյ (արդ.՝ մօքույնիյ):

քեռակիճները – քէրէգիննիյ (արդ.՝ քէյէգիննիյ):

աղջիկները – ախչիգնիյ:

եղբայրները – ախպարնիյ (արդ.՝ ախպայնիյ),
ախպէրդաք:

կանայք – գէնիգնիյ, գէնիքը:

մարդիկ – մարթիյ (մարդ – ամուսին իմաստով՝

մարթիգնիյ) (արդ.՝ մայթիյ,

մայթիգնիյ), մարթիք:

քույրերը – քուիյ (արդ.՝ քույիյ), քույրիյ:

583. Բացահական հոլովի արտահայտությունը՝

դօնան քենաց – տնից գնաց:

էշաղան էնգավ – էշից ընկավ:

ծառան էնգավ (խէչէցավ) – ծառից ընկավ:

օղան քէլէցավ (քիլէցավ) – բլուրից գլորվեց:

Երևանան քենաց – Երևանից գնաց:

գօրմուջան էնգավ (խէչէցավ) – կամրջից ընկավ:

թօռնան րազի չա – թռռից գոհ չէ:

586. Ներգոյականի արտահայտությունը՝

աշխարհում – աշխըրի (արդ.՝ աշխըրի) մէջ:

բերանում – պէյնի մէջ:

գետում – քէրի մէջ:

գյուղում – կյաղի մէջ, կյաղին:

ջրում – չուի (արդ.՝ չույի) մէջ:

հողում – հօղի (խօղի) մէջ:

փորում – փօի (փօրի, արդ.՝ փօյի) մէջ:

սնդուկում – սընդկի մէջ:

տիկում – դիգի մէջ:

օրորոցում – օօցքի մէջ:

587. Ածականի գերադրական աստիճանի արտահայտությունը՝
ամենամեծ – **էմմէնու մէծ**:
ամենալավ – **էմմէնու սոյ**:
ամենաբարձր – **էմմէնու պարցէ**:
ամենավատ – **էմմէնու չօրուտ**:
ամենափոքր – **էմմէնու բիծիզ**:
ամենածանր – **էմմէնու ձօնդր**:
ամենագեղեցիկ – **էմմէնու էրօնդ**:

588. Թվականի բաշխականության դրսևորումը՝
երկուական – **էգուհադիզան**:
երեքական – **իյէքհադիզան**:
չորսական – **չօրսազան** (արդ.՝ **չօյսազան**):
հինգական – **հինգօզօն**:
վեցական – **վէցօզօն**:
յոթական – **օխտնհադիզան**:
ութական – **ուփհադիզան**:
իննական – **իննհադիզան**:
տասական – **դասնհադիզան**:
քսանական – **սօնօզօն**:
երկուական խնձոր – **էրգուհադիզան խէնձօր**:

589. Ղասական թվականների կազմությունը՝
առաջին – **բիրինջի**:
երկրորդ – **իքինջի**:
երրորդ – **իյէքինջի**:
չորրորդ – **չօրսինջի** (արդ.՝ **չօյսինջի**):
հինգերորդ – **հինգինջի**:
վեցերորդ – **վէցինջի**:
յոթերորդ – **օխտնինջի**:
տասներորդ – **դասինջի**:
քսաներորդ – **սօնինջի**:
երկրորդ կինը – **իքէնջի գէնիզը**:
երրորդ երեխան – **իյէքինջի դաղան**:

590. 70, 80, 90 թվականների դիմաց փոխառյալ թվականները.
յէթմիշ:
սէքստն:
դօքսան:

Ի տարբերություն Աջարիայից 1944թ. Միջին Ասիա արևմտյանների, Խոփայի գավառի կրոնափոխ համշենահայերի միայն տարեցներն են հիշում 70, 80, 90 թվականների հայերեն անվանումները, իսկ միջին սերունդն՝ օգտագործում է թուրքերեն համարժեքները:

591. Տասնավորների արտահայտությունը տասը և քսան թվականների հարադրությամբ՝
երեսուն – **էռսուն**:
քառասուն – **քառսուն**:
հիսուն – **հիսուն**:
վաթսուն – **վացուն**:
յոթանասուն – **օխտանասուն, օխտնասուն, օխտսուն**:
ութսուն – **ուփանասուն, ուփնասուն, ուփնասուն, ուփցուն**:
իննսուն – **իննէնասուն, իննասուն, ինէսուն**:

Տասը և քսան թվականների հարադրությամբ թվականներ չունեն:

593. Ես, դու, մենք, դուք անձնական դերանունների տրականի արտահայտությունը՝
(մոտեցավ) ինձ – **(մօդգինցավ) ինձի**:
քեզ – **քէզի**:
մեզ – **մէզի**:
ձեզ – **զէզի**:

594. Ես, դու, մենք, դուք անձնական դերանունների հայցականի արտահայտությունը՝
(սիրում է) ինձ – **ինձի**:
քեզ – **քէզի**:
մեզ – **մէզի**:
ձեզ – **զէզի**:

595. Անձնական դերանունների բացառական և գործիական հոլովների կազմությունը՝

ինձանից – **ինձմա**։

քեզանից – **քեզմա, քինա, քինէ**։

մեզանից – **մեզմա**։

ձեզանից – **ցեզմա, ցինա**։

իրենից – **ույնից**։

իրենցից – **ույինցմա**։

ինձանով – **ինձմով**։

քեզանով – **քեզմով, քինով**։

մեզանով – **մեզմով**։

ձեզանով – **ցեզմով**։

իրենով – **ույնով**։

իրենցով – **ույինցմով**։

598. Անձնական դերանվան եզակի երրորդ դեմքի արտահայտությունը՝

նա (զնաց) – **ան (քընաց)**։

599. Անձնական դերանվան հոգնակի երրորդ դեմքի արտահայտություն՝

նրանք (զնացին) – **անէր (քընացին)**։

600. Անձնական դերանվան եզակի երրորդ դեմքի սեռականի արտահայտությունը՝

նրա տունը – **անու դունէ**։

601. Ինքն (իրենք) դերանվան հայցականի արտահայտությունը՝

Եւ իրեն է սիրում։ – **Ան ույնէ հազ գէնա**։

Երանք իրենց են սիրում։ – **Անէր ույինցէ հազ գէնին**։

602. Ցուցական դերանունների դրսևորումը՝

այս – **աս**։

այդ – **ադ**։

այն – **ան**։

սա – **իսա**։

դա – **իդա**։

նա – **ինա**։

այս տունը – **աս (իսա) դունէս**։

այդ ծառը – **ադ (իդա) ծառէդ**։

սա ծառ է – **իսա ծառ ա**։

դա տուն է – **ադ դուն ա**։

նա սիրում է այդ աղջկան – **ան հազ գէնա ադ ախչօսնէ**։

603. Սա, դա, նա ցուցականների հոգնակի ձևերում միջծայնավորային ը-ի դիմաց՝

սրանք – **իսեր**։

դրանք – **իդեր**։

նրանք – **իներ (աներ)**։

սրանցից – **իսօնցից**։

դրանցից – **իդօնցից**։

նրանցից – **ինօնցից**։

սրանցով – **իսօնցով**։

604. Այս, այդ, այն (սա, դա, նա) ցուցականների եռանդանության դիմաց երկանդանություն՝

այս մարդը – **աս մարթէ**։

այդ մարդը – **ադ մարթէ**։

այն մարդը – **ան մարթէ**։

սա է փոքրը – **աս ա բիծիզը**։

դա է փոքրը – **ադ ա բիծիզը**։

նա է փոքրը – **ան ա բիծիզը**։

605. Ցուցականների սեռական – տրական հոլովի արտահայտությունը՝

սրա, դրա, նրա (տունը), (մոտեցավ) սրան, դրան,

նրան, սրանց, դրանց, նրանց

սրա (տունը) – **իսու (դունէ)**։

դրա – **իդու**։

նրա – **ինու**։

(մոտեցավ) սրան – **(մօղգինցավ) իսու**։

դրան – **իդու**։

նրան – **ինու**:
 սրանց – **խօսնց**:
 դրանց – **իդօնց**:
 նրանց – **ինօնց**:

606. Ցուցականների բացառականի և գործիականի կազմությունը՝

սրանցից – **խօսնցից**:
 դրանցից – **իդօնցից**:
 նրանցից – **ինօնցից**:
 սրանով – **խօսվ**:
 դրանով – **իդօվ**:
 նրանով – **ինօվ**:
 սրանցով – **խօսցմիով**:
 դրանցով – **իդօցմիով**:
 նրանցով – **անօցմիով**:

608. Ով դերանվան եզակի սեռականի արտահայտությունը՝
 Աա ու՞մ տունն է: **Իսա ու՞մ դունն ա**:

609. Ով դերանվան հայցականի արտահայտությունը՝
 Եա ու՞մ տեսավ: **Ան ու՞մ դեսավ**:

610. Ով դերանվան հոգնակի ուղղականի դրսևորումը՝
 Ովքեր (եկան): **Վօ՞վ** (հոգնակի չունեն) **էգին**:
 Եկողները ովքե՞ր են: **էգողնիյէ վօ՞վ ին**:

611. Ով դերանվան հոգնակի սեռական – տրական հոլովի արտահայտությունը՝
 Ու՞մ (ունոնց) ազգից ես: **Ումնօցմա՞ ես**:

614. Անկատար դերբայի առկայություն՝

սիրում եմ – սիրա գում ՝	սիրում եմք – սիրա գուք
սիրում ես – սիրա գուս	սիրում եք – սիրա գուք
սիրում է – սիրա գու	սիրում են – սիրա գուն

ես եմ սիրում – յես սիրա գում	մենք ենք սիրում – մէք սիրա գուք
դու ես սիրում – թուն սիրա գուս	դուք եք սիրում – թուք սիրա գուք
նա է սիրում – ան սիրա գու	նրանք են սիրում – անօնք սիրա գուն

* Սիրելուն ասում են **հազ ընուշ**, իսկ **սիրուշ** նշանակում է գուրգուրել, **սիրա գում** – գուրգուրում եմ:

մնում եմ – մէնա գում	մնում եմք – մէնա գուք
մնում ես – մէնա գուս	մնում եք – մէնա գուք
մնում է – մէնա գու	մնում են – մէնա գուն

չեմ մնում – մէնա չիմ	չենք մնում – մէնա չիք
չես մնում – մէնա չիս	չեք մնում – մէնա չէք
չի մնում – մէնա չի	չեն մնում – մէնա չին

615. Գալ, լալ, տալ բայերի անկատար դերբայի դրսևորումը՝

գալիս եմ – կուկօմ	գալիս եմք – կուկօք
գալիս ես – կուկաս	գալիս եք – կուկաք
գալիս է – կուկա	գալիս են – կուկօն

ես եմ գալիս – յես կուկօմ	չենք գալիս – կա չիք
դու ես գալիս – թուն կուկաս	չեք գալիս – կա չէք
նա է գալիս – ան կուկա	չեն գալիս – կա չին

լալիս եմ – կուլամ (կուլօմ)	լալիս եմք – կուլաք
լալիս ես – կուլաս	լալիս եք – կուլաք
լալիս է – կուլա	լալիս են – կուլան (կուլօն)

չեմ լալիս – լա չիմ
չես լալիս – լա չէս
չի լալիս – լա չի

չենք լալիս – լա չիք
չեք լալիս – լա չէք
չեն լալիս – լա չին

տալիս եմ – գուդօմ
տալիս ես – գուդաս
տալիս է – գուդա

տալիս ենք – գուդօք
տալիս եք – գուդաք
տալիս են – գուդօն

չեմ տալիս – դալ չիմ
չես տալիս – դալ չէս
չի տալիս – դալ չի

չենք տալիս – դալ չիք
չեք տալիս – դալ չէք
չեն տալիս – դալ չին

616. Ապառնի դերբայի առկայությունը՝

ասելու եմ – ասող ում
ասելու ես – ասող էս
ասելու է – ասող ա

ասելու ենք – ասող ուք
ասելու եք – ասող էք
ասելու են – ասող ուն

ես եմ ասելու – յես ասող ում
դու ես ասելու – թուն ասող էս
նա է ասելու – ան ասող ա

մենք ենք ասելու – մեք ասող ուք
դուք եք ասելու – թուք ասող էք
նրանք են ասելու – աներ ասող ուն

մնալու եմ – մենօղ ում
մնալու ես – մենօղ էս
մնալու է – մենօղ ա

մնալու ենք – մենօղ ուք
մնալու եք – մենօղ էք
մնալու են – մենօղ ուն

չեմ մնալու – մենօղ չիմ
չես մնալու – մենօղ չէս
չի մնալու – մենօղ չա

չենք մնալու – մենօղ չիք
չեք մնալու – մենօղ չէք
չեն մնալու – մենօղ չին

621. Ժխտական դերբայի առկայությունը՝

չեմ ասի – ասող չիմ
չես ասի – ասող չէս
չի ասի – ասող չա

չենք ասի – ասող չիք
չէք ասի – ասող չէք
չեն ասի – ասող չին

չեմ մնա – մենա չիմ
չես մնա – մենա չիս
չի մնա – մենա չա

չենք մնա – մենա չիք
չեք մնա – մենա չէք
չեն մնա – մենա չին

չեմ խոսի – խօսի չիմ
չես խոսի – խօսի չէս
չի խոսի – խօսի չի

չենք խոսի – խօսի չիք
չեք խոսի – խօսի չէք
չեն խոսի – խօսի չին

622. Ընթացակցական դերբայի առկայությունը՝

Ուտելով գնում եր – ուղելով գերթար
Վազելով եկավ – թեռչելով էյեվ
Ծիծաղելով գնաց – ծիծաղելով քենաց

624. Էական (օժանդակ) բայի անցյալ ժամանակի դրսևորումը՝

ես էի – յես է
դու էիր – թուն էդ (էդի)
նա էր – ան էր

Մենք էինք – մեք էքի (աքի)
Դուք էիք – թուք էքի
Նրանք էին – աներ էնի

626. Սահմանական եղանակի ներկա ժամանակի դրսևորումը՝

ես գրում եմ – յես քի գում
դու գրում ես – թուն քի գուս
նա գրում է – ան քիա գու

Մենք գրում ենք – մեք քի գուք
Դուք գրում եք – թուք քի գուք
Նրանք գրում են – աներ քի գուն

627. Շարունակական ներկայի առկայություն. նրա դրսևորումը՝

(հիմա)
ուտում եմ – հիմի գուդիմ
ուտում ես – հիմի գուդես
ուտում է – հիմի գուդա

ուտում եք – հիմի գուդեք
ուտում են – հիմի գուդին
ուտում ենք – հիմի գուդիք

(հիմա)
կարդում եմ – հիմի գարթա գում
կարդում ես – հիմի գարթա գուս
կարդում է – հիմի գարթա գու

կարդում ենք – գարթա գուք
կարդում եք – գարթա գուք
կարդում են – գարթա գուն

628. Անցյալ անկատար ժամանակի արտահայտությունը՝

Ես կարդում էի – **յես գարթա գու**
Դու կարդում էիր – **թուն գարթա գուդի**
Նա կարդում էր – **ան գարթա գուր**

Մենք կարդում էինք – **մեք գարթա գուքի**
Դուք կարդում էիք – **թուք գարթա գուքի**
Նրանք կարդում էին – **աներ գարթա գունի**

Ես խմում էի – **յես խմնէ գու**
Դու խմում էիր – **թուն խմնէ գուդի**
Նա խմում էր – **ան խմնէ գուր**

Մենք խմում էինք – **մեք խմնէ գուքի**
Դուք խմում էիք – **թուք խմնէ գուքի**
Նրանք խմում էին – **աներ խմնէ գունի**

631. Սահմանական եղանակի անցյալ կատարյալի կազմությունը՝

Ես խմեցի – **յես խմնէցի** Մենք խմեցինք – **մեք խմնէցիք**
Դու խմեցիր – **թուն խմնէցեր** Դուք խմեցիք – **թուք խմնէցաք**
Նա խմեց – **ան խմնէց** Նրանք խմեցին – **աներ խմնէցին**

Ես մոռացա – **յես մուլիյեցա** Մենք մոռացանք – **մեք մուլիյեցաք**
Դու մոռացար – **թուն մուլիյեցար** Դուք մոռացաք – **թուք մուլիյեցաք**
Նա մոռացավ – **ան մուլիյեցավ** Նրանք մոռացան – **աներ մուլիյեցոն**

Ես մնացի – **յես մնացի** Մենք մնացինք – **մեք մնացաք**
Դու մնացիր – **թուն մնացեր** Դուք մնացիք – **թուք մնացիք**
Նա մնաց – **ան մնաց** Նրանք մնացին – **աներ մնացին**

Ես տեսա – **յես դեսա** Մենք տեսանք – **մեք դեսաք**
Դու տեսար – **թուն դեսար** Դուք տեսաք – **թուք դեսաք**
Նա տեսավ – **ան դեսավ** Նրանք տեսան – **աներ դեսոն**

Ես լսեցի – **յես իմացի** Մենք լսեցինք – **մեք իմացաք**
Դու լսեցիր – **թուն իմացեր** Դուք լսեցիք – **թուք իմացիք**
Նա լսեց – **ան իմաց** Նրանք լսեցին – **աներ իմացին**

Ես հասա – **յես ժըմնէցի** Մենք հասանք – **մեք ժըմնէցաք**
Դու հասար – **թուն ժըմնէցեր** Դուք հասաք – **թուք ժըմնէցաք**
Նա հասավ – **ան ժըմնէց** Նրանք հասան – **աներ ժըմնէցան, ժըմնէցոն, ժըմնէցին**

ժըմնուշ – **հետևից հասնել**

Ես սպանեցի – **յես ցվօնէցի** Մենք սպանեցինք – **մեք ցվօնէցաք**
Դու սպանեցիր – **թուն ցվօնէցեր** Դուք սպանեցիք – **թուք ցվօնէցիք**
Նա սպանեց – **ան ցվօնէց** Նրանք սպանեցին – **աներ ցվօնէցին**

632. Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալի դրսևորումը՝

Ծախեցի – **ծախէցի** Ծախեցինք – **ծախէցաք**
Ծախեցիր – **ծախէցեր** Ծախեցիք – **ծախէցիք**
Ծախեց – **ծախէց** Ծախեցին – **ծախէցին**

636. Հարակատար ժամանակի առկայությունը՝

Խափված եմ – **խափված իմ** Խափված ենք – **խափված իք**
Խափված ես – **խափված իս** Խափված եք – **խափված էք**
Խափված է – **խափված ա** Խափված են – **խափված ին**

Խափված էի – **խափված է** Խափված էինք – **խափված էքի, աքի**

Խափված էիր – **խափված էդի** Խափված էիք – **խափված էքի**
Խափված էր – **խափված էր** Խափված էին – **խափված էնի**

649. Պատճառական բայերի ներկա ժամանակի դրսևորումը՝

Ես խմացնում եմ – **յես խմնէցնի գում**
Դու խմացնում ես – **թուն խմնէցնի գուս**
Նա խմացնում է – **ան խմնէցնա գու**

Մենք խմացնում ենք – մէք խմեցէնի գուք
Դուք խմացնում եք – թուք խմեցէնէ գուք
Նրանք խմացնում են – անէր խմեցէնի գուն

Ես խոսեցնում եմ – յես խաբրեցէնի գում
Դու խոսեցնում ես – թուն խաբրեցէնէ գում
Նա խոսեցնում է – ան խաբրեցէնա գու

Մենք խոսեցնում ենք – Մէք խաբրեցէնի գուք
Դուք խոսեցնում եք – թուք խաբրեցէնէ գուք
Նրանք խոսեցնում են – անէր խաբրեցէնի գուն

653. Անցյալ կատարյալի պարզ ձևերի ժխտական
խոնարհման դրսևորումը՝

Ես չգրեցի – յես քիցցի օչ	Մենք չգրեցինք – մէք քիցցաք օչ
Դու չգրեցիր – թուն քիցցր օչ	Դուք չգրեցիք – թուք քիցցաք օչ
Նա չգրեց – ան քիցց օչ	Նրանք չգրեցին – անէր քիցցին օչ

656. Արգելական հրամայականի արտահայտությունը՝

Խօստ մի:
(Մի խոսիր):
Խաբրէ մի:
(Մի խոսիր, մի գրուցիր):
Օսնիլ մի:
(Մի անցիր):
Լա մի:
(Մի լա):
Խաղա մի:
(Մի խաղա):
Մենա մի:
(Մի մնա):
Քաշէ մի:
(Մի քաշիր):

Քէնա մի:
(Մի գնա):
Գարթա մի:
(Մի կարդա):
Քիյէ մի:
(Մի գրի):
Խտնէ մի:
(Մի խմի):
Տա մի:
(Մի տուր):
Քա մի:
(Մի գա):

ՍՈՒՏԱՄԱՆԸ

Լինում է, չի լինում մի թագավոր: Ես թագավորը իր երկ-
րումը հայտնում է. «Ով էնպես սուտ ասի, որ ես ասեմ՝ սուտ է,
իմ թագավորության կեսը կտամ նրան»:

Գալիս է մի հովիվ: Ասում է.

– Թագավորն ապրած կենա, իմ հերը մի դագանակ ուներ,
որ էստեղից մեկնում էր, երկնքում աստղերը խառնում:

– Կպատահի, – պատասխանում է թագավորը: – Իմ պապն
էլ մի չիբուխ ուներ. մի ծերը բերանին էր դնում, մյուս ծերը
մեկնում, արեգակիցը վառում:

Ստախոսը գլուխը քորելով դուրս է գնում:

Գալիս է մի դերձակ: Ասում է.

– Ներողություն, թագավոր, ես վաղ պիտի գայի, ուշացա:
Երեկ շատ անձրև եկավ, կայծակները տրաքեցին, երկինքը
պատռվեց, գնացել էի կարկատելու:

– Հա, լավ ես արել, – ասում է թագավորը, – բայց լավ չէիր
կարկատել, ես առավոտ մի քիչ անձրև թափվեց:

Սա էլ է դուրս գնում:

Ներս է մտնում մի աղքատ գյուղացի, կոտը կոնատակին:

– Դու՞ ինչ ես ուզում, այ մարդ, – հարցնում է թագավորը:

– Ինձ մի կոտ ոսկի ես պարտք, եկել եմ տանեմ:

– Մի կոտ ոսկի՞, – զարմանում է թագավորը: – Սուտ ես ասում,
ես քեզ ոսկի չեմ պարտք:

– Թե որ սուտ եմ ասում, թագավորությանդ կեսը տուր:

– Հէ՛, չէ՛, ճշմարիտ ես ասում, – խոսքը փոխում է թագավորը:

– Ճշմարիտ եմ ասում՝ մի կոտ ոսկին տուր:

Գելլա, էլլի չի մեզ փաղիշահ: Աս փաղիշահն ույն՝ աշխարհն գասա. «Կօլ ամօն խափելուքին գասա քի, յես աստի թա՛ իսա շիղագ չա, անու իմ աշխարիս գեսը դեվօղ ուն»:

Քուկա մեզ հոյիվ մե: Գասա.

– Փաղիշահն աբրի թօղ, իմ դադե մեզ փիր¹ մե ուներ, գօնգաձ (գունգաձ) դադե փիօվե հավային (երգընքին) աստաղնի-յե խառնի գուր:

– Ամօն ալ գելլի,– գասա² փաղիշահն,– իմ բաբն ալ մեզ չիբուխ մե ուներ, մեզ ջօթ պիօնե (պիանե) թենե գուր, մեգալ ջօթ աաքազան կօլե գուր:

Խափելուքին քելօխտ քիյելօվ թուս քենա գու (գելլա):

Մեզ թերգի մե քուկա: Գասա.

– Փաղիշահ³, յես առաչ (թեգ) էգօղ է, ուշացա: Էյեզ շաղ չախ էյեվ, գաձգօննիյե գաձգեցին, հավան (երգինքե) պադեռեցավ, քենացի գարգըղուշ:

– Դա՛, սօյ ալեր,– գասա փաղիշահն, համա սօյ գարգըղեցերօջ, աս աքվան քիչ մե չախ էյեվ:

Ան ալ քենաց:

Մեզ ֆուբարա (ֆուբաա) կյաղացի մե գօթ օնթինե դագե մըղնու գու:

– Թու՞ն ինչ քուզե, դա՛ մարթ,– հարցնա գու փաղիշահն:

– Թուն ինձի մեզ գօթ մե ալթուն դալիք էս, էգի ան դօնուշ:

– Մեզ գօթ մե ալթու՞ն,– շաշըննա գու փաղիշահն,– շիղագ ասե չես, յես քեզի ալթուն դալիք չիմ:

– Շիղագ թա ասե չիմ, աշխարիդ գեսը դու:

– Չա՛, չա՛, շիղագ գասես,– ույնե ասաց խաբարը⁴ թարցե-նա գու փաղիշահն:

– Շիղագ թա գասիմ, գօթ մե ալթունե դու:

Բոլոր նրանք, ովքեր երբևէ առիթ են ունեցել գյուղերում, դաշտերում ու լեռներում, տարբեր վայրերում բանահյուսական և ազգագրական նյութեր արձանագրելու կամ, ընդհանրապես, մարդկանցից որևէ թեմայի շուրջ հարցուփորձ անելու, միշտ էլ տետրերի էջերի լուսանցքներում կամ թղթերի տարբեր անկյուններում նշումներ կատարելու անհրաժեշտություն են զգացել: Հաճախ դրանք շատ կարևոր ճշտումներ, մանրամասներ ու փաստեր են:

Ես նույնպես «Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրի» բառհողվածները լրացնելիս ծոցատետրերում ու թղթերի եզրերին որոշ գրառումներ եմ արել, որոնց մի մասը «Նշումներ լուսանցքներում» վերնագրով ներկայացնում եմ ընթերցողներին:

Ձարմանալի փոփոխություններ կան Խոփայի խոսվածքում՝ էլ, ալ վերջավորություններով անորոշ դերբայների գործիական հոլովի (ով վերջավորությամբ) ժխտական իմաստն արտահայտվում է նույն դերբայի տրական հոլովով ու վերջավորությամբ, առանց որևէ կապի:

Օրինակներ՝

Յես ուղելօվ քուն աղա:

(Ես ուտելով քնեցի):

Յես ուղելու քուն աղա:

(Ես առանց ուտելու քնեցի):

Յես սելվելալօվ քենացի:

(Ես սուլելով գնացի):

Յես սելվելալու քենացի:

(Ես առանց սուլելու գնացի):

Յես լալօվ քենացի:

(Ես լացելով գնացի):

Յես լալու քենացի:

(Ես առանց լացելու գնացի):

Խօսելու օնցա:

(Առանց խոսելու անցա):

Ան էյեվ, չայ խեմելու քենաց:

(Նա եկավ, առանց թեյ խմելու գնաց):

¹ *Դագանակ բառը դեգեմեկ ձևով ունեն, բայց նախընտրում են ասել փիր, այսինքն՝ բիր:*

² *Պատասխանել բառը չունեն, ԽՍՀՄ-ում բնակվող կրոնափոխ համընդհայն օգտագործում էին ռուսերենից փոխառյալ օղվեդ բառը, իսկ Խոփայի գավառի համընդհանրապես ասում են քուղաք:*

³ *Ներողություն բառը կամ հոմանիշը չունեն:*

⁴ *Թումանյանի բնագրում խոսք բառն է, բայց նրանք խոսք բառը չունեն, ասում են խաբար:*

* Խոփայի խոսվածքում սահմանական եղանակի ներկա ժա-
մանակը կազմվում է ձայնավորով սկսվող բայերի սկզբում **գ** մա-
նիկի ավելացումով: Բայց հանդիպում են դեպքեր, որ ոչ թե **գ** է ա-
վելանում, այլ ձայնավորով սկսվող բայերն էլ բաղաձայնով
սկսվողների նման հետադաս **գու** (**կու**) մասնիկն են ստանում: Եր-
բեմն նույն բայը վերոնշյալ երկու տարբերակներով էլ կիրառվում է:

Ես ուտում եմ – **յես գուդիմ**
Դու ուտում ես – **թուն գուդիս**
Նա ուտում է – **ան գուդա**
Մենք ուտում ենք – **մեք գուդիք**
Դուք ուտում եք – **թուք գուդիք**
Նրանք ուտում են – **աներ գուդին**

Ես ապրում եմ – **յես աբրի գում**
Դու ապրում ես – **թուն աբրի գուս**
Նա ապրում է – **ան աբրի գու**
Մենք ապրում ենք – **մեք աբրի գուք**
Դու ապրում եք – **թուք աբրի գուք**
Նրանք ապրում են – **աներ աբրի գուն**

Ես ամաչում եմ – **յես ամչի գում**
Դու ամաչում ես – **թուն ամչի գուս**
Նա ամաչում է – **ան ամչա գու**
Մենք ամաչում ենք – **մեք ամչի գուք**
Դուք ամաչում եք – **թուք ամչե գուք**
Նրանք ամաչում են – **աներ ամչի գուն**

Ես ոլորում եմ – **յես օլիյե գում**
Դու ոլորում ես – **թուն օլիյե գուս**
Նա ոլորում է – **ան օլիյե գու**
Մենք ոլորում ենք – **մեք օլիյե գուք**
Դուք ոլորում եք – **թուք օլիյե գուք**
Նրանք ոլորում են – **աներ օլիյե գուն**

Ես անցնում եմ – **յես գասնիմ**
Դու անցնում ես – **թուն գասնիս**
Նա անցնում է – **ան գասնի**

Մենք անցնում ենք – **մեք գասնիք**
Դուք անցնում եք – **թուք գասնեք**
Նրանք անցնում են – **աներ գասնին**

* Տարբեր քերականական ձևեր՝

Ես եմ – յես իմ	Մենք ենք – մեք իք
Դու ես – թուն ես	Դուք եք – թուք էք
Նա է – ան ա	Նրանք են – աներ ին

Իմը – իմե	Մերը – մեա
Քոնը – քուե	Ձերը – քեա
Նրանը – անուա	Նրանցը – անօցա

Ես չեմ – յես չիմ	Մենք չենք – մեք չիք
Դու չես – թուն չես	Դուք չեք – թուք չեք
Նա չի – ան չա	Նրանք չեն – աներ չին

Իմ – իմ	Մեր – մե (ր)
Քո – քու	Ձեր – քե (ր)
Նրա – անու (ինու)	Նրանց – անօց (ինօց)

Ես եկա – յես եգի	Մենք եկանք – մեք եգաք
Դու եկար – թուն եգեր	Դուք եկաք – թուք եգիք
Նա եկավ – ան էյեվ	Նրանք եկան – աներ եգին

Իմ մոտ եկավ – **իմ մօդես էյեվ**
Քո մոտ եկավ – **քու մօդեդ էյեվ**
Մեր մոտ եկավ – **մե(ր) մօդվիս էյեվ**
Ձեր մոտ եկավ – **քե(ր) մօդվիդ էյեվ**

Ես սիրում եմ – **յես հազ գենիմ**
Դու սիրում ես – **թուն հազ գենես**
Նա սիրում է – **ան հազ գենա**

Մենք սիրում ենք – **մեք հազ գենիք**
Դուք սիրում եք – **թուք հազ գենեք**
Նրանք սիրում են – **աներ հազ գենին**

Ես վագում եմ – յես թեռչի գում
Դու վագում ես – թուն թեռչի գուս
Նա վագում է – ան թեռչի գու

Մենք վագում ենք – մեք թեռչի գուք
Դուք վագում եք – թուք թեռչի (թեռչէ) գուք
Նրանք վագում են – անէր թեռչի գուն

Ես չեմ լացի – յես լօխ չիմ
Դու չես լացի – թուն լօխ չիս
Նա չի լացի – ան լօխ չի

Մենք չենք լացի – մեք լօխ չիք
Դուք չեք լացի – թուք լօխ չէք
Նրանք չեն լացի – անէր լօխ չին

Ես չտեսա – յես դեսա օչ
Դու չտեսար – թուն դեսար օչ
Նա չտեսավ – ան դեսավ օչ

Մենք չտեսանք – մեք դեսաք օչ
Դուք չտեսաք – թուք դեսաք օչ
Նրանք չտեսան – անէր դեսուն օչ

Իմ մայրը – իմաէ
Քո մայրը – քու մաէ
Նրա մայրը – անու մաէ

Մեր մայրը – մէ(ր) մաէ
Ձեր մայրը – զէ(ր) մաէ
Նրանց մայրը – անօց մաէ

Ես ապտակեցի – յես գածգեցուցի
Դու ապտակեցիր – թուն գածգեցուցեր
Նա ապտակեց – ան գածգեցուց

Մենք ապտակեցինք – մեք գածգեցուցաք
Դուք ապտակեցիք – թուք գածգեցուցիք
Նրանք ապտակեցին – անէր գածգեցուցին

Ասացի – աստի
Ասացիր – աստիր
Ասաց – ասաց

Ասացինք – աստաք
Ասացիք – աստիք
Ասացին – աստին

Ես հիվանդ էի – յես հիվօնդ* է
Դու հիվանդ էիր – թուն հիվօնդ էդի
Նա հիվանդ էր – ան հիվօնդ էր

Մենք հիվանդ էինք – մեք հիվօնդ էքի
Դուք հիվանդ էիք – թուք հիվօնդ էքի
Նրանք հիվանդ էին – անէր հիվօնդ էնի

* Հատկապես արդըլեցիներն օգտագործում են նաև հիվանդ ձևը:

Ես լցրեցի – յես լեցի
Դու լցրեցիր – թուն լեցեր
Նա լցրեց – ան էլից

Մենք լցրեցինք – մեք լեցաք
Դուք լցրեցիք – թուք լեցիք
Նրանք լցրեցին – անէր լեցին

Ես ողբում եմ – յես քօվի գում
Դու ողբում ես – թուն քօվէ գուս
Նա ողբում է – ան քօվա գու

Մենք ողբում ենք – մեք քօվի գուք
Դուք ողբում եք – թուք քօվէ գուք
Նրանք ողբում են – անէր քօվի գուն

Ես խոսեցի – յես խաբրեցի
Դու խոսեցիր – թուն խաբրեցեր
Նա խոսեց – ան խաբրեց

Մենք խոսեցինք – մեք խաբրեցաք
Դուք խոսեցիք – թուք խաբրեցիք
Նրանք խոսեցին – անէր խաբրեցին, խաբրեցօն

Ես նստեցի – յես նէստա
Դու նստեցիր – թուն նէստար
Նա նստեց – ան նէստավ

Մենք նստեցինք – մէք նէստաք
Դուք նստեցիք – թուք նէստաք
Նրանք նստեցին – անէր նէստոն

Ես հեռում եմ – յես թաստի գում
Դու հեռում ես – թուն թաստի գուս
Նա հեռում է – ան թաստա գու

Մենք հեռում ենք – մէք թաստի գուք
Դուք հեռում եք – թուք թաստի գուք
Նրանք հեռում են – անէր թաստի գուն

Տարաբնույթ գրառումներ

* Ըստ Միջին Ասիայի կրոնափոխ համշէնցիների՝ Կարաիբրահիմովները (Ջերմըզցի) համարվում են սրամիտ, քաջ և աղմկարար: Նրանց մասին, որպես աղմկարարների, ասում են. «**Ջերմըզցին բարխան ջուգալէ քիլա գու**» (Ճերմըզցին ժայռից կաթսան է գլորում):

* Կարակչիօղլիները համարվում են ամենաուժեղները և բարձրահասակները: Նրանց մասին պատմում են. «**Մեզ օր մէ աչառին հօքին կէլլէր: Թէնագն ալ թարքին էր: Թէնագէ պիյէլուն իսա աչառէ թաաքնիվէ քաշէցին: Ինչակ դային անա, աչառէ սաղգէցավ**» (Մի օր եզը հոգի էր տալիս: Դանակն էլ դարակում էր: Դանակը բերելու փոխարեն այս եզը քաշեցին դարակի մոտ: Մինչև տարան, եզը սատկեց): Այդ օրվանից նրանց մասին ասում են. «**Կարակչիօղլին աչառէ թաաքնիվէ քաշա գու**» (Կարակչիօղլին եզը դարակի մոտ է քաշում):

* 1987թ. Ղրղզստանում՝ Բեգաբադում, երբ գրուցակիցներից մեկը մոլլա Յեմդի Ակբույուկօղլուն հարցրեց, թե. «**Քեզի վօ՞վ ասաց, թա մէք էրմենիցան թառցած իք**» (Քեզ ո՞վ ասաց, թե մենք հայերից ենք կրոնափոխվել): Նա պատասխա-

նեց. «**Լիզու գասա, վօ՞վ ասող ա, էրմենջա խաբրի գուք անա, անօցմա թառցուծիք ալ, ալ ասուշ բիդի՞ թա**» (Լեզու է ասում, ո՞վ պիտի ասի, եթե հայերեն ենք խոսում, նրանցից էլ կրոնափոխվել ենք, էլ ասել պե՞տք է):

Յետաքրքրական է, որ մեր գրույցի ընթացքում Յեմդի Ակբույուկօղլին զուգահեռաբար օգտագործում էր **հայերիքը** – հայերը և **էրմենիքը** – հայերը ձևերը:

* Չեն ասում **կյադի ծայէ** – գյուղի ծայրը, այլ ասում են՝ **կյադին ջօթ**: Գյուղի վերին մասին ասում են **կյադին կէլօխը (քէլօխը)**, ներքևի մասին՝ **կյադին նէքթը**:

«**Իմ դունէ կյադին էմմենու նէքթին ա, յես կյադին կէլօխը (քէլօխը) էլլօղ ում հաս իգուն**» (Իմ տունը գյուղի ամենամերթևն է, ես այս երեկո գյուղի վերին մասն եմ էլնելու):

* Շնորհակալություն բառը չունեն, ասում են **խէնդաս** կամ **չադ աբրիս**: Երբեմն շնորհակալություն հայտնելուն ի պատասխան ասում են. «**Ինչիկ չա**» (մի բան չի):

խէնդաս մաղթանքը ասում են նաև մի բան խնդրելուց.

– **Աղչի՛գ, խէնդաս, մէգ չուր մէ փէ**:

Անիծելուց էլ են օգտագործում խէնդաս բառը:

– **Ասպած քեզի խէնդասնա օչ**:

(Աստված քեզ չխնդացնի):

* Նրանք ալկոհոլային խմիչքներ օգտագործում են և կենացներ ասում են, օրինակ՝

Մէ մաօցէ սաղըլլուշին ամա խէմիք:

(Մեր մայրերի ողջ լինելու համար խմենք):

* Աղքատ բառն ունեն և չեն կապում ունեցվածքի հետ, այլ օգտագործում են միայն «խեղճ» իմաստով. «**Ախքաղը մեռավ**» (խեղճը մեռավ):

* Չեն ասում. «Մեղք ես», այլ ասում են. «**Քեզի մախք ա**»:

* **Ասպածէ ցեզի հեդ էլլի**:

(Աստված ձեր հետ լինի):

Աստծուն մադաղ էլլիմ:

(Աստծուն մատաղ լինեմ):

Գէնօչէ քէլօխէ քէնաց:

(Կնոջ գլուխը գնաց):

Գէնիգէ քէլօխէ գիյավ:

(Կինը գլուխը կերավ):

Ջօմփան գրզվի գու:

(Ճանապարհը ծովում է):

Աչվիս մեղսմցավ:

(Աչքս մթնեց):

Աչվէնիէս կուռօն:

(Աչքերս կուրացան):

Աչիչ էնէս օչ:

(Աչքով չտաս):

Դօնէ մէջը սահն ա:

(Տան մեջ հով է):

Թուրցէվ շաղ շօք ա:

(Դուրսը շատ շոգ է):

Չառին դագէ սահն ա:

(Այս ծառի տակ հով է):

Յէս էնգէր մէ ունիմ:

(Ես մի ընկեր ունեմ):

Թերգիցնիյօվէ քէֆ ալիք:

(Հարևաններով քէֆ արեցինք):

Տու խէչի:

(Խփիր գցիր):

Մարթէ շաղ խաղէր (մանիներ) քիդէր:

(Մարդը շատ խաղիկներ (մանիներ) գիտէր):

Մարթը աղ խաղիյէղ քիդէր:

(Մարդը այդ խաղերը գիտէր):

Թուխ (օմուր) չայ պէ:

(Մուգ (թունդ) թեյ բեր):

Թուրց. Չայը օմուր աա:

Արդ. Չայը օմուր աա:

(Թեյը թունդ պատրաստիր):

Անդախ նեստօղէ թո՞ւն էղի (էղ):

(Այնտեղ նստողը դու՞ էիր):

Նայիր – փութ աա:

Նայեք – փութ այեք:

Մի նայիր – փութ էնէ մի:

Մի նայեք – փութ էնէ միք:

Ուստեցի՞ էս:

(Որտեղացի՞ էս):

Խօփայեցի:

(խոփացի):

ՀԵՔԻԱԹՆԵՐ

Գանի-չքանի, մեզ ցախուղին մէջը քառսուն հադիգ կող գանի: Ան քառսուն հադիգ կողը էմեթինէ ույինէ էնուշին պօնէ փայ գենէնի: Մեզը բազարնիվէ գերթար, մեզը՝ մաղազին, մեզը՝ փաղա, մեզը թացօն գենէր, մեզալօքը կողնուշ գերթանի, կողնուշ, փեուշ (պեուշ), գազանմիշ էնուշ: Կօղօուն մէջը մեզ հադիգ թեմբալ մէ գար: Մեզ օր մէ աստին թա աս թեմբալին:

- Թուն հացէ էնօղ էս, թացօն էնօղ էս, մէք իգվօն էգօղ ուղօղ ուք:

Աս թեմբալը ինչբէս ու ասքագէ էլավ անա, բարգեցավ անա, մեմալ ասքագէ մաէ գուր անա, գարթեցավ: Իգվօն կօղիյէ էգին անա՝ օջ հաց գօ, օջ չուր գօ, օջ թացօն գօ, չազյաին ինչիկ չգօ:

- Ի՞նչ աէր թուն ասօր,- հարցուցին:
- Յէս ասօր ասքագէ վի էլավ անա, բարգեցա անա, ինչակ ասքագէ մաէցավ անա, բարգեցա:

Իսա մարթիքըս աստին թա.
- Ի՞նչ էնիք, ի՞նչ էնիք օջ, իսու փաղի վաան վար թեմիք:
Վար թըին: Բազարնիվա էրթօղին ասաց թա.

- Քառսուն մէտրօ, հիսուն մէտրօ գենջիլ մէ ինծի ամա (օմա) փէ (պէ): Ձենջիլէ հաստ էլլի, գըղրի օջ:

Ան քենաց բազարնիվա, հիսուն մէտրօ օմուր գենջիլ մէ առավ փիյէց (պիէց, էփիր), անու էյէթ:

Աս քենաց ցախուղին գէսը փաթթեց, առավ ումուզը, քաշեց:

- Ի՞նչ գենէս,- աստին:
- Իսա բիթուն մեգեդէն քաշօղ ում,- ասաց թեմբալը:
- Ասէր վախեցին իսա մարթաս, իսա գօվաթլի ա դէյ նա:
- Ինչի՞ իղմօն գենէս,- ալի հարցուցին:
- Յէս էմեթինէ իսու հեղը խաղօ՞ղ ում թա, մեգեդէն փեյի (պեի) գում, նեստի գում:
- Կօղիյէ աստին թա.
- Իսա պօնէս աս էնէ չի գաա, այէ իսու խեմուր էնէլ դօք:
- Թեմբալը ասաց բազարնիվա էրթօղին.
- Ինծի ամա քառսուն թօրբա ալուր փէ (պէ):

Ան քենաց, քառսուն թօրբա ալուր փիէց (պիէց, էփիր), ան քառսուն թօրբան մեգեդէն քառսօննիվա էլից, չուրն ա էլից, գէբավ խեմուր էնուշի: Մարթիքը ալի հարցուցին:

- Ի՞նչ գենէս:
- էմեթինէ խօմ խեմուր էնօղ, հաց էնօղ չի՞մ, քառսուն թօրբա մեգեդէն խեմուր գենիմ, էմեթինէ գուղիք,- ասաց թեմբալը:
- Ասէր աստին թա.

- Աս շաղ խօգ մարթ ա, իսու օքօլ էնիք, սաղէ նեստի թօղ, ուղա թօղ: Մէք փեյի (պեի) գուք, իսու հեղ խօսիք օջ:

Աս թեմբալը նեստավ, գիյավ կիյացավ, գիյավ կիյացավ, ալ ալէլլի կիյացավ, կօղիյէ շաղ մեգաղեցին, քիչ մեգաղեցին, թիգեցին: Մեզ խեթը ուննօղ մէ ասաց թա.

- Մէք պիյօղ ուք, աս թեմբալը ուղօ՞ղ ա թա: Էգէք իսա մեգաղացնիյէս փայ էնիք, իսու ինչ ու քենգի անա, ուն դօք, բերցենիք:

- Մեզ մեգալի հեղէ խարթեցին, գէլլի՞ թա աստին.
- Գէլլի,- աստին:

Մեզ աքվանա մէ քառսուն փայ ային: Թեմբալ մարթէ նեստա՞մ ա, խօսի չի:

- Ինչի՞ խօսի չէս,- աստին:
- Ալի խօսեցավ օջ: Կօղիյէ վախեցին թեմբալան:
- Ասու էրգու փայ դօք,- աստին:

- Ալի խօսեցավ օջ:
- Իյէք փայ դօք,- աստին:
- Ալի խօսեցավ օջ:
- Չօրս փայ դօք,- աստին:

Ալի խօսեցավ օջ:
Էդի սօղէ էռսունուինը փայ դէվին: Ալի ու խօսեցավ օջ անա՝

- Ինչի՞ խօսի չէս, հեի՞ք չա թա քեզի,- աստին:
- Թեմբալը ասաց թա.
- Յէ դաղին էշաղը խօմ չգօ՞ հօգա դաղէս, իսխադիգ գուդաք, գուդաք անա, վօ՞վ դանօղ ա:
- Էռսունուինը հօքին աստին թա.
- Մէք դօնի գուք, վար թընի գուք քու դօնէ:

Ասէր թեմբալին փայը շագլեցին, դաին դօնէ վար թըին, դաղուվօրցուցին:

Էռսունուիւնը հօքին մէզ փայ առին, թմբալ մարթէ նստած դաղը Էռսունուիւնը փայը առավ, գիյավ, բարգտցավ:
Իսա հեքիային աստածէ ան ա թա՛ կօղօուն ալ խերք բիղի:

Ասացող՝ Քյազիմ Կարաիբրահիմով, ծնվել է 1926թ. Աղունոզ քեր (Գօնլի դաս, Կանլի դարա) գյուղում, բնակվում էր Ղազախստանի Չիմքենդի մարզի Սայրամի շրջանի Չիրկինո գյուղում, աշխատում էր կոլտնտեսությունում: Գրառել են 1987թ. հունիսին Չիրկինոյում:

ՅԻ ԿՕՂՆՈՒՇԸ

Գար—չբար, ավալէ մէզ գենգին մէ գար: Ան շաղ սօյ, էրօնդ ցի մէ ուներ: Խօզ շուն մալ ուներ: Անու թեռնան օուք զաթէ ինչիկ կօղնալ չի գաեր: Չայխանին հեքիաթ զընէր թա.

— Իմ թեռնան օուք ինչիկ կօղնալ չի գաա:

Ասու աստած խաբարդաթէ մօղէ նեստօղ մէգալ գենգին մարթէ իմաց: Ան մարթէ էրգու հաղիգ հօյիվ ուներ: Ան հօյիվնիյէ շաղ կօղ մարթ էնի: Աս մարթս ասաց թա.

— Ֆիլանջիին ցին կօղնօղ էր: Ինչ ու ուզէք անա, յես ցեզի գուրօմ:

Կօղիյէ մարթուն դուննիվա քենացին անա, թեռօնէ մէզ շաղ խօզ շուն մէ դեսօն: Մարթուն դուննիվա ջինջուղ մէ նես օսնիլ չի գաեր: Կօղիյէ էզին ույնէ դիյօջը աստին թա.

— Մէզի բազարան բառսուն մէտրօ չվօն փէ (պէ), մէզ օջխօունէ միսէ փէ (պէ), գալաթ մէ փէ (պէ):

Դիյէ բազարան աստածնիյէ փիյէց (պիէց) ուն դէվէց: Աներ առին քենացին ցին կօղնուշ: Մարթան թեռօնէ մօղէ շաղ մէծ ծառ մէ գար: Քենացին գալաթնիվա միսէ նէ ցքէցին, չվօնը գալաթին գաբէցին, ծառինէ վաանիվէ էլօն, չվօնը ծառինէ թափահին վաան չաթալին առանիվէ յետ թողուցին խօղնիվա: Ինչօն, չվօնին ծայը փռնէցին, թաքօն ծառինէ հեղէթին: Ուսուլ—ուսուլ սէլվէլէցին: Շունէ թեռավ, փուր ասավ անա, գալաթին մէջը միս գօ: Շունէ թուս թեռավ գալաթին մէջնիվա: Ան օխթին կօղիյէ գալաթէ չվօնօվէ վէր քաշէցին ծառինէ վաանիվէ: Գալաթէ շունօվէ ծառին վաան գաբէցին:

Ուիւնըր ուսուլ—ուսուլ քենացին կումին մէջնիվէ: Յին քագէցին, դահին: Սաբախտէն մարթը վի էլավ անա, փուր ասավ անա շունը չգօ: Իստուս մօնքաց, ինտուս մօնքաց, շունը չգօ: Մեմալ փուր ասավ անա, ցէն մէ էյէվ:

— Ո՛ւ, ո՛ւ, ո՛ւ...

Յետ աշէց անա, շունէ ծառինէ ծային գալաթին մէջն ա: Թէռավ, ցիուն փուր ասավ անա, ցին ալ չգօ: Մարթէ քէլօխը գախ ցքաց չայխանանիվէ էյէվ, նեստավ: Ումէց հեղէ խաբրէ չի, քիդէս թա լիզուն գուլ դէված ուներ: Մեմալ ու փուր ասավ անա, ույնէ ցիուն վաան մէզ մարթ մէ քուկա: Մարթէ մօղգինացավ անա, ասաց.

— Մազամ (մազա) խօզ շունան ալ խօզ կօղ գօննա գու:

Ասացող՝ Քյազիմ Կարաիբրահիմով, ծնվել է 1926թ. Աղունոզ քեր ((Գօնլի դաս, Կանլի դարա) գյուղում, բնակվում էր Ղազախստանի Չիմքենդի մարզի Սայրամի շրջանի Չիրկինո գյուղում, աշխատում էր կոլտնտեսությունում: Գրառել են 1987թ. հունիսին Չիրկինոյում:

ԱՐԳԵԼԷՑԻՔ՝ ԱՎՉԻ

Արդէլէցիք ավջիլուղա քենացին: Հինգ հօքի մարթ քենաց: Քենացին անա, արչօնէ ծագէ քեդան, փուր աին անա, արչէ էվնա չի, խօյին ա:

— Ի՞նչ էնիք, ի՞նչ էնիք օջ, մէզ հօքի մէ յետ թողուք մէջնիվա:

Մէզին աստին թա.

— Թուն նէ միդ:

Ասաց.

— Չա, վախի գում:

Մէգալին աստին թա.

— Թուն նէ միդ:

Ան ալ ասաց.

— Վախի գում:

Մէ հօքի մէ գար, քէլօխէ թէթվ էր, ան ասաց թա.

— Յես մէղնու գում:

Անու չվօնե գաբեցին, գույնիուս յետ թողին: Արչե քելօխ փեռնեց մէջէ: Քաշեց քելօխ գրդրեց: Յետ քաշեցին անա, մարթուն քելօխ չքար: Թուրցվի մարթիքէ աստին թա.

– Իսա մեղավ անա, քեզ քելօխ գա՞ր թա, չքա՞ր թա:

Մեզէ ասաց թա՝ չքիդիմ, մեզալը ասաց թա՝ չքիդիմ, մեզալն ալ ասաց.

– Չայդէ, էրթօք գենօջան հարցենիք:

Քենացին կյաղնիվէ, գենօջան հարցուցին.

– Աս աքվանա մարթըդ վիր էլավ անա, քելօխը վաա՞ն էր թա, վաա՞ն չէր թա:

Ան ալ ասաց թա.

– Քելօխ չքիդեն, համա բերբուքէ (բերվուքէ) ժածի գուր:

Ասացող՝ Քյազիմ Կարաիբրահիմով, ծնվել է 1926թ. Աղունօղ քեղ ((Գօնլի դաա, Կանլի դարա) գյուղում, բնակվում էր Ղազախստանի Չիմքենդի մարզի Սայրամի շրջանի Չիրկինո գյուղում, աշխատում էր կոլտնտեսությունում: Գրառել է 1987թ. Իունիսին Չիրկինոյում:

ԿՕՂԻՅԷ

Իյեք հաղիգ կօղ գանի: Յաար հեղէ սօյ էնգեր էնի: Չէրա կօղութին գենէնի: Մեզ օր մէ անէր մեզ մարթու մէ աչառէ կօղնուշ գուզենի: Ան մարթէ հերգէ գուր: Իյեք կօղան մեզ հաղիգէ մարթուն մօղգինցավ հեմ գօրչուշի գեբավ.

– Յէս շաշէնցա՞, յես շաշէնցա՞...

Մարթէ ասաց.

– Ի՞նչ աղավ, ինչի՞ շաշէնցար:

Ան ալի գօրչէ գուր: Չէրգօղ մարթէ գօրչօղ մարթուն մօղնիվա էյեվ: Մեզալ կօղիյէ մեզ աչառէ կօղցօն: Գօրչօղ մարթէ ասաց հերգօղ մարթուն.

– Մեզ աչառօվէ խօղէ ինչքէ՞ս հերգէ գուս, անու ամա յես շաշէնցա:

Մարթէ յետ փութ ասավ անա, մեզ աչառէ չքար, ասաց.

– Ախպար, յես ալ շաշէնցա:

Գօրչօղ մարթէ էնգերնուն մօղնիվա քենաց, աչառէ մօրթեցին, փայ ային: Չէդէվ էրգու էնգերէ հեղրա աղօն, մեզալին թերցուցին: Էրգու օմսու հեղէվ էրգուսէ աստին թա.

– Էրթօք մէ էնգերօջս փութ էնիք, ինչքես գաբրի, սօ՞յ ա թա, չօրն՞ դ ա թա:

Էգին անու դօնէ, մարթէ չքար: Գենիգէ դօնն էր: Դուննիվա մեղօն, չայ խեմէցին: Դիվարին վաան օջխօննէ միտ գախ էնգած էր: Դօնէ դիյէ ավջիլուղան էյեվ: Գենիգէ ասաց.

– Քու էնգերտաքէդ էգին, չայ խեմէցին, քեզի հարցուցին, քենացին:

Մարթէ օնգլօմիշ աղավ, ինա միտ անէր կօղնօղ ուն: Գենօջէ ասաց.

– Միտ սավքիին դագէ բահա:

Գենիգէ միտ սավքիին դագէ բահեց: Քիշէրէ կօղիյէ էգին, փութ ային, տեռվիքէ խաշնած ին: Մեզ հաղիգէ դունէ վայնան օջախին մէջնիվա մեղավ, փութ ասավ, միտ չքար: Ուսուլ–ուսուլ գենօջէ յօննիվա նէ մեղավ: Գենիգէ քիդէր թա մարթն ա: Կօղէ հարցուց գենօջէ.

– Միտ վօ՞րդաղ բահեցեր:

Գենիգէ ասաց.

– Միտ սավքիին դագն ա:

Ալի ուսուլ–ուսուլ գենօջէ յօննան էլավ, միտ առավ, թուռէ պաց ասավ, տուս էլավ: Գենօջէ մարթէ իմաց, գենօջան հարցուց.

– Միտ բահեցէ՞ր թա:

Գենիգէ ասաց.

– Քօ՞նի դօնում հարցնօղ էս:

Մարթէ օնգլօմիշ աղավ՝ միտ կօղցօն: Վի էլավ, թուռնիվա թեռավ: Փութ ասավ թա, կօղէ միտ դօնի գու: Միսին դիյէ կօղին ժըմնէց, ասաց.

– Թուն թաթրեցար, դու ինծի, հիմի յես դօնին:

Կօղէ քիդէր թա ույնէ էնգերն ա, միտ ուն դեվեց, ինքէ առչէթին քենաց: Մարթէ թարցավ, ալի դուննիվա էյեվ:

Կօղին էնգերէ էյեվ, հարցուց.

– Միտ ու՞վ ա:

Ան ասաց.

- Միտ քեզի դեվի՞ օչ թա:
- Չա, ինձի դեված չունիս:
- Օլախա (օլիյեսնա) միսին դիյե մեզնա կողցավ:
- Մեզ մեզին ասաց.
- Սուտ դադին մեք անու թրուցաք, ան մեզնա սոյ կոլ էր:

Ասացող՝ Ջելալ Օսմանի Կարաիբրահիմով, ծնվել է 1955թ. Ղազախստանի Չինքենդի մարզի Սայրամի շրջանի Չիրկինո գյուղում, ավարտել է Ֆրունզեի (Բիշքեկ) պետ. համալսարանի մեխամաթ. ֆակ., Չիրկինոյի ռուսական դպրոցի տնօրենն էր: Գրառել են 1984թ. մայիսին Չիրկինոյում:

ՄԱՆՔԷ

Գար-չքար, մարթ մե գար: Ան մարթը ինենասունին մախք աղած ուներ: Ան մարթե հալիվորցավ անա, փեղամբերին մօղնիվա քենաց, ասաց.

- Փեղամբեր, յես ինենասունին մախք աղած ունին, կողութին աղած ունին, մարթ ցվօնած ունին, մարթօցե խափած ունին, աշխար ժողված ունին: Յես ան աշխրյին դաղ չունին, իսա մախքօուս խալեւե գաի՞մ թա, ի՞նչ ենուշ բիդի խալետուշի ամա:

Փեղամբերե ասաց.

- Շադ մախք ունիս, անու ամա չօրս ջօմփուն առային մեծ չօր ծառ մե գօ, անու մօղե քարավանսարայ շինուշ բիդի, են-մեն էրթօղ-էգօղ մարթօցե առօնց փաա գուղեցընես: Ինչակ քի ծառե յեշիւնա օչ անա, մեգ մարթ մե ուղելու նեն օսնօղ չա:

Մարթե փեղամբերին աստածը ասվ, ան ծառե քեղավ, չօրս ջօմփուն առային քարավանսարայը շինեց, շադ մարթու ուղեցուց, ուղելու մարթ ան ջօմփացան նեն օսնի չեր:

Քիչ օր օնցավ, շադ օր օնցավ, բառավ մե պիը ափուն մօնի-մօնի գերթար: Մարթե դեսավ բառվուն, ցեն էյեդ.

- Սօմի, հաց ուղելու նեն օսնիլ մի, յես վաադ աղած ունին՝ ուղելու մարթ նեն օսնօղ չա:

Բառավե թվե թափեց, ասաց.

- Ուղուշի վաքիտ չունին, շադ էվադի պօն ունին:

Մարթե ալի բառավուն ցեն դեվեց, բառավե էյեվ օչ: Մարթուն սիրդե էլավ, թեվօնքե ափե առավ, ասաց.

- Ինենասունին մախք աղած ունին, քեզիօվե հաուր ըլլի քօղ:

Բառվուն ցվօնեց, յեդ աշեց անա, ծառե յեշիւցավ, մարթուն պիօնե պաց մենաց. «Քեզ ի՞նչ աղավ, աղադիգ մարթ ուղեցուցի՝ ծառե յեշիւցավ օչ, բառվուն ցվօնեցի, մախք այի՝ ծառե յեշիւցավ, էրթօմ փեղամբերին մօղե»: Մարթե քենաց, ասաց.

- Յես ալի մախք այի, համա ծառե յեշիւցավ:

Փեղամբերը ասաց.

- Յես բիթուն քիդին: Ան բառավե գերթար դադին ու ախչե-գօնե առան քագուշ մուգիթունօվ: Օնգուչ թի ինձի՞՝ մեգ-մեգալի հազ ընօղնօուն առան քագուշան ավելի մախք չգօ: Թուն անօց խալետեցեր, անու ամա քու մախքիյե Ասպածե սեփեց:

Ասացող՝ Մինիսա Կարաբաջակովա (օրիորդական ազգանունը՝ Ասկարովա), ազգությամբ բաթար, ծնվել է 1952թ. Թաթարական ԻԽՍՀ Ալմենտենսկի շրջանի Ռիբալա գյուղում: Ամուսնացել է 1968թ. և սովորել է Համշենի քաղաքի Խոփայի խոսվածքը: Ռուսաց լեզվի և գրականության ուսուցչուհի էր: Զրույցը լսել էր սկեսրայրից՝ Շաբան Սաիդի Կարաբաջակօղլուց (1892-1980թթ., ծնվ. Աջարիայի Գոնիո գյուղում): Բնակվում էր Ուզբեկստանի Սովետաբար թաղաքում, որտեղ էլ 1987թ. հունիսին գրառել են:

ՖՈՒՔԱՐԱ (ՖՈՒՔԱՎ) ԴԱՂԱՆ

Գար-չքար, մեգ ֆուքարա (ֆուքաա) դադա մե գար: Ան դադան զենգին մարթու մե ախչըգօնե հազ գեներ: Մեգ օխթի մե իմաց թա, զենգին մարթե ախչըգօնե գարթուշ գուգա: Դադան մօղե քենաց:

- Հօպար, քու մօղեդ էգի, իմացի թա, ախչիգեդ գարթուշ գուգես, յես անու շադ հազ գենին: Ի՞նչ ենուշ բիդի քեզի ենիշտա էլլուշի ամա:

Ձենգին մարթե ծիծաղեցավ, ասաց.

- Թուն ինչքե՞ս ինձի ենիշտա էլլօղ էս:

Ղաղան ալի ախչեց.

– Յեւ էնմէն աստածդ գէնիմ, թուն ասա, յես բիթուն գէնիմ:
Ձենգին մարթէ ալի ծիծաղեցավ, ասաց.

– Անու անա բիդի թեռնէ իյէք քիշէր դէգլեգ ցունին վասն բարգուշ:

Ղաղան ասաց.

– Հիմի ցէնէն ա, շադ ցուրդ ա, յես մէռնի գում:

Ձենգինէ ասաց.

– Վախէ մի, մէռնի չէս, աստաղնուն լուսան շողնա գուս:

Ղաղան քելոխէ քիլելոյ դունէ էյլ:

Քիչ օր գօսնի, շադ օր գօսնի, մէգ օր մէ գէնգին մարթէ քոյօէ լէրնիլէ դօնի գուր: Մէթնեց, ջօմփուն յօնին մէգ դուն մէ դէսավ, հազ ասավ, քէնաց դունէ, փութ ասավ անա, ան ֆութա-րա (ֆութաա) դաղին դունն ա: Թէռնէ ցուրդ էր, մարթէ ի՞նչ է-նէր, մէղավ դուննիուս, ասաց.

– Յես ասօր հօզա գինօմ անա, գէլի՞ թա, թեռնէ ցուրդ ա, մէթնեց:

– Հաբա, ի՞նչի էլի չի, նաս օնցի, նիստ, դաղվօրցի, յես հիմի չայ մէ դագգէնիմ,– ասաց դաղան:

Մարթէ բէդ ասավ, բէդ ասավ, օչ չայ գօ, օչ ալ դաղան գօ: Ի՞նչ աղավ դէ նա, մարթէ թուրս էլավ, դէսավ անա ծառինէ դագէ շադ բիծիգ գիյագ մէ գայի, ձառնեցէ վասն, շադ պարցէ դաղէ ձառնինէ չիբուխին չուօլէ օմօն մէ գախ էնգած ա, դա-ղան ալ մօղէ գօնգած (գունգած) ա.

– Դա, ի՞նչ գէնէս,– ասաց գէնգինէ:


– Ի՞նչ էնօղ ում, քէգի անա չայ յէփ օնի գում,– ասաց դա-ղան:

– Իդա չուդի իսա գիյագօվէս յէփ գըլլա՞ (կըլլա) թա, չուէ վօրդա՞ղ ա, գիյագէ վօրդա՞ղ ա.

Ղաղան ասաց.

– Ինչի՞ յէփ էլի չի, աստաղին լուսան շողնուշ գըլլի՞ր, ու իսա գիյագօվ չուր դաքնա չի՞ թա:

Ասացող՝ Ձելալ Օսմանի Կարաիբրահիմով, ծնվել է 1955թ., Ղազախստանի Հիմքենդի մարզի Սայրամի շրջանի Հիրկիմ գյուղում, ավարտել է Ֆրունզեի (Բիշքեկ) պետ. համալսարանի մեխմաթ. ֆակ., Հիրկիմոյի ոռոսական դպրոցի տնօրենն էր: Գրառել են 1984թ.մայիսին Հիրկիմոյում:



Ղրղական ԽՍՀ քարտեզ, 1979թ.



Տարբեր վայրերից եկած համշենցիների հետ, Ղրղզստան,
Օշի մարզ, Սուգակի շրջան, գ. Աբաբեկով (Բեգաբադ), 1987թ.

Չախից՝ Հաբիբ Քոչանիճեն, կինը՝ Թամարա Քոչանիճեն (Փոցբարովա),
Ս. Վարդանյանը, ք. Կրզըլ-Կիյա, 1984թ.



Հաբի Քոչանիճեն (ծնվ. 1900թ.) հարսի և բոռների հետ,
Օշի մարզ, գ. Ուչ-Կորգան, 1984թ.

Տարբեր վայրերի համշենցիներ, Ղրղզստան, գ. Աբաբեկով (Բեգաբադ), 1987թ.





Ղազարխարանի Չիրկինո գյուղի երեխաների հետ, 1987թ.





Մի խումբ համընցիներ, ք. Կըզըլ-Կիյա, 1984թ.



Հենդի Ակրոյուկօղլի (ծնվ. 1904թ.), գ. Աթաբեկով (Բեգարսոյ), 1987թ.
Նորապասակներ, ք. Կըզըլ-Կիյա, 1984թ.





Չախից՝ ամուսիններ Մսլյուդա և Հասան Շարաֆօղլիներ, Էմինե Քյուսոլլի, Սուլեյման Կարաիրրահիմով, Հարիբ Քոչանիչե, Օշի մարգ, ք. Իսկի-Նատուկայ, 1984թ

Մի խումբ համշենցիներ, ք. Կրզըլ-Կիյա, 1984թ.



Սավրիի վրա չախից՝ Քյազիմ Կարաիրրահիմովը և Ս. Վարդանյանը, գ. Չիրկիհն, 1987թ.

Համշենցի հալիվորներ, ք. Կրզըլ-Կիյա, 1984թ.





Համշենցի կանայք, ք. Կրգրլ-Կիյա, 1984թ.

Մինիսս Կարաբաջակովա (Ասկարովա),
Ուզբեկստան, ք. Սովնուրադ, 1987թ.



Արդվինի նահանգի Խոփայի զավառի համշենցի կանայք (լուսանկարը՝ Գ. Նանյանի)

Տիկին Սոֆի (ծնվ. 1910-ական թթ.),
ք. Կրգրլ-Կիյա, 1984թ.

Էմինե Բյուսողլի, Օշի մարզ,
ք. Իսկի-Նատկապ, 1984թ.





ՉԱԴՈՒ

Գար—չքար, մեզ կյաղին զենգին մարթ մե գար: Ան մարթ հյե դաղա ունե: Դաղաքե խերք ուննող դաղա էնի, բիթունն ալ թաղե (տաղե) գունի: Մեզ օր մե դաղե ասաց թա.

— Դե՛յ, Ասպած, ինծի մե ախչիզ մե դու, իմ վարիէթս ուղա թող:

Քիչ օր օնցավ, շաղ օր օնցավ, ան դօնե մէչե ախչիզ մե ուննվեցավ: Մեգալ քիչերը մարթուն մալան մեզ հաղիզ մե գօրսեվեցավ: Մեգալ օրե ալի մեզ մալ մա գօրսեվեցավ: Ան ախչիզե աղավ հեղեվ, էմնեն օր դօնան մալ գօրսեվի գուր: Դաղե ասաց մեծ դաղին.

— Աս քիչեր թաքի կումին մէչե, փութ աս թա, վօվ մալե կողնա գու:

Դաղան կումին քուն աղավ: Չարթեցավ անա, ալի մեզ մալ մե չքար: Դաղին սիրդե էլավ: Իսա ջօմփիս դաղե մէչքեղաղի դաղին ասաց: Ան ալ քենաց, քուն աղավ, գարթեցավ անա, ալի մալ մե չքար: Դաղին ալ ավելի սիրդե էլավ: Էմնենու բիծիզ դաղան ասաց թա.

— Յես էրթօմ բեղ էնիմ:

Կումե քենաց, անդաղ քիչ նեստավ, շաղ նեստավ, փութ ասավ անա, թուռե պացվեցավ: Դաղան ույնե աչվենսուն ավղեց օչ, բիծիզ քուր օօցքեցան վի էլած էր, կումնիվա էգած էր: Դաղան բուխչին խօսելու նեստավ: Մեմալ փութ ասավ անա, ախչիզե օչխարե գիյավ, անդի հեղեվ ուսուլ—ուսուլ քենաց ալի օօցքուցե մէչե բարգեցավ: Ախպային մազիյը վախութիման ջերմեգոն: Աքվանա դաղե դեսավ անա, ջօնչեց օչ: Ասաց.

— Մազիյը ինչի՞ ջերմեգած էն:

Դաղան ասաց.

— Կօղին յես փեռնեցի:

Ախչիզե իմաց, աչվենիյե դաղին վաանիվե շիլեց:

Դաղե հարցուց.

— Վօ՞վ ա:

— Վօվ էլլօղ ա, քու ախչիզն ա՝ օօցքուցե մէչե բարգօղը:

Դաղե քելօխնիվե գօրչեց.

— Ի՞նչ գասես, խերքեդ փախուցե՞ր թա, ախգօնե մախքե ինչի՞ գառնուս:

Դադին հեղե յար աղավ, դադե դօնան թուս հօնեց, թե-
ցուց: Դադան մեզ սօյ ցի մե ուուչեց, թեվօնքե առավ, ցիուն
վաան հեծավ, քենաց:

Քառսուն օր ջօմփա քենաց: Աշխասս էլավ: Ջօմփուն էր-
գու հադիգ բիծիգ լագօտ ռաստ էլել: Դադան ան լագօդնիյե
առավ հեղը: Քենաց, քենաց, ցախուդի մե մէչե մեզ հին դուն մե
ռաստ էլել: Մօդգինցավ, թըռնան փութ ասվ անա, բուխչին
մեզ գաիվ բառավ մե նեստած էր: Դադան մեղավ հօդանիվե:
Բառվուն ասաց.

– Յէս քու դունեդ գինօղ ում:

Բառավե հարցուց.

– Թուն վօ՞վ էս:

Ան ասաց.

– Յէս ավջի իմ, յես քեզի ամա միս փեյի (պէի) գում, թուն
թացօն գեփես, հեղրա գուդիգ:

Բառավե ի՞նչ ասեր, ռազի աղավ: Դադան էմմեն օր շունիօվե
ցախուդնիվե ավջիլուղա գերթար: Դուննիվա առօնց միս թառնա
չէր:

Քիչ օր օնցավ, շադ օր օնցավ, շընիյե մեծընցօն: Դադան
բառվուն ասաց.

– Յէս իմ կյադնիվե էրթօղ ում, շընիյե փութ աս, էմմեն օր
միս, գաթ ուն դու: Շընիյե յես թօղու մի, փութ էնես թա, իսա օ-
մօնին մէչը գաթե աղուն թարցավ, յես թօղու գուս էրգուսին
ալ:

Ասաց, ցիօնե վաան հեծավ, քենաց: Քենաց, քենաց, քե-
նաց, ջօմփադունաքե մեզ մարթ մե դեսավ օչ: Ույնե կյաղը պօ-
բեցավ, փօլօրը փութ ասվ, անդաղ ալ ումեց քեղավ օչ: Չառի
մե դազե նեստավ: Ցին ալ մօդե յես թօղուց: Ինքնուիմքե մը-
դուեց. «Քեզ ի՞նչ աղավ, հօգայի աբրօղ մարթիքե նօ՞ր քենա-
ցին»: Կյադին մարթ–մութ, ցեն–ցուն գաթե չքար: Խօդիյե էլ-
լած էնի, դենիյե ավիրած էնի, կումիյե բօշ ին, մալ–մուլ, ինչիկ
չքար:

Էմեդինա ցին խըրդեց (խըրդաց), խըրխընջաց: Դադան յեդ
աշեց անա, ցեն մե իմաց, մեզ հօքի մե քելօխնիվե գօրչե գուր:
Թօզե էլավ, թօզին մէչնան գենիգ մե դեսվեցավ, մօդգինցավ
անա, դադան ջօնչեց, ույնե բիծիգ քույն էր: Դադան դեսավ ա-
նա, վախեց: Վայի շեիյե ցիլադած էնի, աունքվենիյե էլած էնի,

մազիյե խարըված էնի: Դադան վախուչան ծառնիվե էլավ:
Քուր գօրչելօվ ծառին մօղը էլել, ասաց.

– Յես քեզի աշխարիս մօն կալօվ կեդնու չկարցի, թուն քե-
զի՞ (ինքե՞դ) էզիր թա: Բիթունօցե գիյա, թուն մենացեր: Չիմի
քեզի ուղօղ ում: Թեզ ինչի մօղըս:

Դադան ասաց.

– Մեմալ աշխարըս փութ էնիմ, ինչքես աշխար ա, անդի հե-
ղվ գուդես ինծի:

Դադան չօրս աչվենիօվե ջօմփուն փութ գեներ, շընօուն
բեդ գեներ: Շընիյե դեսվի չենի:

Մագաան (մագա) բառավե դօնան էլած էր: Յեփ ու էլել,
փութ ասվ անա, շընիյե գետեցաիվա խօղնիվա մեղած ին, գա-
թե օմօնին մէչե աղուն թարցած ա: Էմեդինա շընօուն յես թօ-
ղեց: Շընիյե գօփմիշ աղօն: Քուր թեմ էնգի չի գաա.

– Ինչի, քախցած իմ, ուղօղ ում քեզի:

Դադան ալի փօլօրե փութ ասվ, հեռու դաղնան դեսավ թօ-
զե էլած էր, ասաց ինքնուիմքե.

– Իմ շընիյե քուկօն:

Քուր թեմ էնգի չկաաց, ծառինե վաաննիվեր էլլուչի գեբավ:
Թեվե էրգենցուց դադին մօդնիվե, ան օխթին շընիյե ժըմնեցին,
քուօչե ցիլադեցին:

*Ասացող՝ Ջելալ Օսմանի Կարաիբրահիմով, ծնվել է 1955թ. Դազախստանի
Չիմքենդի մարզի Սայրամի շրջանի Չիրկիմ գյուղում, ավարտել է Ֆրունզեի
(Քիշքեկ) պետ. համալսարանի մեխմաթ. ֆակ., Չիրկիմոյի ռուսական դպրոցի
սնօրենն էր: Գրառել են 1987թ. հունիսին Չիրկիմոյում:*

ՕՅԷ

Գար–չքար, մեզ մարթ մե գար: Ան մարթե բիծի օխթաու հե-
ղվ ավջիլուղ գեներ: Շադ սօյ ավջի էր: Ան ավջին կյադին ջօ-
թին գինա գուր մաօվե: Մաը բառավ էր:

Մեզ օր մե ավջին քենաց ավջիլուղա: Ան ինչիկ ցվօնել
չկարցավ: Աաքազե մաի գուր, ավջին յես թարցավ: Փիշման

քուկար դուննիվա: Յախուդին ու դօնէ առային մեծ քեղ մէ գար: Ան քեղին մէչէ մեզ յաշիղ մէ լաղա (լաղէ) գուր: Ավջին գունգեցավ (գօնգեցավ), փուք աավ. յաշիղը քեղին հեղնին տայվա գերթա: Ինքնուիքէ ասաց թա.

– Քեզ ի՞նչ գօ յաշիղին մէչէ:

Թեռավ փրոնէց յաշիղը, փուք աավ անա, մէչէ մեծ օց մէ գար: Օցէ մարթու լիզու սօվրէ, խաբրէ գուր: Ասաց թա.

– Յէս քեզի ուղօղ ում:

Ավջին ասաց.

– Յէս քեզի խալըստցի, թուն ինծի ինչի՞ ուղօղ էս:

Օցէ ասաց.

– Ինծի քեզի բէս մարթ մէ չուրնիվա վա ցքէց: Անու անա բիթուն մարթօցէ յէս ուղօղ ում:

Ավջին ասաց.

– Հայրէ, հեղրա էրթօք, իյէք հաղիգ հօքօվօրցան հարց-միք, անէր ինչ ասին անա, ան գէնէս:

Քիչ քէնացին, շաղ քէնացին, ջօմփուն մեզ էշաղ մէ դէսան: էշաղը շաղ գահիվ էր, գօօվի բեղէղէ գուր: Անդէ օցէ հարցուց.

– Իսա մարթ ինծի քեղին մէչնան հօնէց, յէս իսա մարթուս ուղուշ գուգիմ, ի՞նչ խէրքըղ գըղրա գու:

էշաղը ասաց.

– Մարթօցը բիթուն ուղուշ բիղի, իմ դիյը ինծի կաունէ թա-դէցուց, ցէմէռէ թէոցուց:

Անդի հեղէվ մեզ ցի մէ ռաստ էյէվ, ան ալ ամօն ասաց: Էղի սօղը դաուշօնէ ռաստ էյէվ: Անու ալ հարցուցին: Դաուշօնէ ասաց թա.

– Յէս ցեզի ավդա չիմ, ինչբէ՞ս իսպօն մեծ օցէ բիծի յաշի-ղին մէչէ սաղմէցավ:

Օցէ ասաց թա.

– Մարթէ շիղագ գասա, յէս յաշիղին մէչն է:

Դաուշօնէ ալի ավդաց օչ: Ասաց.

– Հալա նէ միդ, փուք էնիմ:

Օցէ նէ մեղավ, քէլօխէ թուրցէվ մէնաց: Դաուշօնէ ասաց.

– Հաբա քէլօխէ սաղմէցավ օչ:

Օցէ քէլօխն ալ թիյէց յաշիղին մէչնիվա: Ան չախը դաուշօ-նէ յաշիղին խուփէ խաշնէց, մարթուն ասաց.

– Իսա աշխըիս բեղքութիւնին չօքուղութիւն գէնին, իսա իս-պօն աշխար ա:

Մարթէ յաշիղը առավ, ալի քեղնիվա վա ցքէց: Յէս թառնէ-լէ ինքնուիքէ ասաց.

– Ասօր ինչիգ ցվօնէլու ինչբէ՞ս դուննիվէ թառնօմ:

Թէվօնքը ափէ առավ, դաուշօնին ցվօնէց, ասաց.

– Դաուշօնէ շիղագ գասէր, իսա աշխըիս բեղքութիւնին չօ-քուղութիւն գէնին, իսա իսպօն աշխար ա:

Ասացող՝ Ջելալ Օսմանի Կարաիբրահիմով, ծնվել է 1955թ. Ղազախստանի Չիմքենդի մարզի Սայրամի շրջանի Չիրկինո գյուղում, ավարտել է Ֆրունզեի (Քիշքեկ) պետ. համալսարանի մեխմաթ. ֆակ., Չիրկինոյի ռուսական դպրոցի տնօրենն էր: Գրառել է մ 1988թ. օգոստոսին երևանում:

ՇԱԾԷ

Գանի–չքանի, իյէք ախպար գանի: Էրգու ախպարդաքէ խէրք ունէնի, մեզը՝ խէրքան բագաս էր: Էրգուսէ աստին.

– Ինչակ յէ՞փ մէք թաղօղ ուք, ան ուղօղ ա, մէք էրթօք դօ-նան, ասու դօնէ օթօլ էնիք:

Վի էլան, քէնացին: Շաշէ ինչ ու դօնէ գար անա, գիյավ, քախցած մէնաց անա, ան ալ էլավ, քէնաց: Քէնաց, քէնաց, մեզ գէնգին մարթու մէ ռաստ էյէվ: Մարթէ ասաց.

– Նօ՞ր գերթաս, այլ ինծի հօյիվ աղի:

Դաղան ռազի աղավ: Մեզալ աքվանա դաղան ածիյէ քէ-շէց, մարթուն ասաց.

– Ինծի ցուլգվա (ցուլգվէնցու) հացէ խէրգա:

Ան օլ մարթէ հացէ խէրգեց, մեզալ օր ալ խէրգեց, յէքինջի օլ մօլիյէցավ:

Հօյիվը բեղ աավ, բեղ աավ, հացէ պիյօղ օօք չգօ: Փօլօրէ փուք աավ, խէնծօրի ծառ մէ դէսավ, ածիյէ անթուս քէշէց: Խէնծօրնէցէ վաան խէնծօրէ գիլիմած էր: Ածօուն ասաց.

– Յէս խէնծօրէ վար թափի գուն, թուք ինծի անա ժօղվէ-ցէ:

Դադան խենձօրտ վար թափեց, ինչպիսիք, փութ ասվ անա, ածիյե խենձօրնիյե բիթուն գիյաձ ունին: Սադե մեգ աձու մե գօդօշին առային խենձօր մե մենաաձ էր: Սիրդե էլավ, բիթուն աձուն մօրթեց, անու օրօլ ասվ:

Իգվօն աձունն դիյը էյեվ, փութ ասվ անա, ածիյե բիթուն մօրթեվաձ ին, սադե մեգե մենաաձ ա: Հօյիվան սերդօդ հարցուց.

– Ի՞նչ աեր աձունս, ինչի՞ մօրթեցեր:

Հօյիվե ասաց.

– Թուն ինձի ամա հաց խերգեցեր օչ, յես աձունն աստի թա, խենձօրը վար թափի գուն, թութ ժողվեցեր, աներ բիթուն գիյան, իսա աձըս ինձի ամա մեգ հադիգ մե գօդօշին առային օրօլ ասվ, անու ամա իսու մօրթեցի օչ:

Մարթե ինաց անա, իսա շաչ հօյիվիս թեցուց:

Ասացող՝ Ջելալ Օսմանի Կարաիբրահիմով, ծնվել է 1955թ. Ղազախստանի Չիմքենդի մարզի Սայրամի շրջանի Չիրկինո գյուղում, ավարտել է Ֆրունզեի (Բիշքեկ) պետ. համալսարանի մեխմաթ. ֆակ., Չիրկինոյի ռուսական դպրոցի տնօրենն էր: Գրառել էմ 1984թ. դեկտեմբերին Երևանում:

ԵՐԳԵՐ ԵՎ ԽԱՂԻԿՆԵՐ

խատում: Հաճախ ամառային արձակուրդները անց է կացրել հայրենի գյուղում՝ Մաքրիյալում, ուր հարսանիքների և գյուղացիների համատեղ աշխատանքների ժամանակ լսել է նրանց երգերը և երազել դրանք թողարկել ծայնասկավառակով: Նա խոփայի գավառի իր հայրենակիցներից տարբեր տարիներ լատինատառ գրի է առել «Սաա, աաքազ, մաա», «Նեննի, նեննի», «Հելդանէ», «Էլլա, էլլա», «Հավազ ալի մերալէց», «Էրանդ», «Ռիննո նանայդա», «Կուկուն կուկա, գոնչա գու» և այլ երգեր, որոնց մեծ մասը տեղ է գտել «Վօվ ա» խտասկավառակի երգացանկում: Այդ երգերի խոսքերի և երաժշտության հեղինակներն անհայտ են: Նրանից տեղեկացա, որ համացանցից ինձ հայտնի «Լուս էդ, օնցար» երգը նույնպես ինքն է իր հայրենակիցներից սովորել ու երգում:

«Ասա, օնդեր, ասա» երգն իրական պատմության արձագանք է. Ձենդիդ գյուղից Ֆադի անունով մի աղջիկ սիրահարվում է Ջուրփիջի գյուղի մի երիտասարդի: Ծնողները դեմ են լինում, և աղջիկը տղայի հետ փախչում է Ջուրփիջի: Գյուղացի երիտասարդ աղջկա համար աշխարհը Ձենդիդն ու Ջուրփիջին են, բայց երկուսն էլ դեմ են նրանց սիրուն ու անուսնությանը: Եվ հայրենի գյուղը, ուր վերադարձ չկար, նրա համար, փոխաբերական իմաստով, եկեղեցու փլատակների է նմանվում, Ջուրփիջին էլ նրա համար կարծես փլվում է ու լեռնալանջից թափվում ծովի ափը: Ինչպես ժողովուրդն է աւսում. «Աշխարհը նրա գլխին փուլ է գալիս»:

Երգի տարբերակները տարածված են խոփայի գավառում: Հիքմեթն իր իմացածը լրացրել է ավագ քրոջից՝ Գյուլեր Աբչիչեբից, և հորեղբորից՝ Օսման Աբչիչեբից լսած տարբերակներով, նաև ինքն է 13 տող հավելել (դրանք տպագրված են թեք տառերով):

«Վօվ ա»-ի թողարկումից հետո (2005թ.) նա քենալփաշացի իր ընկերոջից՝ Շերաֆեթթին Չելիքից, գրի է առել «Ասա, օնդեր, ասա» երգի մեկ այլ տարբերակ, որը ևս տպագրում ենք զուգահեռ թարգմանությամբ: Սա, փաստորեն, մեր ունեցած 5-րդ տարբերակն է: Այն վերնագրել ենք «Չափուզը թվեդ ցքա»: Ի դեպ, բոլոր հինգը միասին, գրական հայերեն թարգմանությամբ տպագրել ենք «Չայն համշենական» թերթում¹⁰:

Կրոնափոխ համշենցիների բանահյուսությունը և երգարվեստն առավել ամբողջական ներկայացնելու, ինչպես նաև խոփայի խոսվածքին ավելի համակողմանի ծանոթացնելու նպատակով «Երգեր և խաղիկներ» բաժնում ընդգրկվել են խոփայի խոսվածքով և գրական հայերեն իմ թարգմանությամբ 19 երգ և տարբերակ, նաև առանց թարգմանության 55 խաղիկ, որոնց զգալի մասը նոտագրված է*:

Դժվար չէ նկատել, որ խտասկավառակների երգերը հիմնականում ստեղծվել են տարբեր խաղիկների միավորումից: Այդ խաղիկներից մի քանիսը գրառվել են նաև Ղազախստանում և Ղրղզստանում: Դրանց և այս գրքում տպագրված հեքիաթների հեռու ու մոտ տարբերակները հանդիպում են նաև Արևմտյան և Արևելյան Հայաստանի տարբեր վայրերի բանահյուսական ժառանգության մեջ, ինչը վկայում է, որ չնայած կրոնական, տարածքային և ժամանակային տարանջատումներին, դրանք մեկ միասնական մշակույթի արտահայտություններ են:

* Չայնագրություններից նոտագրումը կատարել է Աշոտ Մուրադյանը, իսկ նոտաների համակարգչային շարվածքը՝ Գուրգեն Գասպարյանը: Տարբեր երգերում երկտողերի կամ տողերի առջև դրված թվերը նշում են, թե քանի անգամ են դրանք կրկնվում: Համարյա բոլոր երգերում և խաղիկներում հնչում են քա, դա, յէ կոչական ծայնարկությունները. քա - դիմելածն է իգական սեռին, դա - դիմելածն է արական սեռին, յէ - դիմելածն է ավագներին:

¹ Չայն համշենական, ժողովածու, գիրք 3-րդ, կազմեց, խմբագրեց, առաջաբանը գրեց և ծանոթագրեց Սերգեյ Վարդանյանը, Երևան, 1989, էջ 208-224: Տե՛ս նաև «Ժամանակ» թերթ, Երևան, 1999, 16 ապրիլի:
² Վարդանյան Ս., Համշենի մուսուլման հայերը, «Փյունիկ» պարբերաթերթ, Երևան, 1991, N1, էջ 3-4:
³ Վարդանյան Ս., Համշենի մուսուլման հայերը, «Իրան-Նամե» ամսագիր, 1993, N4, էջ 13:

⁴ Kazancı S. Bir Hemşin esintisi, "Agos", 2005, 7 Ekim.

⁵ Գյոքիան Բիրբենի «Յեյ գիդի, Քարադենիզ» («Յեյ գիդի, Սև ծով») խոսակցական «Հավազ ալի մերալեց» («Երկինքն էլի ամպեց») և 2008-ին բողոքական «Բիր քյուրքյու օմրյունմե» («Կյանքիս համար մի երգ») խոսակցական «Թուն սարի, մագդո սարի» («Դու՛ խարտյաշ, մագդ՛ խարտյաշ») երգերի թարգմանությունները տես Վարդանյան Ս., Գյոքիան Բիրբենի հալերեն երգերը, «Չայն համշենական», 2008, N 11-12:

⁶ Քազանջը Ս., Համշենյան զեփյուռ: Թուրքերենից թարգմանեց Տ. Լոքմագյոզյանը, «Չայն համշենական» ամսաթերթ, 2006, N3-4:

⁷ Baytar L., Hemşinliler Vova?, "Agos", 2005, 2 Aralık. Çilingir O., 'Serdouz serderdiyuz compa unigk!'. "Agos", 2005, 23 Aralık.

⁸ Խաչիկյան Հ., Եվս մի հրաշալի ծայնասկավառակ՝ «Vova», այսինքն՝ «Ո՛վ է», «Չայն համշենական» ամսաթերթ, 2006, N5-6:

⁹ Սահակյան Լ., Հայկական երգերը բռնի կրոնափոխված համշենցիների ինքնության հիշողություն և դրսևորում, «Չայն համշենական», 2007, N 7-8, N9-10: Sahakyan L., The Armenian Language as a Remembrance and Manifestation of the Islamized Hamshenians Ethnic Identity, Armenian Folia Anglistika, International Journal of English Studies, 2007, N2, pp.162-173. Սահակյան Լ., Հայկական երգերը բռնի կրոնափոխված համշենցիների ինքնության հիշողություն և դրսևորում, Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, հ. 5, Երևան, 2008, էջ 243-260:

¹⁰ Վարդանյան Ս., Մեկ երգի հինգ տարբերակ, «Չայն համշենական», 2008, N7-8:

ԱՍԱ՛, ԲԻԾԻԳ, ԱՍԱ՛ (ԱՍԱ՛, ՓՈՔՔԻԿ, ԱՍԱ՛)

2 { Ցունը էլեվ, փրոնեց չամին դալինե,
(Չյունը եկավ, ծածկեց սոճու ճյուղը),
Էրօնդ ախչիզ դեսա լեռնան քալինե¹,
(Սիրուն աղջիկ տեսա լեռից գալիս):

2 { Ալի քաուն կուքա, թորխ² ընօղ չե՞ս թա,
(Էլի գարուն կգա, թորխ չե՞ս անելու),
Փէրզը ափթ առնօղ ու գօռ³ քալօղ չե՞ս թա:
(Բրիչը ձեռքդ առնելու ու կոռի չե՞ս գնալու):

2 { Ինծի ալ քօլեցեր, թուն ալ աեցար,
(Ինձ էլ վառեցիր, դու էլ այրվեցիր),
Ջօմէին օղնինե լալօլ նեն օնցար:
(Սզկիթի բլուրով լալով այն կողմ անցար):

2 { Ասա՛, բիծիգ, ասա՛, քօ դարդըդ շաղ ա,
(Ասա՛, փոքրիկ, ասա՛, քո դարդը շատ է),
Բազի բիր քալես գու արդնիվեր՝ փադա:
(Երբեմն գնում ես արտնիվեր՝ փայտի):

¹ Ծիշողը քալե ձեն է, բայց, ըստ երևույթին, հանգի համար երգում են քալինե:

² Թորխ - քլունգի և ուրագի նման, երկարապոչ աշխատանքային գործիք՝ թորխ, թոխր, որով մանրում են հողակոշտերը, սերմերը ծածկում են հողով և այլն:

³ Գօռ - գյուղի բարեկարգման, համայնքի կարիքների կամ համագյուղացիների համար անվճար, խմբովի աշխատանք, որի ժամանակ հաճախ երգում են տարբեր խաղիկներ, պատմում հեքիաթներ:

Երգը 1984թ. գրառել են Ղրղզստանի Օշի մարզի Իսկի-Նաուկատ քաղաքի բնակիչ, ֆիզկուլտուրայի ուսուցիչ Սուլեյման Բեքթաշի Կարափերահիմովի (ծնվ. 1936թ. Բաթումում) խոփայի գավառի Չավուշլու գյուղում 1978թ. արած ծայնագրությունից:

ԱՍԱ, ԲԻԶԻԳ, ԱՍԱ

♩ = 100

Սազ

Սազ

Սազ

Սազ

Սազ

Յու - նը է - յիվ պիտ - նեց չա - մին դա - լի - նե.

Սազ

Է - բօնը ախ - չիզ ու - սա լեռ - նան քա - լի - նե.

Սազ

Սազ

Սազ

Ա - լի քա - ուն կու - քա քօրն ը - նօղ չէ՛ս քա.



փեր-գր աիբ առ - ճող ու գող բա - լող չէ՛ս բա



Ին - ճի ալ բո - լի - գրո թու՛ն ալ ա - լ - ցար

քո-ն՛ - ին օղ - ճի - ն՛ լա - լօղ ճե՛ն օն - ցար



Սագ

Ա-սա. բի - ծիգ. ա - սա բո դար-դող շաղ ա

Սագ

բա - գի բիր քա - լես գու արդ-նի - վեր փա-դա:

Սագ

ԱՍԱ՝ ՍԵՎԴԱՄ (ԱՍԱ՝ ԻՄ ՍԵՐ)

Քա՛, քու հաքուղ գաբան¹ մերաքլի խաղ ա,
(Աղջիկ, քո հագի կապան հաճելի երփներանգ է),
Բագի բիր քալես գու² օղնիվեր՝ փադա:
(Երբեմն գնում ես բլուրնիվեր՝ փայտի):

2 { Ասա՛, սեվդամ, ասա՛, քու դարդեղ շաղ ա,
(Ասա՛, իմ սեր, ասա՛, քո դարդը շատ է),
Բագի բիր քալես գու արդնիվեր՝ փադա:
(Երբեմն գնում ես արտնիվեր՝ փայտի):

Թուն ինձի քօլեցեր, թուն ալ աեցար,
(Դու ինձ վառեցիր, դու էլ այրվեցիր),
Ջօմէին օղնիվեր լալօվ քալեցեր:
(Սգկիթի բլուրնիվեր լալով գնացիր):

2 { Ասա՛, սեվդամ, ասա՛, քու դարդեղ շաղ ա,
(Ասա՛, իմ սեր, ասա՛, քո դարդը շատ է),
Բագի բիր քալես գու արդնիվեր՝ փադա:
(Երբեմն գնում ես արտնիվեր՝ փայտի):

Ալի աշուն կուքա, գօռ քալօղ չէ՞ս թա,
(Էլի աշուն կգա, կոռի չե՞ս գնալու),
Մօնգաղէ ափթ առնօղ, խօղ քաղօղ չէ՞ս թա:
(Մանգաղը ձեռքդ առնելու, խոտ չե՞ս քաղելու):

2 { Ասա՛, սեվդամ, ասա՛, քու դարդեղ շաղ ա,
(Ասա՛, իմ սեր, ասա՛, քո դարդը շատ է),
Բագի բիր քալես գու արդնիվեր՝ փադա:
(Երբեմն գնում ես արտնիվեր՝ փայտի):

¹ Գաբա - կապա, պարեգոտ, օգտագործվում է նաև բաճկոն իմաստով:
² Քալես գու - քայլում ես, այստեղ՝ գնում ես: Խոփայի գավառի համշենցի-ների մի մասն ասում է քալես գու, բայց շատերն ասում են քալէ գուս:

Խոսքի և երաժշտության հեղինակներն անհայտ են: Գրառել են Գյոքիան Բիրբենի «Ասա, սեվդամ» խոտասկավառակից:

**ԼՈՒՍ ԷՊ, ՕՆՑԱՐ...
(ԼՈՒՅՍ ԷԻՐ, ԱՆՑԱՐ...)**

Ասա, օնդէր, ասա, քու դարդդ շաղ ա,
(Ասա, անտեր, ասա, քո դարդը շատ է),
Բագի բիր քալէս գու արդնիվէր՝ փաղա,
(Երբեմն գնում ես արտնիվեր՝ փայտի):

2 { Բա՛, քու հաքուդ գաբան մերաքլի խաղ ա,
(Աղջիկ, քո հագի կապան հաճելի երփներանգ է),
Բագի բիր քալէս գու արդնիվէր՝ փաղա:
(Երբեմն գնում ես արտնիվեր՝ փայտի):

Քաուն քա՛ լէրնուքէ ծաղիգ ծաղգի գու,
(Գարուն գա՛ լեռներում ծաղիկ կծաղկի),
Ախչկէնին քալի գուն օղնիուս՝ չուա:
(Աղջիկները կգնան բլուրը՝ ջրի):

2 { Տօմէին օղնին լալօվ քալէցեր,
(Մզկիթի բլուրով լալով գնացիր),
Քա՛, քօլէցեր ինծի, թուն ալ աւցար:
(Աղջիկ՛, վառեցիր ինձ, դու էլ այրվեցիր):

Էրգինքուցէ աաքագ էդ ինձ ամա,
(Երկնքից արեգակ էիր ինձ համար),
Իզվան աղավ, մաւցար ու յէր օնցար:
(Երեկո եղավ, մայր մտար ու ետ անցար):

2 { Ֆաղի, քօ օթքինէդ փօթին նաղ աղավ,
(Ֆաղի՛, քո ոտքին կոշիկը նեղ եղավ),
Լուս էդ, օնցար, էրգու աչվիս քյօռըցավ:
(Լույս էիր, անցար, երկու աչքս կուրացավ):

2 { Ձուրփիջին խէչէցավ՝ ձօվուն չայն ինչավ,
(Ձուրփիջին փլվեց՝ ծովի ափն իջավ),
Ֆաղի՛, աս աշխարըս մէգի գօր աղավ:
(Ֆաղի՛, այս աշխարհը մեզ դժվար եղավ):

*Երգիչն ասում է նաև «քյօռ աղավ»:

Երգը ձայնագրված է համացանցից: Խոսքի և երաժշտության հեղինակներն անհայտ են, երգում է Հիքմեթ Աբչիչեքը:

**ԱՍԱ, ՕՆԴԷՐ, ԱՍԱ՛
(ԱՍԱ՛, ԱՆՏԵՐ, ԱՍԱ՛)**

Ասա, օնդէր, ասա, քու դարդդ շաղ ա,
(Ասա, անտեր, ասա, քո դարդը շատ է),
Բագի բիր քալէս գու՝ օղնիվէր՝ փաղա,
(Երբեմն գնում ես բլուրնիվեր՝ փայտի)

Քա՛, քու հաքուդ գաբան² մերաքլի խաղ ա,
(Աղջիկ, քո հագի կապան հաճելի երփներանգ է),
Բագի բիր քալէս գու սարնիվէր՝ փաղա:
(Երբեմն գնում ես սարնիվեր՝ փայտի):

Քաուն քա՛ օղնուքը կուկուն գօնչա գու,
(Գարուն գա՛ բլուրներում կկուն կկանչի),
Ախչկէնին քալի գուն արդնիվէր՝ թօրխա՛³,
(Աղջիկները կգնան արտնիվեր թորխ անելու),

Օմառ քա՛ լէրնուքը ծաղիգ ծաղգի գու,
(Ամառ գա՛ լեռներում ծաղիկ կծաղկի),
Բարվէնին քալի գուն փօսնինէ՛ չուա:
(Պառաւները հարթավայրով կգնան ջրի):

Տօմէին օղնին լալօվ քալէցեր,
(Մզկիթի բլուրով լալով գնացիր),
Քա՛, քօլէցեր ինծի, թուն ալ աւցար,
(Աղջիկ՛, վառեցիր ինձ, դու էլ այրվեցիր),

Մաքրիյալ(ին)⁴ փօսնինէ լալօվ քալէցեր,
(Մաքրիյալի հարթավայրով լալով գնացիր),
Քա՛, քօլէցեր ինծի, թուն ալ աւցար:
(Աղջիկ՛, վառեցիր ինձ, դու էլ այրվեցիր):

Էրգինքուցէ աաքագ էդ ինձ ամա,
(Երկնքից արեգակ էիր ինձ համար),
Իզվան աղավ, մաւցար ու յէր օնցար,
(Երեկո եղավ, մայր մտար ու ետ անցար),

Պարցէ սարին ծաղիգ էդ թուն ինձ ամա,
(Բարձր սարի ծաղիկ էիր դու ինձ համար),
Աղիմ էէր, աւցար ու բօբգըցար:
(Երյամ էիր, այրվեցիր ու մրմռացիր):

Ֆաղի՛, քօ օթքինէդ փօթին նաղ աղավ,
(Ֆաղի՛, քո ոտքին կոշիկը նեղ եղավ),

Քու մօր քօվուշէ սրդիս խօջ աղավ,
 (Քո մոր ողբը ոստի պես սիրտս մխրճվեց),
 Ֆադի, գէ թեռանէ մեծ հարսնիք աղավ,
 (Ֆադի, ձեր դռանը մեծ հարսանիք եղավ),
 Քու մօր քօվուշէ սրդիս խօջ աղավ,
 (Քո մոր ողբը ոստի պես սիրտս մխրճվեց),
 Ձենդիդ⁵ քեզ(ի) ամա քիլիստ աղավ,
 (Ձենդիդը քեզ համար եկեղեցու պես ավերակ⁶ եղավ),
 Չուրփիջին⁷ խէչեցավ՝ ձօվուն չայն ինչավ,
 (Չուրփիջին փլվեց՝ ծովի ափն իջավ),
 Արդալամ⁸ խէչեցավ՝ ձօվուն չայն ինչավ,
 (Արդալան փլվեց՝ ծովի ափն իջավ),
 Ֆադի, աս աշխարղս մեզի գօր աղավ:
 (Ֆադի, այս աշխարհը մեզ դժվար եղավ):

¹ Քալէս գու - քայլում ես, այստեղ՝ գնում ես: Խոփայի գավառի համշենցիների մի մասն ասում է քալէս գու, բայց շատերն ասում են քալէ գու:

² Գաբա - կապա, պարեգոտ, օգտագործվում է նաև բաճկոն իմաստով:

³ Թօրիս - քլունգի և ուրագի նման, երկարապոչ աշխատանքային գործիք՝ թորիս, թոխր, որով մանրում են հողակոշտերը, սերմերը ծածկում են հողով և այլն:

⁴ Մաքրիյալ - գյուղ և համանուն գյուղախումբ Խոփայի գավառում, այժմ՝ Քեմալփաշա:

⁵ Ձենդիդ - գյուղ Խոփայի գավառում, այժմ՝ Բալըքլը:

⁶ Թեև տեքստում քիլիստ է, որը նշանակում է եկեղեցի, բայց թարգմանել են «եկեղեցու պես ավերակ», քանզի գավառի բոլոր եկեղեցիներն ավերակ են և տեղացիների համար քիլիստն դարձել է ավերակի, փլատակի հոմանիշ: Ի դեպ, Մաքրիյալ (այժմ՝ Քեմալփաշա) և Քայա գյուղերում կան երկու եկեղեցու ավերակներ:

⁷ Չուրփիջի - գյուղ Խոփայի գավառում, այժմ՝ Յուղդեր:

⁸ Արդալա - գյուղ Խոփայի գավառում, այժմ՝ Էշմեքայա:

Խոսքի և երաժշտության հեղինակներն անհայտ են: Երգը գրառել են «Կօլ ա» խտասկավառակից, երգիչը՝ Չիքմեթ Աքչիչեքն այն սովորել է Խոփայի գավառի իր հայրենակիցներից, ավագ քրոջից՝ Գյուլեր Աքչիչեքից և հորեղբորից՝ Օսման Աքչիչեքից, և ինքն էլ հավելել է 13 տող, որոնք տպագրել ենք թեք տառերով:

ՉԱՓՈՒԳԸ ԹԵՎԷԴ ՅՔԱ (ԿՈՂՈՎԸ ԹԵՎԴ ԳՑԻՐ)

Ասա, օնդեր, ասա, քու դարդեդ շադ ա,
 (Ասա, անտեր, ասա, քո դարդը շատ է),
 Բագի բիր քալէ գուս օղնիվեր՝ փադա,
 (Երբեմն գնում ես բլուրնիվեր՝ փայտի):
 Ջօմէին օղնինէ լալօվ քալէցեր,
 (Ազկիթի բլուրով լալով գնացիր),
 Քա, քօլէցեր ինձի, թուն ալ աեցար,
 (Աղջիկ, վառեցիր ինձ, դու էլ այրվեցիր):

Ալի աշուն կուքա, գօր քալօղ չէ՞ս թա,
 (Էլի աշուն կգա, կոռի չէ՞ս գնալու),
 Մօնգաղէ ափթ առնօղ, խօղ քաղօղ չէ՞ս թա:
 (Մանգաղը ձեռքդ առնելու, խոտ չէ՞ս քաղելու):
 Չափուզը¹ թվէդ ցքա, մադմօնէդ մօնա,
 (Կողովը թևդ գցիր, իլիկդ մանիր),
 Թեվէդ ջագաթես թի, հօքիս ալ հօնա,
 (Ձեռքդ ճակատիս դիր, հոգիս էլ հանիր):

¹ Չափուզ - շիվերով կամ ծղոտով գործված քառակուսի, կանթավոր, գույնզգույն ներկված փոքր կողով, որի մեջ կանաչ և աղջիկները դնում են իրենց ձեռագործները, թել ու ասեղը, կոճերը, հյուսվածքները, թելերի կծիկները, շյուղերը, իլիկը և այլն:

Խոսքի և երաժշտության հեղինակներն անհայտ են: Քեմալփաշացի Շերաֆեթին Չելիքից լատինատառ գրի է առել Չիքմեթ Աքչիչեքը:

**ՄԱԱ, ԱԱՔԱԳ, ՄԱԱ
(ՄԱՅՐ ՄՏԻՐ, ԱՐԵԳԱԿ, ՄԱՅՐ ՄՏԻՐ)**

- 2. Մաա, աաքագ, մաա,
(Մայր մտիր, արեգակ, մայր մտիր),
 - 1. Գունգի մի ծովուդ վաան,
(Մի կանգնիր ծովի վրա),
 - 2. Հաքվան հեղեք էգոդ ում,
(Առավոտյան հետո գալու եմ),
 - 3. Գունգած իմ խաբրիզ վաան,
(Ես իմ խոսքի տերն եմ):
-
- 2. Աաքագը շադ փարցն ա,
(Արեգակը շատ բարձր է),
 - 1. Չաթ մաիր օչ, գասիմ,
(Ասում եմ, թող բոլորովին մայր չմտնի),
 - 2. Աս դայի ինչուգ աշուն,
(Այս տարի մինչև աշուն),
 - 3. Չաթ օսնիր օչ, գասիմ:
(Ասում եմ, թող բոլորովին չանցնի):
-
- 2. Յէ՛ մա, ծաղը քաղեցի,
(Մայր, եգիպտացորենի տերևը քաղեցի),
 - 1. Գօթչազէ վօ՞վ ժօղվա,
(Ցողուններն ո՞վ հավաքի),
 - 2. Յէ՛ մա, սօղէ գարքօղ էս,
(Մայր, ի վերջո, ամուսնացնելու ես),
 - 10. Ինչուգ աշուն ալ բահա:
(Մինչև աշուն էլ պահիր):

խոսքի և երաժշտության հեղինակներն անհայտ են: Գրառել եմ «Վօվ ա» խտասկավառակից (երգիչներ Հիքմեթ Աքչիչեք և Էրսին Չելիք):

**ՆԵՆՆԻ, ՆԵՆՆԻ
(ՆԵՆՆԻ, ՆԵՆՆԻ)**

- Նեննի, նեննի, աման, աման,
(Նեննի, նեննի, աման, աման),
Ձեվաղնեցան փադ այի,
(Ծիվաղնուց վառելափայտ պատրաստեցի),
Նեննի, նեննի յար,
(Նեննի, նեննի յար),
Շալազէ թենէլ չկարցի:
(Շալակը դնել չկարողացա):
- 2 { Նեննի, նեննի, աման, աման,
(Նեննի, նեննի, աման, աման),
Օնդեր իսա աշխըրիս,
(Այս անտեր աշխարհում),
Նեննի, նեննի յար,
(Նեննի, նեննի յար),
Հազ աի, առնուլ չկարցի:
(Սիրեցի, առնել չկարողացա):
- Նեննի, նեննի, աման, աման,
(Նեննի, նեննի, աման, աման),
Ինա էնթու փօսիյէ,
(Այն կողմի հարթավայրերը),
Նեննի, նեննի յար,
(Նեննի, նեննի յար),
Սարի ծաղիզ ծաղգած ա:
(Սարի ծաղիկ է ծաղկել):
- 2 { Նեննի, նեննի, աման, աման,
(Նեննի, նեննի, աման, աման),
Աս դայի օֆ քաշէլօվ,
(Այս տարի օֆ քաշելով),
Նեննի, նեննի յար,
(Նեննի, նեննի յար),
Սերդիս աղուն գալված ա:
(Սրտումս արյուն է խցանվել):

ՆԵՆՆԻ, ՆԵՆՆԻ, աման, աման,
 (ՆԵՆՆԻ, ՆԵՆՆԻ, աման, աման),
 ՅԵս էրթօղ ում, էրթօղ ում,
 (Ես գնալու եմ, գնալու եմ),
 ՆԵՆՆԻ, ՆԵՆՆԻ յար,
 (ՆԵՆՆԻ, ՆԵՆՆԻ յար),
 Գավուրէ* նէն օսնօղ ում:
 (Գյավուրների երկրից այն կողմ եմ անցնելու):

2 { ՆԵՆՆԻ, ՆԵՆՆԻ, աման, աման,
 (ՆԵՆՆԻ, ՆԵՆՆԻ, աման, աման),
 Դա՛, քեզի թա առնում օ՛չ,
 (Տղա՛, եթե քեզ չառնեն),
 ՆԵՆՆԻ, ՆԵՆՆԻ յար,
 (ՆԵՆՆԻ, ՆԵՆՆԻ յար),
 ՅԵս ինձի ծօվէ ցքօղ ում:
 (Ես ինձ ծովն եմ գցելու):

* Գավուր - գյավուր թուրքերեն նշանակում է ոչ մահմեդական. անհավատ, քրիստոնյա, անգութ, կամակոր և Խոփայի գավառի բնակչությունը ԽՍՀՄ սահմանից այն կողմին ասում էր Գավուր. այսինքն՝ գյավուրների երկիր: Թեև ԽՍՀՄ-ը այլևս չկա, բայց որպես քրիստոնյա երկիր Գավուր են ասում Վրաստանին, նույնիսկ մահմեդական Աջարիայի մայրաքաղաք Բաթումում աշխատողի մասին ասում են. «Գավուրին մէչէ տաղի գու»: Քրիստոնյաներին չվիրավորելու համար այժմ Հ. Աբչիչեքը երգում է իր գրառած այլ տարբերակը. «Բաթումէ նէն օսնօղ ում»:

Խոսքի և երաժշտության հեղինակներն անհայտ են: Գրառել եմ «Վօլ ա» խտասկավառակից (երգիչներ՝ Երսիմ Չելիք և Այշենուր Քուլիվար):

ՀԵՅԳԱՆԷ (ՀԵՅԳԱՆԷ)

2. Սօմի, գափշին¹ ունի՞ս թա, հէյդանէ,
 (Տատիկ, անծրուկ ունե՞ս, հէյդանէ):
 Հէյդանէ, հէյդանէ,
 (Հէյդանէ, հէյդանէ),
2. Գօրքիդ² աղջիգ ունի՞ս թա, հէյդանէ,
 (Նախասենյակում աղջիկ ունե՞ս, հէյդանէ),
 Հէյդանէ, հէյդանէ
 (Հէյդանէ, հէյդանէ),
2. Էնիշտա էլլիմ քեզի, հէյդանէ,
 (Փեսա լինեմ քեզ, հէյդանէ),
 Հէյդանէ, հէյդանէ,
 (Հէյդանէ, հէյդանէ),
2. Գաղին, գազալ ունի՞ս թա, հէյդանէ:
 (Պնդուկ, ընկույզ ունե՞ս, հէյդանէ):
 Հէյդանէ, հէյդանէ,
 (Հէյդանէ, հէյդանէ),
2. Գաղին, գազալ ունի՞ս թա, հէյդանէ:
 (Պնդուկ, ընկույզ ունե՞ս, հէյդանէ):

¹ Գափշին, քափշին (խամսի ծուկ, տառեխանճանների կարգի մանր ծուկ) - անծրուկ:

² Գօրք, քօրկ, կօրք - ունի մի քանի նշանակություն՝ նախասենյակ, կողասենյակ, գոգ, գոգավորություն, նստած ժամանակ փորի և ազդրերի միջև առաջացած կորություն, գոգնոցի ներքևի երկու ծայրերը բարձրացնելիս առաջացող գոգավորություն:

Խոսքի և երաժշտության հեղինակներն անհայտ են: Գրառել եմ «Վօլ ա» խտասկավառակից (երգիչ՝ Ռեմզի Թաթար):

**ԿՈՒԿՈՒՆ ԿՈՒԿԱ, ԳՕՆՉԱ ԳՈՒ
(ԿԿՈՒՆ ԿԳԱ, ԿԿԱՆՉԻ)**

Կուկուն կուկա, զօնչա գու,
(Կկուն կգա, կկանչի),
Ալիմի¹ քելօխն ի վար,
(Ալիմի գլխին),
2 { Ասպած գըրագը դա թող
(Աստված կրակ թող տա)
Յագիջի(ն)² քելօխն ի վար:
(Գրագրի գլխին):

Մադմօնեդ մօնա, մօնա,
(Իլիկդ մանիր, մանիր),
Բիթուն քու մօե փօն ա,
(Բոլորը քո մոր գործն է),

2 { Քա, թուն հնծի քօլեցեր,
(Աղջիկ, դու հնծ վառեցիր),
Քեզի ալ Ասպած քօլա:
(Քեզ էլ Աստված վառի):

Դա, մալիյեդ հեյ աա,
(Տղա, տավարիդ ծայնիր),
Գօբալախտ փեի գուն,
(Մահակը կբերեն),
2 { Դա, թուն մի³ թա խենդաս օջ,
(Տղա, դու ուրախ օր չտեսնես),
Յես հարխանին ժեմնի գուն:
(Ես հարխանուն կհասնեն քեզ):

Քա, քու բաբե քօրծա գու,
(Աղջիկ, քո պապը գործում է),
Ուրփաթ օրիյե բելչադ,
(Ուրբաթ օրերը սանծի փոկեր),

3 { Քա, թուն մի³ թա խենդաս օջ,
(Աղջիկ, դու մի³ թե չես ուրախանում),
Նեշանլու³ էս թա, գերչադ:
(Նշանա³ ծ էս, իսկապես):

¹ Ալիմ – թեյամշակությամբ զբաղվող բնակավայրերի միջգյուղական ճանապարհների մոտ կառուցված թեյի տերևների զննման գրասենյակ: Ալըմ թուրքերեն նշանակում է «զնում»:

² Յագիջի – գրագիր. այստեղ՝ թեյի տերևների զննման գրասենյակի աշխատակից:

³ Խենդաս - նշանակում է խնդաս, ուրախանաս, ուրախ ապրես, խնդությամբ ապրես, խենդաս օջ – չխնդաս, ուրախ չապրես, լավ օր չտեսնես, նաև՝ մեռնես: Բայց ժողովրդական խաղիկներում խենդաս օջ ասվում է կատակով:

Խոսքի և երաժշտության հեղինակներն անհայտ են: Գրառել են «Վօյ ա» խոտասկավառակից (երգիչները Էրսիմ Չելիք և Չիքմեթ Աքչիչեք):

**ԷԼԼԱ, ԷԼԼՍ
(ԱԼԼԱՀ, ԱԼԼԱՀ)**

2 { Էլլա, էլլա, մեծ էլլա,
(Ալլահ, Ալլահ, մեծ Ալլահ),
Էնթու¹ քյաղէ վիյ էլլա:
(Դիմացի գյուղը վեր կենա)²:

2 { Էնթու քյաղին ախչքենին, յար,
(Դիմացի գյուղի աղջիկները, յար),
Ասթի քյաղսիյուզ յալլա³:
(Այս կողմի գյուղն անցնեն)⁴:

2 { Լուսնիկա երօնդ քիշեր,
(Լուսնկա սիրուն գիշեր),
Չայդէ, երթաք աս քիշեր:
(Արի, գնանք այս գիշեր):

2 { Չեդէվ չախ, ցենեռ գէլլի, յար,
(Չետո անծրև, ձմեռ կլինի, յար)
Վիյ էլ, երթաք աս քիշեր:
(Վեր կաց, գնանք այս գիշեր):

2 { Այէ, գարմիլիգ, այէ,
(Արի, կարմրիկ, արի),
Մօդինիդ ալ առ, այէ:
(Կողքինիդ էլ առ, արի):

2 { Մօդինեդ քա օչ անա, յար,
(Կողքինդ եթե չգա, յար),
Ջուք մէ խավօղ առ, այէ:
(Մի ճուք խաղող առ, արի):

2 { Ջօվէլէին օղնուքէ,
(Ջովելեի բլուրները),
Քուքուլի իմ⁵, քուքուլի,
(Կկվի պես միայնակ են),

4 { Դեվեք ինծի իմ սեվդան, յար,
(Տվեք ինձ իմ սիրածին, յար),
Յես ալ Աստրծուն՝ կուլի:
(Ես էլ Աստծուն՝ ծառա):

¹ Էնթու - նշանակում է այն կողմի, օգտագործվում է նաև դիմացի, կողքի իմաստով:

² Տարընթերցվում է նաև «Այն կողմի գյուղը բարձրացա»:

³ Յալլա - ճամփա ընկնել, գնալ:

⁴ Տարընթերցվում է նաև «Ասացի մեր գյուղը գան»:

⁵ Քուքուլի իմ - բառացի նշանակում է «կկու են». խոփայի գավառի համընցիներն այն ասում են փոխաբերական իմաստով, այսինքն՝ «Կկվի պես միայնակ են»:

Խոսքի և երաժշտության հեղինակներն անհայտ են: Գրառել են «Վօվ ա» խոսակավառակից (երգիչներ՝ Էրսին Չելիք և Չիքմեթ Աքչիչեք): Այն ճանաչված լազ երգիչ Քազըմ Քոյունջուի կատարմամբ, որպես Չամչենի ժողովրդական երգ, տեղ է գտել նրա ետմահու թողարկված «Չայդե» խոսակավառակում (2008թ.):

**ՅԷ ԽԱԼԱ
(ԱՅ ՀՈՐԱՔՈՒՅՐ)**

Մաղաղ էլլիմ խալահն,
(Մատաղ լինեմ հորաքրոջը),
Մեծենցուց խավուլահն,
(Մեծացրեց խավուլային)
Հաբա ինձի դեվօղ էր,
(Հապա ինձ էր տալու),
Ուն էեղ խաքի դաղին:
(Նրան տվեց ուրիշի տղային):

Յէ՛ խալա, յէ՛ խալա,
(Ա՛յ հորաքույր, հորաքույր),
Քու ախչիգէ չախալ ա:
(Քո աղջիկը կապուտաչ է):

Գալաշէ՛ մօլա, մօլա,
(Գոլ, գոլ քամին),
Իմ սեվդան վօրդախ կուլա,
(Իմ սիրածը որտե՞ղ է լալիս),
Իմ սեվդահն աչվենին
(Իմ սիրածի աչքերը)
Ինձի վօ՞րդաղ մօն կուկան:
(Ինձ ո՞րտեղ են ման գալիս):

Յէ՛ խալա, յէ՛ խալա,
(Ա՛յ հորաքույր, հորաքույր),
Քու ախչիգէ չախալ ա:
(Քո աղջիկը կապուտաչ է):

Սիյօղն էլավ, երգենցավ,
(Բաղեղը ելավ, երկարեց),
Ջերմագ արջեցէ հեղնիվեր,
(Ճերմակ կաղամախու հետնիվեր),
Յէս ալ աման էրգենա,

(Ես էլ այդպես երկարեի)
Իմ սեվդահն հեղնիվեր:
(Իմ սիրածի հետնիվեր):

Յէ՛ խալա, յէ՛ խալա,
(Ա՛յ հորաքույր, հորաքույր),
Քու ախչիգէ չախալ ա:
(Քո աղջիկը կապուտաչ է):

*Խոսքի և երաժշտության հեղինակներն անհայտ են: Խոփայի գավառի
իրենց հայրենակիցներից լատինատառ գրառել են Հիքմեթ Աբչիչեքը,
Սահիր Օզքանը և Յուսուֆ Վայիչը, 2000թ.:*

**ԹԵՎԷՍ ՓԵՌՆԱ
(ՉԵՌՔՍ ԲՈՂԻՐ)**

2 { Քա՛, հալա յեղ աշա, հալա
(Աղջի՛կ, հապա ետ նայիր, հապա)
Աչվէսեղ լուսէ դեսնում:
(Աչքերիդ լույսը տեսնեմ),
Հալա դաղնադ վի էլ, հալա
(Հապա տեղիցդ վեր ել, հապա)
Ինչվէս ես, բոյեղ դեսնում:
(Ինչպիսին ես, բոյդ տեսնեմ):

Թուն ալ ինծի հագ գէնե՞ս բա,
(Դու էլ ինձ սիրու՞մ ես),
Այէ հիմի թէվէս փեռնա,
(Արի հիմա ձեռքս բռնիր),

2 { Յես բեղ այի քեզիդ,
(Ես քեզ սպասեցի),
Թուն ալ ինծի բեղ աա:
(Դու էլ ինձ սպասիր):

Չախես քուքա թաքիդում,
(Կարծես անձրև կգա),
Չայէ մօնի-մօնի քաղա,
(Թեյն արագ-արագ քաղիր),

2 { Թուն ալ այէ մեզի հեղ,
(Դու էլ արի մեզ հետ),
Չախալ աչվի սոյ դաղա:
(Կապուտաչյա լավ տղա):

Քեղես ալի մեծէնցավ,
(Գետը նորից մեծացավ),
Մեզի առնօղ - դօնօղ ա,
(Մեզ առնել-տանելու է),

2 { Չօվէ քուլա հաս իգուն,
(Ծովը լացում է այս երեկո),
Ասա՛, օնդէ՛ր՛, թուն ասա:
(Ասա՛, անտեր, դու ասա):

Կրկնեցի ժամանակ ասում է Քյազիմ:

Երգում է «Ջերմագ» («Ճերմակ») վոկալ-գործիքային համույթը (Թուրքիա, Արդվինի նահանգ): Երգը քաղված է համացանցից: Երգը և նրա արդի արևելահայերեն փոխադրությունը տպագրվել է «Չայն համշենական» թերթի 2007թ. N9-10 համարում, տես Ս. Վարդանյան, Մահմեդական համշենցիների բարբառով նոր երգ:

**ԹՈՒՆ՝ ՍԱՐԻ, ՄԱԶԷԴ՝ ՍԱՐԻ
(ԴՈՒ՝ ԽԱՐՏՅԱՇ, ՄԱԶԴ՝ ԽԱՐՏՅԱՇ)**

- 2. Մաղմանեղ մօնա, մօնա,
(Իլիկդ մանիր, մանիր),
- 2. Բիթուն քու մօյը փօն ա,
(Բոլորը քո մոր արածն է),
- 2. Քա՛, յես քեզի առնօղ ում,
(Աղջիկ՛, ես քեզ առնելու եմ),
- 6. Խաբրէ մի հօզա-հօնա:
(Մի ասա այստեղ-այնտեղ):
- 2. Թուն՝ սարի¹, մազեղ՝ սարի,
(Դու՛ խարտյաշ, մազդ՛ խարտյաշ),
- 2. Թեռօնեղ հօղօլ թառի,
(Դռանդ առաջ բուի պես մնա),
- 2. Խաղվունեղ² դարաթ կօրծա,
(Օժիտի ձեռագործդ արագ գործիր),
- 6. Փախցենօղ ում աստայի³:
(Փախցնելու եմ այս տարի):
- 2. Երգելին քայնուշ ունիմ,
(Արտուն քաղհան ունեմ),
- 2. Ափուզ ավել, փերզ ունիմ,
(Չեռքիս ավել, բրիչ ունեմ)
- 2. Քա, քեզի առնում անա,
(Աղջիկ՛, եթե քեզ առնեմ)
- 6. Էռսուն օչխար վաղ ունիմ:
(Երեսուն ոչխար մատաղ եմ խոստացել):

¹ Սարի (արդ.՝ սայի) - դեղին, օգտագործվում է նաև խարտյաշ իմաստով:
² Խաղվուն - օժիտի մեջ դրվող ժանեկավոր ձեռագործ, որի վրա գույնզ-գույն թելերով, փայլվիլուն, մանր զարդերով ու ուլունքներով պատկերվում են ծաղիկներ, թռչուններ և զանազան նախշեր:
³ Աստայի-օգտագործվում է և միասին, և առանձին աս դայի:

Խոփայի համշենցիների ժողովրդական երգ է, որի խոսքի և երաժշտության հեղինակներն անհայտ են: Ասացողներն են՝ Յաշար Քարաօսմանօղլուն և Ալթան Ջիվելեքը: Գրառել են Գյոքհան Բիրբենի «Բիր թյուրթյու օմրյումե» («Կյանքիս համար մի երգ»), (2008թ.) խոսակավառակից:

**ՀԱՎԱԶ ԱՆԻ ՄԵՐԱԼԷՑ
(ԵՐԿԻՆՔՆ ԷԼԻ ԱՄՊԵՑ)**

- Հավազ ալի մերալեց – օնդեր,
(Երկինքն էլի ամպեց – անտեր),
Թաքիդում չախս էգօղ ա – օնդեր,
(Կարծես անծրև է գալու – անտեր),
- 2 { Ասքած ունիմ սելդաին – օնդեր,
(Իմ սիրածին ասել եմ – անտեր),
էգօղ, ինձի դօնօղ ա – օնդեր:
(Գալու, ինձ տանելու է – անտեր):
- 2 { Զախ քուքար ու քընացեր – օնդեր,
(Անծրև էր գալիս, որ գնացիր – անտեր),
Ցուն քուքա, նօ՞ր մենացեր – օնդեր,
(Չյուն է գալիս, ու՞ր մնացիր – անտեր),
էռսուն օչխարուն ամա – օնդեր,
(Երեսուն ոչխարի համար – անտեր),
Գյուրջիստանին մենացեր – օնդեր,
(Վրաստանում մնացիր – անտեր):
- Թուն այրի ու յես այրի – օնդեր,
(Դու մենակ ու ես մենակ – անտեր),
Յար, մեզիզի վօ՞վ վարի – օնդեր,
(Յար, մեզ ո՞վ խղճա – անտեր),
- 2 { Թուխթ մը քիյա քու դադին – օնդեր,
(Մի նամակ գրի քո հորը – անտեր),
Քիչ մը ինձիզի վարի – օնդեր:
(Մի քիչ ինձ խղճա – անտեր):

*Վարի – խղճա, կարեկցի, ափսոսա, համակրի:

*Մինչև 1938թ. համշենցիներն, ըստ սովորության, իրենց ոչխարները տանում էին ԽՍՀՄ սահմանից այն կողմ՝ Վրաստանի ձմեռանոցները, իսկ անունները բարձրացնում էին Արդահանի լեռների արոտավայրերը: Երգում արդիվը բողոքում է, որ իր սիրեցյալը երեսուն ոչխարի համար երկար ժամանակ մնացել է Վրաստանում:
 Երգը գրառել են «Յեյ գիդի, Քարադենիզ» (երգիչ՝ Գ. Բիրբեն, 2003թ.) և «Վօվ ա» (երգիչ՝ Է. Չելիք, 2005թ.) խոսակավառակներից:*

**ԷՐԱՆԳ
(ԳԵՂԵՑԻԿ)**

- 2 { Իդա հաքուդ գաբաին
(Այդ հագիդ կապայի)
Ադու մոզան վի էլավ
(Դրա մոզան դուրս եկավ):
- 4 { Ձիափըն ինչի սելդուդում
(Շուկայում սիրածս)
Էրանդ մոզանիր էլավ:
(Գեղեցիկ մոզաներ էլավ):
- 2 { Քա, աշուն ու քա անա,
(Աղջիկ, աշունը որ գա)
Դոնծեցան խավօղ քաղա,
(Տանծենուց խաղող քաղի):
- 6 { Քա, յես քեզի առնօղ չիմ,
(Աղջիկ, ես քեզ չեմ առնելու),
4. Իստարսեն վերվեր խաղա:
(Ինչքան ուզում ես վերվեր պարի):

*Խոսքի հեղինակն անհայտ է, երաժշտությունը Մուստաֆա Բիբերի:
Գրառել են «Վօլ ա» խտասկավառակից (երգիչ՝ Էրսին Չելիք):*

**ՌԻՆՆՕ ՆԱՆԱՅԳԱ
(ՌԻՆՆՈ ՆԱՆԱՅԳԱ)**

Քա, ի՞նչ աղավ քեզիգի,
(Աղջիկ, ի՞նչ եղավ քեզ),
Իժէ կուլաս, կուլաս,
(Միշտ լալիս ես, լալիս),
Մեզ նըշանլու մէ ունիս,
(Մի նշանած ունես),
Մեմալ ինչի՞ մօն կուկաս:
(Մեկն էլ ինչու՞ ես փնտրում):
Չօվէ գագաղի թարցավ,
(Ծովը նավթ դարծավ),
Քեզի լօմբա չվիդի՞ թա,
(Քեզ լամպ պետք չի՞),
Քու դադին ու քու մօը,
(Քո հորն ու քո մորը),
Բիծի հարս մէ չվիդի՞ թա:
(Մի փոքրիկ հարս պե՞տք չի):
Դադ չունիմ ու մար չունիմ,
(Հայր չունեմ ու մայր չունեմ),
Կուղաին մէչէ մարցու չունիմ,
(Մածնամանի մեջ մերան չունեմ),
Հաքվան գուրբաթ էրթօղ ում,
(Առավոտյան գնալու եմ օտարություն),
Էդէթիաս լօխ չունիմ:
(Հետևիցս լացող չունեմ):
Չախցուցէ ալուր ունիմ,
(Ջրաղացում ալյուր ունեմ),
Յես քինա ումուդ ունիմ,
(Ես քեզանից հույս ունեմ),
Դա, յես թա քեզի առնում,
(Տղա, թե ես քեզ առնեմ),
Գուրբան վադ աղած ունիմ:
(Մատաղի խոստում եմ արել):

*Խոսքի և երաժշտության հեղինակներն անհայտ են: Խոփայի գավառի իր
հայրենակիցներից լատինատառ գրի է առել Հիքմետ Աքչիչեքը:*

**ԱՆՉԻՔՆ ԷՆԳԱՎ ՓԵՆՉԱՐԱՆ
(ԱՂՋԻԿԸ ԿՌԹՆԵՑ ՊԱՏՈՒՀԱՆԻՆ)**

- Ախչիզն էնգավ փենջարան,
(Աղջիկը կռթնեց պատուհանին),
2. Խաբ¹ ճարթվեցան վաան,
(ժողովուրդն իրար ծեծեց նրա համար),
ճարթվեցան կեղափնուզե
(Կռվեցին գետափում)
2. Էլչին էլչեց վաան:
(Խնամախոսը խնամախոսի հետ):
Դադե խարջը² գըղրեց օչ,
(Հայրը վարձքին չհամաձայնվեց)
2. Ցքեցին հօպօը վաան,
(Գցեցին հորեղբոր վրա),
Հօպար խարջը գըղրեց
(Հորեղբայրը համաձայնվեց)
2. Հազար ալթունի վաան:
(Հազար ոսկով):
- Քաշօղ ում,- աստած ուներ
(- Փախցնելու են,- ասել էր)
2. Ան Չեբինաին դաղան:
(Այն Չեբինայի տղան):
- Անու քաշե չի գաեք,
(- Նրան չեք կարող փախցնել),
2. Օխտն ախպար ունի վաան:
(Իրենից մեծ յոթ եղբայր ունի):

¹ Խաբ – ժողովուրդ, հասարակություն, օտար մարդիկ:

² Խարջ – հարսնացուի ծնողներին տրվելիք նյութական փոխհատուցում:

Այս երգը 1987թ. հունիսին ծայնագրել են Ղազախաստանի Չինքենդի մարզի Սայրամի շրջանի Չիրկինո գյուղում Խաթիջե Դուրսունի Կարակչիօղլիից. ծնվ. 1940թ. Աջարիայի ճառնալ գյուղում:

**ԱՅԷ՛, ԽԱՌԻԼԱ, ԱՅԷ՛
(ԱՐԻ՛, ԽԱՌԻԼԱ, ԱՐԻ՛)**

- 2 { Այե՛, Խաուլա, այե,
(Արի, Խաուլա, արի),
Ջուբ մե խավօղ ա՛ն, այե՛,
(Մի ճուբ խաղող առ, արի),
- 2 { Սիրդես քեզի հազ գենա, օ՛յ,
(Սիրտս քեզ սիրում է, օ՛յ),
Սըրդիս վաան յօն այե:
(Կրծքիս վրա հենվիր):
- Յես աս քիշեր դեսա քեզի
(Ես այս գիշեր տեսա քեզ)
Իմ քեռոնես առչեվես,
(Իմ տան առջև),
Օ՛ֆ, քեզի առնում յես,
(Օ՛ֆ, քեզ առնեմ ես)
Թուն ալ ինձի հազ գենես:
(Դու էլ ինձ ես սիրում):
- Հայդե օսնիք էնթու օղե
(Արի անցնենք դիմացի բլուրը)
Մեմե պօլիյեդ աշա,
Մի հատ շուրջդ նայիր),
Պօլօրնուքեդ նեն աշե մի
(Շուրջբլուրիցդ այն կողմ մի՛ նայիր)
Մեմալ ինձի յօն աշա:
(Մի անգամ էլ իմ կողմ նայիր):
- 2 { Օ՛ֆ, քեզի առնում յես,
(Օ՛ֆ, քեզ առնեմ ես)
Թուն ալ ինձի հազ գենես:
(Դու էլ ինձ ես սիրում):
- 2 { Աաքազե մաեցավ, օ՛յ,
(Արեգակը մայր մտավ, օ՛յ),
Քա՛, իմ սիրդես աեցավ,
(Աղջիկ, իմ սիրտը այրվեց),

2 { Ինչպէ՛ յէ՞ քզի քէ՛ տնիմ,
(Մինչև ե՞րբ քեզ սպասեմ),
Բէ՛ր էնելօվ թաթրեցա:
(Սպասելով հոգնեցի):

Այէ՛, Խաուլա, այէ,
(Արի, Խաուլա, արի),
Ջութ մէ՛ խավօղ ա՛ռ, այէ՛,
(Մի ճութ խաղող առ, արի),

2 { Սիրդէս քէ՛զի շաղ հազ գէնա,
(Սիրտս քեզ շատ է սիրում),
Սըրդիս վաան յօն այէ:
(Կրծքիս վրա հենվիր):

2 { Քա՛, գազլին գաբուղացան
(Աղջիկ, ընկուզի կեղևից)
Իմ քէվիյէս շաղ սելցօն,
(Իմ ձեռքերը շատ սևացան),
2 { Քա՛, իղա բու մե՛ծ դարդաղ
(Աղջիկ, քո այդ մեծ դարդից)
Իմ սիրդէս շաղ աեցավ:
(Իմ սիրտը շատ այրվեց):

Այէ՛, Խաուլա, այէ,
(Արի, Խաուլա, արի),
Ջութ մէ՛ խավօղ ա՛ռ, այէ՛,
(Մի ճութ խաղող առ, արի),

2 { Սիրդէս քէ՛զի հազ գէնա, օ՛յ,
(Սիրտս քեզ սիրում է, օ՛յ),
Սըրդիս վաան յօն այէ:
(Կրծքիս վրա հենվիր):

Երգը 1987թ. հունիսին ծայնագրել էմ Նուրիյե Մուհամեդի Կարաիբրահիմովայից, ծնվ. 1965թ. Ղրղզստանի Օշի մարզի Կրզըլ - Կիյա քաղաքում, ամուսնանալուց հետո բնակվում էր Ղազախստանի Չինբենդի մարզի Սայրամի շրջանի Չիրկինո գյուղում:

Երգը սովորել էր ավագ եղբորից՝ Յաշար Կարաիբրահիմովից, ծնվ. 1954թ., կրթությունը՝ բարձրագույն, բնակվում էր Կրասնոդարի երկրամասի Բելորեչենսկի շրջանում:

ԱՅԷ՛, ԽԱՈՒԼԱ, ԱՅԷ՛

**ՀԻՆՔ ԴԱՅԻ ՇԱՀԱՐԻՆ ՅԷՍ
(ՀԻՆՔ ՏԱՐԻ ՔԱՂԱՔՈՒՄ ԵՍ)**

Հինգ դայի շահարին յես
(Հինգ տարի քաղաքում ես)
Յէ՛ մա, գարթեցա,
(Մայր, ուսանեցի),
Մեզ էրօնդ ախշիզ մէ յես
(Մի սիրուն աղջկա ես)
Անդախ ջօնչեցի:
(Այնտեղ ծանոթացա):

Ախշկօնէ շաղ հազ այի,
(Ախշկան շատ սիրեցի),
Էլլէ չի սրողաս,
(Սրտիցս դուրս չի գալիս),
Նօթուզ էրթօմ անա յես,
(Ուր էլ որ գնում եմ),
Էլլէ չի մեղնաս:
(Ստրիցս դուրս չի գալիս):

2

Իսա պօնես, յէ՛ մա,
(Այս բանը, մայր),
Յես քեզիզի գասին,
(Ես քեզ ասում եմ),
Օնգլամիշ աղի ինծի՝
(Հասկացիր ինձ)
Գարթեվուշ գուզին:
(Ամուսնանալ եմ ուզում):

2

Ռազի էլլիս օջ, անա,
(Եթե համաձայն չլինես),
Դօնաս էրթօղ ում,
(Տնից գնալու եմ),

2 { Ինչ ու ասես անա թուն,
(Ինչ որ էլ դու ասես),
Սողե առնող ում:
(Վերջը առնելու եմ):

Օնգուչ թի օչ քեզի,
(Քեզ ականջ չդրեցի),
Ախչկօնե առի,
(Աղջկան առա),

2 { Ինչ ընուշես յես չքիդիմ,
(Ինչ անելս ես չգիտեմ),
Իմ սիրողես գայի:
(Իմ սիրտը այրվում է):

Դուխի կուզա, պուդրա կուզա,
(Օծանելիք է ուզում, դիմափոշի է ուզում),
Պամադա կուզա,
(Շրթներկ է ուզում),

2 { Յե՛ մա, յես շաշէնցա,
(Մայր, ես գժվեցի),
Ինձի խալեսա:
(Ինձ փրկիր):

Ախչկօնե տա չի գայիմ
(Աղջկան հարվածել չեմ կարող)
Սուդնիվե գերթա,
(Դատարան կգնա),

2 { Նօյթուզ էրթօմ անա յես,
(Ուր էլ որ ես գնում եմ),
Իմ հեղես կուքա:
(Ինձ հետ գալիս է):

Դուխի կուզա, պուդրա կուզա,
(Օծանելիք է ուզում, դիմափոշի է ուզում),
Պամադա կուզա,
(Շրթներկ է ուզում),

2 { Յե՛ մա, յես շաշէնցա,
(Մայր, ես գժվեցի),
Ինձի խալեսա:
(Ինձ փրկիր):

*Երգը 1987թ. հունիսին ծայնագրել եմ Նուրիյե Սուհամեդի Կարաիբրահի-
մովայից, ծնվ. 1965թ. Դրղաստանի Օշի մարզի Կրզըլ-Կիյա քաղաքում, ա-
նունանալուց հետո բնակվում էր Ղազախստանի Չիմբենդի մարզի Սայ-
րամի շրջանի Չիրկինո գյուղում: Երգը երիտասարդ տարիքում հորինել է
Չիրկինո գյուղի ռուսական դպրոցի տնօրեն Ջելալ Օսմանի Կարաիբրահի-
մովը, ծնվ. 1955թ.:*

ՀԻՆԳ ԴԱՅԻ ՇԱՀԱՐԻՆ ՅԵՍ

7/8

Դու - խի կու - գա, աբող - լա կու - գա, աբ - մա - դա կու - գա,
 Դինգ դա - յի շա - հա - լին յես յի մա, գար - թե - ցա,
 մեզ է - բունդ ախ - չիզ մե յես աճ - դախ բուն - յե - ցի,
 Ախ - կո - նե շար հազ ա - յի, էլ - լե չի սըր - դաւ,
 Եօյ - բուզ էր - բոմ ա - նա յես, էլ - լե չի մեր - նաւ
 Ի - սա պօ - նես, յի մա, յես թե - զի - զի գա - սիմ,
 օնգ - լա - միշ ա - ղի ին - ձի գար - թե - վուշ գու - զիմ:
 Ու - զի էլ - լիւ օշ - ա - նա, դօ - նաւ էր - բօ - դում,
 ինչ ու ա - սու ա - նա բուն, սօ - դե առ - նօղ ում,
 Օն - գուշ թե - ի օշ թե - զի, ախ - կո - նե ա - ղի,
 ինչ ք - նուշ - ես յես չփ - դիմ, իմ սիր - դես գա - յի


Դու - խի կու - գա, աբող - լա կու - գա, աբ - մա - դա կու - գա,
 յի մա, յես շա - շեն - ցա, ին - ձի խա - լե - սա
 Ախ - կո - նե սա չի գա - յիմ սուղ - նի - վե գեր - բա,
 Եօյ - բուզ էր - բոմ ա - նա յես, իմ հե - դես կու - քա
 Դու - խի կու - գա, աբող - լա կու - գա, աբ - մա - դա կու - գա,
 յի մա, յես շա - շեն - ցա, ին - ձի խա - լե - սա
 Ե

ԽԱՂԷՐ (ՄԱՆԻՆԷՐ)

$\text{♩} = 112$

եր - զը - վա - չ բա - յիր ա, ու - ն՞ դա - գէ չա - յիր ա.

դա - րաթ ա - չք ախչ - զը ներ, գար - թը - վու - շի դա - յի ա.




1. 2 { երզըվայէ բայիր ա,
Դուն՞ դագէ չայիր ա,
Դարաթ այէք ախչզընէ՛ր,
Գարթըվուշի դայի ա:

$\text{♩} = 112$

Գա - լա - քթ քի սա - ու - նէ, քէ - զի ժըն - նիմ օ - ու - նէ.

քա, քէ - զի վաա գու - ցքիմ չա - դիր չուն - նող յօ - ու - նէ.



2. 2 { Գալաթթ քի սաղուն,
Քէզի ժըննիմ օղուն,
2 { Քա՛, քէզի վաա գուցքիմ
Չադիր չուննող յօղուն:

$\text{♩} = 112$

*) Քա, ի՞նչ ա - դալ քէ - զի - զի, ի - ժէ - տ կու - լաս, կու - լաս.

Սէգ նը - շան - լու մէ ու - նիս, մէ - մալ ին - չի՞ մօն կու - կաս.



*) Լանգամ կրկնելիս


3. 2 { Քա՛, ի՞նչ ադալ քէզիզի,
Իժէ կուլաս, կուլաս,
2 { Սէգ նըշանլու մէ ունիս,
Սէմալ ինչի՞ մօն կուկաս:

$\text{♩} = 96$

Լաչ - կիդ փուս - կու - լը խաս ա, ախչ - չի՛գ, ա - նու - նէր ա սա.

Յու քէ - զի - զի առ - նող ում, քէ - նա քու մօ - յը ա - սա.

Յու քէ - զի - զի առ - նող ում, քէ - նա քու մօ - յը ա - սա.



4. 2 { Լաչկիդ փուսկուլը խաս ա,
Ախչի՛գ, ա նունէր աաս՛,
3 Եւ քէզիզի առնող ում,
Քէնա՛, քու մօյը աաս՛:

5. 2 {

 Լուսնիկա իմ, տիբած իմ

 Հօմշէցեց կյաղէրնիվէ,

 Գօնլի դաան* շաղ պարցն ա,

 Գօրիաթէ բարագ ա,

 Գյունատ շաղ էրօնդ ա,

 Ավգյաւ փէջօտ կյաղ ա,

 Ջէռնալէ չախօտ կյաղ ա:

* Այս և հաջորդ գյուղերը գտնվում են Աջարիայում:

6. 2 {

 Լուսնիկա էրօնդ կիշէր,

 Քալա էրթօք աս կիշէր,

 Մէրէմ ախչիգ տուռը պաց,

 Թէվօնքը բուչխին մէնաց,

 3էս թէվօնքին վարի չիմ,

 Մէրէնը ինծի մէնար:

NN1-6 խաղիկները երգել է Փաշա Մամեդի Կարաիբրահիմովը, ծնվ. 1932թ. Աջարիայի Գոնիո գյուղում, բնակվում էր Ղազարխատանի Չիմքենդի մարզի Սայրամի շրջանի Չիրկինո գյուղում, որտեղ էլ ծայնագրել են 1984թ. մայիսին:

Յէ - ռէ - վօնց - նա յեւ է - զի, յեւ գէ - զի - զի փուք է - նուշ,
 աւ - տէք ա - լա, ախյ - զէ - նըր, թուք քի - դէ՞ք տա հաց է - փուշ:

7. 2 { Յէրևօնցնա յեւ էզի,
 2 { Յեւ գեզիզի փուք էնուշ,
 2 { Աստէք ալա, ախչգէնէր,
 2 { Թուք քիդէ՞ք տա հաց էփուշ:

Բար - խին դա - զէ խըն - ձոր ձառ, խըն - ձոր գու - ցքիմ ա - յէ դար,
 բար - խին դա - զէ խըն - ձոր ձառ, խըն - ձոր գու - ցքիմ ա - յէ դար,
 ի - սա բա - զա - ռիս խա - թըր, մէ - զալ բա - զար ա - յէ դար,
 ի սա բա - զա - ռիս խա թըր, մէ զալ բա - զար ա - յէ դար:

8. 2 { Բարխին դազէ խընձոր(ի) ձառ,
 2 { խընձոր գուցքիմ այէ դար,
 2 { Իսա բազարիս խաթըր,
 2 { Սէզալ բազար այէ դար:

Թա - վա մէ յաղ հա - յէ - զի, փէյ - նիս փօ - լօր բալ - լի ա,
 ի նա էն - թու ախ - չի - զէ, ի - մա դէ - ի բալ - լի ա:

9. 2 { Թավա մէ յաղ հալէցի,
 2 { Փէյնիս փօլօր բալլի ա,
 2 { Ինա էնթու ախչիզէ,
 2 { Իմա դէի՞ բալլի ա:
 *Իմ էլլուշը

NN 7-9 խաղիկները երգել է Սուլեյման Կարաիբրահիմովը, ծնվ. 1957թ. Ղազախստանի Չիմբենդի մարզի Սայրամի շրջանի Չիրկինո գյուղում: Վատ տեսողության պատճառով չէր աշխատում: Չայնագրել են 1984թ. մայիսին, Չիրկինոյում:

♩ = 100

Կա-լէ, Բա-թում ու կա - լէ, շա-լէ մօ-լի - յէ - ցա՛ր քա,

շա-լէ մօ-լի - յէ - ցա՛ր քա, է - յէզ ին-ծի դա-նօղ էդ,

վա-ղէ մօ-լի - յէ - ցա՛ր քա, վա-ղէ մօ-լի - յէ - ցա՛ր քա,

10. 2 { Կալէ, Բաթում ու կալէ
2. Շալէ մօլիյեցա՞ր քա,
2 { էյէզ ինծի դանօղ էդ,
2. Վաղէ մօլիյեցա՞ր քա:

♩ = 100

Քա, քու դա-ղէ կօր-ծա գու ու-փաթ օ-յի - է քէլ - չաղ,

ու-փաթ օ-յի - է քէլ - չաղ, քա, տու մի՞-քա խէնդաս օջ,

Նէ-շան-լու տս քա գեր - չաղ, Նէ-շան-լու՞ տս քա գեր-չաղ:

11. 2 { Քա, քու դաղէ կօրծա գու
2. Ուփաթ օյիէ բէլչաղ,
2 { Քա, տու մի՞քա խէնդաս օջ,
2. Նէշանլու՞ տս քա գերչաղ:

♩ = 100

Ի-նա էն-թու քէ - զէ - Նից վա - յի՞ ա, քա դա - նո՞ւ ա

վա - յի՞ ա, քա դա - նո՞ւ ա, իմ սէվ - դա - յին քէ - վօն - քէ

կի - դա - նա, քա քա - նո՞ւ ա, կի - դա - նա, քա քա - նո՞ւ ա,

12. 2 { Ինա էնթու քէզնից
2. Վայի՞ ա, քա դանու՞ ա,
2 { իմ սէվդային քէվանքէ
2. Կիդանա, քա քանու ա:

♩ = 100

Չէ - քէ - քէս խաղու-փու-լիզ ա, մէ - չուս ալ պօ-լօր կալ չի,

մէ - չուս ալ պօ - լօր կալ չի, ի - սա կյա - դիս դա - դա - քէ

մէ - գի ալ ու միշ կալ չին, մէ - գի ալ ու - միշ կալ չին:


13. 2 { Չէքէքս խաղուփուլիզ ա ,
2. Մէչուս ալ պօլօր կալ չի,
2 { Իսա կյադիս դադաքէ
2. Մեգի* ալ ումիշ կալ չին:
* Ինծի




Մայ չու-նիմ, քու-յիզ չու-նիմ, ին-ծի ալ վա-յոզ չու-նիմ.



քա. ա-րա - բան գող - ըտ-ցավ, իմ փա-ղէ գի-յոյ չու-նիմ



14. 2 { Մայ չունիմ, քույիզ չունիմ,
 2 { ինծի ալ վայոջ չունիմ,
 2 { Քա՛, արաբան գողրեցավ,
 2 { իմ փաղէ գիյոջ չունիմ:




Հայ-դէ եր-թաք ին - ծի հեղ Քու-թի-լա - նի-ուս փա-ղա.



քա, տու մի՞ - քա խեն - դաս օջ, աչ-վէ-նիդ է-րօնդ խաղ ա:




15. 2 { Հայդէ երթաք ինծի հեղ
 2 { Քութիլանիուս՝ փաղա,
 2 { Քա՛, տու մի՞քա խենդաս օջ,
 2 { Աչվէնիդ երօնդ խաղ ա:



Ի - նա էն - քու թէ - զէ - նին սա-յի-լա - միշ ա - դած ա.



Աս աշխէ - յիս է - րօն-դը թէս-թիս քեր-ձէ - գած ա.



16. 2 { Ինա էնքու թէզնին
 2 { Սայիլամիշ աղած ա,
 2 { Աս աշխէյիս երօնդ
 2 { Թէխթի թես քերմէգած ա:

NN 10-16 խաղիկները երգել են Այշե Խալիթի Կարաիբրահիմովան, ծնվ. 1929թ., Խաթիջե Դուրսունի Կարակչիօղլին, ծնվ. 1940թ. և Խանիֆե Սեմե-րի Կարաիբրահիմովան, ծնվ. 1950թ.: Չայնագրել են 1984թ. մայիսին, Չիր-կինոյուն: NN10-16 խաղիկները առանձին ձայնագրել են նաև Խաթիջե Դուրսունի Կարակչիօղլիից:

17. 2

ճախ քու - կար ու քե՛նա - գր, ցուն քու - կար, նո՞յ քե՛նա - գր.

ցուն քու կար, նո՞յ քե՛նա... ի սուն կէ լօխ մա լօ... վէ

Գյուր - քիս - տա-նին մե՛նա - գր, Գյուր - քիս - տա-նին մե՛նա...

17. 2 { ճախ քուկար ու քենացր,
 2. Ցուն քուկար, նո՞յ քենացր,
 2 { իսուն կէլօխ մալօվէ
 2. Գյուրքիստանին մենացր:

18.

Նօ-արս էլ - լիմ, ի - շալ - լա, դուն ա - վէ - լիմ, ի - շալ - լա.

դուն ա - վէ - լիմ, ի - շալ - լա, քու դա - դին ու քու մօ - յը

կուր - բա կօր-ծիմ, ի - շալ - լա, կուր - բա կօր-ծիմ, ի - շալ - լա

18. Նօարս էլլիմ, իշալլա՛,
 2. Դուն ավէլիմ, իշալլա՛,
 Զու դադին ու քու մօյը
 2. Կուրբա կօրծիմ, իշալլա:

NN17-18 խաղիկները երգել է խաթիջե Դուրսունի Կարակչիօղլին, ծնվ. 1940թ. Աջարիայի ճառնալ գյուղում, բնակվում էր Չիրկինոյում, որտեղ էլ 1987թ. հունիսին ծայնագրել էմ:

190

Քա, ի՞նչ աղակ քեզի-գի-գի, կու-լաս, ի-ժե-է կու-լաս,
 քա, ի՞նչ աղակ քեզի-գի-գի, կու-լաս, ի-ժե-է կու-լաս,
 մեզ նը-շան-լու մե ու-նիս, մե-մալ ին-չի՞ ման կու-կաս,
 մեզ նը-շան-լու մե ու-նիս, մե-մալ ին-չի՞ ման կու-կաս:

19. 2 { Քա, ի՞նչ աղակ քեզի-գի-գի,
 2. կուլաս, իժէ կուլաս,
 2 { Մեզ նըշանլու մե ունիս,
 2. Մեմալ ինչի՞ ման կուկաս:

190

Հայ-դէ յերթաք ին-ծի հեղ լօ-քի-ին հա-մա փօ-լա,
 հայ յերթաք ին-ծի հեղ լօ-քի-ին հա-մա փօ-լա,
 թուն քա ին-ծի առ-նու օչ, Աս-պած քե-զի-գի կօ-լա,
 թուն քա ին-ծի առ-նու օչ, Աս-պած քե-զի-գի կօ-լա:

20. 2 { Հայդէ յերթաք ինծի հեղ
 2. Լօքիին համա փօլա,
 2 { Թուն քա ինծի առնու օչ,
 2. Ասպած քեզի-գի կօլա:

Ա - յէ՛, Խառ - ու - լա, ա - յէ՛, Լօ - փ - ան ա - ք - րէ - ցի - ցի,
 յէ՛ Խառ - ու - լա, ա - յէ՛, Լօ - փ - ան ա - ք - րէ - ցի - ցի,
 յէ՛ Լօ - փ - ա ու - ղէ չիմ, Լէ - րէնցի իմ, Լէ - րէնցի - ցի,
 յէ՛ Լօ - փ - ա ու - ղէ չիմ, Լէ - րէնցի իմ, Լէ - րէնցի - ցի:

21. 2 { Այէ՛, Խառուա, այէ՛,
 2 { Լօփան արքրեցի՛,
 3 Եւ լօփա ուղէ չիմ,
 3 Լէրէնցի իմ, Լէրէնցի:
 *անուշեցի, ուուշեցի:

NN19-21 խաղիկները երգել է տիկին Սոֆիյն՝ ծնվ. 1910-ական թթ., բնակվում էր Ղրղզստանի Օշի մարզի Կըզըլ – Կիյա քաղաքում, որտեղ էլ 1984թ. ապրիլին ծայնագրել են:

Գաղ - նուղ - նի - վա քա - լէ - ցի, Գաղ - նուղ - նի - վա քա - լէ - ցի,
 Գաղ - նուղ - նի - վա քա - լէ - ցի, քէ - զի դէս - նում դէ - ի - նա,
 քէ - զի դէս - նում դէ - ի - նա, քէ - զի դէս - նում դէ - ի - նա,
 քու դա - դան ի - զին ա - ղի, քու դա - դան ի - զին ա - ղի,
 քու դա - դան ի - զին ա - ղի, հէ - ղի խօթ - րիմ դէ - ի - նա,
 հէ - ղի խօթ - րիմ դէ - ի - նա, հէ - ղի խօթ - րիմ դէ - ի - նա:

22. 3. Գաղնուղնիվա քալեցի,
 3. Քեզի դեսնում դէինա,
 3. Քու դադան իզին աղի,
 3. Հեղեղ խօթրիմ դէինա:

N22 խաղիկը երգել է Ֆաթիմե Սալախօղլին, ծնվ. 1917թ. Աջարիայի Գօրիաթ գյուղում, 15 տարեկանում հարս է գնացել Աղունձղ քեղ (Գօնլի դաա, Կանլի դարա) գյուղ, որտեղից էլ 1944թ. արտոբվել է: Ծայնագրել են Չիլկի - նոյում, 1987թ. հունիսին:

176

Քա՛, թուն ար - դը քայ - նե - ցեք, յե ար - դը քայ -
 ճող չու - նիմ, քա՛, թուն ար - դը քայ - նե - ցեք,
 յե ար - դը քայ - ճող չու - նիմ, աք - վե - նի - յե
 վեր քե՛լ - լիմ, յար, գի - յա - զը քո - լօղ չու - նիմ,
 աք - վե - նի - յե վեր քե՛լ - լիմ, աք - վե - նի - յե
 վեր քե՛լ - լիմ, յար, գի - յա - զը քո - լօղ չու - նիմ,

23. 2 { Քա՛, թուն արդը քայնեցեք,
 2 { Յե արդը քայնջող չունիմ,
 2. Աքվեմիյե վեր քելլիմ, յար,
 Գիյազը քօլօղ չունիմ:

176

Ար - դա - լե խաղ վա - րե զը սա - բա - յի - լա
 հա - ձա գու, Ար - դա - լե խաղ վա - րե զը
 սա - բա - յի - լա հա - ձա գու, Չա - ու - շի - նե
 աք - լա - յը, գա - րե, թե - շի, ա - նու թեք - խա գու:
 Չա - ու - շի - նե աք - լա - յը, Չա - ու - շի - նե
 աք - լա - յը, գա - րե, թե - շի, ա - նու թեք - խա գու:

24. 2 { Արդալե¹ խաղ վարեզը
 2 { Սաբայիլա՛ հաձա գու,
 2. Չաուշինե² աքլալը, գաթ,
 Թեշի, աճու թեքխա՛ գու:
 *աքվեմիյե
 **թեքա

1. Արդալա - գյուղ Արդվիմի նահանգի Խոփայի գավառում, այժմ՝ Էշ - մեքայա:
 2. Չավուշլու - գյուղ Արդվիմի նահանգի Խոփայի գավառում:

$\text{♩} = 176$

Դա, իմ մա-լը քը-շա, յես գա-վա-լը
 փե-յիմ գու, դա, իմ մա-լը քը-շա,
 յես գա-վա-լը փե-յիմ գու, գա-թե մի՞-թա
 խըն-դասս օչ, դա, վե-տ-թու սա-զին ժըմ-նիմ գու,
 գա-թե մի՞-թա խըն-դասս օչ, գա-թե մի՞-թա
 խըն-դաս օչ, դա, վե-տ-թու սա-զին ժըմ-նիմ գու

25. 2 { Դա, իմ մալը քըշա,
 3 Ես գավալը փեյիմ գու,
 2 Զաթե մի՞թա խընդասս օչ,
 3 Դա, վեթու սազին ժըմնիմ գու:

Քա, ա-շուն ու քա ա-նա, քա, ա-շուն ու քա ա-նա,
 քա, ա-շուն ու քա ա-նա, դոն-ձե-ցան խա-վող քա-դա,
 դոն-ձե-ցան խա-վող քա-դա, դոն-ձե-ցան խա-վող քա-դա,
 յես առ-նող չիմ քե-զի-զի, յես առ-նող չիմ քե-զի-զի,
 յես առ-նող չիմ քե-զի-զի, իս-տար-սեն վեր-վեր խա-դա,
 իս-տար-սեն վեր-վեր խա-դա, իս-տար-սեն վեր-վեր խա-դա

26. 3. Քա, աշուն ու քա անա,
 3. Դոնձեցան խավող քադա,
 3. Ես առնող չիմ քեզիզի,
 3. Իստարսեն վերվեր խադա:

Բա, դօ-նան ու քա-լէ-ցր. քա, դօ-նան ու քա-լէ-ցր.
 քա, դօ-նան ու քա-լէ-ցր. շա-լէ մօ-լի-լէ-ցար քա,
 շա-լէ մօ-լի-լէ-ցար քա, շա-լէ մօ-լի-լէ-ցար քա.
 հա-քա հէ-դէս է-գօղ էր, հա-քա հէ-դէս է-գօղ էր,
 հա-քա հէ-դէս է-գօղ էր վա-ղէ մօ-լի-լէ-ցար քա,
 վա-ղէ մօ-լի-լէ-ցար քա, վա-ղէ մօ-լի-լէ-ցար քա.

27.

- 3. Բա՛, դօնան ու քալեցր,
- 3. Շալէ մօլիլեցա՞ր քա,
- 3. Հարա հեդէս էգօղ էր,
- 3. Վաղէ մօլիլեցա՞ր քա:

Սա-բախ-թէն ձէ-վաղ-նէ-ցան. սա-բախ-թէն ձէ-վաղ-նէ-ցան.
 սա-բախ-թէն ձէ-վաղ-նէ-ցան մօն-գա-ղէ թէ-վէս գրղ-ոնց.
 մօն-գա-ղէ թէ-վէս գրղ-ոնց. մօն-գա-ղէ թէ-վէս գրղ-ոնց.
 յէս ի՞նչ աս - տի սել-դա - յին. յէս ի՞նչ աս - տի սել-դա - յին.
 յէս ի՞նչ աս - տի սել-դա - յին ինձ-մա ու - մու-ղը գրղ-ոնց.
 ինձ-մա ու - մու-ղը գրղ-ոնց. ինձ-մա ու - մու-ղը գրղ-ոնց.

28.

- 3. Սաբախթէն՝ ձեվաղնեցան
 - 3. Մօնգաղէ թեվէս գրղոնց,
 - 3. Յէս ի՞նչ աստի սելդային,
 - 3. Ինձմա ումուղը գրղոնց:
- *աբվեցիլ

լօղ չու - ցիմ, յար, յես թու - ող սա - լօղ չու - ցիմ

Սազ

Քա, թուն թու - ող սա - լի - ցեր, յար, յես թու - ող սա -

Սազ

լօղ չու - ցիմ, յար, յես թու - ող սա - լօղ չու - ցիմ

Սազ



Հար - վան ա - կեր եր - թող ում, յար, է - դէ - թի - աս

Սազ

լօխ չու - ցիմ, յար, է - դէ - թի - աս լօխ չու - ցիմ

Սազ

- 30. 2 { Քա՛, թուն թուռը սալեցեր, յար,
2. Յես թուռը սալօղ չունիմ, յար,
2 { Հարվան ասկեր երթող ում, յար,
2. Էդէթիաս լօխ չունիմ, յար:
- 31. 2 { Քա՛, թու մի՞թա խընդաս օջ, յար,
2. Խընդաս ու ծիծաղես օջ, յար,
2 { Քա՛, թուն քընացած դաղէր, յար,
2. Չիլ ու ձաղիգ էլլիս օջ, յար:
- 32. 2 { Քա՛, աշուն ու քա անա, յար,
2. Դօնծեցան խավօղ քաղա, յար,
2 { Քա՛, յես քեզի առնօղ չիմ, յար,
2. Իստարսէն վերվեր խաղա, յար:

NN23-32 խաղիկները խմբով կամ առանձին երգել են Թուրքիայի Արդվինի նահանգի Խոփայի գավառի Չավուշլու գյուղի մի խումբ կրոնափոխ համ-

շենահայեր՝ Ազգաթ Բիրարը, Յուքսել Ալթունքայան, Օսման Յաֆրզոլուն, Յաշար Ալթունքայան, Բիլալ Քարաբուլուքը, Ադեմ Քարաիրահիմոլուն, Սաբիր Յուսեյնոլուն, Թոֆիկ Քարաիրահիմոլուն, Դուրսուն Քարաքչիոլուն, Մենեդ Յաֆրզոլուն, Սելիմ Յաֆրզոլուն, Իսմեթ Ալթունքայան, Իսմեթ Բիրարը, Բուլբուլ Շարանոլուն, Փաշա Քարաքչիոլուն և ուրիշներ: Չայնագրությունը 1984թ. ձեռք են բերել Սուլեյման Բեքթաշի Կարաիրահիմովից, ծնվ. 1936թ. Բաթումում, բնակվում էր Դրղաստանի Օշի մարզի Իսկի - Նաուկատ քաղաքում, ֆիզկուլտուրայի ուսուցիչ էր: Նա 1978թ. այցելելով Չավուշլուում բնակվող իր ազգականներին, ի հիշատակ, Թազվեթ անառային արոտավայրում ծայնագրել է նրանց երգերը:

33. 2. Օթքեդ օթքինեդ վաան,
Օթքեդ նալինին վաան,
2. Քա՛, յես քեզի դանօղ ում,
Գարմի մաքինին վաան:

34. Քա՛, քու դադին երգեվին,
Փօթթուգալին գեդեթը,
Կյադեցես ինադինա,
Քեզի առնե բեդեդե:

NN 33-34 խաղիկները գրառել են 1999թ. Երևանում՝ Ստամբուլ-Երևան ավտոբուսի վարորդ Էդիպ Քրքչիչեթից, ծնվ. 1958թ., Խոփայի գավառի Անջիոդ, Անջօրօխ (այժմ՝ Փընարլը) գյուղում:

35. Քա՛, քու դադին երգեվին
Շալե մօլիյեցա՞ր թա,
Յաքա առնօղ եդ ինձի,
Յիմի մօլիյեցա՞ր թա:

36. Քա՛, քու կումը, քու կումը,
Շադ երօնդ ա քու քուը,
Քուօջեդ մադաղ էլլին,
Քու մօեդ դումին մէչը:

37. Քա՛, քու դադին երգեվին
Գիլօմիդին փաչեմին,
Մեռնի ա քու նեշանլուն,

38. Ժըմնին անու բաչ էնին:
Քա՛, ի՞նչ աղավ քեզիզի,
Ուրօ՞ղ եք տա ինձիզի:
Յես ուրօղ չին ցեզիզի,
Ան ալ ուղա ցեզիզի:

39. Սիյօն էլավ երգեցավ
Ջերմագ արջեց հեդնիվեր,
Յես ալ ամօն երգեմօմ
Իմ սեվդային հեդնիվեր:

NN 35-39 խաղիկները 1999թ. գրառել են Յաշար Մըսուրըի (Թուրքիայի Արդվինի նահանգի Բորչկա ավան) ծայներիզից:

40. Էլլին, էլլին, ի՞նչ էլլին,
Խադուլիզ փազա էլլին,
Թուն ու նօարս էլլիս անա,
Քու ձօցինեդ յես էլլին:

41. Քա՛, քու մօյն ալ ախջօղ ում,
Քու դադին ալ ախջօղ ում,
Թուն ու ռազի չէլլիս անա,
Քեզի առնօղ - փախջօղ ում:

NN 40-41 խաղիկները 1984թ. Կրասնոդարի երկրամասի Բելորեչենսկի շրջանի Յուժնի սովխոզ գյուղում գրառել են Մահմեդ Մեհմեդի Կարաիրահիմովից, ծնվ. 1918թ. Աջարիայի սահմանամերձ Սարփ գյուղում:

42. Ասօր տադուշան կալե
Ջօմփուն ախջիզ մե դէսա,
-Յայդե,- աստի,-աս իզուն,
Վաքիդ չուներ թաքիդում:

Այս խաղիկը երիտասարդ տարիքում հորինել է Ջելալ Կարաիրահիմովը, ծնվ. 1955թ. : Գրառել են 1987թ. հունիսին, Ղազախստանի Սայրամի շրջանի Զիրկինո գյուղում:

43. Հայրէ երթօք ինձի հեղ
Մաշնըքուղնիվեր՝ փաղա,
Քա, թուն մի՞թա խընդաս օչ
Աչվիդ ալ երօնդ խադ ա:
44. Ձենդիդը պարցր կյաղ ա,
Չուը հիվանդի տաղ ա,
Քա, թու մի՞թա խընդաս օչ,
Աչվիդ ալ երօնդ խադ ա:
45. Ձենդիդը պարցր կյաղ ա,
Չուը հիվանդի տաղ ա,
Սեվդան սեվդային դալ չին,
Աս ինչքես անդէր կյաղ ա:
46. Սուլթան Սելիմին օղը,
Յես խելըռիմ գու սօղը,
Քա, յես խելառ շենն իմ,
Քեզի դօնիմ գու սօղը:
47. Սիյօն էլավ գունգնեցավ
Ձերմագ արջեցն հեղնիվեր,
Թուն իմ մօը հարսն էլլեդ
Առնէ-երթա արդնիվեր:

NN43-47 խաղիկները երգել է Հաքի Քոչանիձեն, ծնվ. 1900թ. Աջարիայի
Գոնիո գյուղում, ծայնագրել են 1984թ. ապրիլին Ղրղզստանի Օշի մարզի
Ուչ – Կորգան գյուղում:

48. Լիվօռին յաղ քրտցեր,
Թարցար ինձի ցվօնեցեր,
Բեթեմալ, ինձի ամա,
Լացեր ու բեդեդեցեր:
49. Սեգ լաուստ մէ փեչքեցի,
Փեչքը ուինման երգեն ա,
Դեսա քու նըշանլուին
Քինթը ուինման երգեն ա:

50. Էդէթիդ գախն էնգածը
Քու մարին աղած խա՞շն ա թա,
Քու սերդիդ հազ աղածը
Էնթու կյաղին շա՞շն ա թա:
51. Մաղրին էմմենու սօյը
Ձերմագ, ջերմագ փուսածն ա,
Իմ սերդիս հազ աղածը
Ասքի կյաղիս լուսածն ա:
52. Քա, թուն անու լըմանի,
Ան ալ քեզի լըմանի,
Դեսա քու նըշանլուին,
Յարանի ա, յարանի:
53. Գալաթ էրթես առի,
Հեռու ջօմփան քալեցի,
Դա, քեզի սեվդա դեվի,
Ես ինձիզի քօլեցի:
54. Արդան խարման գիյես կու,
Գալաշուն չօրցենես կու,
Քեզի ալ փութ էնօղ չիմ,
Թուն մարթու սիրդ քօլես կու:
55. Լազուտը փուրչուխթեցավ,
Սարի քունքուլը փըռեց,
Յես, ու վաան գօնչեցի,
Առնուն դէյի թարթըլեց:

NN48-55 խաղիկները խոփայի գավառում իրենց հայրենակիցներից լատի-
նատառ գրառել են Հիքմեթ Աբչիչեքը, Մահիր Օգբանը և Յուսուֆ Վայիչը:

ԽՈՓԱՅԻ ԽՈՍՎԱԾՔ – ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆ՝

— Ա —

Աաքազ (արդ.՝ **այաքազ**) – արեգակ:
Աբա, գաբա – 1. կապա, պարեգոտ: 2. կոշտ կտորից կարված միջին երկարության բաճկոն:
Աբրիլ (ամսանուն) – ապրիլ:
Աբրուշ – ապրել:
Աբրիգոս, քախի^{***} – ծիրան:
Աբուր – ապուր:
Ագռա, առգա, արգա, (արդ.՝ **այգա**) – ատամ:
Ագոս – ակոս:
Ադես, լադես – հավի կրծքի երկճղի ոսկր:
Ադէր – նրանք:
Ադվէդ, ջուղաբ^{***} – պատասխան:
Ադու – դրա:
Ազադութին, ազադուտուն – ազատություն:
Աթար – աթար:
Աթռ – աթռ:
Ածրի (ծառատեսակ) – հաճարենի:
Ալաֆ, օղանք, օվանք – ընտանի խոշոր եղջերավոր կենդանիների համար պատրաստվող կերեր:
Ալթուն – ոսկի:
Ալի – դարձյալ:
Ալի ու – էլի որ:
Ալուր – ալուր:
Ախթուշ – հաղթել:
Ախչիգ, ախչիկ – աղջիկ:

Ախպար (արդ.՝ **ախպայ**) – եղբայր:
Ախպարութին, ախպարուտուն (արդ.՝ **ախպայուտուն**) – եղբայրություն:
Ախպոյ (թուրք.՝ **ախպօր**) – աղբյուր:
Ախպօր (արդ.՝ **ախպօյ**) – աղբյուր:
Ախքադ – խեղճ:
Ախքադութին – աղքատություն:
Ակիշ, ագիշ, խենուրսէպիչ – ակիշ:
Ահա – ահա:
Ած – այծ:
Ածէլի – ածելի, սայր:
Ածուշ, հաճուշ (ծու) – ածել:
Ածուք – բանջարանոց:
Ադ – ադ:
Ադադիգ – այդքան հատ:
Ադած պօն – եղած բան:
Ադդ – 1.ադտ, կեդտ: 2. ցեխ:
Ադդօդ – 1.ադտոտ, կեդտոտ: 2.ցեխոտ:
Ադի – ադի:
Ադիմ – 1.եղյամ: 2.սառույց:
Ադինց – եղինց:
Ադչուշ – աղաչել:
Ադու, տախ, գէիր – թույն:
Ադուդ – արոտավայր:
Ադուլի – թունավոր:
Ադուն – 1.կարիճի խայթոց: 2. արյուն: 3.աղալու համար նախատեսված հացահատիկ՝ ադուն:
Ադունք, աունք – եղունգ:
Ադուշ – աղալ:
Ադփ, քրիք (կենդանիների՝ ծիու, էշի, ջորու, կովի և գոմեշի կղկղանք) – քրիք:
Ադփօնօց – քրիքի և աթարի հավաքման վայր:
Ամա – բայց:
Ամա, հոմա – համար:
Ամառ, օմառ – ամառ:
Ամիս, օմիս – ամիս:

* Բառարանից օգտվելը դյուրացնելու համար վերջում առանձին նշված են տարվա եղանակների, ամիսների, շաբաթվա օրերի, թվերի, գույների, ծառերի անունները, ինչպես նաև ազգակցական կապեր ցույց տվող և մարմնին առնչվող բառերը:

** **Քախի** են ասում թուրքիայի, **աբրիգոս**՝ նախկին ԽՍՀՄ-ի կրոնափոխ համընցիները:

*** **Ադվէդ** են ասում նախկին ԽՍՀՄ հանրապետություններում բնակվող կրոնափոխ համընցիները, իսկ թուրքիայում բնակվողներն ասում են **ջուղաբ**:

Ամնուշ, օմնուշ – 1.ծածկել: 2.վրան քաշել: 3. որևէ նյութով կամ լաքով պատել՝ լաքապատել:
Ամչկան, օմչկօն – ամաչկոտ:
Ամչուշ, օմչուշ – ամաչել:
Ամօն – այդպես:
Այաքազ (թուրց.՝ **աաքազ**) – արեգակ:
Այգա (թուրց.՝ **արգա, ագռա, առգա**) – ատամ:
Այդ (թուրց.՝ **արդ**) – 1.արտ: 2. դաշտ:
Այչ (թուրց.՝ **արչ**) – արջ:
Այչիչաղ – արևածաղիկ:
Այչիչաղի յաղ – արևածաղիկի ձեթ:
Ան – նա, այն:
Անալուդ, գայնանա – զոքանչ:
Անդեր, օնդեր – անտեր:
Անդի – դրանից:
Անդի հեդեվ – այնուհետև, դրանից հետո:
Աներ – նրանք:
Անթուլակ – հաստ փայտ:
Անթուս, ինթուս – այն կողմ:
Անիծուշ, օնիծուշ – անիծել, նզովել:
Անինձ – անիծ, ոջիլի ձվիկ:
Անլի – անալի:
Անխերք, օնխերք – անխելք:
Անչաք, անուչաք – այնչափ, այնքան:
Անցած, օնցած – անցած, անցյալ, նախորդ:
Անցօդուշ, օնցօդուշ – անցնել – վերջանալ, ավարտվել:
Անօթ – 1.անժամանակ: 2. վաղաժամ: 3. անտեղի:
Աշխայ (թուրց.՝ **աշխար**) – աշխարհ:
Աշխար (արդ.՝ **աշխայ**) – աշխարհ:
Աշուն – աշուն:
Աշուշ – նայել:
Աչ – աջ:
Աչ, բերուք – բողբոջ:
Աչառ – արջառ, եգ:
Աչգերուկ – գարուկ, տիկնակլոնձ:
Աչվի – աչք:
Աջերուշ – ճգմել, տրորել:

Աջերվուշ – ընկճվել, ճնշվել:
Առանձ, առօնձ (բացակայությունն այն առարկայի կամ երևույթի, որը նշվում է այս բառից հետո) – առանց:
Առային – միջև:
Առաչ – առաջ, նախկինում:
Առնուշ – 1.առնել: 2. վերցնել: 3. գնել: 4. ամուսնանալ:
Առչեվ, առչեթ – առջև:
Առեթմիշ էնուշ – անջատել, բաժանել:
Առչի դայի (թուրց.՝ **դարի**) – նախանցյալ տարի:
Առչի դարի (արդ.՝ **դայի**) – նախանցյալ տարի:
Առօնձ – առանց:
Աս – այս, սա:
Ասաղ – ասեղ:
Ասպած – Աստված:
Աստաղ, աստախք – աստղ:
Ասքեր – զինվոր:
Ասօր (արդ.՝ **ասօյ**), **հասօր** – այսօր:
Ասուշ – ասել:
Ավալը – հնում:
Ավալուբաք – ապուպապ, նախնի:
Ավդուշ – հավատալ:
Ավզօն (կենդանիների ջուր խմելու համար գետնից բարձր, ոչ խորը, նեղ և երկար քարե, մետաղե կամ փայտե հարմարանք, տաշտածև փորված գերան) – գուռ, ջրավազան:
Ավել – ավել:
Ավելլի – 1.ավելի: 2. ավելորդ: 3. շատ: 4. մնացորդ: 5.անպետք:
Ավելուշ – ավելել:
Ավելուք – 1.ավելցուկ: 2. արք:
Ավթա – շաբաթ (7 օր):
Ավիրուշ, ավելուշ (արդ.՝ **ավիյուշ, ավելյուշ**) – 1. ավերել: 2. քանդել: 3. ջնջել: 4. կործանել:
Ավջի – որսորդ:
Ավջիլուղ – որսորդություն:
Արաբա (սայլ) – արաբա:
Արդեցուք – արտասուք, արցունք:
Արդ (արդ.՝ **այդ**) – 1. արտ: 2.դաշտ:
Արենգօխ – սարավանջով անցնող ճանապարհ:

Արի – առանձին:
Արխ, հարք, հարգ – առու:
Արձուշ – արածել:
Արչ (արդ.՝ աչ) – արջ:
Արմուգ – արմունկ:
Արջի (ծառատեսակ) – կաղամախի:
Արփա – գարի:
Աունք, աղունք – եղունգ:
Ափ – ափ:
Ափաջուղ – կանաչ սոխ:
Աքլայ (թուրգ.՝ աքլար) – աքաղաղ:
Աքլար (արդ.՝ աքլայ) – աքաղաղ:
Աքլերջուք – վառելի:
Աքվա – առավոտ:
Աքրեք – կարիճ:

— Բ —

Բաբ – պապ:
Բադ – ցանկապատ:
Բադուշ – ցանկապատել:
Բադամ – նուշ:
Բադեռուշ, պադեռուշ – 1.պատռել: 2. պայթել:
Բադեռեցնուշ – 1.պատռեցնել: 2. պայթեցնել:
Բազայ (թուրգ.՝ բազար) – 1.շուկա: 2.կիրակի:
Բազար (արդ.՝ բազայ) – 1.շուկա: 2. կիրակի:
Բազի բիր – 1.երբեմն: 2.մերթնդներք:
Բաժբուշ – բաժանել, գատել:
Բալդիս – քեմի:
Բաալի – թանկ:
Բալլի – հայտնի:
Բախ – բեղ:
Բահուշ, բաուշ – 1.պահել: 2. թաքցնել:
Բաղ – պաղ, սառը:
Բաղդոր – պղտոր:
Բաղեցնուշ – պաղեցնել, սառեցնել:
Բաղինձ – 1.պղինձ: 2.պղնձն մեծ կաթսա:

Բայգուշ (թուրգ.՝ բարգուշ) – պառկել:
Բայիր, բոյիր – բլրակի լանջ, փոքր, թեք տարածք, ոչ մեծ զառիթափ:
Բանիր, բոնիր – պանիր:
Բաշլուղ – բաշլուղ, գլխանոց:
Բաչ – համբույր:
Բաչ էնուշ – համբուրել:
Բաջա – երդիկ:
Բաջախա – ազդր:
Բաջանաղ – քենակալ:
Բառավ – պառավ:
Բառավցած – պառաված, ծերացած:
Բարագ, բարակ – թեք տեղանք, զառիվեր:
Բարգուշ (արդ.՝ բայգուշ) – պառկել:
Բարխ – ժայռ:
Բարգելդաղ – անկողին:
Բաքլավա (թխվածք) – փախլավա:
Բաքմազ – դոշաք:
Բերուք, աչ – բողբոջ:
Բեդեդուշ, մոն էգուշ – զբոսնել:
Բեդէխ, բեդախ – պտղունց:
Բեդ էնուշ – 1.սպասել: 2.մնալ: 3.հսկել: 4.հուսալ:
Բեդուք – պտուկ:
Բեդք, լավ, սոյ – լավ:
Բեդքնուշ – առողջանալ:
Բեդքութին – լավութիւն:
Բեթեմալ – անարժան, անպետք (անձ):
Բէլչաղ – 1.երեխակալ: 2.սանձ: 3. փոկ:
Բէչախ – զուլպա:
Բես – պես, նման:
Բեսպաղտուշ, բեսբախտուշ – պսպղալ, շողալ:
Բեսպաղտեցնուշ – 1.պսպղացնել: 2.հղկել:
Բերբուք, բերվուք – շուրք, շրթունք:
Բեցդի (ծառատեսակ) – լաստենի:
Բիբեր – տաքդեղ:
Բիդի – պիտի, պետք է:
Բիդու – պիտանի:

Բիծի, բիծիգ, բիծիք – փոքր:
Բինչ – պինչ, քթանցք, ռունգ:
Բիչմիչ ընուշ – հնծել:
Բուբրիկ – 1. պուպրիկ՝ տիկնիկ: 2. ծիսական տիկնիկ:
Բուլիգ – փոքրիկ աղջիկ, աղջիկ երեխա:
Բուլութ, մերալ – ամպ:
Բուձեգ – պիծակ, իշամեղու:
Բուշուլիկ աչվենի – ներս ընկած աչքեր, փոս ընկած աչքեր:
Բուշախ, քոշա – անկյուն:
Բուրագ – օջախ, կրակարան:
Բօբգնուշ – 1. մխկտալ: 2. կծու ուտելիքից մրմռալ:
Բօբօլ – 1. որդ, ճիճու: 2. բլոճ, միջատ:
Բօբլօդուշ – որդնել, որդոտել, ճիճվոտել:
Բօդբօդուշ – 1. պտպտալ: 2. ինքն իրեն խոսել:
Բօլօքուշ – 1. ճչալով բողոքել: 2. գոռգոռալ, բղավել:
Բօղագ – կոկորդ:
Բօյդ (թուրց.՝ բօրդ, բօռդիկ, պօռդ) – պորտ:
Բօյիր, բայիր – բլրակի լանջ, փոքր, թեք տարածք, ոչ մեծ զառիթափ:
Բօյօվ – բարձրահասակ:
Բօնիր, բանիր – պանիր:
Բօշ – դատարկ:
Բօշաթմիչ էնուշ – դատարկել:
Բօչ, փօչ – պոչ, ունկ:
Բօչադ, փօչաթ – պոչատ:
Բօրդ (արդ.՝ բօյդ), բօռդիկ, պօռդ – պորտ:
Բօրջուշ – պռճոկել:
Բօրու – խողովակ:

— Գ —

Գաբ – կապ:
Գաբա, աբա – 1. կապա, պարեգոտ: 2. կոշտ կտորից կարված միջին երկարության բաճկոն:
Գաբիչ, կօդի, վարդիքգաբիչ, գայիչ, խուլաց կօդի – գոտի:
Գաբուղ – կեղև:
Գաբուշ – կապել:

Գագալ, կակալ – ընկույզ:
Գագալի, կակալի մաղիս – ընկույզի միջուկ:
Գադու – կատու:
Գադվեցաք – կատվի ձագ:
Գագաղի – նավթ, կերոսին:
Գաթ – կաթ:
Գաթի խօղ – սինձ:
Գաթիկ, գաթիգ – կաթիլ:
Գաթնօվ, գաթներած – կաթնով, կաթնարած:
Գաթուշ – կաթել:
Գալաթ – կողով:
Գալաշ (արդ.՝ քօմի, թուրց.՝ փուշ) – քամի:
Գալվուշ – խցանվել, պնդանալ, առաջն առնել, բռնել:
Գախ էնգուշ – կախ ընկնել, կախվել:
Գած – 1. կայծ: 2. կայծակ:
Գածգիչ, գածուլիգ, գածօռիգ – լուսատտիկ:
Գածգուն – ապտակ:
Գածուլիգ, գածգիչ, գածօռիգ – լուսատտիկ:
Գաղին – կաղին, պնդուկ, տխիլ:
Գաղնի – կաղնի, տխլենի, պնդուկենի:
Գաղնուղ – կաղնուտ:
Գաղցքուշ – կախել, կախ գցել:
Գամ – կամ:
Գայգուտ (թուրց.՝ գարգուտ, գարգուղ, գարկուտ) – կարկուտ:
Գայիր մարթ – կորած մարդ:
Գայիր ըլնուշ – կորել:
Գայիչ – կաշվե գոտի:
Գայնաթա – աներ:
Գայնանա, անալուղ – զոքանջ:
Գայնի – աներորդի, աներձագ:
Գայուշ (թուրց.՝ գարուշ, գաուշ) – կարել:
Գանեփ, գօնեփ – կանեփ:
Գաշի – կաշի:
Գավալ – սրինգ:
Գավգա, գեռիվ – կռիվ:
Գավերնգի – սրճագույն, դարչնագույն:
Գարաքիչ – դեկտեմբեր:

Գարգուտ, գարգուդ, գարկուտ (արդ.՝ **գայգուտ**) – կարկուտ:
Գարգեդէն – կարկատան:
Գարգեդուշ – կարկատել:
Գարթալ – արծիվ:
Գարթեցնօղ – ուսուցիչ:
Գարթուշ – կարդալ:
Գարթօղ – աշակերտ, սովորող:
Գարջ – կարծ:
Գարմիր, գարմի – կարմիր:
Գարմրուշ – կարմրել:
Գարմուշ – կամուրջ:
Գարուշ, գաուշ (արդ.՝ **գայուշ**) – կարել:
Գարթեվուշ, առնուշ – ամուսնանալ:
Գարթուշ – ամուսնացնել:
Գարօղնուշ – կարոտել:
Գացիւն – կացիւն:
Գաուրմա, գաումա – յուղի մեջ տապակած միս, որ պահում են որպէս ծմռան պաշար:
Գաուրմիշ էնուշ, դաբգուշ, տապկուշ – տապակել:
Գափազլի կօրտ (բօրդ) – կրիա:
Գէբուշ, գէփշուշ – 1.կաշել: 2.մի գործի կաշել: 3.ծեռնարկել: 4.սկսել:
Գէդէփ – ընկույզի, նշի, ծիրանի կորիզների պատյանները:
Գէդրիչ, գըդրիչ – կտրիճ, տղամարդ:
Գէդրիջութիւն, գըդրիջուտուն – կտրիճութիւն, քաջութիւն:
Գէդրուշ, գըդրուշ – կտրել:
Գէզուշ, գըզուշ – կզել, կզանալ, կռանալ:
Գէթուշ, գըթուշ – կթել:
Գէձգուշ, գըձգուշ – 1.պպզել: 2.ոտքերը կծկել:
Գէձիք, գըձիք – կծիկ:
Գէձուշ, գըձուշ, վառուշ – մրմռալ:
Գէձված, գըձված – կծված:
Գէմի – նավ:
Գէնիգ, գընիգ – կին:
Գէշէռուշ, գըշըռուշ – կշռել:
Գէշթանուշ, գըշթանուշ – կշտանալ:
Գէջէբ, գըջէբ – կճեպ:

Գէջվուշ, գըջվուշ – կեղևել:
Գէռիվ, գըռիվ, գավգա – կռիվ:
Գէռման – կեռման:
Գէմօղ, գըմօղ – կռվող:
Գէռօջուշ, գէռէջուշ – կռանալ, կեռվել, կթել:
Գէս – կես:
Գէսեցափվա – մինչև կեսը:
Գէրան, մարթաղ – գերան:
Գէրչաղ – իսկապես:
Գէրուշ, գիյուշ – կրել, տանել, փոխադրել:
Գէփշուշ, գըփշուշ, գէբուշ, գըբուշ – 1.կաշել: 2.մի գործի կաշել: 3.ծեռնարկել: 4.սկսել:
Գթուշ – կթել:
Գիգիդօր (ոչխարի, այծի կղկղանք) – կտիտ:
Գիդէս թա – իբր թե:
Գիդէս քի – կարծես:
Գիլիմօռ, կիլիմօռ – առաստաղից ամրացված շղթայի ծայրի կեռիկը, որից կրակի վրա կախում են կաթսան: Երբեմն **գիլիմօռ, կիլիմօռ** են ասում նաև ամբողջ շղթային:
Գիմիշ էնուշ – 1.մանրել: 2.բարակ կտրատել:
Գիյագ – կրակ:
Գիյագի – կիրակի:
Գիյիգ, գէյիգ – եղջերու:
Գիյիգի, գէյիգի խօղ – ուրց:
Գիյուշ, գէրուշ – կրել, տանել, տեղափոխել:
Գիյօնգ – կրունկ:
Գիմուշ – կենալ, մնալ:
Գիջ – կիճ, մեղվի խայթոց:
Գիվ – ծամոն:
Գիվերժուղ, գիվերջուղ – գանգուր:
Գյուլ – վարդ:
Գյուջուխ – փետրվար:
Գյօզլուխ – ակնոց:
Գյօլ – լիճ:
Գյօնգսագ – օձիք:
Գնօչ փօթիւն – կնոջ կոշիկ:

Գռանիցա, սինոն^{*} – սահման:
Գուգում – երկարավիզ մետաղյա սափոր:
Գուլ, գում – ումպ, կում:
Գուլդէվուշ – կուլ տալ:
Գույ – փոս:
Գունգնեցուշ, գունգեցուշ – կանգնեցնել:
Գունդուլիզ – 1. գնդիկ: 2. կլոր:
Գունթադ – բութ (ոչ սուր):
Գունթադ բօշ – անպոչ, կտրած պոչ:
Գունծ (խոտարմատներով հողակոշտ) – գուղծ:
Գունչուլ – 1. դեզ: 2. կույտ:
Գուշթ – կուշտ:
Գուշթ էլլուշ – կուշտ լինել:
Գօ – կա:
Գօբիդ – 1. կոպիտ: 2. դիմացկուն: 3. ամուր:
Գօգուշ – 1. կոկեյլ, կոկիկացնել: 2. կարգի բերել: 3. հավաքել:
Գօդիմ – կոտեմ:
Գօդօշ – եղջյուր:
Գօդգօդուշ – գոռգոռալ:
Գօդվան, գօթօլ – եգիպտացորենի գլխիկ:
Գօդրուն, շէրդ – շերտ:
Գօդրուշ – 1. կոտրել, ջարդել: 2. մանրել:
Գօթ – 1. կովկիթ: 2. հացահատիկ չափելու փայտե աման՝ կոտ:
Գօթջաք լազտի – եգիպտացորենի ցողուն:
Գօթօլ, գօդվան – եգիպտացորենի գլխիկ:
Գօլթուդ – թևատակ:
Գօխթուշ – թուխս նստել:
Գօմաց – կամաց:
Գօմաց – գօմաց – կամաց – կամաց:
Գօմացնուշ – կամացացնել, դանդաղեցնել:
Գօմբուր – կուզիկ:
Գօնգնուշ – 1. կանգնել: 2. դադարել:
Գօնգօլ էնուշ – կծիկ անել:
Գօնէնջ – 1. կապույտ հազ հիվանդություն: 2. խեղդող հազ:

^{*} *Գռանիցա են ասում մասկիմ խՍՀՄ հանրապետություններում բնակվող կրոնափոխ համալսարանները, իսկ Թուրքիայում բնակվողներն ասում են սինոն:*

Գօնչլօզ – ուրու, ուրվական, ոգի, տեսիլք:
Գօնչուշ – 1. երգ: 2. երգել:
Գօշ – փոքր աթոռ:
Գօռ – գյուղի բարեկարգման, համայնքի կարիքների կամ համագյուղացիների համար անվճար, խմբովի աշխատանք:
Գօռչուշ – 1. գոռալ: 2. կանչել:
Գօվ – կով:
Գօվաթլի – ուժեղ:
Գօրգօթ – կորկոտ, ծավար:
Գօրծէլի, քյօմուր – ածուխ:
Գօրսէնուշ – կորցնել:
Գօրսէվուշ – կորսվել, կորել:
Գօքար – 1. խոփ: 2. արոր:
Գօքար, չէֆթ, հօղիերգիչ, խօղիերգիչ – արոր:
Գօթ (եգիպտացորեն, ընդեղեն, դղում, սոխ, սխտոր և այլն պահելու համար ճյուղերից կամ տախտակներից պատրաստված շուրջ 10 քմ մթերանոց, խոնավությունից և կենդանիներից պաշտպանվելու նպատակով կառուցվում է մոտ 2 մ բարձրության սյուների վրա, ունի շարժական սանդուղք) – կորոք:

— Դ —

Դա – կոչական ձայնարկություն, դիմելաձև տղամարդկանց:
Դաազան, դաուզօն – տարեկան:
Դաբգուշ, գաուրմիշ էնուշ – տապակել:
Դազ – տակ:
Դադ – հայր:
Դալ – 1. ճյուղ: 2. նոր սերունդ:
Դալիք – 1. տալիք, տալու գումար, պարտք: 2. գին, փոխարժեք:
Դաղդազ – տախտակ:
Դահա – էլ, այլևս:
Դադ – փոխարեն, տեղը:
Դադա, դդա – 1. երեխա: 2. արու զավակ:
Դադնուդադէ – տեղնուտեղը:
Դադվօրցէնուշ, դադավօրցնուշ – տեղավորել:
Դաշախ – տաշեղ:
Դայի (թուրց.՝ դարի) – տարի:

Դանու, դօնու – 1.տանու, տնական, ընտանի, ոչ վայրի: 2.մշակովի:
Դանուշ, դօնուշ – տանել:
Դաշո, լէէն – տաշտ:
Դաշուշ – տաշել:
Դավար (արդ.՝ **դավայ**) – տավար:
Դավայ (թուրք.՝ **դավար**) – տավար:
Դարդ – դարդ, վիշտ:
Դարի (արդ.՝ **դայի**) – տարի:
Դաուբա (արդ.՝ **դուվայ**) – պատ:
Դաուլ – դիւլ:
Դաուլօն – նապաստակ:
Դաք – տաք:
Դաքր – տագր, տեգր:
Դաքցենուշ – տաքացնել:
Դէգլէգ – մերկ:
Դէյէք, դէէք, դիյէք, դէրէք – տերև:
Դէյ նա – որ, որպեսզի:
Դէնագ էնուշ (ուրիշի շարժուծևը և խոսքը ծաղրական ընդօրինակել) – տնագ անել:
Դէսէվուշ – տեսնվել:
Դէսնուշ – 1.տեսնել: 2. նայել, դիտել:
Դէվուշ, դըվուշ – 1.տալ: 2. խփել: 3. ծեծել: 4.ամուսնացնել:
Դէփուշ – բարախելով ցավել:
Դէփուր – սեղան:
Դէքշէցենուշ – մատների ծայրերով թխթխկացել:
Դէքուշ – տքալ, տնքալ:
Դիգ – 1.տիկ: 2.պարկապոզ:
Դիգ (բույսերի և կենդանիների մակաբույծ միջատ) – տիգ:
Դիյ (թուրք.՝ **դիր**) – տեր:
Դիյաղ – հենակ, որ դրվում է պտուղներով ծանրաբեռնված ճյուղի տակ:
Դիյէք, դէէք, դէյէք, դէրէք – տերև:
Դիր (արդ.՝ **դիյ**) – տեր:
Դուբ – մարմնի վրա ածած մսի փոքրիկ գնդիկ:
Դուն – տուն:
Դուվայ (թուրք.՝ **դաուբա**) – պատ:

Դօդիք – տոտիկ:
Դօլմա (ճաշ) – դոլմա:
Դօմար, քյօք, քօք – արմատ:
Դօնգէնիգ – տանտիկին:
Դօնու, դանու – 1.տանու, տնական, ընտանի, ոչ վայրի: 2.մշակովի:
Դօնում – անգամ:
Դօնուշ – տանել:
Դօնի առչէվ, դօնի փօս – բակ:
Դօնի փօս, դօնի առչէվ – բակ:
Դօնծ – տանծ:
Դօսխի (ծառառեսակ) – տոսախ:
Դօստ – խնամի:

— 2 —

Զաթէ – 1.արդեն իսկ, հենց: 2. ասենք:
Զաիվ, գաիֆ – նիհար, վտիտ:
Զաման, օխթ, վաքիտ, չախ – ժամանակ:
Զատկի բլօծ (միջատ) – գատիկ:
Զարթնուշ – գարթնել, արթնանալ:
Զէիր, աղու, տաղ – թույն:
Զէմբիլ – գամբյուղ:
Զէյթուն – ձիթապտուղ:
Զէյթունի յաղ – ձիթապտղի ձեթ:
Զէնգին – հարուստ:
Զէնգէնգուշ – 1.զնգզնգացնել: 2.ատամներն իրար խփել:
Զէնջիլ – շղթա:
Զիբիլ – աղբ, թափոն:
Զումփա – խցան:
Զօնգաք – զանգակ:
Զօռ – դժվար:
Զօռզազ – ծոծրակ:
Զօօվի – 1.զոռով, ստիպելով: 2.դժվարությամբ:

էգուշ – 1.գալ: 2. ժամանել: 2. տեղ հասնել:
էդէթ – 1.ետև: 2.ետևի կողմ:
էդէվ էնգուշ – 1.հետևից ընկնել: 2.թշնամանալ:
էդի սողէ – 1.վերջապես: 2.ամենավերջում, վերջիվերջո:
էէկ, էէգ – երեկ:
էես – երես:
էէվուշ – երևալ:
էլչի – խնամախոս:
էլլուշ – լինել:
էլուշ – ելնել, բարձրանալ:
էմէժիմէ – ամեն անգամ:
էմմէդիմա – 1.հանկարծ: 2.խսկույն:
էմմէն – ամեն:
էմմէնը – ամենքը:
էմմէն օքի – ամեն ոք, յուրաքանչյուրը:
էնգէրդէն տադօղ – ընկերովի աշխատող:
էնգէուշ, էնգէրուշ – օգնել, օժանդակել:
էնգուշ – 1.ընկնել: 2. կործանվել:
էնթի – այն կողմ, դիմաց, կողք:
էնթիրցիք – այն կողմի մարդիկ, այնտեղացիները:
էնիշտա, փեսա – փեսա:
էնջամ – 1.արդյունքում: 2. գործի ավարտին: 3. այնժամ:
էնուշ – անել:
էնչգէդուշ, էնչգադուշ – հորանջել:
էնքվի – ունք:
էշ – 1. կենդանիների ընկերք: 2.խնձորի, տանձի միջուկը՝ կորիզներով:
էշակկօլլի – փեսայի կողմի ազգականները:
էշաղ – էշ, ավանակ:
էվադի – շուտափույթ, անհապաղ:
էվլիյա – սուրբ:
էրգէն – 1.բարձրահասակ: 2. երկար:
էրգէնուշ – 1.երկարել: 2. մեկնվել, շորերով պառկել:
էրգէնութիւն, էրգէնուտուն – երկարություն:
էրգինք – երկինք:

էրգուդագ, ծօնդր – հղի:
էրգուշափթի – երկուշաբթի:
էրգուս, էգուս – երկու:
էրգվա, էրգվար – 1.տնամերձ բանջարանոց: 2.պարտեզ: 3.արտ:
էրթուշ – 1.երթալ: 2. գնալ: 3.քայլել: 4. ընթանալ:
էրվագուն – գեփյուն:
էրօնդ, էրանդ – գեղեցիկ:
էրօնդցնուշ, էրանդցնուշ – գեղեցկացնել:
էփուշ – 1.եփել: 2. թխել:
էթ – էգ:
էքուց – վաղը:

Թաախ – թարախ:
Թաաք – 1.դարակ: 2.սենյակում, պատի մեջ պատրաստված, առանց փեղկերի պահարան:
Թադան, տադան – աշխատասեր:
Թադուշ, տադուշ – աշխատել:
Թաթ – 1.կենդանու թաթ: 2. մարդու դաստակ:
Թաթման, թաթմօն, թէվհաքնիչ – ձեռնոց:
Թաթվուշ – թրջվել:
Թաթրուշ – հոգնել:
Թալ, թալան գաթ (ծննդկանի կամ նոր ծնած կենդանու առաջին օրերի կաթը) – դալ, խիժ:
Թախց, տախց, շէֆթալի – դեղծ:
Թախցի, տախցի – դեղծենի:
Թաղ, տաղ – դեղ:
Թաղի (ծառատեսակ) – թեղի, կնձենի:
Թառ (հորիզոնական ձող, որի վրա թառում են հավերը) – թառ:
Թառց (նորահարսի առաջին անգամ ծնողների տուն գնալը) – դարծ:
Թառնուշ – 1. դառնալ: 2. վերադառնալ: 3. շուռ գալ: 4. դավանափոխվել: 5. պտտվել:
Թառցէնուշ – 1. դարձնել: 2. վերադարձնել: 3. շուռ տալ: 4. դավանափոխել: 5. պտտացել: 6. թարգմանել:
Թաս – թաս:
Թաստուշ – հևալ:

Թավա – թավա:
Թավան, թավօն, ցխենք – առաստաղ:
Թավլա – նարդի:
Թավլուշ, թավէլվուշ, թավվէդուշ, թավվէլուշ – թավալվել:
Թարգուշ – 1.թարգել, վերջ տալ: 2. դադարեցնել:
Թաց – թաց:
Թացօն, թացան – 1.ջրալի կերակուր: 2. աղանդեր: 3. ուտելիքի վրա լցվող թանձրուկ: 4. կաթնամթերք:
Թափա – գազաթ, կատար:
Թափուլ – բրդի փունջ:
Թափուշ – թափահարել, թափ տալ:
Թաք (փայտե գլխով մուրճ) – թակ:
Թաքիդում, թաքիդիմ – հավանաբար, կարծես, ոնց որ:
Թաքչելօվ – թաքնվելով:
Թաքչուշ, թաքուշ – թաքնվել:
Թէբուր – փետուր:
Թէբուշ – թեփռել, փետրել, փետրահան անել:
Թէգ – 1.դեգ: 2. շուտ: 3.արագ: 4.շտապ:
Թէգէնի – թգենի:
Թէթէնի – թթենի:
Թէթէվ – 1.թեթև: 2.թեթևսովիկ:
Թէթէվնուշ – 1.թեթևանալ: 2. հանդարտվել: 3.անլրջանալ:
Թէթվէնէլիք – թթխմոր:
Թէթվցէնուշ – թթվացնել:
Թէթվուշ – թթվել:
Թէթու – թթու, թթվաշ:
Թէժար – դժվար:
Թէժարութիւն – դժվարություն:
Թէլ – մետաղալար:
Թէլէֆօն – հեռախոս:
Թէլէֆօն ընուշ – հեռախոսով զանգել:
Թէխթկի, թխթկի – թխկենի:
Թէխնուշ – թխանալ, սևանալ:
Թէմ – 1.դեմ: 2.դիմաց: 3.հակադարձ:
Թէմբալ – թամբալ, ծուլ:
Թէմ էնգուշ – 1.դեմ ընկնել, համոզել, շատ խնդրել: 2. հակառակվել:
Թէմիգ, իստաք – մաքուր:

Թէնագ, թէնակ – դանակ:
Թէնթում – դդում:
Թէնուշ – 1.դնել: 2.տեղավորել:
Թէշթէշուշ – թշթշալ:
Թէռցէնուշ – 1.թռցնել: 2. վռնդել, դուրս գցել: 3.խմբից հեռացնել: 4. վազացնել:
Թէռչուշ – վազել:
Թէվ – թև, ձեռք:
Թէվէ թափուշ – թևը թափ տալ:
Թէվէ օմուր – ժլատ:
Թէվի կօկօջ – դաստակի կոճ:
Թէվի մադ – ձեռքի մատ:
Թէվիաքնիչ, թաթման, թաթմօն – ձեռնոց:
Թէվօնք – հրացան:
Թէվօնք ցքուշ – հրացանով կրակել:
Թէր – թել:
Թէրգից, տըրգից – դրկից, հարևան:
Թէրգի – դերձակ:
Թէրթէգիչ – փիփերթ:
Թէրթէվուց, թէրթէրուցք – թերթերունք, արտևանունք, թարթիչ:
Թէրթեր – կաղամբով, սոխով և սխտորով պատրաստվող ճաշատեսակ:
Թէքցէնուշ – թքել:
Թի – բահ:
Թիբնուշ, տիբնուշ – 1.դիպչել: 2. կռվել:
Թիզուշ – դիզել:
Թիթէռ – թիթեռ:
Թիթիգ – 1. դյուրագրգիռ: 2. պահանջկոտ: 3. խիստ:
Թիլքի – աղվես:
Թիմաց – 1. դիմաց: 2. հանդիպակաց:
Թրիք, աղփ – թրիք:
Թուգ – թուգ:
Թուլում, դիգ – տիկ, պարկապզուկ:
Թուխ – սև:
Թուխթ – 1.թուղթ: 2.նամակ:
Թուխ ցիգար – լյարդ:
Թուխուլիգ – թուխ, սևուկ:

Թումփ – թումբ:
Թումել – թումել:
Թում – դում:
Թուս էլուշ – դուրս ելնել:
Թուս թեռնուշ, տուս թեռչուշ – ցատկել, ոստնել:
Թուրշի – թթու:
Թուրցեվ – դուրս:
Թուրցեվանցի – դրսեցի, այլ բնակավայրերի բնակիչ:
Թուք – թուք:
Թօթուղուշ – նետել, գցել:
Թօզ – փոշի:
Թօխլի – մեկ տարեկան ոչխար:
Թօխցնուշ – դողացնել:
Թօղուշ – 1.թողնել: 2. դողալ:
Թօմնուշ – ավարտել, լրանալ:
Թօյբաշի – հարսանիքի ղեկավարը տնտեսական – կազմակերպչական հարցերում:
Թօնդիր – 1.թոնիր: 2.բակում պատրաստված աղյուսե վառարան:
Թօռ – թոռ:
Թօռի դղա – ծոռ:
Թօռմելուշ – թառամել:
Թօռնօղ – մանկաբարձուհի:
Թօրբա – տոպրակ, պարկ:
Թօրխ – քլունգի և ուրագի նման, երկարապոչ աշխատանքային գործիք:
Թօրխ էնուշ, թօրխուշ – հողը թորխով մշակել:
Թօփ – գնդակ:
Թօփալ, չօլախ – կաղ:
Թօքթօքուշ – թխթխկացնել, տկտկացնել:
Թօքուշ – հազալ:

— Ժ —

Ժածգելուշ – 1.շարժել: 2. մի բան անել: 3. մի գործով զբաղվել:
Ժածուշ – շարժել:
Ժանգ – ժանգ:

Ժանգեռուշ – ժանգոտվել:
Ժեմնուշ – հետևից հասնել:
Ժողվեվուշ – հավաքվել:
Ժողվիաջի, ժողվիյա – մուրացկան
Ժողվիյա, ժողվիաջի – մուրացկան:
Ժողվուշ – հավաքել:

— Ի —

Իգվօնի (իգվօնցու) հաց – ընթրիք:
Իգուն – երեկո:
Իծէ, իծիյէ – 1.ամեն անգամ, ամեն ժամանակ: 2.միշտ, մշտապես:
Իլիգ, իլիկ – իլիկ:
Իխմէ, յիխմէ – խտաբույսի անուն է:
Իմանուշ – 1.լսել: 2.իմանալ:
Իմացնուշ – լսեցնել:
Իյէքինջի, յէքինջի – երրորդ:
Ինծի – ինծ:
Ինչ – ինչ:
Ինչակ, ինչուգ – մինչև:
Ինչբէս, ինչվէս – 1.ինչպես: 2.ինչպիսի:
Ինչբէս ու – ինչպես որ:
Ինչի – ինչու:
Ինչին ա – ինչ է:
Ինչիք չա – 1.մի բան չէ, ոչինչ է: 2. ասվում է նաև շնորհակալություն հայտնելուն ի պատասխան:
Ինչ ու – ինչ որ:
Ինչուգ, ինչակ – մինչև:
Ինտուս, ինտուգ – այն ուղղությամբ:
Իչնուշ, ինչնուշ – իջնել:
Իսպօն – այսպիսի:
Իստավրի, սիվտեգյուս – սեպտեմբեր:
Իստաք, թեմիգ – մաքուր:
Իստուս, իստուգ – այս ուղղությամբ:
Իսու չաք – այսչափ:
Իսքուշ, ուուշուշ – ընդեղեն մաքրել:
Իք – 1.իր, առարկա: 2. որևէ բան:

Լազ – շան լակ:
Լազօտ – շան ծագ:
Լագուշ – լակ ուտել:
Լագտի գօթէջաք – եգիպտացորենի ցողուն:
Լագուտ, լաուստ, լագտ – եգիպտացորեն:
Լալ – համր:
Լախք – մահմեդականների գերեզմանում՝ փոսի մեջ, հանգուցյալի վրա թեթությամբ դրվող իրար միացված տախտակներ:
Լաղբօյիք – օձի տեսակ:
Լաղի – լեղի, դառը:
Լաղու – փայծաղ:
Լաղջուշ – 1.լղճել: 2.պլոկել:
Լաղուշ – լողալ:
Լամբա – 1.լամպ: 2.լուսամփոփ: 3. ճրագ:
Լաշի – մրտավարդ, մշտադալար թուփ, որի վարդագույն ծաղիկների եզրերը աստիճանաբար դառնում են մանուշակագույն:
Լաչակ – լաչակ, գլխաշոր:
Լապուշ – ապուշ:
Լավաշ – լավաշ:
Լէէն, դաշդ – տաշտ:
Լէլիչ – ծագար:
Լէլուշ – լցնել:
Լէմուշ – 1.դաջել: 2.ծաղկել, ճիպտահարել: 3. ծեծել:
Լէյ (թուրք.՝ **լէռ, լէր**) – լեռ, որտեղ գտնվում է ամառային արոտավայրը՝ յայլան:
Լէն – լայն:
Լէնցք – լայնք:
Լէնութին, լէնուտուն – լայնություն:
Լէռ, լէր (արդ.՝ **լէյ**) – լեռ, որտեղ գտնվում է ամառային արոտավայրը՝ յայլան:
Լէվանուշ, լըվանուշ, լէվուշ – լվանալ:
Լէվացվուշ, լըվացվուշ – լվացվել:
Լէվացք, լըվացք – լվացք:
Լէվացքի չվօն, լըվացքի չվօն – լվացքի պարան:

Լէվուշ, լըվուշ, լէվանուշ, լըվանուշ – լվանալ:
Լէրէնցի – լեռնցի:
Լէրթ – մեջքն անբողջությամբ:
Լէրթի մեչքեղաղի օսկօրներ – ողնաշար:
Լէցուշ, լըցուշ – լցնել:
Լէցվուշ, լըցվուշ – 1.լցվել: 2.կուտակվել: 3.ամբողջանալ:
Լէքցէնուշ, լըքցընուշ – լիքը լցնել:
Լըմօնի գու – նման է:
Լիզու – լեզու:
Լիզուշ – լիզել:
Լիլիկ, լիլիգ – 1.լուլիկ, պոմիդոր: 2.կլորիկ: 3.կլոր հատապտուղ:
Լիսօր, լիսեր ծունգի – ծնկոսկր:
Լիվէռ – 1.ռևոլվեր, ատրճանակ: 2.զենք:
Լիվէռ ցքուշ – ատրճանակով կրակել:
Լիքէ – լիքը:
Լուս – լույս:
Լուսանուշ – լուսանալ:
Լուսնիկա – 1.լուսին: 2.լուսնի լույսով լուսավորված:
Լուր – լուռ:
Լուցուշ – բռնկվել, միանգամից այրվել:
Լօբիյա – լոբի:
Լօգօր – այժմ, հիմա:
Լօյի (թուրք.՝ **լօրի**) (ծառատեսակ) – լորենի:
Լօրի (արդ.՝ **լօյի**) (ծառատեսակ) – լորենի:

Խաբար – 1. տեղեկություն, լուր: 2. խոսք:
Խաբարդաք – լուրեր, զրույցներ, խոսակցություններ:
Խաբրուշ, խօբրուշ, խօսուշ – խոսել, զրուցել:
Խաղ – խայտ, պիսակ, բիծ, նշան, պուտ (ունեցող):
Խաղուլիգ – խայտեր ունեցող, խայտաբղետ, բծավոր, պուտավոր:
Խաղվէղուշ – խուտուտ տալ:
Խաղվուն – օժիտի մեջ դրվող ժանեկավոր ձեռագործ, որի վրա գույնգույն թելերով, փայլփլուն, մանր զարդերով ու ու-

լուսքներով պատկերվում են ծաղիկներ, թռչուններ և զանազան նախշեր:

Խագ, չիզգի – գիծ:

Խաթ – 1. ծալ: 2. կնճիռ: 3. շերտ: 4. խավ:

Խալա – հորաքույր:

Խալի – խալի, գորգ:

Խալէսուշ – 1. վերջանալ: 2. փրկվել, ազատվել:

Խալվութ – 1. աչքից հեռու, մեկուսի: 2. ծածուկ, գողտուկ, գաղտնի:

Խաթր – հարգ, պատիվ:

Խախալ – 1. տխմար: 2. թույլ: 3. տազնապալից:

Խախած – պանրի մերան, մակարդ:

Խախթվուշ – խեղդվել:

Խախթուշ – խեղդել:

Խածուշ – խայթել, կծել, խածել:

Խաղ – 1. խաղ: 2. քառատող երգ՝ խաղ: 3. պար:

Խաղուշ – 1. խաղալ: 2. պարել: 3. երգելով պարել:

Խայփուխ (թուրց.՝ **խարփուխ**) – հարբուխ:

Խաշ – 1. եղջերավոր անասունների ոտքերից և փորոտիքից եփվող ջրալի կերակուր, խաշ: 2. ջրի մեջ խաշած եգիպտացորենի գլխիկ:

Խաչ – խաչ:

Խաչնուշ, խաչնուշ – 1. փակել (դուռը, պատուհանը և այլն): 2. կոճկել:

Խառէվուշ – խառնվել, մասնակցություն ունենալ:

Խառնուշ – 1. խառնել, խառնշտորել: 2. խառնվել: 3. շփոթել:

Խավիծ, խավիճ, խավիճ – խավիծ:

Խավուլիլիկ, հավուլիլիկ – 1. մասուր: 2. մասուրի նման պտուղ:

Խավօղ – խաղող:

Խավօղի չի, քիշմիշ – չամիչ:

Խատվօր – 1. պուտավոր: 2. բծավոր:

Խատուփուլիկ, խատփուլիկ – գույնզգույն:

Խարաթ – շտապ:

Խարաթ էնուշ – շտապել:

Խարգուշ – խարկել, բովել:

Խարման (հացահատիկ կալսելու տեղ) – կալ:

Խարջ – հարսնացուի ծնողներին տրվելիք նյութական փոխհատուցում:

Խարփուխ (արդ.՝ **խայփուխ**) – հարբուխ:

Խափէլուջի – 1. խաբեբա: 2. սուտասան:

Խափուշ – խաբել:

Խաթ – 1. ուրիշներ: 2. օտարներ: 3. հասարակություն:

Խէթգէթուշ – եռալ:

Խէլառ – խելառ:

Խէլօթ, խլօզ – խլեզ, մողես:

Խէխունց – խխունջ:

Խէլըռուշ – խելագարվել:

Խէմած – խմած:

Խէմուշ – խմել:

Խէմուր – խմոր:

Խէմուրսէպիչ, ագիչ, ալիչ – ալիչ:

Խէնդակ – խանդակ:

Խէնդաս – 1. խնդաս: 2. ուրախ ապրես: 3. շնորհակալություն:

Խէնդուշ – 1. խնդալ: 2. ուրախ ապրել:

Խէնծօր – խնծոր:

Խէնծօրնի, խէնծօրի ծառ – խնծորենի:

Խէնչէլուշ – խնչել:

Խէնցգէլ – հացի կողով:

Խէշուշ – 1. փլվել: 2. ընկնել:

Խէսիմ, խըսիմ – ազգական:

Խէվ – խև:

Խէրաթ, խըրաթ դէվուշ – խրատ տալ:

Խէրգուշ, խըրգուշ – ուղարկել:

Խէրդուշ – խրտնել:

Խէրդէցէնուշ – խրտնացնել:

Խէրթէշ – 1. խարտվածք: 2. թեփ: 3. մաղոցք:

Խէրխէնջուշ, խըրխընջուշ – խրխնջալ:

Խէրխէրալ – հռիռալ:

Խէրք – խելք:

Խէփգէփուշ, խըփխըփուշ – 1. խփխփացնել: 2. աչքերը թարթել:

Խէփուշ, խըփուշ – խփել:

Խիբար – վտիտ:

Խիյար – վարունգ:

Խիճ – խլիճք:

Խիրիսթիյան – քրիստոնյա:

խլօզ, խելօրթ – խլեզ, մողես:
խմուշ – 1.խմել: 2. ծխել:
խուլ – խուլ:
խուլաց կօղի – հյուսած գոտի:
խուլաց մագ – հյուսած մագ:
խուլաք – 1.հյուսք: 2. հյուս: 3. հյուսվածք:
խուլուշ – հյուսել:
խուչակ, խուչկա – փայտ, որի վրա փաթաթվում է լոբին:
խուս – 1.ալյուրի և ջրի խառնուրդով պատրաստված զանգ-ված՝ խյուս: 2.ուղեղ:
խուստուլիկ (երեխա) – հաստլիկ (երեխա):
խուրչ – խուրջին:
խուփ – կափարիչ:
խփխփուշ, խեփգեփուշ – 1. խփխփացնել: 2.աչքերը թարթել:
խօբրուշ, խաբրուշ, խօսուշ – խոսել, զրուցել:
խօղ – խոտ:
խօղժօղվիչ, խօղվերդեվիչ – եղան:
խօղվերդեվիչ, խօղժօղվիչ – եղան:
խօզ – 1.խոզ: 2. վատ:
խօզգաղնի – կաղնի:
խօենուշ – խորանալ:
խօթուշ – 1. խոթել: 2.խայթել խայթոցով:
խօխօլ – 1. մացառ: 2. խճճված մագեր:
խօղ, հօղ – 1.հող: 2. գետին:
խօղաթաս – կավե թաս:
խօղիերգիչ, հօղիերգիչ, գօքար, չէֆթ – արոր:
խօղվերդեվիչ, հօղվերդեվիչ – գօրշուկ, փորսուղ:
խօյը, խօյին (թուրք.՝ **խօր, խօը**) – խորը:
խօյիզ, խօիզ – կորիզ:
խօնձօղօթ – փայտածուխ:
խօշօր – խոշոր:
խօշթեկալ – ցտեսություն:
խօչ – 1.սրածայր ոստ: 2.բարակ և սուր փայտի կտոր:
խօռօն, հօրօն, խաղ – պար:
խօսուշ, խաբրուշ, խօբրուշ – խոսել, զրուցել:
խօր, խօը (արդ.՝ **խօյը, խօյին**) – խորը:
խօց – վերք:

օար (արդ.՝ **օայ**), **սուզգի** – քամիչ, փլավքամիչ:
օուզ, ցուք – ծուկ:
օեն, ցեն – ծայն:
օեն (ցեն) դեվուշ – ծայն տալ, կանչել:

Կախ ցքուշ – կախել:
Կակալ, գագալ – ընկույզ:
Կակալի, գագալի մաղիս – ընկույզի միջուկ:
Կայտօփի (թուրք.՝ **կարտօփի**), **մաքվալ** – կարտոֆիլ:
Կասաբ – մսագործ:
Կասինկա, լաչակ՝ – գլխաշոր:
Կավախ – բարդի:
Կարպուզ – ծմերուկ:
Կարտօփի (արդ.՝ **կայտօփի**), **մաքվալ** – կարտոֆիլ:
Կաուն, քաուն – գարուն:
Կեչ – խոնավ:
Կիլիմօռ, գիլիմօռ – առաստաղից ամրացված շղթայի ծայրի կեռիկը, որից կրակի վրա են կախում կաթսան: Երբեմն **Կիլիմօռ, գիլիմօռ** են ասում նաև ամբողջ շղթային:
Կիր – գեր:
Կիրփօր, հաստփօր – հաստափոր:
Կյալ – գայլ:
Կյաղ – գյուղ:
Կյաղացի – գյուղացի:
Կուլչետայ – ոչխարի մսով և խմորով ճաշ:
Կուկլիկ – տիկնիկ:
Կուկու, քուքու – կկու:
Կում, քում – գոմ:
Կուռքա – գուլպա:
Կօղի – մետաղյա գոտի:

* **Կասինկա** են ասում միայն նախկին ԽՍՀՄ-ում բնակվող կրոնափոխ հանշենցիները:

Կօղի, գաբիչ, վարդիքգաբիչ, գայիչ, խուլաց կօղի – գոտի:
Կօզ – կենդանիների մեզ:
Կօկօրդ – կոկորդի խնձորակ:
Կօկօչ – կոճ:
Կօղ – գող:
Կօղնուշ – գողանալ:
Կօղութիւն – գողութիւն:
Կօրտ, քօրդ – գորտ:
Կօրք, քօրկ, գօրք – 1. նախասենյակ, կողասենյակ: 2. գոգ, գոգավորութիւն, գոգնոցի ներքևի երկու ծայրերը բարձրացնելիս առաջացող գոգավորութիւն:

— 3 —

Հա – այր:
Հաբա – հապա, ապա:
Հագնուշ – հագնել:
Հագվիթ (արդ.՝ հավգիթ) – հավկիթ, ծու:
Հադիք – հատիկ:
Հագ էնուշ – սիրել:
Հագար – հագար:
Հալած հավգիթ – ծվածեղ:
Հալավ – հագուստ, տարագ:
Հալիվօյ (թուրց.՝ հալիվօր) – ծերունի:
Հալիվօյնուշ (թուրց.՝ հալիվօրնուշ) – ծերանալ:
Հալիվօր (արդ.՝ հալիվօյ) – ծերունի:
Հալիվօրնուշ (արդ.՝ հալիվօյնուշ) – ծերանալ:
Հալուշ – հալել:
Հալք – ժողովուրդ:
Հալքաղուշ – մաշվել:
Հածուշ, ածուշ (ծու) – ածել:
Համեմ, հօմիմ, քիմծ – համեմ, զինծ:
Համշէցնակ, համշէսնակ, հօմշէցնակ, հօմշէսնակ – Համշէ-
 նի բարբառով:
Համրուշ, հօմրուշ – համրել, հաշվել:
Հայս (թուրց.՝ հարս) – 1. հարս: 2. ազգականի կին: 3. կին:

Հայսնիք (թուրց.՝ հարսնիք) – հարսանիք:
Հայսնքուր (թուրց.՝ հարսնքուր) – հարսնաքույր:
Հայվան, հայվօն – անասուն:
Հանդ – հանդ, արտավայր:
Հանուշ – հանել:
Հաչուշ – հաչել:
Հաստ – հաստ:
Հաստուլիգ – հաստլիկ:
Հաստութիւն, հաստուտուն – հաստութիւն:
Հաստփօր – հաստափոր:
Հասուշ (պտղի) – հասունանալ, հասնել:
Հավ – հավ:
Հավա – եղանակ:
Հավարնգի – երկնագույն, բաց կապույտ:
Հավգիթ (թուրց.՝ հագվիթ) – հավկիթ, ծու:
Հավնօց – հավանօց:
Հավուլիլիկ, խավուլիլիկ – 1. մասուր: 2. մասուրի նման պտուղ:
Հավուշ – գազար:
Հարս (արդ.՝ հայս) – 1. հարս: 2. ազգականի կին: 3. կին:
Հարս դուզնուշ (սուսնուշ) – հարս զարդարել:
Հարսի խաղ – հարսի պարը՝ հարսանիքի ժամանակ:
Հարսնիք (արդ.՝ հայսնիք) – հարսանիք:
Հարսէնցու, հարսընցու – հարսնացու:
Հարսէնքուր, հարսընքուր (արդ.՝ հայսնքուր) – հարսնաքույր:
Հարցէնուշ, հարցընուշ – հարցնել:
Հարք, հարգ, արխ – առու:
Հաց – հաց:
Հացի արգա – սեղանատամ:
Հաց ուղուշ – հաց ուտել, ճաշել:
Հաուր – հարյուր:
Հաքնուշ – հագնել:
Հաքվան, հաքվօն – առավոտյան:
Հաքուսվիուշ – հագնել:
Հէդ – հետք, քիծ:
Հէդէնգուշ – 1. հետը ընկնել: 2. վիճել:
Հէդէվ – հետո:
Հէդրա – միասին, իրար հետ:

Յէիք – հերիք, բավական:
Յէլուն – ուլունք:
Յէծնուշ – հեծնել:
Յէմ, համ – և:
Յէմօմ – բաղնիք:
Յէյ գիդի – ծայնարկություն, ակսոսանքի արտահայտություն:
Յէսան (սրոց, սրելու քար) – հեսան:
Յէվու, հէրու – անցյալ տարի:
Յէրգուշ – հէրկել:
Յէրեվօնցմա – հեռվից:
Յէրու, հէվու – անցյալ տարի:
Յէրք – հերկ:
Յէլբէթ – հարկավ:
Յէքիյա – հեքիաթ, պատմություն:
Յէքիյաթ էնուշ – հեքիաթ պատմել, պատմություն անել:
Յէքուց – էգուց, վաղը:
Յիմի – հիմա, այժմ:
Յիմիգու – հիմնկվա, ներկայիս, արդի:
Յին – հին:
Յինգ – հինգ:
Յինգշափթի – հինգշաբթի:
Յինգ քար (խաղ) – քարկտիկ:
Յիսուն, իսուն – հիսուն:
Յիվօնդ, հիվանդ – հիվանդ:
Յիվօնդնուշ, հիվանդնուշ – հիվանդանալ:
Յոււմ – հում, անեփ:
Յոււնդ, հոււնդ, սէրմ – սերմ:
Յոււմ էփաձ – հում էփած, թերխաշ:
Յոււմուդիչ – գետնախնձոր:
Յունա – այնտեղ:
Յունդ, հոււնդ, սէրմ – սերմ:
Յօդ – հոտ:
Յօդա – այդտեղ:
Յօդա, օդա – սենյակ:
Յօզա – այստեղ:
Յօհօլ, հօղօլ, քօռչինջուղ – բու:
Յօղ, խօղ – 1. հող: 2. գետին:

Յօղվերդէվիչ, խօղվերդէվիչ – փորսուղ, գորշուկ:
Յօղփադէնի – ծառատեսակի անուն է:
Յօղօլ, հօհօլ, քօռչինջուղ – բու:
Յօմա, ամա – համար:
Յօմայիլ (1. վզնոց, վզից կախվող զարդ: 2. վզնոց, որը ոչ միայն զարդ է, այլև, ըստ հավատալիքների, ունի չարխափան ուժ, ազատում է չար աչքից, փորձանքից, հիվանդություններից: 3. մուլայի գրած չարխափան գիր՝ հմայագիր) – համայիլ, հմայիլ:
Յօմիմ, համէմ, քիմձ – համեմ, գիմձ:
Յօմշէցնակ, հօմշէսնակ, համշէցնակ, համշեսնակ – Յամշենի բարբառով:
Յօմրուշ, համրուշ – համրել, հաշվել:
Յօյիվ – հովիվ:
Յօյիվութուն (թուրք.՝ **հօվվութուն**) **էնուշ** – հովվություն անել:
Յօնցնուշ – հանգցնել:
Յօպար (արդ.՝ **հօպայ**) – հորեղբայր:
Յօպերչէք (արդ.՝ **հօպերչէք**) – հարսանիքի ժամանակ հարսին տնից դուրս բերելիս դռների մոտ նրա հորեղբորը կամ փոխարինողին փեսայի հոր կամ նրա ներկայացուցչի կողմից ընծայվող գումար:
Յօփերվայի – որբւայրի, այրի:
Յօպօյ (թուրք.՝ **հօպօր**) **ախչիգ, դղա** – հորեղբոր աղջիկ, տղա:
Յօպօր (արդ.՝ **հօպօյ**) **ախչիգ, դղա** – հորեղբոր աղջիկ, տղա:
Յօվ – հով:
Յօվվութուն (արդ.՝ **հօյիվութուն**) **էնուշ** – հովվություն անել:
Յօրթ – հորթ:
Յօրթնօց – հորթանոց, գոմ:
Յօրօն, խօռօն, խաղ – պար:
Յօքի, օքի – հոգի:
Յօքույ (թուրք.՝ **հօքուր**), **խալա** – հորաքույր:
Յօքույին (թուրք.՝ **հօքուրին**) **ախչիգ, դղա** – հորաքրոջ աղջիկ, տղա:
Յօքուր (արդ.՝ **հօքույ**), **խալա** – հորաքույր:
Յօքուրին (արդ.՝ **հօքույին**) **ախչիգ, դղա** – հորաքրոջ աղջիկ, տղա:
Յօքօվօր – ողջ, ապրող:

Չագ – ծակ, անցք:
Չագուշ – ծակել:
Չաձգուշ – ծածկել:
Չաձուգ, մակաս – տանիք:
• **Չաղ, ցաղ** – եգիպտացորենի տերև:
Չաղիգ – ծաղիկ:
Չաղգուշ – ծաղկել:
Չառ – ծառ:
Չառի գիվ – խեժ:
Չառի թափա – ծառի կատար:
Չար, ծար (արդ.՝ **ծայ**), **սուզգի** – քամիչ, փլավքամիչ:
Չարվենուշ – ծարավել:
Չեղուք – մանր որդեր, որոնք լինում են մսի, լեշի վրա՝
ճանճերի նստելուց հետո:
Չելուշ – ծլել:
Չէձուշ – ծեծել:
Չէնուշ – կենդանիների ծնելը:
Չէվաղնի, ցէվաղնի – (վարդագգիների ընտանիքին պատկանող ծառ, որն ունի բալի նման պտուղներ)– ծվաղենի, դափնեկեռասենի:
Չէվաղ, ցէվաղ (ծվաղենու պտուղ) – ծվաղ, դափնեկեռաս:
Չիբաղդուշ – գեղեցկանալ, արտակարգ գեղեցկանալ:
Չիբել – բանջարեղենով ճաշատեսակ:
Չիբլուշ – կճմթել, կսմթել:
Չիձեռ – ծիծառ, ծիծեռնակ:
Չիբու – փոքր զուռնա:
Չիգաա – սիգարետ, ծխախոտ:
Չիգաա խենուշ – սիգարետ ծխել:
Չիլ – 1. բույսի ծիլ: 2. հեղուկի բարակ շիթ:
Չիժ – ծիծ, կուրծք:
Չիժաղուշ – ծիծաղել:
Չիյափ – առևտրի կենտրոն, շուկա, նաև՝ քաղաք, քանզի շուկաները գտնվում էին քաղաքներում, որոնք ծովափին էին:
Չիռթ – ծիրտ, ծերտ:
Չում – ծոմ:

Չում փեռնուշ – ծոմապահություն:
Չում գէփչուշ – ծոմ սկսել:
Չուռ – ծուռ:
Չունգ էնգուշ – ծնկի իջնել, ծնկել:
Չունգ – ծունկ:
Չամուշ – ծամել:
Չոնդր, էրգուդագ – հղի:
Չոնդր – ծանր:
Չոնդր – ձոնդր – ծանր–ծանր:
Չոնդրենուշ – ծանրանալ:
Չով – ծով:
Չովի չայ – ծովի ափ:
Չոց – ծոց:

Չաշնուշ, խաշնուշ, խաշնուշ – 1. փակել: 2. կոճկել:
Չարաթ էնուշ, խարաթ էնուշ – շտապել:
Չաք – խակ:
Չաք քախի, դաք աբրիգոս^{*} – ցոգուլ, խակ ծիրան:
Չյափ – շնագայլ, չախկալ:
Չոյիգ, դոխ – կորիգ:

Ճախ, չախ – անձրև:
Ճախածկ, չաղացք – ջրաղաց:

Մագամ, մագա – 1. ըստ երևույթին, գուցե: 2. մի՞ թե: 3. բայցևայնպես: 4. ուրեմն: 5. պարզվում է:
Մաղ – մատ:
Մաղախ, մատաղ – մատաղ:
Մաղախ էլլուշ, մատաղ էլլուշ – մատաղ լինել:

^{*} *Քախի են ասում Թուրքիայի, աբրիգոս՝ նախկին ԽՍՀՄ-ի կրոնափոխ համընդհանրը:*

Մադդաշ – 1.մատդաշ: 2.դեռատի:3.նոր:
Մադման, մադմօն – իլիկի տեսակ:
Մադնի – մատանի:
Մազ – մազ:
Մազալուխ – գերեզման:
Մազալուխնի – բառացի՝ գերեզմաններ, օգտագործվում է նաև գերեզմանատուն իմաստով:
Մազուլիզ – մազոտ, թավամազ:
Մալախտօ – հատիկ լոբիով ճաշ:
Մախ – մեխ:
Մախք – մեղք:
Մակաս – մկրատ:
Մակաս, ծածուզ – տանիք:
Մածէքօմ – մածուն քամելու տոպրակ:
Մածուն – մածուն:
Մածուն մերուշ, մածուն փեռնուշ – մածուն մերել:
Մաղ – մաղ:
Մաղաբուր – մրտազգիներին պատկանող սպիտակ կամ վարդագույն ծաղիկներով, մանր, սև պտուղներով մշտադալար թուփ:
Մաղավուր էլլուշ – մեղավոր լինել:
Մաղարա – 1.քարայր: 2.որջ:
Մաղիս – կորիզի միջուկ:
Մաղր – մեղր:
Մաղու – մեղու:
Մաղօլ – փշազգի բույս:
Մայ (թուրց.՝ մար) – մայր:
Մայթ (թուրց.՝ մարդ) – 1.մարդ: 2.ամուսին:
Մայիս – մայիս:
Մայնուշ – պարզաջրել, ողողել, մաքրաջրել:
Մայուշ, աշուշ – նայել:
Մանդարին, մօնդարին – մանդարին:
Մաշմէքի, մաշմուրքի ծառ – շագանակենի:
Մաշմուրք, մաշմուք – շագանակ:
Մաշմուրքի ծառ, մաշմէքի – շագանակենի:
Մաշուշ – մաշել:
Մաշքէթափ – չղջիկ:
Մաջուր – փոքր վարունգ:

Մառ (սուր ծլեպ, փուշ, որը խրվում է մաշկի մեջ) – մառ:
Մասրափուշ – մասրենու փուշ:
Մավա – օգուտ:
Մավա էլլուշ – օգտակար լինել:
Մավի – կապույտ:
Մար (արդ.՝ մայ) – մայր:
Մարախ – մարագ:
Մարթ (արդ.՝ մայթ) – 1.մարդ: 2. ամուսին:
Մարմին, օնքս, վաչուտ – մարմին:
Մարխ (խեժոտ փայտիկ, որն օգտագործվում է որպես կրակ անելու կպչան) – մարխ:
Մարտ – մարտ:
Մարցու – մածնի մերան, մակարդ:
Մաքթաբ, շկօլա՝ – դպրոց:
Մաքինա – ավտոմեքենա:
Մաքվալ, կարտօփի (արդ.՝ կայտօփի) – կարտոֆիլ:
Մեզ – մեկ:
Մեզալ – մեկել, մյուս, ուրիշ:
Մեզալ օյը (թուրց.՝ մեզալ օը) – վաղը չէ, մյուս օրը:
Մեզալ օը (արդ.՝ մեզալ օյը) – վաղը չէ, մյուս օրը:
Մեզալօք – մեկելներ, մյուսներ:
Մեզեդէն – 1.միանգամից: 2. միասին:
Մեզդաղուշ – մեկտեղել, մի տեղ կուտակել:
Մեզդաղեցնուշ – մեկտեղեցնել:
Մեզհադիզ – 1.մեկ հատիկ: 2.միամորիկ, ծնողների միակ զավակը:
Մեդածուշ – մտածել:
Մեդնուշ – մտնել:
Մեդօրուշ, մըդուուշ – մտորել, մտածել, խորիել:
Մեզ – մեզ:
Մեզարլիք – գերեզմանատուն:
Մեզմա – մեզամից:
Մեթնուշ – մթնել:
Մեթցենուշ, խօթուշ, նեթիուշ – մտցնել:

* Մաքթաբ են ասում Թուրքիայի, իսկ շկօլա՝ նախկին ԽՍՀՄ-ի կրոնափոխ համշենցիները:

Մեթքին էլլուշ – մտքում լինել:
Մելմէլուշ – 1.թեթև ծուխ բարձրանալ: 2.հանդարտ զեփյուռ փչել: 3. առկայծել:
Մեծ – մեծ:
Մեծ մօմ, մօմի – մամիկ, տատիկ, մեծ մայր:
Մեծէնուշ – մեծանալ, խոշորանալ:
Մեծվօր – 1.մեծավոր, գլխավոր: 2.հասարակական դիրք ունեցող մարդ:
Մեծփօր – մեծփոր:
Մեմալ – մեկ էլ, մի հատ էլ, մի անգամ էլ:
Մէյվա – միրգ:
Մենէնագութիմ – մենակություն, մենություն:
Մենդիլ – թաշկինակ:
Մենուշ – մնալ:
Մէչ – մեջ:
Մէչք, մէչ – գոտկատեղ:
Մէչքէդաղ – մեջտեղ, կենտրոն:
Մէչքէդաղի մաղ – միջնամատ:
Մեջախ – մոծակ:
Մեռէլուշ – մռայլվել:
Մեռնուշ, մեռուշ – մեռնել:
Մէսուշ – մրսել:
Մէտրօ – մետր:
Մէր – մեր:
Մէրալ, բուլութ – ամպ:
Մէրաղ – 1.տառապանք: 2. հուզմունք: 3. անհանգստություն: 4. երկյուղ: 5. կասկած:
Մէրաքլի – հետաքրքիր, գրավիչ, հաճելի:
Մէրջիմ – 1.մրջյուն: 2. միջատ:
Մէրսունք (գոմում կենդանիներին կեր տալու տաշտակածև տախտակամած) – մսուրք, մսուր:
Մէք – մենք:
Միափիյան – միաբերան, միաձայն:
Միդք – 1.միտք: 2. հիշողություն:
Մի՞թա, մի՞տա – մի՞թե:
Միշմուք – հացի միջուկ:
Միշուցք – խորիզ:

Միս – միս:
Միրաբ – ջրբաշխ:
Մուաջիր – գաղթական, փախստական, վտարանդի:
Մուգ – մուկ:
Մուզիթուն – բամբասանք:
Մուզիթուն էնուշ – բամբասել:
Մուխ – մուխ, ծուխ:
Մույիք, մօյի – ելակ:
Մուսէնդէր – անկողիները դարսելու տեղ:
Մուր – մուր:
Մուցիփօր – վայրի կակաչ, խաշխաշ, հարսնածաղիկ:
Մօդ – մոտ:
Մօդգինուշ – 1.մոտենալ: 2. մտերմանալ:
Մօդիք – 1.մոտիկ: 2. մերձավոր:
Մօզի – մոզի:
Մօլ – 1.տերևներով ճյուղ, որով կերակրում են կենդանիներին: 2.չոր տերևներ: 3.մլակ:
Մօլա – գոլ:
Մօլա չախ – գոլ անձրև:
Մօլէռուշ – մոռանալ, չհիշել:
Մօլէռօան – մոռացկոտ:
Մօխիր, քյուլ – մոխիր:
Մօծիր – կրակից թռչող մոխիր:
Մօխրօմօն – մոխիր լցնելու աման, տարա:
Մօմ – մոմ:
Մօմի, մէծ մօմ – մամիկ, տատիկ, մեծ մայր:
Մօնգաղ, մանգաղ – մանգաղ:
Մօն էգուշ – 1.փնտրել, որոնել: 2.գրոսնել:
Մօնի – ծառատեսակի անուն է:
Մօնի-մօնի – արագ-արագ:
Մօյի, մույիք – ելակ:
Մօնչ – արու զավակ, տղա, մանչ:
Մօնուշ – մանել:
Մօջա – թուխս նստած հավ:
Մօրքէթ – օգնական:
Մօրթուշ – մորթել:
Մօքույ (թուրց. մօքուր) – մորաքույր:

Մօքույին (թուրք.՝ մօքուրին) **ախչիզ, դղա** – մորաքրոջ աղջիկ, տղա:

Մօքուր (արդ.՝ մօքույ) – մորաքույր:

Մօքուրին (արդ.՝ մօքույին) **ախչիզ, դղա** – մորաքրոջ աղջիկ, տղա:

— 3 —

Յագիջի – գրագիր:

Յաթաղ – ոչխարի հոտ:

Յաղ – յուղ, ճարպ:

Յաղլիփօր – ճարպոտ փոր ունեցող, հաստափոր:

Յաղուղ, յայուղ – խնոցի:

Յան էգուշ – 1.թիկնել: 2. հենվել:

Յաշիղ, յաշաղ – արկղ:

Յաստուղ, փարց, պարց – բարձ:

Յար (սիրած էակ) – յար:

Յաար հեղէ – իրար հետ:

Յէ – կոչական ծայնարկություն, դիմելաձև ավագ տարիքի տղամարդկանց և կանանց:

Յէ բաբա – դիմելաձև հորը:

Յէ մա – դիմելաձև մորը:

Յէգէն – զարմիկ:

Յէդ, յէտ – հետ:

Յէդցքուշ – հետածգել:

Յէշիլ – կանաչ:

Յէս – ես:

Յէսիր – գերի:

Յէտ թառնուշ – հետ դառնալ, վերադառնալ:

Յէտ թողնուշ – բաց թողնել, ազատ արձակել:

Յէփ – երբ:

Յէփէլուշ – եռալ, եփել:

Յէփէլաձ – եռացած:

Յէփ ու – երբ որ:

Յէքինջի, իյէքինջի – երրորդ:

Յիխմէ, իխմէ – խոտաբույսի անուն է:

Յուղ – մոշ:

Յումրուղ, յումրուխ – բռունցք:

Յօղօն – վերմակ:

— 6 —

Նաբադի էլլուշ – վերանալ, անհետանալ, անհետ կորչել:

Նալ – պայտ:

Նալին (փայտե ներբանով և երեսին կաշվե երիզով բոկոտիկ) – նալիկ:

Նալուշ – պայտել:

Նամագ – նամագ:

Նաչերուշ, նաչիրուշ – 1.հոգնել: 2.հոգնելու պատճառով չցանկանալ, ալարել:

Նաս – այս կողմ:

Նասցքուշ – այս կողմ նետել:

Նար, նուռ – նուռ:

Նափիր – գյուղատնտեսական աշխատանքի տեղամասը և չափաբաժինը:

Նէբէկչուշ – 1.կպչել: 2.կառչել: 3.անհանգստացնել:

Նէգբուշ – կպչել:

Նէդուշ – նետել:

Նէթիյուշ – ներս մտցնել:

Նէմաղուշ – կպչել:

Նէյթէվ (թուրք.՝ ներթէվ, նէթէվ) – 1.ներքև: 2.ցածր: 3. տակ: 4.ցածրոգի:

Նէնցքուշ – այն կողմ նետել:

Նէնօնցնուշ, նէնօսնուշ – այն կողմ անցնել:

Նէնօսնուշի հիվօնդութին – վարակիչ հիվանդություն:

Նէշօն – խալ:

Նէշօնլու, նըշանլու – նշանած:

Նէստուշ, նստուշ – նստել:

Ներ, նիր (երկու եղբայրների կանայք) – տագրակին, տեգերկին:

Ներթէվ (արդ.՝ նէթէվ), **նէթէվ** – 1.ներքև: 2. ցածր: 3. տակ: 4. ցածրոգի:

Նէցքուշ – ներս գցել:

Նիր, ներ (երկու եղբայրների կանայք) – տագրակին, տեգերկին:

Նիյազ – երազ:
Նիյելլուշ – 1. մխրճվել, խրվել: 2. սուզվել:
Նշօնի մադ – նշանի մատ, մատնեմատ:
Նուռ, նար – նուռ:
Նօահարս, նօարս (արդ.՝ **նօայս**) – նորահարս:
Նօայս (թուրք.՝ **նօահարս, նօարս**) – նորահարս:
Նօղթան – սանձ:
Նօյ (թուրք.՝ **նօր**), **նօ** – 1. նոր: 2. ուր:
Նօյ դայի (թուրք.՝ **նօր դարի, նօր դաի**) – նոր տարի:
Նօյիթուզ – ուր որ:
Նօր (արդ.՝ **նօյ**), **նօ** – 1. նոր: 2. ուր:
Նօր դարի, նօր դաի (արդ.՝ **նօյ դայի**) – նոր տարի:
Նօրսուշ – նոսրացնել:
Նօրցենուշ – 1. նորացնել: 2. թարմացնել: 3. վերականգնել:
Նօրքուշ – 1. նորոգել: 2. կրկնել: 3. ասածը հիշեցնել:

— Շ —

Շաբիք – շապիկ, վերնաշապիկ:
Շադ – շատ:
Շադենուշ – շատանալ:
Շադնցուշ – շատացնել:
Շալազ – մեջքով կրելու բեռ:
Շալզուշ – շալակել:
Շահար – քաղաք:
Շաղ – ցող:
Շաշ – շաշ:
Շաղլեցվուշ – 1. խոնավել: 2. բազմություն կուտակվել:
Շաուշ – շարել:
Շաշ, խեվ, խելառ – խենթ:
Շարբաթ – շարբաթ:
Շափաթ (օր) – շաբաթ:
Շեեփ – շերեփ:
Շեն – ուրախ:
Շեռ – մեզ:
Շեռուշ – միզել:
Շերդ – շերտ:

Շերեմփա – 1. սնունդ և խմիչք պահելու պահարան: 2. մթերք պահելու սենյակ:
Շերօման, շերօմօն – միգապարկ:
Շեփեցնուշ – շոմփոցով հարվածել, ապտակել:
Շեքանձ – մշտապես ստվերոտ տեղ:
Շիդազ – շիտակ, ճիշտ, ուղիղ:
Շիդզուշ – 1. առողջանալ: 2. ուղղել:
Շիմ – շեմ, սեմ:
Շինուշ – 1. շինել: 2. կառուցել: 3. պատրաստել:
Շկօլա, մաքթաթ՝ – դպրոց:
Շուդ – պզուկ, բշտիկ:
Շուն – շուն:
Շունչ – 1. շունչ: 2. շնչավոր: 3. անձ:
Շուշե – 1. շիշ: 2. բաժակ: 3. ապակյա իրեր:
Շուք – շուք, ստվեր:
Շօղնուշ – 1. արևի շողերից տաքանալ: 2. շատ տաքանալ:
Շօղվուշ – 1. խմոր հունցել: 2. շաղախել:
Շօղունք – կենդանիների լորձունք:
Շօյ (թուրք.՝ **շօր**) – 1. շոր: 2. գործվածքի կտոր:
Շօր (արդ.՝ **շօյ**) – 1. շոր: 2. գործվածքի կտոր:
Շօրթուղք – խտտաբույսի անուն է:
Շօրվա – մսով և կարտոֆիլով ճաշ:
Շօք – շոգ:

— Չ —

Չա, օչ – ոչ:
Չաախ, չաօխ, չրախ – չարոխ, տրեխ:
Չագուչ, չեքիջ – մուրճ:
Չադու – ջադու:
Չաթալ – 1. երկճյուղ: 2. պատառաքաղ:
Չալուշ – նվագել:
Չախ, ճախ – անձրև:
Չախ, օխթ, վաքիտ, զաման – ժամանակ:
Չախլուշ – ճխլել, ճզմել:

* *Մաքթաթ են ասում թուրքիայի, իսկ շկօլա՝ նախկին ԽՍՀՄ-ի կրոնափոխ համշենցիները:*

Չախօտ – անծրևոտ:

Չաղալ, չախալ աչվենի – կանաչ, կապույտ աչքեր:

Չաղացք, ճախածք – ջրաղաց:

Չամի, չօմի – սոճի, շամի:

Չամադան – ճամպրուկ:

Չամչել էես (արդ.՝ էյես) – աներես, անամոթ, չամաչող:

Չայ – թեյ:

Չայթվուլ (թուրք.՝ չարթվուլ) – 1.ջարդվել, կոտրվել: 2. հոգնել: 3.մարմնի մասերը ցավալ:

Չայթուլ (թուրք.՝ չարթուլ) – ջարդել, կտոր-կտոր անել, մանրել:

Չայիր – մարգագետին:

Չայխանա – թեյարան:

Չայնիզ – թեյնիկ:

Չաչ, մօլ – ծառերից թափված չոր տերևներ:

Չարդախ – 1. այգում, բանջարանոցում ճյուղերով կառուցված հյուղ: 2. խաղողի վագերով վերևի մասը ծածկված, հանգստի համար զովասուն վայր:

Չարդախք – տախտակածածկ հատակ:

Չարթուն – ջարդոն:

Չարթուլ (արդ.՝ չայթուլ), **ջարդուլ** – ջարդել, կտոր-կտոր անել, մանրել:

Չարթվուլ (արդ.՝ չայթվուլ) – 1.ջարդվել, կոտրվել: 2. հոգնել: 3.մարմնի մասերը ցավալ:

Չափա – քլունգ:

Չափուզ - շիվերով կամ ծղոտով գործված քառակուսի, կանթավոր, գույնզգույն ներկված փոքր կողով, որի մեջ կանայք և աղջիկները դնում են իրենց ձեռագործները, թել ու ասեղը, կոճերը, հյուսվածքները, թելերի կծիկները, շյուղերը, իլիկը և այլն:

Չափուլ – չափել:

Չաք – չափ:

Չաքմիչ էնուլ – մէխել:

Չաօխ, չաախ, չրախ – չարոխ, տրեխ:

Չգօ, չկօ – չկա:

Չենգա – ծնոտ:

Չէչօտ – ծաղկատար:

Չէփ – գրպան:

Չէքտ – ժակետ:

Չէքիչ, չագուլ – մուրճ:

Չէֆթ, գօքար, խօղիերգիչ, հօղիերգիչ – արոր:

Չիգգի, խազ – գիծ:

Չիմ – բահով կտրած բուսախառն հողի շերտ:

Չիյ (թուրք.՝ չիր) – չիր:

Չիվու – սեպ:

Չիր (արդ.՝ չիյ) – չիր:

Չվօն – պարան:

Չուլ – կարպետ:

Չումլախ – կճուճ:

Չույ (թուրք.՝ չուր) – ջուր:

Չույծաղիզ (թուրք.՝ չուրծաղիզ) (հիվանդություն) – ջրծաղիկ:

Չուննեվօր – չունևոր, աղքատ:

Չուրուխ – հուլիս:

Չուր (արդ.՝ չույ) – ջուր:

Չուրծաղիզ (արդ.՝ չույծաղիզ) (հիվանդություն) – ջրծաղիկ:

Չօլախ, թօփալ – կաղ:

Չօմի, չամի – սոճի, շամի:

Չօյ (թուրք.՝ չօր) – չոր:

Չօր (արդ.՝ չօյ) – չոր:

Չօքբա – մսով, բրնձով և կարտոֆիլով ջրալի ճաշ:

Չօր լօբիյա – լոբու հատիկներ:

Չօրնուլ – չորանալ:

Չօր ծում (ծոմապահության օրերին ուտում են մութն ընկնելուց հետո, իսկ վաղ առավոտյան, թեև իրավունք ունեն, բայց չեն ուտում) – չոր ծոմ:

Չօւքչափթի – չորեքշաբթի:

Չօքութ, չօքուդ – վատ, տգեղ:

Չօքուդութին, քէշութին – վատություն:

— 7 —

Պաղէռուլ, բաղէռուլ – պատռել:

Պագունք – բազուկ, ճակնդեղ:

Պագունքի դէյէր – բազուկի տերև, ճակնդեղի տերև:

Պէյինձ – բրինձ:

Պէռ – բեր:
Պիան, պիօն (արդ.՝ **պիյօն**) – բերան:
Պիյօն (թուրց.՝ **պիան, պիօն**) – բերան:
Պիյ (թուրց.՝ **պիր**) – բիր, ձեռնափայտ:
Պիր (արդ.՝ **պիյ**) – բիր, ձեռնափայտ:
Պիյուշ, պէուշ, փէուշ – բերել:
Պօբուշ – հասնել:
Պօլնիք, պօնլիք – բանալի:
Պօլօյը – շուրջը:
Պօլօրնուքէ – շուրջբոլորը:
Պօն – բան:
Պօնլիք, պօլնիք – բանալի:
Պօնջար – կաղամբ:
Պօռ, փօռ – բռռ:

— Ջ —

Ջագաթ – ճակատ:
Ջախք – ճեղք:
Ջախքուշ – ճեղքել:
Ջաղ – հյուսելու, գործելու շյուղ:
Ջաշ – ճաշ:
Ջար – ճար:
Ջգութ – ճկութ:
Ջէիզ – օժիտ:
Ջէնրէ, ջէրմ – ջերմ, տենդ:
Ջէնուռ (եգիպտացորենի հացը յուղի մեջ տապակելով պատրաստված ուտելիք) – ճմուռ:
Ջէջիմ – կարպետ:
Ջէվդուշ – բաժան–բաժան անել:
Ջէվջէվուշ – ճվճվալ:
Ջէրմ, ջէնրէ – ջերմ, տենդ:
Ջէրմագ, ջէրմակ – ճերմակ, սպիտակ:
Ջիդ, ծիթ – վիզ, ճիտ, պարանոց:
Ջիդօզ – նվազ:
Ջիջու – 1. ճիճու: 2. անձրևորդ: 3. աղիք:
Ջուզալ – կաթսա:

Ջութ – ճութ, ողկույզ:
Ջուղաբ, աղվէդ – պատասխան:
Ջօբան – ճոպան:
Ջօթ – ծայր:
Ջօմիշ – գոմեշ:
Ջօմիշի հօրթ – գոմշածագ:
Ջօմփա – 1. ճանապարհ: 2. ընթացք: 3. միջոց:
Ջօմփա թէնուշ, ջամփա թէնուշ – ճանապարհ դնել:
Ջօն (ազգ) – ճան, լագ:
Ջօնգ – ճանկ, բուռ:
Ջօնգուշ, ջանգուշ – ճանկել, բռի մեջ հավաքել:
Ջօնչուշ – ճանաչել:
Ջօնջ, ջանջ – ճանճ:
Ջօռ, ջօր – ցեխ:

— Ռ —

Ռագի էլլուշ – համածայն լինել:
Ռաստ էգուշ – հանդիպել:
Ռեյհան – ռեհան:
Ռեսիմ – նկար:

— Ս —

Սաբայլա, աքվօն – առավոտյան:
Սադաֆ – կոճակ:
Սադգուշ – սատկել:
Սադիր – սածիլ:
Սադէ – միայն, սուկ:
Սագ – 1. սագ(նվազարան): 2. ճահճամարգագետին:
Սաին – հով:
Սալինջաղ – ճոճանակ, կախօրրան, ցանցաճոճ, ճլորթի:
Սալուշ – սալարկել:
Սալօն – հյուրասենյակ, սենյակ:

Աղվէդ են ասում նախկին ԽՍՀՄ հանրապետություններում բնակվող կրոնափոխ համալսելիները, իսկ Թուրքիայում բնակվողներն ասում են ջուղաբ:

Սահաթ – ժամ:
Սահուշ – սահել:
Սաղավոր – կենդանի մարդ, շնչավոր արարած:
Սաղ – ողջ:
Սաղթոր – սխտոր:
Սաղմուշ – սեղմել, խցկել:
Սաղվուշ – սղալ, սայթաթել:
Սաղօն – 1.խորը ափսե: 2.սրահ, սալոն:
Սայի (թուրք.՝ սարի) – 1.դեղին: 2.խարտյաշ:
Սանդր, **սօնդր** – սանր:
Սանդրուշ, **սօնդրուշ** – սանրել:
Սանդէք, **սօնդէք** (տախտակի վրա ամրացված երկշարք մետաղյա սանրերով հարմարանք, որով զգում են բուրդը) – սանդերք:
Սաչախին վաք – ջրհորդան:
Սաջ – թիթեղ:
Սաջախ – կրակարանի վրայի մետաղյա օղակածև եռոտանին, որի վրա դրվում է կաթսան:
Սառչուշ – սառչել:
Սարբաստ – մարմանդ:
Սարբէն – մթերքի պահեստ:
Սարխօշ – հարբած:
Սավքի – 1. ուղղանկյուն կամ քառանկյուն, ճաղաշար եզրերով փայտե կամ մետաղե 4–6քմ բարձր թախտ: 2. սենյակի պատի երկարությամբ քարաշեն, տախտակածածկ բարձրություն: 3. սենյակի հատակի մեկ աստիճան բարձրադիր հատված:
Սար – սար:
Սարթ – սարդ:
Սարթի պուն – սարդոստայն:
Սարի (արդ.՝ սայի) – 1.դեղին: 2.խարտյաշ:
Սաքաթ – հաշմանդան:
Սաքալ – մորուք:
Սաֆ – սխալ:
Սէլ – 1.սայլ: 2.սելավ:
Սէլամ – բարև, ողջույն:
Սէլվէլուշ – սուլել:

Սէյդ (թուրք.՝ սէրդ) – կրծքավանդակ:
Սէյդի (թուրք.՝ սէրդի) **մազ** – կրծքավանդակի մազ:
Սէպուշ, **սէփուշ** – սրբել:
Սէնդգադուշ – գկրտալ:
Սէվ – կապտամանուշակագույն:
Սէվ աշխար – զարմանքի և շփոթմունքի բացականչություն:
Սէվ Ասպած – զարմանքի և շփոթմունքի բացականչություն:
Սէվնուշ – կապտել:
Սէվ օնդէր – զարմանքի և շփոթմունքի բացականչություն:
Սէրդ (արդ.՝ սէյդ) – կրծքավանդակ:
Սէրդի (արդ.՝ սէյդի) **մազ** – կրծքավանդակի մազ:
Սէրդէռուշ (արդ.՝ սէյդէռուշ) – 1.զայրանալ: 2.վիրավորվել: 3. խռովել:
Սէրդօդ (արդ.՝ սէյդօդ) **մարթ** – 1.քաջ մարդ: 2.զայրացած մարդ:
Սէրէնդէր – 2-3 մ բարձրության փայտե սյուների վրա կառուցված, չորս կողմից բաց պատշգամբով շրջափակված, տախտակամած մթերանոց (շուրջ 40 քմ), որը օդ խաղալու համար ունի ճաղաշար, ցանցկեն փոքր պատուհաններ: Այնտեղ պահում են եգիպտացորեն, կարտոֆիլ, լոբի, սոխ և այլն: Կենդանիներին հասու չլինելու համար օգտագործում են շարժական սանդուղք:
Սէրմ, **հունդ**, **հունդ** – սերմ:
Սէր էնուշ, **փուք էնուշ** – նայել:
Սէրփէս մարթ (սրբի երեսի նմանվող դեմքով մարդ) – սրբերես մարդ:
Սէփէվուշ – սրբվել:
Սինօռ, **գռանիցա** – սահման:
Սիյ (թուրք.՝ սիռ, սիր) – հում կաթի սեր:
Սիյդ (թուրք.՝ սիրդ) – 1.սիրտ: 2.ոխ: 3. զայրույթ:
Սիյօդ – բաղեղ, պատուտակ:
Սիռ, **սիր** (արդ.՝ սիյ) – հում կաթի սեր:
Սիվտէգյուս, **իստավրի** – սեպտեմբեր:
Սիրդ (արդ.՝ սիրդ) – 1.սիրտ: 2.ոխ: 3. զայրույթ:
Սիրդէ էլուշ – զայրանալ:

* *Գռանիցա են ասում նախկին ԽՍՀՄ հանրապետություններում բնակվող կրոնափոխ համալսարանները, իսկ Թուրքիայում բնակվողներն ասում են սիւն:*

Սիրդէ թառնուլ – 1. սիրտը հետ տալ, փսխել: 2. զգվել:
Սիուլ – գուրգուրել:
Սուզգի, ձար, ծար (արդ. ծայ) – փլավքամիչ, քամիչ:
Սուք տաղէ, սուդ դաղէ – 1. գուր, իգուր: 2. դատարկ տեղը:
3. անհիմն:
Սունգ – սունկ:
Սօգ, քէֆուր – հայիոյանք:
Սօգմիչ էնուլ, քէրֆուլ – հայիոյել:
Սօխ – սոխ:
Սօղը – վերջը:
Սօմօն – ցորենի ծղոտ:
Սօյ, բէդք, լավ – լավ:
Սօյա (երկու սյուների վրա դրված գերան) – հեծան:
Սօնդ(ր), սանդ(ր) – սանր:
Սօնդ(ր)ուլ, սանդ(ր)ուլ – սանրել:
Սօրվուլ – սովորել:

— Կ —

Կաա – վրա:
Կաադ, վաղէ – խոստում, երդում, պարտավորվածություն:
Կաա փէուլ – վրա բերել, վրա դնել, ծածկել:
Կաղէ, վաադ – խոստում, երդում, պարտավորվածություն:
Կազ – խաղողի վազ:
Կազնատ – 1. թելպանիր: 2. կաթնաշոռ:
Կազ օնցուլ – վազ անցնել, մեկին հանգիստ թողնել, ձեռք քաշել:
Կաթուլ – վաթել, թափել, հեղել:
Կախ – վախ:
Կախկօդ, վախկօն – վախկոտ:
Կախկօն, վախկօդ – վախկոտ:
Կախվէուլ – վախվորել:
Կախուլ – վախենալ:
Կաղ – վաղ, շուտ:
Կայ (թուրց. վար) – վար, ներքև:
Կայ թէնուլ (թուրց. վար թէնուլ) – 1. վայր դնել: 2. մի կողմ թողնել: 3. պահել:

Կայի – 1. վայրի, 2. վրայի:
Կայի դօնծ – վայրի տանծ:
Կայուլ – լացել:
Կաչուտ, մարմին, օնքս – մարմին:
Կառէցուք, վառէսնուք – կծու:
Կառէգ, աքլէրջուք – վառեկ:
Կառէսնուք, վառէցուկ – կծու:
Կառուլ, գէծուլ – մրմռալ:
Կասդազ – վաստակ:
Կասվասալի – թեթևամիտ:
Կար (արդ. վայ) – վար, ներքև:
Կարդիք – 1. վարտիք: 2. փոխան:
Կարդիքգաբիչ – գոտի:
Կար թէնուլ (արդ. վայ թէնուլ) – 1. վայր դնել: 2. մի կողմ թողնել: 3. պահել:
Կարթէվօր, Կարթիվօր (տոն) – վարդավառ:
Կարիյէթ – հարստություն, ունեցվածք:
Կար ցըքուլ – վայր գցել:
Կաքիտ, գաման, չախ, օխթ – ժամանակ:
Կէգալուլ – 1. վերցնել: 2. բարձրացնել:
Կէկվ – 1. վերև: 2. բարձր:
Կէթի, վէթու – վերևի:
Կէթու, վէթի – վերևի:
Կէր թէնչուլ – 1. վեր թռչել: 2. ցատկել: 3. ուստնել:
Կիյանուլ – 1. վերհանել: 2. արթնացնել: 3. բարձրացնել:
Կիյէուլ – 1. վեր ելնել: 2. ոտքի ելնել: 3. վեր կենալ, արթնանալ:
Կօէ – որը, որ մեկը:
Կօվ – ով:
Կօվ ա – ով է:
Կօրդաղ – որտեղ, ուր:

— Տ —

Տայվա – ներքև:
Տայվէ – վերև:
Տաղ – 1. դեղ: 2. թույն:
Տաղուլ – դեղել, թունավորել:

Տապկուշ, դաբգուշ, գաուրծիշ ընուշ – տապակել:
Տարէլկա – ափսե:
Տարմօն – դարման:
Տեժար – դժվար:
Տէնագի պիօն – դանակի բերան, շեղք:

— 8 —

Ցախ – 1.ցախ: 2.անգործածելի իրեր:
Ցախավել – ցախավել:
Ցախուդ – անտառ:
Ցած – ցածր, ներքև:
Ցան – ցանք, ցանած դաշտ:
Ցավ – ցավ:
Ցավուշ – ցավել:
Ցաքթուշ – ցայտել:
Ցեզի – ձեզ:
Ցէխք – 1.ձեղնահարկ: 2. տանիք:
Ցէմեռ – ձմեռ:
Ցէն, ծէն – ծայն:
Ցէն (ծէն) դէվուշ – ծայն տալ, կանչել:
Ցէվէրդուշ (թուրց.՝ **ցէվէրդուշ**) – բզկտել, ծվատել:
Ցէվէրդուշ (արդ.՝ **ցէվէրդուշ**) – բզկտել, ծվատել:
Ցէվցէվուշ – ձևձևել, ձևռտել:
Ցէվուշ – 1.ձևել: 2. պատառոտել: 3. ճանկրել:
Ցէրդէրուշ – ցրտել, սառել:
Ցէրքուշ – 1.ցրել: 2.շաղ տալ:
Ցեց – ցեց:
Ցի – ծի:
Ցիլադուշ – ծվատել, կտորների բաժանել:
Ցիցէնուշ – ցից խփել:
Ցխէնք, թավան, թավօն – առաստաղ:
Ցնդանի – ծառատեսակ է:

* *Տարէլկա են ասում նախկին ԽՍՀՄ հանրապետություններում բնակվող կրոնավորի համալսարանները:*

Ցփօնուշ – սպանել:
Ցույդ (թուրց.՝ **ցուրդ**) – ցուրտ:
Ցուն – ձյուն:
Ցունծաղիգ, ցունի ծաղիգ – ձնծաղիկ:
Ցուրդ (արդ.՝ **ցույդ**) – ցուրտ:
Ցուցամադ – ցուցամատ:
Ցուցէնուշ – ցույց տալ:
Ցուք, ծուգ – ծուկ:
Ցքալա – սանդուղք, աստիճան:
Ցքուշ – գցել, շարտել:
Ցող – ձող:
Ցօյին – ցորեն:
Ցօյինի կէլօխ – հասկ:
Ցօնուշ – ցանել:
Ցուգ – ցերեկ:
Ցօքմէցէնուշ – ցամաքեցնել, չորացնել:
Ցօքմուշ – լվացքը ցամքել, չորացնել:

— ՈՒ —

Ու – 1.ու, և: 2.որ:
Ուդէլիք – ուտելիք:
Ուդէցնուշ – ուտեցնել:
Ուդուշ – ուտել:
Ուդուխփի – ծառատեսակ է:
Ուզուշ – ուզել:
Ում – ում:
Ումէց – ոչ ոքի:
Ումիշ էզուշ – 1.ներդաշնակել: 2.պատշաճել: 3.սազել: 4.հարմար լինել:
Ումուդ – հույս:
Ույին – իրեն:
Ուննվուշ – ունեցվել, օգտագործվում է ծնվել իմաստով:
Ուննուշ – ունենալ, օգտագործվում է նաև ծնել, ծննդաբերել իմաստով:
Ուշանուշ – ուշանալ:

Ուշար – ուշադիր:
Ուռ, ուռուցք – ուռուցք:
Ուռչուչ – ուռչել:
Ուռուցք, ուռ – ուռուցք:
ՈՒս – ուս:
Ուսթի – որտեղից:
Ուսթռա, ածելի – ածելի, սայր:
Ուսթռաջի – սափրիչ:
Ուսի – ծնահյուս:
Ուվ ա – ուր է:
Ուրփաթ – ուրբաթ:
Ուուչ – ուրիշ, տարբեր:
Ուուչուչ – 1.որոշել: 2.ընտրել: 3.ընդեղեն մաքրել:
ՈՒուս դէվուչ – 1.ուսով հրել: 2.թեթևակի հրել:

— Փ —

Փաա – փարա, փող, դրամ:
Փաագուչ – 1.բարակել: 2.ճիհարել:
Փաա քագուչ – փող մանրել:
Փագ – կողպեք:
Փագաա – խարույկ:
Փագեն – 1. պահեստ: 2.փակ տարածք:
Փադ, փաթ – փայտ:
Փադբորի – փայտփորիկ:
Փազա – բազե:
Փազունք, պազունք – բազուկ, ճակնդեղ:
Փաթթելուչ – փաթաթվել:
Փաթթուչ – փաթաթել:
Փալ, պալ – բալ:
Փալենի, պալենի – բալենի:
Փալթախ – թլվատ:
Փալուլ – բարուր:
Փախշիշ – նվեր, ընծա:
Փախչուչ – փախչել:
Փախցենուչ – փախցնել:
Փայ էնուչ – բաժանել:

Փանդաղ – ծեռագործ:
Փարց, պարց – 1.բարծ: 2.բարծր:
Փարցենուչ, պարցենուչ – բարծել, բեռնել:
Փարցենցենուչ, պարցենցենուչ – բարծրացնել:
Փարփալ – գլխաշորի եզրերին ամրացվող փոքր, կլոր, թեթև, փայլփլուն զարդ:
Փարփալուչ – փայլփլել:
Փաց, պաց – բաց:
Փաց, պաց էնուչ – բացել:
Փացխա – օդ խաղալու նպատակով զամբյուղի նման հյուսածո պատերով, բակում կառուցված փայտաշեն խոհանոց - ճաշասենյակ (շուրջ 30 քմ), որի մեջտեղում գտնվում է կրակարանը: Ունենում է բաց պատշգամբ և ետնամասում խորդանոց:
Փափա – ուտեստի անուն է:
Փափախ – մորթե գլխարկ:
Փափուլիզ – փափուկ, փափլիկ:
Փափուլիզնուչ – փափկել:
Փեղուչ – փետել, պոկոտել:
Փեզուչ – վազել, վազելով փախչել:
Փեթուչ – փտել, նեխել:
Փելիթ – ուտեստի անուն է:
Փելուչ – փլվել:
Փելուցք – 1.փլվածք: 2.խորխորատ:
Փեխենդուչ, փեռենքթուչ – փռչտալ:
Փեղամբեր – մարգարե:
Փենբաան – ոչ վաղուց, քիչ ժամանակ առաջ, մի քիչ առաջ:
Փեյի (թուրց.՝ փերի) – փերի, առասպելական բարի ոգի:
Փեյուչ – բերել:
Փենջարա – պատուհան:
Փեշ – քղանցք:
Փեշթնալ, քօքնօց – գոգնոց:
Փեչուչ – 1.փչել: 2.փողային նվագարան նվագել:
Փեչք – ուսը թիակով:
Փեչօտ – քամոտ:
Փեչքուչ – եգիպտացորենի գլխիկը պարփակող տերևները պոկել:
Փեչքօ – վառարան:

Փեռ, պեռ – բեր:
Փեռէնքթուշ, փեխենդուշ – փռշտալ:
Փեռէվուշ – 1. բռնվել: 2. ձերբակալվել:
Փեռթուշ – 1. բրդուծ: 2. պատահ:
Փեռնէցէնուշ – բռնեցնել:
Փեռնուշ – 1. բռնել: 2. բռնկվել: 3. ձերբակալել: 4. որսալ:
Փեռուշ – փռել:
Փեսա, էնիշտա – փեսա:
Փեսխուշ – փսխել:
Փեսօքդուշ – փստրել, փշրել, մանրել:
Փերի (արդ.՝ **փէյի**) – փերի, առասպելական բարի ոգի:
Փերջու – կտրող գործիք:
Փերցուխ – լորձ, լործունք:
Փերք – բրիչ:
Փեուշ – բերել:
Փեփէլա – ականջի բլթակ:
Փեքա – պատշգամբ:
Փիլօնչ – խոտաբույսի անուն է:
Փիմփիլ – աքլորի կատար:
Փիշմօն էլլուշ – փռշմանել, ափսոսալ:
Փիր, պիր – բիր:
Փուդ – բութ, անհասկացող:
Փութ էնուշ, սէր էնուշ – նայել:
Փուն, պուն – բույն, թռչնաբույն:
Փունթ մադ – բութ մատ:
Փուշ – փուշ:
Փուչ (արդ.՝ **քօմի**) – քամի:
Փուչա – եգիպտացորենի գլխիկը պարփակող տերև:
Փուխտուլ, փուսքուլ – ծոպ:
Փուսքուլ, փուսխուլ – ծոպ:
Փուրթ, պուրթ – բուրդ:
Փուրթմօնիչ – ճախարակ:
Փուցխիչ – փոցխ:
Փուուք – փեթակ, մեղվանոց:
Փուփլիգ, փափուլիգ – փափլիկ, փափուկ:
Փօբիք, պօբիգ – բոպիկ, ոտաբոպիկ:
Փօբուշ – հասնել, տեղ հասնել:

Փօթ (սխալ կարի պատճառով արհեստականորեն առաջացած անհարթ հատված, հագուստի անհարթ, ավելորդ մաս) – փոթ:
Փօթին – 1. կոշիկ: 2. ճտքավոր կոշիկ:
Փօթնուշ – խառնշտորել, փորփրել, քչփորել:
Փօխ – փոխառություն, պարտք:
Փօխնակ, փօղնաք (կնոջ մահից հետո կամ բազմակնություն դեպքում ամուսնու երկրորդ կինը) – փոխնակ:
Փօխվուշ – բառացի՝ փոխվել, նշանակում է լողանալ և շորերը փոխել:
Փօխուշ – փոխել:
Փօղօց – ճանապարհ, որն անցնում է կիրճի, խորը ձորի հատակով կամ բլուրների ստորոտների միջով:
Փօյ (թուրց.՝ **փօր**) – փոր, որովայն:
Փօչխօդուշ, քուջուջ էնուշ – քուջուջ անել:
Փօշուշ (երեխաների չորեքթաթ քայլելը) – չոչ անել:
Փօռ, պօռ – բռռ:
Փօս – հարթ տարածք, հարթավայր, հրապարակ:
Փօր (արդ.՝ **փօյ**) – փոր, որովայն:
Փօրուշ, փօուշ – փորել:
Փօրֆուշ – բորբոսնել:
Փօցխօլուշ – 1. փոցխել: 2. ճանկռել:
Փօքշուշ – փքվել:

— ք —

Քա – կոչական ձայնարկություն, դիմելածև կանանց:
Քագուշ – կապը քանդել, արծակել:
Քաթա – գաթա:
Քաթլամա – խմորով պատրաստված ուտելիք:
Քախի, աբրիգօս՝ – ծիրան:
Քալ – գալ:
Քալուշ – քայլել:
Քախցած – քաղցած, սոված:
Քախցած աչվի – ագահ, աչքածակ:

* *Քախի* են ասում *Թուրքիայի, աբրիգօս՝ նախկին ԽՍՀՄ-ի կրոնափոխ համշենցիները:*

Քախցեանուշ – քաղցել, սովածանալ:
Քաղուշ – քաղել:
Քաղդուց – գաղտնի, թաքուն, ծածուկ:
Քամուշ – քամել:
Քայ (թուրց.՝ **քար**) – քար:
Քայնուշ – քաղհանել:
Քայսան, քառսոն, կայսան (թուրց.՝ **քարսան, կարսան**) – մեծ կաթսա:
Քայցօղեցուշ (թուրց.՝ **քարցօղեցուշ**) – քարկոծել:
Քաշիշ, քէշիշ – քահանա:
Քաշուշ – 1.քաշել: 2. ձգել: 3. դուրս բերել: 4. ներծծել: 5. տառապել: 6. աղջիկ փախցնել:
Քաշ էգուշ – քաշ գալ:
Քառսոն, քարսան, կարսան (արդ.՝ **քայսան, կայսան**) – մեծ կաթսա:
Քառ, կառ – գառ:
Քար (արդ.՝ **քայ**) – քար:
Քարդա – ազռավ:
Քարվանսարայ – իջևանատուն:
Քար ցքուշ – քար գցել, քար նետել:
Քարցօղեցուշ (արդ.՝ **քայցօղեցուշ**) – քարկոծել:
Քացախ – քացախ:
Քաուն, կաուն – գարուն:
Քափլամա – մսով, բրձով և սոխով ճաշ:
Քափշին, գափշին (խամսի ձուկ, տառեխանմանների կարգի մանր ձուկ) – անծրուկ:
Քեդ, կեդ – գետ:
Քեդալ, կեդալ – գդալ:
Քեդալբօջիկ, կեդալբօջիգ – շերեփուկ, գորտի ձագ:
Քեդափ, կեդափ – գետափ:
Քեդեվուշ, քեդնեվուշ – գտնվել:
Քեդնուշ – 1. գտնել: 2. ձեռք բերել:
Քեզ – տեսնես, արդյոք:
Քեզի – քեզ:
Քեթաման, քեթոմօն – կենդանիների համար աղ պահելու տոպրակ:
Քեիշ, կեիշ – գրիչ:

Քելխադուշ – գլխատել:
Քելօխ, կելօխ – գլուխ:
Քելօխե (կելօխե) թէթեվ – թեթևամիտ:
Քելօխնիվե (կելօխնիվե) գօրչուշ – ձայնը գլուխը զցած գոռալ:
Քեշ – 1. վատ: 2. հիվանդ:
Քեշուշ – 1. քշել: 2. արսորել:
Քեշութին – 1. վատություն: 2. հիվանդություն:
Քեմնչե – քամանչա:
Քեյեգին (թուրց.՝ **քեյեգին**) – քեռակին:
Քեյի (թուրց.՝ **քեյի**) – քեռի, մորեղբայր:
Քենաֆ – զուգարան:
Քենչղուշ – ուտելիքը բրդել:
Քեսվուշ – քսվել, դիպչել:
Քեսուշ – քսել:
Քերեմդ – գերանդի:
Քերեչեթ – հարսանիքի ժամանակ հարսին տնից դուրս բերելիս, դռների մոտ նրա քեռուն կամ փոխարինողին փեսայի հոր կամ նրա ներկայացուցչի կողմից ընծայվող զումար:
Քերի (արդ.՝ **քեյի**) – քեռի, մորեղբայր:
Քերեգին (արդ.՝ **քեյեգին**) – քեռակին:
Քերձուշ – քերծել:
Քերնիք – քրտինք:
Քերնուշ – քրտնել:
Քերուշ, քուշ (արդ.՝ **քեյուշ**) – քերել:
Քերֆուշ, սօզմիշ էնուշ – հայիոյել:
Քուշ – գրել:
Քեքերուշ (արդ.՝ **քեքեյուշ**) – քրքրել:
Քեֆուր, սօզ – հայիոյանք:
Քըզկօլլի – հարսի կողմի ազգականներ:
Քիդանուշ – 1. գիտենալ: 2. հասկանալ: 3. լսել: 4. տեղեկացվել:
Քիթաբ – գիրք:
Քիլուշ – գլորել:
Քիլիսե, քիլիսա – եկեղեցի:
Քիյաս – հունիս:
Քիյուշ – քորել:
Քին – գին:
Քինթ, քիթ – քիթ:

Քինձ, համէմ, հոմիմ – գինձ, համեմ:
Քիշեր – գիշեր:
Քիշմիշ, խափօղի չի – չամիչ:
Քիչ – քիչ:
Քիր – գիր:
Քյալ – ճաղատ:
Քյուլ, մոխիր – մոխիր:
Քյուփե – ականջօղ:
Քյօզ – այրվող, մլմլացող ածուխ:
Քյօմուր, գօրձէլի – ածուխ:
Քյօք, քօք, դօմար – արմատ:
Քուդ – գլխարկ:
Քութէշ – կարմրուկ:
Քում, կում – գոմ:
Քույ (թուրց.՝ **քուր**) – քույր:
Քուն էլլուշ – քնել, ննջել:
Քուն մեդնուշ – քուն մտնել:
Քուշնիկ, քիշնիկ – ծիածան:
Քուպ – կարաս:
Քուջուջ ընուշ, փօշխօղուշ – քուջուջ անել:
Քուր (արդ.՝ **քույ**) – քույր:
Քուրբա – գուլպա:
Քուքու, կուկու – կկու:
Քօլթէվուշ – 1. բոցավառել: 2. կրակը ուժեղացնել: 3. շիկացնել:
Քօլուշ, կօլուշ – վառել:
Քօմի (թուրց.՝ **փուշ**), **գալաշ** – քամի:
Քօմուշ – քամել:
Քօնի – քանի:
Քօշա, բուջախ – անկյուն:
Քօչ, քյօչ (մի վայրից մյուսը տեղափոխելու համար բարձրած գույքը և տեղափոխությունը) – քոչ:
Քօվուշ – 1. գովել հանգուցյալին: 2. ողբալ: 3. մահախոսական ասել: 4. բարձրածայն սգալ:
Քօրդ, կօրտ – գորտ:
Քօրթնուք – գորտնուկ:
Քօրծուշ – շյուղերով գործել:

Քօրկ, գօրք, կօրք – կողասենյակ, նախասրահ, գոգավորություն, գոգ, գոգնոցի ներքևի երկու ծայրերը բարձրացնելիս առաջացող գոգավորություն:
Քօռչինջուխ, հօհօլ, հօղօլ – բու:
Քօք, քյօք, դօմար – արմատ:
Քօք դէվուշ – արմատակալել:
Քօքնօց – 1. գոգնոց: 2. կիսաշրջազգեստ:

— 0 —

Օբօլ էնուշ – 1. թողնել: 2. դուրս գցել: 3. պահ տալ:
Օգայի – խորթ:
Օդա, հօդա – սենյակ:
Օլէուշ – ոլորել:
Օլիյեսնա – ուրեմն:
Օխթ, վաքիտ, գաման, չախ – ժամանակ:
Օխտավրի, օրտագյուս – հոկտեմբեր:
Օղ – բլուր:
Օղանք, օվանք, ալաֆ – ընտանի խոշոր եղջերավոր կենդանիների համար պատրաստվող կերեր:
Օղուն – ջրաղացի այն արկղը, որից ցորենը թափվում է աղորիքի մեջ:
Օղօգին – հորեղբոր կին:
Օմառ, ամառ – ամառ:
Օմբուօղ – ամպրոպ:
Օմէնդաք – ամանեղեն, սպասք:
Օմիս – ամիս:
Օմնուշ, ամնուշ, – 1. ծածկել: 2. վրան քաշել: 3. որևէ նյութով կամ լաքով պատել՝ լաքապատել:
Օմչկօն, ամչկան – ամաչկոտ:
Օմույ (թուրց.՝ **օմուռ, օմուր**) – 1. ամուր: 2. ժլատ: 3. թունդ:
Օմուր, օմուռ (արդ.՝ **օմույ**) – 1. ամուր: 2. ժլատ: 3. թունդ:
Օմուրցուշ – ամրացնել:
Օմօն – աման:
Օյ (թուրց.՝ **օր**) – օր:
Օնգլօմիշ էլլուշ – հասկանալ:
Օնգուչ – ականջ:

Օնգուչ թէնուչ – 1.ականջ դնել: 2.լսել:
Օնդէր, անդէր – անտեր:
Օնլութ – եղնիկ:
Օնջուրա – մանր, սև ծաղիկներով խոտաբույս, որը փռում են տավարի տակ:
Օնցած, անցած – 1.անցած: 2.անցյալ: 3.նախորդ:
Օնուն – անուն:
Օնուչ – անուշ, համեղ:
Օնքս, մարմին, վաչուտ – մարմին:
Օշլօդուչ – ոջլոտել:
Օչ – ոչ:
Օչիլ – ոջիլ:
Օչխայ (թուրց.՝ **օչխար**) – ոչխար:
Օչխար (արդ.՝ **օչխայ**) – ոչխար:
Օջախ, բուրազ – օջախ, կրակարան:
Օռմէթուդ էլլուչ – ուշաթափվել:
Օսնուչ – անցնել:
Օվանք, օղանք, ալաֆ – ընտանի խոշոր եղջերավոր կենդանիների համար պատրաստվող կերեր:
Օվուչ – օրորել, ճոճել:
Օտք – ոտք:
Օտքաման, օտքօմօն – ոտնաման, կոշիկ:
Օտքէնցի – հետիոտն, ոտքով:
Օտքի թաթ – ոտքի թաթ:
Օտքի թաթի դագ – ներբան:
Օտքի կօկօչ – ոտքի կօճ:
Օտքի մաղ – ոտքի մատ:
Օր (արդ.՝ **օյ**) – օր:
Օրդուչ – որոտալ:
Օրթախդէն տաղօղ – կիսրար աշխատող:
Օրթի – որդի:
Օրմաղուչ – հենց այնպես ժամանակ անցկացնել:
Օրչուչ – որոճալ:
Օրտագյուս, օխտավրի – հոկտեմբեր:
Օուք – ոչ ոք:
Օօք – ինչ որ մեկը:
Օօցք – օրորոց:

Ֆիլան – այսինչ, այնինչ:
Ֆուռթունա – փոթորիկ, փոթորկախառն անձրև:
Ֆուքարա, ֆուքաա – աղքատ:
Ֆօքերաֆ – լուսանկար:

Տարվա եղանակներ

Քաուն, կաուն – գարուն:
Ամառ, օմառ – ամառ:
Աշուն – աշուն:
Ցէմեռ – ձմեռ:

Ամսանուններ

Նօր դարի (արդ.՝ **նօյ դայի**) – հունվար:
Գյուջուխ – փետրվար:
Մարդ – մարտ:
Աբրիլ – ապրիլ:
Մայիս – մայիս:
Քիյաս (քիյազ) – հունիս:
Չուրուխ (փաթէլ ամիս) – հուլիս:
Աղօստօս (օղօստօզ) – օգոստոս:
Իստավրի, սիվտէգյուս (սիֆտէգյուզ) – սեպտեմբեր:
Օխտավրի, օրտագյուս (օրտագյուզ) – հոկտեմբեր:
Ուզունայի, ախլգյուս (աղէրգյուզ) – նոյեմբեր:
Գարաքիշ, գաաքէշ – դեկտեմբեր:

Շաբաթվա օրեր

երգուշափթի – երկուշաբթի:
հյեքշափթի, յիեքշափթի – երեքշաբթի:
Չօուքշափթի, չօօքշափթի – չորեքշաբթի:
Հինգշափթի – հինգշաբթի:
Ուփաթ – ուրբաթ:
Շափաթ – շաբաթ:
Գիագի (արդ.՝ գիյագի) – կիրակի:

* Սեկ շաբաթը (7 օրը) անվանում են **ավթա**:

Թվեր

Սեգ – մեկ
երգուս, էգուս – երկու
հյեք, յիեք – երեք
Չօրս (արդ.՝ չօյս) – չորս
Հինգ, հինք – հինգ
Վեց – վեց
Օխտ, օխտը – յոթ
Ութ – ութ
Ինը, ինէ – ինը
Դասը, դասէ – տասը
Դասնումէգ – տասնմեկ
Դասնուերգուս, դասվերգուս – տասներկու
Դասնույեք, դասվիյեք – տասներեք
Դասնուչօրս (արդ.՝ դասնուչօյս) – տասնչորս
Դասնուհինգ – տասնհինգ
Դասնուվեց – տասնվեց
Դասնուօխտը, դասնեվօխթ – տասնյոթ
Դասնըութ, դասնեվութ – տասնութ
Դասնուիներ, դասնեվիներ – տասնինը
Սօն, սան – քսան
Էռսուն – երեսուն

Քառսուն – քառասուն
Խուն, հիսուն – հիսուն
Վացուն – վաթսուն
Օխտանասուն, օխտենասուն, օխտնասուն, օխտսուն – յոթանասուն
Ութանասուն, ութենասուն, ութնասուն, ութցուն – ութսուն
Իննենասուն, իննասուն, իննեսուն – իննսուն
Հաուր, հարու – հարյուր
երգու, էգու հաուր – երկու հարյուր
հյեք, յիեք հաուր – երեք հարյուր
Չօրս (արդ.՝ չօյս) հաուր – չորս հարյուր
Հինգ հաուր – հինգ հարյուր
Վեց հաուր – վեց հարյուր
Օխտն հաուր – յոթ հարյուր
Ութ հաուր – ութ հարյուր
Ինն հաուր – ինն հարյուր
Հագար – հազար

Ի տարրերություն Աջարիայից 1944թ. Միջին Ասիա արտոլվածների, Խոփայի գավառի կրոնափոխ համընտհայերի միայն տարեցներն են հիշում 70, 80, 90 թվականների հայերեն անվանումները, իսկ միջին սերունդն օգտագործում է դրանց թուրքերեն համարժեքները՝ յեթմիշ, սեքտն, դօրսան:

Գույների անուններ

Գավերնգի – սրճագույն, դարչնագույն:
Գարմի, գարմիր – կարմիր:
Թուխ – սև:
Հավարնգի – բաց կապույտ, երկնագույն:
Մավի – կապույտ:
Յէշիլ – կանաչ:
Ջերմակ, ջերմագ – ճերմակ, սպիտակ:
Սարի (արդ.՝ սայի) – դեղին:
Սեվ – կապտամանուշակագույն:

Ծառերի անուններ

Աժրի – հաճարենի:
Արջի – կաղամախի:
Բեցխի – լաստենի:
Դօսխի – տոսախ:
Ձէյթունի ծառ – ծիթենի:
Թաղի – թեղի, կնձենի:
Թեզենի – թզենի:
Թեթենի – թթենի:
Թ(ե)խթկի – թխկենի:
Լօրի (արդ.՝ **լօյի**) – լորենի:
Խօզգաղնի – կաղնի:
Խենձօրնի, խենձօրի ծառ – խնձորենի:
Կավախի – բարդի:
Հօղփաղենի – ծառատեսակի անուն է:
Ձեվաղնի – ծվաղենի, դափնեկեռասենի:
Մաշմէքի ծառ – շազանակենի:
Սօնի – ծառատեսակի անուն է:
Չամի, չօմի – սոճի, շամի:
Տախցի – դեղձենի:
Տօմունի – սալորենի:
Ցենդանի – ծառատեսակի անուն է:
Ուղուխփի – ծառատեսակի անուն է:

Ազգակցական կապեր ցույց տվող բառեր

Ախպար (արդ.՝ **ախպայ**) – եղբայր:
Բաբ – պապ:
Բալդիս – 1.քենի: 2. ամուսնու քույր:
Բաջանաղ – քենակալ:
Գայնաթա – աներ:
Գայնաթա բաբ – սկեսրայր:
Գայնանա, անալուղ – զոքանջ:
Գայնի – աներորդի, աներծագ:
Դաղ – հայր:

Դաքր – տագր:
Դօստ – խնամի:
Եզէն – գարմիկ:
Էնիշտա, փէսա – փեսա:
Թօռ – թռռ:
Թօռի դղա – ծոռ:
Հարս (արդ.՝ **հայս**) – 1.հարս: 2. ազգականի կին:
Հօպար (արդ.՝ **հօպայ**) – հորեղբայր:
Հօպօր (արդ.՝ **հօպօյ**) **ախչիգ, դղա** – հորեղբոր աղջիկ, տղա:
Հօքուր (արդ.՝ **հօքույ**), **խալա** – հորաքույր:
Հօքուրին (արդ.՝ **հօքույին**) **ախչիգ, դղա** – հորաքրոջ աղջիկ, տղա:
Մար (արդ.՝ **մայ**) – մայր:
Մարթ (արդ.՝ **մայթ**) – ամուսին:
Մօմ, մօմի – տատ:
Մօքուր (արդ.՝ **մօքույ**) – մորաքույր:
Մօքուրին (արդ.՝ **մօքույին**) **ախչիգ, դղա** – մորաքրոջ աղջիկ, տղա:
Նէր, նիր – տագրակին, տեզերկին:
Փէսա, էնիշտա – փեսա:
Քերու (արդ.՝ **քէյու**) **ախչիգ, դղա** – քեռու աղջիկ, տղա:
Քէրի (արդ.՝ **քէյի**) – քեռի:
Քէրեգին (արդ.՝ **քէյեգին**) – քեռակին:
Քուր (արդ.՝ **քույ**) – քույր:
Օղօգին – հորեղբոր կին:

Մարմնին առնչվող բառեր

Ազոա, արգա, առգա (արդ.՝ **այգա**) – ատամ:
Աղունք, աունք – եղունգ:
Աչգերուկ – գարուկ, տիկնակլոնձ:
Աչվի – աչք:
Արդէցուք – արտասուք, արցունք:

* Բոլոր 32 ստամներն ունեն իրենց անունները, սեղանատամը կոչվում է **հացի ազոա, կա շունի ազոա և այլն:**

Արմուգ – արմունկ:
Ափ – ափ:
Բաջաղ, բաջախա – ազդր:
Բախ – բեղ:
Բեդուք – պտուկ:
Բերբուք, բերվուք – շրթունք:
Բիբիլ – տղա երեխայի պուպուկ:
Բուդբուդ – պեպեն:
Բողազ – կոկորդ:
Բօչքելօխ, լերթի մէջքեղաղի օսկօրնէր – ողնաշար:
Բօրդ (արդ.՝ բօյդ), բօռդիկ, պօռդ – 1.պորտ: 2.պորտալար:
Գիյօնգ, գեունք – կրունկ:
Դուք – մարմնի վրա ածած մսի փոքր գունդ:
Չօռզազ – ծոծրակ:
Էես (արդ.՝ էյես) – երես:
Էնքվի – ունք:
Թաախ – թարախ:
Թաթ – դաստակ:
Թերթվուց – թարթիչ:
Թէվ – 1.թև: 2.ծեռք:
Թէվի կօկօչ – դաստակի կոճ:
Թուխ ջիգար – լյարդ:
Թուք – թուք:
Իլիգօմ – երիկամ:
Լաղու – փայծաղ:
Լերթ – մեջքն ամբողջությամբ:
Լերթի մէջքեղաղի օսկօրնէր, բօչքելօխ – ողնաշար:
Լիզու – լեզու:
Խաթ – կնճիռ:
Խիմչ – խլիմք:
Խուս – ուղեղ:
Խօց – վերք:
Կօկօրդ – կոկորդի խնծորակ:
Հացի ագռա – սեղանատամ:

** Չեռք բառը նրանց անծանոթ է, թէվ են ասում և՛ թկին, և՛ ծեռքին: Չեռքի ներսի կողմին ասում են ափ, որը հաճախ փոխարինում է ծեռք բառին:

Չիծ – կուրծք:
Չունգ – ծունկ:
Չունգի լիսէր – ծնկոսկր:
Ճիթ, ջիդ – վիզ:
Մազ – մազ:
Մատ (դ) – մատ:
Մարմին, վաչուտ, օնքս – մարմին:
Մէչք – գոտկատեղ:
Մէչքեղաղի մադ – միջնամատ:
Յումրուղ(խ) – բռունցք:
Նէշօն, նէշան – խալ:
Նշօնի մադ – մատնեմատ:
Շեռ – մեզ:
Շերօմօն, շերօման – միգապարկ:
Շուդ – պզուկ, բշտիկ:
Շունի ագռա – ժանիք:
Չէնգյա – ծնոտ:
Պիօն (արդ.՝ պիյօն), պիան – բերան:
Ջագաթ – ճակատ:
Ջգուք – ճկույթ:
Ջերմագ ջիգար – թոք:
Ջիջու – աղիք:
Մաքալ – մորուք:
Սիրդ (արդ.՝ սիյդ) – սիրտ:
Սերդ (արդ.՝ սէյդ) – կրծքավանդակ:
Սերդի (արդ.՝ սէյդի) մազ – կրծքավանդակի մազ:
Վաչուտ, մարմին, օնքս – մարմին:
Ցուցամադ – ցուցամատ:
Ուռուցք, ուռ – ուռուցք:
Ոխ – ուս:
Փէփէլա – ականջի բլթակ:
Փէչք – ուսը թիակով:
Փուդ, փունթ – բութ:
Փօր (արդ.՝ փօյ) – փոր:
Քէլօխ, կէլօխ – գլուխ:
Քինթ, քիթ – քիթ:
Քօրթնուք – գորտնուկ:

Օնգուչ – ականջ:
Օնքս, վաչուտ, մարմին – մարմին:
Օտք – ոտք:
Օտքի թաթ – ոտքի թաթ:
Օտքի կօկօչ – ոտքի կոճ:
Օտքի մաղ – ոտքի մատ:
Օտքի թաթի դագ – ոտքի տակ, ներբան:

ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆ – ԽՈՓԱՅԻ ԽՈՍՎԱԾՔ՝

— Ա —

Ագահ, աչքածակ – **քախցած աչվի**:
Ագռավ – **քարղա**:
Ագատ արծակել, բաց թողնել – **յէտ թողնուլ**:
Ագատություն – **ազադութին**:
Ազգական – **խէսիմ, խըսիմ**:
Ազդր – **բաջախա, բաջաղ**:
Աթար – **աթար, աղփ**:
Աթարի, թրիքի հավաքման վայր – **աղփօնօց**:
Ածել (ծու) – **ածուլ, հածուլ**:
Ածելի – **ածելի, ուստռա**:
Աթռ – **աթռ**:
Աթռ փոքր – **գօչ**:
Ալյուր – **ալուր**:
Ածուխ – **գործէլի, քյօմուր**:
Ականատես լինել, տեսնել – **դէսնուլ**:
Ականջ – **օնգուչ**:
Ականջ դնել, լսել – **օնգուչ թէնուլ**:
Ականջի բլթակ – **փէփէլա**:
Ականջօղ – **քյուփէ**:
Ակիշ – **ակիշ, ագիշ, խէնուրսէպիշ**:
Ակնոց – **գյօզլուխ**:
Ակոս – **ագօս**:
Ահա – **ահա**:
Աղալ – **աղուլ**:
Աղանդեր, ճաշ–մաշ, ուտելու բան–ման – **թացան, թացօն**:
Աղ պահելու տոպրակ (կենդանիների համար) – **քէթօմօն**:
Աղաչել – **աղչուլ**:
Աղբ – **ավէլուսք, գիբիլ**:

Բառարանից օգտվելը դյուրացնելու համար վերջում առանձին նշված են տարվա եղանակների, ամիսների, շաբաթվա օրերի, թվերի, գույների, ծառերի անունները, ինչպես նաև ազգակցական կապեր ցույց տվող և մարմնին առնչվող բառերը:

Աղբյուր – **ախաօր** (արդ.՝ **ախաօյ**):
Աղիք – **ջիջու**:
Աղջիկ – **ախչիգ, ախչիկ**:
Աղվես – **թիլքի**:
Աղտոտ, կեղտոտ – **աղդոդ, աղդօթ**:
Աղքատ – **չուննեվօր, ֆուքարա, ֆուքաա**:
Աղքատություն – **աղկադութին, աղկադուտուն**:
Աման, ափսե – **օմօն, տարելկա՝**:
Ամանեղեն, սպասք – **օմենդաք**:
Ամաչել – **ամչուշ, օմչուշ**:
Ամաչկոտ – **ամչկան, օմչկօն**:
Ամեն, ամենքը, ամբողջը – **էմմեն, էմմենը**:
Ամեն անգամ – **էմէժինէ**:
Ամեն ժամանակ, մշտապես – **իժէէ**:
Ամեն ոք, յուրաքանչյուր ոք – **էմմեն օքի**:
Ամիս – **օմիս**:
Ամպ – **մէրալ, բուլութ**:
Ամպրոպ – **օմբուօդ**:
Ամրացնել – **օմուրցուշ**:
Ամուսին – **մարթ** (արդ.՝ **մայթ**):
Ամուսնանալ – **գարքեվուշ, առնուշ**:
Ամուսնացնել – **գարքուշ**:
Ամուր – **օմուր** (արդ.՝ **օմուլ**):
Այդ դեպքում, այդպես է, ուրեմն – **օյլէիտ**:
Այդպես – **ադմօն**:
Այդպիսի, հիրավի – **էնցքու**:
Այդտեղ – **հօդա**:
Այդքան հատ – **աղադիգ**:
Այժմ – **հիմի, լօգօր**:
Այլևս, էլ – **դահա**:
Այլևս, էլ – **դահա**:
Այժ – **աձ**:
Այժի, ոչխարի կղկղանք՝ կտիտ – **գիդիդօր**:
Այն կողմ անցնել – **նէնօնցնուշ, նէնօսնուշ**:

* *Տարելկա են ասում նախկին ԽՍՀՄ հանրապետություններում բնակվող կրոնափոխ համալսարանները:*

Այն կողմ նետել – **նէնցքուշ**:
Այնտեղացիներ, այն կողմի մարդիկ – **էնթիդցիք**:
Այնչափ, այնքան – **անչաք**:
Այնժամ, արդյունքում – **էնջամ**:
Այնուհետև – **անդի հեդէվ**:
Այն ուղղությամբ – **անթուս, ինթուս, ինտուս**:
Այս ուղղությամբ – **ասթուգ, իսթուգ, իսթուս, իստուս**:
Այո – **հա**:
Այս – **աս, հաս**:
Այս կողմ – **նաս**:
Այսինչ, այնինչ – **ֆիլան**:
Այս կողմ նետել – **նասցքուշ**:
Այսպես, այսպիսի – **իսպօն**:
Այսօր – **հասօր, ասօր**:
Այրի, որբևայրի – **հօփէրվայի**:
Անալի – **անլի**:
Անասնակերեր ընտանի խոշոր եղջերավոր կենդանիների համար – **ալաֆ, օղանք, օվանք**:
Անասուն – **հայվօն**:
Անարժան, անպետք (անծ) – **բէթեմալ**:
Անբան, դատարկապորտ – **ավաա**:
Անգամ – **դօնում**:
Անել – **էնուշ**:
Աներ – **գայնաթա**:
Աներես, անամոթ, չամաչող – **չամչէլ էես** (արդ.՝ **էյես**):
Աներոտրդի, աներծագ – **գայնի**:
Անեփ, հում – **հում**:
Անժամանակ, վաղաժամ – **անօդթ**:
Անիծ, ոջիլի ձվիկ – **անինծ**:
Անիծել, նզովել – **անիծուշ**:
Անլրջանալ – **թէթվնուշ**:
Անխելք – **անխէրք**:
Անկողին – **բարգէլդաղ**:
Անկողինները դարսելու տեղ – **մուսէնդէր**:
Անկյուն – **քօշա, բուջախ**:
Անհանգստացնել, կպչել – **նէրէկչուշ**:
Անհանգստություն, տառապանք, հուզմունք – **մէրաղ**:

Անհասկացող, բութ – **փուղ:**
Անհետ կորչել, վերանալ – **նաբաղի էլլուլ:**
Անձ – **շունչ, հօքի, մարթ:**
Անձրուկ (տառեխամանների կարգին պատկանող մանր ձուկ՝
խամսի) – **քափչին, գափչին:**
Անձրև – **չախ, ճախ:**
Անձրևոտ – **չախօտ:**
Անձրև՝ փոթորկախառն – **ֆուռթունա:**
Անձրևորդ – **ջիջու:**
Անպոչ, կտրած պոչ – **գունթաղ բօչ:**
Անջատել, բաժանել – **առէթմիչ էնուլ, բաժբուլ:**
Անտառ – **ցախուղ:**
Անտեր – **անդեր, օնդեր:**
Անցած, անցյալ, նախորդ – **անցած, օնցած:**
Անցք, ծակ – **ծագ:**
Անցյալ տարի – **հէվու, հէրու (արդ.՝ հէյու):**
Անցնել, վերջանալ, ավարտվել – **օնցողուլ:**
Անուն – **օնուն:**
Անուշ, համեղ – **օնուլ:**
Աշակերտ – **գարթօղ:**
Աշխատասեր – **տաղան:**
Աշխատել – **տաղուլ:**
Աշխարհ – **աշխար (արդ.՝ աշխայ):**
Աշուն – **աշուն:**
Աչք – **աչվի:**
Աչքալուսանք – **մուժդա:**
Աչքածակ, ազահ – **քախցած աչվի:**
Ապտակ – **գածգուն:**
Ապրել – **աբրուլ:**
Ապրիլ (ամիս) – **աբրիլ:**
Ապուպապ, նախնի – **ավալուբաբ:**
Ապուշ – **լապուլ:**
Ապուր – **աբուր, չօրբա:**
Աջ – **աչ:**
Առանձին – **արի, այրի:**
Առանց (բացակայությունն այն առարկայի կամ երևույթի, որը
նշվում է այս բառից հետո) – **առօնծ:**

Առաջ, նախկինում – **առաչ:**
Առաստաղ – **թավան, թավօն, ցխենք:**
Առավոտ – **աբվա:**
Առավոտյան – **հաբվօն:**
Առարկա – **պօն, իք:**
Առնել (վերցնել) – **առուլ:**
Առողջանալ – **չիդգուլ, բեդքընուլ:**
Առջև – **առչէվ, առչէթ:**
Առու – **հարք, հարգ, արխ:**
Առևանգել, փախցնել – **փախցէնուլ:**
Առևտրի կենտրոն, շուկա – **ծիյափ:**
Ասել – **ասուլ:**
Ասեղ – **ասաղ:**
Աստղ – **աստախք:**
Աստված – **Ասպած:**
Ավարտել, լրանալ – **թօմնուլ:**
Ավարտվել, անցնել, վերջանալ – **անցողուլ, օնցողուլ:**
Ավել – **ավէլ:**
1. Ավելցուկ: 2. աղբ – **ավէլուսք:**
Ավելի, ավելորդ – **ավէլլի:**
Ավերել, քանդել, ջնջել – **ավիրուլ, ավիուլ:**
Ավլել – **ավէլուլ:**
Ավտոմեքենա – **մաքինա:**
Ատամ – **ագռա, արգա, առգա (արդ.՝ այգա):**
Ատամներն իրար խփելով զնգզնգացնել – **զէնգզէնգուլ:**
Ատրճանակ, ռևուվեր – **լիվէռ:**
Ատրճանակով կրակել – **լիվէռ ցբուլ:**
Արաբա (սայլ) – **արաբա:**
Արագ-արագ – **մօնի-մօնի:**
Արածել – **արծուլ:**
Արդի, ներկայիս, հիմիկվա – **հիմիգու:**
Արեգակ – **աաքագ:**
Արթնանալ, վեր կենալ – **վիյ էլուլ:**
Արթնացնել, վեր հանել – **վիյանուլ:**
Արժեք, գին – **քին:**
Արժիվ – **գարթալ:**
Արձակել, կապը քանդել – **քագուլ:**

Արկղ – յաշաղ, յաշիղ:
Արմատ – քյօք, քօք, դօմար:
Արմատակալել – քօք դէվուշ:
Արմունկ – արմուգ:
Արյուն – աղուն:
Արգավանդ արոտավայր – աղուղ:
Արոր – գօքար, չէֆթ, խօղիերգիչ, հօղիերգիչ:
Արջ – արչ (արդ.՝ այչ):
Արջառ, եգ – աչառ:
Արտ, դաշտ – արդ (արդ.՝ այդ):
Արտանունք, թարթիչ – թերթվուց, թերթբուցք:
Արտասուք, արցունք – արդէցուք:
Արու գավակ – մօնչ, դաղա:
Արևածաղիկ – այչիչաղ:
Արևածաղկի ձեթ – այչիչաղի յաղ:
Արև եղանակին բարակ անծրև – դյափօն հարսնիք (արդ.՝ հայսնիք):
Ափ (ծեռքի) – ափ:
Ափսե, աման – օմօն:
Ափսեմ շրջված դնել – օմօնէ թարս թէնուշ:
Ափսոսալ, փոշմանել – փիշմօն էլլուշ:
Աքաղաղ – աքլար (արդ.՝ աքլայ):
Աքաղաղի կատար – փիմփիլ:
Աքսորել, քշել – քէշուշ:

— Բ —

Բազե – փազա:
Բազուկ, ճակնդեղ – պազունք:
Բաժանել, անջատել, զատել – առէթմիշ էնուշ, բաժքուշ:
Բալ – պալ, փալ:
Բալենի – պալենի, փալենի:
Բակ – դօնէ առչէվ, դօնի փօս, թեռօնէ առչէվ:
Բահ – թի:
Բահով կտրած բուսախառն հողի շերտ – չիմ:
Բաղնիք – հէմօմ:
Բաղեղ, պատատուկ – սիյօղ:

1.Բաճկոն՝ կոշտ կտորից: 2.Կապա, պարեգոտ – աբա, կարա:
Բամբասանք – մուգիթուն:
Բամբասել – մուգիթուն ընուշ:
Բայց – ամա:
Բան – պօն, իք:
Բանալի – պօնլիք, պօլնիք:
Բանականություն, խելք – խերք:
Բանջարանոց – ածուք, էրզվա, էրզվար:
Բաշլուղ, գլխանոց – բաշլուղ:
Բավական, հերիք – հէյիք:
Բարակ և սուր փայտ, ոստ – խօչ:
Բարակել, նիհարել – փաագնուշ:
Բարդի – կավախ:
Բարկացկոտ, դյուրագրգիռ – թիթիգ:
Բարձ – փարց, պարց, յաստուղ:
Բարձել, բեռնել – պարցէնուշ, փարցէնուշ:
Բարձր – պարցր:
Բարձրակրունկ, սրաքիթ կոշիկ – գնօչ փօթին:
Բարձրանալ, ելնել – էլուշ:
Բարձրահասակ – էրզէն, բօյօվ:
Բարձրածայն բողոքել, բղավել – բօլօքուշ:
Բարձրացնել – պարցէնցէնուշ, փարցէնցէնուշ:
Բարուր – փալուլ:
Բարև – սէլամ:
Բաց – պաց, փաց:
Բացել, բաց անել – պաց, փաց էնուշ:
Բաց թողնել, ազատ արձակել – յէտ թօղնուշ:
Բաց կապույտ, երկնագույն – հավարնգի:
Բեղ – բախ:
Բեռ – պեռ:
Բեռնել, բարձել – պարցէնուշ, փարցէնուշ:
Բերան – պիան, պիօն (արդ.՝ պիյօն):
Բերել – պէուշ:
Բզկտել, ծվատել – ցէվերդուշ (արդ.՝ ցէվէյդուշ):
Բիր, ձեռնափայտ – պիր (արդ.՝ պիր):
Բլրակի լանջ, զառիթափություն ունեցող տեղանք – բայիր, բօյիր:

Բղավել, բողոքել – **բօլօքուլ**:
 Բլուր – **օղ**:
 Բլոճ – **բլօճ**:
 Բշտիկ, պզուկ – **շուկ**:
 Բոբիկ, ոտաբոբիկ – **պօբիկ, փօբիք**:
 Բոլորը, ամբողջը – **պօլօրէ** (արդ.՝ **պօլօյէ**), **էմմէնը**:
 Բոլորվել – **պօլօր կալ**:
 Բողբոջ – **աչ, բէբուք**:
 Բոռ – **պօռ**:
 Բովել, խարկել – **խարգուլ**:
 Բորբոսնել, մզլոտել – **փօրֆուլ**:
 Բոցավառել, կրակը ուժեղացնել – **բօլթեվուլ**:
 Բռնացնել, բռնել տալ – **փեռնէցեցուլ**:
 1.Բռնել: 2. բռնկվել – **փեռնուլ**:
 1.Բռնվել: 2. ձերբակալվել – **փեռեվուլ**:
 Բռնկվել, միանգամից այրվել – **լուցուլ**:
 Բռունցք – **յումրուղ, յումրուխ**:
 Բրդել (ուտելիքը) – **քենչղուլ**:
 Բրդի փունջ – **թափուլ**:
 Բրդուճ, պատառ, մաս – **փեռթուլ**:
 Բրինձ – **փեխնձ, պէյինձ**:
 Բու – **քօռջինջուխ, հօհօլ, հօղօլ**:
 Բութ, անհասկացող – **փուղ, փունթ**:
 Բութ (ոչ սուր) – **գունթաղ**:
 Բութ մատ – **փունթ մաղ**:
 Բուռ – **փուռ, պուռ, ջօնգ**:
 Բուրդ – **փուրթ, պուրթ**:

— Գ —

Գագաթ, կատար – **ձայ, թափա**:
 Գագար – **հավուլ**:
 Գաթա – **քաթա**:
 Գալ – **էգուլ**:
 Գաղտնի, գաղտնաբար – **քաղղուց**:
 Գայլ – **կյալ, քալ**:
 Գանգուր – **գիվէրժուղ**:

Գառ – **քառ, կար**:
 Գավաթ – **թաս** (մետաղյա), **խօղաթաս** (կավե):
 Գարի – **արփա**:
 Գարուկ, տիկնակլոնձ – **աչգերուկ**:
 Գարուն – **քաուն, կաուն**:
 Գդալ – **քեդալ, կեդալ**:
 Գետ – **քեդ, կեդ**:
 Գետափ – **քեդափ, կեդափ**:
 Գետնախնձոր – **հումուղիչ**:
 Գեղեցիկ – **էրօնդ, էրանդ**:
 Գեղեցկանալ, արտակարգ գեղեցկանալ – **ծիբաղղուլ**:
 Գեղեցկացնել – **էրօնդցնուլ, էրանդցնուլ**:
 Գետին – **խօղ**:
 Գեր – **կիր**:
 Գերան – **գերան, մերթաղ**:
 Գերանդի – **քերեմդ**:
 Գերեզման – **մազալուխ**:
 Գերեզմանատուն – **մէզարլիք**, ասվում է նաև **մազալուխնի** (բառացի՝ գերեզմաններ):
 Գերի – **յէսիր**:
 Գիժ – **խէլառ, շաշ**:
 Գիծ – **խազ, չիզգի**:
 Գին, արժեք – **քին**:
 Գինի – **շարաք, ղինօ**:
 Գինձ, համեմ – **քինձ, համէմ, հօմիմ**:
 Գիշեր – **քիշեր**:
 Գիտենալ – **քիղանուլ**:
 Գիր – **քիր**:
 Գիրկն առնել – **օնթուլ**:
 Գիրք – **քիթաք**:
 Գլխակապ – **սայի**:
 Գլխանոց, բաշլուղ – **բաշլուղ**:
 Գլխաշոր – **լաչակ**:
 Գլխարկ – **քուղ**:
 Գլխատել – **քէլխաղուլ**:
 Գլորել – **քիլուլ**:
 Գլորվել, թավալվել – **թալվէղուլ**:

Գլուխ – **քէլօխ, կէլօխ:**
Գյուղ – **կյաղ:**
Գյուղացի – **կյաղացի:**
Գնալ – **երթուլ:**
Գնդակ – **թօփ:**
Գնդիկ – **գունդուկիգ:**
Գնել – **առուլ:**
Գոգնոց – **քօքնօց, փէշտնմալ:**
Գոլ – **մօլա:**
Գոլ անձրև – **մօլա չախ:**
Գող – **կօղ:**
Գողանալ – **կօղնուլ:**
Գողութիւն – **կօղութին:**
Գոմ – **կում:**
Գոմեշ – **ջօմիշ:**
Գոմշածագ – **ջօմիշի հօրթ:**
Գոռալ – **գօռչուլ:**
Գոռգոռալ – **գօղգօղուլ:**
Գոտի – **կօղի, գաբիչ, վարդիքգաբիչ, գայիչ, խուլաց կօղի:**
Գոտկատեղ – **մէչք:**
Գորգ – **խալի:**
Գործել – **քօրծուլ:**
Գորշուկ, փորսուղ – **հօղվերդվիչ:**
Գորտ – **կօրտ, քօրդ:**
Գորտի ձագ, շերեփուկ – **քէղալքօչիկ, կէղալքօչիգ:**
Գորտնուկ – **քօրթնուկ, քօրթնուք, կօրդնուգ:**
Գտնել – **քէղնուլ, կէղնուլ:**
Գտնվել – **քէղնեվուլ, կէղնեվուլ:**
Գրավիչ, հետաքրքիր, հաճելի – **մէրաքլի:**
Գրել – **քէուլ:**
Գրիչ – **քէիչ, կէիչ:**
Գրպան – **չէփ:**
Գցել – **ցքուլ:**
Գուլպա – **կուռքա:**
Գուղծ, խոտարմատներով հողակոշտ – **գունծ:**
Գույնգոյն – **խատուփուլիկ:**

Գուռ (ընտանի կենդանիների ջուր խմելու համար գետնից բարձր, ոչ խորը, նեղ և երկար քարե, մետաղե կամ փայտե հարմարանք, տաշտածև փորված գերան) – **ավգօն:**

Գուրգուրել – **սիուլ:**

Գուցե, ըստ երևույթին, բայցևայնպես – **մագամ, մագա:**

— Դ —

Դադարեցնել – **թարգուլ:**

Դալ, խիժ (ծննդկանի կամ նոր ծնած կենդանու առաջին օրերի կաթը) – **թալ, թալան գաթ:**

Դանակ – **թէնագ:**

Դանդաղեցնել, կամացացնել – **գօմացնուլ:**

Դաշտ, արտ – **արդ (արդ. այդ):**

Դաջել, ձողկել, ճիպոտահարել – **լէմուլ:**

Դառը – **լաղի:**

Դաստակ – **թաթ:**

Դաստակի կոճ – **թէվի կօկօչ:**

Դատարկ – **թօշ:**

Դատարկ բան – **թօշ պօն:**

Դատարկապորտ, անբան – **ավաա:**

Դատարկել – **թօշաթմիշ էնուլ:**

Դատարկ տեղը, իզուր – **սութ թաղէ, սուղ դաղէ:**

1. Դարակ: 2. սենյակում, պատի մեջ՝ առանց փեղկերի պահարան – **թաաթ:**

Դարման – **տարմօն:**

Դարծ (նորահարսի առաջին անգամ ծնողների տուն գնալը) – **թաոց:**

Դարծյալ – **ալի:**

1. Դարծնել: 2. շուռ տալ: 3. պտտել: 4. կրոնափոխել: 5. թարգմանել – **թաոցէնուլ:**

Դարչնագույն, սրճագույն – **գավէրնգի:**

Դափնեկեռասենի, ծվաղենի (վարդագգիների ընտանիքին պատկանող ծառ, որն ունի բալի նման պտուղներ) – **ձէվաղ-նի:**

Դափնեկեռաս, ծվաղ (դափնեկեռասենու, ծվաղենու պտուղ) – **ձէվաղ:**

Դդում – **թնթում**:
 Դեզ, կույտ – **գունչուլ**:
 Դեկտենբեր – **գարաքիշ**:
 Դեղ – **տաղ**:
 Դեղին – **սարի** (արդ.՝ սայի):
 Դեմ – **թմ**:
 Դեղծ – **տախց, թախց, շէֆթալի**:
 Դեղծենի – **տախցի, թախցի**:
 Դերձակ – **թերզի**:
 Դժվար – **տեժար**:
 Դժվարություն – **թեժարութիւն, տեժարութիւն, տեժարուտուն**:
 Դիզել – **թիզուլ**:
 Դիմաց, հանդիպակաց – **թիմաց**:
 Դիմելածն ավագին – **յէ**:
 Դիմելածն կանանց – **քա**:
 Դիմելածն մորը – **յէ մա**:
 Դիմելածն հորը – **յէ բաբա**:
 Դիմելածն տղամարդկանց – **դա**:
 Դիպչել – **թիբնուլ, դիբնուլ**:
 Դիռ – **դառուլ**:
 1. Դյուրագրգիռ: 2. խիստ: 3. պահանջկոտ – **թիթիգ**:
 Դնել – **թենուլ**:
 Դոլմա (ճաշ) – **դօլմա**:
 Դողացնել – **թօխցենուլ**:
 Դոշար – **բաքմազ**:
 Դպրոց – **շկօլա, մաքթաբ**:
 Դրա – **ադու**:
 Դրա պես, այդպիսի, անշուշտ – **ենցքու**:
 Դրանից – **անդի**:
 Դրանից հետո – **անդի հեդէվ**:
 Դրանք – **ադէր**:
 Դրկից, հարևան – **թերզից**:
 Դրսեցի, այլ բնակավայրերի բնակիչ – **թուրցեվանցի**:
 Դրսի – **թուրցեվի**:

* *Մաքթաբ* են ասում Թուրքիայի, իսկ *շկօլա*՝ նախկին ԽՍՀՄ-ի կրոնափոխ համալսարանները:

Դում – **թում**:
 Դուրս, դուրսը – **թուրցեվ**:
 Դուրս գալ – **թուս էլուլ**:
 Դուրս գցել – **թուռը ցքուլ**:

— Ե —

Եգիպտացորեն – **լագուտ, լաուստ, լագտ**:
 Եգիպտացորենի գլխիկ – **գօդվան, գօդվօն, գօթօլ**:
 Եգիպտացորենի տերև – **ձախ, ցախ**:
 Եգիպտացորենի ցողուն – **լագտի, լաուստի, լագուտի գօթջաք**:
 Ելակ – **մուլիք, մօյի**:
 Ելնել, բարձրանալ – **էլուլ**:
 Եկեղեցի – **քիլիսէ, քիլիսա**:
 Եղած բան – **աղած պօն**:
 Եղան – **խօղժօղվիչ, խօղվերդեվիչ**:
 Եղանակ – **հավա**:
 Եղբայր – **ախպար** (արդ.՝ ախպայ):
 Եղբայրություն – **ախպարութիւն, ախպարուտուն** (արդ.՝ **ախպայուտուն**):
 Եղինջ – **աղինջ**:
 Եղջերու – **գիլիգ, գէլիգ**:
 Եղյամ, սառույց – **աղիմ**:
 Եղջյուր – **գօղօշ**:
 Եռալ, խթխթալ – **յէփէլուլ, խեթթեթուլ**:
 Եղնիկ – **օնլութ**:
 Եղունգ – **աունք, աղունք**:
 Եռացած – **յէփէլած**:
 Եռոտանի (կրակարանի վրայի օղակածն եռոտանի, որի վրա դրվում է կաթսան) – **սաջախ**:
 Ետև, ետևի կողմ – **էդէթ**:
 Երագ – **նիյագ**:
 1. Երախակալ: 2. սամձ: 3. փոկ – **բէլչաղ**:
 Երբ – **յէփ**:
 Երբ որ – **յէփ ու**:
 1. Երգ: 2. երգել – **գօնչուլ**:
 1. Երգել: 2. երգ – **գօնչուլ**:

Երգելով պարել – **խաղուշ**:
Երդիկ – **բաջա**:
Երդում, խոստում – **վաադ, վադէ**:
Երեխա – **դադա**:
Երեկ – **էգ** (արդ.՝ էյեգ):
Երեկո – **իգուն**:
Երես – **էս** (արդ.՝ էյես):
Երեքշաբթի – **իյեքշափթի**:
Երիկամ – **իլիգօմ**:
Երկար – **երգեն**:
Երկարել – **երգնուշ**:
Երկարություն – **երգենութին, երգենուտուն**:
Երկինք – **երգինք, հավա**:
Երկճղի, երկճյուղ – **չաթալ**:
Երկրորդ – **իքինջի**:
Երկուշաբթի – **երգուշափթի**:
Երկյուղ – **վախ**:
Երկնագույն, բաց կապույտ – **հավարնգի**:
Երրորդ – **իյեքինջի, յեքինջի**:
Երփներանգ, բժավոր, պուտավոր – **խաղուլիկ**:
Երևալ – **էվուշ**:
Եփել – **էփուշ**:

— 2 —

Ձամբյուղ – **գէմբիլ**:
Ձայրացած մարդ – **սերդօդ մարթ**:
Ձայրանալ – **սերդեռուշ**:
Ձայրույթ, ոխ – **սիրդ**:
Ձանգակ – **գօնգաթ**:
Ձառիթափություն ունեցող տեղանք, բլրակի լանջ – **բայիր, բօյիր**:
Ձառիվեր, թեք տեղանք – **բարագ**:
Ձատիկ (միջատ) – **գատկի բլօծ**:
Ձարդարել – **սուսնուշ, դուզնուշ**:
Ձարթնել – **գարթուշ**:
Ձարմացած մնալ – **շաշ մենուշ**:

Ձարմիկ – **յեգեն**:
Ձբոսնել – **բեդեդուշ, մօն էգուշ**:
Ձեփյուռ – **երվագուն**:
Ձինվոր – **ասքեր**:
Ձկրտալ – **սենդգադուշ**:
Ձզվել – **սիրդե թառնուշ**:
Ձնգզնգացնել – **զենգզենգուշ**:
Ձոքանչ – **գայնանա, անալուղ**:
Ձուգարան – **քենաֆ**:
Ձուռնա (փոքր) – **ծիրու**:
Ձուր, իզուր – **սութ տադէ, սուղ դադէ**:

— է —

էգ – **էք**:
էգուց, վաղը – **հէքուց**:
էլի – **ալի**:
էշ, ավանակ – **էշաղ**:

— Ը —

Ընդեղեն մաքրել – **ուուշուշ, իսքուշ**:
Ընթրիք – **իգվօնի (իգվօնցու) հաց**:
Ընկեր – **էնգեր**:
Ընկերովի աշխատել – **էնգերդեն տադուշ**:
1. Ընկերք՝ կենդանիների: 2. խնձորի, տանձի միջուկը՝ կորիզ-ներով – **էշ**:
Ընկճվել, ճնշվել – **աջերվուշ**:
Ընկնել – **էնգուշ, խէչուշ**:
Ընկույզ – **գագալ, կակալ**:
Ընկույզի միջուկ – **գագալի, կակալի մադիս**:
Ընկույզի, նշի, ծիրանի կորիզի պատյանները, կեղևները – **գեդէփ, գաբուղ**:
Ընտանի, մշակովի, տնական, տանու – **դօնու, դանու**:
Ընտրել, որոշել – **ուուշուշ**:

Թագավոր – **փաղիշահ, սուլթան:**

Թաթ – **թաթ:**

Թախտ, սաքու – **սավքի** (1. ուղղանկյուն կամ քառանկյուն, 4-6քմ ճաղաշար եզրերով փայտե կամ երկաթե բարձր թախտ: 2. պատի երկայնքով քարաշեն բարձրություն: 3. սենյակի հատակի մեկ աստիճան բարձրադիր հատված):

Թակ (փայտե գլխով մուրճ) – **թաք:**

Թամբալ, ծույլ – **թեմբալ:**

Թաշկինակ – **մենդիլ:**

Թանկ – **բաալի:**

Թառ (հորիզոնական ձող, որի վրա թառում են հավերը) – **թառ:**

Թառամել – **թոռմելու:**

Թաս – **թաս:**

Թավա – **թավա:**

Թավալվել – **թավուլ, թավելուլ, թալվեդուլ, թալվելուլ:**

Թավամագ, մագոտ – **մագուլիգ:**

Թարախ – **թաախ:**

1. Թարգմանել: 2. դարձնել: 3. շուռ տալ: 4. պտտել: 5. կրոնափոխել – **թառցենուլ:**

Թարթել, խփխփել – **խփխփուլ:**

Թարթիչ, թերթերունք, արտևանունք – **թերթվուց, թերթբուց:**

Թարմացնել, նորացնել – **նորցենուլ:**

Թաց – **թաց:**

Թացան 1. ջրալի կերակուր: 2. աղանդեր: 3. ուտելիքի վրա լցվող թանձրուկ: 4. կաթնամթերք – **թացան, թացոն:**

Թափահարել, թափ տալ – **թափուլ:**

Թափել, հեղել – **վաթուլ:**

Թափոն, աղբ – **գիբիլ:**

Թաքնվել, պահվել – **թաքչուլ, թաքուլ, բարվուլ:**

Թաքցնել, պահել – **բաուլ:**

Թել – **թեր:**

1. Թելպանիր: 2. կաթնաշոռ – **վազնատ:**

Թեթև – **թեթվ:**

Թեթևակի ուսով հրել – **ուուս դեվուլ:**

Թեթևամիտ – **թեթվ քելօխ (կելօխ), վասվասալի:**

Թեթևնալ, հանդարտվել, անլրջանալ – **թեթվնուլ:**

Թեթևուլիկ – **թեթվ:**

Թեյ – **չայ:**

Թեյարան – **չայխանա:**

Թեյնիկ – **չայնիգ:**

Թերխաշ, հում եփած – **հում եփած:**

Թեփ, խարտվածք, մաղուցք – **խերթել:**

Թեփռել, փետրել – **թերուլ:**

Թեքվել, կռանալ – **գեռօջուլ:**

Թեք տեղանք, գառիվեր – **բարագ:**

Թգբեհ, տերողորմյա, համրիչ – **թասպախ:**

Թգենի – **թեգենի:**

Թթենի – **թեթենի:**

Թթու դրված բանջարեղեն – **թուրչի:**

Թթու, թթված – **թեթու:**

Թթխմոր – **թեթվենլիք:**

Թթվացնել – **թեթվեցենուլ:**

Թթվել – **թեթվուլ:**

Թիթեղ – **սաջ:**

Թիթեռ – **թիթեռ:**

Թիկնել, հենվել – **յան էգուլ:**

Թլվատ – **փալթախ:**

Թխել, եփել – **էփուլ:**

Թխթխկացնել, տկտկացնել – **թօթթօջուլ:**

Թխկենի – **թ(ե)խթկի:**

Թմբլիկ – **փուփլիգ:**

Թշթշալ – **թեշթեշուլ:**

Թողնել, դուրս գցել, պահ տալ – **օթօլ էնուլ:**

Թոնիր – **թօնդիր (թօնդիր են ասում նաև բակում պատրաստված աղյուսե վառարանին):**

Թոռ – **թօռ:**

Թոք – **ջերմագ ջիգար:**

Թռչնաբույն – **փուն, պուն:**

Թռչել երկնքում, ճախրել – **ֆեֆերուլ:**

1. Թռչուն: 2. ճնճուկ – **ջինջուխ:**

Թոցնել – **թեռցենուլ:**

Թվանք, հրացան – **թվօնք**:
 Թրիք – **թրիք, աղփ**:
 Թրիքի և աթարի հավաքման վայր – **աղփօնօց**:
 Թրջվել – **թաթվուչ**:
 Թուզ – **թուզ**:
 Թուխս – **մօջա**:
 Թուխս նստել – **գօխթուչ**:
 1.Թուղթ: 2.Նամակ – **թուխթ**:
 Թունք – **թունփ**:
 Թույլտվություն – **իզին**:
 Թույն – **աղու, տախ, գէիր**:
 Թունավոր – **աղուլի**:
 Թունավորել – **տաղուչ**:
 Թունել – **թունել**:
 Թուխ, սև – **թուխ**:
 Թուք – **թուք**:
 Թքել – **թէքցնուչ**:
 1.Թև: 2.ծեռք – **թվ**:
 Թևը թափ տալ – **թվէ թափուչ**:
 Թևատակ – **գօլթուղ**:

— ժ —

Ժանգ – **ժանգ**:
 Ժանգոտվել – **ժանգեռուչ**:
 Ժակետ – **չէքտ**:
 Ժամ – **սահաթ**:
 Ժամանակ – **ժխթ, վաքիտ, զաման, չախ**:
 Ժայռ – **բարխ**:
 Ժլատ – **թվէ օմուր (ամուր) (արդ.՝ օմուլ)**:
 Ժողովել, հավաքել – **ժողվուչ**:
 Ժողովուրդ – **հալք**:

— ի —

Իբր թե – **գիդես թա**:
 Իզուր, զուր – **սուք տաղէ, սուդ դաղէ**:

Իլիկ – **իլիգ, մադմօն, մադման**:
 Իմանալ, գիտենալ – **քիդանուչ**:
 Ինձ – **ինձի**:
 Ինչ – **ինչ**:
 Ինչ է – **ինչին ա**:
 Ինչ որ – **ինչ ու**:
 Ինչպես – **ինչբես, ինչվես**:
 Ինչպես որ – **ինչբես ու**:
 Ինչպես ուզում ես – **խտարսէն**:
 Ինչու – **ինչի**:
 Ինչքան – **ինչխաղիք**:
 Իշամեղու, պիծակ – **բուծէք, բուծէգ**:
 Իջնել – **իչնուչ**:
 Իջևանատուն – **քարվանսարայ**:
 Իսկապես – **գէրչաղ**:
 Իրեն – **ույին**:

— Լ —

Լազ (ազգ) – **ջօն**:
 Լակ ուտել – **լազուչ**:
 Լակոտ – **լազօթ**:
 Լայն – **լէն**:
 Լայնություն – **լէնութին, լէնուտուն**:
 Լայնք – **լէնցք**:
 Լաչակ – **լաչակ**:
 Լաստենի – **բեցղի**:
 Լավ – **սօյ, բէդք, բէքք**:
 Լավաշ – **լավաշ**:
 Լավություն – **բէդքութին**:
 Լացել – **վայուչ**:
 Լեզու – **լիզու**:
 Լեղի, դառը – **լաղի**:
 Լեռ – **լէռ, լէր (արդ.՝ լէյ)**, որտեղ գտնվում է ամառային արո-
 տավայրը՝ յայլան:
 Լեռնցի – **լէրէնցի**:
 Լիզել – **լիզուչ**:

Լիճ – զյօլ:
 Լիճնել – էլլուլ:
 Լիքը – լիքէ:
 Լիքը լցնել – լեքցնուլ, լըքցնուլ:
 Լղճել – լաղջուլ:
 Լյարդ – թուխ ջիգար:
 Լորի – լօրիյա:
 Լուլիկ, պոմիդոր, կլոր հատապտուղ – լիլիգ:
 Լողալ – լաղուլ:
 Լողանալ – փոխվուլ (նշանակում է լողանալ և հագուստները փոխել):
 Լորենի – լօրի, լօի (արդ.՝ լօյի):
 Լործ, լործունք – փերցուխ:
 Լսել – իմանուլ:
 Լվանալ – լեվուլ, լեվանուլ, լըվուլ:
 Լվացվել – լեվացվուլ, լըվացվուլ:
 Լվացք – լեվացք, լըվացք:
 Լվացքի պարան – լեվացքի, լըվացքի չվօն:
 Լրանալ, ավարտվել – թօմնուլ:
 Լցնել – լեցուլ, լըցուլ, լէլլուլ:
 Լցվել, կուտակվել – լեցվուլ, լըցվուլ:
 Լույս – լուս:
 Լուռ – լուր:
 Լուսամփոփ, լամպ, ճրագ – լամբա:
 Լուսանալ – լուսանուլ:
 Լուսանկար – ֆօթերաֆ:
 Լուսատտիկ – գածգիչ, գածուլիգ, գածօռիգ:
 Լուսին – լուսնիկա:
 Լուր, տեղեկություն – խաբար:

— Խ —

Խաբել – խափուլ:
 Խալ – նէշօն:
 Խալի, գորգ – խալի:
 Խաժել, կժել – խաժուլ:
 Խակ – դաք:

Խաղ 1. խաղ: 2. քառատող երգ: 3. պար – խաղ:
 Խաղալ – խաղուլ:
 Խաղող – խավօղ:
 Խաղողի վազ – վազ:
 Խայթել խայթոցով – խօթուլ:
 Խայթոց (կարիճի) – աղուն:
 Խայթոց (մեղվի, կրետի) կիճ – գիջ:
 Խայտաբղետ, բժավոր, պուտավոր – խաղուլիկ:
 Խանդակ – խենդակ:
 Խաշ – խաշ 1. եղջերավոր անասունների ոտքերից և փորոտիքից եփվող ջրալի կերակուր: 2. ջրի մեջ խաշած եգիպտացորենի գլխիկ:
 Խաշխաշ, վայրի կակաչ, հարսնածաղիկ – մուցիփօր:
 Խաչ – խաչ:
 Խառնել, խառնակել, շփոթել – խարնուլ:
 Խառնվել, մասնակցություն ունենալ – խարեվուլ:
 Խավիճ – խավիճ, խավից, խավիճ (պատրաստվում է եգիպտացորենի ալյուրով և կաթի սերուցքով):
 Խարկել, բովել – խարգուլ:
 Խարտյաշ – սարի (արդ.՝ սայի):
 Խարտվածք, թեփ, մաղուցք – խերթէ:
 Խարույկ – փազաա:
 Խեժ – ճառի գիվ:
 Խելագարվել – խէլըռուլ:
 Խելառ – խէլառ:
 Խելք – խերք:
 Խեղդել – խախթուլ:
 Խեղդվել – խախթվուլ:
 Խեղճ – աղքաղ:
 Խենթ – շաշ, խեվ:
 Խիժ, դալ (ծննդկանի կամ նոր ծնած կենդանու առաջին օրերի կաթը) – թալ, թալան գաթ:
 Խլեգ, մողես – խլօգ, խէլօրթ:
 Խխունջ – խխունց:
 Խնել – խմուլ:
 Խնոր – խեմօր:
 Խնոր հունցել – շօղվուլ:

Խյուս (ալյուրի և ջրի խառնուրդով պատրաստված զանգ-
 ված) – **խուս:**
 Խնամախոս – **էլչի:**
 Խնամի – **դօստ:**
 Խնդալ – **խենդուշ:**
 Խնձոր – **խենձօր:**
 Խնձորենի – **խենձօրի ծառ, խենձօրնի:**
 Խնոցի – **յաղուղ, յայուղ:**
 Խնչել – **խենչէլուշ:**
 Խոզ – **խօզ:**
 Խոզ մարդ (վատ մարդ) – **խօզ մարթ:**
 Խողովակ – **բօրու:**
 Խոնավ – **կէչ:**
 Խոսակցություններ, զրույցներ – **խաբարդաք:**
 Խոսել, զրուցել – **խօսուշ, խաբրուշ:**
 Խոստում, երդում – **վաադ, վադէ:**
 Խոտ – **խօդ:**
 Խոշոր – **խօշօր:**
 Խորանալ – **խօտնուշ:**
 Խորը – **խօը** (արդ.՝ **խօյը**):
 Խորթ (հայր, մայր և այլն) – **օգայի:**
 Խորիզ – **միչուցք:**
 Խորխորատ, փլվածք – **փէլուցք:**
 Խոփ, արոր – **գօքար:**
 Խռացնել, խռնփացնել – **խեռգուշ:**
 Խռնվել, խուռներան բազմությամբ տեղ գնալ – **չաղլէցվուշ:**
 Խռովել – **սերդէռուշ:**
 Խրատ տալ – **խերաթ (խըրադ) դէվուշ:**
 Խրխնջալ – **խերխենջուշ:**
 Խրվել, մխրճվել, սուզվել – **նիյէլուշ:**
 Խրտնել – **խերդուշ:**
 Խրտնեցնել – **խերդէցնուշ:**
 Խցան – **զումփա:**
 Խուլ – **խուլ:**
 Խուտուտ տալ – **խադվէդուշ:**
 Խուրջին – **խուրջ:**
 Խփել – **խեփուշ, թէվուշ:**

Խփխփացնել, աչքերն արագորեն թարթել – **խեփգէփուշ:**
 Խն – **խեվ:**

— Ծ —

Ծածկել – **ծածգուշ:**
 Ծածկել՝ փակել – **խաչնուշ, խաշնուշ:**
 Ծածուկ, մեկուսի, աչքից հեռու – **խալվութ:**
 Ծակ, անցք – **ծագ:**
 Ծակել – **ծագուշ:**
 Ծաղիկ – **ծաղիգ:**
 Ծաղկատար – **չէչօտ:**
 Ծաղկել – **ծաղգուշ:**
 Ծամել – **ծօմուշ:**
 Ծամոն – **գիվ:**
 Ծայր – **ջօթ:**
 Ծանր – **ծօնդր, զօնդր:**
 Ծանր–ծանր – **ծօնդր – ծօնդր, զօնդր – զօնդր:**
 Ծանրանալ – **ծօնդրէնուշ:**
 Ծառ – **ծառ:**
 Ծառերից թափված աշնան դեղին տերևներ – **չաչ, մօլ:**
 Ծարավել – **ծարվէնուշ:**
 Ծեծել – **ծէծուշ:**
 Ծերունի – **հալիվօր** (արդ.՝ **հալիվօյ**):
 Ծերանալ – **հալիվօրնուշ** (արդ.՝ **հալիվօյնուշ**):
 Ծերտ, ծիրտ – **ծիռթ:**
 Ծիածան – **քուշնիկ, քիշնիկ, գուշնիկ:**
 Ծիլ 1. բույսի ծիլ: 2. հեղուկի բարակ շիթ – **ծիլ:**
 Ծիծ, կուրծք – **ծիծ:**
 Ծիծաղել – **ծիծաղուշ:**
 Ծիծեռնակ, ծիծառ – **ծիծէռ, ծիծառ:**
 Ծիսական տիկնիկ, պուպրիկ – **բուբրիգ:**
 Ծիրան – **քախի, աբրիգօս:**
 Ծլել – **ծէլուշ:**
 Ծխախոտ, սիգարեթ – **ծիգաա:**
 Ծխել – **խմուշ:**
 Ծնել – **ծէնուշ** (ասվում է միայն կենդանիների համար):

Ծնել երեխա – ուննուլ:
 Ծնկի իջնել, ծնկել – ծունգ էնգուլ:
 Ծնկոսկր – ծունգի լիւտր, լիւօր:
 Ծննդկան – նօր դղացկօն (դղացկան):
 Ծնողների միակ զավակը – մէգհադիգ:
 Ծնոտ – չէնգա:
 Ծնվել – ուննվուլ (բառացի նշանակում է ունեցվել):
 Ծոծրակ – զօռզագ:
 Ծոն – ծուն:
 Ծոն պահել – ծուն փէռնուլ:
 Ծոն սկսել – ծուն գէփչուլ:
 Ծոպ – փուսքուլ, փուսխուլ:
 Ծոռ – բօռի դղա:
 Ծով – ձօվ:
 Ծովի ափ – ձօվի չայ:
 Ծոց – ձօց:
 Ծոցվոր, հղի – էրգուդաք, ձօնդր, զօնդր:
 Ծվաղ, դափնեկեռաս (ծվաղենու, դափնեկեռասենու պտուղ) – ձէվաղ:
 Ծվաղենի, դափնեկեռասենի (վարդագգիների ընտանիքին պատկանող ծառ, որն ունի բալի նման պտուղներ) – ձէվաղնի:
 Ծվատել, բզկտել – ցէվէրդուլ (արդ.՝ ցէվէյդուլ):
 Ծուխ – մուխ:
 Ծունկ – ծունգ:
 Ծուլ – բէմբալ:
 Ծուռ – ձուռ:

— 4 —

Կա – զօ:
 Կաթ – գաթ:
 Կաթել – գաթուլ:
 Կաթիլ – գաթիկ, գաթիգ:
 1. Կաթնաշոռ: 2. թելպանիր – վազնատ:
 Կաթնապուր, կաթնարած (ճաշատեսակ) – գաթնօվ, գաթներած:
 Կաթսա – ջուգալ, քարսօն (արդ.՝ քայսօն):
 Կաթսայի մեջ մնացած կերակրի տականք – դագիչք:

Կալ – խարման:
 Կախարդ (չար), ջադու – չադու:
 Կախել – կախ ցքուլ:
 Կախվել, կախ ընկնել – գախ էնգուլ:
 Կակազել – լիզուն էդէվցքուլ:
 Կակաչ (վայրի), խաշխաշ, հարսնածաղիկ – մուցիփօր:
 Կաղ – բօփալ, չօլախ:
 Կաղամախի (ծառատեսակ) – արջի:
 Կաղամբ – պօնջար:
 Կաղին, պնդուկ, տխիլ – գաղին:
 Կաղնի – խօզգաղնի:
 Կաղնուտ – գաղնուդ:
 Կամ – գամ:
 Կամաց – կամաց – գօմաց – գօմաց:
 Կամացացնել – գօմացնուլ:
 Կամուրջ – գարմուլ:
 Կայծ – գաձ, կայծակին ևս գաձ են ասում:
 Կայծակ – գաձ:
 Կանաչ – յէշիլ:
 Կանաչ, կապույտ աչքեր – չախալ (չաղալ) աչվէնի:
 Կանաչ սոխ – ափաջուդ:
 Կանգ առնել, կանգնեցնել – գունգնեցուլ, գունգեցուլ:
 Կանգնել – գօնգնուլ, գօնգուլ:
 Կանեփ – գանեփ:
 Կանչել – գօրչուլ:
 Կաշի – գաշի:
 Կաշվե գոտի – գայիշ:
 Կապ – գաբ:
 Կապել – գաբուլ:
 Կապը քանդել – քագուլ:
 Կապտամանուշակագույն – սէվ:
 Կապտել – սէվնուլ:
 Կապույտ – մավի:
 Կառուցել, պատրաստել, շինել – շինուլ:
 Կատու – գադու:
 Կատվի ձագ – գադվէցաք:
 Կարաս – քուպ:

Կարդալ – **գարթուշ**:
Կարել – **գարուշ, գաուշ** (արդ.՝ **գայուշ**):
Կարիճ – **աքրէք**:
Կարծրանալ, թանձրանալ, խցանվել, փակվել – **գալվուշ**:
Կարկատան – **գարգէդէն**:
Կարկատել – **գարգէդուշ**:
Կարկուտ – **գարգուդ, գարգուտ** (արդ.՝ **գայգուտ**):
Կարճ – **գարջ**:
Կարմիր – **գարմիր, գարմի**:
Կարմրել – **գարմրուշ**:
Կարմրուկ – **քութէշ**:
Կարծես – **գիդէս քի, թաքիդում, թաքիդիմ**:
Կարոտ – **գարոդ**:
Կարոտել – **գարոդնուշ**:
Կարպետ – **չուլ**:
Կարտոֆիլ – **կարտոփի** (արդ.՝ **կայտոփի**), **մաքվալ**:
Կացին – **գացին**:
Կափարիչ – **խուփ**:
Կենալ – **գինուշ**:
Կենդանիների՝ ձիու, էշի, ջորու, կովի և գոմէշի կղկղանք – **աղփ**:
Կենդանիների լորձունք – **չօղունք**:
Կենդանի շունչ, կենդանի էակ – **սաղավօր**:
Կեղտ – **աղդ**:
Կեղտոտ – **աղդօդ**:
Կեղև – **գաբուդ, գէդէք**:
1. Կեռիկ, որը հագցնում են առաստաղից ամրացված շղթայի ծայրին և որից կրակի վրա են կախում կաթսան: 2. Երբեմն նաև՝ առաստաղից կախված ամբողջ շղթան – **գիլիմօռ, կիլիմօռ**:
Կեռման՝ ճանապարհի – **գէռման**:
Կեռվել, կեռել, կքել – **գէռէջուշ, գէռօջուշ**:
Կեղևել – **գէջվուշ**:
Կիճ, խայթ, խայթոց – **գիջ**:
Կես – **գէս**:
Կեսօր – **ցուագ**:
Կերոսին, նավթ – **գագաղի**:

Կզանալ, կզել – **գէգուշ**:
Կթել – **գթուշ**:
Կին – **գէնիգ**:
Կիրակի – **գիյագի**:
Կիսրար աշխատող – **օրթախդէն տաղօդ**:
Կլոր, կլորիկ – **լիլիգ**:
Կծել, խայթել, խածել – **խածուշ**:
Կծիկ – **գէճիգ, գէճիք**:
Կծկվել – **գէճգուշ**:
Կծված – **գէճված**:
Կծու – **վառէցուկ, վառէսնուք**:
Կկու – **քուքու, կուկու**:
Կճեպ – **գէջէք**:
Կճթել, կսմթել – **ծիբլուշ**:
Կճուճ – **չումլախ**:
Կնձենի, թեղի – **թաղի**:
Կնճիռ, ծալ – **խաթ**:
Կշռել – **գէշէռուշ**:
Կշտանալ – **գէշթանուշ**:
Կոթ՝ բռնակ – **գօթ**:
Կոկել, հարդարել, կարգի բերել – **գօգուշ**:
Կոկորդ – **բօղագ**:
Կոկորդի խնձորակ – **կօկօրդ**:
1. Կողասենյակ, նախասրահ: 2. գոգավորություն – **քօրկ, կօրք**:
Կողմ – **ստմթ**:
Կողով – **գալաթ**:
Կողպէք – **փագ**:
Կոճ – **կօկօչ**:
Կոճակ – **սաղաֆ**:
Կոճկել, փակել – **խաչնուշ, խաշնուշ, դաշնուշ**:
Կոճղ – **անթուլա**:
Կոշիկ, ճտքավոր կոշիկ – **փօթին**:
Կոպիտ, դիմացկուն, ամուր – **գօթիդ**:
Կով – **գօվ**:
Կովկիթ – **գօթ**:
Կոտ – **գօթ**:
Կոտեն (կանաչեղեն) – **գօթիմ**:

Կոտրատվել, ջարդվել – **չարթեվուշ** (արդ.՝ **չայթեվուշ**):
Կոտրել – **գօդրուշ**:
Կորած մարդ – **գայիբ մարթ**:
Կորել, կորսվել – **գայիբ ըլնուշ, գօրսեվուշ** (արդ.՝ **գօյսեվուշ**):
Կորիզ – **դօյիզ, դօհս**:
Կորիզի միջուկ – **մաղիս**:
Կորիզի պատյան, կեղև – **գեդեփ, գաբուղ**:
Կորոբ (եգիպտացորեն, ընդեղեն, դրում, սոխ, սխտոր և այլն պահելու համար ճյուղերից կամ տախտակներից պատրաստված շուրջ 10 քմ մթերանոց, խոնավությունից և կենդանիներից պաշտպանվելու նպատակով կառուցվում է մոտ 2 մ բարձրության սյուների վրա, ունի շարժական սանդուղք) – **գօօբ**:
Կորսվել, կորել – **գօրսեվուշ** (արդ.՝ **գօյսեվուշ**):
Կորցնել – **գօրսեճուշ** (արդ.՝ **գօյսեճուշ**):
Կպչել – **գեփչուշ, գեբուշ**:
Կպչել (ամհանգստացնել, նեղացնել, վիրավորել) – **նեբեկչուշ**:
Կռանալ, կեռվել, կքել – **գեռեջուշ, գեռօջուշ**:
Կռիվ – **գեռիվ, գրռիվ, գավգա**:
Կռվող – **գեռվօղ, գրռվօղ**:
Կտիտ (այծի, ոչխարի կղկղանք) – **գիդիդօր**:
Կտրել – **գեդրուշ, գըդրուշ**:
Կտրիճ (տղամարդ) – **գեդրիչ, գըդրիչ**:
Կտրիճություն, քաջություն – **գեդրիջութին, գեդրիջուտուն, գըդրիջութին**:
Կրակ – **գիյազ**:
Կրակը խառնելու համար մետաղյա գործիք – **ագիշ, ակիշ**:
Կրակից թռչող մոխիր – **մօձիր**:
Կրել, տեղափոխել – **գեյուշ, գիյուշ**:
Կրիա – **գափագլի կօրտ (քօրդ)**:
1. Կրոնափոխել: 2. դարձնել: 3. պտտացել: 4. թարգմանել – **թառցեճուշ**:
Կրունկ – **գիյօնգ**:
Կրծքավանդակ – **սերդ** (արդ.՝ **սեյդ**):
Կրծքավանդակի մազ – **սերդի** (արդ.՝ **սեյդի**) **մազ**:
Կուզ – **գօմբուր**:
Կուլ տալ – **գուլդեվուշ**:
Կում, ումպ – **գում, գուլ**:

Կույտ – **գունչուլ**:
Կուշտ – **գուշտ**:
Կուշտ լինել – **գուշտ էլլուշ**:
Կքել, կռանալ – **գեռօջուշ**:

— 3 —

Հագնել – **հաքնուշ**:
Հագնվել – **հաքոսվիուշ**:
Հագուստ – **հալապ, շօր** (արդ.՝ **շօյ**):
Հագալ – **թօքուշ**:
Հալել – **հալուշ**:
Հալիվոր, ծերունի – **հալիվօր** (արդ.՝ **հալիվօյ**):
Հազար – **հազար, բին**:
Հակառակվել, համոզել, դեմ ընկնել – **թեմ էնգուշ**:
Հաղթել – **ախթուշ**:
Հաճախ – **իժէ**:
Հաճարենի – **աժրի**:
Հաճելի, հետաքրքիր, գրավիչ – **մերաքլի**:
Համաձայնվել, համաձայն լինել – **ռագի էլլուշ**:
Համայիլ, հմայիլ – **հօմայիլ** 1. վզնոց, վզից կախվող զարդ:
2. վզնոց, որը ոչ միայն զարդ է, այլև, ըստ հավատալիքների, ունի չարխափան ուժ, ազատում է չար աչքից, փորձանքից, հիվանդություններից: 3. մոլլայի գրած չարխափան գիր՝ հմայագիր:
Համար – **հօմա, ամա**:
Համբույր – **բաչ**:
Համբուրել – **բաչ էնուշ**:
Համեղ, անուշ – **օնուշ**:
Համեն, գինձ (կանաչեղեն) – **հօմիմ, համեն, քինձ**:
Համոզել, դեմ ընկնել – **թեմ էնգուշ**:
Համր – **լալ**:
Համրել – **հօմրուշ, համրուշ**:
Համրիչ, տերողորմյա, թզբեհ – **թասպախ**:
Հայիոյանք – **քեֆուր, սօզ**:
Հայիոյել – **քերֆուշ, սօզմիշ էնուշ**:
Հայտնել – **խաբար դեվուշ**:

Հայտնի – բաալլի:
 Հայր – դադ:
 Հանգցնել – հոնցնուլ:
 Հանդ, արտավայր – հանդ, հոնդ:
 Հանդարտվել, թեթևանալ – թեթվնուլ:
 Հանդիպակաց, դիմաց – թիմաց:
 Հանդիպել – ռաստ էգուլ:
 Հանել – հանուլ, հոնուլ:
 Հաշմանդամ – սաքաթ:
 Հաշվել, համրել – հոմրուլ, համրուլ:
 Հաչել – հաչուլ:
 Հապա – հաբա:
 Հասկ – ցոյինի կլոխ:
 Հասկանալ – օնգլօմիշ էնուլ:
 Հասնել, հասունանալ (պտղի) – հասուլ:
 Հասնել, տեղ հասնել – պօբուլ:
 Հասնել հետևից – ժէմնուլ:
 Հաստ – հաստ:
 Հաստափոր – հաստփօր, մէծփօր, կիրփօր, յաղլիփօր:
 Հաստութիւն – հաստութիւն, հաստուտուն:
 Հասունանալ, հասնել (պտղի) – հասուլ:
 Հավ – հավ:
 Հավանաբար, ըստ երևոյթին, կարծես, ոնց որ – թաքիդում, թաքիդիմ:
 Հավանոց – հավնօց:
 Հավատալ – ավդուլ:
 Հավաքել – ժողվուլ:
 Հավաքվել – ժողվէվուլ:
 Հավի կրօնի երկճղի ոսկր – ադէս, լադէս:
 Հավկիթ, ծու – հավգիթ (թուրց.՝ հագվիթ):
 Հատապտուղ, պոմիդոր (լոլիկ), կլորիկ – լիլիգ:
 Հատիկ – հադիգ:
 Հարբած – սարխօշ:
 Հարբուխ – խարփուխ (արդ.՝ խայփուխ):
 Հարթ տարածք – փոս:
 Հարկավ – հէլբէթ:
 Հարյուր – հաուր, հարու:

Հարս – հարս (արդ.՝ հայս):
 Հարսանիք – հարսնիք (արդ.՝ հայսնիք):
 Հարս զարդարել – հարս (արդ.՝ հայս) դուզնուլ, հարս (արդ.՝ հայս) սուսնուլ:
 Հարսի կողմից հարսանիքի մասնակիցներ – քրզկօլլի:
 Հարսի պար – հարսի (արդ.՝ հայսի) խաղ:
 Հարսնախոս – էլչի:
 Հարսնախոսների խոստումը աղջկա ծնողներին – խարք:
 Հարսնածաղիկ, խաշխաշ, վայրի կակաչ – մուցիփօր:
 Հարսնաքույր – հարսնքուր (արդ.՝ հայսնքույ):
 Հարսնացու – հարսէնցու (արդ.՝ հայսէնցու):
 Հարստութիւն, ունեցվածք – վարիյէթ:
 Հարվածել – շէփէցնուլ, դէվուլ:
 Հարցնել – հարցէնուլ:
 Հարուստ – զէնգին:
 Հարևան, դրկից – թերգից:
 Հաց – հաց:
 Հացահատիկ չափելու փայտե աման – գօթ:
 Հացի միջուկ – հացի միշմուք:
 Հացի կողով – խէնցգէլ:
 Հաց ուտել, ծաշել – հաց ուդուլ:
 Հեծան (երկու սյունների վրա դրված գերան) – սօյա:
 Հեծնել – հէծնուլ:
 Հենակ, որ դրվում է պտուղներով ծանրաբեռնված ճյուղի տակ – դիյաղ:
 Հենվել, թիկնել, կռթնել – յան (յօն) էգուլ:
 Հենց այնպես ժամանակ անցկացնել – օրմադուլ:
 Հեռախոսով զանգել – թէլէֆօն ընուլ:
 Հեռացնել, վռնդել – թեռցէնուլ:
 Հեռվից – հէրէվօնցմա:
 Հեսան (սրոց, սրելու քար) – հէսան:
 Հետածգել – յէդցքուլ:
 Հետաքրքիր, գրավիչ, հաճելի – մէրաքլի:
 Հետ դառնալ, վերադառնալ – յէտ թառնուլ:
 Հետո – հէդէվ:
 Հետք – հէդ:
 Հետիոտն, ոտքով – օտքէնցի:

Զեւտկից ընկնել, վիճել, կատակել – **էդէվ էնգուշ:**
 Զերիք, բավական – **հէյիք:**
 Զերկ – **հէրք:**
 Զերկել – **հէրգուշ:**
 Զեքիաթ, պատմություն – **հէքիյա:**
 Զիմա, այժմ – **հիմի:**
 Զին – **հին:**
 Զինգշաբթի – **հինգշափթի:**
 Զիշողություն, միտք – **միդք:**
 Զիսուն – **հիսուն, իսուն:**
 Զիվանդ – **հիվօնդ, հիվանդ:**
 Զիվանդանալ – **հիվօնդնուշ, հիվանդնուշ:**
 Զիվանդություն – **քէշութուն:**
 Զղի – **ծօնդր, էրգուդագ:**
 Զյուսած գոտի – **խուլաց կօղի:**
 Զյուսած մազ – **խուլաց մազ:**
 Զյուսել – **խուլուշ:**
 Զյուսք, հյուս – **խուլաք:**
 Զյուրասենյակ – **սալօն:**
 Զնդկահավ – **դուլդուլհավ:**
 Զնծել – **բիթմիշ ընուշ:**
 Զնուն – **ավալը:**
 1. Զոգի (անձ): 2 ոգի – **հօքի:**
 Զոգնել – **թաթրուշ, նաչէրուշ:**
 Զոկտեմբեր – **օխտավրի, օրտագյուս:**
 Զոդ – **հօդ, խօդ:**
 Զոպոպ – **փեռփէլա քինջուխ:**
 Զով – **հօվ, սահն:**
 Զովվություն անել – **հօվվութուն (արդ.՝ հօյիվութուն) էնուշ:**
 Զովիվ – **հօյիվ:**
 Զոտ – **հօդ:**
 Զոտ՝ ոչխարի – **յաթաղ:**
 Զորանջել – **էնչգէդուշ, էնչգադուշ:**
 Զորաքրոջ աղջիկ, տղա – **հօքուրի (արդ.՝ հօքույի) ախչիգ, դղա:**
 Զորաքույր – **հօքուր (արդ.՝ հօքույ):**
 Զորեղբայր – **հօպար (արդ.՝ հօպայ):**

Զորեղբոր աղջիկ, տղա – **հօպօր (արդ.՝ հօպօյ) ախչիգ, դղա:**
 Զորեղբոր կին – **օղօգին:**
 Զորթ – **հօրթ:**
 Զորթանոց, գոմ – **հօրթնօց:**
 Զռռալ – **խէրխէրալ:**
 Զրացան – **թէվօնք, թէվանք:**
 Զրացանով կրակել – **թէվօնք (թէվանք) ցքուշ:**
 Զրել ուսով – **ուուս դէվուշ:**
 Զուլիս – **չուրուխ:**
 Զուլունք, ուլունք – **հէլուն:**
 Զում կաթի սեր – **սիր, սիռ (արդ.՝ սիյ):**
 Զույս – **ումուդ:**
 Զունդ, սերմ – **հունդ, հումդ, սերմ:**
 Զունիս – **քիյաս:**
 Զունվար – **նօր դարի (արդ.՝ նօյ դայի):**
 Զունցել – **չօղվուշ:**
 Զնալ – **թաստուշ:**

— 2 —

Ձագ – **ցաք:**
 Ձագար – **լէլիչ:**
 Ձախ – **ցախ:**
 Ձայն – **ցէն, ծէն:**
 Ձայնը գլուխը գցած գոռալ – **քէլօխնիվէ գօրշուշ:**
 Ձայն տալ, կանչել – **ցէն (ծէն) դէվուշ:**
 Ձավար, կորկոտ – **գօրգօթ:**
 Ձեղնահարկ – **ցէխք:**
 Ձեռագործ – **փանդաղ:**
 Ձեռնոց – **թաթման, թաթմօն, թէվհաքնիչ:**
 Ձեռք, թև – **թէվ:**
 Ձեռք բերել, գտնել – **քէդնուշ:**
 Ձեռք քաշել, վազ անցնել – **վազ օնցուշ:**
 Ձեռքի մատ – **թէվի մադ:**
 Ձի – **ցի:**
 Ձիթապտղի ձեթ – **գէյթունի յաղ:**

Ձիթապտուղ – **զէթուն**:
Ձմեռ – **ցեմէռ**:
Ձմերուկ – **կարպուզ**:
Ձյուն – **ցուն**:
Ձնահյուս – **ուսի**:
Ձնծաղիկ – **ցունծաղիգ, ձունի ձաղիգ**:
Ձող – **ցող**:
Ձվածեղ – **հալած հագվիթ (արդ.՝ հավգիթ)**:
Ձու – **հագվիթ (արդ.՝ հավգիթ)**:
Ձուկ – **ցուք, ծուգ**:
Ձևել – **ցելուլ**:
Ձևձևել, ձևտել – **ցելցելուլ**:
Ձևտել, ձևձևել – **ցելցելուլ**:

— Գ —

Ճախարակ – **փուրթմօնիչ**:
Ճախրել, թռչել երկնքում – **ֆէֆերուլ**:
Ճակատ – **ջագաթ**:
Ճակնդեղ, բազուկ – **պագունք**:
Ճակնդեղի (բազուկի) տերևներ – **պագունքի դէյէբներ**:
Ճահճամարգագետին – **սազ**:
Ճաղատ – **քյալ**:
Ճամպրուկ – **չամաղան**:
1. ճանաչել: 2. ծանոթանալ – **ջօնչուլ**:
Ճանապարհ – **ջօմփա**:
Ճանապարհ դնել – **ջօմփա թէնուլ**:
Ճանապարհ, որն անցնում է կիրճի, խորը ձորի հատակով
կամ բլուրների ստորոտների միջով – **փօղօց**:
Ճանկել, բռի մեջ հավաքել – **ջօնգուլ, ջանգուլ**:
Ճանճ – **ջօնջ**:
Ճաշ – **ջաշ**:
Ճար – **ջար**:
Ճարպ – **յաղ**:
Ճեղքել – **ջախքուլ**:
Ճերմակ, սպիտակ – **ջերմագ**:

Ճզմել – **աջերուլ**:
Ճիճու – **ջիջու**:
Ճիշտ, շիտակ – **չիղագ**:
Ճիպոտահարել, դաջել, ձաղկել – **լէմուլ**:
Ճիւլել – **չախլուլ**:
Ճկույթ – **ջգութ**:
Ճյուղ – **դալ**:
1. ճնճղուկ: 2. թռչուն – **ջինջուլիս**:
Ճնշվել, ընկճվել – **աջերվուլ**:
Ճոճանակ, ցանցաճոճ – **սալինջաղ**:
Ճոճել, օրորել – **օվուլ**:
Ճոպան – **ջօբան**:
Ճվճվալ – **ջէվջէվուլ**:
Ճտքավոր կոշիկ, կոշիկ – **փօթին**:
Ճութ, ողկույզ – **ջութ**:
Ճուտ, ձագ – **ջութ**:

— Ս —

Սագ – **մագ**:
Սագոտ, թավամագ – **մագուլիգ**:
Սածնի տոպրակ – **մածէքօմ**:
Սածուն – **մածուն**:
Սածուն մերել – **մածուն մէրուլ, մածուն փէռնուլ**:
Սակարդ, մածնի մերան – **մարցու**:
Սաղ – **մաղ**:
Սաղուցք, թէփ, խարտվածք – **խերթէշ**:
Սամիկ, տատիկ, մեծ մայր – **մօմի, մեծ մօմ**:
Սայիս – **մայիս**:
Սան գալ, փնտրել – **մանէգուլ, մօնէգուլ**:
Սանգաղ – **մանգաղ, մօնգաղ**:
Սանդարին – **մանդարին, մօնդարին**:
Սանել – **մօնուլ**:
Սանկաբարձուհի – **թօնօղ**:
Սանչ, տղա – **մօնչ**:
Սանր որդեր, որոնք լինում են մսի, լեշի վրա՝ ճանճերի
նստելուց հետո – **ձէղութ**:

Մանրացնել, փշրել, փտորել – **փեսօթդուշ**:
Մայր – **մար** (արդ.՝ **մայ**):
Մաշել – **մաշուշ**:
Մառ (սուր ծլեպ, փուշ, որը խրվում է մաշկի մեջ) – **մառ**:
1. Մասուր: 2. մասուրի նման պտուղ – **խավուլիլիկ, հավուլիլիկ**:
Մասրենու թուփ, մասրենու փշոտ ճյուղ, փուշ – **մասրափուշ**:
Մատ – **մադ**:
Մատաղ – **մադաղ**:
Մատաղ լինել – **մադաղ էլլուշ**:
Մատանի – **մադնի**:
Մատղաշ, դեռատի, չկոշտացած – **մադղաշ**:
Մատնեմատ, նշանի մատ – **նշօնի մադ**:
Մատների ծայրերով թխթխկացնել – **դեքշեցնուշ**:
Մարագ – **մարախ**:
Մարգագետին – **չայիր**:
Մարգարե – **փեղամբեր**:
Մարդ – **մարթ**:
Մարխ (խեժոտ փայտիկ, որն օգտագործվում է որպես կրակ անելու կաշան) – **մարխ**:
Մարտ (ամսանուն) – **մարդ**:
Մարմանդ – **սարբաստ**:
Մարմին – **մարմին, օնքս, վաչուտ**:
Մարմնի վրա աճած մսի փոքրիկ գնդիկ – **դուք**:
1. Մացառ: 2. խճճված մազեր – **խօխօլ**:
Մաքուր – **խտաք, թեմիզ**:
Մաքրաջրել, պարզաջրել, ողողել – **մայնուշ**:
Մաքրել ընդեղեն – **խքուշ, ուուշուշ**:
Մեզ – **շեռ**, կենդանիների՝ **կօզ**:
Մեխ – **մախ**:
Մեխել – **չաքմիշ ենուշ**:
Մեծ – **մեձ, խօշօր**:
Մեծանալ – **մեձընուշ**:
Մեծավոր, գլխավոր, հասարակական դիրք ունեցող մարդ – **մեձվօր**:
Մեկ – **մեգ**:
Մեկել, մյուս, ուրիշ, մի հատ էլ – **մեգալ, մեմալ**:

Մեկ հատիկ, միամորիկ – **մեգհադիգ**:
Մեկնվել, շորերով պառկել, երկարել – **երգենուշ**:
Մեկտեղել, կուտակել մի տեղ – **մեգդադեցնուշ**:
Մեղավոր – **մադավուր**:
Մեղավոր լինել – **մադավուր էլլուշ**:
Մեղր – **մադր**:
Մեղվանոց, փեթակ – **փուուք**:
Մեղվի խայթոց, կիճ – **գիջ**:
Մեղու – **մադու**:
Մեղք – **մախք**:
Մենակություն – **մենեճագութին**:
Մեջ – **մեչ**:
Մեջտեղ – **մեչքեդաղ**:
Մեջքն ամբողջությամբ – **լերթ**:
Մեռնել – **մեռուշ**:
Մետաղյա գոտի – **կօդի**:
Մերան, մածնի մակարդ – **մարցու**:
Մերկ – **դեզլեգ**:
Մթնել – **մեթնուշ**:
Միաբերան, միաձայն – **միյափիյան**:
Միամորիկ, մեկ հատիկ – **մեգհադիգ**:
Միայն, սոսկ – **սադէ**:
Միանգամից – **մեգեդեն**:
Միասին – **հեդրա**:
Միզապարկ – **շերօման, շերօմօն**:
Միզել – **շեռուշ**:
Մի՞թե – **մի՞թա, մի՞տա**:
Մինչև – **ինչակ**:
Մինչև կեսը – **գետեցահվա**:
Միջատ, մրջյուն – **մերջիմ**:
Միջնամատ – **մեչքեդաղի մադ**:
Միջև – **առային**:
Միս – **միս**:
Միտք, հիշողություն – **միդք**:
Միրգ – **մեյվա**:
Մլակ – **մօլ**:
Մխրճվել, խրվել, սուզվել – **նիյէլուշ**:

Մկրատ – **մակաս**:
Մյուսները, մեկելները – **մեգալօքը**:
Մնալ – **մեմուշ**:
Մշակովի, ընտանի, տնական – **դօնու, դանու**:
Մշտապես, միշտ, ամեն ժամանակ – **իժէ**:
Մշտապես ստվերոտ տեղ – **շէքանձ**:
Մոզի – **մօզի**:
Մոխիր – **մօխիր, քյուլ**:
Մոխրաման, մոխիր լցնելու տարա – **մօղրօմօն, մօղրաման**:
Մոծակ – **մէջախ**:
Մողես, խլեզ – **խլօզ, խէլօթ**:
Մոմ – **մօմ**:
Մոշ – **յուղ**:
Մոռանալ – **մօլէռուշ**:
Մոռացկոտ – **մօլէրգան**:
Մոտ – **մօդ**:
Մոտիկ, մերձավոր – **մօդիք**:
Մոտենալ – **մօդգէնուշ**:
Մորաքույր – **մօքուր** (արդ.՝ **մօքույ**):
Մորեղբայր – **քէրի**:
Մորը դիմելածն – **յէ մա**:
Մորթն գլխարկ – **փափախ**:
Մորթել – **մօրթուշ**:
Մորաքրոջ աղջիկ, տղա – **մօքուրի** (արդ.՝ **մօքույի**) **ախչիզ, դղա**:
Մորուք – **սաքալ**:
Մսագործ – **կասաբ**:
Մսուրք, մսուր (գոմում կենդանիներին կեր տալու տաշտանման տախտակամած) – **մէրսունք**:
Մտածել – **մէդածուշ**:
Մտնել – **մէդնուշ**:
Մտորել – **մըդուուշ, մէդօրուշ**:
Մտցնել – **մէթցէնուշ, խօթուշ, նէթիյուշ**:
Մտքին լինել – **մէթքին** (մըթքին) **էլլուշ**:
Մռայլվել – **մէռէլուշ**:
Մրմռալ կծու ուտելիքից – **գէձուշ, վառուշ**:
Մրջյուն, միջատ – **մէրջիմ**:
Մրսել – **մէսուշ**:

Մրտավարդ (մշտադալար թուփ, որի վարդագույն ծաղիկների եզրերը աստիճանաբար դառնում են մանուշակագույն) – **լաշի**:
Մուկ – **մուգ**:
Մուրացկան – **ժօղվիաջի, ժօղվիյա, ուզօղ**:
Մուր – **մուր**:
Մուրճ – **չագուշ**:

— 3 —

Յուղ – **յաղ**:
Յուղի մեջ տապակած միս, որ պահում են որպես ձմռան պաշար – **գաուրմա, գաումա**:

— Ե —

Նալիկ (փայտե ներբանով և երեսին կաշվե երիզով բոկոտիկ) – **նալին**:
Նախասարահ, կողասենյակ – **քօրկ, գօրք, կօրք**:
Նախորդ, անցյալ – **անցած, օնցած**:
Նախնի, ապուպապ – **ավալուբաբ**:
Նամազ – **նամազ**:
1. Նամակ: 2. թուղթ – **թուխթ**:
Նայել, հսկել, հոգալ – **փութ էնուշ, սէր էնուշ, աշուշ**:
Նապաստակ – **դաուշօն**:
Նավ – **գէմի**:
Նավթ, կերոսին – **գազաղի**:
Նարդի – **թավլա**:
Նեխել, փթել – **փէթուշ**:
Նետել – **նէդուշ**:
Նետել այն կողմ – **նէնցքուշ**:
Նետել այս կողմ – **նասկուշ**:
Ներբան – **օտքի թաթի դագ**:
Ներդաշնակել, հարմար լինել, սագել – **ումիշ էգուշ**:
Ներկայիս, արդի, հիմիկվա – **հիմիզու**:
Ներս գցել – **նէցքուշ**:

Ներս մտցնել – **նեթիյուլ**:
Ներքև – **նէրքէվ** (արդ.՝ **նէյքէվ**):
Ներքևի կողմ, ներքնամաս – **տայվա**:
Նիհար, վտիտ – **զաիվ**:
Նիհարել, բարակել – **փաագնուլ**:
Նկար – **ռէսիմ**:
Նման է – **լըմօնի գու**:
Նշանած – **նէշանլու, նըշանլու**:
Նոյեմբեր – **ուզումայի, ախլզյուս**:
Նոր տարի – **նօր դարի, նօր դաի** (արդ.՝ **նօյ դայի**):
Նորահարս – **նօահարս, նօարս** (արդ.՝ **նօայս**):
Նորացնել – **նօրցէնուլ**:
1. Նորոգել: 2. կրկնել: 3. հիշեցնել – **նօրցուլ**:
Նստել – **նէստուլ, նըստուլ**:
Նոսրացնել – **նօրսուլ**:
Նոր – **նօր** (արդ.՝ **նօյ**):
Նվագել – **չալուլ**:
Նվագ – **ջիղօզ**:
Նվեր, ընծա – **փախշիշ**:
Նուշ – **բադամ**:
Նուռ – **նուռ, նար**:

— Շ —

Շաբաթ (օր) – **չափաթ**:
Շաբաթ (7 օր) – **ավթա**:
Շագանակ – **մաշմուրք**:
Շագանակենի – **մաշմուրքի ձառ**:
Շալակել – **չագլուլ**:
Շաղ տալ, ցրել – **ցէրքուլ**:
Շամի, սոճի – **չամի, չօմի**:
Շան լակ – **չան լագ**:
Շան ձագ, լակոտ – **լագօտ**:
Շաշ – **չաշ**:
Շապիկ, վերնաշապիկ – **չաբիք**:
Շատ – **չադ**:
Շատանալ – **չադնուլ, շադէնուլ**:

Շատացնել – **չադընցուլ**:
Շարել – **չաուլ**:
Շարբաթ – **չարփաթ**:
Շարժել – **ժաժուլ**:
Շարժվել – **ժաժգէգուլ**:
Շեղք – **տէնագի պիօն**:
Շեն, սեն – **չիմ**:
Շերեփ – **չէէփ** (արդ.՝ **չէյէփ**):
Շերեփուկ – **քեդալբօջիկ, կեդալբօջիգ**:
Շերտ – **չէրդ**:
Շինել, պատրաստել, կառուցել – **չինուլ**:
Շիշ – **չուշէ**:
Շիտակ, ճիշտ – **չիդագ**:
Շղթա – **զէնջիլ**:
Շյուղ (գործելու) – **ջաղ**:
Շյուղերով գործել – **քօրծուլ**:
Շնագայլ – **դյափ, չախկալ**:
Շնորհակալություն – **խէնդաս** (մաղթանք է):
Շոգ – **չօք**:
Շոր – **չօր** (արդ.՝ **չօյ**):
Շտապ – **խարաթ, չաբուք**:
Շտապել – **խարաթ էնուլ**:
Շտկվել, ուղղվել, առողջանալ – **չիդգուլ, բէդքընուլ**:
Շուկա, առևտրի կենտրոն – **ձիյափ**:
Շուն – **չուն**:
Շունչ, շնչավոր, անձ – **չունչ**:
Շուռ տալ – **թարցէնուլ**:
Շուտ – **չուդ, թէգ**:
Շուրթ, շրթունք – **բէրբուք, բէրվուք**:
Շուրջը, շրջակայքը – **պօլօրը** (արդ.՝ **պօլօյը**):
Շուրջբլորը – **պօլօրնուք** (արդ.՝ **պօլօյնուք**):
Շուք, ստվեր – **չուք**:

— Ո —

Ոգի, ուրվական – **գանջէլօզ**:
Ոլորել – **օլէուլ**:

Ոխ , զայրույթ – սիրդ:
 Ողբալ, ողբալով գովել հանգուցյալին – քովուշ:
 Ողկույզ – ջութ:
 Ողնաշար – լէրթի մեչքեղաղի օսկորներ, բօչքելօխ:
 Ողողել, պարզաջրել, մաքրաջրել – մայնուշ:
 Ողջ, կենդանի – սաղ:
 Ոնց որ, կարծես, հավանաբար, ըստ երևույթին – թաքիղում,
 թաքիղիմ:
 Ոչ – օչ:
 Ոչինչ է, մի բան չէ – ինչիք չա (ասվում է շնորհակալություն
 հայտնելուն ի պատասխան):
 Ոչխար – օչխար (արդ.՝ օչխայ):
 Ոչխարի, այծի կղկղանք – գիգիդօր:
 Ոչ մեկի – ումէց:
 Ոջիլ – օջիլ:
 Ոջիլի ձվիկ, անիծ – անհնծ:
 Ոջլոտել – օջլօդուշ:
 Ոսկի – ալթուն:
 Ոստ, սրածայր փայտի կտոր – խօջ:
 Ոստնել, վեր թռչել – վեր թռչուշ:
 Ով – վօվ:
 Ոտնաման, կոշիկ – օտքաման, օտքօմօն:
 Ոտք – օտք:
 Ոտքի թաթ – օտքի թաթ:
 Ոտքի կօծ – օտքի կօկօջ:
 Ոտքի մատ – օտքի մադ:
 Ոտքի տակ, ներբան – օտքի թաթի դագ:
 Ոտքով, հետիոտն – օտքէնցի:
 Որ – ու:
 Որբևայրի, այրի – հօփէրվայի:
 Որդ – բօբօլ:
 Որդի – օրթի:
 Որը, որ մեկը – վօտ:
 Որջ, քարայր – մաղարա:
 Որոճալ – օրչուշ:
 Որոնել, զբոսնել – մօն էգուշ:
 Որոշել, ընտրել – ուուշուշ:

Որովայն, փոր – փօր (արդ.՝ փօյ):
 Որոտալ – օրդուշ:
 Որպեսզի – դէյ նա:
 Որսորդ – ավջի:
 Որսորդություն – ավջիլուդ:
 Որտեղ – վօրդաղ:
 Որտեղից – ուսթի:

— 2 —

Չամիչ – քիշմիշ, խավօղի չի:
 Չափ – չաք:
 Չափել – չափուշ:
 Չիր – չիր (արդ.՝ չիյ):
 Չկա – չգօ:
 Չղջիկ – մաշքէթափ:
 Չոչ անել, չորեքթաթ քայլել – փօջուշ:
 Չոր – չօր (արդ.՝ չօյ):
 Չոր տերև – չաչ, մօլ:
 Չորանալ – չօրնուշ:
 Չորացնել, ցամքել, ցամքեցնել – ցօքնուշ, ցօքնէցնուշ:
 Չորեքշաբթի – չօուքշաբթի:
 Չունևոր, չքավոր – չուննէվօր:

— 7 —

Պահ տալ, թողնել – օբօլ էնուշ:
 Պահել – բահուշ, բաուշ:
 Պահեստ – փազէն:
 Պահեստ մթերքի – սարբէն:
 Պաղեցնել, սառեցնել – բաղէցնուշ:
 Պայթել, տրաքել – փօքշուշ:
 Պայտ – նալ:
 Պայտել – նալուշ:
 Պանիր – բանիր, բօնիր:

1. Պանրի տեսակ, թելպանիր: 2. կաթնաշոռ – վազնատ:

Պապ – բաբ:

Պառավ – բառավ:

Պառաված, ծերացած – բառավցած:

Պառկել – բառգուշ:

Պատ – դաուբա (արդ.՝ դուվայ):

Պատառ, բրդուն – փեռթուչ:

Պատառաքաղ – չաթալ:

Պատառոտել, բզկտել, ծվատել – ցիլաղուշ:

Պատասխան – ջուղաբ, աղվեղ:

Պատիվ, հարգ – խաթր:

Պատմել – հեքիյաթ ընուշ:

Պատմություն, հեքիաթ – հեքիյա:

Պատշաճել, սազել – ումիշ էգուշ:

Պատշգամբ – փեքա:

Պատռել – պաղէռուշ, բաղէռուշ:

Պատռեցնել – բաղէռեցնուշ:

Պատրաստել, շինել, կառուցել – շինուշ:

Պատուհան – փեճցարա:

Պար – խաղ, հորօն, խօռօն:

Պարապ – սարապ շրջող, դատարկապորտ – ավաա:

Պարել – խաղուշ:

Պատուտակ, բաղեղ – սիյօղ:

Պարան – չվօն:

Պարանոց – ճիթ, ջիդ:

Պարզաջրել, ողողել, մաքրաջրել – մայնուշ:

Պարկ – թօրբա:

Պարկապզուկ, տիկ – դիգ, թուլում:

Պարտեզ – էրզվա, էրզվար:

Պարտք, փոխառություն – փօխ:

Պես, նման – բէս:

Պզել, վազելով փախչել – փեզուշ:

Պզուկ, բշտիկ – շուղ:

Պիծակ, իշամեղու – բուծէք, բուծէգ:

Պինչ, քթանցք, ռունգ – բինչ:

Պիտանի – բիդու:

Պիտի – բիդի:

Պլոկել, լղճել – լաղջուշ:

Պղինձ, պղնձե կաթսա – բաղինձ:

Պղտոր – բաղդօր:

Պնդուկ, տխիլ – գաղին:

Պնդուկենի, տխլենի – գաղնի:

Պոմիդոր, լուլիկ – լիլիգ, լիլիկ:

Պոչ – բօչ:

Պոչատ – բօչաղ, փօչաթ:

Պորտ – պօռդ, բօրդ (արդ.՝ բօրդ), բօռդիկ:

Պպզել, ոտքերը կծկել – գէձգուշ:

Պսպղալ – բէսպաղտուշ, բէսբաղդուշ:

Պտղունց – բէղէխ:

1. Պտպտալ: 2. ինքն իրեն խոսել – բօղբօղուշ:

Պտուկ – բէդուք:

Պուպրիկ՝ տիկնիկ, ծիսական տիկնիկ – բուբրիկ:

Պուտավոր – խատվօր:

— 2 —

Ջադու, պառավ չար կախարդ – չադու:

Ջարդել – չարթուշ (արդ.՝ չայթուշ):

Ջարդվել, մարմնի մասերը ցավալ – չարթեվուշ (արդ.՝ չայթեվուշ):

Ջարդոն – չարթուն (արդ.՝ չայթուն):

Ջերմ, տենդ – ջէրմ, ջէմրէ:

Ջրաղաց – չաղացք, ճախաժկ:

Ջրաղացի այն արկղը, որից ցորենը թափվում է աղորիքի մեջ – օղուն:

Ջրբաշխ – միրաբ:

Ջրծաղիկ (հիվանդություն) – չուրծաղիգ (արդ.՝ չույծաղիգ):

Ջրհորդան – սաչախի վաբ:

Ջուր – չուր (արդ.՝ չույ):

* Աղվեղ են ասում նախկին ԽՍՀՄ հանրապետություններում բնակվող կրոնափոխ համաձայնագրերը, իսկ Թուրքիայում բնակվողներն ասում են ջուղաբ:

Ռևոլվեր, ատրճանակ – լիվեռ:
Ռունգ, քթանցք, պինչ – բինչ:
Ռեհան – ռէյհան:

Սազ (նվագարան) – սազ:
Սազել, հարմար լինել, պատշաճել – ումիշ էգուշ:
Սալարկել – սալուշ:
Սալոր – տամուն, տոմուն:
Սալորենի – տամունի, տոմունի:
Սաժիլ – սադիր:
Սահման – սինոռ, գռանիցա՝:
Սահել – սահուշ:
Սայլ – սէլ:
Սայր, ածելի – ածելի, ուստռա:
Սանդերք (տախտակի վրա ամրացված երկշարք մետաղյա սանրերով հարմարանք, որով գզում են բուրդը) – սանդէք, սոնդէք:
Սանդուղք – ցքալա:
Սանձ – 1.նօղթան: 2.բելչաղ:
Սանր – սանդ(ր), սոնդ(ր):
Սանրել – սանդ(ր)ուշ, սոնդ(ր)ուշ:
Սառը – բաղ:
Սառչել – սառչուշ:
Սառցակալել – աղիմգէբուշ:
1. Սառույց: 2. եղյամ – աղիմ:
Սատկել – սադգուշ:
Սար – սար:
Սարդ – սարթ:
Սարդոստայն – սարթին պուն, սարթանփուն:
Սափրել, տաշել – դաշուշ:

* *Գռանիցա են ասում նախկին ԽՍՀՄ հանրապետություններում բնակվող կրոնափոխ համայնքները, իսկ Թուրքիայում բնակվողներն ասում են սինոռ:*

Սափրիչ – ուստռաջի:
Սելավ – սէլ:
Սեղան – դէփուր:
Սեղանատամ – հացի արգա:
Սեղմել, խցկել – սաղմուշ:
Սենյակ – հօդա, օդա:
Սեպ – չիվու:
Սեպտեմբեր – իստավրի, սիվտեգյուս:
Սերմ – սէրմ, հունդ, հումդ:
Սինձ – գաթի խօդ:
Սիրած էակ – յար:
Սիրել – հազ էնուշ:
Սիրտ – սիրդ (արդ.՝ սիրդ):
Սխալ – սաֆ:
Սխտոր – սաղթօր:
Սղալ, սայթաքել – սաղվուշ:
Սոխ – սօխ:
Սոճի, շամի – չամի, չօմի:
Սոսկ, միայն – սադէ:
Սովածանալ, քաղցածանալ – քաղցէնուշ:
Սովորել – սօրվուշ:
Սպանել – ցվօնուշ:
Սպասել – բէդ ընուշ:
Սպասք, ամանեղեն – օմէնդաք:
Սպիտակ – ջէրմագ:
Սպիտակել – ջէրմէգուշ:
Ստիպել, գոռել – զօռուշ:
Ստվեր – շուք:
Սրածայր փայտի կտոր, ոստ – խօջ:
Սրբել – սէպուշ, սէրփուշ:
Սրբերես մարդ (սրբի երեսի նմանվող դեմքով մարդ) – սէփէես մարթ:
Սրբվել – սէփէվուշ:
Սրինգ – գավալ:
Սրճագույն, դարչնագույն – գավէրնգի:
Սուզվել, մխրճվել, խրվել – նիյելուշ:
Սուլել – սէլվէլուշ:

Սուճկ – սուճգ:
Սուտասան – խափելուճի:
Սուրբ – էվլիյա:
Սև – թուխ:
Սևանալ (վատանալ, կապտել իմաստով) – սեվնուլ:
Սևուկ, թուխ – թուխուլիգ:

— Վ —

Վազ (խաղողի) – վազ:
Վազ անցնել, ձեռք քաշել – վազ օնցուլ:
Վազել – թեռչուլ:
Վազացնել, թոցնել, վռնդել, դուրս գցել – թեռցէնուլ:
Վաթել, հեղել – վաթուլ:
Վախ – վախ:
Վախենալ – վախուլ:
Վախկոտ – վախկօղ, վախկօն:
Վախվորել – վախվուլ:
Վաղ, շուտ – վաղ, թէգ:
Վաղը – հէքուց, էքուց:
Վաղը չէ մյուս օրը – մէգալ օը (արդ.՝ մէգալ օյը):
Վայր գցել – վար ցէքուլ:
Վայր դնել, մի կողմ դնել, պահել – վար թէնուլ:
Վայրի – վայի:
Վայրի տանձ – վայի դօնձ:
Վառարան – փէչքօ:
Վառարանի ծխատար խողովակ, խողովակ – բօրու:
Վառել, այրել – քօլուլ, կօլուլ:
Վառել – վառէգ, արլէրջութ:
Վաստակ – վասդագ:
Վատ – չօքութ, չօքուղ, քէշ:
Վատութիւն – չօքուղութիւն, չօքուղուտուն, քէշուտին:
Վար (մերքև) – վար (արդ.՝ վայ):
Վարակիչ հիվանդություն – նէնօսնուլի հիվանդութիւն, հի-
վօնդուտուն:
Վարդավառ (տոն) – Վարթեվօր, Վարթիվօր:

Վարտիք – վարդիք:
Վարունգ – խիյար:
Վարունգ (փոքր) – մաջուր:
Վերադառնալ, հետ դառնալ – յետ թառնուլ:
Վերադառնալ, տեղում պտտվել, կրոնափոխվել – թառնուլ:
Վերանալ, անհետ կորչել – նաբադի էլլուլ:
Վեր կենալ, արթնանալ, ոտքի կանգնել – վիյէլուլ:
Վերհանել, արթնացնել – վիյանուլ:
Վերցնել – վէգալնուլ:
Վերջանալ, փրկվել – խալէտուլ:
Վերջերս, ոչ վաղուց – փամբաան:
Վերջը – սօղը:
Վերջիվերջո, վերջապես – էդիսօղէ:
Վերք – խօց:
Վերևի – վէթու:
Վերև – վէէվ:
Վզնոց – հօմայիլ:
Վիզ – ճիթ, ջիդ:
Վիրավորվել, նեղանալ, զայրանալ – սերդէռուլ:
Վռնդել, հեռացնել, վազացնել – թեռցէնուլ:
Վտարանդի, գաղթական, փախստական – մուաջիր:
Վտիտ, նիհար – գաիվ, խիբար:
Վրա – վաա:
Վրա բերել, ծածկել – վաա փէուլ:
Վրայի – վայի:
Վրան քաշել, որևէ նյութով ծածկել, լաքապատել – ամնուլ,
օմնուլ:

— Տ —

Տագերկին, տեգերկին – միր, մէր:
Տալ – դէվուլ:
Տալիք, տալու գումար, պարտք, գին, փոխարժեք – դալիք:
Տախտակ – դախդագ:
Տակ, ինչ–որ բանի տակ – դագ:
Տամուկ, խոնավ – կէչ:
Տանել – դօնուլ, դանուլ:

Տանիք – **ծածուգ, մակաս:**
 Տանձ – **դօնձ:**
 Տանտիկին – **դօնգէնիգ:**
 Տանու, տնական, ընտանի, մշակովի – **դօնու, դանու:**
 Տաշել – **դաշուշ:**
 Տաշեղ – **դաշաղ:**
 Տաշտ – **դաշտ, լէեն, կարսան, կարսօն:**
 Տապակել – **դաբգուշ, գաուրմիշ ընուշ:**
 Տառապանք, անհանգստություն, հուզմունք – **մէրաղ:**
 Տավար – **դավար** (արդ.՝ **դավայ**):
 Տատ, մեծ մայրիկ – **մօմի, մէձ մօմ:**
 Տարագ, հագուստ, շոր – **հալավ, շօր** (արդ.՝ **շօյ**):
 Տարեկան – **դաազան, դաուզօն:**
 Տարի – **դայի:**
 Տաք – **դաք:**
 Տաքանալ – **դաքնուշ, շօղնուշ** (արևի շողերից տաքանալ, շատ տաքանալ):
 Տաքացնել – **դաքցուշ, դաքցէնուշ:**
 Տաքդեղ – **բիբէր:**
 Տեղավորել – **դաղավօրցնուշ:**
 Տեղեկություն, լուր – **խաբար:**
 Տեղը, փոխարեն – **դաղէ:**
 Տեղնուտեղը – **դաղնուդաղէ:**
 Տենդ – **ջէմրէ, ջէրմէ:**
 Տեսնել, ականատես լինել – **դէսնուշ:**
 Տեսնես, արդյոք – **քէգ:**
 Տեսնվել, հանդիպել – **դէսէվուշ:**
 Տերողորմյա, համրիչ, թգբեհ – **թասապախ:**
 Տերև – **դէյէբ, դէէբ, դիյէբ, դէրէբ:**
 Տիգ (բույսերի և կենդանիների մակաբույծ միջատ) – **դիգ:**
 Տիկ – **դիգ:**
 Տիկնակլոնձ, գարուկ – **աչգէրուկ:**
 Տիկնիկ – **կուկլիկ, բուբրիկ:**
 Տխմար, թույլ, տագնապահար – **խախալ:**
 Տկլոր, մերկ – **դէգլեգ:**
 Տղա – **դղա, մօնչ:**

Տնագ անել (ուրիշի շարժումը և խոսքը ծաղրական ընդօրինակել) – **դէնագ էնուշ:**
 Տնքալ – **դէփուշ:**
 Տոսախ (ծառատեսակ) – **դօսխի:**
 Տոտիկ – **դօդիք:**
 Տրաքել – **փօքշուշ:**
 Տրեխ – **չաախ, չաօխ, չրախ:**
 Տրեխի քուղ – **չաախի, չաօխի, չրախի չվօն:**
 Տրորել, ճգնել – **աջէրուշ:**
 Տուն – **դուն:**

— 8 —

Ցախ – **ցախ:**
 Ցած – **ցած:**
 Ցամբել, ցամբեցնել, չորացնել – **ցօքմուշ, ցօքմէցէնուշ:**
 Ցայտել – **ցաքթուշ:**
 Ցանել, սերմել, սփռել – **ցօնուշ:**
 Ցանկանալ, ուզել – **ուզուշ:**
 Ցանկապատ – **բաղ:**
 Ցանկապատել – **բաղուշ:**
 Ցանք՝ սերմած դաշտ – **ցան:**
 Ցավ – **ցավ:**
 Ցավել – **ցավուշ:**
 Ցատկել – **թուս թէռնուշ, տուս թէռնուշ:**
 Ցեխ – **ջօր, ջօռ:**
 Ցերեկ – **ցօուգ:**
 Ցեց – **ցեց:**
 Ցից խփել, ցցով հենել – **ցիցէնուշ:**
 Ցոգոլ, խակ ծիրան – **դաք քախի, դաք աբրիգօս:**
 Ցող – **շաղ:**
 Ցորեն – **ցօյին, ցօին:**
 Ցորենի ծղոտ – **սօմօն:**
 Ցտեսություն – **խօշթէկալ:**
 Ցրել, շաղ տալ – **ցէրքուշ:**
 Ցրտել – **ցէրդէռուշ:**
 Ցույց տալ – **ցուցէնուշ:**

Ցուրտ – **ցուրդ** (արդ.՝ **ցույդ**):

Ցուցամատ – **ցուցամահ**:

— ՈՒ —

1. Ու: 2. որ – ու:

Ուզել, ցանկանալ – **ուզուշ**:

Ուժասպառ, թուլացած – **խէշանգ**:

Ուժեղ – **զօվաթլի**:

Ուլունք – **հէլուն**:

Ուղարկել – **խերգուշ**:

Ուղեղ – **խուս**:

Ուղիղ, շիտակ – **շիդաք**:

Ուղղել – **շիդգուշ**:

Ում – **ում**:

Ումպ, կում – **զուլ, գում**:

Ունկ (ամանների) – **բօջ**:

Ունք – **էնքվի**:

Ուշադիր – **ուշար**:

Ուշաթափվել – **օսմէթուդ էլլուշ**:

Ուշանալ – **ուշանուշ**:

Ուռչել – **ուռչուշ**:

Ուռուցք – **ուռուցք, ուռ**:

Ուս – **ուս**:

Ուսը թիակով – **փէչք**:

Ուսով հրել, հրել – **ուուս դէվուշ**:

Ուսուցիչ – **գարթեցնօղ**:

Ուտել – **ուդուշ**:

Ուտելիք – **ուդէլիք**:

1. Ուտելու բան-ման: 2. կաթնամթերք – **թացօն, թացան**:

Ուտեցնել – **ուդէցնուշ**:

Ուր – **նօր** (արդ.՝ **նօյ**), **նօ**:

Ուր է – **ուվ ա**:

Ուր որ – **նօյիթուզ**:

Ուրվական, ոգի – **գանջէլօզ**:

Ուրախ – **շէն**:

Ուրբաթ – **ուփաթ**:

Ուրեմն, այդ դեպքում – **օյլէիտ**:

Ուրիշ – **ուիշ**:

Ուրիշներ – **խաք**:

Ուրց – **գիյիգի (գէյիգի) խօղ**:

— Փ —

Փաթաթել – **փաթթուշ**:

Փաթաթվել, փարվել – **փաթթելվուշ**:

Փախչել – **փախչուշ**:

Փախչել վազելով, պզալ – **փէզուշ**:

Փախստական, վտարանդի, գաղթական – **մուաջիր**:

Փախցնել, առևանգել – **փախցնուշ**:

Փակել (դուռը, պատուհանը և այլն) – **խաչնուշ, խաշնուշ**:

Փայլփլել – **փարփալուշ**:

Փայծաղ – **լաղու**:

Փայտ – **փաղ**:

Փայտ, որի վրա փաթաթվում է լորին – **խուչակ, խուչկա**:

Փայտածուխ – **խօնծօղօթ**:

Փայտփորիկ – **փաղբօրի**:

Փափկել – **փափուլիզնուշ**:

Փափուկ – **փափուլիզ**:

Փեթակ – **փուուք**:

Փեսա – **էնիշտա, փէսա**:

Փետրվար – **գյուջուխ**:

Փետրել, թեփռել – **թէրուշ**:

Փետել, պոկոտել – **փէդուշ**:

Փետուր – **թէրուր**:

Փերի, բարի ոգի – **փէրի** (արդ.՝ **փէյի**):

Փթել, նեխել – **փէթուշ**:

Փիփերթ – **թէրթէգիչ**:

Փլավքամիչ – **սուզգի, ծար, ծար** (արդ.՝ **ծայ**):

Փլվածք, խորխորատ – **փէլուցք**:

Փլվել – **փէլուշ, խէչուշ**:

Փշրել, մանրացնել, փսրել – **փէսօթուշ**:

Փոթ (սխալ կարի հետևանքով հազուստի անհարթ, ավելորդ մաս) – **փօթ**:

Փոթորկախառն անձրև – ֆուռթունա:

Փոկ – բելչաղ:

Փոխադրել, կրել – գերուշ:

Փոխառություն, պարտք – փոխ:

Փոխարեն, տեղը – դաղէ:

Փոխել – փոխուշ:

Փոխնակ (կնոջ մահից հետո կամ բազմակնության դեպքում ամուսնու երկրորդ կինը) – փոխնակ, փողնաք:

Փոխվել – փոխվուշ (օգտագործվում է նաև լողանալ և շորերը փոխել իմաստով):

Փող – փաա:

Փող մանրել – փաա քագուշ:

Փոշի – քօզ:

Փոս– գույ:

Փոր, որովայն – փօր (արդ.՝ փօյ):

Փորել – փօրուշ (արդ.՝ փօյուշ):

Փորսուղ, գորշուկ – հօղվերդեվիչ, խօղվերդեվիչ:

Փորփրել, քչփորել, խառնշտորել – փօթնուշ:

Փոցխ – փուցխիչ:

Փոցխել – փօցխօլուշ:

Փոքր – բիծիգ, բիծի:

Փոքր աղջիկ, աղջիկ երեխա – բուլիգ:

Փչել – փէչուշ, փողային նվագարանների դեպքում փեչուշ նշանակում է նվագել:

Փռել – փռուշ:

Փռշտալ – փէխենդուշ:

Փսխել – փէսխուշ:

Փտրել, փշրել, մանրել – փէսօրդուշ:

Փտել, նեխել – փէթուշ:

Փրկվել, վերջանալ – խալէսուշ:

— ք —

Քահանա – քաչիչ, քէչիչ:

Քաղաք – շահար, ձիյափ (նաև շուկա):

Քաղել – քաղուշ:

Քաղհանել – քայնուշ:

Քաղցած – քաղցած:

Քաղցածանալ – քախցեցուշ:

Քամանչա - քեմէնչէ:

Քամել – քօմուշ:

Քամի – փուչ (արդ.՝ քօմի):

Քամիչ – ձար (կտորից):

Քամոտ – փէչօտ:

Քայլել – քալուշ:

Քանդել – խէչուշ, ավիուշ:

Քաշ գալ – քաշ էգուշ:

Քաշել – քաշուշ:

Քաջ մարդ – սերդօղ մարթ:

Քառատող երգ – խաղ:

Քար – քար (արդ.՝ քայ):

Քարայր – մաղարա:

Քարկոծել – քարցօղէցուշ (արդ.՝ քայցօղէցուշ):

Քարկտիկ – հինգ քար:

Քենի– բալդիս:

Քենակալ – բաջանաղ:

Քեռակին – քերեգին (արդ.՝ քէյեգին):

Քեռի – քերի (արդ.՝ քէյի):

Քեռու աղջիկ, տղա – քերու (արդ.՝ քէյու) ախչիգ, դղա:

Քերել – քերուշ, քուշ (արդ.՝ քէյուշ):

Քերծել – քերծուշ:

Քթանցք, պինչ, ռունգ – բինչ:

Քիթ – քինթ, քիթ:

Քիչ – քիչ:

Քիվ – սաչաք:

Քլունգ – չափա:

Քղանցք – փէչ:

Քնել – քուն էլլուշ:

Քշել – քէշուշ:

Քորել – քիյուշ:

Քսել – քէսուշ:

Քսվել – քէսվուշ:

Քրիստոնյա – խիրիսթիյան:

Քրտինք – քերնիք:
Քրտնել – քերնուշ:
Քրքրել – քեքրուշ (արդ.՝ քեքրուշ):
Քույր – քուր (արդ.՝ քույ):
Քուն մտնել – քուն մեղնուշ:
Քուջուջ անել – քուջուջ ընուշ, փօջխօղուշ:
Քոչ՝ իրերով տեղափոխություն – քօշ, քյօշ:

— ԵՎ —

Եվ – ու, հեմ, համ:

— Օ —

Օգնական – մօրքեթ:
Օգնել – էնգեուշ:
Օգոստոս – աղօստօս:
Օգուտ – մավա:
Օգտակար լինել – մավա էլլուշ:
Օղա, սենյակ – հօղա, օղա:
Օժիտ – ջեյիգ:
Օձիք – գյօնգսագ:
Օղի – ըախի, վօղկա:
Օջախ, կրակարան – օջախ, բուրագ:
Օր – օր (արդ.՝ օյ):
Օրորել, ճոճել – օվուշ:
Օրորոց – օօցք:

Տարվա եղանակներ

Գարուն – քաուն, կաուն:
Ամառ – ամառ, օմառ:
Աշուն – աշուն:
Զմեռ – ցեմեռ:

Ամսանուններ

Հունվար – նօր դարի (արդ.՝ նօյ դայի):
Փետրվար – գյուջուխ:
Մարտ – մարդ:
Ապրիլ – աբրիլ:
Մայիս – մայիս:
Հունիս – քիյաս (քիյագ):
Հուլիս – չուրուխ (փաթել ամիս):
Օգոստոս – աղօստօս (օղօստօգ):
Սեպտեմբեր – իստավրի, սիվտեգյուս (սիֆտեգյուգ):
Հոկտեմբեր – օխտավրի, օրտագյուս (օրտագյուգ):
Նոյեմբեր – ուզումայի, ախլգյուս (աղէրգյուգ):
Դեկտեմբեր – գարաքիշ, գաաքէշ:

Շաբաթվա օրեր*

Երկուշաբթի – էրգուշափթի:
Երեքշաբթի – իյէքշափթի:
Չորեքշաբթի – չօուքշափթի:
Հինգշաբթի – հինգշափթի:
Ուրբաթ – ուփաթ:
Շաբաթ – շափաթ:
Կիրակի – գիագի (արդ.՝ գիյագի):

* Մեկ շաբաթը (7 օրը) անվանում են *ալթա*:

Թվեր

Մեկ – մեգ:
Երկու – էրգուս (եգուս):
Երեք – իյէք (յիէք):
Չորս – չօրս (արդ.՝ չօյս):
Հինգ – հինգ:
Վեց – վեց:

Յոթ – **օխտ, օխտը**:
 Ութ – **ութ**:
 Ինը – **ինը (ինն)**:
 Տասը – **դասը (դաստ)**:
 Տասնմեկ – **դասնումեկ**:
 Տասներկու – **դասնուերկուս (դասվերկուս)**:
 Տասներեք – **դասնույեք (դասվիյեք)**:
 Տասնչորս – **դասնուչորս (արդ.՝ դասնուչոյս)**:
 Տասնհինգ – **դասնուհինգ**:
 Տասնվեց – **դասնուվեց**:
 Տասնյոթ – **դասնուօխտը**:
 Տասնութ – **դասնըութ**:
 Տասնիմը – **դասնուիմը (դասնուիմն)**:
 Քսան – **սօն, սան**:
 Երեսուն – **էսուն**:
 Քառասուն – **քառսուն**:
 Հիսուն – **իսուն (հիսուն)**:
 Վաթսուն – **վացուն**:
 Յոթանասուն – **օխտանասուն, օխտենասուն, օխտնասուն, օխտսուն**:
 Ութսուն – **ութանասուն, ութենասուն, ութնասուն, ութցուն**:
 Իննսուն – **իննենասուն, իննասուն, ինեսուն**:
 Հարյուր – **հաուր, հարու**:
 Երկու հարյուր – **երգու, էգու հաուր**:
 Երեք հարյուր – **իյեք, յիեք հաուր**:
 Չորս հարյուր – **չօրս (արդ.՝ չօյս) հաուր**:
 Հինգ հարյուր – **հինգ հաուր**:
 Վեց հարյուր – **վեց հաուր**:
 Յոթ հարյուր – **օխտն հաուր**:
 Ութ հարյուր – **ութ հաուր**:
 Ինն հարյուր – **ինն հաուր**:
 Հազար – **հազար**:

Ի տարբերություն Ազարիայից 1944թ. Միջին Ասիա արտորվածների, Խոփայի գավառի կրոնափոխ համալսարանի միայն տարեցներն են հիշում 70, 80, 90 թվականների հայերեն անվանումները, իսկ միջին սերունդն օգտագործում է դրանց թուրքերեն համարժեքները՝ յեթմիշ, սեքսն, դօքսան:

Գույների անուններ

Բաց կապույտ, երկնագույն – **հավարնգի**:
 Դեղին – **սարի (արդ.՝ սայի)**:
 Կանաչ – **յեշիլ**:
 Կարմիր – **գարմի**:
 Կապտամանուշակագույն – **սեվ**:
 Կապույտ – **մավի**:
 Երմակ, սպիտակ – **ջերմակ, ջերմագ**:
 Սրճագույն, դարչնագույն – **գավերնգի**:
 Սև – **թուխ**:

Ծառերի անուններ

Բարդի – **կավախի**:
 Դեղձենի – **տախցի**:
 Թեղի, կնձենի – **թաղի**:
 Թզենի – **թեզենի**:
 Թթենի – **թեթենի**:
 Թխկենի – **թ(ե)խթկի**:
 Լաստենի – **բեցխի**:
 Լորենի – **լօրի (արդ.՝ լօյի)**:
 Խնձորենի – **խենձորնի, խենձորի ձառ**:
 Ծառատեսակի անուն – **ցեմդանի**:
 Ծառատեսակի անուն – **ուդուխփի**:
 Ծառատեսակի անուն – **մօնի**:
 Ծառատեսակի անուն – **հօղփաղենի**:
 Ծվաղենի, դափնեկեռասենի – **ձեվաղնի**:
 Կաղամախի – **արջի**:
 Կաղնի – **խօզգաղնի**:
 Հաճարենի – **աժրի**:
 Չիթենի – **զեթունի ձառ**:
 Շագանակենի – **մաշմեքի ձառ**:
 Սոճի, շամի – **չամի, չօմի**:
 Սալորենի – **տօմունի**:
 Տոսախ – **դօսխի**:

Աներ – գայնաթա:
 Աներորդի, աներծագ – գայնի:
 Անուսին – մարթ (արդ.՝ մայթ):
 Եղբայր – ախպար (արդ.՝ ախպայ):
 Զարմիկ – եգէն:
 Զոքանչ – գայնանա, անալուղ:
 Թոռ – թոռ:
 Խնամի – դօստ:
 Ծոռ – թօռի դղա:
 Հայր – դադ:
 1. Հարս: 2. ազգականի կին – հարս (արդ.՝ հայս):
 Հորեղբայր – հօպար (արդ.՝ հօպայ):
 Հորեղբոր աղջիկ, տղա – հօպօր (արդ.՝ հօպօյ) ախչիգ, դղա:
 Հորաքույր – հօքուր (արդ.՝ հօքույ), խալա:
 Հորաքրոջ աղջիկ, տղա – հօքուրի (արդ.՝ հօքույի) ախչիգ, դղա:
 Հորեղբոր կին – օղօգին:
 Մայր – մար (արդ.՝ մայ):
 Մորաքույր – մօքուր (արդ.՝ մօքույ):
 Մորաքրոջ աղջիկ, տղա – մօքուրի (արդ.՝ մօքույի) ախչիգ, դղա:
 Պապ – բաբ, բաբի:
 Սկեսրայր – գայնաթա բաբ:
 Տագր – դաքր:
 Տագրակին, տեգերկին – ներ, նիր:
 Տատ – մօմ, մօմի:
 Փեսա – փեսա, էնիշտա:
 Քենակալ – բաջանաղ:
 1. Քենի: 2. ամուսնու քույր – բալդիս:
 Քեռակին – քերեգին (արդ.՝ քեյեգին):
 Քեռի – քերի (արդ.՝ քեյի):
 Քեռու աղջիկ, տղա – քերու (արդ.՝ քեյու) ախչիգ, դղա:
 Քույր – քուր (արդ.՝ քույ):

Ատամ՝ – ագռա, արգա, առգա (արդ.՝ այգա):
 Աչք – աչփի:
 Արտասուք, արցունք – արդեցուք:
 Արմունկ – արմուգ:
 Ափ – ափ:
 Ազդր – բաջաղ, բաջախա:
 Աղիք – ջիջու:
 Ականջի բլթակ – փեփելա:
 Ականջ – օնգուչ:
 Բեղ – բախ:
 Բերան – պիօն (արդ.՝ պիյօն), պիան:
 Բշտիկ, պզուկ – շուղ:
 Բռունցք – յունրուղ(խ):
 Բուք – փուղ, փունթ:
 Գարուկ, տիկնակլոնձ – աչգերուկ:
 Գոտկատեղ – մէչք:
 Գլուխ – քէլօխ, կէլօխ:
 Գորտնուկ – քօրթնուք:
 Դաստակ – թաթ:
 Դաստակի կոճ – թեփ կօկօչ:
 Եղունգ – աղունք, աունք:
 Երես – էես (արդ.՝ էյես):
 Երիկամ – իլիգօմ:
 Թարախ – թաախ:
 Թարթիչ – թերթեվուց:
 Թուք – թուք:
 Թոք – ջերմագ ջիգար:
 1. Թև: 2. ձեռք՝ – թեվ:
 Ժանիք – շունի ագռա:
 Լյարդ – թուխ ջիգար:

* Բոլոր 32 ատամներն ունեն իրենց անունները, սեղանատամը կոչվում է հացի ագռա, կա շունի ագռա և այլն:
 ** Ձեռք բառը նրանց անձանոթ է, թեվ են ասում և՛ թկին, և՛ ձեռքին: Ձեռքի ներսի կողմին ասում են ափ, որը հաճախ փոխարինում է ձեռք բառին:

Լեզու – լիզու:
 Խալ – նէժօն, նէշան, նըշան:
 Խլինք – խինչ:
 Ծոծրակ – զօռզագ:
 Ծունկ – ծունգ:
 Ծնկոսկր – ծունգի լիսեր, լիսօր:
 Ծնոտ – չէնգյա:
 Կոկորդ – բօղազ:
 Կրունկ – գիյօնգ, գէունք:
 Կոկորդի խնծորակ – կօկօրդ:
 Կնճիռ – խաթ:
 Կուրծք – ձիձ:
 Կրծքավանդակ – սերդ (արդ.՝ սէյդ):
 Կրծքավանդակի մազ – սերդի (արդ.՝ սէյդի) մազ:
 Ծակատ – ջագաթ:
 Ծկույթ – ջգույթ:
 Մարմնի վրա աճած մսի փոքր գունդ – դուլթ:
 Մազ – մազ:
 Մատ – մաղ:
 Մարմին – մարմին, վաչուտ, օնքս:
 Միջնամատ – մէջքեղաղի մաղ:
 Մատնեմատ – նշօնի մաղ:
 Մեզ – շէռ:
 Մեջքն ամբողջությամբ – լէրթ:
 Միզապարկ – շէրօմօն, շէրօման:
 Մորուք – սաքալ:
 Շրթունք – բէրբուք, բէրվուք:
 Ոտք – օտք:
 Ոտքի թաթ – օտքի թաթ:
 Ոտքի կոճ – օտքի կօկօչ:
 Ոտքի մատ – օտքի մաղ:
 Ոտքի տակ, ներբան – օտքի թաթի դագ:
 Ողնաշար – բօչքէլօխ, լէրթի մէջքեղաղի օսկօրներ:
 Պեպեն – բուդբուդ:
 Պզուկ, բշտիկ – շուդ:
 1. Պորտ: 2. պորտալար – բօրդ (արդ.՝ բօյդ), բօրդիկ, պօռդ:
 Պտուկ – բէդուք:

Սիրտ – սիրդ (արդ.՝ սիյդ):
 Սեղանատամ – հացի ագռա:
 Վերք – խօց:
 Վիզ – ձիթ, ջիդ:
 Տղա երեխայի պուպուկ – բիբիլ:
 Ցուցամատ – ցուցամաղ:
 Ռեղեղ – խուս:
 Ռինք – էնքվի:
 Ռեռուցք – ուռուցք, ուռ:
 Ռես – ուս:
 Ռեսը թիակով – փէչք:
 Փայծաղ – լաղու:
 Փոր – փօր (արդ.՝ փօյ):
 Քիթ – քինթ, քիթ:

«ԿԱՐԵՎՈՐ ՍԿՁԲՆԱՂԲՅՈՒՐ ՄԱՀՄԵԴԱԿԱՆԱՅՎԱԾ
ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ»
ՀՈԳՎԱԾԻ ՎԵՐԱՏՊՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ ՈՐՈՇ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ

Երբ 1992թ. հնարավորություն ունեցա կարճ ժամանակով լինել Վենետիկի Սբ. Ղազար կղզում, առիթից օգտվելով փորձեցի ծանոթանալ Մխիթարյան միաբանության անդամ Հայր Պողոս վրդ. Մեհերյանի (1729-1814թթ.) հուշագրությանը¹: Այն փնտրում էի, որովհետև «Բազմավեպի» 1919թ. 9-րդ համարում Հայր Բարսեղ վրդ. Սարգիսյանը, առաջարկելով հայության թիվը հաշվելիս աչքաթող չանել նաև բռնի կրոնափոխվածներին, Պողոս վրդ. Մեհերյանի հուշագրությունից վերապատմում էր մահմեդականացված համշենահայերի հետ նրա հանդիպումից մի դրվագ²: Քանի որ Բ. վրդ. Սարգիսյանի վերապատմածը բացառիկ արժեքավոր էր, բնական էր, որ առաջին իսկ առիթի դեպքում փորձեցի ծանոթանալ Պ. վրդ. Մեհերյանի ձեռագրին: Ցավոք, պարզվեց, որ Բ. վրդ. Սարգիսյանը հարազատ չի մնացել բնագրին: Պ. վրդ. Մեհերյանի հուշագրությունից մի քանի հատվածներ պատճենահանելով վերադարձա երևան, հույս փայփայելով, որ շուտով դրանք կդարձնեն գիտական հանրության սեփականությունը: Բայց, ավաղ, պետական պաշտոնյայի հոգնեցուցիչ առօրյան և չկանոնակարգված աշխատաժամանակը հնարավորություն չէին ընձեռում նստել գրադարաններում: Բացի այդ, էներգետիկ ճգնաժամի տարիներին, աշխատանքից հետո, երեկոյան մութ ժամերին անհնար էր գիտությամբ զբաղվել: Եվ միայն 1998-ին «Իրան-Նամեում» հրատարակված իմ «Համշենցի մուսուլման հայերի ուսումնասիրության պատմությունից»³ հոդվածում կարողացա Պ. վրդ. Մեհերյանի հուշագ-

¹ Պատմութիւն վարուց Տեառն Հ. Պողոս վարդապետի Մեհերեան, շարագրեալ յիւրմէ 1811, Վենետիկ, ի վանս սրբոյն Ղազարու, Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարան, ձեռ. N 560:

² Սարգիսեան Բ., Վիճակագրական նոր տեսութիւն մը ի նպաստ անկախ Հայաստանի, «Բազմավեպ», 1919, N9, էջ 284-285:

³ Վարդանյան Ա., Համշենցի մուսուլման հայերի ուսումնասիրության պատմությունից, «Իրան-Նամե», 1998, N1-2-3, էջ 2:

րությունից մի փոքր հատված տպագրել: Հոդվածը հաջորդ տարի թարգմանաբար լույս տեսավ Ֆրանսիայում՝ Գրենոբլում⁴:

Պ. վրդ. Մեհերյանի «Պատմութիւն վարուց...»-ին կարողացա անդրադառնալ միայն 2002-ից հետո, երբ մեր հիմնարկության՝ ՀՀ կառավարությանն առընթեր կրոնի գործերի պետական խորհրդի լուծարման հետևանքով արդեն չէի աշխատում: Եվ ահա, 2004-ին «Պատմա-բանասիրական հանդեսում» լույս տեսան իմ «Կարևոր սկզբնաղբյուր մահմեդականացված հայերի մասին»⁵, իսկ «Չայն համշենական» ամսաթերթում՝ «1776թ.-հանդիպում մահմեդականացված համշենահայերի հետ»⁶ հոդվածները, որոնցում տպագրվեցին նաև Պ. վրդ. Մեհերյանի հուշագրության Համշենի խնակ գյուղի, ինչպես նաև ճորոխի ավազանի կրոնափոխ հայերի մասին պատմող էջերը: Դրանք հրատարակության պատրաստելիս անհրաժեշտություն ծագեց բնագրագիտական ճշտումներ անելու համար խորհրդակցել իմ վաղեմի բարեկամ, Մատենադարանի գլխավոր ավանդապահ Գևորգ Տեր-Վարդանյանի հետ: Քանի որ նա պետք է ուսումնասիրություններ կատարեր Վենետիկի Մխիթարյանների ձեռագրատանը, ուստի խնդրեցի, որ նա հետամուտ լիներ և հրատարակության պատրաստեր 18-րդ դարի Հայաստանի և տարբեր երկրների հայության մասին պատմող այդ եզակի վավերագիրը: Եվ, փառք Աստծո, նա բազմաչարչար և բժախնդիր աշխատանքով «Բազմավեպ» հանդեսում 2005-2007թթ. իրականացրեց Պ. վրդ. Մեհերյանի ձեռագրի հրատարակությունը⁷:

⁴ Vartanian S., *Des Armeniens oubliés*, «Azad magazine», Grenoble, 1999, N3 (N87), p. 16-17, N4 (N88), p. 16-17, 2000, N1 (N89), p. 16-17:
⁵ Վարդանյան Ս., *Կարևոր սկզբնաղբյուր մահմեդականացված հայերի մասին*, «Պատմա-բանասիրական հանդես», 2004, N3, էջ 159-170:
⁶ Վարդանյան Ս., *1776թ.-հանդիպում մահմեդականացված համշենահայերի հետ*, «Չայն համշենական», 2004, N4-5:
⁷ Պատմութիւն վարուց Հայր Պողոս վարդապետի Սեփեան. *Հարագրեալ յիրմէ 1811, Վենետիկ, ի վանս սրբոյն Ղազարու, հրատարակութեան պատրաստեց Գեորգ Տր-Վարդանեան, «Բազմավեպ», 2005, N1-4, էջ 412-488, 2006, N1-4, էջ 5-105, 2007, N1-4, էջ 8-129:*

2005թ. հոկտեմբերի 13-15-ը Սոչիում (Ադլերում) կայացավ «Համշենը և համշենահայությունը» թեմայով միջազգային գիտաժողով, որտեղ ես կարդացի «Մահմեդական համշենահայերի մասին 1776թ. մի կարևոր վկայություն» զեկուցումը, որը ռուսերեն թարգմանությամբ հրատարակվեց «Еркрамас»⁸ (Կրասնոդար) և «Չայն համշենական»⁹ ամսաթերթերում:

Այնուհետև այն տպագրվեց գիտաժողովի զեկուցումների հայերեն¹⁰ և թուրքերեն¹¹ ժողովածուներում: Հայր Պ. վրդ. Մեհերյանի «Պատմութիւն վարուց ...»-ին համառոտ անդրադարձել եմ նաև 2008թ. հրատարակված իմ երկու հոդվածներում¹²:

Հաշվի առնելով կրոնափոխ համշենահայության պատմության ուսումնասիրման համար Պողոս վրդ. Մեհերյանի հուշագրության հիշյալ էջերի բացառիկ նշանակությունը, որպես հավելված, վերատպում եմ «Պատմա-բանասիրական հանդեսի» 2004թ. N3-ում լույս տեսած «Կարևոր սկզբնաղբյուր մահմեդականացված հայերի մասին» իմ հոդվածը, իսկ վերջում, ընթերցող լայն շրջանակներին հասկանալի դարձնելու նպատակով, ներկայացնում եմ նաև Պողոս վրդ. Մեհերյանի հուշագրության հատվածները՝ արդի արևելահայերենով:

⁸ *Варданян С., Свидетельство 1776 года об исламизированных армянах Амшена, “Еркрамас”, 2005, N10.*
⁹ *Варданян С., Одно важное свидетельство 1776 года об амшенских армянах – мусульманах, «Չայն համշենական», 2007, N3-4:*
¹⁰ *Վարդանյան Ս., Մահմեդական համշենահայերի մասին 1776թ. վերաբերող մի կարևոր վկայություն, Համշեն եւ համշենահայութիւն (գիտաժողովի նիւթեր), Երեւան – Պէյրուս, 2007, էջ 269-277:*
¹¹ *Vardanyan Sergey. 1776 Yılına Ait : Müslüman Hemşinli Ermeniler Hakkında Önemli Bir Şehadetname, Hemşin ve Hemşinli Ermeniler (konferans makaleleri), Yerevan, 2007. s.278-286.*
¹² *Վարդանյան Ս., Կրոնափոխ համշենահայերի ուսումնասիրման պատմությունից, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի «Տեղեկագիր», 2008, N22, էջ 20-44: Նույնի, Բռնի կրոնափոխված համշենահայերի ուսումնասիրման պատմությունից, «Չայն համշենական», 2008, N9-10, N11-12:*

ԿԱՐԵՎՈՐ ՍԿՁԲՆԱԳՐՔՈՒՐ ՄԱՀՄԵԳԱԿԱՆԱՅՎԱԾ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

Դարեր շարունակ հայ ժողովրդի պատմությունն ուղեկցվել է օտար լծի դեմ պայքարով, ջարդերով և բռնի կրոնափոխություններով: Մի առանձին հետաքրքրություն են ներկայացնում կրոնափոխ համշենահայերը, որոնց դեռևս XIX դ. անդրադարձել են հայ և օտար մի շարք գիտնականներ՝ Ղուկաս վրդ. Ինճիճյանը¹, Մինաս վրդ. Բժշկյանը², գերմանացի գիտնական Կարլ Կոխը³, Սարգիս Յայկունին⁴, Պ. Թումայանցը⁵ և այլք: Այս թվարկումը, թերևս, պետք էր սկսել Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Յ. Պողոս վրդ. Մեհերյանով, որը Համշենի Խևակ գյուղում եղել է դեռևս 1776 թ. և իր «Պատմություն վարուց...»⁶ հուշագրության մեջ խիստ կարևոր տեղեկություններ է հաղորդում: Թեև հուշագրությունը հայագիտության համար ունի բացառիկ արժեք, բայց ցայսօր մնացել է անտիպ:

Յ. Պողոս վրդ. Մեհերյանը ծնվել է Մշո Առինճ գյուղում 1729 թ., քահանայացել է 1767-ին⁷: Մխիթարյանների մատե-

նադարանի համար ծեռք է բերել արժեքավոր ձեռագրեր⁸: Եղել է Եվրոպայի (Յունգարիա, Գերմանիա, Յուլանդիա, Իտալիա և այլն) և Արևելքի (Թուրքիա, Եգիպտոս, Սիրիա և այլն) մի շարք երկրներում, մինչևիսկ հասել է Հնդկաստան և այդ ամենի մասին կենդանի ոճով պատմել է 1811թ. 82 տարեկանում գրած իր, հիրավի, բացառիկ արժեքավոր հուշագրության մեջ: Պ. Մեհերյանը մահացել է Վենետիկի Ս. Ղազար կղզում 1814թ. փետրվարի 26-ին⁹ 85 տարեկան հասակում: Թեև Ղուկաս Ինճիճյանն իր «Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի» աշխատության Ա հատորը հրատարակել է 1806-ին, այսինքն, ավելի վաղ, քան Մեհերյանն է իր հուշագրությունը գրել, բայց համադրելով Համշենի Խևակ գյուղի մասին նրա և Ինճիճյանի հաղորդածները, կարելի է ենթադրել, որ տեղեկատվության աղբյուրը (գուցե բանավոր) Պողոս Մեհերյանն է: Ղուկաս Ինճիճյանն իր գրքի «Հեմշիրե կամ Համշեն» բաժնում գրում է. «Խևակ: Գիւղ իբր 8 ժամավ հեռի ի Համշեն, և իբր 3 ժամավ ի Խոտրջրոյ ի հիւսիսակողմն նորա, կառուցեալ ի լանջակողմն բարձր լեռին. բնակիչք նորա առհասարակ տաճիկք իբրև 200 տունք դարձեալք յազգէս հայոց. և իբր 5 կամ 6 տունք մնացեալք ի հայոց. գտանի ի սմա մեղր ընտիր: Անցանտ առ նովաւ Պէժանկէտ վտակ, որ խառնի ի ճորոխս»¹⁰:

Պողոս վրդ. Մեհերյանից մոտ յոթ տասնամյակ անց՝ 1843-1844թթ. Բարձր Յայքում և ճորոխի ավազանում է լինում Ենայի

¹ Ղ. Ինճիճեան. *Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի. մասն առաջին. հ. Ա, Վենետիկ, 1806, էջ 396-397:*

² Մ. Բժշկեան. *Պատմութիւն Պոնտոսի, որ է Սեաւ ծով. Վենետիկ, 1819, էջ 92-93, 97:*

³ K.Koch. *Wanderungen im Oriente während der Jahre 1843 und 1844, II. Reise im Pontischen Gebirge und i türkischen Armenien. Weimar, 1846.*

⁴ Ս. Յայկունի. *Նշխարներ, կորած ու սոռացուած հայեր (Տրապիզոնի հայ-մահմետական գիւղերն ու նրանց աւանդութիւնները). - «Արարատ», Վաղարշապատ, 1895, N7, էջ 239-243, N8, էջ 293-297: Ս. Յայկունի. *Տէր Կարապետ քահանայ Թորոսլիցի.-Յայոց նոր վկաները (1155-1843), աշխատասիրութեանը Յ. Մանանդեանի եւ Յ. Աճառեանի, Վաղարշապատ, 1903, էջ 702-709: Ս. Յայկունի. Յուսէփցի ազգատոհմ և տարօրինակ աւազակ Աբրիեօմ Տրապիզոնի հայ գիւղերու մէջ, 1795-1840. Վաղարշապատ, 1905, էջ 5-8:**

⁵ Պ. Թումայեանց. *Պոնտոսի հայերը. աշխարհագրական եւ քաղաքական վիճակ Տրապիզոնի. - «Լումայ», Տփլիս, 1899, յուլիս, էջ 174-177:*

⁶ *Պատմութիւն վարուց Տեառն Յ. Պողոս վարդապետի Մեհերեան, շարագրեալ յիւրմէ 1811 Վենետիկ, ի վանս սրբոյն Ղազարու (այտուհետև՝ Պ.Մեհերյան). Վենետիկի Մխիթարյան միաբանութեան մատենադարան, ծեռ. N 560:*

⁷ *Մխիթարեան յոբելեան 1701-1901. Վենետիկ.- Ս. Ղազար, 1901, էջ 218:*

⁸ Բ. Սարգիսեան, Գ. Սարգսեան. *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ. հ. Գ, Վենետիկ, 1966, էջ 1-49: Ս. Ճեմճեմեան. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ. հ. Դ, Վենետիկ, 1993, էջ ժԹ-Ի: Յ. Պողոսը 1775 թ. մի շրջիկ մանրավաճառ (փերեզակ) տիրացուի հանձնարարում է գալառներում իր համար ձեռագրեր գնել: Տիրացուն Համշենում իջևանում է 60 տարի առաջ բռնի մահմետականություն ընդունած մի հայի տանը, ուր տեղեկանում է, որ տանտերը ամեն շաբաթ երեկո ի պատիվ նախնիներից ժառանգած Ավետարանի (իրականում՝ Մաշտոցի) կանթեղ է վառում: Տիրացուն բազում թախանձանքներով գնում է այդ մեծադիր մատյանը, որն էլ Յ. Պողոսը ուղարկում է Վենետիկ: IX-X դդ. թվագրվող այս ձեռագիրը ցայսօր հայտնի ամենահին Մաշտոցն է (տես Բ. Սարգիսեան. *Նշվ. աշխ., էջ 4-5, Ս. Ճեմճեմեան. Նշվ. աշխ., էջ ժԹ, ինչպես նաև՝ Յ. Գր. Ս. Ա Մաշտոցը. - «Բազմավեպ», 1949, N 5-6, էջ 114-115):**

⁹ *Մխիթարեան յոբելեան, էջ 218:*

¹⁰ Ղ. Ինճիճեան. *Նշվ. աշխ., էջ 397:*

և Բեռլինի համալսարանների պրոֆեսոր, նշանավոր գիտնական Կարլ Կոխը: Ըստ նրա՝ Խևակը, որը մտնում էր Բերդագրակ գավառի մեջ, «կը կազմվի հինգ թաղեր (կամ գյուղամասեր) և ունի իբր 200 տուն՝ 1000 մինչև 1200 բնակչով»¹¹: Կոխը Խևակում մեծամասնություն կազմող մահմեդականների հետ հիշատակում է նաև հույն և հայ քրիստոնյաների. «Այսօր տակավին միայն երկու գյուղեր (Կարմիրք և Խոտորջուր) հայ-կաթողիկյա քրիստոնյաներն մինակ բնակյալ են. մինչդեռ չորս ուրիշ գյուղերու մեջ (Կուտրաշեն, Նիխաղ, Մոխրկուտ և Խևակ) հույն և հայ քրիստոնյաներ մահմեդականաց մեջ կը բնակին»¹²:

3. Հակոբոս Տաշյանը, որը քաջածանոթ էր Բարձր Հայքին և ճորոխի ավազանին, գրում է. «Եթե արդեն Բերդագրակի մեջ հավանորեն կային, ինչպես ի Թորթում՝ վրացածես հայեր. անշուշտ փոքր թիվ մ'ալ բուն վրաց կամ քրիստոնյա լագերու: Եւ թերևս ավելի ասոնց մնացորդներն համարելու ենք այն այլևայլ «յոյնք»՝ որ կը հիշվին հոս հոն նաև ժԹ. դարու սկիզբը. թեև աննշան թվով, որոնք այսօր անհետ եղած են, քան թե հարազատ հույներ, թեև ասոնցմե ալ այլևայլ տներ կրնան գտնված ըլլալ՝ որևէ առթիվ հաստատված»¹³: Ի դեպ, Մեհերյանը ևս հիշատակում է մի վրացի քահանայի, որը հովվում էր «գզհւղ մի մերձ Խեւակայ, որք յունաց դաւանութեամբք էին»¹⁴:

Խևակի մերձակա լեռների սառնաշունչ բնության Մեհերյանի՝ համառոտ, և Կոխի ընդարձակ նկարագրությունները ևս ընդհանրություններ ունեն: Մեհերյանը Խևակում է եղել սեպտեմբերին և գրում է, որ այդ զարհուրելի ծյունապատ լեռներով արդեն հոկտեմբերին «ոչ ոք կարէ անցանել»¹⁵: Կոխը նույն վայրերում եղել է օգոստոսին և զեղարվեստորեն է պատկերում ամռանն անհարիր ցրտաշունչ համայնապատ-

կերը. «Սառուցյալ հով մը կը փչեր, երբ վերջապես երկրորդ անգամ Պոնտական լեռանց բարձունքն հասանք. Խևակի լեռան բարձունքն այնտեղն, ուրկե երեկ անցած էինք, մեր ներքևը կ'իյնար տակավին. մեզմե վեր կը բարձրանային միայն սևագորշ, փլածներե կազմված քարակույտեր և կամ հաղթ, մեծազանգված հավիտենական թանձր սառույցով ու ծյունով ծածկված սարագլուխներ, Հելուետիո կատարներուն ոչ աննման: Հագիվ 100 ոտք վերը կը սկսեր ծյան շրջանակը, ուր բյուրավոր դարերե վեր սառած ջրույն յուր ծորելի կերպարանը նորեն տալ չի կրնար արևու որևէ ճառագայթ: Որչափ ալ մերթ ընդ մերթ ցրտության սարսուռ մը դողացներ մարմինս, ելա մագլելով բարձունք մ'ալ. և արդեն ցանցառ բուսականությունը հանկարծ դադրեցավ: Չախ կողմ կ'իյնար լայն Քաջքար, որուն կատարը չէի կրնար տեսնել՝ մոտ ըլլալուն, և աջ կողմն անկե թերևս քիչ մ'ավելի ցած լեռ մը Սև ծովու և ճորոխի միջև ջրաբաշխ եղող այս հաղթ լեռան թիկանց վրա կը հանգչեր: Առջևս, ոտքերուս տակը խորունկ կեցած էին ամպերը, որոնցմե միայն քանի մը գագաթներ ավելի վեր կը բարձրանային: Այսպես նաև այս անգամ բախտ չունեցա՝ ուղղակի ճամբով թերևս հագիվ 8 ժամ միայն հեռու ծովը տեսնել»¹⁶:

Խևակ գյուղն իր «Տեղագիր Հայոց Մեծաց» գրքում հիշատակում է նաև Ղևոնդ Ալիշանը, սխալմամբ նշելով, թե Համշենի վիճակը «երզիռում նահանգ»-ի կազմում է¹⁷, գրում է, որ Համշենը հարուստ է մեղրով և որ «բնակիչք նորա Հայք ի կես անցելոյ դարուն դարձան յօրէնս Մահմետի, այլ ցարդ պահեն զանուանս և զսովորոյթս Հայոց: ... Անուանի գեօղք Համշինու՝ Խեւակ յոտս Խաչէքարայ»¹⁸: Թեև Ալիշանը հղում չի անում, բայց այն, որ նա կարդացել է Մեհերյանի ձեռագիրը, իմանում ենք նրա “Սիսուան” աշխատությունից: Պեյլանի մասին պատմելիս Ալիշանը գրում է, որ «մի ոմն ի հարց մե-

¹¹ Տե՛ս 7. 3. Տաշեան. Տայք, դրացիք եւ Խոտորջուր, պատմական-տեղագրական ուսումնասիրութիւն (այսուհետև՝ 3. Տաշեան. Տայք ..., հ. Բ). հ. Բ, Կիեննա, 1980, էջ 218:

¹² 3. Տաշեան. Տայք ..., հ. Բ, էջ 281:

¹³ Նույն տեղում, էջ 214-215:

¹⁴ Պ. Մեհերյան, էջ 168-169:

¹⁵ Նույն տեղում, էջ 168:

¹⁶ K. Koch. Աշխ., էջ 100-101, 3. Տաշեան. Տայք ..., հ. Բ, էջ 89-90: Խոտորջրից Խևակ 4. Կոխի ճանապարհորդության ընդարձակ նկարագրության մի հատված էլ տես՝ 3. Հուլունեան եւ Մ. Հաճեան. Յուշամատեան Խոտորջուրի. Կիեննա, 1964, էջ 96-98:

¹⁷ Ղ. Ալիշան. Տեղագիր Հայոց Մեծաց. Կենետիկ, 1855, էջ 36-39:

¹⁸ Նույն տեղում, էջ 39:

րոց յամի 1773 օթեվանեալ աստանօր»¹⁹, ապա մի հատված է ներկայացնում Մեհերյանի հուշագրությունից և տողատակում նշում. «Յ. Պօղոս վ. Մեհերեան յԱռինճ գեղջէ Մշոյ»²⁰, առանց որևէ ծանոթագրության, թե երբ է ապրել Մեհերյանը և ինչ ձեռագիր կամ տպագիր աղբյուրից է արված այդ ընդարձակ քաղվածքը: Սա, թերևս, մեզ ծանոթ տպագիր աղբյուրներում Յ. Պողոս Մեհերյանի անվան առաջին հիշատակությունն է:

Ղ. Ինճիճյանից մեկ դար անց՝ 1907թ., Մխիթարյան մեկ ուրիշ միաբան՝ Յ. Ս. Էփրիկյանն իր «Պատկերագարդ բնաշխարհիկ բառարանի» երկրորդ հատորում մեծապես օգտվելով Ղ. Ինճիճյանից, մասամբ նաև Ալիշանից, գրում է. «Խևակ. գյուղ Յամշենի. գրեթե երեք ժամ խոտրջրեն և ութ ժամ Յամշենեն հեռու. կառուցված է բարձր լեռան մը լանջին վրա: ԺԸ դարու կիսուն գյուղիս հայ բնակիչներեն 200 տուն թրքացան. կան նաև սակավաթիվ կաթողիկե հայեր: Ընտիր է գյուղիս մեղրը»²¹: Ինչպես դժվար չէ նկատել, միակ նորությունը Խ-

ևակի հայերի կաթողիկե լինելու հանգամանքի հիշատակումն է:

Պողոս վրդ. Մեհերյանի ձեռագիր հուշագրությունն առաջինն արժևորում է Բարսեղ վրդ. Սարգիսյանը, որն իր «Ուսումնասիրությունն մանիքեա-պաղիկեան թոնրակեցիներու աղանդին եւ Գր. Նարեկացոյ թուղթը» գրքում վերապատմելով Յալեպից Կարին ճանապարհին 1773թ. Պ. Մեհերյանին հանդիպած աղանդավոր հայերի («Որոնք աղանդավորք էին իբրև զԹոնրակեցիս, կամ Կեսկես էին կամ Արևորդիք»)՝²² և բողջիմասուրցի կեղծ Յովհաննես եպիսկոպոսի պատմությունները²³, նշում է, որ Պ. Մեհերյանը «Խևակ գյուղին մեջ 200 թուրքացած հայ ընտանիքներ կը հիշէ» և տողատակում գրում է. «Այս անտիպ գրությունս, որ այժմ կգտնվի մեր Ձեռագրատան մեջ, շատ և շատ հետաքրքրական և կարևոր նյութեր կը պարունակե ժամանակակից պատմության և Յայոց հանժամու կացության վերա»²⁴:

Բ. Սարգիսյանը Պ. Մեհերյանի հուշագրությունը վկայակոչում է նաև հետագայում, «Բազմավեպում» տպագրված իր «Վիճակագրական նոր տեսութիւն մը ի նպաստ անկախ Յայաստանի» հոդվածում նա վերապատմում է Յամշենի Խևակ գյուղում կրոնավորի հայերի հանդիպման պատմությունը. «Իսկ Յ. Պողոս Վ. Մեհերյան, որ Ինճիճյանեն 30 տարի առաջ, այն է 1776-ին՝ ճանապարհորդած է Յամշեն, իր *ինքնակենսագրության* մեջ շատ

¹⁹ Ղ. Ալիշան. Մխուսան. Վենետիկ - Ս. Ղազար, 1885, էջ 420:

²⁰ Նույն տեղում, էջ 421:

²¹ Ս. Էփրիկեան. Պատկերագարդ բնաշխարհիկ բառարան. Ի. Բ., Վենետիկ, 1907, էջ 167: Ի դեպ, Ս. Էփրիկյանը Խևակին նախորդող Խևա բառահոդվածում գրում է. «Գյուղ Արտանուջի գավառին մեջ. մեկ տուն հայ և 23 տուն թուրք բնակիչներով: Այս անվամբ երկու գյուղ ալ կա Արտահանու գավառի մեջ»: Խևակի մասին իր տվյալները հավանաբար Ս. Էփրիկյանից է քաղել համշենցիների ազգագրության լավագույն գիտակներից մեկը՝ Բարունակ Թոռլաբյանն իր ուսումնասիրության «Յամշենի շրջան» բաժնում գրելով. «Խևակ. Յամշենից ութ ժամ հեռու՝ դեպի խոտորջուր, բարձր լեռան վրա հիմնված, մահմեդականացած հայերով բնակեցված գյուղ: Յայտնի է այս շրջանի մեղրը», տես Բ.Թոռլաբյան. Յայ ազգագրություն և բանահյուսություն.-Նյութեր և ուսումնասիրություններ. N13, Յամշենահայերի և պոսագրությունը. Երևան, 1981, էջ 29: Գրքում զետեղված «Յամշենահայեր և ազգագրությունը (բնակավայրերի մոտավոր սխեմատիկ քարտեզ ըստ 1915թ. վիճակի)» քարտեզում (հեղ.՝ Բ. Թոռլաբյան) առանց աղբյուրը հիշատակելու Խևակ գյուղը նշված է Յամշեն գավառի տարածքում՝ Պարխարյան լեռնաշղթայի արևմտյան լանջին:

Խևակ գյուղը ռուսական քարտեզներում նշված է Խևի, իսկ 10 վերստանոց քարտեզում՝ Խևա անուններով: Ըստ բառարանի՝ Խևա անունով մեկ գյուղ է եղել նաև Բաթումի մարզի Արդվինի օկրուգի Արտանուջի շրջանում, երկու գյուղ էլ՝ Կարսի մարզի Արդահանի օկրուգում (Թ. Յակոբյան, Ս. Մելիք-Բախշյան, Յ. Բարսեղյան. Յայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան (այսուհետև՝ ՅԳՇՏԲ). Ի. II, Երևան, 1988, էջ 720):

²² Բ.Սարգիսեան. Ուսումնասիրութիւն մանիքեա-պաղիկեան թոնրակեցիներու աղանդին եւ Գր. Նարեկացոյ թուղթը. Վենետիկ-Ս. Ղազար, 1893, էջ 102: Մեհերյանի ձեռագրի էջ 118-ում՝ «Յայերէն խօսեր շինական և ընտանիք իւր. բայց աղանդաւոր էր իբրև թոնրակեցիս. կամ կես կես էր. և կամ արեւորդի»:

²³ Բ. Սարգիսեան. Աշխ. աշխ., էջ 102-104: Բ. Սարգիսյանի գրքում Յ. Պ. վրդ. Մեհերյանից մեջերկված վկայություններին են անդրադարձել՝ տես Ֆրեդ. Շ. Կոնբեյր. The Key of Truth, a manual of the Paulician church of Armenia. Oxford, 1898, p. lxxi-lxxii, 4. Տեր-Մկրտչեան. Պաղիկեանց եւ թոնրակեցուց աղանդները արդի քննադատութեամբ. - «Արարատ», 1900, N է (յուլիս), էջ 33, 4. Գրիգորյան. Նոր տեղեկություններ «Բանալի ճշմարտության» երկի հեղինակ Յովհաննես երեցի մասին.-«Բանբեր Մատենադարանի». 1960, N 5, էջ 335, 338-341, տես նաև Դիվան հայոց պատմության, նոր շարք, գիրք առաջին, Դուկաս Կարմեցի, Ի. Բ., 1786-1792, Երևան, 2003, էջ LXXXIII, Ա. Ղազարյան, Բ. Ն. Լևոնյան. Յայաստանյայց Ավետարանական եկեղեցի (Յայաստան-Կովկաս). Երևան, 1999, էջ 42-43, 51:

²⁴ Բ. Սարգիսեան. Աշխ. աշխ., էջ 102:

կենդանի գույնով կը նկարագրե գավառիս խնայողն մեջ և շրջաբնակ գյուղերու տաճկացած իր արյունակիցներեն գտած անսովոր ընդունելությունը և մեկ սրտաճմլիկ տեսարանը: Հոս ուրացյալ ժողովուրդը լսելով, որ եկավորն քահանա է, չորս կողմը խռնված աջը կը համբուրեին. և իր ուղեկից քահանային շարժական սեղանին վրա պատարագած ժամուն՝ ամենքն ալ ծնրադիր մտիկ կ'ընեին. ուստի գուշակեց, թե անոնք հայությունն դարձած են, բայց ոչ մոռցած զայն. փնտռեց և գտավ եկեղեցին ևս, որ ողջախոսի այրիի մը պես իր ուրացյալ որովոցմե թողված օրեն ի վեր՝ թեև փակ, բայց կը մնար անարատ: Բանալ կու տա զանի, կը լվա կը սրբե. և Ս. Խաչին տոնը իր ուղեկից չորս նորընծա քահանաներով ցայգապաշտոն ընելեն ետքը՝ ձայնավոր պատարագ մ'ևս կը մատուցանե:

Ի ձայն խորհուրդ խորին խորհրդավոր երգին կ'արթըննա ուրացյալներուն խիղճը, կը հիշեն իրենց պապերու և մամերու հավատքը, և խուռնընթաց կ'ուզեն մերս մտնել: Սա կ'ուզե արգիլել անոնց մուտքը. բայց ի զուր: Ավետարանի ժամանակ, կը մեկնե զանի, հագարացվոց լեզվով, շրջակա գյուղերեն հոն եկող ժողովրդյան, հիշեցնելով իրենց նախնյաց սուրբ կրոնքն և կրոնական պարտքերը: Եվ ապա սաստիկ զգացված կը փութա մեկնիլ անտի, զի հալածանաց ժամանակ ըլլալով կրնային ձերբակալել զինքը՝ իբր փռանգ»²⁵:

Բ. Սարգիսյանի վերապատմածը համեմատելով Պ. Մեհերյանի ստորև հրապարակվող բնագրի հետ, դժվար չէ նկատել, որ նա առավելապես գրական երկերին հատուկ ոճով ու համեմատություններով է ներկայացնում հիշյալ հատվածը, երբեմն էլ շեղվում է կամ անհարկի հավելումներ անում, գրելով, որ Հ. Պողոսը Ավետարանը մեկնում է «հագարացվոց լեզվով», այսինքն՝ արաբերեն²⁶, ինչը պարզապես չի բխում բնագրից և խնայող ու շրջակա գյուղերի հայերի արաբախոս

²⁵ Բ. Սարգիսեան. *Վիճակագրական նոր տեսութիւն մը ի նպաստ անկախ Հայաստանի*. - «Բազմավեպ», 1919, N9, էջ 284-285: Հ. Բարսեղ վրդ. *Սարգիսյանի վերապատմածը 1992-ին առավել հակիրճ շարադրել է պատմաբան Ստ. Պողոսյանը, տես Ստ. Պողոսյան. Սև ծովից Վանա ծով, հինգ ամիս հինգ օր. Երևան, 1992, էջ 22:*

²⁶ Նոր բառգիրք Հայկազեան լեզուի (այսուհետև՝ ՆՀԲ). հ. Բ., *Վեներիկ, 1837, էջ 2: Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան. հ. 3, Երևան, 1974, էջ 250:*

լինելու մասին անհիմն հետևությունների տեղիք կարող է տալ: Գրում է, որ Հ. Պողոսը խնայող շտապով հեռանում է, որովհետև վախենում է, որ իրեն կձերբակալեն իբրև «փռանգ», այսինքն՝ կաթուղի, այնինչ Հ. Պողոսի փութալը կապված է ոչ թե նրա կաթուղի լինելու հանգամանքի, այլ իրապես վտանգավոր իրողության հետ՝ վարդապետի կողմից մահմեդականներին քրիստոնեության դարձնելը՝ «հայացուցանելը», ինչպես հայտնի է, Օսմանյան թուրքիայում մահապատժի արժանի հանցանք էր համարվում:

Հ. Տաշյանը, որն իր «Հայ բնակչությունը Սեւ ծովէն մինչեւ Կարին»²⁷ գրքում և «Տայք, դրացիք եւ Խոտորջուր» եռահատոր աշխատության²⁸ առաջին և, հատկապես, երկրորդ հատորներում քանիցս անդրադարձել է խնայողին, ցավոք, տեղյակ չէ Մեհերյանի հուշագրության մասին, թեև, ինչպես արդեն նշել ենք, Բ. Սարգիսյանն իր «Ուսումնասիրութիւն մանիքէա-պաւղիկեան թոնրակեցիներու աղանդին...» գրքում և «Վիճակագրական նոր տեսութիւն մը ...» հոդվածում հիշատակում է Մեհերյանին և նրա հուշագրության մեջ հանդիպող խնայող գյուղը, այլապես շատ հարցերի պատասխաններ Տաշյանը կարող էր տալ Մեհերյանի օգնությամբ: Հ. Տաշյանն իր ուսումնասիրության «Խեւակի մահմետականացումը» բաժնում գրում է. «Դժբախտաբար այս գավառիս մահմետականացման մասին մանրամասն տեղեկություններ չունինք, զոնե մեզի ծանոթ չեն: Էականն անշուշտ հաղորդած է Ինժիճյան, այլևայլ դիտողություններ կու տա նաև Քոխ: Բայց ամենը միայն այսչափ է»²⁹:

Կրոնափոխությունից մոտ երկու դար հետո էլ խնայողների հայախոս լինելու մասին կարևոր վկայություններ ենք գտնում Հ. Տաշյանի աշխատություններում: Նա 1910-1911 թթ.³⁰ ճանապարհորդելով Սև ծովից Կարին, գրում է, որ

²⁷ Հ. Տաշեան. *Հայ բնակչութիւնը Սեւ ծովէն մինչեւ Կարին, պատմական-ազգագրական հարեւանցի ակնարկ մը. Վիեննա, 1921, էջ 81:*

²⁸ Հ. Տաշեան. *Տայք... հ. Ա, Վիեննա, 1973, հ. Բ, Վիեննա, 1980, հ. Գ, Վիեննա, 1981 (նախապես տպագրվել է «Հանդես ամսօրյա»-ում, 1970, N 4.6-ում սկսելով և 1975թ. N 1.3-ում ավարտելով):*

²⁹ Հ. Տաշեան. *Տայք... հ. Բ, էջ 216:*

³⁰ Հ. Տաշեան. *Հայ բնակչութիւնը... էջ 6:*

«հաճախ հարցափորձած ենք – մեր ուղևորությանց ատեն - գործածված այս կամ այն հայ բառը, իբր անգետ՝ մեկնություն խնդրելով դիտմամբ, և նկատած՝ որ ասոնց շատերուն թուրք համազորներն անծանոթ էին շատերուն: «Իրենց գյուղն այսպես կ'ըսեն»՝ այս էր ամեն մեկնության հանկերգը: Ոչ սակավ անգամ նշմարած ենք որ այն հին մահմետականացածները, որոնք այնպես կը վարվին իբր թե թուրքերենն զատ ուրիշ լեզու չեն գիտեր, լիովին կը հասկնային հայերենը (օր. իսկակցիք)»³¹: «Այսօր ալ իսկակցիք, կամ գոնե շատը՝ հայերեն գիտեն կամ կը հասկնան թեև օտարի հետ (արական սեռը) թուրքերեն կը խոսին: Մահմետականք տակավին պահած են առհասարակ հայ մականուններն ալ (օր. «Քեշիշ-օղլու, Մակար-օղլու, Մինաս-օղլու» ևն, ևն)»³²: «Այս մահմետականք այսօր ալ կը հիշեն իրենց ազգակցության և խնամության կապերն այն քրիստոնյա ազգակցաց հետ, որոնք շատոնց հեռացած ու գաղթած են այլուր՝ գլխավորաբար կրոնական բռնութենե զատ մնալու համար: Տողերուս գրողն առիթ ունեցած է ի Կարին ճանչնալու քրիստոնյա ազգակցաց այցելության եկած մահմետական իսկակցիներ, որոնք հայերեն գիտեին»³³: Ի դեպ, Յ. Հակոբ ծ.վ. Քոսյանի «Բարձր Հայք, Կարին քաղաքը»³⁴ գրքից տեղեկանում ենք, որ Կարինի քրիստոնյա իսկակցիներին պատկանող երեք արծանագրություններից երկուսում գյուղը հիշվում է իսեկ ձևով: Օրինակ՝ կաթողիկե հայոց Ս. Աստվածածին եկեղեցուն (կառ. 1842 թ.)³⁵, ծախ կողմի որմուն սպիտակ մարմարի վրա փորագրված «Ցանկ մշտնջենաւոր Պատարագաց»-ում նշված է եղել «Խելեկցի Գրիգորեան ուստա Սարգսի»³⁶ անունը, իսկ կաթողիկե հայոց գերեզմանոցում եղել են «Խելեկցի Զօրապեան Գրիգորին» (1871թ.)³⁷ և «Խելեկցի Պրնաւետիս Առա-

քելեան»-ի (1872թ.)³⁸ տապանները: Գերեզմանոցի բոլոր տապանաքարերի վրա չէ, որ նշված է եղել հանգուցյալի որտեղացի լինելը, ուստի հնարավոր է, որ այլ իսկակցիների գերեզմաններ էլ եղել են:

«Հայկական սովետական հանրագիտարանը» ևս անդրադարձել է իսկակցի գյուղին. հեղինակը՝ Թ. Գևորգյանը, 200 տուն հայերի կրոնափոխությունը չգիտես ինչու վերագրում է XIX դ. առաջին կեսին, երբ Մեհերյանն ու մյուս աղբյուրները մատնանշում են XVIII դ. առաջին կեսը. «Իսկակ, հայախոս մահմեդական գյուղ Արևմտյան Հայաստանում, Երզրումի վիլայեթի Կիսկին գավառում, Քաջ[ք]ար-լեռան արևելյան ստորոտին, Կիսկին ավանից հյուսիս: Բնակչությունը հիմնականում զբաղվում էր մեղվաբուծությամբ (գյուղը հռչակված էր ընտիր մեղրով), հողագործությամբ, անասնապահությամբ: Իսկակի քրիստոնյա հայերը (մոտ 200 տուն) XIX դ. առաջին կեսին ստիպողաբար մահմեդականություն են ընդունել կամ փախել և ապաստանել Խոտորջրում ու Կարինում: XX դ. սկզբին գյուղում մնացել էին միայն 10 տուն հայ քրիստոնյա, որոնք 1915-ի Մեծ եղեռնի ժամանակ ընդունել են մահմեդականություն: Իսկակի՝ մզկիթի վերածված հայկական եկեղեցին այժմ էլ կանգուն է»³⁹: Ցավոք, «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանի» հեղինակները ծանոթ լինելով այլ աղբյուրների, կրկնում են Թ. Գևորգյանին՝ կրկնելով նաև նրա սխալը. «Իսկակ, Խևա, Խևի-գյուղ Արևմտյան Հայաստանում, Երզրումի նահանգի Երզրումի գավառում, Կիսկիմի գավառակում, Ծորոխի միջին հոսանքի ծախ կողմում, նրա Պարխալ վտակի ծախակողմյան Կոբակսու վտակի ակունքների մոտ, հաչեքար կամ Քաջքար լեռան արևելյան կողմում: Գյուղի միջով անցնող Բեժանգետ գետակը կոչվում է նաև Խևակու գետ: XIX դ. սկզբին ուներ մոտ 200 տուն հայ բնակիչ և եկեղեցի, զբաղվում էին երկրագործությամբ, մեղվաբուծությամբ, անասնապահությամբ: Հայ բնակչության մեծ մասը XIX դ. առաջին կեսին

³¹ Յ. Տաշեան. *Տայք ...*, հ. Բ, էջ 150:

³² *Նույն տեղում*, էջ 219:

³³ Յ. Տաշեան. *Հայ բնակչությունը...*, էջ 81:

³⁴ Յ. Քօսեան. *Բարձր Հայք, Կարին քաղաքը, տեղագրութիւն, պատմութիւն և սովորութիւններ*. հ. Ա, Վիեննա, 1925:

³⁵ *Նույն տեղում*, էջ 460:

³⁶ *Նույն տեղում*, էջ 464:

³⁷ *Նույն տեղում*, էջ 479:

³⁸ *Նույն տեղում*, էջ 479-480:

³⁹ *Հայկական սովետական հանրագիտարան*. հ. 5, Երևան, 1979, էջ 47:

բռնի մահմեդականացվեց, մյուս մասը հեռացավ գյուղից: XX դ. սկզբին գյուղում մնացել էր 10 տուն հայ բնակիչ»⁴⁰:

Եթե իրապես, XX դ. սկզբին գյուղում կար նաև 10 տուն քրիստոնյա հայություն, ապա անհասկանալի է, թե ինչու Ա-Ռոն, որը 1909թ. ճանապարհորդել է Երզրումի նահանգում,⁴¹ և Կարինի առաջնորդարանից քաղել է Կիսկիմի հայ բնակչության մասին տվյալներ, իր կազմած «Վիճակագիր Կիսկիմի գաւառի հայ ժողովրդի» աղյուսակում Կիսկիմի 68 գյուղերից առանձնացնում է հայ բնակչություն ունեցող միայն 6 գյուղ՝ Խոտորջուրը (իր 7 գյուղակներով կամ թաղերով), Կարմրակը, Գասապան, Փրթիկները, Նիխախը, Կուտրաշենը, իսկ Խևակը չի հիշատակում, այն դեպքում, երբ 15 տուն ունեցող Գասապան և ընդամենը 7 տուն ունեցող Նիխախը նշված են⁴²:

1907-ին հրատարակված «Պատկերագրող բնաշխարհիկ բառարանում» Ս. Եփրիկյանը, թվարկելով Կարնո հայաբնակ, թուրքաբնակ և խառը բնակչությամբ 278 գյուղերը⁴³, դրանց շարքում չի հիշատակում Խևակը:

Ինչպես տեսնում ենք, Խևակի պատկանելության հարցում աղբյուրները տարակարծիք են. Պ. Մեհերյանը, Ղ. Ինճիճյանը, Ղ. Ալիշանը, Ս. Եփրիկյանը, Բ. Սարգիսյանը, ինչպես նաև Բ. Թուրաբյանը և Ս. Պողոսյանը այն համարում են Համշենի գյուղերից մեկը, Կ. Կոխը, այնուհետև Թ. Գևորգյանն ու «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանի» հեղինակները՝ տեղադրում են Երզրումի նահանգի Երզրումի գավառի Կիսկիմ (Բերդագրակ) գավառակում: Հ. Տաշյանը Կիսկիմում տեղադրելով հանդերձ հնարավոր է համարում, որ երբեմն Համշենի սահմանը հասել է մինչև պոնտական լեռնաշղթայի հարավային լանջերը՝ ընդգրկելով նաև Խևակը. «Այսպես Ինճիճյան գիսակ կը դնե Համշենի մեջ իբրև ուրույն վիճակ մը, և յուր դիրքով կրնար այս հարմար իսկ նկատվիլ, թեև բուն Համշենն բաժնված է

այնպիսի բարձր մշտնջենավոր ծյան լեռնաշղթայով մը, որուն անանցանելի ըլլալն այնպես գեղեցիկ նկարագրած է Քօխ»⁴⁴: «Կ'երևա սակայն թե Համշեն երբեմն պոնտական շղթային հարավային երեսն ալ կ'իջնար»⁴⁵: Թե որքանով է համոզիչ Տաշյանի ենթադրությունը, ցույց կտան հետագա ուսումնասիրությունները, իսկ առայժմ գիտական շրջանառության մեջ դնելու նպատակով քաղվածաբար ներկայացնում ենք Հ. Պ. վրդ. Մեհերյանի հուշագրության տարբեր էջերում սփռված և կրոնափոխ հայերի պատմության ուսումնասիրության համար բացառիկ կարևոր նշանակություն ունեցող հատվածները⁴⁶: Հրապարակումը նաև տեղեկություններ է պարունակում Խոտորջուրի XVIII դ. հոգևորականների վերաբերյալ: Մանրամասներնք, որ Խոտորջուրի կաթոլիկացումը սկսվել է XVII դ. երկրորդ կեսից,⁴⁷ իսկ արդեն 1748-ին, համայն Կ. Պոլսից Վատիկան ուղարկված մի զեկուցագրի՝ Խոտորջուրի «բոլոր գյուղերուն մեջ կան կաթ. հայեր՝ մեկ կամ երկու քահանաներով, իրենց ազգեն»⁴⁸:

Բնագիրը հրատարակելիս յուրաքանչյուր քաղվածքի սկզբում երկու գծիկով և փակագծի մեջ նշել ենք բնագրի համապատասխան էջը, բացել ենք հապավումները, հատուկ անունները սկսել ենք մեծատառով, մեծատառով ենք սկսել նաև ուղղակի խոսքը, / ճախդիրից առաջ դրված ապաթարց նշանը չենք վերարտադրել, բացահայտ գրչական սխալները նշանը չենք ուղիղ տառով, բաց թողնված տառերը լրացտպագրել ենք ուղիղ տառով, բաց թողնված տառերը լրացտպագրել ենք ուղղանկյուն փակագծերի մեջ, սուրանկյուն փակագծով նշել ենք բառի կրկնությունը, կետադրությունը նշանակել ենք ներկայումս գործող կանոնների համաձայն:

⁴⁴ Հ. Տաշյան. *Տայք ...*, հ. Բ, էջ 197:

⁴⁵ Նույն տեղում, էջ 10:

⁴⁶ Բնագրից մի փոքր հատված հրատարակվել է՝ Ս. Վարդանյան. *Համշենցի մուսուլման հայերի ուսումնասիրության պատմությունից*. - «Իրան-նամե», 1998, N1-2-3, էջ 2: S. Vartanian. *Des Armeniens oubliés*. - «Azad magazine», Grenoble, 1999, N3, p. 16:

⁴⁷ Հ. Հովունեան եւ Ս. Հաճեան. *Յուշամատեն...*, էջ 165:

⁴⁸ G. Hofmann. *IL vicariato apost. di Constantinopoli, 1453-1830*. Roma, 1935. p. 128-129, տես *Յուշամատեն...*, էջ 166:

⁴⁰ ՀՀՇՏԲ, հ. II, էջ 720:

⁴¹ Ա-Ղօ. *Վանի, Բիթլիսի եւ Երզրումի վիլայեթները*. Երևան, 1912, էջ V:

⁴² Նույն տեղում, էջ 199:

⁴³ Ս. Եփրիկյան. *Պատկերագրող բնաշխարհիկ բառարան*. հ. II, գիրք Ա, Վեներտիկ, 1907, էջ 51, 300-301:

II(161) «...բերին Բ. (2) տիրացու ի Կարմիրգ⁴⁹ գեղջէ և տիրացու մի ի Մոխրակոյտ⁵⁰ գեղջէն և գայլ ոմն տիրացու Աւրօթ ի Դամամաշէն⁵¹ գաւառէն, ի խէվակ գեղջէն: Կարմրցիք՝ քահանայն և ժողովորդք, և մոխրակուտցիք ի ժողովին վկայեցին վասն տիրացուաց իւրեանց, իսկ խէվակցի Աւրօթին ոչ գոյր ի գեղջէ իւրմէ վկայ և ոչ մի: Ուստի խոտորջոյ⁵² ծերազոյն քահանայք այսպէս վկայեցին, թէ մինչ խէվակցիք թուրքացան, էին անդր 5 և կամ 6 տունք ուղղափառք, զորս խոտորջոյ քահանայք հովուէին գնալով գալով. էր անդր ծեր ոմն, որ էր հայր այս տիրացու Աւրօթին, և ի հիւանդանալն ծերոյն կոչէ զուղղափառ եղբարս խէվակու առ ինքն և ասէ ցնոսա. Միրելի՛ եղբարք իմ, գիտէք զի յաւուրս մեր թուրքացան գիւղականք մեր 200 տունք, և ուղղափառ սուրբ հաւատք ողորմութեամբ Աստուծոյ զմեզ պահեաց, և ահա քահանայ չունիմք, և յետ այտորիկ երկնչիմ, զի մի որդիք մեր և ծեր կորիցեն առանց քահանայի: Ասեն ցնա. Դայր, զի՞նչ արացուր: Ասէ ցնոսա ծերն թէ՛. Ահա զորդին իմ զԱւրօթն իբր 9 ամաց է, տամ ձեզ և 2000 դահեկան, զի զԱւրօթս առաքեցիք ի խոտորջուր՝ առ Տէր Յակոբ մեծաւոր նոցա, մնալ անդր և ընթեռնուլ, և ի հասանիլ ժամանակին բերջիք անտի II(162) և ձեռնադրեալ տացջիք, զի մի կորիցեն գաւակք մեր, որպէս կորեան գիւղականք մեր: Չայս կտակ արարեալ ծերունոյն՝ վախճանի: Եւ նոքա զկտակ նորա կատարեալ են: Չայս ամենայն վկայեաց Տէր Յովսէփ՝ խոտորջոյ մեծաւոր, ճիճապաղցի⁵³ ծեր Տէր Մարգար, ի Սիւնեաց⁵⁴ գեղջէն Տէր Ալէքսան և

⁴⁹ Կարմիրգ [Կարմիրք] – Կիսկիմի (Բերդագրակի) գավառակի մեջ մտնող խոտորջոյ գյուղախմբի գյուղերից (ուղղանկյուն փակագծերում նշված է գյուղի անունը ըստ Յ. Դուլունեանի եւ Մ. Դաճեանի «Յուշամատեն...»-ի):

⁵⁰ Մոխրակոյտ – Կիսկիմի (Բերդագրակի) գավառակի մեջ մտնող խոտորջոյ գյուղախմբի գյուղերից է, տես Յ. Դուլունեան եւ Մ. Դաճեան. Յուշամատեն..., էջ 558:

⁵¹ Դամամաշէն, Դամշէն – ավան և գավառակ Տրապիզոնի նահանգի Լագիստան գավառում:

⁵² խոտորջուր, խոտորջուր – գյուղախումբ էրզրումի նահանգի Կիսկիմ գավառակում:

⁵³ ճիճապաղ – խոտորջոյ գյուղախմբի գյուղերից:

⁵⁴ Սիւնեաց [Սիւնից] – նույնը:

Տէր Կարապետն, ի Կաղմխուտա⁵⁵ Տէր Պօղոսն, ի Խանթաձորոյ⁵⁶ Տէր Յօհաննէսն և այլն:

II(164)...Իսկ յաղագս երկու կարմրցի տիրացուացն և մոխրակուտցի տիրացուին և խէվակայ Աւրօթին վկայութեամբ քահանայից և ժողովորդոց օրինօք ձեռնադրեցան:

**II (167) Վասն գնալոյ ինոյ ի Սրղուիւն⁵⁷
ՉԼ. Ը-երրորդ**

Յետ կատարելոյ գտօնախմբութիւն տիրամօրն ի խոտորջուր և յետ քանի ինչ աւուրց առի գնոր[ը]նծայ քահանայսն՝ զմոխրակուտցի տէր Աւետիս և համամաշէնցի՝ խէվակցի Տէր Աւրօթն, և զճիճապաղցի Տէր Պետրոս և չոգայ ի վատակոյտ, ուր Տէր Աւետիսն հանդիսապէս մատոյց զծայնաւոր պատարագն, և յետ պատարագին առեալ զժամաւորն զգեստուք պատարագին, շարականաւ և ծնծղախիւք՝ ըստ ծիսից հայոց տանէաք ի տուն երգելով:

...Յետ այտորիկ[ի] իբր անցին աւուրք ինչ, առի ընդ իս զՏէր Պետրոսն, զնոր[ը]նծայ Տէր Աւետիսն և զհամաշէնցի Տէր Աւրօթն և չոգայ ի Դամամաշէն՝ ի գիւղն II(168) <ի գիւղն> խէվակ, բայց ի ճանապարհին ի զարիւրելի լերինս ձիւնապատս ելաք, և այնչափ սաստիկ ցուրտ էր և բուք, մինչ զի ամենեքեանս զրթթ յուսահատեցաք ի կենաց: Իսկ ես ստիպեցի գնոսա ուտել, բայց սառուցեալ, քարացեալ էր միսն, և մանաւանդ հալվէն էր իբրև զքարացեալ՝ ոչ կարէի ուտել: Եւ այն զի ի սեպտեմբեր ամսոյն էր, և ասէին, թէ ի հոկտեմբերի ոչ ոք կարէ անցանել աստի, այլ ընդ ճորուիւն⁵⁸ գետն <գնա> գնալոց են ի խէվակ: Եւ յիջանելն մեր ի լեռնէ անտի գնացաք ի խէվակ, և մինչ մտաք ի գիւղն, արք և կանայք գեղջն, որք թուրքացեալք էին, յաջմէ և յահեկէ համբուրէին զաջմ իմ, ուր իջեվանեցաք ի տուն նոր[ը]նծայ Աւրօթին, որ ունէր հօրեղ-

⁵⁵ Կաղմխուտ [Կախմխուտ] - նույնը:

⁵⁶ Խանթաձոր [Խանդաձոր] - նույնը:

⁵⁷ Սրղուիւն-քաղաք Ախալցխայի փաշայութեան համանուն գավառում, 1878-ից Բաթումի մարզի Արղուիւնի օկրուգի կենտրոնը:

⁵⁸ ճորուիւն, ճորուղ - ճորոխ՝ գետ Սև ծովի ավազանում, Տայքի ամենամեծ գետը:

գրաստ ընդ ծառուվք գնայի, և մեծամեծ նոռնք կախեալ գծառոց հասեալ և հերձեալ և թօթափեալ ի վերայ ճանապարհին, առնոյի և ուտի անուշ անուշ: Եւ ի հարցանելն իմ ցնոսա, թէ՛ Ընդէ՛ր թողուք կորնչիլ պատուական պտղոցդ այդոցիք, ասէին՝ Հապա գի՞նչ արասցուք, ոչ ոք է, որ գնէ: Եւ մինչ փողով պտուղ հայցէի ի նոցանէ, պատասխանէին, թէ՛ Մու տ յայգին և ըստ ցանկութեան բուն ժողովեա՛ զինչ և կամիս, կեր, ա՛ռ և զնայ վասն հոգւոց տնկողաց և նախնեաց մերոց, որք քրիստոնեայք էին: Ձի թէպէտ նախնիք նոցա ուրացեալ էին, բայց հեզահոգի և հիւրասէր էին, նաև՝ քաղաքավար, իբրև զքրիստոնեայս համբուրէին գաջ իմ և տանէին ի տունս իւրեանց՝ ընթեռնուլ զԱւետարան ի վերայ հիւանդաց իւրեանց, զի հաւատային ի սուրբ Աւետարան: Ի հելվակայ մինչև ցլԱրդուին յերիս աւուրս գնացաք, և իջևանեցայ ի տան տէր Յովսէփին ի 5 հոկտ[եմբերի] 1776[թ.], որ և ընկալաւ զիս սիրով, նմանապէս և քաղաքացիքն...»:

II(161) «...բերին 2 տիրացու՝ Կարմիրգ գյուղից և մեկ տիրացու Սոխրակույտ գյուղից և մի այլ տիրացու Սերոբե Համամաշեն գավառից՝ խևակ գյուղից: Կարմիրցիները՝ քահանան և ժողովուրդը, և մոխրակույտցիները ժողովի ժամանակ վկայեցին՝ իրենց տիրացուների համար, իսկ խևակցի Սերոբեին ոչ մի վկա չկար իր գյուղից: Ուստի խտորջրի ծերագույն քահանաները այսպես վկայեցին, թե երբ խևակցիները թուրքացան, կային այնտեղ 5 և կամ 6 տուն ուղղահավատներ, որոնց խտորջրի քահանաները զնալով-զալով հովվում էին, կար այնտեղ մի ծեր մարդ, որ այս տիրացու Սերոբեի հայրն էր, և ծերը հիվանդանալով իր մոտ է կանչում խևակի իր ուղղահավատ եղբայրներին և ասում է նրանց՝ Իմ սիրելի եղբայրներ, գիտեք, որ մեր օրերում մեր գյուղացիներից 200 տուն թուրքացան, և ուղղահավատ սուրբ հավատը Աստծո ողորմությամբ մեզ պահեց, և ահա քահանա չունենք, և այսուհետ երկնչում են, որ մեր ու ձեր որդիները կկորչեն առանց քահանայի: Նրան ասում են՝ Հայր, ի՞նչ անենք: Ծերը նրանց ասում է, թե՛ Ահա՛ իմ որդի Սերոբեն 9 տարեկան է, տամ ձեզ և 2000 դահեկան, որ Սերոբեիս առաքեք խտորջուր, նրանց մեծավոր՝ Տեր Հակոբի մոտ, մնա այնտեղ և սովորի, և երբ ժամանակը գա, այնտեղից բերեք II (162) և ձեռնադրել տաք, որ չկորչեն մեր գավակները, ինչպես կորան մեր գյուղացիները: Այս կտակն անելով, ծերունին վախճանվում է: Եվ նրանք նրա կտակը կատարել են: Այս ամենը վկայեց խտորջրի մեծավոր Տեր Հովսէփը, ճիճապաղցի ծեր Տեր Մարգարը, Սյունեաց գյուղից՝ Տեր Ալեքսանը և Տեր Կարապետը, Կաղմխուտից՝ Տեր Պողոսը, Խանթաձորից՝ Տեր Հովհաննեսը և այլն:

II (164)...Իսկ ինչ վերաբերում է երկու կարմիրցի տիրացուներին և մոխրակույտցի տիրացուին և խևակցի Սերոբեին՝ քահանաների և ժողովրդի վկայությամբ օրինականորեն ձեռնադրվեցին:

անցնելով, II (170) հատում է բարձր լեռները և իջնում է Խոտորջրի մերձակայքում և այնտեղից Բերդագրակ, այնտեղից՝ Արդվին, և թեքվելով արևմուտք, իջնում է Բաթում, Սև ծով: Եվ գնում էինք ճորոխ գետի ափով, որ զարդարված էր այգեստաններով, ձիթաստաններով և պատվական պտղատու ծառերով: Որովհետև ես ծայրեծայր շրջան գործեցի, բայց ոչ մի տեղ այնպիսի ազնիվ և առատ պտուղ չտեսա: Որովհետև թափված էին պտուղները ճանապարհի վրա և անցորդների ոտքերի տակ ճնշված էին և ջրի նման պտուղների շիրան շաղախել էր ճանապարհը, և, մանավանդ, նոները, որովհետև մեծամեծ նոներիններ կային, որոնց ճյուղերը խառնվել էին իրար և ես գրաստ նստած ծառերի տակով գնում էի և ծառերից կախված մեծամեծ նոները հասած և պատռված և թափված էին ճանապարհի վրա, վերցնում և ուտում էի անուշ-անուշ: Եվ նրանց տված իմ հարցին, թե՝ Ինչու՞ եք թողնում կորչեն այդպիսի պատվական պտուղները, ասում էին՝ Հապա ի՞նչ անենք, գնող չկա: Եվ երբ փողով պտուղ էի խնդրում նրանցից, պատասխանում էին, թե՝ Ստի՛ր այգին և ըստ քո ցանկության հավաքիր ինչ-որ կամենաս, կեր, վերցրու՛ և գնա՛ տնկողների և մեր նախնիների հողիների համար, որոնք քրիստոնյաներ էին: Թեպետ նրանց նախնիները ուրացած էին, բայց հեզահոգի և հյուրասեր էին, նաև քաղաքավարի, իբրև քրիստոնյա համբուրում էին իմ աջը և տանում էին իրենց տուն՝ իրենց հիվանդների վրա Ավետարան կարդալու, որովհետև հավատում էին սուրբ Ավետարանին: Խևակից մինչև Արդվին գնացինք երեք օրում, 1776թ. հոկտեմբերի 5-ին իջևանեցի Տեր Հովսեփի տանը, որը մեզ ընդունեց սիրով, նմանապես և քաղաքացիները ...»:

* Տիրացու – եկեղեցու ստորին պաշտոնյա, սարկավագից կրտսեր, որը կարգ կատարելիս սպասարկում է քահանային և պատրաստվում է քահանա դառնալ:

** Վկայել – հասարակության ցանկությունը ներկայացնել:

*** Մեծավոր – ավագերեց, Խոտորջրի գյուղախմբի քահանաների ղեկավարը, որը ենթարկվում էր Կարինի թեմի առաջնորդին: Հաճախ մեծավորները նաև զբաղեցնում էին գյուղապետի պաշտոնը: Այսպես, 1832-ից մինչև 1891թ. Խոտորջրի 6 գյուղապետերն էլ եղել են նաև մեծավորներ, այսինքն՝ հոգևորականներ: Տես 3. Հուլունեան եւ Ս. Հաճեան. Յուշամատենան..., էջ 174-179:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄՇԵՆՑԻՆԵՐԸ՝ ԾԱՆՈԹ ԵՎ ԱՆԾԱՆՈԹ	3
ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ	9
ԿՐՈՆԱՓՈԽ ՀԱՄՇԵՆԱՐՅՅԵՐԻ ՈՒՄՈՒՄԱՍԻՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ ...	30

ՀԱՄՇԵՆԻ ԲԱՐՔԱՌԻ ԽՈՓԱՅԻ ԽՈՍՎԱԾՔՆ ԸՍՏ «ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐՔԱՌԱԳԻՏԱԿԱՆ ԱՏԼԱՍԻ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՎԱՔՄԱՆ ԾՐԱԳՐԻ»

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ	72
ԲԱՌԱՅԻՆ ՁՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	77
ԲԱՌԻՄԱՍՏԱՅԻՆ ՁՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	149
ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՁՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	154
ՆՇՈՒՄՆԵՐ ԼՈՒՄԱՆՑՔՆԵՐՈՒՄ	175

ՀԵՔԻԱԹՆԵՐ

ՀԵՔԻԱԹՆԵՐ	183
-----------------	-----

ԵՐԳԵՐ ԵՎ ԽԱՂԻԿՆԵՐ

ԿՐՈՆԱՓՈԽ ՀԱՄՇԵՆՑԻՆԵՐԻ ԵՐԳԵՐՆ ՈՒ ԽԱՂԻԿՆԵՐԸ	200
ԵՐԳԵՐ	205
ԽԱՂԻԿՆԵՐ	242

ԲԱՌԱՐԱՆ

ԽՈՓԱՅԻ ԽՈՍՎԱԾՔ – ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆ	272
ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆ – ԽՈՓԱՅԻ ԽՈՍՎԱԾՔ	339

ՀԱՎԵԼՎԱԾ

«ԿԱՐԵՎՈՐ ՍԿՋԲՆԱՂԲՅՈՒՐ ՍԱՀՄԵՂԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԱՅԵՐԻ ՍԱՄԻՆ» ՀՈՂՎԱԾԻ ՎԵՐԱՏՊՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ ՈՐՈՇ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ	403
ԿԱՐԵՎՈՐ ՍԿՋԲՆԱՂԲՅՈՒՐ ՍԱՀՄԵՂԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԱՅԵՐԻ ՍԱՄԻՆ	406

ՍԵՐԳԵՅ ԳԱԳԻԿԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԿՐՈՆԱՓՈԽ ՀԱՄՇԵՆԱՀԱՅԵՐԻ ԲԱՐԲԱՌԸ,
ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵՐԳԱՐՎԵՍԸ
(նյութեր և ուսումնասիրություններ)

СЕРГЕЙ ГАГИКОВИЧ ВАРДАНЯН

ДИАЛЕКТ, ФОЛЬКЛЕР И МУЗЫКАЛЬНОЕ
ИСКУССТВО ИСЛАМИЗИРОВАННЫХ
АМШЕНСКИХ АРМЯН
(материалы и исследования)

Ереван - 2009

SERGEY VARDANYAN

THE DIALECT, FOLKLORE AND SONGS OF THE
ISLAMIZED ARMENIANS OF HAMSHEN:
MATERIALS AND STUDIES

Yerevan-2009

Համակարգչային շարվածքը՝ Նարինե Դավթյանի

*Շապիկի առաջին էջին՝ Ղազախստանի Չիրկինո գյուղի համշենցի
բնակչուհի, (լուսանկարը՝ Ս. Վարդանյանի)*

Ստորագրված է տպագրության 12.02.2009: Չափսը՝ 60 x 84 1/16: Թուղ-
թը՝ օֆսեթ № 1: Տառատեսակը՝ «Arial Armenian»: Տպագրությունը՝ օֆսեթ:
26,75 տպ. մամուլ + 24 էջ ներդիր: Տպաքանակը՝ 300 օրինակ:
ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1:

Տպագրվել է «Գևորգ - Հրայր» ՍՊԸ



հրատարակչությունում

Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:

Հեռ.՝ 52-79-74, 52-79-47:

Էլ. փոստ՝ lusakn@rambler.ru